

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն Տ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ց

Ը ն Գ չ Ա ն Ր Ա Պ Է Ս

Գ Ր Ե Ց

Հ. ՂԵԻՈՆԳ Վ. ՅՈՎՆԱՆԵԱՆ

ՄԻԹԹ. ՈՒԹՏԷՆ

Հ Ա Տ Ո Ր Ա.

ՆԱԽԱՅԵՐԻՂ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԹՐՋԱՆ

Վ Ի Ե Ն Ն Ա

ՊԱՇՏՊԱՆ Ս. ԱՍՏՈՒԱՆՆԻՆԻ ՎԱՆԻՔ

1856. Ռ Յ Ե.

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԱՐԱՄԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ե.

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆՑ

ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

Հ Ա Տ Ո Ր Ա.

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն Տ Է Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ց

Ը Ն Դ Զ Ա Ն Բ Ա Պ Է Ս

Գ Ր Ե Ց

ՍՏՈՒԳՎՅՍ Է 1981 Ձ.

Հ. ՂԵԻՈՆԴ Վ. ՅՈՎՆԱՆԵԱՆ

ՄԻԻԹ. ՈՒԽՏԷՆ

Հ Ա Տ Ո Ր Ա .


ՆԱԽԱԹԵԻԻՂ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՅՐՋԱՆ



Վ Ի Ե Ն Ն Ա

Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ս . Ա Ս Տ Ո Ւ Ա Ն Ե Ն Ի Վ Ա Ն Բ Ը

1 8 5 6 . Ռ Յ Ե .




Handwritten notes: A II 32531 and vertical text on the left margin.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

1877

1877

1877



Յ Ը Թ Ը Ջ Ը Բ Ը Ն

Եթէ պատմութիւնը՝ իրրև պարզապէս տէրութեան մը եւ կամ զանազան տէրութեանց մէջ պատահած նշանաւոր դէպքերուն հաւաքումը, օգտակար է, մանաւանդ թէ կենցաղադէտ ու քաղաքակրթեալ մարդու համար՝ հարկաւոր. որչափ եւս առաւել օգտակար եւ հարկաւոր սեպելու է ան պատմութիւնը, որն որ իր մեծագոյն մտադրութիւնը տուած է ընդհանուր ծանրակշռութիւն ունեցող եւ տէրութեանց փոփոխ յարաբերութիւնները պատճառող կամ փոխող դէպքերուն, եւ զանոնք իրարու հետ կցելով ու իրր թէ ամենէն ամբողջ մը կազմելով, կարգաւ յառաջ կը բերէ:

Հասարակօրէն պատմութեանց մէջ ազգերն ու տէրութիւնները՝ իրարմէ բաժնուած եւ միայն առ հարկի իրարու հետ գործողութեան մէջ կը տեսնուին, ան ալ իրենց ներքին փոփոխութիւններուն հարկաւոր եղածին շափ: Բայց յայտնի է որ աս կերպով ընդհանրին վրայ դժուարաւ կրնայ մարդ լուսաւոր տեսութիւն մ'ունենալ, եւ զանազան տէրութեանց մէջ պատահած ժամանակակից ու միեւնոյն պատճառէ յառաջ եկող

դէպքերն իսկ իրարու հետ կապելու՝ դժուարութիւն կը կրէ : Աս անտեղութեան առջեւ ամենիւ համար, տիեզերական պատմութիւն գրող մատենագիրներէն ոմանք վերջին ժամանակները սկսած են բոլորովին նոր կարգ մը բռնել, եւ կարելի եղածին շափ կը ջանան զանազան տէրութեանց իրողութիւններն իրարու հետ կապելով եւ ամբողջի մը ձուլելով պատմել, որուն համար հարկ կ'ըլլայ շատ հեղ տէրութեանց ներքին աննշանակական դէպքերը զուրս ձգել : Մենք ալ աս վերջիններուն հետեւեցանք մեր հոս հրատարակած գրուածքին մէջ, որն որ Եւրոպայի տէրութեանց վերջին երեքուկէս դարերուն քաղաքականութեան պատմութիւնը կը բովանդակէ : Ասոր մէջ տէրութիւնը գլխաւորաբար կը տեսնուին իրարու հետ գործողութեան մէջ, իրրեւ ամբողջի կամ գումարութեան մը մասունքք. իսկ առանձին առանձին՝ միայն այնչափ, որչափ պէտք է իրենց իրարու հետ ունեցած յարաբերութիւններն իմանալու եւ նոյններուն փոփոխուելուն պատճառը տեսնելու համար :

Բայց աս քսուածներէն մէկը շահեւեցընէ որ մեր պատմութիւնը կարգալով տէրութեանց ներքին իրողութիւններուն տեղեակ չիկրնար ըլլալ : — Այնպէս չէ : Ստոյգ է՝ վերը գրուած մեկնութեան համեմատ, մեր գլխաւոր մտադրութիւնը՝ տէրութեանց արտաքին իրողութիւններուն նուիրած ենք. բայց իրենց ներքին իրողութիւններն ալ աչքէ թող չենք տուած : Անանկ որ ընթերցողը չէ թէ միայն զանազան տէրութեանց մէջ եղած պատերազմները, գրուած գաշինքները, իրարու վրայ ունեցած ազդեցութիւնը, անոնց զօրանալուն ու պայծառանալուն կամ տկարանալուն ու իյնալուն պատճառները, մանրամասն եւ իրենց հետեւութիւններովք յառաջ բերուած կը գտնէ. հապա Եւրոպայի բոլոր տէրութիւններուն եւ մանաւանդ անոնց մէջ գլխաւորներուն պատմութիւնը կարգաւ եւ յազեցուցիչ կերպով իսկ կը տեսնէ : Օրինակ ըլլայ միայն Անգղիա, որուն 140 տարւան գրեթէ զուտ ներքին

պատմութիւնը՝ գործքիս աս Ա. Հատորին մէջ, երկր
անգամէն՝ 40 էջի շափ բռնած է (էջ 141—148, 223—
234, 326—342), որով ընթերցողը՝ նոյն տէրութեան
բոյր նշանատր գէպքերուն կատարեալ կը տեղեկա-
նայ: Եթէ բան մը գուրս ձգուած է նէ, ասոնք են
մանրավէպի նման գէպքեր, վեհապետներու եւ ուրիշ
երեսելի անձինքներու աւելի առանձնական ու տնային
կենաց վերաբերեալ գործքերը եւ աս կամ՝ ան առթի
մէջ գրուցած խօսքերը, ծակատներու եւ զանազան
հանգէտներու ընդարձակ նկարագիրը, որոնք գրեթե
ցողն աւելի կը զուարճացընեն՝ քան թէ իր հիմնական
պատմական տեղեկութիւնները կը մեծցընեն: Ասոնք
եթէ մէկիկ մէկիկ յառաջ բերել ուզէինք, մեր նպա-
տակէն գուրս ելլելէն զատ, իրարու հետ զօգուած եւ
իրրեւ ամբողջ մը կազմող ծանրակշիռ ու հետեւու-
թիւն ունեցող գէպքերուն պատմութեան թելը կտրե-
լու կը ստիպուէինք, որով եւ ընթերցողին մտադրու-
թիւնը կը ցուէր:

Մեր գրուածքին ընդհանուր ընթացքն ու հան-
գամանքը գրուցելէն ետեւ, կարծենք թէ անօգուտ
է՛րլլար անոր մէջ բռնած կարգերնուս եւ ձեռուրնիս
գտնուող մատենադրաց վրայ ալ հոս տեղեկութիւն մը
տալ: — Իսկզբան՝ իրրեւ Եւսեւաշուսիդ մը՝ Եւրոպայի
տէրութեանց սկզբնաւորութիւնը համառօտիւ մը կը
դնենք, եւ իրենց պատմութիւնը զատ զատ յառաջ
տանելով, մինչեւ ԺՆ. դարուն վերջը կը հասցընենք,
ուր կը սկսի մեր բուն պատմութիւնը: Ասով իրր թէ
ընթերցողին առջևը կը բանանք ան դաշտը՝ որուն
վրայ զինքը ետքէն երկբուկէս դարէն աւելի պիտի
պտրտցընենք, կը բարձրացընենք ան հիմունքը՝ որուն
վրայ վերջէն մեր պատմութեան շէնքը պիտի կան-
գնուի: Իսկ բուն գործքը երկք գլխաւոր Յրջան կը
բաժնենք, որոնց առաջինը՝ 1492էն մինչեւ 1661 կ'եր-
թայ, երկրորդը՝ նոյն ժամանակէն մինչեւ 1786, եր-
րորդը՝ ան առանձնէն մինչեւ մեր օրերը: Ամէն մէկ շըր-
ջանը զանազան ժամանակի միջոց կը բաժնենք, որոնց

իրաքանշիրին սկիզբը՝ նախ երեւելի տէրութեանց մէջ պատահած զուտ իրենց ներքին վիճակին վերաբերող փոփոխութիւնները կը դնենք. նոյնպէս ամբողջ ժամանակի միջոցին վրայ յառաջուրնէ յայտնի զազափար մը տալու համար, շատ հեղ խիստ համառօտ կերպով կը յիշատակենք նաև ան ղէպքերը՝ զորոնք ետքէն ընդարձակ պիտի պատմենք: Ասոնք իրրև պատրաստութիւն գրելէն ետեւ, կ'անցնինք բուն ընդհանուր ղէպքերուն, զորոնք իրարու հետ զօգելով ու կապելով, ամբողջի մը ձուլուած կը պատմենք: — Աս առաջին Հատորը կը բովանդակէ Նախաշաւիղն ու առաջին շրջանը. մէկալ շրջաններն ալ մէյ մէկ զատ Հատոր պիտի բանեն:

Գանք հիմայ ձեռուրնիս գտնուած մատենագիրներուն: Գլխաւոր առաջնորդնիս եղած է Հէէրէն անուանի պատմագրին՝ Պատմութիւն գումարութեան Եւրոպական տէրութեանց՝ կոչուած համբաւաւոր մատենանք, որն որ կրնայ ըսուիլ թէ իրմէ ետքը Եւրոպայի ընդհանուր պատմութիւն գրող թէ գերմանացի եւ թէ ուրիշ ազգաց մատենագիրներուն առաջնորդ եղած է, որոնք շատ տեղ իր կարգին հետեւելէն զատ, նաև իր կարծիքներն ու խորհրդածութիւններն անձանց կը սեպհականեն, եւ խիստ յաճախ իր խօսքերը բառ առ բառ կ'օրինակեն: Բայց որովհետեւ ինք կ'ենթադրէ որ պատմութիւնն իր ընթերցողներուն արդէն ծանօթ է, եւ այնպէս ղէպքերը գրեթէ աւելի անցողակի մէկերկու բառով կը յիշատակէ, եւ զանոնք իրարու հետ կապելով անոնց վրայ խորհրդածութիւն կ'ընէ. անոր համար իր գրուածքը գործածած ժամանակնիս ջանացինք անանկ վիճակի մէջ դնել, որ պատմութեան տեղեակ շրջողն ալ կարենայ հասկընալ, եւ քաղաքականութեան հետ նաև տէրութեանց ամբողջ պատմութիւնն առջին ունենայ: Իրմէ զատ մեզի նպաստող Գաղղիացի, Գերմանացի, Անգղիացի, Իտալացի պատ-

¹ Heeren, Handbuch der Geschichte des europäischen Staatensystems.

մագրաց մէջ յիշատակուելու արժանի են. Ահպէր¹,
 Լըֆրան², Գանդու³, Բուց⁴, Քիլլի⁵, Լեւի Ալուարէզ⁶,
 Այխտոն⁷, Սեկիւր⁸, Պուսիլլէր⁹:

Ասոնք եւ ուրիշ թէ տիեզերական ու թէ մա-
 սնական պատմութեանց սկզբնաղբիւրները ձեռուրնիս
 ունեցած, եւ ամէն բան խղճահարական երկիրաժողո-
 թեամբ քննած, համեմատած, ճշդած ըլլալով, կրնանք
 ըսել որ մեր կողմանէ ամէն կերպով ջանացինք մեր
 ընթերցողաց առջևը՝ դիրքմբռնելի, ծիշդ ու անկող-
 մեակալ պատմութիւն մը հանելու: Բայց կրնայ ըլլալ որ
 միայն մեկ ազգէ գրուած պատմութիւններ կարգալու
 վարժողները, աս մեր պատմութեան մէջ դէպքերն՝ ի-
 րենց հասարակօրէն կարգացածէն սլլազգ պատմուած
 կամ տարրեր կերպարանքի մէջ ներկայացած տեսնե-
 լով, անանկ համարին որ նոյն տարրերութիւնը՝ մեր
 կողմեակալութենէն յառաջ եկած ըլլայ: Սակայն այն-
 պիսիք՝ իրենց դատաստանը չկտրած, պէտք են միտ-

¹ Weber, Lehrbuch der Weltgeschichte. Դասագիրք տիեզերական
 պատմութեան. Բ. 2-րդ. 1844-45. Գ. 87-րդ. 1849:

² Lefranc, Histoire Moderne. Նոր պատմութիւն. Բ. 2-րդ.
 Փոքիչ, Է. 87-րդ. 1848:

³ Cesare Cantù, Storia universale. Տիեզերական պատմու-
 թիւն. ԺԸ. 2-րդ. Գ. 1-րդ, 1838—1846:

⁴ Büß, Grundriß der Geographie und Geschichte. Բազանդակու-
 թիւն աշխարհագրութեան եւ պատմութեան. Գ. 2-րդ.
 Գ. 7-րդ, Գ. 87-րդ. 1851:

⁵ Keightley, Outlines of History. Երազիր պատմութեան.
 Լ. 2-րդ, 1837:

⁶ Lévi (Alvarès), Nouveaux éléments d'histoire générale.
 Նոր տարրեր ընդհանուր պատմութեան. Բ. 2-րդ. Փոքիչ,
 ԺԸ. 87-րդ. 1838:

⁷ Giesbörn, Weltgeschichte. Տիեզերական պատմութիւն. Է. 2-րդ.
 Ռ. 2-րդ, 1820:

⁸ Ségur, Compendio della Storia universale. Համեմատու-
 թիւն տիեզերական պատմութեան: (Իտալերէն թարգմա-
 նութիւն, ուրիշներուն շարունակութեամբը) ԾԶ. 2-րդ.
 Միլլան, 1818—1830:

⁹ Dumüller, Weltgeschichte. Տիեզերական պատմութիւն. Բ. 2-րդ.
 Փոքիչ, 1855:

քերնին բերել որ Հայազգի մասննագիր մը, Եւրոպայի մէկ կամ մէկալ ազգին աւելի միտելու պատճառ մը շունենալով, եւ անոնց ամենուն պլիկայլ պատմագիրներն իրարու հետ համեմատելու, մէկուն շափագանցութեամբ կամ կողմնակալութեամբ պատմամը՝ մէկալներուն ըսածներովը ճշգելու վիճակի մէջ գտնուելով, աւելի կրնայ անկողմնակալութեամբ վարուիլ, քան թէ ազգի մը պատմագիրն իր ազգին սեպհական գործքերը պատմամ տեսն, որովհետեւ իր ազգին ունեցած բնական բերմամբը՝ վերջինը գրեթէ միշտ կը մղուի անոր նպաստաւոր կերպով գրելու:

Այսպէս գրուածքիս կատարելութեան համար մեր կողմանէ ամէն ջանք ըրած ըլլալով, յուսանք որ ազգային գրագիտութեան գանձանակին՝ մեր տկարութեան ներածին շափ մատակարարած սա նաքարակիտնիս, ընդունելութեան արժանի կ'ըլլայ. եւ շքեշք շքեշք շքեշք մեծարոյ ընկերագիրները, որոնց առատածեանութեան մէկ արդիւնքն ասով կ'ընծայուի Ազգիս, ինչպէս նաեւ բոլոր ուսումնասէրք հաճութեամբ կը տեսնեն ասանկ գրուածք մը, որն որ՝ կը համարձակինք ըսել՝ թէ ըստ նիւթոյն եւ թէ ըստ ներքին հանգամանաց հիմակուան ժամանակին խիստ յարմար է:

ՅԸՆԿ ՆԻԻԹՈՑ

Ն Ա Ն Ա Յ Ա Ի Ի Ղ

1. Նոր պատմութիւն:	1
2. Եւրոպայի ծանրակշռութիւնն ու տէրութեանց ի- րարու հետ անձուկ կապակցութեան մէջ մանկը:	2
3. Տէրութեանց միակերպութիւնն ու սյլեւսյլու- թիւնը: — Խնամութիւնը:	3
4. Տէրութեանց նեցուկ եղող սկզբունք:	4
5. Կառավարութեան կերպ:	5
6. Բաժանում:	6
7. Ե. ԵՆԳՂԻԵ. Հին բնակիչք ու Հռոմայեցիք: Ան- զղիացիք ու Սարսոնիացիք:	8
8. Անդրասարսոնեան Եօթնպետութիւն: Գանիացիք (Նորմանք) եւ իրենց Գանուդ թագաւորը: Եզու- արդ խոստովանող: Գուլիելմոս Աշխարհակալ:	9
9. Բլանդանենեղեան ցեղին թագաւորները:	10
10. Մեծ հրովարտակ: Խորհրդանոց: Երգուելոց ա- տեան: Խորհրդանոցը երկու սենեկի կը բաժնուի:	11
11. Գազղիայի հետ հարիւրամեայ պատերազմ: Լան- գասդերի ու Եորպի ցեղին թագաւորները: Կարմիր ու ձերմակ վարդերու պատերազմ: Հենրիկոս Ե. Գուտոր:	12
12. Բ. ԳԵՂՂԻԵ. Հին բնակիչք ու Հռոմայեցիք: Փրանդք եւ իրենց թագաւորութիւնը: Մերովեան ցեղին թագաւորները:	13
13. Կարուսեան ցեղի թագաւորք: Կարուս Մեծ:	14
14. Վերտեօնի զաւնարութիւն: Գազղիայի, Վերին ու Ստորին Պուրկուսիայի տէրութիւնները:	15
15. Նորմանացիք: Դուքսք եւ Կամք: Կապեանեան ցեղ:	16
16. Աւասային կարգաւորութիւնք:	17
17. Աւագ նախարարք ու Խնամարհացոյն ազնուականք: Սարուկք կամ ծառայք:	18
18. Ազատ քաղաքացիք: Ընդհանուր կարգաւորողներ: Քաղաքային պատգամաւորներ:	19

19.	Թագաւորաց իշխանութիւնը կը մեծնայ: Փարիզի խորհրդանոց:	20
20.	Կապուտեան-Վալուայի ցեղի թագաւորը: Անդրիայի հետ հարիւրամեայ պատերազմ: Օրլէանի օրիորդ:	21
21.	Չինուորական կարգադրութիւնը: Թագաւորին իշխանութիւնն աւելի կ'ընդարձակի:	22
22.	Գ. ԳԵՐՄԱՆԻԱ. Գերմանացիք Հռոմայեցւոց կայսրութիւնը կը քակեն: Փրանզք եւ ուրիշ գերմանական ազգերը:	23
23.	Գերմանիայի թագաւորութիւնն ընտրական կ'ըլլայ: Սուրանեան ցեղի թագաւորը: Ոթոն Ա. կայսր կը պսակուի:	24
24.	Փրանզեան կամ Սալեան կայսերք: Քահանայապետաց հետ երկպառակութիւնը: Վէլֆեանք ու Վալպլինդեանք:	25
25.	Թագաւորն ու ազատանւոյն բաժանումը: Աւագածոզով ու դաւառածոզով: Քաղաքացիք:	27
26.	Կայսրընտիրք: Պետութեան հիմնարկութիւնը, ասպետութիւնը ու քաղաքը: Քաղաքացիք:	28
27.	Անիշխանութիւն, անկարգութիւնը ու յափշտակութիւնը:	29
28.	Հապսուրկի ցեղը:	30
29.	Ոսկեզէն հրովարտակ: Երկրին մշտնջենաւոր խաղաղութիւնը: Կայսերական սենեկի դատաստանարան: Պետութեան արքունեաց խորհուրդ:	31
30.	Գ. ԻՏԱԼԻԱ. Գերմանական ազգեր, Լոնդոնաւորացիք, Գաղղիացիք:	32
31.	Կարոլոս Մեծ՝ թագաւոր ու կայսր:	33
32.	Արարացիք: Ոթոն՝ կայսր: Նորմանք:	34
33.	Անկախ տէրութիւնը: Լոմպարտեան զաւնակցութիւն:	35
34.	Իտալիայի առանձին տէրութիւնը:	36
—	Ա. Հռոմ տէրութիւն:	36
—	Բ. Երկու Սիկիլիա:	37
—	Գ. Սարդինիա:	38
—	Դ. Վենետիկ:	39
—	Ե. Փլորենտինա եւ Բիզա:	40
—	Չ. Ճենուա:	41
—	Է. Միլան:	41
35.	Ե. ՍՏՈՐԻՆ ՆԱՀԱՆԳՔ. Ես երկրին տիրողները:	42
36.	Պարկունտիայի դքսերն ու Հապսուրկի տունը:	43
37.	Չ. ՀԵԼՍԻՆԵՏԻԱ. Այլեւայլ փոփոխութիւնք՝ մինչեւ Գերմանիայի հետ միանալը:	44
38.	Հելուէտական զաւնակցութիւն:	45

39. Է. ՍՊԸՆԻՆ. Սպանիա դազթնոզ ազգերը: . . .	46
40. Երարացոց թագաւորութիւնը: Օմայեանք ու Եզգայանեանք: Քրիստոնէոց տէրութիւնք: . . .	47
41. Քրիստոնէոց տէրութիւնք: Սանրէա Մեծ ու իր որդիքը:	48
42. Խորհրդանոց կամ կարգածողով: Միութեան ար- տօնութիւնք:	50
43. Թագաւորական իշխանութիւնը կը մեծնայ: Հեաա- զօտութեան ատեան:	51
44. Ը. ԲՈՐԴՈՒԿԸԼ. Բորգուկայ Հաստատուող ազգե- րը: Պուրկուճախոյի Հենրիկոս կամը:	52
45. Ալփոնսոս Ը. թագաւոր: Պուրկուճական անհա- րազատ ցեղ: Նաւազնացութիւնք:	53
46. Թ. ԱՒՍՏՐԻՆ. Աւստրիայի սահմանակիտնութիւն:	54
47. Աւստրիա Հապսուրկի տան ստացում:	55
48. Հապսուրկի տան մեծնալն ու ակնկալութիւնները:	56
49. Ժ. ՀՈՒՆԳԵՐԻՆ. Սկզբնաւորութիւն. թագաւո- րութիւն ըլլալը:	57
50. Այլեւայլ ցեղերէ թագաւորք:	58
51. ԺԸ. ԲՈՀԵՄԻՆ. Սկիզբէն՝ մինչեւ թագաւորութիւն ըլլալը:	59
52. Զանազան աներէ թագաւորք:	59
53. ԺԲ. ՕՍՄԸՆԵԱՆ ՏԷՐՈՒԹԻՒՆ. Եւրոպական Տանկաստանի յառաջուան վիճակը:	61
54. Օսմանեան տէրութեան ստատիկ մեծնալը:	62
55. ԺԳ. ԴԸՆԻՆ. ՀՈՒԵՏ ՈՒ ՆՈՐՈՒԵԳԻՆ. Աս տէ- րութեանց վիճակը մինչեւ ԺԳ. դար:	62
56. Գալմարեան Միութիւն:	63
57. ԺԴ. ԼԵՀԵՍՏԸՆ. Բիսպական ցեղին տակ:	65
58. Ազնուականք: Եսկէլլանեանք:	65
59. ԺԵ. ՌՈՒՍԸՍՏԸՆ. Սկզբնաւորութիւն:	67
60. Ռուսաստան կը բաժնուի: Մոնկոլք: Իւան Ը. Վա- սիլէւիչ:	67

Ե Ռ Ը Զ Ի Ն Թ Բ Զ Ա Ն

ԺԾ. ԴԵՐՈՒՆ ՎԵՐԱԷՆ ՄԻՆՉՈՒ ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԴ.Ն ԺԸՄԸՆԱՅՆՈՐԸ

(1492—1661)

1. Աս շրջանին յատուկ կերպարանքն ու հոգին: . . .	71
2. Գլխաւորաբար գործունէութիւն ունեցող տէրու- թիւնք:	72
3. Բաժանում:	73

ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՑ ԺԱՄԸՆԵՆԿԻ

Ա. Իսթաթիայի համար տեղի ունեցած զանազան զորքերի մասին (1492—1555):

4. Իսթաթիայի վիճակը:	75
5. ՍՊԸՆԻԱ. Փերդինանդ ու Եղիսարիթ:	76
6. Կարոլոս Ա. (Ե.):	77
7. ԱԻՍՏՐԻԱ. Մաքսիմիլիան Ա., Կարոլոս Ե. (Ա.), Փերդինանդ Ա.:	79
8. ԳԵՂՂԻԱ. Կարոլոս Ա., Լուդովիկոս ԺԲ., Փրանկիսկոս Ա.:	79
9. ԱՆԳՂԻԱ. Հենրիկոս Է. եւ Ա.:	81
10. ՕՍԿԱՆԵՆՆ ՏԷՐՈՒԹԻՒՆ. Պապագիտ Բ., Սեղիմ Ա., Սիլվեստրե Ա.:	83

Ա. Իսթաթիայի համար եղած կոնվենցիա, մինչեւ
Փրանկիսկոս Ա.ին ու Կարոլոս Ե.ին ատենը
(1494—1515):

11. Կարոլոս Ա. Նեապոլոսյ կը տիրէ ու շուտ մը կը մերժուի:	84
12. Աս ղեպքերուն հետեւութիւնները: Լուդովիկոս ԺԲ.ին արշաւանքը:	85
13. Կրանաւայի զաշինքը: Փերդինանդ Նեապոլոսյ կը տիրէ. իսկ Գաղղիացիք Միլանի մէջ կը հաստա- տուին:	87
14. Յուլիոս Բ. քահանայապետ: Մաքսիմիլիանին Ի- սթաթիկան արշաւանքը:	88
15. Գանպրէի նիզակակցութիւնն ու անոր հետեւու- թիւնները:	89
16. Արբաղան նիզակակցութիւն:	90
17. Գաղղիացոց ու նիզակակցաց մէջ պատերազմ: Աս պատերազմին հետեւութիւնները:	91

Բ. Փրանկիսկոս Ա.ին ու Կարոլոս Ե.ին (Ա.ին)
ստիսութիւնը (1515—1546):

18. Երկու ստիս վեհապետները:	93
19. Փրանկիսկոս Ա.ին Իսթաթիկան արշաւանքը: Նոյն- նի զաշինքը:	94
20. Մաքսիմիլիան Ա. կը մեռնի: Գերմանիայի կայսե- րական թագը:	95
21. Կարոլոս՝ կայսր կ'ընարուի:	96
22. Կարոլոս Ե.ին արաւարին ղիրքն ու զօրութիւնը:	98
23. Երկու կողմանց իրական զօրութիւնը:	98

24. Հենրիկոս Ը. եւ երկու ոստիաներուն մէջ իր ունե- ցած դիրքը:	100
25. Առաջին պատերազմ: Գազզիացիք խառնուելն կը մերժուին:	101
26. Պատերազմին շարունակութիւնը: Բաւիայի յաղ- թութիւնն ու Մաարթաի խաղաղութիւնը:	102
27. Գոնեսպի նիզակակցութիւն: Այստերականք Հռոմ կառնուն:	104
28. Երրորդ պատերազմ: Գանպրէի խաղաղութիւն: 105	105
29. Առ պատերազմին հետեւութիւնները:	106
30. Օսմանեանք Հունգարիայի մէջ:	107
31. Օսմանեանց ծովական զօրութիւնը: Ափրիկէի ծա- փահէն տերութիւնները:	108
32. Երրորդ պատերազմ: Նիցցայի զինագազար:	110
33. Զինագազարին շուտով քակուելուն առիթները: Օսմանեանց հետ պատերազմ:	111
34. Չորրորդ պատերազմ: Գրեբիի խաղաղութեան գաւիթը:	112
35. Առ պատերազմներուն հետեւութիւնները:	114

ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՅ ԺԱՄԱՆԱԿԻ

Բ. Նորազանգութիւն +չ+ւ+ւ+ւ նիւրաւի իւլիոսի փոխ-
կէսնութիւն (1517—1555)

36. Ընդհանուր տեսութիւն:	116
------------------------------------	-----

Ա. Նորազանգութիւն Գերմանիայի մէջ:

37. Գերմանիայի նախարարական ցեղերը:	117
38. Նորազանգութեան սկսիլն ու քաղաքական կեր- պարանք առնուլը: Արմսի աւազածողովը:	119
39. Գեղացւոց պատերազմ:	120
40. Պրուչի աշխարհականանալը:	122
41. Տեսաւաի ու Գորկաւի գաղնակցութիւնք: Ընդհա- նուր ժողովոյ իօսք:	123
42. Շփայլերի ու Աւիսպուրկի աւազածողութիւնը: Բողո- քական անունն ու Աւիսպուրկեան դաւանութիւնը:	124
43. Շմարչալտեան նիզակակցութիւն: Նիւնպերկի առժամանակեայ խաղաղութեան գաւիթը:	126
44. Բողոքողաց յանգուզն գործքերը: Միւնպերկի Արկնակնունքք: Շմարչալտեան նիզակակցութիւնը կը նորոգուի:	127
45. Սրբազան նիզակակցութիւն: Հեստենի աշխարհա- կամսին երկկնութիւնն ու Պրուսիայի դրոփն դէմ ըրած պատերազմը:	128

46. Ընդհանուր պատերազմին սկսիլը խափանող զէպ-
քեր: Տրիդենտեան ժողով: Պատերազմի պատրաս-
տութիւն: 130

47. Պատերազմ: Շմաղալականը կը յաղթուին: . . . 132

48. Կայսեր բռնած ընթացքը: Եւկայուրկի աւագա-
ժողովները: 133

49. Կայսեր խորհուրդները: Մարիկ կոյսրընտրին
ապաստմութիւնը: 134

50. Պատերազմ: Բասաւեան դաշնագրութիւն: . . . 136

51. Քաղցիական պատերազմ: Վասէլի զինագաղար:
Ներքին շփոթութիւնը: 137

52. Եւկայուրկի կրօնական խաղաղութիւն: Եկեղեցա-
կան վերապահութիւն: 138

53. Կարսու Ե-ին հրամարումն ու մահը: 139

54. Նորազանդութեան տարածումն ու բաժանումները:
Բ. Ընդդիպի, Հելուեափայի, Ճինեւրայի ու Քաղ-
զիպի մէջ նորազանդութիւն մտնելը: 141

55. ԸՆԳՂԻՆ. Հենրիկոս Ը-ին իր ամուսնէն բաժնուիլը: 141

56. Ընդդիպի հերձուածն եւ ուղղափառաց ու բողո-
քականաց հալածումը: 143

57. Հենրիկոսի այլեւայլ ամուսնութիւններն ու մահը: 144

58. Եզուարդ Զ. Բողոքականութիւն: Քահակալու-
թեան շփոթութիւնը: 145

59. Մարիամ Թագուհի: Ուղղափառութիւնը նորէն
կը հաստատուի: 146

60. ՀԵՂՈՒՆՏԻՆ. Յուինկլիի նորազանդութիւնը:
Քարբէլի ճակատն ու կրօնական խաղաղութիւն: 148

61. ՃԻՆԵՒԻՐԸ. Կրօնական ու քաղաքական շփոթու-
թիւնը: Կալուին եւ կալուինականութիւն: . . . 149

62. ԳԵՂՂԻՆ. Նորազանդութեան սկզբնաւորութիւնը: 151

63. Յիսուսեանը: 152

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԳԻՏՈՒՄ ԺԱՄԿԱՆԿԻ

Գ. Գրիգորիան-Յիանց զարմանք (1492—1555)

64. Քաղթականութեանց վրայ ընդհանուր տեղեկու-
թիւն: 154

65. Քաղթականութեանց մայր երկիրներուն հետ ու-
նեցած յարաբերութիւնը: Ըստնց հետեւութիւն-
ները: 155

Ե. Քաղթականութեանց սկզբնաւորութիւնն ու
առաջին գիտները (1492—1515):

66. Բողոքականաց առաջին նաւագնացութիւններն ու
գիտները: 156

67. Սպանիացւոց զիւտերը: Արեւմտեան Հնդկաստան
ու Ամերիկա: 158

68. Սպանիացւոց դասած տեղերուն ոսկեհանքներն ու
ընակիչները: 159

69. Բորգուկալցիք ծովով Հնդկաստանի ճամբան կը
դանեն ու հոն կը հաստատուին: 160

70. Բորգուկալցոց զաղթականութիւն հաստատելու
կերպն ու Հնդկային վաճառականութիւնը: . . . 162

Բ. Առ ժամանակի միջոցին մէջ Գաղթականու-
թեանց նկատմամբ եղած յառաջադիմութիւնը
(1515—1555):

71. Մեքսիկայի ու Բերուի աշխարհակալութիւնները: 163

72. Հին ու նոր քաղաքներ: 165

73. Հանքահանութիւն: 166

74. Սեւամորթ գերիներ: 167

75. Վաճառականութիւն: 168

76. Սպանիացւոց ստացուածներուն վիճակը: Քրիստո-
նէութեան ազդեցութիւնը: Լատալազատ: . . . 169

77. Կառավարութեան կերպ ու քաղաքական կար-
գաւորութիւնը: 171

78. Եկեղեցական կարգաւորութիւնը: 172

79. Ընկերական վիճակ ու ցեղական բաժանմունք: . 172

80. Հին բնակչաց համար արուած օրէնքներն ու կար-
գաւորութիւնները: 173

81. Բորգուկալցոց Արեւելեան Հնդկաստանի վաճառ-
կանութիւնն ու երկիրները: Հենաստան ու Հարան: 174

82. Պրազիլիա եւ Աֆրիկեան ստացուածք: 176

83. Սպանիացւոց եւ Բորգուկալցոց մէջ հակառակու-
թիւն: Մակելլանի անցք: 177

ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋՈՅ ԺԱՄԱՆԱԿԻ

Ա. Ստորին Նահանգաց անկախութիւնը (1555—1618):

84. Ընդհանուր տեսութիւն: 179

85. Ստորին Նահանգները քաղաքականութեան զլխաւ-
որ նիւթ կ'ըլլան: Փաղղիա ու Անդղիա: . . . 180

Ա. Ստորին Նահանգաց յեղափոխութիւնն ու ան-
կախութիւնը (1555—1609):

86. Սպանիա՝ Փիլիպպոս Բ-ին ու Ք-ին ատենները:
Բորգուկալ Սպանիայի հետ կը միանայ: Սպանիա
տկարանալու կը սկսի: 181

87. Արքունեաց զեւթերը: Մարիտանացւոց մերժուի-
լը: Եսոփական արշաւանք: 183



88.	Ստորին նահանգաց վրայ ակզեկութիւն:	184
89.	Փիլիպպոս Բ-ին դահ էլամ ատեն Ստորին նահանգաց վիճակը: Գազզիայի հետ պատերազմ: Գաղայ - Գանայրեզիտի խաղաղութիւն:	185
90.	Ստորին նահանգաց տրաուսլները: Էկմանտ կամ սը. Օրանիայի իշխանն ու Հոռնի կամը: Նուիրապետութեան մէջ փոփոխութիւն:	187
91.	Գրգոսութիւնը կը սաստկանան: Ըզնուականաց զանակցութիւնը: Մուրացիկը:	188
92.	Գրգոսութիւնն ապստամբութեան կը դառնայ: Օրանիայի իշխանը:	190
93.	Ըլպայի դուքսը: Վրգովմանց խորհուրդ:	191
94.	Տասանորդի հարկ: Ծովական մուրացիկը: Հիւսիսային դաւառներուն ապստամբութիւնը:	193
95.	Ըպստամբը օտարաց կը դիմեն:	194
96.	Ռերուեզէնս կուսակալը: Ընդուերրիայի աւարտութիւնը: Վենդի հաշտութիւնն ու Պրիւսսելի միութիւնը:	196
97.	Տ. Յովհաննիս կուսակալութիւնը: Մասամիտա արքիզուրան ու Ընժուի Փրանկիակոս դուքսը:	197
98.	Ըզէրսանդը Փառնեզէ՝ կուսակալ: Ուզրեիդի միութեան դաշինք: Բեզգիական եւ Բատաւեան նահանգները բոլորովին իրարմէ կը բաժնուին:	199
99.	Ընժուի դուքսն ու Օրանիայի իշխանը: Վերջնայն մահն ու իր Մարիկ որդին:	200
100.	Ընդզիական օգնութիւն: Ըտզերի կամը: Ընդհանուր կարգաժողովոյ եւ կուսակալի կողմնակցութիւնը:	202
101.	Ընդզիա ու Գազզիա Սպանիայի հետ պատերազմի կ'ելեն: Ըսոր՝ Ստորին նահանգաց վրայ ունեցած ազդեցութիւնը:	203
102.	Տասուերիու տարան զինազարգար:	205
103.	Ստորին նահանգաց անկախութեան՝ Եւրոպայի վրայ ունեցած ազդեցութիւնը: Նոր հասարակապետութեան ներքին հանգամանքը:	206
Բ. Գազզիայի գլխաւոր փոփոխութիւնները:		
104.	Ներքին պատերազմներուն բուն պատճառը: Նախարարը եւ քաղաքացիք:	207
105.	Վիզեանը եւ Պուրպոնեանը: Փրանկիակոս Բ.: Ընպուսպեան դաւակցութիւն:	209
106.	Նորազանգից շփոթութիւնները: Վարուս Թ.: Եունուարի հրովարտակ:	210
107.	Ըռաջին եւ երկրորդ կրօնական պատերազմներ:	

Անպուստի հաշտութեան հրովարտակն ու Լոնտի-
մայի խաղաղութեան դաշինքը: 212

108. Երբորդ կրօնական պատերազմ: Ս. Ժերմէնի խա-
ղաղութիւն: 213

109. Բարթողիմոսի դիշեր: 214

110. Չորբորդ ու հինգերորդ կրօնական պատերազմ:
Ռաշէլի ու Պոլիէզի խաղաղութեան դաշինքները:
Հենրիկոս Գ.: 216

111. Կիզեանց ու Վելտաասանից նիզակակցութիւն: Վե-
ցերորդ, Եօմներորդ եւ ութերորդ պատերազմ: 217

112. Կիզի դքսին ու Հենրիկոս Գ.ին սպանուիլը: Հեն-
րիկոս Գ.: 218

113. Գազդիայի ներքին վիճակն ու արտաքին քաղա-
քականութիւնը: Սպանիայի դէմ պատերազմ: 220

114. Եւրոպական հասարակագեաութեան կամ տերու-
թեանց ժողովոյ մը դադափար: Հենրիկոս Գ.ին
մահը: 221

115. Հենրիկոս Գ.ին մահուան ազդեցութիւնը: Ռիչլիեօ: 222

Գ. Անգղիայի զլխաւոր փոփոխութիւնները:

116. Եղիսարեթ թագուհւոյն կրօնական քաղաքակա-
նութիւնը: Անգղիական եկեղեցի եւ Պարզակրօնը:
Հաշտում: 223

117. Սկոտիա եւ Մարիամ Աղուարդ: 225

118. Մարիամ Աղուարդ Սկոտիայի մէջ: Տառնի եւ
Պոթուէլ: 227

119. Մարիամ Աղուարդոյ Անգղիա երթալն ու սպա-
նուիլը: 229

120. Սպանիայի հետ պատերազմ: 230

121. Իրլանտայի դէմ արշաւանք: Եղիսարեթին մահը: 231

122. Յակոբ Ա.: Վառօղոյ դաւակցութիւն: 232

123. Անգղիայի մեծութեան հիմը կը դրուի: Վաճառա-
կանութիւն ու նաւազնացութիւն: 233

ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋՈՅ ԺԱՄԱՆԱԿԻ

Բ. Հիւսիսային տերութիւնը իւր-իւրեւից զտրուիլով
(1513—1618)

124. Ընդհանուր տեսութիւն: 235

125. ՍԿԱՆՏԻՆԱՒԱՆ. Սկանտինաւեան տերութիւնը
ընդհանրապէս: 235

126. Դանիայի Քրիստիան Բ. թագաւորը՝ Շուեաթի թագը
կ'առնու: Նոյն թագաւորին անազորունութիւն-
ները: 236

127.	Կուստաւ Աւագաւ Շուկա Դանիայէն բաշտրոզին կը բամնուի: Մալձայի գաշնակցութիւն:	238
128.	Կուստաւ Աւագային թագաւորութիւնը: Չորսրնակք: Թագաւորական սատիճանն իր ցեղին մէջ ժառանգական կ'ըլլայ:	239
129.	Կուստաւ Աւագային շորս որդիքը: Էրիք ժԴ. Յովհաննէս Գ. ու Կարոլոս Թ. թագաւորները:	241
130.	Դանիայի Քրիստիան Գ., Փրեզերիկոս Բ. ու Քրիստիան Գ. թագաւորները: Հոլլոյսն-Վոզգորրի ցեղը: Նորագանդութիւն:	242
131.	ԼեհէՍՏՏԱՆ. Եսկեկանեանց վերջին թագաւորներն ու ազնուականք: Վիթուանիա ու Վիսնիա:	244
132.	Լեհաստան ընտրական թագաւորութիւն կ'ըլլայ: Առաջին ընտրական թագաւորք:	245
133.	ՊՐՈՒՇ. Տեւտոնեան ստպետներուն ստացուածք կ'ըլլայ:	247
134.	Լեհք Պրուսիայի մէկ մասին կը տիրեն, մկալ մասն ալ իրենց աւատապետութեան տակ կ'առնուն: Երեւելեան Պրուսիա ժառանգական դրութեան կը գառնայ եւ Պրանսկնոյսրիի հետ կը միանայ:	248
135.	ՌՈՒՍՍՏԱՆ. Ներքին վիճակ: Իւան Բ. Վասիլեւիչ:	249
136.	Ռիւրիկեան ցեղը կը սպառի: Պարիս:	250
137.	Սուա Գեմարներ: Ռոմանոֆ ցեղին գահ կ'ըլլէ:	252
138.	Վիսնիայի քաղաքական հանգամանքները: Նոյն գաւառին պատճառաւ եղած պատերազմներուն սկզբնաւորութիւնը:	253
139.	Վիսնիական պատերազմ: Դանիական-Շուկաական պատերազմ: Շրեզդինի խաղաղութիւն: Քրիվերոզա-Նորգայի խաղաղութիւն եւ Բլուլամուճաթի գինաղաղար:	254
140.	Լեհաստանի եւ Շուկաի մէջ յաջորդութեան կռիւ: Ռուսական յաջորդութեան պատերազմ: Սոքոլոզոզայի խաղաղութիւն ու Տեւիլինոյի գինաղաղար:	255

ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ

Գ. Գալթ-Վան-Բիւնց Վաթ-Քիւն (1555—1618):

141.	Ընդհանուր տեսութիւն:	258
142.	Երեւելեան Հնդկաստանի մէջ Բորգուկալլոց իշխանութեան նուազին ու ասոր պատճառները: Ուրիշ մէկ երկու տեղ իրենց ստացուածները կ'աճին:	258
143.	Սպանիացոց գաղթականութիւններն ու իրենց նոր մրցակիցները:	260
144.	Հոլանտացոց՝ համալսարհական վաճառականու-	

Թեան ձեռք զարնելն եւ նոյնին մէջ ըրած յառա-
ջագիտութեան պատճառները: 261

145. Հոլանտացոց Արեւելեան Հնդկաստանի ընկերու-
թիւնը: 262

146. Հոլանտացոց գաղթականութիւնները: 263

147. Ընդդիմացոց ակերտական վաճառականութեան ա-
ռաջին փորձերն ու նաւազնացութիւնները: 264

148. Ընդդիմացոց Հիւսիսային Ամերիկայի մէջ հաստա-
տած գաղթականութիւնները: 266

149. Հոլանտացոց եւ Ընդդիմացոց գաղթականութիւն
հաստատելուն ընդհանուր հետեւութիւնը: 267

ԵՐԲՈՐԴ ՄԻՋՈՅ ԺԱՄԱՆԱԿԻ

Ա. ԳԵՐՄԱՆԻԱՆԻ ԵՐԻՆՆԵՐԻ ԴՄԵՐՈՎՆԵՐ (1618—1661):

150. Աս ժամանակի միջոցին կերպարանքն ու հոգին: 268

151. ԳԼՂՂԼԵ. Ռիչլիֆի թաղարականութիւնը: 269

152. Մազարէն: Պարսաստրաց վրդովմունքը: Լուդու-
փիկոս ժ.Գ.: 270

153. ՍՊԵՆՏԵՆ. Փիլիպպոս Գ.ին թագաւորութեան ժա-
մանակը: 271

154. ԲՈՐԴՈՒԿԵԼ. Սպանիայէն կը բաժնուի: 271

155. ՀՈՒԼԵՆՏԵՆ. Սպանիայի հետ պատերազմ: Վրոնա-
կան ու թաղարական կողմնակցութիւնք եւ շփո-
թութիւնք: 272

156. ԱՆՍՏՐԻԵ. Հունգարիայի եւ Դրանսիականիայի
իրազութիւնները: 273

157. ՕՍՏՐԵՆԵԼԵՆ ՏԵՐՈՒԹԻՒՆ. Մուրաու Գ.էն մինչեւ
Իէհէմէա Գ. թագաւորները: 274

158. ԳԵՐՄԱՆԵՆԵՆ. Ընդհանուր ակտութիւն: 275

159. Փերդինանդ Ա. եւ Մարտինիլիան Բ.: Բողոքոզու-
թեան տարածութիւնը: 276

160. Ռուսոլֆ Բ.: Բողոքական իշխանաց ընթացքը: 277

161. Նորազանգից կրօնական եւ թաղարական բաժա-
նումը: Նորոգութեան իրաւունք: 278

162. Բողոքոզաց Միութիւնն եւ ուղղափառաց Նիզա-
կակցութիւնը: Երկու կողմանց մէջ խաղաղութիւն
կ'ըլլայ: 280

163. Կայսերական տան մէջ երկպառակութիւն: Մա-
տաթիա ու Փերդինանդ Բ.: 282

Ա. Բահեմիական կամ Ֆալցի միջոց (1618—1624):

164. Բահեմիայի շփոթութիւնք: Վեհափառութեան
Հրովարտակ: 284

165. Բրտկայի պատուհանընկեցութիւն: Բոհեմացիք կ'ապստամբին: 285
166. Մատաթիա կը մեռնի: Բոհեմացիք Վիեննայի վրայ կու գան ու ետ կը քաշուին: 286
167. Փերզինանդ՝ կայսր կ'ընտրուի: Բոհեմացիք Փալցի կայսրընտիրը թագաւոր կը շնեն: 287
168. Ապստամբք դարձեալ Վիեննայի վրայ կու գան ու ետ կը քաշուին: Երկու կողմանց բռնած ընթացքը: Պատերազմի պատրաստութիւն: 288
169. Բոհեմացիք բռնորոգին կը զսպուին: Կայսեր խռատութեամբ վարուելուն պատճառները: 290
170. Այլևայլ խռովարար իշխանք ստք կ'ելեն ու կը զսպուին: 291

Բ. Դանիական միջոց (1625—1629):

171. Դանիայի Քրիստիան Գ. թագաւորն ու Վալեն-չդայն: 293
172. Դանիական պատերազմ: Լիպկի խաղաղութիւն: 294
173. Հատուցման հրովարտակ: 296
174. Վալենչդայնին խորհուրդներն ու վար առնուիլը: 297

Գ. Շուեարական միջոց (1630—1635):

175. Երտաքին տերութեանց և առանձինն Գաղղիայի քաղաքականութիւնը: 299
176. Շուեարի Կուստա Ատոլֆ թագաւորը Գերմանիա կը յարձակի: Իր բռնած ընթացքը: 300
177. Կայսերականք Մակեպուրկ կ'առնուն: Կուստա Ատոլֆ զաշնաւորներ կը գան: Լիփսիայի ճակատը: 302
178. Կուստա Ատոլֆ և իր զաշնաւորները կը յառաջանան: Ռիչլիկային երկրիմի քաղաքականութիւնը: 304
179. Կուստա Ատոլֆին զիտաւորութիւնները: Վալենչդայն նորէն իշխանութեան կը հասնի: 304
180. Լիցլենի ճակատը: Կուստա Ատոլֆին մահը: 306
181. Շուեարներուն զիճակն ու ամբարհաւած ընթացքը: Հոլլալրանեան զաշնաւորութիւն: 307
182. Վալենչդայնին երկրիմի ընթացքն ու մահը: 308
183. Նեորալմեկենի ճակատը: Սաքսոնիայի ու Պրանսկոնպուրկի կայսրընտիրները կայսեր հետ կը միանան: Վիդազդի ճակատը: 310

Դ. Գաղղիական միջոց 1635—1648):

184. Գաղղիա և Սպանիա պատերազմին մէջ կը մտնեն: Վայմարի Բեռնարդ դուքսը: 311
185. Փերզինանդ Բ.ին ու Վայմարի դքսին մահը: 313
186. Պատերազմն վերջին տարիները: 314

Ե. Վեպոֆալեան ու Պիւրենեան խաղաղութիւններ
(1648—1659) :

187. Խաղաղութեան բանակցութիւնը:	316
188. Սրբազան Ս. Գրիգորի Վեպոֆալեան խաղաղութիւն:	317
189. Գաղղիայի, Շուեաի եւ Գերմանական իշխանաց արուած հասուցումը:	318
190. Գերմանիայի ներքին յարաբերութեանց վրայ սրբ- ազանքեր:	319
191. Երեւնամեայ պատերազմին Գերմանիայի նկատ- մամբ ունեցած հետեւութիւնները:	320
192. Երեւնամեայ պատերազմին բոլոր Եւրոպայի վրայ ըրած ազդեցութիւնը:	322
193. Սպանիական-Հոլանտական պատերազմ:	323
194. Գաղղիական-Սպանիական պատերազմ: Պիւրենեան խաղաղութիւն:	324

Զ. Անգղիայի ներքին շփոթութիւնները (1618—1660) :

195. Ներքին շփոթութեանց սկզբնական պատճառը:	326
196. Յակոբ Ա. ու Կարոլոս Ա. թագաւորները: Իրենց ու խորհրդանոցին մէջ հակառակութիւն:	326
197. Խորհրդանոցին ղեկավարութիւնը կը ստատկանայ: Պեդրինկհէմ: Սպանիայի ու Գաղղիայի դէմ ար- շուանք:	328
198. Սկոտլանդիք սոք կ'ըլեն: Ներքին պատերազմին սկզբնաւորութիւնը:	329
199. Երկարատեւ խորհրդանոց: Իրլանտիայի կոտորածն ու անոր հետեւութիւնները:	330
200. Ներքին պատերազմ: Օլիվիէ Գրոմուէլ: Մարտըն Մուրի ճակատ:	331
201. Պարզակրօնք ու Անկախք:	332
202. Նեղոյի ճակատն ու անոր հետեւութիւնները: Թագաւորը խորհրդանոցին ձեռքը կը մտանուի:	334
203. Գրոմուէլ եւ բանակը թագաւորը ձեռք կ'անցը- նեն: Կարոլոս Ա. կը սպանուի:	335
204. Հասարակապետութիւն: Իրլանտացիք ու Սկոտլան- դիք Կարոլոս Բ.ին կողմը կը բռնեն ու կը զսպուին:	337
205. Նաւազնացութեան օրէնք եւ Հոլանտական պա- տերազմ:	338
206. Գրոմուէլ Պաշտպան կ'անուանի եւ թագաւորու- թեան ետեւէ կ'իյնայ: Սպանիայի դէմ պատե- րազմ: Գրոմուէլի մահը:	340
207. Ռիքարդ Գրոմուէլ: Մոնդ: Թագաւորութիւնը նորէն կը հաստատուի:	341

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՔԸՂԸՔԸԿԸՆՈՒԹԵԸՆ

Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն Տ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Տ

Ը Ն Դ Հ Ա Ն Ր Ա Պ Է Ս

Ն Ա Թ Ա Յ Ա Ի Ի Ղ

1. Նոր պատմութիւն: Վ. Ե. Ք. Ն. Երեք ու կէս դարերուն պատմութիւնը, զորն որ հոս պիտի աւանդենք, յառաջուան կամ Հին ու Միջին դարու պատմութեանց համեմատութեամբ՝ զատ բաժին մը կը կազմէ, եւ Նոր պատմութիւն կը կոչուի: Թէպէտ Միջին դարու եւ Նոր պատմութեան մէջտեղը այնպիսի ընդհանուր դարազլուխ կացուցանող խիստ նշանաւոր դէպք մը չենք գտներ, ինչպէս կը գտնուի Հին ու Միջին պատմութեանց մէջ, այս ինքն է՝ Աննարարին աշխարհք գալն ու քրիստոնէութեան հաստատուիլը, որմէ կրնայ ըսուիլ թէ բոլոր աշխարհքիս կերպարանքը փոխուեցաւ. ի վերայ այսր ամենայնի այլեւայլ մեծամեծ դէպքերու մէկտեղ զայլովն անանկ երեւելի փոփոխութեան մը հիմ դրուած կը տեսնենք, որով առ բաժանումն ըստ ինքեան կ'արդարանայ: Նոյն դէպքերն ասոնք են. Ա. Առտանդնուպոլսոյ առնուիլն ու Եւրոպայի մէջ Օսմանեան տերութեան հաստատուիլը (1453). Բ. Քրիստափոր Կոլումբոսի ձեռքով Ամերիկայի գտնուիլը (1492). Գ. Վասաղոյ Ամսոյի ձեռքով դէպ ի Երեւելեան Հնդկաստան ծովով ճամբայ բացուիլը (1498). եւ աս երկու զիւտերով համաշխարհական կամ ընդհանուր վաճառականութեան ընթացքին փոխուիլը. Դ. Հրազնուց գործածութեամբ՝ պատերազմական արուեստին բոլորովին նոր կարգի մէջ մտնելը.

Ե. Նորազանդութիւնը կամ կրօնի աղէտալի բաժանումը:

2. Եւրոպայի ծանրակշռութիւնն ու տէրութեանց իրարու հետ անձուկ կապակցութեան մէջ մտնելը: Աւրոպա սա երեք ու կէս դարուց մէջ անանկ բնդհանուր ծանրակշռութիւն մը ստացաւ, որ յառաջագոյն երբեք ունեցած չէր: Եւրոպացիք նոյն միջոցին իրենց իշխանութիւնը, որով եւ իրենց կրօնն ու քաղաքակրթութիւնը, աշխարհքիս հեռաւոր կողմերը հաստատեցին իրենց դաղթականութիւններովը, որոնք Եւրոպայի վրայ մեծ ազդեցութիւն ունեցան՝ չէ թէ միայն իրենց առթովը հիմնուած կամ բոլորովին նոր կերպարանքի փոխուած համաշխարհական վաճառականութեան կողմանէ, հապա նաեւ Եւրոպայի դիւտոր տէրութեանց դործնական քաղաքականութեան նկատմամբ: Աս Եւրոպական տէրութիւնը նոր ժամանակներն իրարու հետ յառաջուրնէ աւելի ճիշդ ու բազմակերպ յարաբերութիւններու մէջ մտան: Եւ սա նկատմամբ մարդ կրնայ դեւրոպա իբրեւ տէրութեանց առանձին գումարութիւն (խումբ, ժողով) մը մտածել, որուն պատմութիւնն իբրեւ ամբողջ մը կրնայ աւանդուիլ: Աս ճիշդ յարաբերութիւնները մէկտեղ առնելով, ստոյգ է հեռեւութիւնը էին միշտ զարգացող քաղաքակրթութեան, որն որ իրարու դրացի կողմ տէրութեանց մէկը մէկալին հետ միշտ աւելի անձուկ հաղորդակցութեան մէջ մտնելուն պատճառ կ'ըլլար. բոյց միանգամայն անանկ առիթներ ալ կ'ենթադրէին, որոնց մէջ շատերը միահաղոյն իրարու հետ կամ իրարու դէմ դործելու կը ստիպուէին: Աս առիթներն եղան. Ա. Խառնիւղայի համար ծագած երկպառակութիւնը ու կռիւք. Բ. Նորազանդութեան ելած ատեն եւ ետքը անոր պատճառաւ եղած կրօնական կռիւները. Գ. Օսմանեանց դէմ իրենք զիրենք պաշտպանելու հարկաւորութիւնը. Դ. Գաղթականութեանց հետ եղած առուտուրը՝ որն որ երթալով աւելի ծանրակշռութիւն

կը ստանար, եւ անկէ յառաջ եկած առեւտրական շահերը: Ասանց վրայ աւելնալով՝ Ե. Տպագրութեան աբուստի ու կարգաւորեալ սուրհանդակներով, միանգամայն վերջին տակնները շոգեշարժ մեքենաներով եւ հեռագրով հաղորդակցութեան դիրքիննալը, ալ անկէ ետեւ Եւրոպայի զանազան ազդերն իբրեւ թէ միացան մէկ ազգ եղան, եւ միայն քաղաքականօրէն իրարմէ բաժնուած մնացին:

3. Տէրութեանց միակերպութիւնն ու պլլեպլութիւնը: — Խնամութիւնը: Աւրոպայի տէրութեանց դուժարութիւնը՝ թէպէտ ի ներքուստ պլլեպլ կերպարանք ունէր, ի վերայ այսր ամենայնի մինչեւ վերջին (Գ.) շրջանը՝ կառավարութեանց խիստ շատերուն կերպը՝ Միապետութիւն՝ էր. իսկ Հասարակապետութիւնը՝ իբրեւ թէ միայն զիջմամբ թոյլ տրուած էին, անոնք ալ՝ փոքր եւ աննշանական բաներ էին, միաբանեալ Ստորին նահանգաց (Հօլանտայի) հասարակապետութիւնը դուրս հանելով, որն որ շատ բարձր աստիճանի հասաւ: Բայց սա միակերպութեան մէջ, որով Նոր պատմութիւնը՝ Հնէն այնչափ կը տարբերի, մեծ պլլեպլութիւն ալ կը տեսնուի: Եւրոպական տէրութեանց մէջ միապետութեան ամէն տեսակն իրօք կը զանուէրժառանգական եւ ընտրական յաջորդութիւն, անկուպար եւ սահմանադրական կառավարութիւն, գրեթէ բռնաւորական արձակապետութիւն՝ եւ վեհապետական իշխանութեան՝ միայն շուքը կամ ստուերն ունեցող իշխանը: Նոյն իսկ սակաւաթիւ հասարակապետութեանց մէջ՝ աստիճանէ աստիճան ինչ պլլակերպութիւն կը տեսնուի Վենետիկի բուն ազնուապետութեանէն՝ մինչեւ Հելլենտական նահանգի մը բուն ռամկապետութիւնը՝: — Եւրոպական տէրութեանց մեծ

¹ Monarchie.

² Absolutisme.

³ Souveraineté.

⁴ Aristocratie.

⁵ Démocratie.

մասը չէ թէ միայն միապետական, այլ նաեւ ժառանգական ըլլալով, պէտք էր որ վեհապետական ջեղերուն բնտանեաց կապակցութիւնները կամ ինամութիւնները մեծ ծանրակշռութիւն ունենային, որ ծանրակշռութիւնն որ կրնար երբեմն աւելի երբեմն նուազ ըլլալ, բայց չէր կրնար երբեք բոլորովին դադրիլ: Այն ընդհանուր եղած սկիզբը՝ թէ իշխանք պէտք է որ միշտ իշխանաց ազջիկներու հետ կարգուին, հպատակաց ազջիկներու հետ կարգուելէն ծագիլ կրցող շարիքները կը խափանէր: Աւ թէպէտ զօրաւորագոյն իշխանաց ազջիկներու հետ կարգուիլն ալ մեծ վտանգներու առիթ կրնար ըլլալ, բայց ասիկց ալ անով ազատուեցաւ, որ Գերմանիա խիստ շատ իշխանական տներ ունենալով, շատ զահերուն թագուհի մատակարարեց և կը մատակարարէ: Ասանկով վեհապետական ջեղերէն խիստ շատերուն մէջ ինամութիւն մտաւ, որն որ այնպիսի կապակցութիւն մըն է, որ ոչ շատ զօրաւոր ըլլալով՝ ուրիշ տէրութեան քաղաքական ընթացքին վրայ կրնայ շատ մեծ ազդեցութիւն բնել, և ոչ ալ այնչափ տկար՝ որ կարող չըլլայ զանոնք իրարու հետ կապել:

4. Տէրութեանց նեցուկ եզոզ սկզբունք: Աւրոպական տէրութեանց գումարութիւնը հաստատուն պահել կրցող և իրօք ալ հաստատուն պահող նեցուկները, որոնցմով տկար տէրութիւն մը զօրաւոր տէրութեան մը քով սպահովութեամբ կը մնար և իր անկախութիւնը կը պահէր, այլեւայլ անուակ էին: Սոցոյզ է աս գումարութիւնը կազմող զանազան տէրութեանց մէջ գեա անանկ կարգաւորեալ իրաւանց կարգ մը չկար, ինչպէս որ ըստ ինքեան ի վերացեալն կրնայ մտածուիլ. ի վերայ այսր ամենայնի որչափ որ քաղաքակրթութիւնը կը յառաջագիւժէր, այնչափ ալ ետեւէ ետեւ ազգաց իրաւունք մ'երեւան կ'ելլէր, որն որ չէ թէ միայն յայտնապէս և իրօք դրուած, հապա նաեւ իրբեւ թէ ըստութեամբ հաստատուած գաշինքներու վրայ հիմնուած էր, և զամենքը կը պարտաւորէր թէ

խաղաղութեան եւ թէ պատերազմի ատեն՝ քանի մը սկզբունքներու հետեւելու։ Եւ թէպէտ երբեմն երբեմն նոյն սկզբունքներն այնչափ ճշդիւ չէին պահուեր, սակայն այսպէսով ալ գոնէ շատ հեղ մեծ օգուտներ կը պատճառէին։ — Աս ազգաց իրաւանց առաջին ու ամենէն ծանրակշիռ սկզբունքն ու միանգամայն բոլոր դուժարութեան պահպանութեան գլխաւոր նեցուկն էր՝ Բնկալեալ օրինաւոր ստացուածքի կամ սեպհակաւոնթեան անբռնաբարելիոսթիւնը, առանց որոյ ընդհանրապէս ասանկ դուժարութիւն մը չիկրնար կենալ։ Աս սկզբունքին պահպանութեանն ալ գլխաւորաբար օգնեց տէրութեանց մեծ մասին ժառանգական բլալը։ Նոյնէն նուազ ծանրակշիռ չէր այն սկզբունքն ալ՝ որ Քաղաքական հաւասարակշռութիւնը պէտք է պահել, այս ինքն թէ պէտք չէ թողուլ որ մէկ տէրութեան արտաքոյ կարգի մեծնալովն՝ արիւնքուն ազատութեան ու անկախութեան մնաս հասնի։ Աս մեկնութենէն աւելի բան հարկաւոր չէ՝ նոյն սկզբունքին ինչչափ ծանրակշիռ բան բլալը ցուցնելու համար։ Ասով հարկ կ'ըլլար որ տէրութիւնք իրարու վրայ փոփոխակի հսկողութիւն ընէին եւ իրարու հետ այլեւայլ դաշնագրութիւններով կապուէին։ Ասով երկրորդ եւ երրորդ աստիճանի տէրութիւնք քաղաքականութեան մէջ մեծ ծանրակշռութիւն ստացան։ Ասով ընդհանրապէս ինքնակացութիւնն երթալով աւելի մեծ բանի տեղ դրուեցաւ եւ հեռատես քաղաքականութիւնը շատ հեղ անձնական առժամանակեաց շահասիրութեան յաղթեց։

Ծ. Աստավարութեան կերպ։ Աշտոպայի տէրութեանց խիստ շատերուն կառավարութեան կերպը, եթէ տեղ տեղ գտնուած հիմնական օրէնքները դուրս հանենք, գրուած սահմանադրութեանց վրայ հաստատուած չէր։ Մեծ մասին մէջ տիրող օրէնքներն աւատային (16) կարգաւորութիւններէ յառաջ եկած բլալով, գոնէ գլխաւոր նիւթերու մէջ իրարու նման էին։ Ամէն

տեղ վեհապետէն՝ կամ իշխանէն ետքը Ազնուականք կամ Նախարարք կը գանուէին, որոնց՝ իրենց իշխաններուն ըրած հնազանդութիւնը՝ միայն ժամանակին պարագաներուն հետ կապուած էր: Ազնուականներէ զատ եկեղեցականք ալ առանձին կարգ մը կը կազմէին եւ տէրութեանց իրողութիւններուն վրայ մեծ ազդեցութիւն ունէին: Աս երկու կարգերը՝ բարձր կամ արտօնացեալ կարգեր էին. ինչու որ ասոքը տալու մէջ մեծ արտօնութիւններ կը վայելէին եւ տէրութեանց ժողովներուն (խորհրդանոցներու², աւագաժողովներու³, կարգաժողովներու⁴) մէջ առաջին տեղերը կը բռնէին: Անոր համար իշխանաց զօրութիւնը խիստ շափաւորեալ էր, որովհետեւ առանց ազնուականաց օգնութեան՝ մեծկակ պատերազմ չէին կրնար ընել. բայց ժե. դարուն վերջերը զրեթէ ամէն տեղ իշխաններուն զօրութիւնն աճելու վրայ էր: Աս վերջին պարագային շատ օգնեց երրորդ կարգի մը, այս ինքն՝ ազատ քաղաքացւոց կարգին կազմուիլը, որն որ վաճառականութեամբ ծաղկեալ քաղաքներու արդիւնքն էր: Ասոնք ալ կամաց կամաց սկսան տէրութեան ժողովներուն պատգամաւորներ խաւրել, զխաւորաբար անոր համար՝ որ ասոքներու հաւանութիւն տան, որոնց ծանրութեան մեծ մասը՝ նոյն քաղաքացւոց վրայ կ'իյնար: Իսկ զեղացիք ըստ մեծի մասին՝ կամ բոլորովին եւ կամ կէս մը՝ ստրկութեան կամ ծառայութեան վիճակի մէջ էին, եւ զրեթէ տեղ մը ազգի մ'ամբողջացուցիչ մասը չէին սեպուեր:

6. Բաժանում: Աւրօպայի Նոր պատմութիւնը երեք Շրջանի կը բաժնուի, որոնցմէ առաջինը ժե. դարուն վերջէն՝ մինչեւ Լուդովիկոս ԺԴ-ին անձամբ կառավարելու սկիիլը կ'երթայ (1492—1661). երկրորդը՝ նոյն ատենէն մինչեւ Փրեզերիկոս Մեծին մահ՝

¹ Souverain.

² Parlement.

³ Diète.

⁴ Etats.

ու Եւրոպայի տէրութեանց տակնուվրայ բլլալու սկըզբնաւորութիւնը (1661—1786) . երրորդն ալ՝ ան ժամանակէն մինչեւ մեր ատենները : Աս բաժանման հիմն է իւրաքանչիւր շրջանին գործնական քաղաքականութեան զանազանութիւնը , որով առաջինը՝ քաղաքական - կրօնական , երկրորդը՝ առեւտրական - զինուորական , երրորդը՝ քաղաքական - յեղափոխական ու սահմանադրական կրնայ բաժնիլ : Առաջինն էր միանգամայն վերը (4) մեկնուած մտօք՝ քաղաքական հաստատարակչութեան կանգնման կամ սկզբնաւորութեան շրջան , երկրորդը՝ նոյնին հաստատութեան , երրորդը՝ նոյնին քայքայման եւ վերանորոգման շրջան : — Գեւգբերուն կապակցութիւնն անանկ կը պահանջէ , որ առաջին երկու շրջանին մէջ եւ երրորդ շրջանին Ա . ժամանակի միջոցին մէջ հիւսիսային Եւրոպայի տէրութիւնները՝ հարաւայիններէն բաժնենք , որովհետեւ իրենց պատմութիւնն ալ բոս ինքեան իրարմէ զատ է : Հիւսիսային տէրութիւնք են Ռուսիա , Շուեա , Ահհաստան ու Գանիա . իսկ մեկալ բոլոր տէրութիւնները՝ հարաւային կը սեպուին : Պրուսիա՝ իր մեծութեան աստիճանը հասնելէն ետեւ , երկու կողման տէրութեանց շղթային միաւորութեան օղակի մը պէս եղած է եւ երկուքին ալ կը վերաբերի : — Բուն մեր պատմութիւնն առ բաժանման համեմատ գրելու սկսելէն յառաջ , հարկ է որ Եւրոպական տէրութեանց՝ ԺԵ . դարուն վերջը գտնուած վիճակը եւ նոյն վիճակին՝ ինչպէս յառաջ գալը մեր բնթերցողներուն առջեւը դնենք :

7. Հին բնակիչք ու Հռոմայեցիք: Անդդիացիք ու Սարսոնիացիք: Առջի ատենները Անգղիա՝ Ալբիոն կը կոչուէր, եւ Սկոտիայի ու Իրլանտիայի հետ՝ Բրիտանեան կղզիք կ'անուանէր: Ալբիոնի բնակիչները՝ որոնք Քաղղիայի հին բնակիչներն եղող Աեղաերունց եղակից էին, Հռոմայեցւոց դէմ՝ անոնց օգնութիւն կ'ընէին. անոր համար Յուլիոս Աեսար զիրենք Հռոմայեցւոց իշխանութեան տակ հնազանդեցուց: Բայց անոնք յաճախ կ'ապստամբէին եւ շատ անգամ յաջողութիւն կ'ունենային, մինչեւ որ Յուլիոս Ազրիկոզացոս հռոմայեցի զօրապետը, չափաւորութեամբ ու խոհեմութեամբ վարուելով՝ զիրենք հանգարտեցուց եւ կատարեալ հպատակեց (75—78): Ասանկով բոլոր հիմակուան Անգղիա, Սկոտիայի փոքր մէկ մասովը, Հռոմայեցւոց կայսրութեան գաւառ եղաւ, զորն որ իրենք Ստորին Բրիտանիա կը կոչէին. իսկ Սկոտիայի մեծ մասը՝ որուն նոյն Հռոմայեցիք Բարբարոսական Բրիտանիա անուն դրած էին, ինչպէս նաեւ Իրլանտիա (Հիբեռնիա), բոլորովին ազատ մնաց, եւ նոյն երկիրներուն՝ Սկոտք ու Պիկտք ըսուած բնակիչներն անկախ ու ինքնիշխան էին: Աս փայրենի ազգերը շատ անգամ Ստորին Բրիտանիա կ'արշաւէին, սաստիկ շարիքներ կը գործէին, եւ մեծ նեղութիւն կը հասցընէին բնակչաց, որոնք Հռոմայեցւոց օգնութեամբը հազիւ կարող կ'ըլլային զիրենք վանել: Իսկ երբ որ՝ գերմանական ազգերուն Խաուլիայի վրայ արշաւած ատեն, Հռոմայեցիք Ստորին Բրիտանիայէն ելան, ալ անկէ ետեւ Սկոտք եւ Պիկտք աւելի յանդգնութեամբ սկսան հոն արշաւել: Տեղացիք՝ որոնք Հռոմայեցւոց հպատակութեան տակ իրենց քաջութիւնը կորսրնցուցած էին, անոնցմէ պարապ տեղ օգնութիւն ինդրելէն ետեւ, ստիպեցան Վերմանիա՝ Էլպայի բերաններուն մօտ բնակող Անգղիացւոց ու Սարսոնիացւոց գիմել: Անոնք ստոյգ է՝ եկան իրենց օգնե-

ցին, թշնամիները մերժեցին (449), բայց նոյն իսկ երկրին բնակիչներուն վրայ ան աստիճանի բռնացան, որ անոնք ստիպեցան դէպ ի արեւմտեան լեռնակողմերը (Ուէլս, Վալէս) քաշուիլ. մէկ մասն ալ Գաղղիոս գաղցին եւ ան կողմք բնակեցան՝ որն որ ետքէն իրենց անուամբք Բրիտանիա (Պրոդայն) կոչուեցաւ :

Տ. Ընդգասաքսոնեան Էթմնպետութիւն: Գանիացիք (Նորմանք) եւ իրենց Գանուղ թագաւորը: Եղուարդ Խոստովանող: Գուլիկլմոս Աշխարհակալ: Ընդղիացիք ու Սաքսոնիացիք սա կերպով Ստորին Բրիտանիայի մէջ հաստատուելէն ետեւ, կամաց կամաց կօթը պզտիկ տէրութիւն կանդնեցին (452 — 582), որոնք Ընդղասաքսոնեան կօթնպետութիւն կը կոչուին: Վրան շատ ժամանակ անցնելէն վերջը, նոյն կօթը տէրութիւնք Էկպէրդ Մեծ թագաւորին իշխանութեան տակ միացան (827), եւ ըստ հասարակ կարծեաց՝ նոյն ատենէն սկսաւ բոլոր սա միաբանեալ թագաւորութեան երկիրները Ընդղիա կոչուիլ: Ասոր տկար յաջորդներուն ժամանակները Գանիացիք (Նորմանք) սկսան յառաջուրնէ աւելի Ընդղիայի վրայ արշաւել ու հիւսիսային կողմերը հաստատուեցան, եւ անկէ ետեւ տեղացիները միշտ աւարտութեամբ կը նեղէին: Ալֆրէտ Ընդղիայի թագաւորը իրենց դէմ յաջողութեամբ պատերազմեցաւ (870—880). բայց անոնք ետքէն զօրացան ու վրան երկայն ժամանակ անցնելէն վերջը, իրենց Գանուղ թագաւորին ատենը՝ բոլոր երկրին տիրեցին (1017): Նոյն թագաւորն ու իր որդիքը քիչ մը ատեն իրենց իշխանութիւնը հաստատուն պահեցին (55), մինչեւ որ Եղուարդ Խոստովանող թագաւորը, որն որ Էկպէրդ թագաւորին ցեղէն էր, զիրենք հանկից մերժեց (1042): Եղուարդ զուակ չունենալով, իրեն յաջորդ անուանեց Նորմանտիայի Գուլիկլմոս գուբոր, որն որ թագաւորական ցեղին հետ ազգականութիւն ունէր եւ Գանիացւոց դէմ իրեն մեծ օգնութիւն բրած էր: Բայց որովհետեւ Եղուար-

դայ մեռնելէն ետեւ (1066) Անգղիացիք Ռեւոզսէ-
քոսի Հարոլտ կոմսը թագաւոր ընտրեցին, անոր համար
Գուլիելմոսին եւ ասոր մէջ կռիւ բացուեցաւ: Գու-
լիելմոս Հասոխնկսի արինասհեղ պատերազմին մէջ
յաղթող եղաւ (1066) ու երկրին տիրեց, որուն համար
ալ Աշխարհակալ կոչուեցաւ: Ասիկայ Նորմանտիան իր
Ռոպէրդ երեց որդւոյն տուած էր. նոյն իշխանը Ս. Եր-
կիրն արշաւանքի գացած ատեն՝ իր տէրութիւնն իրրեւ
պատանդ թողուց իր եղբորը՝ Անգղիայի Գուլիելմոս
կարմիր թագաւորին, որն որ իր հօրը Գուլիելմոս Աշ-
խարհակալին յաջորդած էր: Բայց բուն Գուլիելմոս Աշ-
խարհակալին երբորդ որդին ու երկրորդ յաջորդը՝ Հեն-
րիկոս Ա. իր Ռոպէրդ եղբորը ձեռքէն Նորմանտիա
առաւ: Իր ատենը՝ Անգղիացիք իրենց հին ազատու-
թիւններէն մէկ քանին ընդունեցան (1101):

9. Բլանդաճննեղեան ցեղին թագաւորները:
Հենրիկոս Ա. արու զաւակ չունենալով, իգական յա-
ջորդութեան օրէնքը խտրեց: Իր Մաթիլտ աղջկան
ու Անժուսի կողմից (Բլանդաճննեղեան) կոմսին որ-
դին՝ Հենրիկոս Բ., որն որ Բլանդաճննեղեան ցեղին
թագաւորներուն նախահայրն եղաւ, ըստ մասին ժա-
ռանգութեամբ եւ ըստ մասին ամուսնութեամբ՝ Գաղ-
ղիայի գրեթէ շորս մասին մէկուն տէր եղաւ: Ասիկց զատ
իւր գաւազանին տակ առաւ նաեւ Իրլանտիան (1172),
որն որ մինչեւ նոյն ատեն պղտիկ պղտիկ իշխանութիւն-
ներու բաժնուած էր. բայց ան ժամանակն ալ աս Ան-
գղիացւոց իշխանութիւնը կրնայ ըսուիլ որ միայն ա-
նուամբ էր, վասն զի հազիւ Տեօպլին եւ շրջակայ տե-
ղերն Անգղիայի թագաւորաց վերին տէրութիւնը կը
ճանչնային: Իր որդին Ռիքարդ Առիւծատիրոս՝ Խաչա-
կրաց արշաւանքով արեւելք գնաց եւ հոն երեք տարի
անցուց, ինչպէս նաեւ Աւստրիայի մէջ ալ երկու տա-
րի բանտարկեալ մնաց (1189—1194): Աս երկացն
հեռաւորութենէն՝ ներքին վեղովմանք ու Գաղղիայի
հետ սաստիկ պատերազմանք պատճառեցան, որոնց-

մով իր տկար եղբորն ու յաջորդին՝ Յովհաննէս Անբ-
կրին ատենը († 1216), շէ թէ միայն Անդղիացւոց՝ Գաղ-
ղիայի մէջ ունեցած գրեթէ բոլոր գաւառները ձեռքեր-
նէն ելան, հապա նոյն իսկ Անդղիա՝ Գաղղիայի գաւառ-
ըլլալու վտանգի մէջ ինկաւ: Բայց Անդղիայի սեպուհք
իրենց հայրենեաց անկախութիւնն ապահովուցին, եւ
Մեծ հրովարտակ՝ ըսուած օրէնքներն ընդունեցան
(1215), որոնք Անդղիայի սահմանադրութեան զլիաւոր
որոշումները կը բովանդակեն: Իր Հենրիկոս Գ. որդւոյն
ատենը պատգամաւորաց սենեկին սկզբնաւորութիւն
Տեղաւ (1265): — Եղուարդ Ա.ին († 1307), Հեն-
րիկոս Գ.ին որդւոյն, ատենը Անդղիացիք Ուելսի եւ
մասամբ իմն Սկոտլանդի տիրեցին. եւ աս ձեռնարկու-
թեանց համար հարկաւոր եղած ստակի օգնութիւնն
արդէն նոյն ատեն պատգամաւորաց սենեկին հաւանու-
թեանէն կախու՛մ ուներ:

10. Մեծ հրովարտակ: Խորհրդանոց: Երդուե-
լոց ատեան: Խորհրդանոցը երկու սենեկի կը բաժնուի:
Վերոյիշեալ Մեծ հրովարտակա եկեղեցականք կատարեալ
իշխանութիւն ընդունեցան իրենց եպիսկոպոսներն ու բարձր
աստիճանաւորներն ազատութեամբ ընտրելու, նոյնպէս ու-
րիշ շատ արտօնութիւններ ալ. ազնուականք աւատապե-
տութեան ծանր պարտաւորութիւններէն եւ սաստիկ տուր-
քերէն ազատեցան. քաղաքացիք ազատ վաճառականու-
թիւն ընելու իրաւունք ստացան եւ ըստ հաճոյից գրուած
հարկերէն ու մարսերէն ազատ եղան: Նոյնով որոշեցաւ որ
արտաքոյ կարգի տուրքերը՝ միայն խորհրդանոցին հաւա-
նութեամբը կրնայ գրուիլ, որն որ բարձրաստիճան եկեղե-
ցականներէ, ազնուականներէ ու ազատ գեղացիներէ կազ-
մուած էր: Անձնական ազատութեան ապահովութեան
համար Երդուելոց գատաստանական ատեանը գրուեցաւ:
— Եղուարդ Ա. խորհրդանոցը պատգամաւոր խաւրելու
իրաւունքը շատ քաղաքներու կը ծախէր. աս սովորու-
թիւնն իր երկու յաջորդաց ատենը շատ ընդարձակելով,
ԺԳ. դարուն մէջերը չորս կարգաց՝ երեսփոխաններուն
թիւն անանկ մեծցաւ, որ խորհրդանոցը երկուքի բաժ-
նուելով, բարձրաստիճան եկեղեցականք եւ աւագ նախա-

¹ Magna Charta.

² Etats.

բարբ (բարձր աղնուականք) վերին սենեակը կամ ատենա-
կաններու խորհուրդը կը կազմէին, իսկ խոնարհագոյն նա-
խարարք (ստորին կամ գեղերու աղնուականք եւ կամ ա-
զատ գեղացիք) եւ բազումներու պատգամաւորները՝ ստորին
սենեակը կամ պատգամաւորաց խորհուրդը կը կազմէին :
Էդուարդ Ա-ին յաճախ պատերազմներուն պատճառաւ
ատարբերը սաստիկ աւելնալու վտանգ ըլլալով, խորհրդա-
նոցը Մեծ հրովարտակին վրայ յաւելուած մ'ընել տուաւ,
որն որ կ'որոշէր թէ ամէն ինչպիսի եւ իցէ հարկահանու-
թիւն՝ իր հաւանութեամբ պէտք է որ ըլլայ : Նոյն խոր-
հրդանոցին իշխանութիւնը Էդուարդ Ա-ին անընդմիջական
յաջորդներուն ատենը շատ աւելի մեծցաւ, որովհետեւ
այ գրեթէ բոլոր օրէնքները սկսած գլխաւորաբար իր հա-
ւանութեամբը տրուել :

11. Գաղղիայի հետ հարիւրամեայ պատերազմ :
Լանգասդերի ու Եորգի ցեղին թագաւորները : Արամիր
ու ծերմակ վարդերու պատերազմ : Հենրիկոս Է. Գու-
տոր : Էդուարդ Բ. († 1327), Էդուարդ Ա-ին որդին,
Գաղղիայի Փիլիպպոս Գ. (Գեղեցիկ) թագաւորին Եղե-
սարեթ աղջկան հետ կարգուելով, Բլանդաճենեղեան
ցեղին՝ Գաղղիայի թագին վրայ ունեցած իրաւունքը
կամ ըրած պահանջութիւնն աւելցաւ : Իր որդին ու
յաջորդը Էդուարդ Գ. իր համանուն որդւոյն ձեռօքը՝
որն որ Թուխ իշխան կը կոչուէր, Գաղղիայի մէջ խել մը
տեղ իր իշխանութեան տակ տուաւ եւ ինք զինքը Գաղ-
ղիայի թագաւոր անուանեց : Ասով երկու տերութեանց
մէջ հարիւրամեայ պատերազմ մը բացուեցաւ, որուն
մէջ բախտին յաջողութիւնը երբեմն մէկ ու երբեմն մե-
կալ կողմն էր : Ռիքարդ Բ. Թուխ իշխանին որդին իր
պապուն յաջորդեց, եւ ինք սպանուած ատեն (1399)
զաւակ չունենալով, իր տեղն անցաւ իր հօրեղբորորդին
Հենրիկոս Գ. (Էդուարդ Գ. թագաւորին երրորդ որ-
դւոյն, Լանգասդերի Յովհաննէս դքսին, որդին) որմէ յա-
ռաջ եկող ցեղը՝ Լանգասդերեան կոչուեցաւ : Իր որդին
Հենրիկոս Ե. Գաղղիայի մեծ մասին կը տիրէր. ընդ հա-
կառակն իր թոռան՝ Հենրիկոս Չ-ին ձեռքը հաղիւ-
Գալէի նաւահանգիստն ու քանի մը կղզի մնաց (20) :

Աս ժամանակները թագաւորութեան վրայ մեծ կռիւներ բացուեցան նոյն Լանգասդերեան ջեղին եւ Եորդեան ջեղին մէջ, որն որ արական կողմանէ՝ Եդուարդ Գ-ին շորթորդ որդիէն, իսկ իգական կողմանէ՝ նոյն թագաւորին երկրորդ որդիէն յառաջ կու գար: Հենրիկոս 2-րդ վար առնուեցաւ ու սեղն անցաւ Եորդի Ռիքարդ դքսին որդին Եդուարդ Գ. (1461): Երեսուն տարիէ աւելի բոլոր երկիրը տակնուվրայ եղաւ ներքին պատերազմով, որն որ Կարմիր ու ճերմակ վարդերու պատերազմ կը կոչուի, որովհետեւ Լանգասդերեան ջեղին զինանշանին մէջ՝ Կարմիր վարդ կար, իսկ Եորդեան ջեղին զինանշանին մէջ՝ ճերմակ վարդ: Աս պատերազմին վերջ արուեցաւ Հենրիկոս Է. Գուտտրին (Գիուտտրին) դահ էլեւլովը (1485 — 1509), որն որ ճօր կողմանէ Լանգասդերեան ջեղէն էր, եւ Եորդեան ջեղէն Եդուարդ Գ-ին Եղիսաբեթ աղջկան հետ կարգուեցաւ:

Բ . Գ Ը Ղ Ղ Ի Ը

12.

Հին բնակիչք ու Հռոմայեցիք: Փրանցք եւ իրենց թագաւորութիւնը: Մերովեան ջեղին թագաւորները: Աս երկրին բուն հին բնակիչները՝ Գաղղիացիք ու Կելտք¹, որոնք շատ հին ատեններէ վեր ծանօթ էին, երկայն ժամանակ իրենց անկախութիւնը Հռոմայեցւոց դէմ պաշտպանելէն ետեւ, վերջապէս Քրիստոսէն շուրջ 50 տարի յառաջ, ըստ մասին զինուք եւ ըստ մասին իրենց ազատ կամօքն, անոնց իշխանութեան տակ մտան եւ 400 տարիէ աւելի հպատակ մնացին: Երբ որ Հռոմայեցւոց արեւմտեան կայսրութիւնն իյնալու վրայ էր, Փրանցք զերմանական ազգն՝ իր Փարամունդ թագաւորին զօրավարութեամբ՝ Ռենոս զեան անցաւ, Գաղղիացի զանազան դաւառներուն տիրեց եւ հոն նոր թագաւորութիւն մը կանգնեց: Փարամունգին

¹ Gaulois, Celtes.

Թոռան՝ Մերովելին ասեմները (448—458) Փրան-
գայ իշխանութիւնը Գաղղիայի մէջ խիստ տարածեցաւ,
որով նոյն Մերովել ան աստիճանի երեւելի եղաւ, որ
իրակ սերած Թագաւորներն՝ իր անուամբը Մերովեան
կոչուեցան: Իսկ Մերովելին Թոռը Քլոտովիկ (Քլովիս)
Հռոմայեցիները բոլորովին վանելով (486), բովանդակ
երկիրն իրեն հնազանդեցուց. անանկ որ ինք կրնայ ի-
րաւամբ Գաղղիացուց պետութեան հիմնադիր համա-
րուիլ: Ան ժամանակէն ետեւ տէրութիւնը մէկ երկու
անգամ բաժնուեցաւ ու նորէն միացաւ: Բոլոր երկիրն
իրենց իշխանութեան տակ միացրնող Թագաւորներէն՝
Քլոթար Բ. († 628) տէրութեան երկու մասերուն վրայ
հազարապետներ կամ կուսակալներ դրաւ, որոնք անոնց
բոլոր գործքերը կը կատարէին: Արդ երբ որ Տակուպեր
Ը.ին մահուանէն ետեւ (638) Թագաւորութիւնն անոր
Սիկպեր Գ. եւ Քլոտովիկ Բ. որդւոց մէջ բաժնուեցաւ,
աս հազարապետք անանկ իշխանութիւն ու զօրութիւն
մը ձեռք անցուցին, որ Գաղղիա Շիլտերիք Բ.ին տակ
(† 673) նորէն միանալէն ետեւ ալ, բուն տիրոջներն
իրենք էին, եւ իրենց ուզածին պէ՛ս՝ Թագաւորները
կը դնէին ու կը վերցրնէին:

13. Կարոլոսեան ցեղի թագաւորք: Կարոլոս
Մեծ: Ա՛յ քրոյիշեալ հազարապետաց մէջ շատ երեւելի
եղան Պեպինոս Հերիտապետն, իր որդին Կարոլոս Մար-
դէլ (Մուրճ) եւ իր Թոռը Պեպինոս Կարճ: Աս վեր-
ջինը Մերովեան ցեղին թագաւորներէն զՇիլտերիք Գ.
վար առնելով վանք մը դրաւ եւ ինք զինքը Գաղղիայի
Թագաւոր հրատարակեց (752): Իսկ իր որդին Կարոլոս
Մեծ (771—814) իր անունը տաւաւ Գաղղիայի Թա-
գաւորաց աս երկրորդ ցեղին, որն որ Կարոլոսեան կը
կոչուի: Ասիկայ իր իշխանութիւնը մինչեւ հիմակուան
Սպանիայի եւ Հունգարիայի սահմանները տարածեց եւ
Իտալիայի ու Գերմանիայի մեծ մասին տիրեց. անանկ
որ իր տէրութիւնը՝ Էպրոյէն մինչեւ Ռուսայ եւ Ալթե-
րէն մինչեւ Հռոմէն անդին կը հասնէր: Ասով Փրան-

գաց միապետութիւնն իշխանութեան ու մեծութեան վերջին ծայրը հասցուց . բարբարոսութիւնն իր երկիրներէն ջնջեց, կրօնի ու գիտութեանց մեծ ծառայութիւններ բրաւ եւ իմաստուն օրէնքներով ու կարգադրութիւններով բոլոր Եւրոպայի քաղաքակրթութեան նկատմամբ մեծ արդիւնք ստացաւ : Թէ սա բաներուն եւ թէ Հռոմ քաղաքը թշնամիներէն ազատելուն համար, Լեւոն Գ . քահանայապետը ժողովրդեան հաւանութեամբը՝ ղինչն արեւմտեան կայսր պատկեց (800) :

14. Վերտէօնի դաշնադրութիւն : Գաղղիայի, Վերին ու Ստորին Պուրկուճախայի տէրութիւնները Կարոլոս Մեծին յաջորդներն իր հոյակապ սրպիսութեանց ժառանգ շքլալով, իր իշխանութեան մեծութիւնն ու ընդարձակութիւնը չկրցան պահել : Իր մահունէ շուրջ 30 տարի ետքը, իր երեք թոռները, Կարոլոս Մեծին՝ Լուդովիկոս Հեզ որդւոյն ու յաջորդին որդիքը, իրարու դէմ պատերազմելէն ետեւ, արդէն իրենց հօրն իրենց մէջ բաժնած տէրութիւնը՝ Վերտէօնի դաշնադրութեամբ բոլորովին իրարմէ քակեցին (843) : Լոթար անդրանիկն Իտալիայի ու Միջին Փրանզիայի (Վերին ու Ստորին Պուրկուճախայի, Ստորին նահանգներու եւ այլն) հետ կայսերական իշխանութիւնն ընդունեցաւ . Լուդովիկոս Գերմանականը՝ Գերմանիա ու Ալաւեան երկիրները . իսկ Կարոլոս Աւճա՝ Գաղղիա, որն որ ալ զատ թագաւորութիւն մը ձեւացաւ : Թէպէտ քիչ մը ետքը Միջին Փրանզիայի մէկ մասը Գաղղիայի հետ միացաւ (875) . բայց ետքէն Պուրկուճախ երկու զատ թագաւորութիւն եղաւ : Լուդովիկոս Հեզին փեսան Ստորին Պուրկուճախայի տէրութիւնը հաստատեց, որն որ Ռան դեաին ձախակողմեան գաւառները (Բրոզանս, Տոֆինէ, Լիսնէ, Սաւոյայի մէկ մասը, եւ այլն) կը բովանդակէր, եւ Երլ կամ Երեւատ մայրաքաղաքին անուամբը՝ Երեւատեան տէրութիւն ալ անուանեցաւ (879) : Երկրորդ տէրութիւն մ՝ ալ կազմուեցաւ Վերին Պուրկուճախ, որն որ Հելուեախայի վերին մեծ կէսն ու

Սաւոյայի մէկ մասը կը բովանդակէր. ասոր ալ Հիմնադիրն եղաւ Ռուսոյժ կուսակալը (SSS): Արան շատ ատեն շանցած՝ աս երկու տէրութիւնք մէկ թագաւորի տակ միացան (934), եւ ետքէն (1032) ժառանգութեան դաշինքով Գերմանիայի թագաւորներուն իշխանութեան տակ ինկան (24):

15. Նորմանտացիք: Գուքսք եւ Կոմսք: Կապէտեանն ցեղ: Ի՛նչն Գաղղիայի թագաւորութեան մէջ, որն որ Ռոմին աջ կողմանէ եւ Ռենոսէն մինչեւ Միջերկրական ու Եւրամտեան ծովերը կը տարածուէր, Սկանտինաւեան ազգերէն Նորմանտացիք եկան Սէն ու Լուար գետերուն մէջտեղը հաստատուեցան, եւ նոյն տեղերն իրենց անուամբը Նորմանտիա կոչուեցաւ: Գաղղիայի մնացած մասերը մեծ մեծ դաւառներու կը բաժնուէին, որոնք դքսերու եւ կոմսերու վարչութեան տակ էին: Ըստնք նոյն ատեններն իւրաքանչիւր դաւառներուն մէջ անանկ բնդարձակ ու անկախ իշխանութիւն ունէին, որ թագաւորն իրենց վրայ գրեթէ ամենեւին իշխանութիւն մը չէր կրնար բանեցընել, հապա իրրեւ թէ անոնցմէ մէկն ու միայն ատտիճանաւ առաջինն էր: Արդէն Կարոլոս Կունտ ստիպուած էր թագաւորութեան դորձքերուն մէջ անոնց մասնակցութիւն ունենալը հաստատել, եւ մինչեւ զիջանիլ որ անոնք իրաւունք ունենան նոյն իսկ զէնքով իրեն զէմ զնելու: Կարոլոս Յոյր գահէն մերժուելէն ետեւ (SS7), թագաւորութիւնը յափշտակեց Փրանգիայի ու Փարիզի Օտոյ կոմսը, որով եւ Գաղղիայի զօրքերն երկու կողմնակցութեանց բաժնուեցան: Հազիւ Օտոյ մեռնելէն ետեւ (898), թագաւորութեան օրինաւոր ժառանգը, Կարոլոս Կունտին թողը՝ Կարոլոս Գ. Պարզամիտ, կրցաւ իր հայրենի գահն ելլել: Ըսկից հարիւր տարի մը վերջը (987) Լուդովիկոս Ե. Ծոյլին մահուամբը Կարոլոս Մեծին ցեղը Գաղղիայի մէջ սպառեցաւ ու անոր տեղն անցաւ Կապէտեանն ցեղը, որուն հիմնադիրն եղաւ վերջիչեալ Օտոյին ցեղէն՝ Հուկոյ Կապէտ, Փրանգիայի

գուքոր, որն որ թագաւորական աստիճանն իր ասն մէջ հաստատելու համար, շուտ մը իր Ռուպերդ որդին իրեն զահակից բրաւ. բոլոր իր յաջորդներն ալ նոյն օրինակին հետեւեցան: Կապետեան շեղին թագաւորութեան ասեներ՝ տերութեան վարչութիւնը քիչ մը կարգի մտաւ. ինչու որ երկրին աւատաւու իշխանները կամ նախարարք իրենց սեպհական շահին համար ստիպեցան թագաւորին վերին աւատապետական իշխանութեան հպատակիլ, որով անոր իշխանութիւնն աւ զօրութիւնն ալ մեծցաւ:

16. Աւատային կարգաւորութիւնը: Թէ՛ հոս գրուցելիքնիս գիւրբմիտնելի ընելու եւ թէ՛ բոլոր պատմութեան ընթացքին լուսաւորութիւն տալու համար, հարկ է որ աւատային կարգաւորութիւններուն վրայ համառօտ տեղեկութիւն մը տանք: — Գերմանական շեղերը Հռոմէական պետութեան գաւառներուն տիրած ժամանակին, աշխարհակալուած երկիրները հասարակօրէն երեք մաս կը բաժնէին. մէկը՝ թագաւորը կամ շեղապետ իրեն կը պահէր. երկրորդը՝ իրրու ազատ ու ժառանգական՝ ստացուած՝ իր զինուորակից իշխաններուն կը բաժնէր, ան պայմանաւ որ իր ուզած ասեներ՝ թէ՛ իրենք եւ թէ՛ իրենց մարդիկն իրեն զինուորական ծառայութիւն ընեն. իսկ երրորդ մասը, զինուորարար քաղաքաց սահմանները, հին բնակիչներուն թող կը տրուէր՝ իրենց վրայ քիչ մը հարկ կամ տուրք դնելով: Բայց թագաւորը, որպէս զի նախարարներն իրեն հետ աւելի կապէ, անոնցմէ ոմանց իր սեպհական երկիրներէն քիչ մը տեղ կու տար, բոլոր իրենց կենաց մէջ անոր բերքերը վայելելու համար: Արդ առ պարգեւը՝ աւատ՝ կը կոչուէր, նոյնը տուողը՝ աւատապետ կամ աւատատու՝, իսկ ընդունողը՝ աւատաւու կամ հպատակ՝: Առ պարգեւատուութիւնն իրրու եղած ծառայութեան վարձ կամ նաև իրրու թողակ կը տրուէր, եւ աւատաւուն մեռած կամ իր պարտքը չկատարած ասեներ կրնար ետ առնուիլ: Մի եւ նոյն կերպով հարուստ կամ զօրաւոր աւատաւուք՝ ուրիշ տկար կամ ազքատ ազնուականներն իրենց շահելու համար, իրենց ժառանգական կամ ազատ եր-

A 32531

1 Allodial.
 2 Fief.
 3 Seigneur féodal, Suzerain.
 4 Feudataire, vassal.

կիրճերէն եւ մինչեւ իրենց աւատէն անոնց պարզեւ կու տային, որով իրենք ալ աւատառուներ կամ հպատակներ կ'ունենային: Ասկից զատ եպիսկոպոսք եւ արքայք, որոնք իրենց ժամանակաւ որ ստացուածոց նկատմամբ, երկրին վեհապետին աւատապետութեան տակ կը գտնուէին, մտաւոր ասպետներու աւատային երկիրներ կու տային, աս պայմանաւ՝ որ իրենց եկեղեցին կամ արքայարանը պաշտպանեն, եւ հարկ եղած ժամանակ զօրք տան:

17. Ասոց նախարարք ու խոնարհազոյն ազնուականք: Ստրուկք կամ ծառայք: Աս յարարերութիւնք, որոնք փոփոխ հաւատարմութեան վրայ հաստատուած էին, կամաց կամաց այնչափ ընդարձակեցան, որ ազատ ժառանգական ստացուած ունեցողներուն թիւը խիստ քիչցաւ, եւ վերջապէս միայն հարուստ սեպուհները մնացին՝ որոնք նոյնպիսի ստացուած ունէին: Աս սեպուհները միջին կարգ մը կը կացուցանէին ի մէջ աւագ նախարարաց (այս ինքն՝ դքսներու եւ կոմսերու), որոնք թագաւորին աւատառուներն էին, եւ ի մէջ խոնարհազոյն ազնուականաց, որոնք թագաւորին աւատառուներուն աւատապետութեան տակ կը գտնուէին: Ասոր պատճառն ան էր՝ որ ազատ ստացուած ունեցող խոնարհազոյն կարգի ազնուականք երբեմն կամեցին աւատառու կ'ըլլային՝ որպէս զի զօրք տալու պարտէն ազատին, երբեմն ալ ակամայ՝ ազբատութենէ կամ բռնարարութենէ ստիպեալ: Ազատ ստացուածի տէր ըլլողն անով աւատառու կ'ըլլար, որ իր ժառանգական երկիրն աւագ նախարարի կամ եկեղեցւոյ մը տալով, ինք իրբեւ վարձուոր նոյնը կը մշակէր: Խիստ մեծ էր նաեւ սարկաց կամ ծառայից՝ թիւը, որոնք իրբեւ աւատային երկրի մը ամբողջացուցիչ մասը կը նկատուէին, եւ իրբեւ ամէն իրաւունքէ զրկուած մարդիկ՝ իրենց տէրանց կամայական իշխանութեան տակ կ'իյնային: — Աս աւատային կարգաւորութիւնները՝ Վարոյոս Մեծին տկար յաջորդներուն ժամանակները՝ մեծամեծ փոփոխութիւններ կրեցին, որոնցմէ ամենէն աւելի ծանրակշիռ հետեւութիւն ունեցողն ան է, որ աւատառուք իրենց աւատային երկիրները ժառանգական ստացուած բրին: Ան տեսնէն վեր թագաւորին աւատառուները կամ աւագ նախարարները՝ իրենք զիրենք իրբեւ իրենց աւատապետին հաւատար կը սեպէին, եւ եթէ իրենցմէ մէկ քանին մարանէին, կրնային անպատիժ անոր կամացն ու հրամանացը դէմ դնել:

18. Ազատ քաղաքացիք: Ընդհանուր կարգա-
 ժողովներ: Քաղաքային պատգամաւորներ: Ասանկով
 երբ որ կապէտեան ջեղը Գաղղիայի արքունի գահին վրայ
 էլլաւ, թագաւորական իշխանութիւնն ու պատիւը շատ ին-
 կած էր. եւ թագաւորը զանազան գաւառներու գլխերուն
 ու կոմսերուն համեմատութեամբ՝ իրրեւ թէ հաւասարաց
 մէջ առաջինն էր: Միայն մէկ պարագայ կար՝ որ իրեն քիչ
 մը առաւելութիւն կու տար, այս ինքն թէ արքունական
 աւատաւորք իրենց սեպհական շահին համար անոր աւա-
 տապետական իրաւունքը յարգելու էին, ապա թէ ոչ՝ իրենց
 աւատաւորներն ալ իրենց օրինակին հետեւելով՝ իրենց
 աւատապետական իրաւունքը ստի տակ կ'առնուին. որով-
 հետեւ ինչ աստիճանի որ թողլ էր թագաւորին ու ար-
 քունական աւատաւորներուն մէջ եղած կապը, նոյնչափ
 թողլ էր նաեւ աս վերջիններուն եւ իրենց աւատաւորնե-
 րուն կապը: Անոր համար ալ արքունական աւատաւորք
 թէ իրարու հետ եւ թէ իրենց աւատաւորներուն հետ
 երկպառակութիւն ունեցած ասեմն, հասարակօրէն թա-
 գաւորն իրենց իրաւքնտիր կ'ընէին. եւ աս եղաւ թագաւո-
 րական իշխանութեան մեծնայուն սկզբնաւորութիւնը: Նոյն
 իշխանութիւնը ԺԲ. դարուն իրեն յենարան մը դառաւ քա-
 ղաքային հասարակութեանց մէջ: Խաչակրաց արշաւանքնե-
 րով վաճառականութիւնն ու արուեստները ծաղկելով,
 քաղաքացիք կը հարստանային ու յառաջ կ'երթային, ուր
 որ անոնցմով ազնուականք կ'ազգաստանային: Քաղաքացիք
 աս առիթն ազէկ գործածելով՝ դրամի կարօտ եղող սե-
 պուհներէն այլեւայլ իրաւունքներ ու արտօնութիւններ
 կը դնէին, որով իրենք ալ սկսան ծառայից կամ ստրկաց
 կարգէն ելլել ու իրրեւ առանձին ազատ կարգ մը կացուցա-
 նել: Ազնուականներէն արուած ազատութեան հրովար-
 տակները ետքէն թագաւորը կը հաստատէր, այնպէս որ
 ինք քաղաքային իրաւանց իրրեւ առաջին ազրիւրը կը նկա-
 տուէր: Միանգամայն քաղաքացւոց ու ազնուականաց մէջ
 էլլած վեճերուն նկատմամբ ինք վերին դատաւորն էր, որով
 առաջինները միշտ աւելի իր պաշտպանութեան կարօտու-
 թիւն ունենալով, կը ստիպուէին իր կողմը բռնել, որպէս
 զի զինքն աւելի իրենց կողմը շահին: Աս պատճառաւ ալ
 երբ որ ԺԳ. ու ԺԴ. դարերուն մէջ, տուրք ժողովու-
 կամ օրէնք դնելու համար՝ տէրութեան ընդհանուր կար-
 գերը կամ կարգաժողովները՝ զուճարելու սովորութիւն ե-

1 Etats généraux.

ղաւ . թագաւորք կը ջանային ազնուականաց եւ եկեղեցականաց դիմացը՝ խիստ շատ քաղաքային պատգամաւորներ հանել , վասն զի աս վերջինները միշտ իրենց կողմը կը բռնէին :

19. Թագաւորաց իշխանութիւնը կը մեծնայ : Փարիզի խորհրդանոց : Վաղղիայի աւազ նախարարաց թագաւորին հետ յանդգնութեամբ վարուելուն առիթ առած էր իրենցմէ մէկուն , Նորմանտիայի դքսին , Անգղիայի թագաւոր Բլայը (S), որմէ երկու տէրութեանց մէջ ստեղծ պատերազմունք յառաջ եկած էին (1066 — 1223) : Արդ Լուզովիկոս Թ . կրցաւ վերջապէս Անգղիայիները Նորմանտիայէն եւ իրենց ձեռքն եղող Վաղղիայի ուրիշ գաւառներուն մէկ քանիէն մերժել : Ասով անոնց իշխանութիւնը Վաղղիայի մէջ նուազելէն զատ , ազնուականաց գոտղութիւնն ու յանդգնութիւնը քիչ մը զսպուեցաւ , որով եւ թագաւորին իշխանութիւնը նոյն համեմատութեամբ մեծցաւ : Ասոր վրայ ան ալ եկաւ , որ քանի մը կամսութիւնք թագաւորներուն անբնդմիջական իշխանութեան տակ մտան . Փիլիպպոս Բ . Աւգոստոս (1180—1223) իր ձեռքն անցուց Անժուի կամսութիւնը , ինչպէս նաեւ Օֆեաներ եւ Ստորին նահանգաց մասն եղող Արդուա : Լուզովիկոս Թ . (1226—1270) ասոնց վրայ աւելցուց նաեւ Գուլուդի կամսութիւնը : Ասով եւ միանգամայն քաղաքացւոց կարգին միշտ աւելի յառաջ երթալով՝ թագաւորական իշխանութիւնը կամայ կամայ կ'ընդարձակէր մանաւանդ որ Փիլիպպոս Բ .-ին ատենէն վեր թագաւորք հաստատուն վարձկանազօր կը պահէին : Օրէնքներն ալ օրէ օր աւելի կը կարգաւորուէին , որովհետեւ Հռոմէական իրաւունքն երթալով աւելի մուտք կը գտնէր : Եկեղեցական ու աշխարհական դիտաւոր իշխաններէն՝ Փարիզի խորհրդանոցը (արդարութեան բարձրագոյն ատեններ) կազմուեցաւ , որուն մէջ ետքէն սկսան մտնել նաեւ քաղաքներու պատգամաւորները կամ քաղաքացիք , որոնք երբորդ կարգ ¹ կոչուեցան (1301) : Բիշ

¹ Tiers état, Tiers.

ժ'ետրը Շանբայն ու Պրի դաւառները [Թագաւորին
անբնդ միջական իշխանու թեան տակ մտան :

20. Կապէտեան-Վալուայի ցեղի թագաւորը :
Ընդդիպի հետ հարիւրամեայ պատերազմ : Օրլէանի
օրիորդ : Փիլիպպոս Գ-ին որդիքներովը Կապէտեան
ցեղին գլխաւոր ճիւղը սպառեցաւ, եւ սկսաւ թագաւ-
որել անոր եղբորորդին Փիլիպպոս Զ. Վալուայի կոմսը
(1328), որով եւ թագաւորական ցեղը Կապէտեան-
Վալուայի ցեղ բաւեցաւ : Բայց Փիլիպպոս Գ-ին Եղի-
տարեթ աղջիկն Ընդդիպի Եդուարդ Բ. թագաւորին
հետ կարգուած բլլալով (11), երկու տէրութեանց
մէջ յաջորդութեան իրաւանց վրայ հարիւրամեայ պա-
տերազմ բացուեցաւ : Աս պատերազմին մէջ Փիլիպպոս
Զ-ին որդին Յովհաննէս Բ. Բարի թագաւորը († 1364)
ան աստիճանի գոթախտ եղաւ, որ Գաղղիայի շատ
դաւառները կորսնցնելէն զատ, ինք ալ Ընդդիպ գե-
րի գնաց : Իր որդւոյն ու յաջորդին Կարոլոս Ե-ին ատե-
նը († 1380) Գաղղիացիք իրենց գրեթէ բոլոր երկիր-
ներն Ընդդիպացուց ձեռքէն առին. բայց Կարոլոս Զ-ին
ատենները (1380—1422) Գաղղիացիք դարձեալ խիստ
գոթախտ եղան : Նոյն թագաւորը՝ պակասամիտ, իսկ
իր Կարոլոս Է. որդին անչափահաս բլլալով, հարկ էր
որ խնամապետ : մը գրուէր : Աս խնամապետութեան
պատճառաւ կռիւներ ելան, զորոնք Ընդդիպացիք իրենց
չահուն գործածելով, եկան մինչեւ Փարիզ մտան, եւ
քանի մը տարի ետքը, երբ որ Կարոլոս Զ. մեռաւ
(1422), երկայն ժամանակ անոր օրինաւոր յաջորդին՝
Կարոլոս Է-ին թագադրութիւնն արգելեցին : Նոյն
թագաւորը թէպէտ եւ երկու ճակատներու մէջ Ըն-
դդիպիները յաղթեց, բայց անոնք ետքէն եկան
զինքն Օրլէանի մէջ պաշարեցին եւ քաղաքը վեր-
ջին աստիճանի նեղ խոթեցին (1429) : Ան ատեն
երեւան ելաւ Յովհաննէս Երզ անուն զեղացի աղ-
ջիկ մը, որն որ հասարակօրէն Օրլէանի օրիորդ կը

կոչուի, ու սկսաւ մեծամեծ քաջութեան գործքեր գործել. զորաց զլուին անցած՝ իր օրինակաւն ու յորդորմամբը թէ անոնց եւ թէ թագաւորին քաջալերութիւնն ու արիութիւնն տուաւ, որով սկսան դարձեալ Անդղիացւոց յաղթել: Եւ թէպէտ անոնց Հենրիկոս Զ. թագաւորն անձամբ Փարիզ եկաւ եւ հոն ինք զինքը Գաղղիայի թագաւոր պատկել տուաւ. բայց չկրօցաւ նոյն իշխանութիւնը հաստատուն պահել: Կարոլոս Է. իր երկիրներն Անդղիացւոց ձեռքէն առաւ եւ զիրենք Գաղղիայէն մերժեց. անանկ որ անոնց ձեռքը Գալէէն ուրիշ տեղ շինաց (11):

21. Զինուորական կարգադրութիւնք: Թագաւորին իշխանութիւնն աւելի կ'ընդարձակի: Կարոլոս Է. Գաղղիայի մէջ զինուորական կարգադրութիւններ դրաւ եւ կարգաւորեալ հաստատուն բանակ կազմեց: Արդէն Անդղիայի հետ պատերազմ եղած տակն, Կարոլոս Է.ին ժամանակը, պատերազմական արուեստն ու հրահանգը բաւական լաւացած էր եւ զինուորութիւն ընող ազնուականներուն թոշակ տարու սկիզբ բրած էին: Կարոլոս Է.ին կազմած բանակը՝ 1500 զինակիր¹, 900 ձիաւոր եւ 4500 ազատ աղեղնաւոր ունէր: Լուդովիկոս Ժ.Ա. (1461—1483) նոյն ազատ աղեղնաւորներուն տեղ 8000 հետեւակ զօրք դրաւ, որոնց վրայ 6000 Հելուետացի ալ աւելցուց: Աս թագաւորն իր իշխանութիւնը շատ ընդարձակեց, իրեն առնելով՝ առանց արու զաւկի մեծնող Պուրկունտիայի Կարոլոս Յանգուզն դրսին երկիրներուն մեծ մասը (36), որմէ զրեթէ 300 տարւան երկպառակութիւն մը բացուեցաւ Հապսպուրկի (Աւստրիայի) տան հետ: Գարձեալ Անժուի տան՝ Բրոլմանտի մէջ եւ ուրիշ տեղեր ունեցած երկիրներն ալ իրեն անցան: Աս կերպով աւագ նախարարներուն զօրութիւնը կտարեցաւ. թագաւորն անոնց դատաւորական իշխանութիւնն ալ վերջացուց՝ դաւառներու մէջ նոր խորհրդանոցներ կամ դատաս-

¹ Hommes d'armes.

տանի արքունական բարձր ատեաններ զնելով : Կարօլոս
 Ը . Թաղաւորական իշխանութիւնն աւելի եւս ընդար-
 ձակեց Պրոքայնի ժառանգ իշխանուհւոյն հետ ամու-
 սնանալով (1490) . բայց ասոր հակառակ ստիպեցաւ
 Փրանչոսնդէ զաւտան ու Ռուսիլեանի երկիրը Հապո-
 պուրկի սան թողուլ :

Գ . Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

22. Գերմանացիք Հռոմայեցւոց կայսրութիւնը
 կը քակեն : Փրանզք եւ ուրիշ գերմանական ազգերը :
 Գերմանացիք Հռոմայեցւոց հետ հազորդակցութեան
 մէջ մտնելով՝ ծանօթ եղած ատեննին , Եւրոպայի մի-
 ջին կողմերը բնակող իրարմէ բաժնուած եւ մէկմէկէ
 անկախ ազգեր էին : Այսպէս առանձին առանձին բլ-
 ւալով եւ մէջերնին հաստատուն միաբանութեան կապ
 մը չգտնուելով , որչափ որ իսկզբան Հռոմայեցւոց զար-
 հուրելի եղան նէ ալ , վերջէն յաղթեցան եւ ըստ մա-
 սին անոնց իշխանութեան տակ մտան : Բայց մէյ մ'որ
 անոնցմէ քաղաքակրթութիւն ու քրիստոնէութիւն
 ընդունեցան եւ միանգամայն իրենց այլեւայլ ցեղերն
 իրարու հետ յառաջուրնէ աւելի կապեցան , ալ անկէ
 ետքը միշտ աւելի զօրացան . ուստի եւ Հռոմայեցւոց
 տկարանալու սկսած ատեն , իրենք հետզհետէ անոնց
 զաւտներուն տիրեցին , եւ վերջապէս կրցան այնչափ
 դարերէ վեր աշխարհքիս մեծ մասին տիրող Հռոմէական
 յաղթ պետութիւնը քակել : Գերմանիայի զանազան
 ազգերուն մէջ երեւելիներն ասոնք էին . Փրանզք՝
 Ռենոսի միջին կողմերը , Ալեմանք՝ Ռենոսի վերին կող-
 մերը , Ֆրիզացիք ու Սաքսոնիացիք՝ Ռենոսի ստորին
 կողմերը մինչեւ Ելպա , Պաւիերացիք՝ Գանուրի քով ,
 Թուրինգիացիք՝ Հարցի քով : Աս ազգերուն մէջ ամե-
 նէն նշանաւորն եղան Փրանզք , որոնք իրենց Մերովե
 ու Քլոտովիկ քաջ եւ պատերազմասէր հրամանատարնե-
 րուն ատենէն՝ մինչեւ Կարօլոս Մեծին ժամանակը (448

— 808) շէ թէ միայն Հռոմեական Գաղղիայի տիրեցին, հասցահամայ կամայ ուրիշ գերմանական ազգերն ալ իրենց հպատակեցուցին: Այն յաղթուած գերմանական ազգերը, որոնք ըստ մեծի մասին իրենց օրէնքներն ու ազատութիւնները պահած էին, Կարոլոս Մեծ կուսակալներով (գլխերով, սահմանակամներով կամ մարզպաններով¹) կը կառավարէր: Ասով ծագեցաւ Աւստրիայի մարզը կամ սահմանակամութիւնը, Շուարիայի, Պաիերայի, Սաքսոնիայի ու Փրանդիայի գլխութիւնները:

23. Գերմանիայի թագաւորութիւնն ընտրական կ'ըլլայ: Սաքսոնեան ցեղի թագաւորք: Ոթան Ա. կայսր կը պսակուի: Արք որ Լուդովիկոս Հեղին մահաբնէ ետեւ (840) իր երեք օրդիքը, Կարոլոս Մեծին թոռները, Ալերտեօնի գաշնազրութիւնն ըրին (14), Լուդովիկոս Գերմանականն առանձին թագաւոր եղաւ Գերմանիայի, որն որ Ռենոսի աջ կողմէն մինչեւ Էլբա եզող երկիրները կը բովանդակէր: Բայցնայն Կարոլոսեան թագաւորներուն ցեղը՝ շուրջ 70 տարի վերջը Լուդովիկոս Մանուկ թագաւորով սպառեցաւ (911): Ան ասեն Գերմանիայի աւագ նախարարները, որոնց գլխաւորներն էին Պաիերայի, Շուարիայի, Փրանդիայի ու Սաքսոնիայի գլխերը, գլխաւորաբար Մոզոնտիայի աքրեպիսկոպոսին թելազրութեամբը՝ արեւելեան Փրանդիայի Գոնրատ գուքոր թագաւոր ընտրեցին (911 — 919): Անկէ վերջը ետեւէ ետեւ Սաքսոնիայի գլխական ցեղէն հինգ թագաւորք գրուեցան (919 — 1024), որոնք Գերմանիայի մէջ մեծամեծ կարգաւորութեանց պատճառ եղան: Ասոնցմէ առաջինը Հենրիկոս Ա. Գաղղիայի շիթութութիւններն իր օգտին գործածելով, Լոթարինգիայի տիրեց (35): Անկէ զատ Էրիզլանտի մէջ ալ Շլեզուիկի սահմանակամութիւնը հաստատեց (55)․ ինք գարձեալ Գերմանիան թիշ մը ասեն ազատեց Հունգարացւոց ամեն տարի բրած յարձակում:

¹ Margrave. գերմ. Markgraf. — Մարզակամ:

ներէն, զորոնք կատարեալ վերջացուց իր որդին ու յաջորդը Ոթոն Ը: Երկուքն ալ վկնաւորը յաղթեցին, որով կանգնեցաւ Միւնիայի սահմանակոմսութիւնը: Գարձեալ Գերմանիան արտաքին թշնամիներէ դիւրաւ պաշտպանել կրնալու համար առգին անդին բերդեր շինել տուին, որոնք ետքէն բաղաբնեւոր գարձան: Ոթոն Ը. Հռոմէական կայսրութեան թագն առաւ եւ Հռոմի մէջ կայսր պսակուեցաւ (962): Նոյն աստիճանն ան ասեմնէն վեր իր յաջորդները միշտ պահեցին: Բայց աս բանս իսկզբան Գերմանիայի համար գեշ հետեւանք ունեցաւ. որովհետեւ կայսերը կը ստիպուէին զրեթէ ամէն տարի Հռոմ արչաւանք մ'ընել, որով շատ մարդիկ կը մեռնէին եւ զլիսաւորաբար ազնուականք ու սպետք կը նուազէին: Միանգամայն կայսերը անկէ ետեւ Գերմանիայի ներքին իրողութիւններուն շկրնալով միտ դնել, յառաջագոյն պարզապէս թագաւորական կուսակալ եղող դքսերը, սահմանակոմսերը, աշխարհակոմսերը¹, բերդակոմսերը² կամաց կամաց իրենց կուսակալութեան տակ եղող երկիրներուն տէրութիւնն իրենց անձանց կը սեպհահանէին, բայց միշտ թագաւորին աւատապետութեան տակ էին: Սաքսոնիական ցեղին կայսերաց շարքը վերջացաւ Հենրիկոս Բ.ով (1024), որն որ Ոթոն Ը.ին եղբորը թոռն էր:

24. Փրանգեան կամ Սալեան կայսերը: Քահանայապետաց հետ երկպառակութիւնք: Վէլֆեանք ու Այպպիինիկեանք: Ըսոնցմէ ետքը կու դան Փրանգեան կամ Սալեան կայսրները, որոնցմէ Գոնրատ Բ.ին († 1039), Հենրիկոս Գ.ին († 1056), Գ.ին († 1106) եւ Ե.ին († 1125) ասեմները Գերմանական տէրութիւնն իր սահմաններուն տարածութեան նկատմամբ զրեթէ ամէն ժամանակէ աւելի նշանաւոր եղաւ: Գոնրատ Բ. անհաստատ Իտալացիներն իր վերին աւատապետութիւնը ճանչնալու ստիպելէն, եւ Միլանի մէջ

¹ Landgrave.

² Bourggrave.

Լամպարտիայի երկաթի թագը, Հռոմի մէջ ալ կայսերական թագն առնելէն ետեւ, Պուրկուճիա (Հելլուստիա ու Արեւատեան թագաւորութիւնն) ալ Գերմանիայի հետ միացուց: Ասոր Հենրիկոս Գ. որդին Պարլու Մեծին տէրութեան երեք մասին երկուքին կը տիրէր: Աս ցեղի կայսրն երէն Հենրիկոս Գ.ին ու Ե.ին ժամանակը Հռոմական դահին հետ երկպառակութիւններ ելան (1075—1122), որոնք չէ թէ միայն Գերմանիայի մէջ մեծ շփոթութիւններու եւ ներքին պատերազմներու պատճառ եղան, հապա միանգամայն իշխաններուն առիթ տուին իրենց աստիճանը ժառանգական իշխանութեան դարձնելու եւ գրեթէ անկախ բլալու. որով կայսերաց ձեռքը՝ աւատապետութեան իրաւունքէն ու վերին իշխանութենէն ուրիշ բան չմնաց: Հենրիկոս Ե.ին յաջորդեց Սաքսոնիական անէն Լոթար կայսրը (1125—1137), որն որ իր ազնիկը Ալէքիեանց (Աուէլֆներու) ցեղէն՝ Պառիերայի Հենրիկոս Ամբարտաւան դքսին հետ կարգելով, նոյն Ալէքիեանց եւ Այպպինկեանց (Աիպելինեանց) հռչակաւոր երկպառակութիւններուն ու կոխներուն հիմ դրուեցաւ: Աւան զինք մեռնելէն ետեւ, իր Հենրիկոս փեսան իր աներոջ տեղն անցնելու ետեւէ կ'իյնար. իսկ պետութեան ուրիշ իշխանները Հոհենշտաֆեան ցեղէն Գոնրատ Գ. կայսր դրին: Ասով քաղաքական մեծ պատերազմ մը բացուեցաւ, որան մէջ թէպէտ Հենրիկոս մեռաւ եւ Հոհենշտաֆեանք (Այպպինկեանք) յաղթեցին. բայց երկու կողմնակցութեանց կոխները շատ երկայնատեն տեւեցին, մանաւանդ Իտալիայի մէջ, եւ արեւան հեղեղներ թափուելու պատճառ եղան: Աս Ալէքիեան եւ Այպպինկեան (Աուէլֆեան եւ Աիպելինեան) անունները իսկզբան երկու ազգատոհմներուն կուսակիցները նշանակելու համար կը գործածուէին. բայց ետքէն Հոհենշտաֆեան կայսերաց՝ քահանայապետին հետ անցած երկպառակութեանց ատենները, Աուէլֆեան անունը՝ քահանայապետաց կուսակիցներուն, իսկ Աի-

պելլինեան անունը՝ կայսերաց կողմնակիցներուն կը տրուէր: — Աս ցեղը սպառելէն ետեւ, 26 տարւան անիշխանութեան միջոց մը յաջորդեց (1256—1272), որուն ատենը Գերմանիայի մէջ ամէն տեսակ սնկարգութիւններ կ'ըլային:

25. Թագաւորն ու ազատանւոյն բաժանումը: Աս ազատողով ու դատաւորով: Քաղաքացիք: Նշին տակնները Գերմանիայի ժողովուրդքը, այս ինքն՝ ազատք կամ ազատանին, եօթը մաս կամ բաժին կը բաժնուէին, որոնք պետութեան բանակին բաժանման կերպէն յառաջ կու գային եւ անոր համար եօթը Աւսանք կը կոչուէին: Առաջինը կը սեպուէր թագաւորը. երկրորդը՝ եկեղեցական իշխանք, որովհետեւ միայն թագաւորին աւատառուքն էին. երրորդը՝ աշխարհական իշխանք, ինչու որ եպիսկոպոսոսց աւատառուներն էին կամ կրնային ըլլալ. չորրորդը կամք կամ ազատ տեսարք, վասն զի իշխանաց աւատառուքն էին եւ ծննդեամբ անոնց հասարակ: Աս չորս բաժինք կամ վահանք բարձրագոյն ազատանի կամ աւագ նախարարներ կը համարուէին: Հինգերորդ բաժինը կը կացուցանէին միջին ազատորեարք կամ դրոշաւոր տեսարք, որոնք ծննդեամբ աւագ նախարարներուն մէջ չէին, ի վերայ այսր ամենայնի կրնային իրենց աւատառու ունենալ ազատները. վեցերորդը՝ միջին ազատորերոյն աւատառուները կամ հասարակ սակները, որոնք աւատառու չունէին. եօթներորդը՝ հասարակ ազատանին, որոնք ստրուկ չէին եւ օրինաւոր ամուսնութենէ ծնած էին: — Թագաւորը, որն որ ինչպէս յայտնի է՝ ընտրութեամբ գահ կ'ըլլէր, եւ Հոսմ պսակուելէն ետեւ՝ կայսր կը կոչուէր, զորաց վերին հրամանատարն էր, միանգամայն բարձրագոյն դատաւոր եւ աւագ աւատապետ: Ինք պետութիւնը՝ սովորութեամբ յառաջ եկած իրաւանց ու կարգադրութեանց համեմատ կը կառավարէր, շատ անգամ պետութեան իշխանները (աւագանին, աւագ նախարարները) աւագաժողովի գումարելով եւ անոնց կարծիքն ու որոշումն առնելով: Թագաւորին տակ մեծ երկիրներու վրայ կը կենային դքսերը, որոնք իրենց մեծամեծները գաւառաժողովի՝ մէջ գումարելով, անոնցմով իրենց գաւառին վրայ հարկաւոր կարգադրութիւնները կ'ընէին: Սահմաններու գաւառները՝ սահմանակոմներու կամ մարզպաններու տակ էին: Արմները՝ գաւառակներու կամ

վիճակներու վերին դասաւորներն էին, միանգամայն պետու-
թեան բանակին համար զօրք կը հոգային: Արովհետեւ պա-
տերազօր ծառայութիւնը հասարակօրէն զբաշտապատ ձիա-
որք պիտ'որ ընէին, անոր համար հասարակ ազատք՝ որոնք
ըստ մեծի մասին մեծ հարստութիւն չէին ունենար, չկր-
նայով ասոր ծախքը քաշել, քանի մը հոգի մեկտեղ մեծի
մը պաշտպանութեան տակ կը մտնէին, որն որ իրենցմէ հա-
տուցում մ'ընդունելով, իրենց տեղը զօրք կը հոգար: Ա-
սանկով ազատաց թիւը միշտ աւելի կը պակսէր (17). Եւ
եթէ նոյն ասեմները ծաղկող քաղաքները չըլլային, Հեն-
րիկոս Գ-ին ժամանակը տիրող անիշխանութեան ու ան-
կարգութեանց մէջ՝ հասարակ ազատաց կարգը բոլորովին
կը ընջուէր: Բայց նոյն ժամանակ քաղաքներու մէջ ազատ-
տանարան մը գտնելով, հոն խրամներու, պատուարներու,
պարիսպներու եւ աշտարակներու հոգանաւորութեան տակ
իրենց ազատութիւնը կը պաշտպանէին, եւ իրենց գործու-
նէութեամբն ու վաճառականութեամբը կը հարստանային,
առանց զէնքերը մեկդի ձգելու: Ասպետական կամ ազատ
քաղաքացիք պատերազմը ձիով կ'ընէին. իսկ ուրիշ բնա-
կիչք իրբեւ հետեւակ կը զինուորէին եւ պաշտպանութեան
մեքենաներուն ծառայութիւնը կ'ընէին: Ասոնք ամենն ալ
կայսեր եւ անհաւատարիմ իշխանաց մէջ կռիւ եղած
ասեմն՝ հասարակօրէն առաջնոյն կողմը կը բռնէին եւ ա-
նոր հաւատարմապէս կը ծառայէին:

26. Կայսրընտիրք: Պետութեան հիմնարկու-
թիւնք, ասպետութիւնք ու քաղաքք: Քաղաքացիք:
Հոհնեչաֆեան կամ Շուարեան ցեղին կայսերաց ժամա-
նակը (1138—1254) Գերմանիա կամաց կամաց իր վեր-
ջէն ունեցած կարգադրութիւնները սկսաւ ստանալ: Պե-
տութեան գլխաւոր իշխաններէն կամ աւագ նախարարնե-
րէն սմանք կայսր ընտրելու իրաւունքը մինակ իրենց սեպ-
հականեցին եւ անոր համար կայսրընտիր՝ ըսուեցան. ասոնք
էին երեք աւագ դիւանագլխիները, այս իմքն՝ Մոզուս
տիայի (Մայնցի), Գրիբերի եւ Գոռնիայի արքեպիսկոպոս-
ները, եւ չորս աւագ պաշտօնատեարք, որ են Բոհեմիայի
թագաւորը, Ռենոսի Պալատական (Ֆայցի) կոմսը, Սաքս-
ոնիայի դուքսն ու Պրանտենպուրկի սահմանակոմսը, Գերմա-
նիայի շատ կողմերը եւ գլխաւորաբար Շուարիայի մէջ պե-
տութեան հիմնարկութիւնք (եպիսկոպոսարանք ու արքայա-
բանք), պետութեան ասպետութիւններ ու պետութեան

¹ Electeur, գերմ. Churfürst, — ընտրող իշխան:

քաղաքներ գրուեցան: Ասոնք ուղղակի միայն կայսրմէ կա-
խուս մ ունէին, իրենց գլուխները՝ կայսեր անուամբ իրենց
իշխանութիւնը կամ վերին դատաւորութիւնը կը վարէին .
իրենք՝ միայն պետութեան դատաստանարաններուն մէջ
կրնային դատուիլ եւ աւագաժողովոյն մէջ կրնային մշտ-
նել կամ երեսփոխան խաւրել: Կային նաեւ գաւառական
քաղաքներ, որոնք նոյն գաւառին նախարարին կամ եպիս-
կոպոսին իշխանութեան տակ կ'իյնային, իրենց գաւառա-
տիրոջ առջեւը դատաստանի կրնային հանուիլ եւ միայն
գաւառաժողովոյն մէջ կրնային երեսփոխան խաւրել: Քա-
ղաքներուն մէջ, Իտալիա ու Գաղղիա եղածին պէս՝ եկե-
ղեցականաց ու ազնուականաց կարգէն զատ, երրորդ կարգ
մ'ալ ձեւացաւ, այս ինքն՝ քաղաքացւոց կարգը եւ անոնք
ալ աւագանւոյն մէջ սեպուեցան: Գերութեան կամ սարք-
կութեան վիճակը շատ տեղ վերցաւ: Նոյն միջոցներուն
կայսերը Իտալիայի մէջ գրազած եւ Գերմանիա գրեթէ ե-
րեսի վրայ Քնացած ըլլալով, եօթանասուն քաղաք իրենք
գիրենք պաշտպանելու եւ գլխաւորաբար իրենց վաճառա-
կանութիւնն անխտանգ յառաջ տանել կրնալու համար,
Ռենական դաշնաւորութիւնը հաստատեցին (1255): Ար-
դէն քանի մը տարի յառաջ Համբուրկ ու Լիպկէ քա-
ղաքներն իրենց առաջին առեւտրական կապակցութիւննե-
րը սկսած էին (1241) եւ ետքէն Հանսայեան քաղաքաց
անուամբ շատ երևելի եղան:

27. Անիշխանութիւն, անկարգութիւնք ու յա-
փրջտակութիւնք: Քսանութեց տարւան անիշխանութեան
ժամանակը (24), իշխանք կամ աւագ նախարարք ի-
րենց ստացուածներն ու իրաւունքներն ընդարձակելու ե-
տեւէ կ'ըլլային: Խոնարհագոյն կամ տկարագոյն ազնուա-
կաններուն դէմ պատերազմ բանալով եւ զանոնք հարբու-
տահարելով, ծաղկող քաղաքներուն դէմ կռիւ բանալով
եւ զանոնք իրենց հպատակելով, պետութեան աւատային
երկիրները, հարկերն ու իրաւունքներն անիրաւութեամբ
իրենց սեպհականելով, իրենց վերոյիշեալ նպատակին կը
հասնէին: Ասոնց ընդարձակ կերպով ըրածը՝ իրենց զօրու-
թեան ու շափոյն համեմատ՝ կ'ընէին նաեւ խոնարհագոյն
ազատանին կամ ասպետք, որոնք նաւագնաց գետերու
եզրները եւ արջունի ճամբաներու վրայ շինուած եւ հասա-
րակօրէն անմատչելի ժայռերով պատած բերդերնէն՝ կա-
տարեալ աւագակութիւն կ'ընէին, ճամբորդներն ու վա-
ճառականները կը բռնէին եւ միայն սաստիկ փրկանքով թող
կու տային, վաճառքներով լեցուած նաւերն ու կտուքերը

կը յափշտակէին. քաղաքները ասոցատակութեան կ'երէին, եւ իրենց ամուր պարիսպներուն ետեւէն՝ անգոր օրէնքներն ու իրաւունքները ծաղր կ'ընէին: Նոյն ժամանակները դարձեալ դքսերն ու կոմսերը իրենց իշխանութեան տակ եղող երկիրներուն վրայ կատարեալ տէրութիւն ստացան եւ անկէ ետեւ սկսան իրրել երկրատէր սեպուիլ:

28. Հապտաւուրկի ցեղը: Աւագ նախարարը իրենց նպատակին հասնելէն ետեւ, ըստ մասին ձեռք բերածնին հաստատուն պահելու եւ ըստ մասին Գերմանիայի անկարգութեանց վերջ տալու համար, Հապտաւուրկի անէն Ռուտոլֆ կոմսը (38) կայսր ընտրեցին (1273). որովհետեւ անոր էլլաստի ու Հելուեաիայի մէջ ունեցած շափաւոր երկիրները՝ իրենց մեծ վախ մը չէր կրնար տալ, ուր որ իր փորձեալ քաջութիւնը, զօրութիւնն ու խոհեմութիւնը զիրենք կ'ապահովեցնէր որ ժամանակին անիշխանութիւնն ու անկարգութիւնները կը դադրեցընէ, միանգամայն Բոհեմիայի Օդոգոար զօրաւոր թագաւորը կը խոնարհեցընէ, որն որ Մորաւիա, Աւստրիա, Ստիրիա, Գարինթիա ու Գրանիա գաւառներն իրեն առած էր եւ ինքնազուխ կ'իշխէր: Ասանկով նոյն Ռուտոլֆ իր հոյակապ հանդամանաց եւ միանգամայն իր ծանօթ բարեպաշտութեան համար, որով իր նախորդներուն՝ քահանայապետներէն յափշտակած սահմաններն ու իրաւունքները ետ դարձուց եւ Գերմանիայի իշխանաց ձեռք բերած առաւելութիւնները հաստատեց, առհասարակ ամենէն ընդունուեցաւ. միայն վերոյիշեալ Օդոգոար թագաւորը շուղեց զինքը ճանչնալ: Ասոր համար կայսրն անոր դէմ պատերազմի ելաւ, յաղթեց, Բոհեմիայէն ու Մորաւիայէն դատ՝ բոլոր երկիրները ձեռքէն առաւ, եւ աւագ նախարարաց հաւանութեամբը՝ Աւստրիա, Ստիրիա ու Գրանիա գաւառներն իր օրդուցը տուաւ, Գարինթիա գաւառն ալ՝ իր հաւատարիմ դաշնակցին՝ Գիրոլի Մայնհարտ կոմսին պարգեւեց. իսկ իր աղջիկը Օդոգոարի օրդուցն ու յաջորդին Անկեզլաուսին հետ կարգեց: Անկէ ետեւ բոլոր իր փոյթը դարձուց Գերմանիայի անկար-

գութեանց վերջ տալու եւ կարգաւորութիւնն ու պահպանութիւնը հաստատելու: Սակայն իր ստացած մեծ զօրութիւնն արգելք եղաւ իր մեռնելէն (1291) անմիջապէս ետքը իր Ալպերդ որդւոյն իրեն յաջորդ ընտրուելուն, որն որ հաղիւ եօթը տարի վերջը կայսր եղաւ (1298): Ասկէ ետքն ալ մինչեւ Ալպերդ Բ. (1298—1437), Աւստրիական անէն զաս՝ ուրիշ աներէն ալ կայսրներ կ'ըլլային. իսկ ան ժամանակէն ետեւ նոյն իշխանութիւնը միշտ Աւստրիական տան մէջ մնաց: Անտանները կայսերական իշխանութիւնը վերջին աստիճանի նուաստացաւ. հաղիւ Մաքսիմիլիան Ա., զորն որ մեր պատմութեան սկսած ատեն կայսերական դահին վրայ կը գտնենք, նոյն իշխանութիւնը նորէն քիչ մը բարձրացուց ու զանազան օգտակար կարգաւորութիւններ բրաւ:

29. Ոսկեղէն հրովարտակ: Էրկրին մշտնջենաւոր խաղաղութիւնը: Կայսերական սենեկի դատատանարան: Պետութեան արքունեաց խորհուրդ: Լիւքսենպուրկեան կայսրներէն կարօլոս Գ. (1347—1378) Ոսկեղէն ըսուած հրովարտակով կայսեր ընտրութեան կարգերն որոշեց (1356), եօթը կայսրընտիրները (26) կատարեալ հաստատեց, անոնց ցեղական կարգադրութիւնները սահմանեց եւ պետութեան իշխաններուն աստիճանի յարաբերութիւնները կարգաւորեց: Փրեզերիկոս Գ.ին ատենները (1440—1493) աւագանին սկսան աւագածոցով անձամբ շերտալ եւ իրենց տեղը երեսփոխան խաւրել: Մաքսիմիլիան Ա. պետութեան աւագանւոյն իրենց իրաւունքն անձամբ պաշտպանելու համար իրարու հետ բրած կռիւներն ու պատերազմները վերջացնելու մեծ փոյթ տարաւ: Աւաջին անգամ Վորմսի մէջ աւագածոցով կամ կարգածոցով գումարած ատեն, անոր վճռովը հաստատեց Էրկրին մշտնջենաւոր խաղաղութիւնը (1495, Օգոստ.), որով յառաջուան մասնական պատերազմները խափու կարգելու էին, անկէ ետեւ նոյնպիսի բան մ'ընողներուն ալ սաստիկ պատիժներ կը սահմանուէին: Աս վճռոյն գործադրութեան եւ միանգամայն իշխանաց մէջ ելած երկպառակութիւնները քննելու եւ դատատան ընելու համար, Ֆրանկֆուրդի մէջ գերագոյն կամ կայսերական սենեկի դատատանարանը դրուեցաւ: Միանգամայն աս գործողու-

Թիւնները դիւրաւ ու կարգաւորեալ կերպով գլուխ տանելու համար, բոլոր Գերմանիա՝ նոյն տակն չորս, իսկ քանի մը տարի ետքը (1512) Գոլանդացի աւագաժողովոյն մէջ՝ տասը շրջանակ բաժնուեցաւ: Ասկից զատ քանի մը տարի յառաջ (1488) Իսլինկէնի մէջ հիմնուած Շուարեան մեծ դաշնակցութեան, զորն որ կայսրը նորէն հաստատեց (1496), յանձնուեցաւ գերագոյն գատաստանարանին տուած վճիռներն ի գործ դնել: Նոյն որոշումներով ստոյգ է Գերմանիա քիչ մը կարգաւորեցաւ. բայց կայսրն ալ գատաստանարաններու վերին առաջնորդութեան ծանրակշիռ իրաւունքը կորսընցուց, որուն տեղը շէր կրնար լեցընել Աիլենայի մէջ իր հաստատած Պետութեան արքունեաց խորհուրդը, որն որ կայսեր որոշման տակ ձգուած խնդիրներուն վրայ վճիռ պիտի տար: Ան ժամանակէն ետեւ պետութեան աւագանւոյն իշխանութիւնն ու զորութիւնն երթալով աւելցաւ. որովհետեւ կայսեր եւ հասարակօրէն նոյն աւագանւոյն երեսփոխաններէն կազմուած աւագաժողովոյն վրայ ամենեւին համարում շրջալով, իսկ գերագոյն գատաստանարանն իր դանդաղ վարմունքով բան մը չկրնալով որոշել, երկրատեարք եւ առանձինն կայսրընտիրք՝ իրենց սահմաններուն մէջ գրեթէ իրբեւ անկախ վեհապետք կը վարուէին:

Գ. Ի Տ Ա Լ Ի Ա

30. Գերմանական ազգեր, Լոնդորարդացիք, Գաղղիացիք: Հռոմէացւոց արեւմտեան կայսրութեան կործանելէն ետեւ, աս երկիրը Գերմանացւոց քանի մը ազգերուն ժողովատեղին եղաւ, որոնք նոյն գեղեցիկ ու ծաղկեալ կողմերը տիրելու կը ջանային: Նախ եւ յառաջ կայսրութեան տեղն անցաւ Հերուլեանց տերութիւնը (476), զորն որ նոյն ցեղին գլուխը՝ Ոգոսակեր հիմնեց: Աս տերութեան ետեւէն եկաւ Թէոտորիքի Արեւելեան Գոթացւոց թագաւորութիւնը (493), որուն մայրաքաղաքն էր Ռաւեննա եւ երբեմն Աերանա: Արեւելեան Հռոմէական կամ Բիւզանդեան կայսրք Բելիսարին ու Ներսէս պատրիկին ձեռքով աս ազգը նուաճելէն եւ ըստ մեծի մասին Խաալիայէն մերժելէն

ետեւ, նոյն երկիրը Բիւզանդեան կայսրութեան զաւառ մ'ըջին, որն որ Ռաւեննա կեցող վեցերորդապետի մը վարչութեան տակ էր (553): Բայց իրենց սա իշխանութիւնը հազիւ քանի մը տարի տեւեց. վասն զի առաջին անգամ վեցերորդապետ եղող վերոյիշեալ Ներսէս պատրկին վար ստնուելէն ետեւ, Լոնդորարդացւոց դերմանական ազգը, Ալպոյնին հրամանատարութեամբն Խաալիա եկաւ (568) եւ մինչեւ Տիբեր գետը բոլոր երկրին տիրեց՝ բայց ի Ճենուական ու Ալենեական ծովեզրներէն: Ըստ Լոնդորարդացիք՝ որոնք զանազան դքսութեւ տակ էին եւ ամենքն ալ Բաւիա կեցող թագաւորին կը հպատակէին, իրենց իշխանութիւնը կամաց կամաց բոլոր Խաալիայի վրայ տարածեցին, անանկ որ Բիւզանդացւոց ձեռքը՝ միայն Խաալիայի սահմանները, Ալենեակի տերութիւնը, Հոսմի եւ Նեապոլոսի դքսութիւններն ու հարաւային Աալաբրիա մնաց: Բայց երբ որ իրենք իրենց աշխարհակալութիւնները միշտ աւելի տարածելով, բոլոր Բիւզանդեան վեցերորդապետութեան երկիրներուն ալ տիրեցին, եւ զէպ ի Հոսմ մտանալով, անոր վրայ ալ վերին տերութիւն ունենալ կը պահանջէին, Ստեփանոս Բ. Գաղղիայի Պեպինոս Աարժ թագաւորը օգնութեան կանչեց, որն որ երկու արշաւանքով Ռոմանիա (վեցերորդապետութեան երկիրներն ու Պենտապոլիս) իրենց ձեռքէն առաւ ու քահանայապետին պարգեւեց (755, 756):

31. Կարոլոս Մեծ՝ թագաւոր ու կայսր: Ասկից քսան տարի մը ետքը Կարոլոս Մեծ Լոնդորարդացւոց իշխանութիւնը բոլորովին վերջացուց: Երբ որ նոյն ազգին Գեոթերիոս թագաւորը Պենտապոլիս առաւ եւ Հոսմի վրայ յարձակիլ կ'ուզէր, Կարոլոս բանակով մը եկեղեցւոց պաշտպանութեան համար Խաալիա գիմեց, Լոնդորարդացւոց թագաւորը Բաւիայի մէջ պաշարեց, ինք նոյն միջոցին Հոսմ գնաց՝ իր հօրը պարգեւատուութիւնը հաստատեց ու աւելցուց, ետքը զԳեոթերիոս գերի բռնեց եւ ինք զինքը Լոնդորար-

դայցոց (Լոմպարտիայի) կամ Իտալիայի թագաւոր անուանեց (774) : Իսկզբան երկրին կառավարութեան կերպը պահուելով, Լոմպարտիա իրբեւ զատ թագաւորութիւն մնաց. բայց երբ որ լիչ մը ետքը շատ մը Լոնգորարդացի զքսեր Կարոլոս Մեծին զէմ գաւազնութիւն մը կազմեցին, ինք հոն երկրորդ արշաւանք մ'ըրաւ, կառավարութեան կերպը փոխեց ու փրանդեան օրէնքները խոթելով՝ Լոնգորարդեան Իտալիան իր տէրութեան հետ բոլորովին միացուց : Ասիկց զատ ինք Ստորին Իտալիայի մեծ մասին վրայ աւատապետութեան իրաւունք կը բանեցընէր, մինչեւ որ վերջապէս Լեւոն Գ. քահանայապետէն կայսր պսակուելով (800), Արեւմտեան Հռոմէական կայսրութիւնը նորոգեց (13), եւ Յունաց բռնած քանի մը ծովեզրեաց քաղաքներէն զատ՝ բոլոր Իտալիա իր արքունական գաւազանին տակ առաւ : Կարոլոս Մեծին թոռները Փրանդաց միապետութեան երկիրներն իրենց մէջ բաժնած ստեն, Իտալիա՝ կայսերական իշխանութեան հետ՝ Լոթարանդրանկին ինկաւ (14), որուն զակրները մինչեւ Կարոլոս Յոյր՝ իրենց իշխանութեան մէջ հաստատուն մնացին (888) :

32. Արարացիք : Աթոն՝ կայսր : Նորմանք : Նոյն միջոցներուն Սարակինոսք կամ Արարացիք Իտալիայի կղզիներուն եւ ցամաք երկրին վրայ հաստատուած եւ զլիաւորաբար Սիկիլիայի, Կալաբրիայի ու Սաորին Իտալիայի մէջ տարածուած էին : Իրենցմէ զատ Ստորին Իտալիայի մէջ կային նաեւ Յոյնք՝ որոնց ձեռքն էր Նեապոլիս եւ Կայեղա եւ Ամալֆի, Լոնգորարդացիք, եւ զերմանական պետութենէ կախում ունեցող իշխանք՝ որոնք Բենեւենդի, Սալեռնոյի ու Կապուայի մէջ հաստատուած էին : Իսկ Իտալիայի ուրիշ մասերուն մէջ, Կարոլոսեան թագաւորաց վերջանալէն ետեւ, նոյն ցեղին ազգակից եղող իշխաններն առդին անդին իրբեւ թագաւոր դուրս ելան : Հիւսիսային Իտալիա կը տիրէր Ֆրիուլի Բերենդար սահմանակամը, հարաւային

կողմն ալ՝ Կախոց Սփորկոցի իշխանն: Ոթոն Ե. Գերմանիայի թագաւորը, յիշեալ Բերենդարին յաջորդներէն Լոթար թագաւորին Ատելայիտ սյրւոյն հետ կարգուեցաւ (951), եւ ինք զինքը Փրանկաց ու Լոնգոբարդացոց թագաւոր անուանեց: Ետքէն Միլանի մէջ երկաթի թագն ու Հռոմի մէջ քահանայապետէն կայսերական թագն ընդունելով (962), Աւերին Իտալիա սկսաւ տիրել: — Ստորին Իտալիայի մէջ ժ.Վ. դարուն սկիզբները (1000 եւ 1017) Նորմանք գալով, Յոյներն ու Սարակինոսները մերժեցին, եւ քահանայապետին ու կայսեր աւատապետութեան տակ՝ Եբուլիայի ու Կալաբրիայի դքսութիւնները հաստատեցին եւ վերջապէս Սիկիլիայի ալ տիրեցին: Նոյներէն ձեւացաւ Երկու Սիկիլիայի թագաւորութիւնը, որուն առաջին Նորմանտեան թագաւորն եղաւ Ռոկեր Բ. (1130): Եւ թագաւորն իր իշխանութիւնը քահանայապետէն ընդունեցաւ, որուն աւատապետութեան տակ ձգած էր բոլոր իր երկիրները:

33. Ընկախ տերութիւնք: Լոմպարտեան դաշնակցութիւն: Քահանայապետաց ու կայսերաց մէջ ելած երկպառակութիւններէն (1075—1122) առիթ գտնելով, Իտալիայի շատ քաղաքներ սկսան կայսերական կուսակալաց դէմ զլուխ քաշել եւ իրենք զիրենք ազատ ու անկախ հրատարակել: Նախ աս բանիս ձեռք զարկին Ճենուա, Լուզզա ու Բիզա հարուստ ծովեզերեաց քաղաքները, որոնց օրինակին շուտ մը հետեւեցան Միլան, Բաւիա, Գրեմանա, Գամպ, Բարմա, Բիաչենցա, Ալերոնա, Բատուա եւ ուրիշ քաղաքներ: Ասոնք հիւպատներ ու ժողովրդեան կառավարութիւններ դրին եւ քաղաքային զօրքեր կազմեցին. մինչեւ դաշնագրութիւններ կ'ընէին, պատերազմ կը վարէին ու խաղաղութեան դաշինքներ կը գնէին: Փրեդերիկոս Ե. թեպէտ կայսերական իշխանութիւնն ըստ մասին նորէն հաստատեց (1154—1183). բայց քահանայապետին ու Երկու Սիկիլիայի թագաւորին միաբանութեամբը

զորացեալ Լամպարտեան քաղաքաց զանաւորութիւնը մեծ յաջողութեամբ թէ իրեն եւ թէ իր յաջորդաց իշխանութեան դէմ կը դնէր: Արդէն նոյն ատենները կազմուած էին քաջանայապետաց կողմն եղող Կուէլֆեանց եւ կայսերաց կողմը բռնող Ախպէլիեանց կողմնակցութիւնները (24), որոնք խիստ երկայն ատեն Խաալիա տակնուվրայ բրին: Հենրիկոս Էւէն († 1313) ետքը Գերմանիայի կայսերք Խաալիայի վրայ ունեցած իշխանութիւննին հաստատուն պահելու այնչափ մեծ ճգամք ետեւէ շէին ըլլար: Կարողոս Գ. եւ Փրեդերիկոս Գ. (Գ.) իրենց իրաւունքները ստակով կը ծախէին: Ի վերաց այսր ամենայնի Լամպարտիայի վրայ աւատապետութեան իրաւունք կը բանեցընէին: Նոյն տեղը Միւլան՝ Ախպէլեան ու Մֆորցայեան ջեղերուն տակ էր, Մանդուա՝ Կոնդակեան ջեղին, իսկ Մոսենա եւ Ռեճճիոյ՝ Էսզէի ջեղին տակ:

34 - Խաալիայի առանձին տէրութիւնք: Հիմայ քիշ մ'ալ Խաալիայի առանձին տէրութեանց վրայ համառօտի խօսինք:

Ա. Հռոմի տէրութիւն: Հռոմի կամ քաջանայապետաց աշխարհական իշխանութեան սկզբնաւորութեան պատմութիւնը մթով ծածկուած է: Աւերը Պեպինոսին ու Կարոլոս Մեծին պարգեւատուութեանց վրայ խօսեցանք (30 եւ 31): Ասոնց վրայ Պենեւենդի դքսութիւնն եկաւ, զորն որ Հենրիկոս Գ. Լեւոն թ. քաջանայապետին տուաւ (1052): Ետքէն նոյն ստացուածները մեծցան Տուսկիայի (Գոսկանայի) Մաթիլտե իշխանուհւոյն († 1115) հռչակաւոր պարգեւատուութեամբը, որն որ կը բովանդակէր Անդանայի մարզին մէկ մասը, Սփոլեդոյի դքսութիւնն ու հիմակուան Գոսկանայի, Բարմայի եւ Մոսենայի մէջ զանազան երկիրներ: Իսկ Հռոմ մայրաքաղաքն երկայն ատեն կայսերաց իշխանութեան տակ մնալէն ետեւ, վերջապէս Փրեդերիկոս Բ. կայսեր ատեն (1215—1250) քաջանայապետին բուն իշխանութեան տակ ինկաւ: — Աս տե-

բութեան շէ թէ միայն հիւսիսային սահմանները գեո-
 խիստ անորոշ էին, հապա նոյն իսկ իր սահմաններուն
 մէջ եղած քաղաքներուն մեծամեծ բնտանեաց սաս-
 անիկ զօրաւոր իշխանութեամբը քահանայապետին իշ-
 խանութիւնը կը տկարանար: Ասկից զատ ազգական-
 ները մեծցրնելու բողձանքը՝ երբեմն քահանայապետաց
 իշխանութեան հաստատուելուն արդելէք կ'ըլար: Աս
 բանս զլիաւորաբար կրնայ բաւիլ Աղէքսանդր Զին
 վրայ, որն որ մեր պատմութեան սկսելու տանն քա-
 հանայապետ էր (1492—1503):

Բ. Երկու Սիկիլիա: Սկզբը աս թագաւորու-
 թեան հիմնարկութիւնը յիշատակեցինք (32): Ռոկեր
 Բ. առջին թագաւորին Առատանդիա աղջիկը Հենրի-
 կոս Զ. կայսեր հետ կարգուած ըլլալով, երբ որ արքու-
 նի տան արու զաւակը տպառեցաւ (1189), Հենրիկոս
 թագաւորութիւնն իրեն սեպհականեց եւ զինուք ալ
 իր իրաւունքը հաստատուն պահեց: Բայց քահանայա-
 պետը, որուն մեծ վախ կը պատճառէր ասանկ զօրաւոր
 իշխան մ' իրեն սահմանակից ունենալը, քիչ մը ետքը
 իր աւատապետութեան իրաւանց վրայ հիմնած՝ ուզեց
 նոյն թագաւորութիւնը Գաղղիայի Լուզովիկոս Թ. թա-
 գաւորին եղբորը՝ Անժուի Կարոլոս կոմսին տալ: Աս
 պատճառաւ մեծ պատերազմներ եղան. եւ թէպէտ Կա-
 րոլոս յաղթեց ու երկրին տիրեց (1265—1285), բայց
 Սիկիլիա կղզւոյն բնակիչներն իրեն դէմ ըլլալով, սոք
 ելան, եւ Սիկիլիայի երեկոյեան պաշտամունք կոչուած
 սասանիկ կոտորածով Գաղղիացիները մերժելէն ետեւ
 (1282), իրենց թագաւոր ընտրեցին Արակոնիայի (41)
 Պետրոս Գ. թագաւորը: Իսկ Նէապոլոսի թագաւորու-
 թիւնն Անժուի յեղին ձեռքը մնաց, որն որ բոլոր ԺԴ.
 դարուն մէջ իր իշխանութիւնը պահեց, մինչեւ որ Ա-
 րակոնիայի Ալփոնսոս Ե. (Ա.) թագաւորը զերեւը հան-
 կից ալ մերժելով (1443), երկու տերութիւնները
 միացուց: Բայց ինք դարձեալ երկուքի բաժնեց. ուստի
 եւ մեր պատմութեան սկսած ատենները Սիկիլիա կըլ-

ղւոյն գահին վրայ կը դանենք Արակոնիայի (Փերգինանդ Աթոռիկէական) թագաւորը . իսկ Նէապոլոյ գահին վրայ՝ նոյն Արակոնեան ցեղէն ուրիշ թագաւոր մը (Ալփոնսոս Բ.) : — Իտալիայի առ ամենէն մեծ թագաւորութիւնը կրնայ ըսուիլ որ ամենէն տկարն էր, որովհետեւ թագաւորաց իշխանութիւնը մեծամեծներուն զօրութեամբը խիստ կը նուաղէր, մանաւանդ որ թագաւորը իրենց իշխանութիւնն աւելցրնելու համար բանեցուցած միջոյններով ժողովրդեան աստիճի եղած էին :

Գ . Սարդինիա : Աս կղզին, որն որ իր անունը հիմակուան բոլոր թագաւորութեան տուած է, Վանտալոյ՝ Հռոմայեցւոյ երկիրներն արշաւած ասէնը, իրենց ձեռքն ինկաւ (չուրջ 450) : Հարիւր տարիէ ետեւ, երբ որ Վանտալոյ տէրութիւնը կործանեցաւ, նոյն կղզին Յունաց իշխանութեան տակ մտաւ : Ասոնք նոյնն Արաբացւոյ յաճախ յարձակմանց գէժ չկրնալով պաշտպանել, Սարդինիայիք Փրանգոյ գիմեցին, որոնք քիչ մը ժամանակ անոնց յարձակումները խափանեցին : Ի վերայ այսր ամենայնի ժԱ . դարուն սկիզբները Արաբացիները Սարդինիա կը դանենք, ուսկից Ճենուացւոյ ու Բիզանցւոյ միացեալ զօրութիւնները զանոնք կրցան մերժել : Բայց նոյն կղզւոյն պատճառաւ առ երկու հասարակապետութեանց մէջ սաստիկ պատերազմներ եղան, որովհետեւ իւրաքանչիւրը հին առանձին տիրել կուզէր : Աս կռիւներն անով վերջացան, որ երկու հասարակապետութիւնք իրենց վէճը քահանայապետին որոշման տակ ձգեցին (1175), որն որ կղզին երկուքին մէջ բաժնեց : Փրեզերիկոս Բ . կայսրն իր Հենրիկոս բնական որդին՝ Սարդինիայի թագաւոր պսակեց : Ետքը Բանիփակիոս Ը . քահանայապետը նոյն կղզին իրբեւ աւատ տուաւ Արակոնիայի թագաւորին (1297), որն որ կղզւոյն տիրեց եւ Բիզանցիները հանկից բոլորովն մերժեց (1323—1326) : — Իսկ Սաոյա ժԱ . դարուն սկիզբէն Պուրիսնտիայի թագաւորութեան իրբեւ դաւառմըն էր (14), որուն վրայ Պերգոլա իշխանը կը տիրէր :

Ասոր թուան ամուսնութեամբ ձեռք անցուց Սուղայի սահմանահամութիւնը, Գուրինի դքսութիւնը, Բիւմնեղ ու Վալ տա Ասուգայ: Իր յաջորդները, որոնք Լոմպարտայի կայսերական կուսակալ էին, իրենց տակն առին նաեւ Ասդի, Նիցցա եւ Ճինեւրայի կամսութիւնը: Ամադէոս Ը. կամօր՝ Սիկիզմունտ կայսրէն դքսի օրտաղոս առաւ (1416):

Դ. Վենետիկ: Համայնաց ատենէն առ քաղքին շրջանակն եղող կղզիները՝ Վենետիկ կը կոչուէին: Նոյն փոքր կղզիներուն մէջ հին ժամանակները աղքատ ձկնորսք ու նաւաւարք կը բնակէին. մինչեւ որ Ալբրիքի ու Ատտիլայի վախէն շատ մարդիկ հոն ապաստանեցան եւ ան աստիճանի բազմացան՝ որ կղզիներուն վրայ բաւական տեղ չգտնելով, անոնց քովերն ալ յիցերու եւ կամուրջներու վրայ տներ շինեցին: Ասանկով իբր թէ ջրերու մէջ լողացող քաղաք մը ձեւացաւ, որուն գլխաւոր տեղը՝ Ռիալդոյ կղզին էր եւ գլուխները վերջապէս ընդ համուր գլխաւորի (դքսի կամ տոժի) մը տակ միացան (697): Վենետացիք իրենց տեղւոյն զիրէն՝ Ադրիական ծովուն վրայ նաւազնացութիւն ընելու մղուելով, արդէն ժ. դարուն վերջերք Յունաց կայսրներուն եւ Եգիպտոսի ամիրապետներուն նպաստաւորութեամբն ընդարձակ վաճառականութիւն կ'ընէին: Նոյն ատենները Գաղմատայի ծովեզերաց վրայ աշխարհակալութիւններ ալ բրին (997): Ետքէն Խաչակրաց արշաւանքին ատենը ծովային հեռաւոր ճամբորդութեանց առիթ գտան. հեազհետէ սկսան Ափայի հեռաւոր կողմերուն եւ մինչեւ Հնդկաստանի վաճառներն Եւրոպա բերել. որով ան ատենուան առաջին վաճառական աղղերէն մէկն եղան, մեծապէս ծաղկեցան ու հարստացան: Լոմպարտեան դաշնակցութեան մէջ մանեւէն ետեւ, քահանայապետին հաւանութեամբը՝ Ադրիական ծովուն տէրութիւնը կրցան ձեռք բերել (1177): Իսկ Խաչակրաց շորթորդ արշաւանքին մասնակից ըլլալով, յունական կայսրութեան բաժնուած ժա-

մանակը (1204), թէ ցամաք երկրին վրայ եւ թէ Յունաստանի կղզիները շատ տեղ ձեռք բերին, ինչպէս նաեւ Գորիֆու, Քեֆալոնիա ու Արեաէ կղզիները: Իրենց յառաջումն սամկապետական կառավարութեան ձեւը ժ.Գ. դարուն վերջը ժառանգական սոփոսապետութեան դարձաւ: Անեւտացիք կամոյց կամոյց Խաալիայի մէջ ալ շատ երկիրներ ձեռք անցուցին. չէ թէ միայն Բատուա, Աերոնա, Ախլենցա ու Ֆրիուլ իրենց իշխանութեան տակ մտան, հապա նաեւ Գապմատիա ալ վերջնապէս Ախպրոս կղզին ալ առին (1486): Այն տեղերն աչուրնին տնկած էին Ռամանիայի վրայ, զորն որ յառաջագոյն ձեռք ալ բերած էին. Միլանի վրայ ալ նոյնպիսի խորհուրդներ ունէին, որոնց կատարուիլ թէպէտ աւելի դժուար էր. բայց իրենց մտքին մէջ շատոնց հաստատուած ըլլալով, մեծ խորադիտութեամբ ետեւէ կ'ըլլային գլուխ հանելու: Արնայ ըսուիլ որ իրենց թէ ծովային եւ թէ ցամաքային զորութիւնը, չէ թէ միայն Խաալիայի՝ հապա բոլոր Եւրոպայի մէջ, առաջինն էր. 300 պատերազմական ու 3000 առւտարական նաւ ունէին. իսկ իրենց ցամաքային զորաց թիւը՝ 90,000ի կը հասներ:

Եւ Փլորենտիա եւ Բիզա: Աս երկու քաղաքներն ալ իրենց արուեստներովն ու առուարովը երկուելի ըլլալով, կամոյց կամոյց անկախութիւն ստացան ու հասարակապետական կառավարութեան ձեւի մէջ մտան: Բիզա՝ որն որ քիչ մը ժամանակ Գորսիդայի ու Սարգինիայի ալ տիրած էր, ծովու վրայ՝ ճենուպէն, իսկ ցամաքի վրայ Փլորենտիայէն յաղթուելով, ալ իր անկախութիւնը կորսընցուց: Իսկ Փլորենտիա՝ որն որ Խաալիայի ուրիշ մասերուն պէս՝ Աուէլիեանց ու Աիպելինեանց կռիւներուն տեսարանն եղած էր, ժ.Ե. դարուն սկիզբէն Մեափշեան ցեղին իշխանութեան տակ ինկաւ: Եւ թէպէտ Բիզա իր իշխանութեան տակ առնելով (1407), իր սահմանները մեծցուց. բայց Բիզացւոց անկախութեան հողին մարած չէր: Ասով եւ միանգամայն

Մեծիչեանց իշխանութեան կերպովը, որն որ մի միայն տիրողներուն խելացութեան վրայ հիմնուած բլաւով՝ անհաստատ բան մըն էր, տէրութեան մէջ յեղափոխութեանց ու խռովութեանց սերմը կը մնար:

Չ. Ճննուա: Ա՞ն քաղաքն իր պայծառութիւնն ընդունեցաւ Արեւելքի հետ բրած առուարով. եւ ժԲ. դարուն սկիզբները կայսեր վերին իշխանութենէն ինք զինքն անկախ ընող քաղաքներուն առաջիններէն մէկն եղաւ: Թէպէտ իր մէջը կառավարութեան ձեւին պատճառաւ երկպառակութիւնք ու կռիւք պակաս չէին. բայց ժԲ. ու ժԳ. դարերուն խաշակրաց արշաւածքներով Արեւելք շատ երկիրներ ձեռք բերաւ (Քէֆէ, Ազոֆ, Չմիւռնիա, Կոստանդնուպոլսոյ մէկ երկու արուարձանները). միանգամայն Եւրոպայի քանի մը վեհապետներու հետ դաշնագիր բլաւով, իր սահմաններն ընդարձակեց, եւ Նիցոյայի ու Մոնազոյի վրայէն մինչեւ Մարտիլիա հասաւ: Իր ստինն եղող Բիզայի հասարակապետութեան հետ երկու դարու շափ Միջերկրական ծովուն տէրութեան վրայ կռուելէն ետեւ, վերջուպէս յաղթող եղաւ: Աւճառականութեան պատճառաւ Անեկապոսոյ հետ ալ երկայն պատերազմներու բռնուեցաւ (1253—1381), որոնց մէջ վերջին անգամ մեծ կորուստ բրաւ: Մակայն իրեն ասկից աւելի փնտսակար եղան իր կառավարութեան կերպին անորոշութենէն եւ ազնուականաց ու քաղաքացւոց իրարու դէմ ունեցած նախանձարգութենէն ծագած կռիւները, որոնց պատճառաւ երկու անգամ ինք զինքը Վաղղխայի պաշտպանութեան տակ ձգեց (1396 եւ 1458): Առաջին անգամ զանոնք մերժելէն ետեւ, երբեմն Մոնֆերադի սահմանակամներուն, երբեմն ալ Միլանի դքսերուն անձնատուր եղաւ, եւ ալ սկսաւ իրրեւ Միլանի դքսութեան վերաբերող երկիր մը սեպուիլ (1464էն վեր):

Է. Միլան: Ա՞ն դքսութիւնը՝ որուն տակը կ'երթար Բարձա եւ Բիաշենցա ալ, Վերամանիայի կայսե-

բայ աւատապետութեան տակն էր, եւ Վիսգանդեան ջեղին սպառեւին ետեւ (1447), Սփորցայեան ջեղին իշխանութեան անցած էր: Նոյն ջեղին զխումն՝ Փրանկիտիս Սփորցային մեռնեւին (1466) եւ անոր որդւոյն Կալէացոյ Մարիամին սպանուեւին (1477) ետեւ, վերջնոյն որդին Յովհաննէս Կալէացոյ կը կառավարէր իր Լուգովիկոս Մորոս Տօրեղբօրը տեսութեան տակ, որն որ իշխանութեան աչք անկած էր, եւ վերջապէս զանկիայ մերժելով, ինք տեղն անցաւ (1494):

Ե . Ս Տ Ո Ր Ի Ն Ն Ա Հ Ա Ն Ք Ք

35. Աս երկրին տիրողները: Հիմա Ստորիննա-
Տանգք (Հօլանտա) անուամբ իմացուած երկրին մէջ
քանի մը Գերմանացի ջեղեր կը բնակէին. Ռենտի Հա-
րաւային եւ արեւմտեան կողմերն իբրեւ առանձին ջեղ
մը կը կազմէին Բեղդիացիք, որոնք դարձեալ զանազան
ծիւղերու կը բաժնուէին: Աս ամէն ազգերն ետեւէ ե-
տեւ Հռոմայեցոց հնազանդեցան՝ Վեսարի, Գրուտտի
եւ Տիրերիտտի ձեռքով. իսկ Գերմանիկոս զիրենք բոլր-
բովին հպատակեցուց: Սալեան Փրանդներն սա երկիր-
ները մտան (237), եւ քանի մ'անգամ մերժուեւին
վերջը, նորէն ետ դարձան, մինչեւ որ վերջապէս Ե-
դարուն մէջերը բոլոր ան ազգերն իրենց հպատակեցու-
ցին: Այսպէսով նոյն ազգերն ու իրենց անկախութիւ-
նը Գաղղիացոց կամ Փրանդաց մէջ կորուսեցան: Մինակ
Ֆրիզացիք հիւսիսային կողմերն անկախ մնացած էին եւ
հոն ծովահնութիւն կ'ընէին: Բայց Կարոլոս Մեծին
առնեն անոնք ալ ըստ մասին հպատակեցան ու Սալի
իրաւախոհութեան դաշինքով (803) նոյն կայսեր աւա-
տապետութեան տակ մտան. սակայն ըստ մասին ալ
իրենց անկախութիւնը պահեցին եւ ազատ նահանգնե-
րու միաբանութիւն մը կը կազմէին: Իսկ Ստորիննա-
Տանգաց մնացեալ մասերը նոյն Կարոլոս Մեծին եւ
իր յաջորդաց առնները կոմսութիւններու բաժնուած

էին, որոնց իշխանութիւնը ժառանգական չէր: Աւեր-
տէօնի դաշնադրութեամբ Փրանդաց միապետութիւնը
բաժնուած ատեն, Ստորին նահանգները Լոթար Ա.
կայսեր իշխանութեան տակ ինկան (14). բայց ետքէն
երբ որ անոր տէրութիւնը նորէն բաժնուեցաւ, իր եր-
կրօրդ որդին Լոթար՝ Ռենսսի, Մաասի ու Շելլուէի մէջ
եղած երկիրներն առաւ, որոնք իր անուամբը Լոթարին-
գիա կոչուեցան եւ որոնց մէջն էին Ստորին նահանգ-
ներն ալ: Ետքէն Լոթարինգիա դաւառը Գերմանիայի
Հենրիկուս Ա. թագաւորին անցաւ (925), զորն որ Ռոթմ-
Բ. կայսրը երկուքի բաժնեց. Աւերին Լոթարինգիան՝ ի-
րբեւ կոմսութիւն մը՝ Պարի Փրեզերիկուս կոմսին տուաւ.
Իսկ Ստորին Լոթարինգիան, այս ինքն՝ Մաասին ու ծո-
վուն քովերն եղող երկիրները՝ որոնց մէջ էին նաեւ
Ստորին նահանգները, Գաղղիայի Լոթար Ա. թագաւ-
որին Վարդլաս եղբօրը տուաւ, իրբեւ Գերմանիայի կայս-
րութեան աւատ (977): Կամոց կամոց Ստորին Լո-
թարինգիայի կոմսերուն աստիճանը ժառանգական ե-
ղաւ. եւ անոնք ետեւէ ետեւ իրենց իշխանութիւնն
ընդարձակելով, վերջապէս Ստորին Լոթարինգիայի
դքսին (որն որ Պրապանդի դուքս ալ կը կոչուէր) ձեռքն
ամենեւին իշխանութիւն չմնաց, հասցաւ միայն անուն մը:

36. Պուրկուճտիայի դքսերն ու Հապսպուրկի
տունը: Մինչեւ ԺԱ. դարուն վերջերը նոյն կողմերը
ձեւացած էին հինգ դքսութիւնք, այս ինքն՝ Պրապանդ,
Ստորին Լոթարինգիա, Լիւքսենպուրկ, Լիմպուրկ եւ
Կելտեան. եօթը կոմսութիւնք, որոնք էին՝ Փիանարա,
Հորանտա, Չէլանա, Հեննեկաւ, Երգուա, Նամիւր եւ
Չիւֆղէն. մէկ ազատ տէրութիւն, որ էր Ֆրիզլանտ.
Եւ մէկ եկեղեցական տէրութիւն՝ Ուդրեխտի: Երդ քիչ
մը ետքը Ուդրեխտի եպիսկոպոսին իշխանութեան տակ
մասն Տրենդէ, Օվերիսէլ եւ Արէօնինկէն. իսկ Չէլ-
անա, Հորանտա, Պրապանդ ու Փիանարա՝ զմեամբ կամ
ամուսնութեամբ կամ դաշնադրութեամբ՝ Գաղղիայի
թագաւորական ջեղէն (Յովհաննէս Բ. Բարի թագաւո-

րին Փիլիպպոս որդիէն † 1404) յառաջ եկած Պուրկունախայի դքսերուն տակ մտան. որոնք նոյն կերպով ձեռք անցուցին նաեւ Լիւքսենպուրկ, Հեննեկաւ, Արգուա եւ Նամիւր: Ասանկով Լիւզդիխի եւ Ուզբեխտի եպիսկոպոսներուն սահմաններէն զատ, բոլոր երկիրը Պուրկունախայի դքսերուն իշխանութեան տակ էր, բայց իրրեւ Գերմանիայի կայսրութեան աւատ: Նոյն դքսերուն վերջինը՝ Կարոլոս Յանգուզն մեռած տարին (1477) իր Մարիամ աղջիկը Փրեզերիկոս Գ. կայսեր Մաքսիմիլիան որդւոյն հետ կարգուելով, իր ընդարձակ երկիրները Հապսպուրկի (Աւստրիական) տան ստացուածքն եղան (48): Բայց Մաքսիմիլիան իր հօրմէն օգնութիւն չընդունելով, Արգուա, Ֆիանտրա ու Պուրկունախայի դքսութիւնը Գաղղիայի Լուզովիկոս ԺԱ. թագաւորէն չկրցաւ պաշտպանել, որն որ նոյները ձեռք անցուց (21): Մաքսիմիլիանին ու Մարիամին որդին Փիլիպպոս Գեղեցիկ՝ Սպանիայի Փերդինանդ Կաթոլիկէականին Յովհաննա Ժառանգին հետ կարգուելով, Աստրին նահանգներն ալ Սպանիայի թագին հետ միացան:

2. Հ Ե Լ Ո Ւ Ե Տ Ի Ը

37. Այլևայլ փոփոխութիւնք՝ մինչև Գերմանիայի հետ միանալը: Հելլուետացիք Կեղտերու ցեղէն էին, որոնք Կիմբրացւոց՝ Հոմանյեցւոց հետ պատերազմ բրած առեն՝ առաջիններուն դաշնակից էին. ետքէն Գաղղիա յարձակելու փորձ մ'ըրած առեննին (58 ք. Յ.) Յուլիոս Կեսարէն յաղթուեցան, Հոմանյեցւոց դաշնակից եղան, եւ անոնց օրէնքներն ընդունելու ստիպեցան: Արեւմտեան կայսրութեան կործանելէն վերջը, Հելլուետիա ըստ մասին՝ Գաղղիայի, ըստ մասին ալ Գերմանիայի դաւառ սեպուեցաւ: Ալեմանք ու Պուրկունախայիք Հելլուետիայի տիրեցին (410—430). իսկ երբ որ առաջինները Փրանդներէն յաղթուեցան (496), Հելլուետիայի հարաւային մասը՝ Արեւելեան Գթաց իշ-

խանութեան տակ մտաւ : Հելուեաացիք ետքէն Գաղ-
ղիայի թագաւորաց հպատակելէն վերջը, վերաւեօնի
դաշնադրութեամբ Ղթար կայսեր ինկան (14) : Երբ
որ Աարոյս Յոյրին ատենը բոլոր յառաջուան Փրանդեան
երկիրներն իրարու հետ միացան (885), նոյն թագաւո-
րը շկրցաւ իրեն հպատակեցընել Հելուեաիան, որն որ
Ստորին ու վերին Գուրկունաիայի թագաւորութիւն-
ներուն մասն եղաւ (14) : Աս երկու թագաւորութեանց
միանալէն ետեւ, Ռուտովֆ Գ. թագաւորն առանց զաւ-
կի մեռնելով, Հելուեաիա՝ նոյն թագաւորին կամաց
համեմատ՝ Գերմանիայի հետ միացաւ (1032) : — Աս
միջոցներուն քանի մը քաղաքներ գլխաւորաբար իրենց
դիրքովն ու առուարովը խիստ ծաղկած էին : Նոյն
կողմերը գեղացիք բոլոր ծառայութեան կամ ստոր-
կութեան վիճակի մէջ էին, բաց ի Շվից, Ռարի եւ Ռեն-
դերվալարն նահանգներէն, զորոնք ոչ Հռոմայեցիք եւ
ոչ Գուրկունաիայիք կրցեր էին իրենց իշխանութեան
տակ ձգել. ասոնց Գերմանիայի հետ ունեցած կապն ալ
խիստ թոյլ էր :

38. Հելուեաական դաշնակցութիւն : Հելուե-
աիայի իշխանական ցեղերուն մէջ գլխաւորներն էին
Գիպուրկի եւ Հապպուրկի աները, որոնց մանաւանդ
վերջինն իր իշխանութիւնը շատ մեծցուցած ու տարա-
ծած էր, եւ նոյն անէն Ռուտովֆ Հապպուրկի կոմսը
Գերմանիայի կայսր ընտրուեցաւ (1273) : Ասկից քանի
մը տարի ետքը վերոյիշեալ երեք նահանգներն իրարու
հետ դաշնակցութեան մէջ մտան (1291), եւ քիչ մը
վերջը նոյն դաշնադրութիւնը տասը տարւան համար մե-
ջերնին նորոգելով (1307), Հելուեաիայի դաշնակցու-
թեան հիմը դրին : Աս ժամանակէն վերջը սկսան Հապ-
պուրկի անէն գլուխ վերցընել. եւ նոյն ցեղին թշնամի-
ներէն օգնութիւն դանելով ու քանի մը պատերազմնե-
րու մէջ յաղթող ելլելով, ալ անոնց իշխանութենէն
գրեթէ անկախ եղան : Ասանց կամաց ուրիշ հինգ նա-
հանգներ ալ, այս ինքն՝ Ղիւցեան, Յիւրիխ, Յուկ, Գլա-

բառ եւ Պետն (1332—1353), առաջին երեք նահանգաց չեա միացան, որով եւ Հելուետական դաշնակցութիւնն երկայն ատեն ութ նահանգներէ կազմուեցաւ: Արան շատ ժամանակ անցնելէն ետեւ, Գրայպուրկ եւ Սորթուոն ալ դաշնակցութեան մէջ մտան (1481), որուն գլխաւորաբար առիթ տուա իրենց ազատութիւնները սեղմել ուզող՝ Պուրկուտիայի Կարլոս Եանդուզն դքսին դէմ բրած նշանաւոր յաղթութիւններն (1476): Աւերոյիչեալ յաղթութիւնը բոլոր Հելուետական դաշնակցութեան մեծապէս օգտակար եղաւ, որովհետեւ անով Քաղղիայի բարեկամութիւնն ալ ստացան: Ասով աւելի եւս յանդգնելով, երբ որ Մաքսիմիլիան Ա. Կուզեր զիրենք Շուարեան դաշնակցութեան մէջ մտնելու ստիպել, մինչեւ նոյն ատեն Գերմանիայի չեա ունեցած թոյլ կապերնին ալ գրեթէ բոլորովին խզեցին (1495): Ասոր վրայ պատերազմ բացուելով (1499) եւ Հելուետացիք գրեթէ միշտ յաղթող գանուելով, Պազէլի խաղաղութեան դաշինքը գրուեցաւ, որով գրեթէ Գերմանիայէն անկախ եղան: Անկէ ետեւ Պազէլ եւ Շաֆհաւզեն (1501) ու Արբենցէլ (1513) յառաջուան տասը նահանգաց չեա միաբանելով, Հելուեաիայի դաշնակցութիւնը կը կազմէին:

Է. Ս Պ Ա Ն Ի Ա

39. Սպանիա գաղթող ազգերը: Պիւրենեան թերակղզին՝ որուն մեծ մասը կը կացուցանէ Սպանիա, երկայն ատեն անձանօթ մնացած էր Եունաց: Ասներ իրենց արեւմտեան կողմերն եզող բոլոր երկիրները Հեապերիա (Արեւմուտք) կը կոչէին. ետքէն Ռոզանտի (Ռանի) բերաններէն մինչեւ Հերակղի արձանները Միջերկրական ծովուն եզրները գտնուած երկիրներուն Իբերիա անուն տուին. սակայն վերջապէս նոյն անունը Պիւրենեան թերակղզւոյն (Տիմակուան Սպանիային ու

Բորգուկալին) սեպհականեցաւ: — Շատ հին ժամանակներէ վեր Աեղտերը գաղթած Սպանիա եկած եւ երկրին հին բնակիչներուն կամ Իրերիացւոց հետ երկայնատեն պատերազմ բնելէն ետեւ, վերջապէս անոնց հետ խառնուած՝ մէկ ազգ ձեւացած էին: Փիւնիկեցիք եւ Յոյնք ալ նոյն երկիրը գաղթականութիւններ հաստատեցին. նաեւ Աարքեղոնացիք ան կողմերը զինուք շատ ընդարձակ երկիրներ ձեռք բերին ու նոր Աարքեղոն քաղաքը շինեցին: Ասոնց յաջողութենէն Հռոմայեցիք նախանձի գրգռած, երկայն ատեն անոնց հետ կռուելէն ետեւ, Սպանիայէն մերժելով՝ իրենք հոն տիրեցին (201 ք. Յ.): Աջան վեց դար անցնելէն ետեւ, զանազան Գերմանական ազգեր Հռոմայեցիները հոնկից վանեցին եւ իրենք հաստատուեցան (410): Անտալուզիա անունը մինչեւ հիմայ կը պահէ նոյն կողմը հաստատուող Անտալներուն յիշատակը, թէպէտ եւ անոնք ետքէն ձգեցին Ափրիկէ քաջուեցան: Սուէք, Ալանք եւ Արեւմտեան Գութք Սպանիայի արեւմտեան կողմերն ու Բորգուկալի մէջ հաստատուեցան. բայց խել մը ժամանակ ետքը վերջին ազգն առաջինները բոլորովին իրեն հպատակեցուց (585): Իսկ նոյն Արեւմտեան Գթաց մէջ երկպառակութիւններ ելլելով, իրենց մէկ կողմնակցութիւնն Ափրիկէի մէջ տիրող Արաբացիներն օգնութեան կանչեց, որոնք Գարիք իշխանին հրամանատարութեան տակ հոն եկան (711):

40. Արարացւոց թագաւորութիւնը: Օմայեանք ու Ապպասեանք: Քրիստոնեայ տէրութիւնք: Ա՞ւ Արարացիք հետզհետէ ան աստիճանի բազմացան ու զօրացան, որ Արեւմտեան Գթաց բոլոր թագաւորութիւնն իրենց իշխանութեան տակ առին. անանկ որ Սպանիա Պաղատաթ Օմայեանց Ամիրապետներուն թագաւորութեան մէկ գաւառն եղաւ: Նոյն ատենները Արեւմտեան Գթաց մէկ մասը հիւսիսային արեւմտեան լեռնակողմանքը քաջուեցան, եւ Պիսպայայի ու Աստուրիայի երկիրներուն մէջ իրենց անկախութիւնը պահե-

ցին: Քանի մը տարի ետքը Պաղտատի մէջ Օմայեանց
ցեղը Ապպասեանց ցեղին ձեռքովն իր իշխանութիւնը
կորսորնցընելով (756), նոյն Օմայեանց ցեղէն Ապտեր-
բահման իշխանը Սպանիա եկաւ, ան երկիրն Աբարա-
ցւոց բուն տէրութենէն բաժնեց եւ Վորտովայի մէջ
անկախ թագաւորութիւն մը կանգնեց: — Աբարացւոց
իշխանութեան տակ Սպանիայի մէջ չէ թէ միայն եր-
կրագործութիւնը, արուեստներն ու վաճառականու-
թիւնը յառաջ զացին եւ երկիրը շէնցաւ ու խիստ բազ-
մամարդ եղաւ. հապա նաեւ զիտութեան շատ ճիւղերն
ու առանձինն աստղաբաշխութիւնը, քիմիան, բժշկա-
կանութիւնն ու տնկաբանութիւնը շատ ծաղկեցան:
Աս զիտութիւնը Եւրոպայի ուրիշ տէրութեանց մէջ
զեռ քիչ ծանօթ ըլլալով, շատ կողմերէն Վորտովայի
զպրոցները կը զիսկին զանոնք սորվելու: — Բայց Աբա-
րացիք իրենց ներքին երկպառակութիւններովը միշտ
աւելի տկարացած ատեն, հիւսիսային լեռնակողմները
փախչող Արեւմտեան Վոթացիք ետեւէ ետեւ անոնց
ձեռքէն զանազան երկիրներ կ'առնուին. անանկ որ մինչեւ
ԺԱ. դարուն սկիզբները քանի մը քրիստոնէսայ տէրու-
թիւնք հաստատուած էին: Նոյն ատենները Վորտովայի
մէջ մեծ յեղափոխութիւն մ'եղաւ ու տիրող Ամիրա-
պետաց ցեղը զահէն մերժեց, որով եւ Օմայեանց ցեղը
վերջացաւ (1038): Այսպէսով քաղաքներու եւ դաւ-
առներու կուսակալներն անկախ վեհապետներու դար-
ձան եւ պղտիկ պղտիկ մահմետական թագաւորու-
թիւններ կանգնեցին:

41. Քրիստոնէսայ տէրութիւնք: Սանքէս Մեծ
ու իր որդիքը: Ինչպէս վերը (40) յիշատակեցինք, Ա-
բարացւոցմէ մերժուող Արեւմտեան Վոթք, արեւ-
մտեան լեռնակողմները քաշուած էին: Հոն Աստուրի-
այի թագաւորութիւնը հիմնեցին, որուն մայրաքա-
ղաքը Ալեւոն ըլլալէն ետեւ՝ նաեւ Ալեւոնի թագաւորու-
թիւն ալ կը կոչուէր: Ասանց կամաց կանգնուող ու-
րիշ քրիստոնէսայ տէրութիւնք՝ էին Պարսելունայի ու

Արակոնիայի կոմսութիւնները, Նաւարայի ու Գասդի-
լիայի թագաւորութիւնները: Ասոնք՝ Օմայեանց ջե-
ղին մերժուելէն ետեւ, դիւրութեամբ կրցան Արաբացի
իշխանաց երկիրներուն տիրել ու իրենց սահմաններն
ընդարձակել: Նաւարայի Մեծն Սանթէս թագաւորը
չուտ մը ան աստիճանի զօրացաւ, որ քրիստոնէից իշ-
խանութեան տակ եղող բոլոր Սպանիան, որն որ Պիւ-
րենեան լեռներէն՝ մինչեւ Տուերոյէն անդին կը տարա-
ծուէր, բաց ի Պարսկէանայի (Գաղալոնիայի) կոմսու-
թենէն, իր արքունական զաւազանին տակ միացուց:
Բայց Արաբացիները Սպանիայէն բոլորովին մերժելու
խորհուրդն՝ իր մահուամբ (1035) խափանեցաւ: Աս
թագաւորն իր երկիրները երեք որդւոցը բաժնեց. Նա-
ւարայի թագաւորութիւնն ընդունեցաւ Տ. Արսոխ
անդրանիկը, որուն սերունդը երկայն ժամանակ նոյն
դահին վրայ մնալէն ետեւ, արքունական պսակը խնա-
մութեամբ Գաղղիայի թագաւորական ջեղին անցաւ
(1275) եւ քիչ մ'ատեն Գաղղիայի թագին հետ մի-
ացած մնաց: Ետքէն դարձեալ բաժնուեցաւ (1316),
ու շատ տարի վերջը Շանբայնի կոմսերուն ջեղին Յով-
հաննէս Ալլորէզին անցաւ (1484), զորն որ Փերդի-
նանդ Ասթուրիէական մերժեց (1512): — Սանթէս
Մեծին երկրորդ որդին Տ. Փերդինանդ՝ Գասդիլիայի
թագաւոր եղաւ: Ասիկայ իր տակն առաւ Լեւոնի
թագաւորութիւնն ալ, որն որ մէյ մը բաժնուելէն
ետեւ՝ դարձեալ միացաւ: Իրմէ սերեցան նոյն տե-
րութեանց թագաւորները, որոնք յառաջ դացին մին-
չեւ Եղիսարեթ թագաւորին, որն որ Գասդիլիան իրբեւ
օժիտ տարաւ վերջիչեալ Փերդինանդ Ասթուրիէա-
կանին (1469). բայց անանկ որ երկուքն ալ իրենց
ժառանգական տերութիւնները զատ զատ կը կառա-
վարէին եւ իրարու իրողութեանց չէին խառնուեր:
— Սանթէսին երրորդ (բնական) որդին Ռամիրոյ՝ Արա-
կոնիայի թագաւորաց ջեղին նախահայր եղաւ, որն
որ ետքէն խնամութեամբ կամ ամուսնութեամբ Պար-

սերնայի կոմսութեան, Սարակոսայի, Վալենտիայի, Սարգինիայի, Սիկիլիայի ու Նեապոլոսի ալ տիրեց: Աս յեղէն է յիշեալ Փերդինանդ Ասթուրիկէական, որն որ Արարացոց Արանատայի վերջին թագաւորութիւնն ալ ջնջելով (1492), իր իշխանութիւնն աւելի եւս ընդարձակեց:

42. Խորհրդանոց կամ կարգաժողով: Միութեան արտօնութիւնք: Սպանիայի (եւ առանձինն Արակոնիայի) ազնուականաց ու քաղաքացոց վիճակք, ինչպէս նաեւ իրենց ու թագաւորին մէջ եղած յարաբերութիւնները, նման էին Գաղղիայի եւ Գերմանիայի մէջ եղածներուն (16—18, 25, 26): Արակոնիայի թագաւորը չէին կրնար ամենեւին ծանրակշիռ գործք մը գործել՝ առանց խորհրդանոցին կամ կարգաժողովին (Գորտեօն) հաւանութեան, որն որ աւագ նախարարաց ու խոնարհագոյն ազնուականաց, ինչպէս նաեւ եկեղեցականաց ու արուեստի եւ գաճառականութեամբ ծաղկեալ քաղաքաց երեսփոխաններէն կը կազմուէր: Նոյն խորհրդանոցը չէ թէ միայն օրէնք դնելու եւ հարկահասնութեանց հաւանութիւն տալու եւ շտաբու իրաւունք ունէր. հապա նաեւ Սարակոսայի խորհրդանոցին մէջ Միութեան ըսուած արտօնութիւնները ձեռք անցուց (1287), որոնց զօրութեամբ թագաւորը պարտաւորեալ էր իր խորհրդականներն ընտրելու ատեն՝ խորհրդանոցին կարծիքը հօտցընելու եւ հաւանութիւնն առնելու: Մինչեւ իրեն իրաւունք կը տրուէր, որ եթէ թագաւորն՝ առանց վերին դատաւորին եւ խորհրդանոցին վճռոյն՝ նոյն խորհրդանոցի անդամներէն մէկուն վրայ պատիժ մը դնելու ըլլայ, զինքը վար առնուն եւ ուրիշ թագաւոր ընտրեն: Աս վերջին արտօնութիւնները, որոնք թագաւորական իշխանութիւնը գրեթէ բոլորովին կ'աշընչացընէին, Պետրոս Գ. թագաւորին ատենը (1336—1387) ազնուականաց ապստամբութենէ մը ետքը՝ ջնջուեցան, եւ միայն հին սովորութեամբ եկած առաջին իրաւունքները մնացին: Բայց որպէս զի թագաւորը սահմանադրութեան դէմ բռնարարութիւն մը չընէ, վերին դատաւորին իշխանութիւնն աւելցուցին ու իրեն իրաւունք տուին թագաւորին ու ազնուականաց մէջ եղած կամ նոյն ազնուականաց իրարու հետ ունեցած վէճերը քննելու եւ վճիռ կտրելու: — Աս կարգադրութեանց նման էին նաեւ Սպանիայի ուրիշ տէրութեանց կարգադրութիւնները:

43. Թագաւորական իշխանութիւնը կը մեծնայ : Հետազօտութեան ատեան : Թէպէտ եւ վերոյիշեալ Թագաւորին եւ իր յաջորդներուն ատենները նախարարաց իշխանութիւնը բաւական չափաւորած էր, բայց իրենք սակաւին սաստիկ զօրաւոր էին. անանկ որ Թագաւորին հաւատարմութեան երդումը բրած ատեննին, յայտնապէս կը զրուցէին թէ Ամեն Ահեղին զատ զատ՝ քեզի հաւատար ենք, իսկ ամենքս Ահեղ՝ քեզմէ զօրաւոր : Զիրենք բուն խոնարհեցընողն եղաւ Փերդինանդ Աթոյիկեական : Ասիկայ անանկ միջոցներ բանեցուց եւ այնպիսի կարգադրութիւններ բրաւ, որոնցմով Թագաւորական իշխանութիւնը շատ բնորոշակութիւն ու հաստատութիւն ստացաւ : Նախ նախարարաց ձեռքէն դատաւորական իշխանութիւնն առաւ, եւ արդարութեան ատեաններուն մէջ իրաւազէտ անձինք դրաւ, որոնք շուտ ու անկողմնակալ դատաստան բնելով, շարագործաց սրտին մէջ վախ ձգեցին ու անմեղներուն՝ վստահութիւն տուին : Երկրին խաղաղութիւնը պահպանելու եւ առանձնական կռիւններն ու յափշտակութիւնները դադարեցընելու համար, արդէն քանի մը քաղաքներու մէջ Ս. Եղբայրութիւն՝ անուամբ կազմուած զնդերը նորէն կարգաւորեց ու բազմացուց : Բայց աս ամէն միջոցներէն աւելի իր նպատակին օգնեց Հետազօտութեան՝ ատեանը (1479), որուն սկզբնական նպատակն էր՝ արտաքրոստ քրիստոնէութեան դարձած եւ զաղտնի իրենց աղանդը պաշտող Հրէից ու Աբարացուց դէմ դատաստան բնել : Բայց քանի մը տարի ետքը իր աս բուն նպատակը մեկդի ձգուելով եւ սկզբնական ձեւը փոխուելով, բոլորովին քաղաքական ատեան մը դարձաւ, որուն ձեռքովը Թագաւորը կը ջանար զօրաւոր կզերն ու ամբարտաւան նախարարներն իր անմիջական իշխանութեան տակ զուպէլ : Ան ժամանակէն ետեւ աս ատեանը, որուն գահերեցն ու բոլոր դատաւորները Թագաւորը կ'անուանէր, արտաքոյ կարգի խիստ միջոցներ կը բանեցընէր, եւ հոգեւոր զէնքով ու հերետիկոսութեան պատրուակին տակ՝ ամէն կերպ անագործութեան գործքեր կը գործէր : Բայց, ինչպէս ինք իրմէ կը տեսնուի, աս խառնութեանց իրական նպատակն ու բուն պատճառը՝ կրօնը չէր, հապա կրօնը պարզապէս իբրեւ պատրուակ կը բանեցուէր, որուն դէմ եկեղեցին միշտ կը բողոքէր :

1 Hermandad.
2 Inquisition.

44. Բորգուկալ հաստատուող ազգերը: Պուրկունտիայի Հենրիկոս կոմսը: Փիւնիկեցիք՝ որոնք Քրիստոսէն 600 տարի յառաջ, եւ Կարբեղոնացիք՝ որոնք ան ատենէն 200 տարի ետքը, Բորգուկալի ծովեզրները զաղթականութիւններ հաստատեցին, նոյն տեղերը Լուսիտանացւոց (հին Բորգուկալցոց) պատերազմող ազգը գտան, որոնք Կարբեղոնի պարտութենէն ետեւ՝ Պիւրկունտիայի թերակղզւոյն ուրիշ ազգերուն հետ՝ Հաստացւոց իշխանութեան տակ մտան եւ այնպէս մնացին, մինչեւ որ Ալանք Արեւմտեան կայսրութեան կործանման ատեններն եկան հոն ալ հաստատուեցան: Աս վերջին ազգը Սուելներէն յաղթուեցաւ (440), որոնք Լուսիտանիայի մէջ զատ թագաւորութիւն մը հաստատեցին. բայց իրենք ալ ստիպեցան տեղի տալ Արեւմտեան Գթաց, որոնց Լէովիկիլա թագաւորը Լուսիտանիան իր թագաւորութեան հետ միացուց (585): Արաբացիք Սպանիայի մեծ մասին որ տիրեցին, Լուսիտանիա ալ իրենց իշխանութեան տակ առին (711). բայց Աստուրիայի լեռնակողմերը նոր թագաւորութիւն մը կանգնող քրիստոնեայք, քիչ մը ետքը իրենց իշխանութիւնը հոն ալ հաստատեցին (770): Աւերջապէս Փերդինանդ Ա. Լէոնի ու Գասգիլիայի թագաւորը տիրեց երկրին մեծ մասին (1058), որն որ նոյն ատենէն Բորգուկալ կոչուեցաւ՝ ան ժամանակներն երեւելի եղող Բորգոյ քաղաքէն: Փերդինանդին յաջորդներէն Ալփոնսոս թագաւորը մեծ յաջողութեամբ Արաբացւոց զէմ պատերազմած ատեն, իր դրօշներուն տակ կը պատերազմէր Պուրկունտիայի Հենրիկոս կոմսը: Թագաւորն անոր քաջութիւնը վարձատրելու համար՝ իր Թերեզիա աղջկան հետ կարգեց (1095), որուն օժիտ տուաւ Բորգուկալի նոյն ատեն իր ձեռքն եղած մասը: Անկէ ետեւ ալ Հենրիկոս եօթը ճակատներու մէջ Արաբացւոց յաղթելով, Ալփոնսոս հիւսիսային Բոր-

գուհայն իբրև ժառանգական կոմսութիւն եւ աւատ իրեն տուաւ :

45. Ալփոնսոս Ա. Թագաւոր: Պուրկունտեան անհարազատ ջեղ: Նաւազնացութիւնք: Հենրիկոսին որդին Ալփոնսոս Ա. Աշխարհակալը, իր հօրն Արաբացւոց զէմ ըրած յաղթութիւններն ու աշխարհակալութիւնները յառաջ տանելով, Ուրիբէի ճակատին մէջ զանոնք խորտակեց (1139), պատերազմի դաշտին վրայ իր բանակէն Թագաւոր հրատարակեցաւ եւ քիչ մը ետքը Ամսկոյի խորհրդանոցին մէջ պսակուեցաւ (1143): Ասիկայ իր տէրութեան սահմանադրութիւն տուաւ եւ ինք զինքն ու իր յաջորդները Քասդիլիայի աւատապետութենէն ազատ ու անկախ հրատարակեց. եւ սրպէս զի նոյն տէրութեան պահանջմանց զիբրաւ կարենայ զէմ դնել, իր Թագաւորութիւնը քահանայապետին աւատապետութեան տակ ձգեց (1144): Բայց ասով իր յաջորդաց ատենը, որոնք Ալիարուիայի ալ տիրած էին (1250), մեծ կռիւներ ելան, մինչև որ Քիմեսիոս Արդարը (1279 — 1325) Թագաւորական իշխանութիւնը հաստատեց: — Փերդինանդ Թագաւորին հետ Պուրկունտիայի յատուկ ջեղը սպառեցաւ (1383): Նոյն Թագաւորն իր միակ (բնական) Ալիկտորիա ազնիւր Քասդիլիայի Եովհաննէս Ա. Թագաւորին հետ կարգած եւ զինքը Բորդուկալի Թագին ժառանգ անուանած էր: Բայց իր բնական եղբայրը Տ. Եովհան, Բորդուկալոց Քասդիլիան իշխանութեան զէմ ունեցած ատելութիւնն ազէկ առիթ գտնելով, Թագաւորական աստիճանն իրեն սեպհականնեց եւ Ալեուպարոզոյի յաղթութեամբ նոյնին մէջ հաստատեցաւ (1385): Աս Եովհան (Ա.) Թագաւորը հիմնադիր եղաւ Պուրկունտեան անհարազատ ջեղին Թագաւորաց, որոնք երկու դար Բորդուկալի վրայ տիրեցին (1385 — 1580): Նոյն Թագաւորն իր երեք որդւոցը զինուորական քաջութեան առիթ տալու համար, Ափրիկէի Մաւրիտանացւոց զէմ նաւատորմիդ մը զինեց (1415), Սեւզա յամաք

ելու եւ նոյն քաղքին մեծ մզկիթին մէջ զիրենք ապեա
բրտա: Ան առնեն Քորդուկալցիք նաւազնացութիւն
ներու եւ երկիր գանելու մեծ քաղձանք ձգեցին. եւ ա
բանիս մէջ մեծ առաւելութիւն ու արդիւնք ունեցաւ
նոյն թագաւորին երրորդ սրդին Հենրիկոս Նաւազնաց
(† 1460): Յովհաննէս Բ. (1481—1495) ազնուա
կանաց տրուած արտօնութիւնները Էջօրա ժողովուած
խորհրդանոցին մէջ ետ առնելով, թագաւորական
իշխանութիւնը զօրացուց, եւ ապամառաւ ելած
ապստամբութիւնը մեծ խոտութեամբ զուպեց:

Թ . Ա Ի Ս Տ Ի Ը

46. Աւստրիայի սահմանակոմսութիւն: Սեր
պատմութեան սկսած ժամանակները Աւստրիայի տե
րութիւնը կազմող երկիրները, այս ինքն՝ Աւստրիայի
արքիդքսութիւնը, Ստիրիա, Գարինթիա ու Գրանիա,
Հունգարիայի մէկ մասին հետ՝ հին առնները Հռո
մայեցւոց տէրութեան մասերն էին: Արեւմտեան կայս
րութեան կործանման առնները, հիւսիսային կողմե
րէն գեպի հարաւ դիմող Գերմանական ցեղերը, ըստ
մեծի մասին առ երկիրներէն կ'անցնէին. բայց զլուս
բարբար Աւարք եղան՝ որ նոյն տեղերը Գանուրին երկու
կողմերը հաստատուեցան (587): Սակայն Փրանգներն
իրենց տէրութիւնը մինչեւ նոյն երկիրները հասցուցին,
որով Էնս գետը Գերմանիայի եւ Աւարաց երկիրներուն
սահման եղաւ: Կարօլոս Մեծ իր ընդարձակ տէրութեան
պաշտպանութեան համար զանազան սահմանական գաւ
առներ կազմեց, որոնք Ադրիական ծովէն մինչեւ Ալ
տեր կը սարածուէին (787): Աս սահմանական գաւ
առները կամ մարզերը՝ սահմանակոմսերու կամ մարզ
պաններու յանձնեց, որոնք Ը. գարուն վերջերը Աւա
րաց իշխանութիւնը նուաճած ու Գանուրի աջ կողմն
եզող երկիրներն ալ Փրանգաց տէրութեան հետ միա
ցուցած էին (791 — 799): Բայց նոյն ժամանակէն

կայրն ալ զանազան տղեր եւ գլխաւորաբար Հունդա-
բայիք սահմանները կ'անցնէին ու շարաշար աւարա-
ռութիւններ կ'ընէին: Աս բանս երկայն ատեն տեւ-
ելէն ետեւ, Սթոն Ա. կայսրը զիրենք զսպեց եւ ի-
րենց աւարառութեանց վերջ տուաւ (955): Ասանկով
Հունդարիայի սահմանակից եղող երկիրը՝ որն որ Ա-
րեւելեան մարզ (Աւստրիա) կը կոչուէր, ապահովցաւ
եւ իրեն սահմանակիցս եղաւ Պամպերկի ցեղէն Ան-
րոլա իշխանը (983):

47. Աւստրիա Հապսպուրկի տան ստացուած:
Ալանկէ ետեւ Աւստրիա զաւառը կամաց կամաց ընդ-
արձակեցաւ. մինչեւ ատեն մը նաեւ Պաւիերա անոր
հետ միացաւ, բայց քիչ մը կտրք նորէն բաժնուեցաւ
(1156): Նոյն ժամանակը Փրեզերիկոս Ա. կայսրն աս
զաւառը ժառանգական դքսութիւն բրաւ եւ զանազան
արտօնութիւններ տուաւ: Եւ թէպէտ նոյն արտօնու-
թեանց հրովարտակին մէջ Աւստրիա արդէն արքի-
դքսութիւն կը կոչուի. սակայն աս անունը շատ կտրք,
Մաքսիմիլիան Ա. կայսեր ատենը (28) հաղիւ սկսաւ
առհասարակ գործածուիլ: — Աւստրիայի արեւմտեան
եւ հարաւային արեւմտեան կողմերը կը տիրէին Շղայ-
երի կոմսերը, որոնք կամաց կամաց իրենց սահմաններն
ընդարձակելով, ցեղական անուննին՝ երկրին տուին,
որն որ սկսաւ Շղայերմարզ (Ստիրիայի մարզ) կոչուիլ:
Վերոյիշեալ Փրեզերիկոս Ա. կայսրը նոյն զաւառը
դքսութեան աստիճանի բարձրացուց (1180): Ասկից
քանի մը տարի կտրք երբ որ նոյն ցեղը սպառեաւ վրայ
էր, Օզգոզար վերջին կոմսն իր երկիրներն Աւստրի-
այի դքսերուն թողուց (1192): Կէս դար մը վերջը
Գրանիա զաւառին մէկ մասն ալ գննամբ նոյն դքսու-
թեան հետ միացաւ (1245): Աս ատենները Աւստրի-
այի Փրեզերիկոս Բ. գուքսն առանց ժառանգի մեռնե-
լով (1246), իր ցեղն սպառեցաւ, որով եւ անոր ստա-
ցուածները կայսեր անընդմիջական իշխանութեան տակ
ինկան: Եւ թէպէտ զանազան սահմանակից իշխաններ

եաեւէ եաեւ զանոնք անձանց սեպհականեցին . բայց երբ որ Հապսպուրկի Ռուսոլֆ կամը Գերմանիայի կայսր ընտրուեցաւ (1273), առ շինթութեանց վերջ բրաւ, Աւստրիական տան երկիրները՝ իբրև կայսերական ստացուածք՝ իր Ալպերդ որդւոյն տալով (1282), որն որ հօրը մահուընէն քանի մը տարի ետքը կայսր ընտրուեցաւ եւ Հապսպուրկի Աւստրիական կայսերական յեղին նախահայր եղաւ :

48. Հապսպուրկի տան մեծնալն ու ակնկալութիւնները : Թէպէտ եւ նոյն միջոցներուն պատահած Հելուեաիայի զանազան նահանգաց զաշնակցութեամբ (38) Հապսպուրկեան տան ստացուածները նուազեցան, բայց Գարինթիայի դքսերուն յեղին սպառելովը, արդէն շատոնց եղած զաշնագրութեան մը համեմատ՝ նոյն դքսութիւնն իրեն անցաւ (1335), որով երկիրները շատ ընդարձակեցան եւ ամբողջ մը կազմեցին : Աս բանս աւելի եւս յաջողեցաւ քիչ մը վերջը նաեւ Գիրոլի կամութեան (1363), Գրանիայի մնացած մասերուն (1364), Գրիևտի սահմաններուն (1380) եւ ուրիշ մանր մունր երկիրներուն, ըստ մասին ժառանգութեամբ, ըստ մասին գնմամբ եւ ըստ մասին բնակչաց ազատ կամքը, նոյն տան իշխանութեան տակ մաներովը : Նոյն ժամանակները Աւստրիայի տանը երկու գլխաւոր ճիւղերու բաժնուեցաւ, այս ինքն՝ բուն Աւստրիական տան եւ Ստիրիական տան . առ երկրորդն ալ՝ դարձեալ երկու մաս եղաւ, բայց քիչ մը վերջը Մաքսիմիլիան Ա. կայսեր ատենը նորէն միանալով (1496), միայն երկու գլխաւոր ճիւղերը մնացին : Աս կայսեր՝ Պուրկունտիայի դքսութեան Մարիամ ժառանգին հետ կարգուելովը (1477), նոյն դքսութեան Աւստրիայի տան ստացուած ըլլալը՝ արդէն յառաջագոյն տեսանք (36) : Գարձեալ առ կայսեր ատենը Կորիցիայի կամներուն յեղն ալ սպառելով (1500), յառաջագոյն եղած զաշնագրութիւններուն համեմատ՝ նոյն երկիրն ալ Աւստրիայի տան եղաւ : Այսպէսով Աւ-

ստրիայի տան սպազայ մեծութեան հիմը դրուած էր, մանաւանդ որ ուրիշ մեծ տէրութիւններու, ինչպէս Սպանիայի, Հունգարիայի ու Բոհեմիայի վրայ ալ ակնկալութիւններ ունէր, որոնք ետեւէ ետեւ կատարեցան: — Աս նկատմամբ պէտք է որ երկու վերջին թագաւորութեանց վրայ ալ հոս տեղեկութիւն տանք:

Թ . Հ Ո Ւ Ն Գ Ա Ր Ի Ե

49. Սկզբնաւորութիւն. թագաւորութիւն ըլլալը: Հունգարացիք, որոնք հասարակօրէն Հոնացիք յառաջ եկած կը կարծուին, Թ. դարուն վերջերք Ուրալեան լեռանց քովերէն՝ Արբատ անունով մէկու մը հրամանատարութեան տակ՝ դէպ ի հարաւ յառաջացան ու Գարբաղեան լեռանց եւ Սաւա գետին մէջի երկիրները հաստատուեցան: Ետքէն իրենց սահմանները մինչեւ Մարշ եւ դրեթէ մինչեւ Էնս տարածելով, Ստորին Գերմանիա եւ նոյն իսկ Գաղղիա ու Իտալիա աւարտութիւններ կ'ընէին: Այնչափ զօրացան որ Խրուադատանի, Գաղմասիայի ու Սերուիայի արեւմտեան կողմանց ալ տիրեցին: Իրենց մէջ եկան խառնուեցան գերմանացի գաղթականներ, գլխաւորաբար Սաքսոնիացիք, որոնք մանաւանդ Գրանսիլուանիայի մէջ հաստատուեցան: — Իրենց իշխաններէն Ս. Ստեփանոս (997—1038), որն որ նախ թագաւորի անուն առաւ, երկրին կարգաւորեալ օրէնքներ տուաւ, եւ արքունեաց պաշտօնատարներէն ու եպիսկոպոսներէն կազմուած խորհրդանոց մը դրաւ: Բայց յաջորդութեան հաստատուն օրէնք մը չըլլալով, տէրութիւնն աղէկ յառաջադիմութիւն չէր կրնար ընել: Ս. Ստեփանոսին քեռորդին Պետրոս, զորն որ նոյն թագաւորն իրեն յաջօրդ անուանած էր, հակառակ թագաւորէ մը մերժուեցաւ. եւ թէպէտ Հենրիկոս Գ. կայսրը զինքն իր իշխանութեան մէջ հաստատեց, բայց միանգամայն ստիպեց իր աւատապետութիւնն ընդունելու (1045):

50. Այլիւայլ ցեղերէ թագաւորք: Այսպէսով երկրին հանդարտութիւնը կը վերջովէր՝ ըստ մասին գահակալութեան կռիւներով, ըստ մասին ալ ազնուականաց հանած շփոթութիւններով, որոնք Անդրէաս Բ. թագաւորէն մեծամեծ արտօնութիւններ ընդունեցան (1222): Երկրին խիստ մեծ վնասներ հասցուցին Մանկուք ալ իրենց յարձակմամբը: Հազիւ թէ նոյն վշտերէն գլուխ վերջընելու սկսած էին Հունգարացիք, մէյ Ժ՝ ալ Անդրէաս Գ.ին մահուամբն Արքայ տի ցեղը սպառելով (1301), նոր շփոթութիւններ ելան, որոնք ութը տարւան շափ տեւելէն ետեւ, Անժուի տան Նէապոլոյ ճիւղէն (34, Բ.) երկու թագաւորք տիրեցին (1308—1382): Ասոնցմէ առաջինն էր Հունգարիայի Ստեփանոս Ե. թագաւորին Մարիամ աղջկան եւ Նէապոլոյ Կարոլոս Բ. թագաւորին թոռը՝ Կարոլոս Ռուպերդ († 1342). իսկ երկրորդը՝ վերջնոյն անդրանիկ որդին Լուդովիկոս Ա. Մեծ, որն որ Եւրոպայի նոյն ժամանակուան ամենէն երեւելի թագաւորն եղաւ: Ասոր մահուրնէ վերջը երկիրը հինգ տարի շփոթութիւններով տակնուվրայ բլլալէն ետեւ, գահն ելաւ իր փեսան Արկիդմունա իշխանը (38), Ալեքսանդր Բ. պարկեան ցեղէն (1387 — 1437), որուն ձեռքէն Օսմանեանք՝ Պուլկարիա, վնասուեցաւ ալ Գաղմատիա առին: Ասիէ ետքը եկաւ վերջնոյն փեսան, Ալեքսանդր Բ. կայսրը, Աւստրիական տնէն (1438 — 1439), եւ անոր որդին Լատիզլաւ: Բայց առ վերջինը գահ ելած ասնն նորածին աղայ Ժ՝ բլլալով, Լեհաստանի Ալաշիզլաւ Գ. թագաւորը քանի մը տարի հակաակ-թագաւոր եղաւ (1440 — 1444): Սակայն ինք Ալաշիզլաւի ճակատին մէջ սպանուելով եւ Լատիզլաւ անգլաակ մեռնելով (1457), իր տանը խնամապետութիւն ընող Հունիատի Հունգարացի իշխանին որդին Մատաթիա Գորուինոս թագաւորեց: Ասոր մահուրնէ ետեւ (1490) Հունգարիայի թագը՝ Բոհեմիայի Ալաշիզլաւ Բ. թագաւորին արուեցաւ (32):

ԺԱՆՅԱՆՆԵՐ

51. Սկիզբէն մինչև թագաւորութիւն ըլլալը: Ար պատմութի որ Բոհեմիա, որուն հետ կը սեպուի նաև Մորաւիա ու Սիլեզիա, Գերմանական ազգերու արչաւանաց առնէր՝ յաջորդաբար Թուրինգիացւոց ու Փրանկաց ձեռքն անցնելէն ետև, Ալաններու քանի մը ցեղեր Գարրաղեան լեռներէն ան կողմերն եկան եւ մինչև է. դար հոն բնակեցան: Աս ազգերուն մէջ ամենէն նշանաւորն էր Չեխերուն ազգը, որն որ գլխաւորաբար Բոհեմիայի ու Մորաւիայի մէջ հաստատուեցաւ: Նոյն երկու դաւառներն երկայն ժամանակ առանձին դքսերու տակ կենալէն եւ քիչ մ'առեն Բոհեմիա՝ Մորաւիայի դքսերուն իշխանութեան տակ մտնելէն ետև, աս վերջինք բոլորովին իրրեւ առաջնոյն դաւառ սկսաւ սեպուիլ (1029): Իսկ Սիլեզիա անկից երեք դար ետքը սկսաւ իրրեւ Բոհեմիայի դաւառ համարուիլ (1353): — Փրանկեան իշխանութեան Եւրոպայի մեծ մասին վրայ տարածուած առեն, գլխաւորաբար Կարոլոս Մեծին ժամանակը, Բոհեմիա ու Մորաւիա նոյն տերութեան վերին իշխանութեան տակ մտած էին, որով եւ ետքը իրրեւ Գերմանիայի կայսրութեան մաս կը համարուէին: Բոհեմիացիք շատ անգամ ջանացին իրենք զիրենք անկախ ընել, բայց չկրցան յաջողընել. մանաւանդ թէ Ս. Վենկեզլաւ՝ իրեն գէմ զօրօք եկող Հենրիկոս Ա.ին վերին իշխանութիւնն իրօք ընդունեցաւ, եւ ինքն ալ անկից իրրեւ իր երկիրներուն գուքսը ճանչցուեցաւ (928): Արագիզլաւ Բ. իր հաստատարիմ ծառայութեանց համար Հենրիկոս Գ. կայսրմէն իր անձին համար թագաւորական պատիւ ընդունեցաւ (1086) եւ Գրիբերի արքեպիսկոպոսէն պատկուեցաւ: Իսկ Փրեզերիկոս Ա. Վլաստիզլաւ Բ. դքսին թէ իրեն եւ թէ իր յաջորդաց համար թագաւորական աստիճան տուաւ (1158):

52. Չանագան տներէ թագաւորք: Մինչև

ԺԴ. դարուն սկիզբը Բոհեմիայի գ. քսերն ու թագաւորներն իրենց Բրեմիզլեան բաւաժ սեպհական ցեղէն էին. բայց նոյն ատեն Վենկեզլա Գ. թագաւորը սպանուելով (1306), առ ցեղը վերջացաւ: Ան ժամանակ Բոհեմիացիք իրենց թագաւոր ընտրեցին Աւստրիական Հապսպուրկի տնէն Ալպերդ Ա. կայսեր Ռուտովի որդին, եւ երբ որ անիկայ տարի մ'ետքը մեռաւ, Գարինթիայի շենրիկոս դուքսը: Բայց առ վերջնէն տժգոհ ըլլալով, քանի մը տարի վերջը Լիւքսեմպուրկեան տնէն շենրիկոս է. կայսեր Յովհաննէս որդին թագաւոր դրին (1311), որն որ Բրեմիզլեան ցեղին վերջին թագաւորին քրոջը հետ կարգուեցաւ, եւ Բոհեմիայի մէջ Լիւքսեմպուրկեան ցեղին նախահայրն եղաւ: Ասոր որդին ու յաջորդը Կարոլոս (Գ.) կայսր ըլլալով, Բոհեմիայի փառաւորութիւնը վերջին աստիճանի բարձրացուց, եւ Սիլեզիան՝ որն որ խել մը ատենէ վեր Լեհաստանի գաւառ եղած էր, դարձեալ Բոհեմիայի հետ միացուց (1353): Ասոր Վենկեզլա Գ. որդւոյն ատենն ելաւ Հուսեանց վրդովումը, որոնք թէ քաղաքական եւ թէ կրօնական շփոթութիւններով երկիրը տակնուվրայ բրին եւ հազիւ խել մը ատենն ետքը դադրեցան (1436), Վենկեզլաին Սիկիզմունտ եղբորը ժամանակը, որն որ միանգամայն Հունգարիայի թագաւոր եղած էր (50): Նոյն թագաւորով Լիւքսեմպուրկեանց տունը մարեցաւ (1437) եւ Հապսպուրկեան տնէն՝ Ալպերդ Բ. կայսրն ու անոր Լատիզլա որդին (50) Բոհեմիայի գահն ելան: Վերջինը մեռնելէն ետեւ, Գեորգ Բոտիւպրատ, որն որ մինչեւ նոյն ատեն կուսակալ էր, ինք զինքը կարգաժողովոյն ձեռքով թագաւոր ընտրել տուաւ (1458), եւ թէ Փրեզբերիկոս Գ. կայսեր ու Հունգարիայի Մատթիա թագաւորին, թէ Բոհեմիացւոց մէկ մասին կամօջը հակառակ, մինչեւ մահն իր իշխանութիւնը հաստատուն պահեց (1471): Անկէ ետեւ թագաւոր ընտրեցաւ Լեհաստանի Գաղիմիր Գ. թագաւորին որդին Վլատիզլա Բ., որն որ ետքէն Հունգարիայի թա-

գաւոր ալ եղաւ (50): Երկու թագաւորութեանց մէջ ալ իրեն յաջորդ ունեցաւ իր Լուդովիկոս Բ. որդին (1516):

Փ Բ . Օ Ս Մ Ը Ն Ե Ը Ն Տ Է Բ Ո Ի Թ Ի Ի Ն

53. Եւրոպական Տաճկաստանի յառաջուան վիճակը: Օսմանեան տէրութեան Եւրոպական գաւառները 500 տարւան շափ Հռոմէական կայսրութեան մաս ըլլալէն ետեւ, երբ որ նոյն պետութիւնն երկուքի բաժնուեցաւ, բոլոր ան գաւառներն Արեւելեան կամ Յունական կայսրութեան մէկ մասը կը կազմէին: Հռոմայեցոց Արեւմտեան կայսրութեան կործանումը՝ Արեւելեան կայսրութեան վրայ փնասակար հետեւութիւն մը չունենալէն զատ, անոր սահմաններուն աւելի ընդարձակուելուն առիթ տուաւ. որովհետեւ Արեւելեան կայսերք գլխաւորաբար Խաչակայի մէջ շատ երկիրներ ձեռք բերին: Բայց իրենց ներքին երկպառակութիւններովը, մանաւանդ Ալմենեան ցեղին գահակալութեան կռիւններովը, սաստիկ տկարանալով, եւ թէ ընդհանուր թէ մասնաւոր պարագաներ վրայ դալով, չէ թէ միայն նոյն վերագիր երկիրները կամաց կամաց կորսնցուցին, այլ եւ Խաչակրաց արշաւանքին աւանը բուն իրենց տէրութեան մէջ լատին կայսրութիւն մը կանգնեցաւ, թէպէտ խիստ կարճ տեւողութիւն ունեցաւ (1204—1261): Աս ամէն բաներէն աւելի իրենց փնաս հասցուցին Տաճկաց աշխարհակալութիւնները, որոնք Ասիայի ներքին կողմերէն յառաջ քալելով, հեռոջեակ անոնց քաղաքներն ու գաւառները ձեռուրներնէն կ'առնուին: Նոյն աշխարհակալութիւնք շատ ծանրակշիռ եղան ԺԳ. դարուն վերջը, երբ որ Սելճուզեան Սուլթաններուն ծառայութեան մէջ եղող Օսման քաջ հրամանատարը մինչեւ Պրուսա առաւ, ինք զինքը նոյն Սելճուզեան Սուլթաններուն իշխանութենէն անկախ ու ազատ հրատարակեց (1299)

ու Օսմանեան տէրութեան հիմը գրաւ, որն որ իր ժամանակը Գաղատիայէն ու Բիւթանիայէն մինչեւ Աղիւմպոս լեւան ստորադ կը տարածուէր:

54. Օսմանեան տէրութեան սաստիկ մեծնայը: Ըստ որդին ու յաջորդը Օրխան (\dagger 1360), որն որ Եէնիչէրիներուն գունդը հաստատեց, հօրն աշխարհակալութիւնները յառաջ տանելով, Նիկիոսիդիա ու Կէլիպոլու առաւ: Ըստնց յաջորդները Յունական կայսրութեան Եւրոպական մասին արեւելեան դիերուն տիրեցին. մինչեւ վերջապէս Սուլթան Մէհմէտ Բ. յարձակմամբ Կոստանդնուպոլիս մայրաքաղաքն տանելով (1453, Մայ. 29), եւ ան կռուոյն մէջ Կոստանդին Պալէոլոգ կայսրն ինք զինքն ու տէրութիւնը դիւցազնական քաջութեամբ պաշտպանած ատեն՝ մեռնելով, Արեւելեան կայսրութիւնը վերջացաւ եւ Օսմանեան տէրութիւնը Եւրոպայի մէջ բոլորովին հաստատեցաւ: Կոստանդնուպոլոց աշխարհակալութեան ետեւէն եկաւ Սերուիայի, Պոսնիայի, Ելզանիայի եւ Յունաստանի մէկ մասին բոլորովին նուաճիլը: Ընկէ ետեւ Սուլթաններն աչուրնին Ըսիա դարձուցին, ուր հետզհետէ մեծամեծ գաւառներ կ'աւելցրնէին իրենց ընդարձակ տէրութեան վրայ, որն որ նոյն ատենուան ամենէն զօրաւոր պետութիւնը կը համարուէր: Իրենց Եէնիչէրիներու գունդն ամենուն ահաւոր եղած էր. նոյնպէս կ'երեւար որ ծովական զօրութիւննին ալ խիստ պիտի մեծնայ:

ԺԳ. Գ Ը Ն Ի Ը. Թ Ո Ւ Ե Տ Ո Ւ Ն Ո Ր Ո Ւ Ե Գ Ի Ը

55. Ըս տէրութեանց վիճակը մինչեւ ԺԳ. դար: Ըս Սկանաինուեան կոչուած երեք տէրութեանց հին պատմութիւնը թանձր մթով պատած է, եւ հազիւ Թ. կամ Ժ. դարուն մէջ կը սկսի բիշ մը լուսաւորութիւն ստանալ, որ ատեն որ Նորմանք, Շուեպք եւ Գանիայիք, որոնք Գերմանական ցեղէ յառաջ եկած

ազգեր կամ ազգերու միաբանութիւնք են, քրիստոնէութեան դարձան: Թէպէտ կարօլոս Մեծին ատենը (812) Գանձիացւոց հետ դաշնադրութիւն մըն էր դրուած, որուն զօրութեամբ անոնց դէպ ի Գերմանիա ունեցած սահմանն՝ Այտեր կ'որոշուէր. բայց Հենրիկոս Ա. նոյն դաշնադրութիւնը բանի տեղ չդնելով, նաև Այտերի անդիի դին Շլեզուիկի մէջ սահմանակամութիւն մը հաստատեց (931): Գանուգ Մեծ Գանձիայի թագաւորը Անդղիա իր տակը նուաճեց (1017), Գանձիացւոց իշխանութիւնը բովանդակ Նորուեգիայի վրայ տարածեց, եւ Շուեարի մէկ մասն ալ իր իշխանութեան տակ առաւ: Նոյն թագաւորը՝ Գոնրատ Բ. կայսեր հետ բրած իրաւաստութեան դաշինքով՝ Շլեզուիկի սահմանակամութիւնը վերցուց (1028): Բայց իր աշխարհակալութիւններն երկայն տևողութիւն չունեցան: Իր մահունէ (1036) քանի մը տարի վերջը (1042) Գանձիացիք Անդղիայէն մերժուեցան (8): Իսկ Նորուեգիայիք չէ թէ միայն իր կենդանութեան ատեն մերժեցին անոր Սուէն որդին (1035), զորն որ իրենց թագաւոր դրած էր, որով եւ Գանձիացւոց իշխանութեան տակէն ելան, հապա նաև իրենց Մագնոս թագաւորը Գանձիայի ալ տիրեց. սակայն մէկ քանի տարի ետքը, նոյն թագաւորին մեռնելէն վերջը (1047), Գանձիացիք նորէն սկսան իրենց սեպհական թագաւորներն ունենալ: Գանձիացիք ետեւէ ետեւ Գերմանիայի Արեւելեան ծովու գաւառներն ալ, Հորդայնէն մինչև Լիւսնիա, իրենց իշխանութեան տակ անցուցին (1157—1241). բայց ետքը նորէն կորսընցուցին:

56. Գալմարեան Միութիւն: Մարգարիտա, Գանձիայի վալտեմար թագաւորին ազնիկն ու Նորուեգիայի Հագոյ թագաւորին ամուսինը, որն որ Հիւսիսային Շամիրամ կը կոչուի, աս երկու թագաւորութիւններն իր անձին վրայ միացուց (1387): Նոյն ատենները Շուեար ալ իրենց թագաւորին վրայ աժգո՛հ ըլլալով,

նաեւ իրենց թագաւորական իշխանութիւնն աւ թագաւորացն տաին, որն որ նոյն երկրին թագաւորը յազ-
 թելով ու զերի բռնելով, բոլոր Հուեաներէն ընդու-
 նուեցաւ (1394) : Մարգարիտա ուղելով աւ երեք
 թագաւորութիւնները միշտ միացեալ պահել, ամե-
 նուն կարգաժողովները Վալմար ժողովեց, եւ իր քրո-
 ջը Էրիզ թագ (որն որ Բահեմիայի Վարդիգլաւ զբսին
 ու Մերլենպուրկի Մարիամ իշխանուհիցն՝ Մարգարի-
 տայի Ինկէպուրկէ քրոջը աղջկան՝ որդին էր) իր յաջորդն
 ընտրել ու պատկել տուաւ (1397) : Աս Վալմարեան
 միութիւնը, որով կ'որոշուէր թէ երեք տէրութիւնք
 իրենց առանձին օրէնքներն ու սահմանադրութիւնները
 պահելով՝ միայն մէկ թագաւորի տակ ըլլան եւ օտար
 թշնամեաց զէմ փոփոխակի իրարու օգնեն, որչափ որ
 խեղճան զօրաւոր կ'երեւար ալ նէ, խիստ տկար բան
 էր : Եւ արդէն շուրջ յիսուն տարի ետքը, Քրիստափոր
 Գ. թագաւորին անզաւակ մեռնելովը (1448), Հուեաք
 նոյն միութենէն բաժնուեցան եւ սկսան առանձին
 իշխաններ դնել, որոնք թէպէտ թագաւորական պա-
 տիւ ունէին, բայց թագաւորի անուն չէին կրեր : Իսկ
 Գանիայիք իրենց թագաւորական պատիւն՝ Օլտեմ-
 պուրկի կամներուն ցեղէն Քրիստիան իշխանին տաին,
 որն որ մօր կողմէն իրենց թագաւորներուն ազգակա-
 նութենէն էր, եւ Գանիայի յաջորդ թագաւորներուն
 նախահայրն եղաւ : Ասիկայ կրցաւ Նորուեգիայի Հեա
 Միութիւնը նորոգել (1450) . միանգամայն քանի մը
 տարի նաեւ Հուեաի ալ թագաւոր եղաւ (1457—
 1464), բայց աւ վերջնոյն մէջ իր իշխանութիւնը
 հաստատուն չմնաց : Մտադրութեան արժանի է որ
 նոյն թագաւորին ատենը Հոլլոգայն ու Շլեզուիկ դաւ-
 առները ժառանգութեամբ Գանիայի թագին Հեա
 միացան, որով եւ նոյն տէրութեան թագաւորներն՝
 իրրեւ ան դաւառներուն զքսերը՝ Գերմանիայի աւա-
 դանոյն կարգը սկսան սեպուիլ :

ԹԳ. Լ Ե Հ Ա Ս Տ Ա Ն

57. Բխաողեանց ցեղին տակ: Չէ թէ միայն Հին ժամանակները, հապա նաեւ քրիստոնէութեան առաջին դարերը՝ Լեհաստանի վրայ խիստ քիչ ծանօթութիւն կար, եւ մինչեւ դրեթէ Թ. դար նոյն տեղւոյն բնակչաց վրայ եղած տեղեկութիւնք առատակէնքով խառն են: Հասարակօրէն անանկ կը կարծուի որ Հինուհուան Լեհերն բոտ մեծի մասին Սարմատացիներէն յառաջ եկած բլլան: Աւերոյիչեալ առատակէնքառն տեղեկութեանց նայելով, Ը. դարուն մէջ 12 իշխանք (Աշխոտք, գուքոք) Լեհաստանի մէջ կը տիրէին, որոնց իշխանութեան վերջ տուաւ Գրադ իշխանը, եւ Գրադաւ քաղաքը շինելով՝ իր մայրաքաղաքն ըրաւ: Գարձեալ նոյն առատակէնքառն պատմութեանց ըսածին համեմատ, քիչ մը ետքը (840) Բխաող անունով երկրագործ մը, որն որ մեծ սովու մը ժամանակ բնակչաց ուտելիք հոգացած էր, ժողովրդէն իշխան ընտրուեցաւ, եւ նախահայր եղաւ Բխաողեանց ցեղին, որն որ մինչեւ ԹԳ. դար Լեհաստանի վրայ կը տիրէր: Աս ցեղէն Միէշիզլաւ Ա. իշխանը ստիպեցաւ իր երկիրները Գերմանիայի կայսերաց առատակէնքութեան տակ ձգել (965): Ասոր որդին Պոլեզլաւ Ա. Ոթան Գ. կայսրմէ թագաւոր պսակեցաւ (1000): Պոլեզլաւ Գ. իր տէրութիւնը շորս մասի բաժնեց (1138), որմէ ներքին երկպառակութիւններ ու կռիւներ ծագելով, երկիրը խիստ տկարացաւ, մինչեւ որ վերջապէս Ալաստիզլաւ Լոքիեդէք երկու մասերը, այս ինքն՝ մեծ եւ փոքր Լեհաստան, միացուց (1320), առ չիթութեանց վերջ տուաւ եւ Գրադաւի մէջ թագաւոր պսակեցաւ: Իրմէ ետքը իր ամէն յաջորդները թագաւոր եղան: Բայց իր որդին Գազիմիր Գ. զաւակ շունենալով, մեռնելէն ետքը (1370) իր քրոջը որդին Հունգարիայի Լուդովիկոս Մեծ թագաւորն (50) իրեն յաջորդեց:

58. Ազնուականք: Եակելլոնեանք: Այսպէսով

Բիառդեան ջեղը Լեհաստանի վրայ թագաւորելէն դա-
 զրեցաւ . բայց որովհետեւ նոյն ջեղին կողմնական
 ծիւղերէն՝ ուրիշ իշխանք կային, ասանք սկսան ետեւէ
 բլալ թագաւորական իշխանութիւնն իրենց առնելու .
 անոր համար Լուդովիկոս հազիւ կրցաւ երկրին ազնուա-
 կանաց օգնութեամբն իր իշխանութեան մէջ հաստա-
 տուն կենալ : Սակայն անոնք ալ աս իրենց բրած ծա-
 սայութեան փոխարէն՝ շատ մեծ արտօնութիւններ եւ
 իրաւունքներ ձեռք բերին, որոնցմէ յառաջ եկաւ Լե-
 հաստանի ազազայ ազնուապետական սահմանադրու-
 թիւնը, մինչեւ որ վերջապէս կատարեալ ընտրական
 միապետութեան դարձաւ : Լուդովիկոս Մեծ ուղեւոր
 իրեն յաջորդ ունենալ իր երիցագոյն Մարիամ աղջկան
 ամուսինը՝ Լիւքսենպուրկեան Արկիդմունա իշխանը (50),
 խորհրդանոցին մէջ նոյն ազնուականաց ձեռքովն անոր
 ընտրութիւնը հաստատել տուաւ (1382) : Բայց ինք
 նոյն տարին մեռնելով, Լեհք իրենց որոշման ու խոստ-
 ման հակառակ, ուղեցին թագաւորութիւնը Լուդովի-
 կոսին կրտսերագոյն Հետուիկ աղջկան աւալ, եւ զինքը
 ստիպեցին Լիթուանիայի Եակելլոյ (Ալաւիզլաւ) մեծ
 դքսին հետ կարգուելու, որն որ խոստացած էր իր եր-
 կիրը Լեհաստանի հետ միացընել : Իրոք ալ նոյն մեծ
 դուքսը Գրագաւի մէջ թագաւոր պսակեցաւ (1386) :
 Բայց ան ատեն Լիթուանիա Լեհաստանի հետ չմիա-
 ջաւ . հապա միայն Լեհաց թագաւորներուն վերին իշ-
 խանութեան տակ մտաւ, եւ Լեհաստանի թագաւո-
 րական ջեղին կրտսերագոյն իշխաններէն իր սեւգական
 դքսերը կ'ունենար : Եակելլոյի (Եակելլունեանց) ջեղը
 Լեհաստանի դահին վրայ երկայն ատեն մնաց . բայց յա-
 ջորդութիւնը՝ միայն ժառանգական չէր, հապա միշտ
 պէտք էր որ խորհրդանոցին ընտրութեամբը հաստա-
 տուէր : Ամէն ընտրութեան ժամանակ ալ ազնուականք
 աւելի մեծ արտօնութիւններ ձեռք կը բերէին :

ՓԵՒՈՒՍՆՍՏՆ

59. Սկզբնաւորութիւն: Ա՞ն մեծատարած պետութեան երկիրներուն մեծ մասը մինչև Զ. դարուն մէջ Գութք, Ալանք, Աւարք եւ Հոնք արշաւելով, անոր Ալաւեան ցեղերէ եղող հին բնակիչները դէպ ի արեւմուտք եւ հիւսիս մղեցին, ու որ անոնք Ֆինլանտացիներուն եւ Էսթերուն պատահեցան: Նոյն Ալաւեան ցեղերը Ապքսէլ ու Տնիերեր գետերուն քովերը Նովկորոս ու Քիււ քաղաքները շինեցին: Աջան երեք դարու շափ ժամանակ անցնելէն ետեւ, Արեւելեան ծովուն քովէն Արեւկացիք ան տեղերն եկան, եւ իրենց առաջնորդներն եղող Ռիւրիգ, Սինէոս ու Թրուվոր երեք եղբարց իշխանութեան տակ Նովկորոսի մտ երեք պզտիկ տէրութիւն կանգնեցին (Տ60): Ռիւրիգ իր եղբարցը մեռնելէն ետեւ, նոյն երեք տէրութիւնները մէկտեղ միացուց եւ սյապէս Ռուսաստանի պետութեան հիմք դրաւ: Քիչ մը վերջը Տնիերերի քովերը բնակող Ալաններն իրենց թշնամիներէն նեղուելով, Ռիւրիգին զիմեցին եւ իր ցեղէն իշխան մը խնդրեցին: Անիկայ իրենց խաւրեց իր Ասիոյւ խորթ որդին, որն որ զնայ անոնց թշնամիները յաղթեց եւ Քիււի մէջ՝ Նովկորոսի տէրութեան վերին իշխանութեան տակ նոր տէրութիւն մը հաստատեց: Բայց քիչ մը ետքը երբ որ Քիււցիք Նովկորոսի վերին իշխանութիւնը ճանշնալ շուղեցին, վերջնոյն Օլէկ իշխանն եկաւ, զիրենք զուգեց եւ իր տէրութեան հետ բոլորովն միացրնելէն ետեւ, Քիււ իր աթոռանիստ քաղաքն ու բոլոր տէրութեան մայրաքաղաքն դրաւ:

60. Ռուսաստան կը բաժնուի: Մոնկոլք: Իւան Ա. Ալասիլիիչ: Նոյն ատենէն Ռուսաստանի իշխանութիւնը սաստիկ շուտ ընդարձակեցաւ եւ շատ ազգեր իրեն հպատակեցուց: Ռուսք Սեւ ծովին եզրները կարգաւորեալ վաճառականութիւն կ'ընէին, նոր քաղաքներ կը շինէին, հին քաղաքները կը նորոգէին ու կը

չէնցընէին եւ ետեւէ ետեւ կարգաւորութիւններ ու օրէնքներ կը զնէին: Բայց Վլաթիմիր Մեծին մահուամբն (1015) սա յառաջագիտութիւնը դադարեցաւ, որովհետեւ տէրութիւնն անոր 12 որդւոցը մէջ բաժնուելով՝ սաստիկ տկարացաւ: Աս բաժանումէն ծագեցաւ մեծ իշխանութիւն մը, (զորն որ Վլաթիմիրի որդւոց մէջէն՝ Նովկորոտի տիրոջ Եարոզլաւ իրեն առաւ) եւ զանազան իշխանութիւններ, որոնց իշխանները Չար կ'անուանէին: Վրան դար մ'անցնելէն ետեւ՝ Քիւելցիք մեծ իշխան ընտրեցին զՎլաթիմիր Բ. որն որ իշխանական տան մէկ հետաւոր ծիւղէն սերած էր (1114): Ասիկայ ինք զինքը՝ Յունաց Ալէքսիոս Կոմնենոս կայսրմէ իբրեւ Չար ճանչնալ տուաւ եւ Ռուսաստանի իշխանաց մէջէն առաջին անգամ թագաւորն էլաւ: Իր Եուրիէ որդին Մոսկաւ քաղաքը շինեց: Ռուսաստանի բաժանմանէն ծագած շարեաց վրաց աւելցան նաեւ արտաքին շարիքներ ալ, որոնց առջեւը չէին կրնար դիւրաւ առնուլ իրենց մէջ միաբան չըլալով: Մոնկոլները դէպ իրենց երկիրներն արշաւելով, մեծ վնասներ հասցընելէն ետեւ, 200 տարիէն աւելի իրենց իշխանութեան տակ պահեցին (1240—1462): Բայց նոյն ստեղծներն ալ Ռուսք անգործ չէին կենար: Մոնկոլներու տէրութեան սկիզբները Նովկորոտի Աղէքսանդր մեծ իշխանը Շուեաները Նելայի քով յաղթեց (1240), որով եւ Աղէքսանդր Նելսքի (Նելայեան) անուանեցաւ: Իսկ Նովկորոտ քաղաքը Գերմանիայի Հանսայեան դաշնակցութեան պաշտպանութեան տակ վաճառականութեան ազատ քաղաք մ'էլաւ: Ալերշապէս Իւան Ա. Վասիլեւիչ Մոսկաւի Չարը (1462—1505), որն որ բոլոր Ռուսաստան իր իշխանութեան տակ միաբանած էր, իր տէրութիւնը Մոնկոլներուն ձեռքէն ազատեց եւ միանգամայն Նովկորոտի ալ տիրեց:

Ա. Ծ Ր Զ Ա Ն

Փ Ե . Գ Ը Ր Ո Ի Ն Վ Ե Ր Զ Է Ն

Մ Ա Ն Չ Ե Ա

ՀՈՒԳՈՎԻԿՈՍ ՓԳ.ԻՆ ՓԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն Տ Է Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ց

Ը Ն Պ Հ Ա Ն Ր Ա Պ Է Ս

Ա Ռ Ա Ջ Ի Ն Թ Ր Ջ Ա Ն

Փ Ե . Գ Լ Ր Ո Ւ Ն Վ Ե Ր Ջ Է Ն Մ Ի Ն Ջ Ե Ի Ա Ռ Ի Գ Ո Վ Ի Կ Ո Ս Փ Գ . Ի Ն
Փ Լ Մ Ա Ն Ը Կ Ն Ե Ր Ը

(1492 — 1661)

1. Ըս շրջանին յատուկ կերպարանքն ու հոգին :
 ԼՈՒԱՋԻԿԱՅ շրջանին իր յատուկ կերպարանքը տուողն
 եղաւ անոր սկիզբները պատահած Նորոգութիւնը կամ
 Նորաղանդութիւնը . որովհետեւ կրօնական վէճերը
 գլխաւորաբար քաղաքական նպատակներու գործա-
 ծուելով եւ կամ նոյն նպատակներուն հասնելու հա-
 մար իրրեւ պատրուակ ծառայելով, կրօնական կռի-
 ւերը՝ շուտ մը քաղաքական կռիւ ալ եղան, եւ կրօ-
 նական կողմնակցութիւնք՝ նաեւ քաղաքական կուսա-
 կցութեանց ալ գարձան : Եւ թէպէտ աս քաղաքական
 ու կրօնական իրողութիւնք իրարու հետ միշտ մի եւ
 նոյն անձուկ կապակցութիւնը չունէին, ի վերայ այսր
 ամենայնի ժամանակին գրեթէ բոլոր մեծամեծ ձեռն-
 արկութիւնները նոյն կապակցութեանն յառաջ կու
 գային, ուստի եւ կրօնական վէճերը կարճեա թէ ամէն
 ընդհանուր գործողութեանց սղին էին : Աօրկայ զարմա-
 նալի բան մը չ'երեւար, եթէ միտ գրուի նոյն իսկ նորա-
 զանդութեան սկզբունքներուն, որոնք Միջին դարու մէջ
 բուսնող աղանդներուն սկզբունքէն բոլորովին տարբեր
 էին : Հին աղանդները զուտ կրօնական եւ հասարակո-

բէն վերացեալ նիւթերու վրայ մուտքուծիւններ կը բու-
 վանդակէին. իսկ նորազանգութիւնն անոնց վրայ բա-
 րոյական եւ միանդամայն քաղաքական վտանգաւոր
 սկզբունք կ'աւելցընէր: Ժամանակին վիճակն ալ շատ
 յարմար էր ասանկ սկզբանց տարածուելուն. գրեթէ
 ամէն դի անկախութեան ու շափազանց ազատականու-
 թեան հոգի մը սկսած էր ճարակիլ. ամէն աստիճանի
 մարդկան մէջ իրենց իշխանութիւնը մեծցընելու, իրենց
 զօրութիւնը զուարթ կապերը խզելու ջանք մը կը տիրէր:
 Ասանկով փոքր առիթ մ'ալ բաւական էր քաղաքական
 շփոթութիւն մ'ելլելու. եւ երբ որ նորազանգութիւնը
 բուսաւ, որն որ ըստ ինքեան ալ անկախութեան ու ան-
 կարգ ազատութեան զազափարներով խառն էր եւ յե-
 զափոխական սկզբանց վրայ հիմնուած, պարզապէս քա-
 ղաքականօրէն ըլլալէքը՝ կրօնականին հետ միացեալ
 գուրս ելաւ եւ երկուքը մէկտեղ յառաջ գացին:

2. Վիխաւորարար գործունէութիւն ունեցող
 տէրութիւնք: Ալ երբ զըցուածներէն արդէն ինք իրմէ
 կը յայտնուի որ աս շրջանին մէջ համաշխարհական
 պատմութեան տեսարանին վրայ երեւցող տէրութիւնք
 գլխաւորարար անոնք պէտք էին ըլլալ, որոնց մէջ նոյն
 նորազանգութիւնը բուսաւ կամ տարածեցաւ: Բացց
 այս ամենայն՝ նորազանգութեան ծագելէն ու քաղա-
 քական կերպարանք առնելէն ետեւ էր (1521). սա-
 կայն, ինչպէս վարը պիտի տեսնենք (3), անկից յառաջ
 եւ անոր առաջին ժամանակներն անկէ անկախ ուրիշ
 նշանաւոր դէպքեր ալ պատահեցան, որոնց մէջ ըստ
 մասին ուրիշ տէրութիւնք ալ միջամուխ էին: Արդ ա-
 սանկով աս շրջանին մէջ հարաւային պատմութեան
 էջերը լեցընող տէրութիւնք մասնաւոր կերպով անոնք
 պիտի ըլլան, որոնց մէջ վերոյիշեալ դէպքերը գիպե-
 ցան եւ կամ որոնք եղանակաւ մը նոյներուն մէջ մա-
 անակցութիւն ունեցան, այս ինքն են՝ Սպանիա, Աւս-
 տրիա, Գաղղիա, Անգղիա, Գերմանիա, Հռոմ ու ըստ
 մասին Օսմանեան տէրութիւն, որոնց վրայ եկաւ ետքէն

Հոլանտա (Ստորին նահանգները) : Արիստոկրատիայի մաս-
 գրութիւն մ'ալ բաւական է տեսնելու համար թէ բոլոր
 ան ժամանակները քաղաքական յարաբերութիւններն
 ասոնց ձեռքովը կ'որոշուէին : Անոր համար մարդ կրնայ
 զասոնք գործունեայ կամ ներգործական տէրութիւն
 անուանել՝ մնացեալ տէրութեանց նայելով, որոնք ան-
 գործունեայ էին կամ քիչ մը ետքը այնպէս եղան :
 Աս վերջիններուն մէջ յիշատակուելու արժանի են
 Բորդուկալ, որն որ միայն նոր երկիրներ դանելու եւ
 աշխարհակալութիւններ ընելու զբաղած էր, եւ Հե-
 լուեախա, որն որ խոզրան իր վարձկանազօրովն ահա որ
 եղած էր, բայց քիչ մը ետքը զրեթէ բոլորովին ան-
 գործութեան մէջ ինկաւ : Նաեւ Անեաթիկի տէրու-
 թիւնն ասոնց կարգը կրնայ համարուիլ, որն որ վաճա-
 ռականութեան հարուստ տան մը կը նմանէր, որ հան-
 զըստեամբ ապրելու համար՝ իր գործքերուն մեծ մասը
 կը թողու. թէեւ խոզրան խել մը ժամանակ՝ բաւա-
 կան գործունէութիւն, եւ ընդհանրին նկատմամբ մեծ
 ազդեցութիւն ունեցաւ :

3. Բաժանում : Աս առաջին շրջանը երեք Միջոց
 ժամանակի կը բաժնուի, իր մէջն ետեւէ ետեւ պա-
 տահած երեք գլխաւոր դիպուածներով, որոնք են .

Ա. Իտալիայի համար եղած կռիւններն ու Գաղղիայի
 եւ Սպանիայի ստիսութիւնը (1492—1555) .

Բ. Ստորին նահանգաց (Հոլանտայի) անկախու-
 թիւնը (1555—1618) .

Գ. Գերմանիայի երեսնամեայ պատերազմը (1618—
 1661) :

Բայց որչափ որ ալ աս դէպքերն Եւրոպայի մեծ մա-
 սը զբաղեցուցած եւ ընդհանուր քաղաքականութեան
 համար շատ մեծ հետեւութիւններ ունեցած ըլլան .
 ի վերայ այս ամենայնի Եւրոպական տէրութեանց մէջ
 նոյն առնները պատահած բոլոր նշանաւոր դէպքերն
 ասոնց հետ կապակցութեան մէջ չիկրնար խոթուիլ,
 անոր համար ալ առանձին նկատուելու են : Աս վեր-

ջիններուն ամենէն ծանրակշիռները, որոնք միանգամայն տիեզերական պատմութեան մէջ դարազրուի կը կացուցանեն, հետեւեալներն են: Առաջին ժամանակի միջոցին մէջերը պատահող Նորադարձութիւնը, որն որ՝ ինչպէս բիւր՝ առ շրջանին իր յատուկ կերպարանքը տուաւ եւ որուն պատմութիւնն ինք իրմէ զատ Հատուած մը պիտի կացուցանէ. եւ նոյն առաջին ժամանակի միջոցին մէջ ինկող՝ Գաղթապետութեանց սկզբնաւորութիւնը, որոնց վրայ նոյնպէս առանձին Հատուածի մը մէջ խօսելէն ետեւ, իրենց պատմութեան շարունակութիւնը իւրաքանչիւր միջոցին վերջը առանձին Հատուածով՝ իրրեւ զատ ամբողջ մը՝ յառաջ պիտի տանին:

Ասոնք՝ հարաւային տէրութեանց նկատմամբ. իսկ հիւսիսային տէրութեանց պատմութիւնը, իսկզբան նշանակածնուս պէս (Նախաշ. 6), առանձին պիտ'որ աւանդենք՝ հարաւային տէրութեանց պատմութեանէն ետքը: Եւ թէպէտ նոյն հիւսիսային տէրութիւններէն ռմանց (գլխաւորաբար Սկանաինաւեան տէրութեանց) մէջ առ շրջանին սկիզբները բաւական նշանաւոր դիպուածներ պատահած են, բայց որովհետեւ անոնց հետեւութիւններն աւելի ետքէն երեւցած են եւ առաւելապէս երկրորդ ու երրորդ ժամանակի միջոցին դէպքերովը կ'ամբողջանան, եւ միանգամայն նոյն կողմերուն ուրիշ երկու գլխաւոր տէրութեանց (Ահաստանի ու Ռուսաստանի) ան ատենուան պատմութիւնը՝ ընդհանրին նկատմամբ՝ գրեթէ ամենեւին մտադրութեան արժանի դէպք մը չիմաստակարարեր, անոր համար հիւսիսային տէրութեանց վրայ երկրորդ ժամանակի միջոցին մէջ կը սկսինք խօսիլ, առաջին ժամանակի միջոցին դէպքերը՝ երկրորդին դէպքերուն հետ հիստորի:

Ը Թ Ը Ջ Ի Ն Մ Ի Ջ Ո Յ Ժ Ը Մ Ը Ն Ը Կ Ի

Ը. ԻՏԵԼԻՒԸԹԻ ՀԸՄԸՐ ԵՂԸԾ ԿՈՒՒՆԵՐՆ ՈՒ ԳԸՂՂԻՒԸԹԻ
ԵՒ ՍՊԸՆՒԸԹԻ ՈՍՈՒՈՒԹԻՒՆԸ

(1492—1555)

(Հ Ը Ր Ը Ա Ր Ե Ն Ն Տ Է Ր Ո Ւ Թ Ի Ա Ն Ք)

4. Իտալիայի վիճակը: Վրեթէ դարէ մ' աւելի էր, որ Իտալիա, թէ քաղաքականութեան նկատմամբ եւ թէ արուեստից կողմանէ, իբրև զատ աշխարհք մը կը կացուցանէր: Նոյն երկիրն իր պայծառութեամբ, հարստութեամբ, դիտութեանց ու արուեստից ծաղկեալ վիճակովը, Եւրոպայի շատ վեհապետաց մտադրութիւնն իրեն դարձուցած էր, որոնք ան գեղեցիկ կողմերը ձեռնընթին անցընելու ետեւէ կ'իյնային: Ուստի կրնայ ըսուիլ որ Իտալիա նոյն ատենուան ընդհանուր քաղաքականութեան՝ և թէ ոչ միակ, գոնէ գրիտաւոր կենդրոնն ու նպատակն էր: Բայց թէ որ մէկ կողմանէ երկրին ներքին վիճակը՝ աշխարհակալներու բաղձանքը գրգռելու շատ յարմար էր, նոյնպէս մէկալ կողմանէ ալ մեծ յարմարութիւն ունէր՝ մէյ մը սկսած վէճերն ու կռիւները շարունակել տալու: Ասանկ պզտիկ պզտիկ մասերու կամ անկախ տէրութիւններու բաժնուած երկրի մը մէջ ներքին երկպառակութիւններու նիւթ շէր կրնար պահուիլ. եւ աս երկպառակութիւնք պէտք էր որ օտարաց առիթ տային՝ ներքին իրողութեանց մէջ խառնուելու, մէյ մ'որ կերպով մը նոյն միջամտութեան սկիզբ եղած էր: Իտալիայի պլեւայլ տէրութիւններն իրենց անկախութիւնը վայելելով, անանկ ամբողջ մը կամ գումարութիւն մը կը կազմէին, որուն մէջ՝ քաղաքական հաւասարակշռութիւնը հաստատուն պահելու ջանքը՝ բարակ քաղաքականութիւն մը յառաջ բերած էր: Բայց աս քաղաքականութիւնը, մանաւանդ վերջին ժամանակները, երթալով աւելի

չաճասիրութեան ու խարդախութեան կը փոխուէր, թէ իրարու եւ թէ արտաքին տէրութեանց նկատմամբ: Աս ասանկ բլլալով, նոյն երկրին իրազութիւններն ու կռիւները, ընդհանուր քաղաքականութեան կողմանէ նկատեալ, որչափ որ ըստ ինքեան աննշանական բաներ ալ երեւոյին, միշտ խիստ ծանրակշիռ էին եւ մեծ հետեւութիւններ կ'ունենային, չէ թէ միայն իր մէջի տէրութիւններուն, հասցա նաեւ արտաքին տէրութիւններուն համար: Երեւելի մատենագրի մը խօսքովն ըսելով, Աս պզտիկ թիակներն էին, որ նոյն ատեն ամէն բանէն աւելի՝ Եւրոպայի քաղաքականութեան նաւը կը շարժէին: Իտալիայի իրողութիւններն անով աւելի ծանրակշիռութիւն ստացան, որ Վաղղիայի եւ Սպանիայի ստխութեան գլխաւոր պատճառն եղան, առանձինն Փրանկիսկոս Ա.ին՝ առաջնոյն դահին վրայ, իսկ Արարոյս Ա.ին (Ե.ին)՝ երկրորդին դահին վրայ ելլելէն ետեւ: — Բայց նախ տեսնենք գլխաւոր տէրութեանց ներքին վիճակը:


5. ՍՊՐՆԻՒԸ. Փերդինանդ ու Եղիսարեթ: Արնայ իրաւամբ ըսուիլ որ Փերդինանդ կաթողիկէական ու Եղիսարեթ (Նախաշ. 41) առ միապետութեան բուն հիմնադիրներն եղան. վասն զի իրենց ամուսնութեամբն ու իրենց կառավարութեան ատեն պատահած այլեւայլ զէպքերով՝ Սպանիայի թագաւորական տան հպատակած ամէն երկրներն իրենց անձանց վրայ միացան: Ասոնց զուկրներէն Յովհաննէս թագաժառանգն († 1497) ու Եղիսարեթ († 1498), ինչպէս նաեւ առ վերջին իշխանուհւոյն՝ Բորգուկալի Էմմանուէլ թագաւորէն ունեցած Միքայէլ որդին († 1500), Եղիսարեթ թագուհւոյն մահունըն (1504, Նոյեմբ. 26), յառաջ վախճանած բլլալով, Վասղիլիայի թագաւորութիւնն՝ ըստ կարգի՝ իր Յովհաննէս աղջկան կ'իյնար, որն որ Մաքսիմիլիան Ա. կայսեր Փիլիպոսոս Գեղեցիկ որդւոյն, Ստորին նահանգաց ժառանգին (Նախաշ. 36) հետ ամուսնացած էր: Բայց նոյն իշխանուհին խօթամիտ բլլալով, իր Փիլիպոսոս ամուսնոյն ու Փերդինանդ հօրը մէջ Վասղիլիայի թագաւորութեան խնամակալութեան վրայ մեծ կռիւ մ'եղաւ. եւ թէպէտ առաջինը յաղթեց ու նոյն իշխանութիւնն իրեն առաւ, սակայն երկու տարի վերջէ

Կարողութեամբ փերդինանդ անուն երկու որդի ունենային ետևը՝ մեծերով (1506, Սեպտ. 25), բայց Սպանիայի միապետութեանը փերդինանդ Կաթոլիկեականին ձեռք բաց, բայց ի Սպանիական Նաւարրայէն, զորն որ Գաստիլիայի թագաւորութեան հետ քանի մը տարի ետքը միացուց (1512)։ Աս բաներուն ասանկ յաջողութեամբ լինանալուն մեծապէս նպաստեց Խիմենէս կարդինալ պաշտօնեան, որն որ թէ փերդինանդին եւ թէ Էդիսարեթին՝ տէրութեան մէջ ուրիշ մեծ ծառայութիւններ ընելէն զատ, ստակով ու խորհրդով շատ օգնեց Ափրիկէի մէջ Տրիպոլիս առնելու եւ Ալճէրի ու Գուճուզ հարկատու ընելու (1510), որով Սպանիայի ծովերը նոյն տեղաց ծովահաններուն յարձակութիւններէն պաշտպան։

6. Կարողութեամբ Ա. (Ե.)։ Երբ որ փերդինանդ մեռաւ (1516, Յունու. 23), իր երիցագոյն թոռը՝ Կարողութեամբ Ա. վերջապէս իշխանը, որն որ հորը կողմանէ Սաորին նահանգաց տէրն ու Աւարիայի ժառանգական երկիրներուն ժառանգն էր, իր աս մտնական պապուն յաջորդեց Սպանիայի միապետութեան եւ նոյնին վերաբերող ուրիշ տէրութիւններուն մէջ։ Ինք ան ատեն Սաորին նահանգները գտնուելով, Խիմենէս անանկ խոհեմութեամբ ու ճարտարութեամբ իր կողմը գործեց, որ թէեւ իր Յովհաննաս մայրը տակաւին կենդանի էր, ինք իրքեւ Գաստիլիայի ու Արագոնիայի թագաւոր՝ անհասարակ ընդունուեցաւ։ Բայց Սպանիա գալէն ետև, մեծ պաշտօններն իրեն հետ կող Հոլանտացոց տալուն համար, ժողովրդեան մէջ իրեն դէմ կուսակցութիւն մը կազմուեցաւ, անանկ որ երբ որ վերոյիշեալ կարդինալը մեծելէն վերջը (1517, Նոյեմ. 8), Կարողութեամբ Ա. Գերմանիա գնաց, Գաստիլիայի ու Արագոնիայի մէջ իրեն դէմ մեծ ապստամբութիւն մ'ելաւ։ Ապստամբը շուտ մը անանկ զորացան, որ նոր Միսարանութիւն (1520, Դեպտ. 7) մը գրին (1520, Յուլ. 29)։ Եւ քիչ մը վերջը թագաւորին Յովհաննաս մայրը ձեռք անցընելով (Սեպտ. 2), սկսան այնպէս ձեռնարկել որ անոր շահուն համար սոք ելած են։ Եւ թէպէտ Կարողութեամբ Ա. ին կողմանէ իրենց կղած խոստումներն օգուտ մը չըրին, բայց քիչ մը ետքը Արագոնիայի քով յաղթուելով (1521, Ապր.) եւ իրենց գլխաւորը բռնուելով ու սպանուելով, զպիցան կամ հաւատակեցան։ Եւ թագաւորը Սպանիա դարձած ատեն (1522, Յուլ.) ամենուն կատարեալ թողութիւն շնորհեց եւ խաղաղութիւնն ու իր իշխանութիւնը նորէն հաստատեց։ Աս ամթիւ գրեթէ բոլորովն սլոնացաւ կարգաւորողոյն իշխա-

նույն թիւեր, որն որ արդէն փերդինանդին ու Եղիսարեթին ատենը խիստ նուազած էր. իսկ թագաւորին իշխանութիւնը կրնայ ըսուիլ որ բացարձակ եղաւ :

Յեղագիր ՀԱՊԱՊՈՒՐԿԵԱՆ ազգաստեղծի



ԱՅՆԱ. ԱՐԵՐԿԱՆ Ա. (Ա. Բ. . . .) ԱՅՆԱ. ԱՐԵՐԿԱՆ Ա. (Ա. Բ. . . .) ԱՅՆԱ. ԱՐԵՐԿԱՆ Ա. (Ա. Բ. . . .)

7. ԱՐՄԱՐԻՍ. Մարտիմիլիան Ա., կարոլոս Ե. (Ա.), Փերդինանդ Ա.: Ինչպէս յառաջագոյն տեսած ենք (Նախաշ. 47 եւ 48), Աւստրիա կամաց կամաց մեծնալով, մեր պատմութեան սկսած ատեն՝ ընդարձակ տէրութիւն մ'եղած էր եւ մէկէն շատ աւելի մեծնալու սկնկալութիւն ունէր: Աւերը արդէն տեսանք թէ ինչպէս աս սկնկալութեանց առաջինը կատարուելով, Հագոսպուրկի ցեղը Սպանիական միապետութեան թագն առաւ (6): Մարտիմիլիան Ա. Աւկապուրկի աւագաժողովոյն մէջ (1518) շատ աշխատեցաւ որ նոյն թագն առնող իր կարոլոս Ա. թոռը նաեւ Հռոմի թագաւոր ընտրել տայ, որ է ըսել՝ կայսրութեան աստիճանին մէջ իրեն յաջորդ անուանել տայ. բայց աս բանս չյաջողեցաւ: Աւելի յաջողութիւն ունեցաւ իր երկրորդ Փերդինանդ թոռան վրայ, զորն որ Բոհեմիայի եւ Հունգարիայի Լուդովիկոս անգլաակ թագաւորին (Նախաշ. 52) Աննա քրոջը հետ կարգելով (1515), նոյն՝ իր ժառանգական երկիրներուն սահմանակից՝ երկու թագաւորութիւններուն իր ցեղին անցնիլն ապահովուց: Բայց նաեւ առաջին բաղանքն իր մեռնելէն ետքը (1519, Յունու. 12) զլուխ ելաւ, ինչու որ կարոլոս Ա. կայսրընտրուեցաւ (1519, Յունիս 28): Նոյն կայսրն իր Աւստրիական ժառանգական երկիրներուն վարչութիւնն իր Փերդինանդ եղբորը թող տուաւ (1522), որուն Բոհեմիայի ու Հունգարիայի թագաւորութեանց վրայ իր անձին համար ունեցած սկնկալութիւնն ալ քիչ մը ետքը Լուդովիկոս թագաւորին մեռնելովը (1526) կատարուեցաւ: Աւերջնակէս կարոլոս Ե. (Ա.) զանիկայ նախ Հռոմի թագաւոր ընտրել տուաւ (1531) ու ետքը բոլոր իր Աւստրիական ժառանգական երկիրներն ալ անոր թողուց (1556), եւ կայսերական թագէն ալ հրաժարելով, Փերդինանդ Ա. նոյն իշխանութեան մէջ ալ իրեն յաջորդ եղաւ:

8. ՔԸՂՂԻՍ. կարոլոս Ը., Լուդովիկոս ԺԲ., Փրանկիսկոս Ա.: Սոսոյք է աս տէրութիւնը վերջին ժամանակները բուսական ընդարձակուած էր, բայց ետքէն ստացած տարածութենէն տակաւին շատ հեռու էր. սրովհետեւ Ֆրանսոսա, Արդուա, Լոթարինգիա, Ֆրանչցոնդէ ու Էլզասս դեռ իրենք չէին: Միայն թէ իր բոլոր երկիրներուն իրարու կից ըլլալովը, զինուորական քաջ կարգադրութիւններովը, թագաւորական իշխանութեան մեծութեամբը՝ Լուդովիկոսի առաջին աստիճանի տէրութիւններէն մէկը կը սեպուէր: կարոլոս Ը.ին (Նախաշ. 21) յաջորդեց իր հեռաւոր

աղղականներէն՝ Լուդովիկոս ԺԻ. (Կարոլոս Է. Թագաւո-
րին Թոսւան որդին). Եւ Էրկուքն ալ Իսապիայի նկատմամբ

Յեկագիր ԿԱՊԻՏՆԵՆՆԻ-ՎԱՍԻՆԻՆԻ ԿՅՈՒՄՆԵՐ ԿՅՈՒՄՆԵՐ

1. ԿԱՄՈՒՍՈՍ Ե.

2. ԿԱՄՈՒՍՈՍ Զ. Լուդով. Օրենսդիր գրքս. աւել. Վարենդեքնու Վեպոնդիք.

3. ԿԱՄՈՒՍՈՍ Է. Կարոլոս Օրէն. գրքս. Երկնային Երկրային գրքս.

4. ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԱ. 6. ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԲ. Կարոլոս Երկրային գրքս.
աւել. Լուսկոս Սուսերայի գրքսուհի.

5. ԿԱՄՈՒՍՈՍ Ը. Կարոլոս. աւել. 7. ՓԲԸՆԿԻՍԿՈՍ Ա.

Փրոնոպիսկոս. 8. ՀԵՆՐԻԿ. Բ. Կարոլոս.
աւել. Կատարինէ Մեռելիք.

9. ՓԲԸՆԿ. Բ. Երկուք. 10. ԿԱՄ. Թ. 11. ՀԵՆՐ. Գ. Փրոնոպ. Մարգարեան. աւել. 12. ՀԵՆՐԻԿ. Գ.

աւել. 13. ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԳ.
Մարթամ Փրոնոպ.
Բ. Բ. աւել. 14. ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԴ.

Սուսերայ. Կրտսեր որդի Լուդ. Թ. Գրքս.
Տանի Կանն. Կատարինէնայ Տարբանայք

.....
.....

Կարոլոս Վանուսի գրքս.

Երան. Կարոլ. Լուդ. Է. Գրանտ.
աւել. Կարոլ.

Երկնային
Ժոս. Կատարայիք
ՀԵՆՐԻԿՈՍ Ա. Գրանտ.

13. ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԳ.
աւել. Երան.

14. ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԴ.
.....

աս ժամանակի միջոցին եղած պատերազմներուն զխաւոր դործակիցներն եղան: Բայց երկուքէն ալ աւելի երկայն ժամանակ ու աւելի սաստիկ կերպով նոյն պատերազմները յառաջ տարաւ երկրորդին հօրեղոր թոռն ու իր փեսան եւ յաջորդը (1515) Փրանկիսկոս Ա.: որոնց պատճառաւ թէ եւ մէկ կողմանէ Գաղղիայի վնաս եղաւ. բայց ինք մէկալ կողմանէ քաջութեամբ իր տէրութեան ամբողջութիւնը պաշտպանելով՝ իր հպատակաց սիրելի եղաւ: Ասկից զատ գիտութեանց ու գեղեցիկ արուեստից յառաջագիմութեան համար մեծ արդիւնք ստացաւ եւ Գալլութեանց հայր անունը ժառանգեց: Ինք թագաւորական իշխանութեան մեծնայուն ալ շատ օգնեց, Պրոքայն զաւառն (Նախաշ. 21.) արքունի թագին հետ բոլորովին միացնելէն զատ, աւագ նախարարներն արքունեաց պաշտօններու մէջ խոթելով, որով անոնք սկսան յառաջունէ աւելի թագաւորէն կախում ունենալ. քահանայապետին հետ դրած դաշանց զօրութեամբ՝ կախկոպսաններն ու արքաներն ընտրելու իրաւունք ձեռք բերելով, միանգամայն Փարիզի խորհրդանոցին զօրութիւնն ամեն կերպով շափաւորելով: Փրանկիսկոսի առջինէկ համանուն որդին իրմէ յառաջ մեռած Բլալով (1536), իրեն յաջորդեց երկրորդ որդին Հենրիկոս Բ. (1547), որն որ զխաւորաբար Գերմանիայի մէջ կարողս Է.ին (Ա.ին) հետ պատերազմեցաւ:

9. Անգլիա. Հենրիկոս Է. եւ Բ.: Հենրիկոս Է. երկայնժամանակեայ ներքին պատերազմներուն վերջ տալով (Նախաշ. 11), չէ թէ միայն իր ցեղը զահին վրայ հաստատած էր, այլ նաեւ թագաւորական իշխանութիւնը խիստ ընդարձակած. որովհետեւ ազնուականներէն շատերը նոյն ներքին պատերազմներուն մէջ մեռած Բլալով, ալ աւագութեամբ թագաւորին զօրութեան գէժ գնելու կարողութիւն չունէր, որով թէ Հենրիկոս Է.ին եւ թէ իր Հենրիկոս Բ. որդւոյն կառավարութիւնը գրեթէ բոլորովին արձակապետական եղաւ: Առաջնոյն երէց որդին Արթուր, որն որ 14 տարւան հասակին մէջ Փերդինանդ կաթուղիկէականին կատարինէ աղջկան հետ կարգուած էր (1501), երկրորդ տարին մեռնելով, իր կրտսեր որդին Հենրիկոս (Բ.) ժառանգ եղաւ, եւ քահանայապետին տնօրինմամբն իր քենւոյն հետ նշանեցաւ, որն որ տակաւին կոչս էր (1503): Էւ թէ պէտ չափահաս եղած ատեն՝ հայրը Հենրիկոս Է. աս նշանախոսութեան գէժ բողբ ընել տուաւ. բայց ինք զահանջնելէն ետեւ (1509) իր ազատ կամօքը նոյն իշխանուհւոյն հետ հանդիսութեամբ կարգուեցաւ: Աս թագաւորը

Թեպէտ սաստիկ կրից տէր մարդ էր, բայց եւ մեծ տա-
ղանդներ ունէր եւ գիտութեամբ ալ երեւելի էր: Գլխաւ-

Յեղափոխ ԳՈՒՑՈՐԵԱՆ ԵՎ ՄԳՈՒԱՐՆԵԱՆ ԱՂԳԱՍԱԿՈՒՄԻ

1. ՀԵՆՐԻԿՈՍ Է. - ԼՆԱ. Երեսօրէթ՝ Երգի ժամանկ.	Մարգարեան.	Մարգար.
2. ՀԵՆՐԻԿՈՍ Ը.	Մարգարեան.	- ԼՆԱ. Բ. Կարգափոխ ժ. Բ.
- ԼՆԱ. Բ. Կարգափոխ. Բ. Ընծա Պրոք. Գ.	- ԼՆԱ. Յակոբ Գ.	Բ. Աւֆֆօրի գոյց.
Յովհաննաս Սիմօն. Գ. Ընծա Գրեթի գրու. Նի.	Սիմօնիայի.	
Ե. Կարգափոխ Հարցա. Բ. Կարգափոխ Բարդ.	Յակոբ Ե.	Մարգարեան.
Բ. 4. ՄԱՐԿԱՐ. Բ. 5. ԵՂՅԱՍԵՐ. Գ. 3. ԵՂՈՒՄԵԴ Զ.	Յակոբ Ե.	- ԼՆԱ. Մարտի.
	Մարգար.	Սպարապ.
	Մարգար.	
	Բ. Փրոնիփոն Բ.	Յովհաննաս Կրկ.
	Բ. Հեղեփոն Տառնի.	- ԼՆԱ. Նորթ Կարգափոխ ժ.
	Գ. Պրոնիփոն Կոն.	Գրգիս Կարգափոխ Նեա.
	Բ. 6. ՅԱԿՈՒՍ Է. (Զ.)	
	Երեսօրէթ.	
	- ԼՆԱ. Փրոնիփոն Ե. Պրոնիփ	7. ԿԱՐՈՍՍ Է.
	Կարգափոխ	8. ԿԱՐՈՍՍ Բ.

Ստանդարտը չէ մտածել յոյսով բնութիւնը (Ս. Բ. ...) Երեսօրէթի տեղեկութիւնները - ԼՆԱ-ԲԱՆ ԸՆԾԱ ԵՎ ԳՈՒՑՈՐԵԱՆ ԵՎ ՄԳՈՒԱՐՆԵԱՆ ԱՂԳԱՍԱԿՈՒՄԻ

որաբար իր թափանա Աւլի պաշտօնէին ձեռքովը, որն որ
 Երբոր արքեպիսկոպոս ու կարգինալ էր, չէ թէ միայն Եւ-
 բուպոյի ցամաք երկրին իրողութեանց մէջ սկսաւ խառ-
 նուիլ, այլ եւ կրնայ ըսուիլ որ անոնց մէջ իրաւքնաիր ալ
 ըլլալ: Բայց սա նկատմամբ իր աներոջը Փերդինանդ Կա-
 թուղիկէականին ու անոր Կարողոս թոռան՝ Գաղղիայի Հեա-
 ըրած պատերազմներուն մէջ մտնելով եւ միանգամայն իր
 արքունեաց զեղխութեամբը՝ չօրը դիզած մեծ գանձերը
 շտայլեց: Թէ իր եւ թէ սա ժամանակի միջոցին մէջ իր
 յաջորդներուն ներքին կառավարութիւնը սերտիւ կապուած
 է Անգղիայի կրօնական Հերձուածոյն Հեա, որուն վրայ նոր-
 աշխանդութեան Հատուածին մէջ կը խօսինք:

10. ՍՄՄԸՆԵԸՆ ՏԵՐՈՒԹԻՒՆ. Պայլադիտ Բ., Սէ-
 լիմ՝ Ա., Սիւլէյման Բ.: Աս պետութեան գահին վրայ կը
 գտնենք՝ Կոստանդնուպոլիս առնող Սուլթան Մէհմեթա
 Բ-ին (+ 1481) Պայլադիտ Բ. որդին, որն որ թէեւ չօրը
 պէս պատերազմատէր ու աշխարհակալութեան բաղձացող
 էր, բայց ոչ անոր զինուորական հոգին ունէր, եւ ոչ անոր
 նման յաջողութիւն գտաւ: Իրօք ալ Եգիպտոսի (1489),
 Հունդարիայի (1492) եւ Վենետիկի (1500) դէմ ըրած
 ձեռնարկութիւնները կամ բոլորովին անյաջող ելք ունե-
 ցան եւ կամ երեւելի չա՛ մը յառաջ չբերին: Եւնիլէրի-
 ներուն օգնութեամբն իրեն յաջորդեց իր կրտսեր որդին
 Սէլիմ Ա. (1512), որն որ Հայաստանի, Միջագետաց,
 Ասորիքի ու Եգիպտոսի տիրեց (1514—1517), եւ ասան-
 կով իր տէրութեան թէ սահմաններն ընդարձակեց եւ թէ
 զօրութիւնն աւելցուց: Ինք կ'ուզէր Պարսկաստան ալ ի-
 բրն հպատակեցընել. բայց պատրաստութիւն տեսած ասնն՝
 մեռնելով (1520), սա գաղափարը մէկդի ձգուեցաւ, որով
 Հեաեւ իր որդին ու յաջորդը Սիւլէյման Բ. Եւբուպական
 տէրութեանց ան ասննուան վիճակին նայելով, աւելի յար-
 մար սեպեց իր յաղթող զէնքերն անմիջապէս Եւբուպայի դէմ
 դարձընել: Ան ժամանակէն Օսմանեանք Եւբուպական տէ-
 րութեանց Հեա անձուկ կապակցութեան մէջ մտան եւ
 անանկ զբացան, որ գրեթէ բոլոր Եւբուպա իրենց ահեղ
 զօրութեան առջեւ կը դողար. մանաւանդ որ իրենց ծո-
 վային զօրութիւնն ալ սաստիկ մեծնալով, Միջերկրական
 ծովուն տիրեցին, զանազան կղզիներ ու գլխաւորաբար Ա-
 փրիկէի մէջ այլեւայլ երկիրներ ձեռք անցուցին, որով եւ
 բոլոր ծովեզերեայ կողմերն անհանդիսա կ'ընէին: Ընդհան-
 րապէս Սիւլէյման Բ-ին քառասունուվեց տարուան իշխա-

նութեան ատենը՝ Օսմանեան տերութիւնն իր փառաւորութեան վերջին ծագը հասաւ։ Նոյն Սուլթանն աշխարհակալութիւններէ զատ՝ երկրին ներքին կարգաւորութիւններուն ու օրէնսդրութեան ալ մեծ փոյթ տարաւ։

Ա.

Խաալիայի համար եղած կոտորածները, մինչև Փրանկիսկոս Ա. ին ու կարողու Ե. ին ատենը (1494—1515) :

11. Կարողու Ը. Նէապոլսոյ կը տիրէ ու շուտ մը կը մերժուի։ Խաալիայի աշք տնկող տերութեանց մէջ ամէն ատեն զրեթէ առաջին տեղը կը բռնէր Գաղղիա։ Ան բաղձանքը շատ աւելցաւ, երբ որ Անժուի վերջին դքսին մեռնելովը (1481), իր տան՝ Նէապոլսոյ թագաւորութեան վրայ ունեցած իրաւունքը կամ բրած պահանջութիւնը՝ Լուդովիկոս Ժ. Ա. ին անցաւ (Նախաշ. 21 եւ 34, Բ.)։ Ասոր որդին Կարողու Ը. նոյն թագաւորութեան մէջ արչաւանք մը սկսաւ (1494)։ Ան արչաւանքը փութացրնելու առիթ եղած էր տեղահաս փախրտականաց զրգռելը եւ Միլանի Լուդովիկոս Մորոս դքսին հրաւերը, որն որ Գաղղիացւոց օգնութեամբը կ'ուզէր իր եղբորորդիէն յափշտակած իշխանութեան մէջ հաստատուն մնալ (Նախաշ. 34, Է.)։ — Արդ Կարողու Ը. ութ ինն ամսուան մէջ զրեթէ բոլոր Խաալիայի տիրեց։ Միլանի դքսին իրեն հետ միացաւ. Փլորենտինա ու Հոմ ալ իրենց դռները նոյն թագաւորին առջև բացին։ Նէապոլսոյ Ալֆոնսոս Բ. թագաւորը (Նախաշ. 34, Բ.) փտանդը տեսնելով, թագն իր Փերդինանդ Բ. որդւոյն ձեռք բացցան ալ իր իշխանութիւնը շրջաւ պաշտպանել, թող տուաւ Խորիա փախաւ, որով Կարողու Ը. մեծ շքով Նէապոլիս մտաւ (1495, Փետր. 21) եւ շուտ մը բոլոր թագաւորութիւնն ալ իր տակն առաւ։ — Թեպէտ եւ ասանկով քիչ ասանուան մէջ (1494, Սեպտ. — 1495, Մայ.) 30,000 հոգւով բանակ մը եւ 140 թնդանօթ բաւական ե-

զան Իտալիա թմբեցրնելու եւ տիրելու. բայց սն տկար զօրութիւնը հերիք չէր օտար երկրի մը մէջ հաստատուն մնալու: Գաղղիացիք իրենց յաղթական արշաւանքն բրած ստան՝ արդէն Իտալացիք սկսած էին իրարու հետ բանակցիլ եւ դաշնակցիլ, որպէս զի նոյն օտարականներն իրենց հայրենիքէն հեռացրնեն: Աս բանակցութեանց ու դաշնակցութեան հողին՝ Ալենեստիկ էր: Նոյն իսկ քահանայապետն ու Լուգովիկոս Մորոս, որուն աշուրները բացուած էին եւ իրաւամբ կը վախճար որ Գաղղիացիք նաեւ Միլանի վրայ տիրել շուղեն, դաշնակցութեան մէջ մտան: Սպանիայի թագաւորն ու կայսրն ալ իրենց հետ միացան: Իտալացիք նաեւ Օսմանեանց հետ սկսան դադանի բանակցութիւններ բնել: Ասանկով Կարոլոս Ը. Նէապոլիս մանելէն երեք ամիս վերջը, ստիպեցաւ իր բանակին մէկ մասովը հանկից ելլել (Մայ. 20), եւ Գաղղիա հասնելու համար հարկ եղաւ որ պատերազմելով իրեն ճամբայ բանայ: Բայց նոյն դարձին ստանը Գաղղիացիք մեծ փառք ստացան, Քոստովայի ճակատին մէջ Ալենեստացւոց ու անոնց դաշնակցաց զօրքը յաղթելով (Յուլ. 6): Իսկ իրենց բանակին Նէապոլիս մնացած մասը հարկադրեցաւ դաշնաւորաց անձնատուր բլալ: Ասանկով Փերդինանդ Բ. իր թագաւորութիւնը նորէն ձեռք ձգեց:

12. Աս դէպքերուն հետևութիւնները: Լուգովիկոս ԺԲ-ին արշաւանքը: Բայց սա անցաջող փորձն ալ Եւրոպայի համար առանց հետեւութեան չանցաւ: Ալ Իտալիա աշխարհակալութեան խորհրդոց նպատակ եղած էր. սակից զաս՝ կիրքերը զրգուում էին եւ Կարոլոս Ը. վրէժ առնուլ ու իր պատուոյն հասած նախատինքը ջնջել կ'ուզէր: Գարձեալ Մարտինիլիան կայսրը, Լուգովիկոս Մորոսէն հրաւիրուելով, Իտալիա եկած էր՝ հոնակը կայսերականն ու թագաւորական թագն առնելու եւ Բիզան Փլորենտիայի զէմ պաշտպանելու. բայց Գերմանիայէն օգնութիւն չգտնելով եւ Ալենեստիկի ու Միլանի հանած դժուարութիւններէն

խափանուելով, իր վախճանին շեր հասած եւ բան մը չըրած՝ ետ դարձած էր (1496)։ Իսկ Բիղայի ու Փլորենաիայի մէջ եղած թշնամութիւնն ու կռիւները չէ թէ միայն կը շարունակէին, այլ նաեւ երթալով կը սաստկանային, որովհետեւ թէ Միլան եւ թէ Ղենեաիկ կը յուսային որ անոնցմով իրենց մեծ շահ կ'ըլլայ։ Ասով գիւրին եղաւ օտարականաց՝ երկրին մէջ իրենց դաշնակից գտնելը։ Բայց այնպէսով ալ կարողո՞ւ է վրէժ առնելու բաղձանքին չկրցաւ հասնիլ, վասն զի վրան մահ գալով (1498), իր խորհուրդներն անկատար մնացին։ Սակայն իր յաջորդը Լուդովիկոս ԺԲ. իր նախորդին աշխարհակալութեան խորհուրդն աւելի սաստկութեամբ յառաջ վարեց. որովհետեւ անոր՝ Նեապոլսոյ վրայ ունեցած իրաւունքէն զատ, ինք Միլանի վրայ ալ անձնական իրաւունք ունէր, զորն որ ժառանգած էր իր Ղխոզոնդեան ցեղէն եղող Ղալինդինա մամէն (Նախալ. 34, Է.)։ Աս պատճառաւ Գաղղիայի թագաւոր Բլալուն պէս, ինք զինքն Երկու Աիկիլիայի թագաւոր ու Միլանի դուքս անուանեց, եւ սկսաւ ջանալ նոյն տէրութիւններուն իշխանութիւնն իրօք ձեռք անցընելու։ Իր աս նպատակին հասնելու համար՝ Ղենեաիկի հասարակապետութիւնն ու քահանայապետն իր կողմը շահեցաւ, անոնց զանազան խոտու մներ բնելով։ Իսկ Լուդովիկոս Մորոս իր իշխանութիւնը չկորսընցընելու համար Փլորենաացւոց հետ միացաւ, միանդամայն զՍուլզան Պայագիտ Բ. Ղենեաիկի գէմ գրգռեց եւ Գաղղիացւոց գէմ Մաքսիմիլիան կայսրմէ օգնութիւն խնդրեց։ Բայց աս ամէն բան օգուտ մը չըրաւ. ինչու որ Լուդովիկոս ԺԲ. մէկ կողմանէ ուրիշ տէրութեանց հետ բանակցելու ատեն, մէկալ կողմանէ իր աչք տնկածը ձեռք անցուց։ Միլան առնուեցաւ (1499, Օգոստ.), Լուդովիկոս Մորոս ալ փախաւ. եւ թէպէտ Հելուետացի վարձկանազօրօք դարձաւ եկաւ, բայց չկրցաւ հաստատուն մնալ. Նովարայի ճակատուն մէջ գերի ինկաւ (1500, Ապր. 10) եւ բանտի մէջ մեռաւ (1510)։

13. Կրանատայի գաշինքը: Փերդինանդ Նեապոլսոյ կը տիրէ, իսկ Գաղղիացիք Միլանի մէջ կը հաստատուին: Միլանի առնուիլը՝ անմիջապէս Նեապոլսոյ վրայ ալ յարձակելու ճամբայ բացած կ'ըլլար, թէ որ աս բանս՝ Սպանիայի հետ յառաջագոյն շխտակցած՝ կարող ըլլար ի զործ դրուիլ: Բայց Լուդովիկոս ԺԲ. վախնալով որ առանց նոյն տէրութեան օգնութեան՝ դժուարաւ կրնայ Նեապոլսոյ տիրել կամ տիրելէն ետեւ պահել, սկսաւ աս նիւթին վրայ Փերդինանդ Աթոռիկէականին հետ բանակցիլ, եւ երկուքին մէջ գաղանթութեամբ Կրանատայի գաշինքը դրուեցաւ (1500, Նոյեմ. 11), որով Նեապոլսոյ երկիրները մէջերնին կը բաժնէին: Նեապոլսոյ Փերդինանդ Բ. թագաւորը մեռած ըլլալով (1496), իր տեղն անցած էր իր հօրեղբայրը Փրեդերիկոս Բ., որն որ Սպանիայի Փերդինանդ թագաւորին՝ Լուդովիկոսի հետ բրած գաշինքը շղիանալով, քովը սպանիական զօրք կը պահէր: Արդ երբ որ Գաղղիացիք պատերազմը սկսան, նոյն սպանիական զօրքը Փրեդերիկոսին դէմ էլաւ. որով խեղճ թագաւորն իր իշխանութիւնը պահելէն յուսահատեցաւ, եւ Լուդովիկոսին անձնատուր ըլլալով (1501, Օգոս. 25), իր մայրաքաղաքէն ու բոլոր տէրութենէն էլաւ, Գաղղիա գնաց, ուր որ երեք տարի վերջը մեռաւ (1504): Բայց երկիրը բաժնելու ատեն՝ Լուդովիկոսին ու Փերդինանդին մէջ նախ կռիւ ու ետքը պատերազմ բացուեցաւ, որովհետեւ երկուքն ալ ամբողջին վրայ տիրել կ'ուզէին: Փերդինանդ աւելի խորազէտ ըլլալով, եւ տէրութեան մէջ աւելի կողմնակից կամ հազարակցութիւն ու բանակին վրայ Գանձալոյ Գորտովացոյն պէս զօրապետ մ'ունենալով, նոյն պատերազմէն յաղթող էլաւ: Գաղղիացիք երկու մեծ ճակատներու մէջ (1503, Ապր. 21, Սեմինարայի, եւ Գեկա. 28, Կարիւլիանոյի քով) յաղթուեցան ու զինագազար ընելու ստիպեցան (1504, Մարտ 31): Ասով Սպանիացիք Նեապոլսոյ վրայ առանձին տիրեցին, եւ քիչ մը ետքը

նոյն տէրութեան մէջ աւելի եւս հաստատուեցան, որովհետեւ Լուսավիճիկոս ԺԲ. իր քրոջը աղջիկը՝ Հերմի-նիա արքայա Փերդինանդին կնութեան տալով եւ նոյն թագաւորէն մէկ միլիոն տուգաղ ընդունելով, Նէապոլոյ վրայ ունեցած իրաւունքն իրրեւ օժիտ աւար անցուց (1505, Հոկտ. 12): — Այսպէսով Իտալիայի մէջ երկու օտար տէրութիւնք հաստատուեցան. Սպանիայիք՝ Նէապոլոյ մէջ, Գաղղիացիք ալ՝ Միլանի մէջ: Իսկ կայսրը թեպէտ նոյն երկրին պաշտպան տէրն էր, բայց չկրնալով իրենց դէմ ելլել, անով զսճեղաւ որ Լուսավիճիկոս իր Միլանի վրայ ունեցած աւատապետութիւնը ճանչնալով, նոյն դքսութիւնն՝ իրրեւ աւատային երկիր՝ իրմէ ընդունեցաւ (1505):

14. Յուլիոս Բ. քահանայապետ: Մաքսիմիլիանին Իտալական արշաւանքը: Նոյն միջոցներուն Ազէքսանդր Զ. քահանայապետը մեռած (1503, Օգոստ. 17) եւ իր յաջորդը Պիոս Գ. բնորութենէն 27 օր վերջը կեանքը նոյնպէս կնքած (Հոկտ. 18) ըլլալով, քահանայապետ եղած էր Յուլիոս Բ., որն որ հայրենեզք ճենուացի եւ Պորճիայի տան հակառակորդ էր: Նորընտիր քահանայապետն արիական բնութիւն ունենալով, միտքը դրած էր որ եկեղեցւոյ տէրութեան երկիրները նորէն ձեռք բերէ, այս ինքն՝ Ռոմանիա, Պոլոնիա ու Ֆերրարա գաւառները, որոնց այլեւայլ քաղաքներուն մէջ քանի մ'իշխանք բռնացած կը տիրէին (Նախաշ. 34, Ա.), իսկ աւելի մեծագոյն մասերը Վենետացիք գրաւած էին: Իր բազմանքն ըստ մասին կատարելով, Իմօլայի, Ֆորլիի, Չեզենայի (1504) եւ Բերուճիայի ու Պոլոնիայի (1506) երկիրներն իր իշխանութեան տակ առաւ: Եւ որովհետեւ Վենետացիք իր իրաւաներուն ու յորգորանաց չէին անտար եւ չէին ուղեր եկեղեցւոյ երկիրներն ետ դարձրնել, անոր համար քահանայապետը Մաքսիմիլիան կայսրմէ օգնութիւն խնդրեց, որն որ սա գործքն այնչափ աւելի սիրով յանձն առաւ, որչափ որ ինք արդէն Գաղղիացւոյ Իտալիայի

ձջ ձեռք բերած մեծ իշխանութենէն անհանգիստ կ'ըլար, եւ առթի կը սպասէր իր ազգեցութիւնը նոյն երկրին մէջ մեծցրնելու: Ժամանակն ալ աս գործքին շատ յարմար կ'երեւար, որովհետեւ Լուդովիկոս ԺԲ. ճննուայի մէջ Վաղղիացւոց դէմ ելած ապստամբութիւն մը զինուք զսպելէն ետեւ (1507), անանկ խրատութեամբ կը վարուէր, որ բոլոր քաղաքացիք անոնց դէմ վերջին աստիճանի դառնացած էին: Արդ Մաքսիմիլիան Իտալիայի վրայ արշաւանք մը սկսաւ. բայց Վենետացիք Վաղղիացւոց հետ միաբանելով, նոյնն անուգուտ հանեցին. եւ կայսրը ստիպեցաւ Վենետիկի հետ առանձին զինադադար բնել (1508, Յունիս), որուն պատճառաւ Վաղղիացիք նոյն հասարակապետութեան դէմ սաստիկ նեղացան:

15. Գանալրէի նիզակակցութիւնն ու անոր հետեւութիւնները: Արնայ ըսուիլ որ ասկից պատճառեցաւ Գանալրէի նիզակակցութիւնը (1508, Գեկա. 10), որն որ Վենետիկի դէմ սաստիկ մեծ ու ընդարձակ դաշնակցութիւն մըն էր: Աս նիզակակցութիւնն՝ իսկզբան գրուեցաւ Լուդովիկոս ԺԲ.ին եւ Մաքսիմիլիան կայսեր մէջ. քիչ մ'ետքը Յուլիոս քահանայապետն ու Փերդինանդ Թագաւորն ալ մէջը մտան. վերջապէս կամաց կամաց նիզակակցութեան մասնակից եղան նաեւ Ֆերրարա, Մանդուա ու Սաւոյա: Ասոնք ամէնն ալ անոր համար Վենետիկի դէմ կ'ելլէին, որովհետեւ նոյն հասարակապետութիւնը բոլոր յիշեալ տերութեանց երկիրներէն՝ շատ կամ քիչ տեղ իրեն զբաւած էր: Փլըրնտիա ալ իրենց կողմը շահելու համար՝ դաշնակիցք նոյն հասարակապետութեան տալին Բիզան, որն որ քիչ մը վերջը իրօք նուաճեցաւ (1509): Ինչպէս բսինք, մեծ ու զօրաւոր էր Վենետիկի դէմ զբաւած նիզակակցութիւնը. բայց որովհետեւ դաշնակիցք ընդհանուր միակ նպատակ մը չունէին, հապա ամէն մէկն իր առանձնական շահք կը փնտռէր, անոր համար շատ դիւրին էր քակուիլը: Իրօք ալ թէպէտ Վենետացիք

Անեատեւոյի քով Գաղղիացւոցմէ շարաշար յազթուեցան (1509, Մայ. 14^o), բայց առ իրենց զինուոց տկարութեամբը կամ անյաջողութեամբն ըրած կորուստին տեղը կրցան ըստ մասին լեցընել՝ իրենց ճարտար ու խորագէտ քաղաքականութեամբ թշնամիներնին իրարմէ բաժնելով, որով եւ կործանման վտանգէն ազատեցան: Ստոյգ է նոյն պարտութեամբ՝ զամառ երկրին վրայ ունեցած բոլոր ստացուածքնին ձեռքերնէն դնաց. բայց Լուզովիկոսին ու Մարտիմիլիանին մէջ շուտով երկպառակութիւն մտնելով, իրենք Բատուա նորէն առին: Սկսան խօսակցիլ եւ հաշտուեցան քահանայապետին հետ, որուն ձեռքը մնացին Ռոմանիայի քաղաքները (1510, Փետր. 25). իսկ Փերդինանդ թագաւորը ձեռք անցուց Աբուլիայի նաւահանգիստները:

16. Սրբազան նիզակակցութիւն: Գանդաբէի նիզակակցութեան քակուելէն ետեւ, որիչ մը գրուեցաւ: Ասիկա Սրբազան նիզակակցութիւն կոչուեցաւ, որովհետեւ գլխաւոր նպատակն էր, Հռոմի զահը՝ Գաղղիայի թագաւորին անվայել ու անիրաւ ձեռնարձակութիւններէն պաշտպանել. ինչու որ ինք չէ թէ միայն եկեղեցւոյ երկիրներուն վրայ յարձակելով քահանայապետին աշխարհական իշխանութեան գէժ անիրաւութիւն կ'ընէր, հապա նաեւ նոյն քահանայապետն իր աստիճանէն վար առնելու մտք՝ Բիզայի մէջ շարածողով մը գուժարել տարով, անոր վերին հոգեւոր իշխանութեան ալ գէժ կ'երէր: Արդ առ նիզակակցութիւնը գրուեցաւ (1511, Հոկտ. 5) Յուլիոս Բ. քահանայապետին, Փերդինանդ Վաթուղիկեականին եւ Ալեքստացւոց մէջ. իսկ կայսեր եւ Անդղիայի Հենրիկոս Ը. թագաւորին ազատ թող տուին որ ուզեն նէ՝ իրենք ալ մէջը մտնեն: Աւերոյիչեալ գլխաւոր նպատակէն զատ՝ քահանայապետն ու Ալեքստացիք կը բաղձային նաեւ որ Գաղղիացիք Իտալիայի մէջէն բոլորովին մերժուին. իսկ Փերդինանդ կ'ուզէր Սպանիական Նաւարրան անոնց ձեռքէն առնուլ: Ըս վերջին թագաւորը կրցաւ զՀենրիկոս Ը.

ալ նիզակակցութեան կողմը վաստակիլ (1512, Փետր.), որուն մէջ կողքէն կայսրն ալ մտաւ: Նիզակակցութեան խորհուրդներն իրօք դլուխ տանելու համար շատ օգտակար էին Հելուետացիք ալ. որովհետեւ միայն անոնց ձեռքովը կրնային ՂՄիւնի Գաղղիացւոցմէ տանուլ: Զիրենք արդէն բուն նիզակակցութիւնը դրուելէն յառաջ վաստակած էին (1510):

17. Գաղղիացւոց ու նիզակակցաց մէջ պատերազմ: Աս պատերազմին հետևութիւնները: Թէպէտ Գաղղիացւոց դէմ՝ առանկ զօրաւոր նիզակակցութիւն մը կար, սակայն եւ այնպէս պատերազմը սկսած ատեն՝ քանի որ իրենց զօրաց դլուխը՝ կասողն տը Ֆուա կը կենար, ամէն տեղ իրենք յաղթող կ'ըլլային (1511, Նոյեմբեր ամսէն վեր): Բայց կարծես թէ իրենց զինուոց բախտը նոյն զօրապետին կենացը հետ կապուած էր. որովհետեւ մէյ մ'որ անիկայ Ռաւեննայի ճակատին մէջ յաղթեց ու մեռաւ (1512, Եպր. 11), ալ իրենց բանը սկսաւ ընդհանրապէս դէշ երթալ: Իրօք ալ ամէն կողմանէ մեկանց յարձակում կրելով, զժուարին էր որ կարենային յաջողութիւն ունենալ: — Հելուետացիք Միւնի վրայ յարձակեցան (1512, Մայ.), առին եւ ՂՄարտիսիլիանոս Սփորցա, Լուդովիկոս Մարտին առջինէկ որդին, իր հօրն իշխանութեան մէջ հաստատեցին: Եւ թէպէտ Լուդովիկոս ԺԲ. փորձեց նորէն իր ձեռքն անցընել, բայց Նովարայի ճակատին կորստեամբը (1513, Յուլ. 6), նոյն փորձն օգուտ չունեցաւ: Գաղղիացւոց Իտալիայէն ելլելուն մէկ հետեւութիւնն ալ աս եղաւ՝ որ խել մը ժամանակ յառաջ (1495) մերժուած Մետիշեան տունը, նիզակակցաց օգնութեամբը, Փլորենտիս դարձաւ (1512, Օգոստ. 31) եւ իշխանութիւնը ձեռք առաւ՝ անանկ զօրութեամբ մը, որ հասարակապետութեան՝ միայն անունը մնաց: Ինչպէս ինք իրմէ կ'ենթադրուի, Փլորենտիս նոյն ատեն կերպապէս նիզակակցութեան մէջ մտաւ: Ճենուայիք ալ, որ արդէն յարմար առ թի մը կը

սպասեին, սուր ելան: Նոյն միջոցներուն (1512) Փեր-
զինանդ Նաւարրա առաւ, որն որ Ալպրէզեան ցեղին
տիրելու սկսելէն վեր (Նախաշ. 41) Գաղղիայի դաշնա-
կից տէրութիւն մ'եղած էր: Հենրիկոս Ը. ու Մաքսի-
միլիան Արդուա յարձակեցան եւ կինրկադի քով Գաղ-
ղիացոց յաղթեցին (1513, Օգոս. 17). Հելուետացիք
ալ Պուրկուճախայի վրայ քալեցին (1513, Օգոստ.):
Աստանկ ըլլալով, Լուդովիկոս ԺԲ. վերջին աստիճանի
նեղ մտած՝ ինչ ընելիքը չէր գիտեր. բայց Յուլիոս
Բ.ին մեռնելովն (1513, Փետր. 21) ամէն բան կեր-
պարանափոխ եղաւ: Լեւոն Ժ. նոր քահանայապետը՝
որ Մեախեան ցեղէն էր, գիւրաւ հաշտեցաւ Լուդո-
վիկոսին հետ, որն որ Բիզայի շարաժողովը մերժեց
(1513, Հոկտ. 6): Արդէն Գաղղիացիք յառաջ վե-
նետացոց հետ դաշնաւորութիւն բրած էին (1513,
Մարտ 13): Նոյնպէս գիւրաւ կրցան Փերզինանդին
հետ ալ խաղաղութիւն ընել, վասն զի ինք զխաւոր
նպատակին հասած էր, Նաւարրա առած ըլլալով, զորն
որ իրեն թող տուին (1513, Գեկտ. 1): Հենրիկոս
Ը. Փերզինանդին փեսան ըլլալով՝ իրմէ կախում ու-
նէր. անոր համար Գաղղիացիք անոր աներոջը հետ հաշ-
տուելէն ետեւ, իրեն հետ ալ գիւրութեամբ խաղա-
ղութիւն կրցան ընել՝ ստակ տալով. եւ Լուդովիկոս՝
նոյն հաշտութիւնն աւելի հաստատուն ընելու համար՝
Հենրիկոս Ը.ին Մարիամ քոյրն իրեն կին առաւ: Հե-
լուետացիներն ալ կերպով մը հանդարտեցրնելէն ետեւ
(1513, Սեպտ. 3), Գաղղիացիք Մաքսիմիլիան կայսեր
հետ զինադադար բրին Միլանի նկատմամբ, որուն նոր
գուքը նոյն կայսրն՝ իրրեւ աւատային տէր՝ իր իշխա-
նութեան մէջ հաստատած էր: Ասանկով Գաղղիա-
ցոց աշխարհակալութիւններէն՝ ձեռուրնին ուրիշ բան
չմնաց, բայց եթէ իրենց կարծեալ իրաւունքները, զո-
րոնք գուցէ Լուդովիկոս ԺԲ. նորէն կը ջանար արժե-
ցրնելու, թէ որ մահը վրայ հասնելով (1515, Յունու.
1), զինքը շխափանէր:

Բ.

Փրանկիսկոս Ա.ին ու կարոլոս Ե.ին (Ա.ին) ստ-
խոսթիւնը (1515—1546):

18. Երկու ստիս վեհապետները: Աչ Լուդովի-
կոս ԺԲ.ին մահուամբը, ոչ ալ տարի մը կտրը Փերդի-
նանդ Կաթողիկէականին մեռնելովը (1516, Յունու.
23) Սպանիայի ու Գաղղիայի մէջ Իտալիայի պատճա-
ռաւ մտած ստիսութիւնը դադրեցաւ. մանաւանդ թէ
աւելի եւս սաստկացաւ եւ աւելի կերպական եղաւ, ա-
նանկ որ բոլոր Էւրոպայի բնդհանուր քաղաքականու-
թեան համար մեծ հեռեւութիւն ունեցաւ. ինչու որ
երկուքին ալ յաջորդները թէ շատ երեւելի մարդիկ,
թէ աշխոյժ ու գործունեայ երիտասարդք էին: Մեծ
մարդ էր Կարոլոս Ա., որուն իշխանութեան դաւազա-
նին տակ միացեալ էին Սպանիա, Ստորին Նահանգք ու
գրեթէ նաեւ բոլոր Իտալիա, եւ որն որ իր քաջ քա-
ղաքագիտութեամբն ու գործունէութեամբն ամէն բան
կը բովանդակէր ու կարճեա թէ իրեն հպատակող բո-
լոր ազգերուն բնութիւնն իրենին մէջ ձուլուած էր:
Մեծ մարդ էր Գաղղիայի Փրանկիսկոս Ա. թագաւորն
ալ, որն որ կրնայ բաւիլ թէ Գաղղիացւոց բնութիւնը
բոլորովին իրեն սեպհականած էր եւ ազգն ալ զանիկայ
իրեւ իր մեծութեան ու պարճանայ ներկայացուցիչը
կը համարէր: Ասանկ վեհապետք իրարու սահմանա-
կից բլլալով եւ միանգամայն միեւնոյն նպատակը գի-
տելով, պէտք էր որ իրենց նախորդաց ժամանակն ի-
րենց աւերութեանց մէջ ծագած ստիսութիւնը շուտ մը
սաստկանար եւ իրենք անձամբ իրարու ստիս բլլային:
Թեպէտ նոյն միջոցին պատահեցաւ նաեւ նորազանդու-
թիւնը, բայց առ երկու գէպքերը պէտք է որ իրարմե
զատ նկատուին, որովհետեւ երկու վեհապետք ալ սո-
նիսթին մէջ իրարու հետ միարան եւ նորազանդութեան
գէտ էին, իսկ իրենց ստիսութիւնը բոլորովին տարբեր
նիսթէ կը ծագէր: Նոյն ստիսութիւնն անով աւելի

սաստիկ եղաւ, որ վերջիչեալ երկու վեհապետք ալ մարբերուն մջ սա կարծիքը հաստատած էին թէ իրենց առ աւելագոյն իշխանութիւնը՝ Խաալիայի տիրելէն կախում ունի: Իրենք սա խորհուրդներով սոգորուած ըլլալով, ստիսութիւննին չէր կրնար երկայն ատեն առանց իրական կռուց ու պատերազմի դառնալու մնալ. մանաւանդ որ Կարսուս Ա. տակաւին Սպանիայի միապետութեան դաճը չելած, Փրանկիսկոս Ա. թշնամու թիւնները սկսած էր:

19. Փրանկիսկոս Ա.ին իտալական արշաւանքը: Նոյոնի գաշինքը: Փրանկիսկոս՝ Գաղղիայի թաւաւոր ըլլալուն պէս (1515, Յունու. 1), ինք զինքը Միլանի դուքս անուանեց, Լուդովիկոս ԺԲ.ին՝ Վենետացւոց հետ դրած դաշնաւորութիւնը (17) նորոգելով, նոյն դքսութեան վրայ յարձակեցաւ, եւ Մարինեանոյի քով Հելուետացւոց դէմ մեծ ճակատ մը տուաւ ու յաղթեց (1515, Սեպտ. 13—14): Ասոր վրայ Միլանի Մաքսիմիլիան դուքսը տարեկան ոսծիկ մ'առնելով, իր երկրին իշխանութենէն ետ կեցաւ. ճենուա Գաղղիայի հետ միացաւ. քահանայապետն ալ ստիպեցաւ Բարնա եւ Բիաչենցա դաւառները թող տալ: Քիչ մը ետքը Հելուետացւոց հետ ալ իրաւախաջութեան դաշինք մը դրուելով (1515, Նոյեմ. 7), կ'երեւար որ անկէ ետեւ Գաղղիայիք Միլանի վրայ հաստատութեամբ պիտի տիրեն, եւ ալ Խաալիայի վրայ իրենց ազդեցութիւնը հաստատուն ու տեւական պիտ'որ ըլլայ: — Այս ամենայն կ'ըլլար Փերդինանդ Կաթուղիկէականին կենդանութեան ժամանակը. ուստի երբ որ նոյն վեհապետը մեռաւ (1516, Յունու. 23) եւ Կարսուս Ա. իրեն յաջորդեց, ամէն մարդ յայտնապէս տեսաւ թէ բաները շատ պիտի մեծնան: Ալ ան ատեն բովանդակ Եւրոպայի բախտը՝ երկու երիտասարդ իշխաններու ձեռքն էր, որոնցմէ մէկն արդէն յաջողութեամբ աշխարհակալութիւն ընելու սկըսած էր, իսկ մեկալը կը յուսար որ աւելի քաղաքա-

կանութեամբ՝ քան թէ զէնքի զօրութեամբ աշխարհա-
կալութիւններ կ'ընէ: Գուցէ սա վերջին պարագայով
էր՝ որ քիչ մ'ատեն թշնամութիւններն ու պատե-
րազմն ուշացաւ. ինչու որ Կարօլոս անմիջապէս բա-
նակցութեան սկսաւ ու քիչ մ'ետքը Նոյնի դաշինքը
զրու (1516, Օգոստ. 13): Ասով Փրանկիսկոս Նեա-
պոլսոյ վրայ ունեցած իրաւունքներէն բոլորովին կը
հրաժարէր ի նպատակ Կարօլոսի, որն որ Գաղղիացի թա-
ղաւորին տակաւին որոցի մէջ եղող Լուիզ աղջկան
հետ պիտի կարգուէր: Նաւարրացի նկատմամբ կը հաս-
տատուէր որ Կարօլոս անձամբ նոյնին իրաւութիւնները
քննելէն ետեւ՝ կարգի դրուին: Աստեղմէ զսա՝ կ'ո-
րոշուէր որ Մաքսիմիլիան կայսրը, Վենետացիներէն
200,000 տուգադ առնելով, Վերոնան իրենց ձգէ:
Քիչ մը ետքը Գաղղիացիք Հելլենտացւոց հետ ալ
Մշտնջենաւոր խաղաղութեան դաշինքը դրին (1516,
Նոյեմ. 29): Իսկ երկրորդ տարին կայսրը Նոյնի
դաշինքն ընդունեցաւ (1517, Յունու. 15), եւ Վե-
նետիկի հետ նոր զինագաղար մ'ըրաւ հինգ տարւան
համար (1518):

20. Մաքսիմիլիան Ա. կը մեռնի: Գերմանիայի
կայսերական թագը: Ա. կերպով կը կարծուէր որ եր-
կու երիտասարդ վեհապետաց մէջ եղած սոսխութեան
նիւթը վերցուած ըլլայ: Բայց մէջերնին հաստատուած
խաղաղութիւնը, որն որ միայն առերեւոյթ քան մըն
էր, շուտ մը սկսաւ գեղեւիլ. որովհետեւ քիչ մ'ետքը
դարձեալ անանկ դաշտի մը վրայ իրարու հետ դիմացէ
դիմաց պատահեցան, որն որ եթէ յառաջագոյն իրենց
մէջ դանուած սոսխութեան նիւթէն ըստ ինքեան
տարբեր ալ էր նէ, ուրիշ նկատմամբ անոր հետ զրեթէ
կը միանար: — Մաքսիմիլիան Ա. մեռնելով (1519,
Յունու. 12), երկուքն ալ սկսան սաստիկ ետեւէ իյ-
նալ անոր թող տուած կայսերական թագն առնելու:
Նոյն Գերմանիայի կայսերական թագն ան ժամանակ-
ները շատ մեծ եւ շատ պզտիկ քան էր. անոր ծան-

բակչոսութիւնը՝ գլխաւոր գնողին գործածելէն կախում ունէր: Ասան զի ինչ շէր կրնար բնել խորագէտ ու զօրաւոր կայսր մը, անանկ ժամանակ մ'որ ամէն վեհապետ իր իշխանութիւնը մեծցրնելու կը ջանար, Գերմանիայի պէս պետութեան մը մէջ, ուր որ կայսեր ու աւագանւոյն մէջ եղած յարաբերութիւններն ու փոփոխ իրաւունքները խիստ անորոշ էին. եւ մէկը շէր կրնար հաստատութեամբ ցուցրնել թէ ինչ իրաւունք ունի կայսրն աւագանւոյն վրայ, եւ ինչ իրաւունք՝ նոյն աւագանին կայսեր նկատմամբ: Գերմանիայի կայսերական թագն անով ալ աւելի ծանրակշռութիւն կը ստանար, որ Իտալիայի վերին աւատապետութիւնն անոր հետ կապուած էր: Արդ գլխաւորաբար աս պարագան խիստ զիւրաւ կրնար Աարոյլոսի եւ Փրանկիսկոսի մէջ արդէն սկսած ստիսութեան աւելի սնունդ տալ եւ անցրնել. եւ աս պարագան էր՝ որ մեծապէս կ'օգնէր երկուքին ալ նոյն թագն սանելու ջանքին:

21. Աարոյլոս՝ կայսր կ'ընտրուի: Ընարութեան ատեն քիչ մը ժամանակ անանկ երեւցաւ որ երկուքն ալ իրենց նպատակին պիտի չհասնին: Գերմանիայի ներքին քաղաքական ու կրօնական շփոթութիւնները, միանգամայն արտաքուստ մանաւանդ Օսմանեանց կողմանէ վախճուած վտանգը, կը պահանջէր որ զօրաւոր իշխան մը պետութեան սանձը ձեռքն առնելով եւ բոլոր մտադրութիւնը Գերմանիայի իրողութեանց տալով, աս ներքին ու արտաքին շարեաց դարման տանի ու վտանգաց առջեւն առնու: Ստոյգ է շատերը Աարոյլոս Ա-ին կողմը միտեալ էին. բայց մէկ կողմանէ ոմանք կը վախնային որ այնչափ բնդարձակ երկիրներ ունեցող ու զօրաւոր իշխան մը Գերմանիայի ազատութեան վնաս չհասցրնէ եւ աւագանւոյն իշխանութիւնը չնուազեցրնէ. իսկ մէկալ կողմանէ ուրիշները կը մտածէին որ ինք պետութենէն գուրս ունեցած լայնածաւալ երկիրներուն հողովը զրազելով՝ պիտի չկարենայ Գերմանիայի այնչափ միտ գնել: Ասով Փրանկիսկոսի գետպաններն

այնչափ քաջալերեցան եւ ակնկալութիւննին ան աստիճանի աւելցաւ, որ ալ կարծես թէ իրենց տիրոջն ընտրութիւնը ստոյգ կը սեպէին: Բայց նոյն թագաւորին ալ օտարազգի բլլալը՝ Գերմանացւոց համար ամօթալի ու վտանգաւոր բան սեպուելով, ընտրողները կ'ուզէին իրենց մէջէն Սաքսոնիայի Փրեդերիկոս կայսրընտիրը նոյն աստիճանին բարձրացընել: Սակայն ինք բոլորովին հրաժարեցաւ եւ առաջարկեց ու բովանդակ զօրութեամբ ետեւէ ինկաւ որ կարողս ընտրութիւնն որ իրօք ալ ընտրուեցաւ (1519, Յունիս 28) կարողս է. անուամբ: Գուցէ նոյն իսկ ան պարագան, որմէ տմանք կը վախնային, այս ինքն՝ նոյն թագաւորին Գերմանիայէն դուրս այնչափ ընդարձակ երկիրներ ու տէրութիւններ ունենալը, աւելի օգնած բլլաց աս ընտրութիւնն ընելու. ինչու որ աւելի ճշդիւ նայելով՝ տեսան թէ անով իր մտադրութիւնն ուրիշ տեղեր գրաւած բլլալով, Գերմանիայի գործքերուն շիկրնար այնչափ միտ դնել, որով իրենք ուղածնին կրնան ընել: Բայց մէկ կողմանէ իրենց ազատութիւնն ու իշխանութիւնն աւելի սպառնողընելու, մէկալ կողմանէ ալ կարելի վտանգներուն առջեւն առնելու համար, հետեւեալ որոշումներն բրին: Կայսրը՝ կայսրընտիրներէն հաւանութիւն չառած՝ գաշնադրութիւն պիտի չընէր, պետութեան մէջ օտար զօրք պիտի չիւթէր, Գերմանիայէն դուրս տեղ աւազածողով պիտի չգումարէր. պետութեան ու (կայսերական) արքունեաց պաշտօնները՝ ծննդեամբ Գերմանացւոց պիտի տար. պետութեան իրողութեանց մէջ՝ միայն գերմաներէն կամ լատիներէն լեզու պիտի գործածէր. աւազանւոյն անգամներէն կամ իշխաններէն մէկը՝ առանց պատճառի կամ առանց դատաստանի՝ տարադրութեան (քաղաքական նշովքի) պատժոյ տակ պիտի չձգէր: Կարելի եղածին չափ շուտով Գերմանիա պիտի գար եւ ժամանակին մեծ մասը հոն պիտի անցընէր: — Նորընտիր

¹ Mettre au ban de l'empire.

կայսրն աս ամէն պայմանները հաստատուն պահելու եր-
զու՛մ բնելէն ետեւ, Եախրնի մէջ մեծ շքով պսակուե-
ցաւ (1520, Հոկտ, 22) :

22. Կարողոս Ե-ին արտաքին դիրքն ու զօրու-
թիւնը : Ը՛ս կերպով կայսերական եւ սպանիական թա-
ղերուն՝ միեւնոյն անձին վրայ միանալը, պէտք էր որ
շատ վախ ու կասկած պատճառէր օտար տէրութեանց,
մանաւանդ սաՀմանակից եղողներուն, չէ թէ միայն
իշխանութեան ու զօրութեան մեծութեան համար,
հապա նաեւ իր երկիրներուն աշխարհագրական դրից
համար : Կարողոսի երկիրներուն սաՀմանները շատ կող-
մանէ ուրիշ տէրութեանց սաՀմաններուն կից բլաւով,
անոնց ներքին իրողութեանց մէջ խառնուելու յաճախ
առիթ կրնար գտնել : Նոյն կասկածն անով աւելի կը
սաստկանար, որ շատերը մաքեւնին զրա՛ծ էին թէ
Հապոյսուրկի տանը կ'ուզէ տիեզերական իշխանութիւն
մը ձեռք բերել, չէ թէ բոլոր Եւրոպայի վրայ անընդմի-
ջական տէրութիւն ստանալով, հապա ամենէն մեծ ու
զօրաւոր իշխանութիւնն ունենալով. եւ աս բանը՝ նոյն
տան ան ժամանակուան վիճակին ու դրից նայելով՝ շատ
հաւանական կը համարէին : Ը՛ս զաղափարներն ունէր
նաեւ Փրանկիսկոս Ը. ալ. ուստի թէպէտ Կարողոս
Ե-ին հետ բրա՛ծ պատերազմներն ընդհանրապէս Խառ-
լիայի վրայ իշխանութիւն ունենալու բաղձանքէն յա-
ռաջ կու գային եւ շատ անգամ կիրքէ բոլորովին ա-
զատ չէին. ի վերայ այսր ամենայնի մարդ զանոնք բար-
ձրագոյն գիտողութեամբ որ գննէ, պէտք է ըսել որ
միանգամայն ինքնակացութեան եւ անկախութեան
պատերազմա՛նք էին :

23. Երկու կողմանց իրական զօրութիւնը :
Իսկ թէ ըստ ինքեան երկու վեհապետաց բուն զօրու-
թիւնն ինչ աստիճանի էր՝ խմանալու համար, պէտք է
միտ գնել որ Կարողոս Ե-ին անչափ կարծուած զօրու-
թիւնն ու իշխանութիւնը անով շատ կը նուազէր, որ
իւր այլեւայլ տէրութիւններուն նկատմամբ՝ ինք բոլո՛-

բովին տարբեր տարբեր յարաբերութեանց մէջ կը
 գտնուէր, եւ տեղ մ'ալ բացարձակ ու անկախ չէր,
 եւ ոչ իսկ Սպանիայի մէջ: Ստորին նահանգաց մէջ
 քաղաքացիք իրենց վեհապետին վրայ միշտ կասկածի
 մէջ ըլլալով, անոր ամէն մէկ գործողութեան վրայ
 անխտասհութեամբ կը հսկէին, որ իրենց իրաւանց վնաս
 չհասնի, եւ պատրաստ էին զէնքով նոյները պաշտ-
 պանելու: Սպանիայի մէջ զօրաւոր աւագ նախարարնե-
 րուն եւ հարուստ քաղաքացիներուն ամբարտաւանու-
 թիւնը հազիւ զինու զօրութեամբ զուլուած էր, եւ
 կարգաժողովներուն իրաւանց վերցուելէն ետեւ՝ միշտ
 ապստամբութեան վտանգ կար: Ստորին Իտալիա եւ
 Սիկիլիա Օսմանեանց ու հիւսիսային Ափրիկէի ծովա-
 հէններուն աւարառութեանց առջեւ բաց էին, որոնք
 առատուրը տակնուվրայ կ'ընէին եւ բնակիչները բռնե-
 լով՝ զերի կը տանէին: Աւստրիական երկիրներուն սահ-
 մաններուն վրայ նոյն Օսմանեանք գրեթէ միշտ զէն-
 քերնին ձեռուրնին կը կենային եւ կէս լուսինը Ալեւն-
 նայի աշտարակներուն վրայ կանգնելու բաղձանքով
 կ'եռային: Ամէն տեղէն աւելի վտանգ կար Գերմանիայի
 մէջ, ուր որ նորազանգ իշխաններն ու ժողովուրդները
 գրեթէ յայանապէս կայսեր դէմ դուրս քաշած էին:
 Գարձեալ Աարոյս Ե. ստակի կողմանէ միշտ նեղու-
 թեան մէջ գտնուելով, զօրաց թոշակը գրեթէ երբեք
 կարգաւորեալ կերպով չէր վճարուեր, որով եւ նոյն
 զօրաց վրայ չէր կրնար կատարեալ վստահ ըլլալ:
 Ասոր հակառակ Գաղղիայի այնպէս աղէկ կենդրոնա-
 ցած իշխանութիւնը չէ թէ միայն գրեթէ առանց շա-
 փաւորութեան Փրանկիսկոսին ձեռքն էր, հապա նաեւ
 ինք օտար վարձկանազօրու տեղ՝ աղղային յատուկ հե-
 տեւակ զօրք ունենալով, մեծ զօրութիւն ստացած էր:
 Ի վերայ այսր ամենայնի ինք ալ իր նախորդին կարգա-
 ւորեալ անասութիւնը յառաջ շտանելով, մանաւանդ
 թէ շուայելով, գրամական նեղութենէ ամէն ատեն
 ազատ չէր:

24. Հենրիկոս Ը. և Երկու ոսոխներուն մէջ իր ունեցած դիրքը: Ասանկով որչափ որ երկու վեհապետաց զօրութիւնն արտաբուստ անհաւասար ալ երեւար, իրենց մէջ հաւասարակշռութիւն մը կը կազմէր իրենց ներքին հանդամանքը, որով և անանկ կը համարուէր որ եթէ մէջերնին կոխ մը փրթելու բնայ, անիկաց պէտք է որ յաղթէ, որն որ Անդղիայի Հենրիկոս թագաւորն իր կողմը կը վաստակի: Աս կարծիքն անով աւելի կ'արդարանար, որ նոյն վեհապետն իրեն նշանարան բրած էր աս խօսքը թէ «Անիկաց տէր է զորն որ ևս կը պաշտպանեմ», Երկու ոսոխք ալ աս բանս ճանչնալով, մեծապէս կը ջանային զինքն իրենց կողմը շահելու: Քիչ մը յառաջ Փրանկիսկոս Ա. Հենրիկոս Ը-ին հետ Լոնտոնի գաշինքը դրած էր (1518, Հոկտ. 4), որով Անդղիայուց ձեռքէն Գուռնէ առած էր, անոր գիւմարը 600,000 թագակիր վճարելով, միանգամայն որոշելով որ իր թագաժառանգ իշխանը՝ Հենրիկոսին Մարիամ աղջկան հետ կարգուի: Մէջերնին հաստատուած բարեկամութիւնն աւելի տեւական բնելու համար, խօսք մէկ բրած էին որ մօտ առնենքը մեկտեղ տեսնուին: Աս բանս երկու տարի վերջը զլուի հանեցին. Գաղղիայի մէջ երկուքին ստացուածոց սահմաններուն վրայ իրարու հետ տեսնուեցան ու 18 օր մեկտեղ անցուցին (1520, Յունիս): Կարօրս ձեռքէն եկածին շափ նոյն տեսութիւնը խափանելու ջանալէն ետեւ, անոր աղղեցութիւնը նուազեցրնելու համար՝ քիչ մը յառաջ Հենրիկոսին պղծելութիւն մ'ըրտու (1520, Մայ.), որուն մէջ նոյն վեհապետին Ուլրի պաշտօնեան բոլորովին իր կողմը վաստակեցաւ: Հիմակ ալ Հենրիկոս՝ Փրանկիսկոսին հետ տեսնուելէն ետեւ, կայսեր պղծելութեան փոխարէն՝ Ստորին նահանգաց մէջ անոր դնաց. վերջէն մէյ մ'ալ Գալէի մէջ տեսնուեցան, և Կարօրս խօսք տալով որ իր ու Փրանկիսկոսի մէջ ելած ամէն ինդիրներն անոր որոշման տակ կը ձգէ, զինքը բոլորովին իրեն հետ կապեց:

25. Առաջին պատերազմ: Գաղղիացիք Իտալիայէն կը մերժուին: Ըրդ Փրանկիսկոս ու Կարոլոս ասանկ հանգամանաց մէջ զանուելով եւ իրենց մէջ ոտխուժեան ու դրդուութեան առիթներն անպակաս բլաբով, շէին կրնար երկայն ատեն իրարու հետ խաղաղութեամբ մնալ: Իրօք ալ քիչ մը ետքը (1521) մէջերնին առաջին պատերազմը սկսաւ: Երկու կողմանէ ասոր տրուած պատճառներուն զլխաւորներն ասոնք են. Փրանկիսկոս Նաւարրա ետ առնուլ եւ Նէապոլսոյ վրայ ունեցած իրաւունքներն ու պահանջումներն արժեցրնել կ'ուզէր: Իսկ Կարոլոս Միլանի վրայ պահանջմունք կ'ընէր, բնելով որ Գերմանական պետութեան աւատային տէրութիւն է. դարձեալ Լուզովիկոս ԺԱ.ին իրեն սեպհականաձ Պուրկունտիայի դքսութիւնը կը պահանջէր: Կարոլոսին կողմն էին Անգղիայի Հենրիկոս Ը. Թագաւորը՝ ինչպէս տեսանք, ու Լեւոն քահանայապետը. իսկ Փրանկիսկոսի կողմը՝ Աննետացիք եւ Հելլենտացիք՝ որոնց հետ նոր դաշինք դրած էր (1521, Մայ. 7): — Պատերազմի բախտն ու յաղթութիւնը շատ անգամ փոխուելէն ետեւ, վերջապէս Սպանիացիք յաղթող զանուեցան: Գաղղիացիք Նաւարրայի վրայ զունդ մը խաւրեցին, որն որ 15 օրուան մէջ բոլոր երկրին տիրեց եւ Բամբելունայի առջեւ հասաւ. բայց հոն տրուած ճակատուն մէջ յաղթուելով (1521, Յունիս 30), Նաւարրան անանկ շուտով կորորնցուց՝ ինչպէս որ ձեռք անցուցած էր: Պատերազմը Ստորին նահանգներուն եւ Իտալիայի մէջ ալ սկսաւ: Նատուաի Հենրիկոս կամսն ու Պրապանդի կուսակալը Գաղղիացիները Ստորին նահանգներէն մերժելէն ետեւ, Գաղղիայի վրայ յարձակում բրաւ, բայց ինք ալ ետ քշուեցաւ եւ Փրանկիսկոս Ա. անձամբ Ստորին նահանգները մտաւ: Իսկ Իտալիայի մէջ Գաղղիացոց բանը խիստ անյաջող զնաց. Կարոլոսի զօրքերը Միլանի դքսութիւնն ու Բարմա եւ Բիաչենցա առին ու Գաղղիացիները ետ քշեցին (1521): Կայտըրը գոնէ անուամբ՝

Միլանի դքսութիւնն, իբրև պետութեան աւատային տէրութիւն, Փրանկիսիոս Բ. Սֆորցային աուաւ, որն որ Լուզովիկոս Մորտին երկրորդ որդին էր. իսկ Բարմա եւ Բիաչենցա քահանայապետին դարձուց: Նոյն միջոցին Լեւոն Ժ. մեռնելով (1521, Դեկտ. 1), տեղն ընտրուեցաւ Ազրիանոս Զ. (1522, Յունու. 9) խաղաղասէր ու իմաստուն քահանայապետը, որն որ իսկզբան չէզոք կեցաւ ու ամէն կերպով ջանաց որ խաղաղութիւն ըլլայ. բայց ետքէն սկսաւ կայսեր կողմը բռնել: Բիչ մը վերջը Գաղղիացիք Միլան եւս առնելու համար նոյն քաղաքին վրայ քալած ատեննին, ստիպեցան Պիզոզոզոյի քով ճակատ տալ (1522, Ապր. 22) ու չարաչար յաղթուեցան, որով հարկադրեցան Լոմպարտիա թողուլ, եւ ետքը ձեռքերնին մնացած քանի մ'ամբոյններն ալ կորսընցընելով՝ Իտալիայէն բոլորովին հեռացան:

26. Պատերազմին շարունակութիւնը: Բաւիայի յաղթութիւնն ու Մատրիտի խաղաղութիւնը: Երկրորդ տարին Վենետացիք կարողոս Ե.ին ու Միլանի դքսին հետ դաշնակցութիւն ըրին (1523, Յունիս). քիչ մը ետքն ալ Իտալիան Գաղղիացիներէն պաշտպանելու համար մեծ նիզակակցութիւն մը դրուեցաւ կայսեր, Անգղիայի թագաւորին, Փերդինանդ արքիդքսին, Միլանի դքսին եւ Վենետիկի, Փլորենտիայի, Ճենուայի, Լուզոզայի ու Սիէնայի տէրութեանց մէջ (1523. Օգոս. 3): Գաղղիացիք Ալպեան լեռներն անցան եւ նիզակակցաց զօրքը Գեստինոյի վրայէն փախցուցին (1523, Սեպտ. 14). բայց Միլան քաղաքը չկրցան առնուլ: Պրոտպէր Գոլըննա՝ նոյն քաղաքը պաշտպանողն ու նիզակակցաց զօրավարը մեռնելէն ետեւ (Դեկտ. 30), անոր տեղն անցաւ կարոլոս Գ. Պուրպոնի դուքսը, որն որ Գաղղիայի արքունիքէն նախատինք մը կրած ըլլալով, կարողոս Ե.ին ծառայութեան մէջ մտած էր: Աս հրամանատարը կրցաւ Գաղղիացիները նորէն Գեստինոյէն անդին անցընել (1524, Ապր.). եւ նոյն առթիւն

մէջ ինկաւ Գաղղիայի Պայտը հռչակաւոր զօրագետը, որն որ հասարակօրէն Աներկիւղ ու անսողիւտ առպետ կը կոչուի: Կայտերականք Պուրպոնի դքսին հրամանաւ տարութեամբ Բրովանս մտան. բայց բաներնին խիստ անյաջող գնաց, անանկ որ հազիւ կրցան ետ դառնալ (1524, Յուլ. — Սեպտ.): Փրանկիսկոս Ա. նոյն կողմերը կայտերականաց ետեւէն շինկաւ, հասցաւ ուղեց Իտալիայի վրայ նոր արշաւանք մ'ընել: Անձամբ Ալպեան լեռներն անցաւ ու Միլան մտաւ (Հոկտ. 26), եւ երկու օր վերջը Բաւիա քաղաքը պաշարեց: Աս պաշարման ժամանակ՝ որ բոլոր ձմեռը տեւեց, Կղեմէս Է. քահանայապետը, որն որ Ագրիանոս Զին յաջորդած էր (1523, Նոյեմ. 18), եւ Փլորենտիա ու Վենետիկ Գաղղիայի հետ չէզոքութեան դաշինք գրին: Թեպէտ ասով կայտերականաց վիճակը խիստ գէշցաւ, բայց ետքը օգնութիւն ընդունելով, պաշարողաց վրայ յարձակում բրին ու Բաւիայի նշանաւոր ճակատը վաստակեցան (1525, Փետր. 24), որուն մէջ Փրանկիսկոս Ա. դերի ինկաւ ու Մատրիա տարուեցաւ: — Այնպէս կ'երեւար որ աս յաղթութեամբ Կարօլոս չէ թէ միայն Իտալիայի տէր, հասցաւ նաեւ բոլոր Եւրոպայի իրաւունքներ եղած ըլլայ. բայց եւ ոչ Իտալիայի վրայ ստացած տերութիւնը հաստատուն բան մըն էր: Իր բանակին ներքին վիճակն ու իտալական տերութեանց նախանձը՝ իր մեծամեծ զաղափարներուն կատարումն արգելեցին: Փրանկիսկոսի հետ դրած Մատրիա խաղաղութեան դաշանց մէջ (1526, Յունու. 14) հազիւ կրցաւ նոյն թագաւորէն խոստումներ ընդունիլ, որոնց դէմ անկապ արդէն յառաջագոյն ի ծածուկ բողբոսած էր, ըսելով թէ ազատութիւն չունենալուն համար՝ տուած խոստումներն ու դրած դաշինքն ամենեւին զօրութիւն չունին: Մատրիաի դաշանց պայմանները կամ Փրանկիսկոսի տուած խոստումներն ասոնք էին: 1. Իտալիայի վրայ ունեցած ամէն իրաւունքներէն կը հրաժարէր: 2. Կը խոստանար որ Փիանորայի ու Արդուայի վեհա-

պետութեան վրայ ամենեւին պահանջմանք չ'ընէր: 3. Պարկունտիայի դքսութիւնը կարսլուսին թող կու տար: Գ. Երկու երիցազոյն որդիքը պատանդ կու տար եւ կայսեր Էլէննորա քրոջը հետ կարգուիլ կը խոստանար: Ասոնք հաստատուն պահելու երդում ընելէն եւ իր պատուոյն վրայ խոստանալէն ետեւ՝ որ եթէ շիպահներ, նորէն իրբեւ զերի ետ կը դառնայ, ազատութիւնն ընդունեցաւ (1526, Մարտ 18):

27. Գոնեազի նիզակակցութիւն: Կայսերականը Հոռոմ կ'առնուն: Ըստ պայմաններէն արդէն ինք իրմէ կը հետեւէր որ քիչ մը ետքը երկու իշխաններուն մէջ պատերազմը նորէն պիտի սկսի: Փրանկիսկոս Ա. ազատելուն պէս, Վենետացիք ու քահանայապետն իրեն զեապաններ խաւրեցին՝ զինքը շնորհաւորելու համար. բայց նոյն զեապաններն իրեն հետ Գոնեազի Արբազան նիզակակցութիւնն բրին (1526, Մայ. 22), որուն մէջ ետքէն Միլանի Փրանկիսկոս Բ. դուքսն ալ մտաւ: Նոյն նիզակակցութեան վախճանն էր՝ Իտալիայի մէջէն օտարաց իշխանութիւնը բոլորովին վերջընել. որովհետեւ կ'ուզէին Նեապոլոյ թագաւորութիւնը Սպանիացոց ձեռքէն առնուլ ու Իտալացի իշխանի մը տալ. իսկ Փրանկիսկոս Ա. Միլանի վրայ ունեցած իրաւունքէն բոլորովին կը հրաժարէր: Նիզակակիցք մեծ խոստումներով զՀենրիկոս Ը. ալ իրենց հետ միաբանեցին: Թեպէտ երկու տէրութիւնք կերպապէս պատերազմի սկսած չէին, բայց կայսերականք քիչ մը ետքը Միլան առին (1526, Յուլ. 24), եւ քահանայապետն իրենց հետ շորս ամուսան զինազաղար ընելու ստիպեցաւ (Սեպտ.): Սակայն ասոնք բլալով ալ, կայսերական բանակը՝ զԻտաւորաբար ստակի կողմանէ՝ նեղութեան մէջ էր. անանկ որ զօրքերը յայտնապէս ապստամբեցան: Եւ որովհետեւ իրենց մէջէն խիստ շատերը նորազանդ էին, անոր համար Հոռոմի վրայ յարձակում ընել կը պահանջէին: Պարպոնի կարոյոս դուքսն իրենց աս անպատշաճ պահանջման զիջանելով, զօրքը նոյն մայրաքաղաքը

գիւրութեամբ առաւ (1527, Մայ. 6). Եւ որովհետեւ հրամանատարը յարձակման ատեն մեռած էր, զինուորը շարաշար աւարառութիւն ու անլուր շարագործութիւններ բրին, որոնց վրայ բոլոր քրիստոնէութիւնը գայթակղեցաւ ու վշտացաւ: Պուրպոնին յաջորդը Փիլիպպերդ Շալունեան՝ Օրանիայի իշխանը զքահանայապետը հրեշտակի բերդին մէջ երկայն ատեն պաշարեց ու վերջապէս անձնատուր ըլլալու տոխպեց (Յունիս 5): Աղեմէս Է. անկէ վերջն ալ վեց ամիս իբրեւ գերի կամ բանտարկեալ մնալէն ետեւ, հազիւ քանի մը գերմանացի զօրապետաց զազտնի գործակցութեամբը կրցաւ ազատիլ ու դաշնակցաց բանակն երթալ (1527, Գեկտ. 9):

28. Երկրորդ պատերազմ: Գանապրէի խաղաղութիւն: Նոյն բանակին ան գիւրը դանուելուն պատճառն առ էր, որ քահանայապետին բանտարկութիւնը՝ կարողութիւն եւ Փրանկիսկոսի մէջ բուն երկրորդ պատերազմին սկսելուն առիթ առնուելով, Գաղղիացիք Իտալիա զօրք խաւրած էին (1527, Օգոստ.), որն որ դէպի Հռոմ կը յառաջանար. նիզակակիցք ալ բանակ մը հանած էին: Գաղղիացւոց բանակը Լոզրէք զօրապետին հրամանատարութեան տակ եկաւ Ճենուարոնեց, Ալենտացոց ու Միլանցոց հետ միացաւ եւ Բաւիա առաւ. իրեն հետ միացան նաեւ Ֆերրարայի ու Մանդուայի դքսերը, ինչպէս նաեւ Փլորենտիայի հասարակապետութիւնը՝ ուսկից որ արդէն յառաջ (Մայիս) Մետիչինները մերժուած էին: Ըսանկով գրեթէ բոլոր Իտալացիք Գաղղիացւոց հետ միացած էին, եւ երբ որ քահանայապետն ալ նիզակակցաց բանակն եկաւ, ալ ան ատեն իբրք Գաղղիայի եւ Անգղիայի անուամբ՝ կայսեր զէմ պատերազմ հրատարակուեցաւ (1528, Յունու.): Գաղղիացիք շուտ մը Նէապոլոց վրայ քաղեցին եւ նոյն քաղաքը պաշարեցին (Ապրիլի վերջը)՝ Հոն Անգրէաս Տորիա Ճենուայի դիւցապնին եղբորորդին Ֆիլիպինոյ Տորիա, Սալեանցի փառաւոր յաղթութիւնն ըրաւ

(Ապր. 29) եւ սպանիական նաւատորմին յաղթեց, որն որ պաշարելոց ուտելիք մատակարարել կ'ուզէր: Բայց Վաղղիացիք անյաջող ելք ունեցան, որովհետեւ թէ անձնական զրկանքներով եւ թէ ճկնուացւոց իրաւունքները չյարդեւով, պատճառ տուին Անդր. Տորիային իրենցմէ բաժնուելուն եւ կայսեր կողմն անցնելուն: Արդ նոյն զիւցազն պաշարելոց ուտելիք մատակարարեց եւ Վաղղիացւոց բանակին մէջ սով ձգեց, որն որ արդէն ժանտախտով ակարացած բլլալով՝ անձնատուր եղաւ, եւ գէշ նայուելով՝ զբեթէ բոլորովին ջնջուեցաւ (Օգոստ. 16): Իսկ նիզակակցաց զօրքը՝ որ Միլան պաշարած էր, նոյն քաղաքն ալ չկրցաւ աւնուլ: Արդէն յառաջագոյն խաղաղութեան վրայ խօսակցելու սկսած էին եւ զինադադար եղած էր (1528, Յուլ.): Աերջուպէս տարի մը ետքը Վանապրէի խաղաղութիւնն եղաւ (1529, Օգոստ. 5), որն որ հասարակօրէն Տիկնանց խաղաղութիւն կը կոչուի, վասն զի բանակցողներն էին Կարոլոսին Մարգարիտա Տորաբոլը եւ Փրանկիսկոսին Լուիզա մայրը: Աս դաշինքը գրուեցաւ բուն Վաղղիայի եւ Սպանիայի մէջ, եւ ետքը մէջը մտաւ նաեւ Հենրիկոս Ա. ալ. իսկ քահանայապետն արդէն յառաջ Կարոլոսի հետ առանձին Պարսելունայի խաղաղութիւնն բրած էր (Յունիս 20): Վանապրէի խաղաղութեան դաշինքով Փրանկիսկոս Ա. բոլոր Իտալիայէն կամ Իտալիայի վրայ ունեցած իրաւունքէն կը հրաժարէր. իսկ Կարոլոս Ե. միայն կը խոստանար որ առ ժամն Պուրկունտիայի վրայ ունեցած իրաւունքն արժեքներելու ետեւէ չիյնայ, եւ Փրանկիսկոսին երկու որդիքը՝ զորոնք պատանդ առած էր, երկու միլիոն թագակրի փրկանքով ազատ թողաւ:

29. Աս պատերազմին հետեւութիւնները: Աս երկրորդ պատերազմու Կարոլոսի իշխանութիւնն Իտալիայի մէջ ընդամբձակեցաւ. աւելի եւս հաստատուեցաւ քահանայապետին հետ Պարնիայի մէջ տեսնուելովն ու հոն անոր ձեռքովը կայսր պսակուելովը (1530, Փետր.

24): Նոյն պատերազմն ասկից զտա՝ Իտալիայի քանի մը տերութեանց վրայ ալ մեծ ազդեցութիւն ունեցաւ: Փլորենտիայի հասարակապետութիւնը՝ ժառանգական դքսութեան դարձաւ, կայսեր ու քահանայապետին մէջ գրուած դաշինքով մը, որով յեղափոխութեամբ մերժուած Մետիչեան տունը (1527, Մայ.) նորէն իր իշխանութեան մէջ կը հաստատուէր, եւ Աղէքսանդր Մետիչի՝ առաջին ժառանգական դուքս կանուանէր (1530): Փլորենտացիք տասնումէկ ամիս իրենց ազատութեան համար պատերազմելէն ու դէմ դնելէն ետեւ, ստիպեցան զլուխ ծաւլ եւ նոյն որոշմունքն ընդունել: Ճենուայի մէջ ալ ցեղական ազնուապետութիւն մը հաստատուեցաւ: Աս բանս զլուխ հանողն էր Անդրէաս Տորիա, որն որ Նեապոլոս պաշարման վերջուելէն ետեւ, իր հայրենիքն եկաւ, ամուսան մը մէջ Գաղղիացիները սահմաններէն մերժեց (1528, Հոկտ.), եւ վերոյիշեալ ազնուապետական սահմանադրութիւնը դնելով, տերութեան անկախութեան ու ինքնակացութեան մեծ հաստատութիւն տուաւ: Կայսրը՝ քահանայապետին միջնորդութեան համար՝ Միլանի Փրանկիսկոս Բ. Սֆորցա դուքսն իր աստիճանին մէջ նորէն հաստատեց:

30. Օսմանեանք Հունգարիայի մէջ: Մէկ կողմանէ հարաւային Եւրոպայի երկու արեւմտեան գլխաւոր տերութիւնք իրարու հետ պատերազմած տակն, մէկալ կողմանէ արեւելք ալ սո պատերազմին մէջ մասնակից բլլալու սկսաւ: Սուլթան Սիւլէյման Բ. գահ ելլելուն պէս, իր բոլոր մտադրութիւնն՝ Եւրոպայի վրայ դարձուց (10): Իր բանակները՝ Պելկրաս առնելէն (1521) քանի մը տարի ետքը, Հունգարիայի վրայ յարձակեցան: Մոհաշի ճակատուն մէջ Հունգարացիք շարաշար յաղթուեցան եւ իրենց Լուդովիկոս Բ. թագաւորը (Նախաշ. 52) փախչելու տակն մեռաւ (1526, Օգոստ. 29): Նոյն թագաւորին օրինաւոր յաջորդներն էին իր Աննա քոյրն ու անոր Փերդինանդ ամուսինը՝

Աւստրիայի արքիդուքսն ու Կարոլուս Ե-ին եղբայրը : Ի-
 ըզք ալ Հունգարացւոց խորհրդանոցը ժողովուեցաւ եւ
 իրեն թագաւոր ընտրեց զՓերդինանդ (Նոյեմ. 26),
 որն որ տարի մը վերջը պսակուեցաւ ալ (1527, Նոյեմ.
 3) : Բայց Դրանսիականիայի Յովհաննէս Սաբուլեա կու-
 սակալը, որն որ նոյն թագաւորութեան աչք անկած
 էր, եւ Լուզովիկոսին օգնութեան գալու համար զո-
 բաւոր բանակ մը ժողված բլլալով՝ կը յուսար որ անով
 իր բաղձանքը դլուխ կրնայ տանիլ, Փերդինանդէն շատ
 յառաջ ինք զինքը Հունգարիայի թագաւոր պսակել
 տուաւ (1526, Նոյեմ. 11) : Ասով իր եւ օրինաւոր
 թագաւորին մէջ պատերազմ բացուեցաւ. եւ Սաբու-
 լեա Դոզայի քով Փերդինանդին զօրքէն յաղթուելով,
 Սիւլէյմանին դիմեց ու հետը գաշինք մը դրաւ (1528,
 Փետր. 29), որուն զօրութեամբ ինք Օսմանեանց
 աւատապետութեան տակ կը մտնէր : Ասոնք գրեթէ
 բոլոր Հունգարիայի տիրելէն ետեւ, եկան նաեւ Վիեն-
 նա պաշարեցին (1529, Սեպտ. 26), բայց պարտւե-
 լան ու քսան օրէն ետքը ետ դարձան : Ասոր հակառակ
 վարի կողմերը յաջողութիւն գտնելով, Մոլտաիայի
 տիրեցին : Բայց Փերդինանդ ալ Տաճկաց կողմանէ եր-
 կայն ժամանակ հանգիստ չմնաց : Վրան երեք տարի
 շանցած՝ Սիւլէյման ահագին զօրքով Հունգարիա յար-
 ձակեցաւ եւ Կիւնս պզտիկ ամրոցը պաշարեց (1532,
 Օգոստ.) : Եւ թէպէտ մէջի սակաւաթիւ զօրաց դիւց-
 ազնական քաջութեամբը՝ չկրցաւ առնուլ. բայց եւ այն-
 պէս Ստիրիայի վրայէն սկսաւ յառաջ քալել : Ան ար-
 շաւանքին վերջ տուաւ Փերդինանդին ու Սիւլէյմանին
 մէջ դրուած խաղաղութեան գաշինքը (1533, Յուլ.) :
 Իսկ Սաբուլեային հետ հազիւ հինգ տարի ետքը կրցաւ
 Փերդինանդ իրաւախոհութեան գաշինք գնել (33) :

31. Օսմանեանց ծովական զօրութիւնը : Ափրի-
 կէի ծովահէն տէրութիւնները : Արնայ ըսուիլ որ Օս-
 մանեանց ծովային զօրութիւնը՝ ցամաքային զօրութե-
 նէն աւելի վտանգաւոր էր արեւմտեան տէրութեանց :

Օսմանեանք Հոռոզս կղզին, սաստիկ կռուէ ու պաշարմանէ ետեւ, Յովհաննիսեան ասպետաց ձեռքէն առնելով (1522, Գեկտ. 20), Միջերկրական ծովուն տէրութիւնը ձեռուրնին անցուցին, որով ալ Խաչիկայի եւ Սպանիայի ծովեզրներն իրենց առջեւը բացուեցան: Եւ թէպէտ Կարսըս կայսրը քանի մը տարի վերջը՝ նէսպորոյ իշխանութեան տակ եղող ժայռոտ Մաղա կղզին եւ Տրիպոլիս նոյն ասպետներուն տուաւ (1530), ան պայմանաւ՝ որ Օսմանեանց դէմ պատերազմին, բայց ասիկայ անոնց զորութեան դէմ խիստ տկար պատուար մըն էր: Մանաւանդ որ նոյն ատենները, Գրան պաշտպանութեան տակ, Ափրիկէի ծովեզրները քանի մը տէրութիւնք կանգնուած էին, որոնք իրենք զիրենք բոլորովին ծովահէնութեան տուին: — Մինչեւ նոյն ատենները Ափրիկէի հիւսիսային ծովեզրներն ըստ մասին Արաբացւոց եւ ըստ մասին Սպանիացւոց ձեռքն էին. բայց Հորուզ եւ Խայրէտաին ծովահէններն ան կողմերը տիրելու սկսելով, քիչ մը ետքը Գրան իշխանութեան տակ մտան: Հորուզ Ալճէրիի տիրեց (1517). երկրորդ տարին իրեն յաջորդեց իր Խայրէտաին եզրայրը, որն որ ինք զինքը կամաւ Գրան իշխանութեան տակ ձգելով, Օսմանեանց նաւատորմին վերին հրամանատար եղաւ եւ ետքը Գունուզի ալ տիրեց (1531): Ստոյգ է Կարսըս Ե. հան արշաւանք մ'ընելով, նոյն վերջին տէրութիւնն իրենց ձեռքէն առաւ ու 20,000 քրիստոնեայ զերիներու ազատութիւն տուաւ (1535). բայց ասով ծովահէններուն զորութիւնը շոշոնչացաւ, եւ ոչ իսկ երեւելապէս նուազեցաւ. մանաւանդ որ ետքէն Տրակուզ անունով ուրիշ ծովահէն մը, որն որ Խայրէտաինին յաջորդած էր, Յովհաննիսեանց ձեռքէն Տրիպոլիս ալ առաւ (1551), նոյն իսկ Գունուզի ալ իրենց ձեռքն անցաւ: Եւ որովհետեւ արդէն յառաջագոյն Եզիպատս ալ իրենց իշխանութեան տակ մտած էր (1517), ասանկով հիւսիսային Ափրիկէի բոլոր ծովեզրներն իրենց ձեռքն էին:

32. Երրորդ պատերազմ: Նիցցայի գինադադար: Նոյն տոկենները դարձեալ երրորդ անգամ պատերազմ բացուեցաւ. Կարսլուս Ե.ին եւ Փրանկիսկոս Ա.ին մէջ (1535): Ասոր պատճառն ալ Գանպրէի խաղաղութեան դաշանց մէջ բովանդակուած էր, որովհետեւ Փրանկիսկոս Իտալիայի եւ Ճանաւանդ Միլանի կորստեան վրայ չէր կրնար միտթարուիլ: Աս անգամ պատերազմն ուրիշ անգամներէն աւելի յաջողութեամբ գլուխ տանելու համար՝ Գաղղիացիք Օսմանեանց հետ դաշինք դրին (1535, Փետր.), որն որ խկզրան պարզապէս վաճառականութեան դաշինք մը կը կարծուէր, բայց շուտ մ'իմացուեցաւ որ Կարսլուս Ե.ին դէմ քաղաքական դաշնաւորութիւն է: Ասկից զատ Գաղղիացի թագաւորը շատ աշխատեցաւ ուրիշ դաշնակիցներ գտնելու. բայց իր բոլոր ջանքը գրեթէ պարսպ ելաւ. վասն զի Ղենրիկոս Ը. չկրցաւ իր կողմը վաստակիլ, Գերմանիայի իշխաններէն ալ օգուտ մը չտեսաւ, իսկ Կղեմէս Է. քահանայապետը, զորն որ իր կողմը շահելու համար՝ Լաւրենտ Մետիչիին Կատարինէ աղջիկն իր երկրորդ որդւոյն՝ Օրլէանի Հենրիկոս դքսին հետ կարգել տուած էր, քիչ մը վերջը մեռաւ (1534, Սեպտ. 25): Սակայն եւ այնպէս ինք միտքը դրած պատերազմը սկսելով, կայսրը յաղթութեամբ Գունուղի արշաւանքէն դարձած ատեն, Գաղղիացիք արդէն Սաւոյայի վրայ յարձակած ու առած էին (1535, դարեան), որուն Կարսլուս Գ. դուքսը կայսեր հետ խնամութեամբ ու դաշնաւորութեամբ կապուած էր: Փրանկիսկոս Ա. ան միջոցին աւելի եւս զրգուեցաւ պատերազմը յառաջ վարելու, որովհետեւ Փրանկիսկոս Բ. Սֆորցային անժառանգ մեռնելովը (1535, Հոկտ. 24), կայսրն իրեն առաւ Միլանի դքսութիւնը, զորն որ ինք կ'ուզէր իր Հենրիկոս որդւոյն տալ: — Գաղղիացիք իրենց արշաւանքը յառաջ տանելով, Բիէմանդի մեծ մասին տիրեցին (1536, դարեան). իսկ բուն Լոմպարտիայի մէջ չկրցան բան մ'ընել: Կայսրը մեկալ

կողմանէ Գաղղիայի Բրովանս դաւառը յարձակում
 մ'ըրաւ (1536, Օգոստ.), որն որ Մանմարանտի սպա-
 րապետին՝ նոյն կողմերն ամացի անապատ դարձրնե-
 լովն ու միայն պաշտպանողական պատերազմ ընելովը՝
 անօգուտ ելաւ: Ասիկ վերջը Բիեմանդի եւ Բիզարտիայի
 մէջ եղած կռիւներն որոշիչ հետեւութիւն մը չունե-
 ցան: — Պօղոս Գ. քահանայապետը, որն որ Աղեմէս
 էին յաջորդած էր (1534), կը ջանար զիրենք հաշ-
 տեցրնել կամ գոնէ մէջերնին զինադադար ընել տալ:
 Աս բանս անով աւելի դիւրաւ յաջողեցաւ, որ Սիւ-
 լէյման մէկ կողմանէ Հունգարիայի մէջ կը յառաջանար,
 մէկալ կողմանէ ալ իր նաւատորմիդն Խտալիայի ծով-
 եզրները կ'աւարէր: Քահանայապետը, կայսրն ու թա-
 գաւորը՝ Նիցցայի մէջ խօսակցելով, հոն երկու վերջին-
 ները տասը տարւան զինադադար բրին (1538, Յունիս
 18): Ասոր պայմաններն էին՝ որ իւրաքանչիւր դր ան
 ստեն ձեռքն ունեցածները պահէ, իսկ իրենց իրաւ-
 ունքը քահանայապետը քննէ: Ասանկով Փրանկիսկոսի
 ձեռքը մնաց գրեթէ բոլոր Բիեմանդէ ու Սաուցա, իսկ
 Կարոլոսի ձեռքը՝ Միլան:

33. Զինադադարին շուտով քակուելուն առիթ-
 ները: Օսմանեանց հետ պատերազմ: Իւաներն աս
 վիճակի մէջ ըլլալով, զարմանք չէ որ՝ թէպէտ ըստ
 արտաքին երեւութիւն երկու վեհապետք իրարու հետ
 վտաահութեամբ ու մտերմութեամբ կը վարուէին,
 մինչեւ Կարոլոս՝ Փրանկիսկոսին հրախրելովը՝ Գաղ-
 ղիայէն ու Փարիզէն անցաւ (1540, Յունու.), Ստո-
 բին նահանգները գնաց, ուր Ալենդի մէջ ապստամբու-
 թիւն մ'ելած էր, ի վերայ պար ամենայնի տասը տա-
 րւան զինադադարը՝ հազիւ երեք տարի տեւեց: Բուն
 լուցկին միշտ կը վառէր, եւ մէջերնին եղած ստելու-
 թիւնն աւելի սաստկացաւ, երբ որ կայսրն իր Փիլիպ-
 պոս որդին Միլանի դուքս ըրաւ (1540, Հոկտ. 11),
 որով Փրանկիսկոսին՝ նոյն դքսութիւնն իր որդիքներէն
 մէկուն տալու ակնկալութիւնը կ'ոչընչանար: Եւ եթէ

զինադադարն երեք տարի ալ տեւեց նէ, ասոր պատճառն ան էր՝ որ երկու կողմանէ ալ ստիպուած էին խաղաղութիւնը պահելու, որովհետեւ Փրանկիսկոսին՝ թէ Անգղիայի եւ թէ Գրան Տեա ունեցած կապակցութիւնը քակուած էր. իսկ Աարոլտ ելեւմտից նկատմամբ նեղութեան մէջ դանուելէն զատ, մէկ կողմանէ Գերմանիայի ներքին շփոթութիւններով զբաղած էր, մէկալ կողմանէ ալ Օսմանեանց Տեա ունեցած պատերազմով: Օսմանեանց Տեա եղած պատերազմը՝ զլիսաորաբար երկու պատճառէ կը ծագէր: Ա. Մէկ պատճառն էր Հունգարիայի իրողութիւնները: Ապսեր եղբորը՝ Փերզինանդ թագաւորին եւ Յովհաննէս Սարլեային մէջ քիչ մը յառաջ իրաւախոհութիւն մ'եղած էր (1538, Փետր. 24), որուն զօրութեամբ՝ Փերզինանդ Հունգարիայի կէսն իրմէ պիտի ժառանգէր, որովհետեւ անիկայ զուակ շունէր: Բայց մեռնելէն (1540, Յուլ. 21) քիչ մը յառաջ Սարլեա որդի մ'ունեցաւ, զորն որ իրեն ժառանգ անուանեց եւ Սիւլէյման իրբեւ պաշտպան՝ իր հովանաւորութեան տակ առաւ: Սուլթանը Գերմանացիները ճակատի մը մէջ յաղթելէն ետեւ, Օֆէն մայրաքաղաքին ու գրեթէ բոլոր Հունգարիայի տիրեց: Բ. Ապսեր Օսմանեանց Տեա բրած պատերազմին երկրորդ պատճառն էր Ափրիկէի ծովահէն տերութիւնները եւ առանձինն Ալճերի: Ասոր համար կայսրը նոյն կողմերն երկրորդ արշաւանք մ'ալ բրաւ (1541), որն որ առաջնոյն պէս յաջողութիւն չունեցաւ. վասն զի թէպէտ իր նաւերն Ալճերի հասան, բայց զարհուրելի մրրիկներու պատահելով եւ ճախճախուտ գեանի վրայ թնամիներէն յարձակում կրելով, մեծ կորստով ստիպեցաւ ետ քաշուիլ:

34. Չորրորդ պատերազմ: Գրեքիի խաղաղութեան գաշինքը: Փրանկիսկոս Ա. իր ստիսին դժբախտութիւններէն հոգի առնելով, կ'ուզէր շորրորդ անգամ պատերազմ սկսիլ, որուն համար Օսմանեանց ու Վենետացւոց Տեա գաշնաւորութիւն ընելու վախճա-

նաւ՝ երկու լիազօր դեպաններ կը խաւրեր: Ասոնց Միւրանի դաւառին մէջ սպանուիլը (1541, Յուլ. 3) առիթ տուաւ պատերազմին իրօք սկսելուն, որն որ առհէզ առաջին երեք անգամէն աւելի բնդարձակ ու մեծ եղաւ. որովհետեւ Փրանկիսկոս չէ թէ միայն Օսմանեանց ու Աննետացւոց հետ դաշնաւորած էր, հապա նաեւ Գլելի դքսին, Գանիայի եւ նոյն իսկ Շուեաթի հետ, թէպէտ երկու վերջին տէրութեանց դաշնաւորութիւնն իրեն օգուտ չբրաւ: Մէկալ կողմանէ ալ կայսրն Անդղիայի Հենրիկոս Ը. թագաւորին հետ դաշնագիր եղած էր, եւ խօսք մէկ բրած էին որ երկուքը մէկտեղ Գաղղիայի վրայ յարձակին ու բոլոր թագաւորութեան տիրելէն ետեւ՝ մէջերնին բաժնեն: Աս դաշնագան դաշնաւորութիւններով, ինչպէս բոնիք, պատերազմն արտաքոյ կարգի ընդարձակութիւն մը ստացաւ: Գաղղիացիք հինգ այլեւայլ բանակներ հանեցին, որոնք Իտալիայի մէջ՝ պաշտպանազական, իսկ Սաօրին նահանգաց եւ Ռուսիլեանի մէջ՝ յարձակողական պատերազմ պիտ'որ ընէին: Բայց ասոնք մնայուն յաջութիւն մը չունեցան (1542 — 1543): Նոյն միջոցին Օսմանեանք Հունդարիայի մնացած մասերուն ալ տիրելով, Աւստրիայի վրայ յարձակեցան. իսկ իրենց նաւատորմիլը Գաղղիացւոց նաւատորմին հետ՝ Նիցցա քաղաքը կը զնդակոծէր: Մէկալ կողմանէ կայսրը, թէպէտ Բիէմնոզէի մէջ Չերիտոլէի քով յաղթուեցաւ (1544, Ապր. 14). ի վերայ այսր ամենայնի Լսթարինդիայի վրայէն Գաղղիա յարձակեցաւ, իսկ Անդղիայի թագաւորը Գալէի վրայէն յարձակում բրաւ (1544, Յունիս — Սեպտ.): Սակայն իրենց բոլոր խորհուրդն ու ջանքը պարտաւ ելաւ. որովհետեւ Կարոլուսին ու Հենրիկոսին մէջ երկպառակութիւն ծագելով, եւ միանգամայն Գերմանիայի ներքին շփոթութիւններն օրէ օր սաստկանալով, կայսրը Փրանկիսկոսի հետ առանձինն Գրեբիի խաղաղութեան դաշինքը գրաւ (1544, Սեպտ. 18): Ասոր պայմանները հետեւեալ-

ներն էին: Փրանկիսկոս թագաւորին երրորդ որդին՝
 Կարոլոս (որն որ Փրանկիսկոս թագաժառանգին մեռ-
 նելէն ու անոր Հենրիկոս եղբորը՝ թագաժառանգ ա-
 նուանելէն ետեւ, Օրլէանի դուքս եղած էր) կայսերա-
 կան տնէ օրիորդի մը հետ կարգուելով, Միլանի դուքս
 բլայ: Աս պարմանն ի դործ չգրուեցաւ, որովհետեւ Օր-
 լէանի դուքսն երկրորդ տարին մեռաւ (1545, Սեպտ.
 8) ու կայսրը նոյն դքսութիւնն իր Փիլիպպոս որդւոյն
 վրայ հաստատեց: Գաշանց մէջ Փրանկիսկոս կը հրա-
 ժարէր Նեապոլոսի վրայ ունեցած իրաւունքէն եւ Գիան-
 տրայի ու Արդուայի աւատապետութենէն. իսկ Կա-
 րոլոս՝ Պուրկանտիայէն: Թէպէտ ասանկով կայսրն ու
 Գաղղիայի թագաւորն իրարու հետ հաշտուեցան. բայց
 Հենրիկոս Ը. սաստիկ դառնացած բլայլով, Գաղղիայի
 զէմ պատերազմը յառաջ կը վարէր, որն որ Անգղիա-
 ցւոց Պուլոյն քաղաքն առնելէն ետեւ (1544), առանց
 երեւելի զէպքի մը երկու տարի ալ (մինչեւ 1546)
 շարունակուեցաւ:

35. Աս պատերազմներուն հետեւութիւնները:
 Գերբիի խաղաղութեամբ վերջացաւ երկու սոսիներ-
 ունն մէջ եւ ընդհանրապէս Իտալիայի պատճառաւ
 եղած պատերազմներու շարքը. որովհետեւ Կարոլոսի
 բոլոր մտադրութիւնը կը զբաւէին Գերմանիայի շփո-
 թութիւնները, իսկ Փրանկիսկոսի խորհուրդներուն վերջ
 տուաւ մահը (1547, Մարտ. 31), որմէ քիչ մը յա-
 ուաջ Անգղիայի Հենրիկոս Ը. թագաւորն ալ մեռած էր
 (1547, Յունու. 28): Ստոյգ է՝ Փրանկիսկոսի որդին
 ու յաջորդը Հենրիկոս Բ. կայսեր հետ զբեթէ հօրը
 պէս զրգուութեան վիճակի մէջ էր. բայց որովհետեւ
 իր բրած պատերազմն աւելի Գերմանիայի շփոթու-
 թիւններէն կը պատճառէր, անոր համար պէտք է որ
 անոր վրայ նորազանգութեան Հաստածին մէջ խօսինք:
 — Կարոլոս Ե-ին ու Փրանկիսկոս Ա-ին մէջ եղած պա-
 տերազմները թէ Գաղղիայի եւ թէ բոլոր Եւրոպայի
 տէրութեանց դուժարութեան համար ծանրակշիւ հե-

տեւութիւններ ունեցան: Ա. Քաղաքացիին հաստարա-
կչութեան դաղափարը՝ զսնէ ըստ գլխաւոր սկզբանց՝
գործնականապէս հաստատուեցաւ. ինչու որ ցամաք
երկրին երկու գլխաւոր տէրութիւնները ալ հիմաց հա-
ասարակչութեան երկու նժարները կը կազմէին: Բ.
Գաղղիացիք Գրան հետ դաշնաւորութիւն ընելով եւ
Անգղիա նոյն պատերազմներուն մէջ մասնակցութիւն
ունենալով, հարաւային Աւրապայի բոլոր տէրութիւն-
ներն իրարու հետ ամէն ժամանակէ աւելի սերտ յա-
րաբերութեանց մէջ մտան: Գ. Թէպէտ Գաղղիա Ի-
տալիայի տիրելու նպատակին շահասու, ի վերայ այսր
ամենայնի իր սահմաններուն ամբողջութիւնը եւ միան-
գամայն իր ինքնակազմութիւնն ու անկախութիւնը պա-
հեց: Գ. Ասով Կարսլուսի խորհուրդները՝ միայն ըստ
մասին կատարեցան. վասն զի Թէպէտ Իտալիայի ու
Գերմանիայի մէջ իր իշխանութիւնը հաստատուեց, սա-
կայն Գաղղիայի վրայ երբեք իշխանութիւն մը ձեռք
չկրցաւ բերել:



ԸՌԸՋԻՆ ՄԻՋՈՅ ԺԸՄԸՆԸԿԻ

Բ. ՆՈՐԸՂԱՆԴՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՏՄԸՄԲ
ԻՍԿԱՋԲԱՆԷ ՄԻՆՉԵՒ ԿՐԾՆԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

(1517 — 1555)

36. Ընդհանուր տեսութիւն: Նորազանգութիւնը կամ Նորագութիւնը՝ իր մեծ ազդեցութիւնը գլխաւորաբար անով ստացաւ, որ թէ ժողովուրդը եւ թէ իշխանք նոյնն իրրեւ յարմար միջոց կամ պատրուակ գործածեցին իւրաքանչիւրն իր անձնական նպատակին հասնելու, որն որ գլխաւորաբար էր՝ վերին իշխանութենէն անկախ ու ազատ բլլալ, եւ կամ աւելի բարձր իշխանութեան, մեծութեան ու հարստութեան հասնիլ: Եթէ աս պարագան չբլլար, նոյնէն պատճառած շփոթութիւնները ոչ այնչափ ընդհանուր կը տարածուէին, ոչ ալ այնչափ երկայն ժամանակ կը տեւէին: Նոյն պարագային համար ալ է՝ որ քաղաքական շփոթութիւնները՝ միշտ կրօնական վէճերուն սաստկանալուն համեմատութեամբ սաստկացան ու մեծցան. որովհետեւ աս կրօնական վէճերն իրրեւ պատրուակ կամ միջոց գործածողներուն յարձակումները՝ այնչափ ուղղափառ վարդապետութեանց դէմ ուղղուած չէին, որչափ եկեղեցական ու նաեւ աշխարհական իշխանութեան դէմ, մանաւանդ որ շատ տեղ եկեղեցական գլուխները՝ աշխարհական իշխանք ալ էին: Ինչպէս որ նորազանգութիւնը նախ Գերմանիայի մէջ սկսաւ եւ գլխաւորաբար հոն տարածեցաւ, այսպէս ալ նախ եւ յառաջ հոն քաղաքական կերպարանք մ'առաւ, որովհետեւ Գերմանիայի իշխաններուն ու ժողովուրդներուն մեծ մասը, վերը զըցուած պատճառին համար, անոր կողմը բռնեցին: Անոր համար ալ Գերմանիայի նորազանգութեան շփոթութիւններն ընդհանուր քաղաքականութեան վրայ մեծ ազդեցութիւն բրին. ուր որ ուրիշ տէրութեանց մէջ ե-

ղած նորաղանդութիւնք իրրեւ առանձնական կղզիացեալ զէպքեր մնացին, իրենց ազգեցութիւնն ալ զբեթէ իւրաքանչիւր տէրութեան սահմաններուն մէջ փակուեցաւ: — Հոս նախ խօսինք Գերմանիայի նորաղանդութեան վրայ, ետքը առանձինն ուրիշ տէրութեանց նորաղանդութիւններուն վրայ:

Ա.

Նորաղանդութիւն Գերմանիայի մէջ:

37. Գերմանիայի նախարարական ցեղերը: Նորոգութեան կամ նորաղանդութեան վրայ գրեյխքնիս զիւրըմբանելի ընելու համար, հարկ է որ հոս Գերմանիայի ամենէն երեւելի իշխանական կամ նախարարական ցեղերուն վրայ համառօտիւ խօսինք, իրենց նոյն ատեններն (1520) ունեցած վիճակն առնելով:

Ա. Սաքսոնիական ցեղ: Ասիկայ երկու գծի բաժնուած էր. երկցագոյն կայսրընտրական կամ Էռնէսդեան գծի, որն որ կայսրընտրութեան շրջանակ ըսուած երկրին, զբեթէ բոլոր Թուրինգիայի աշխարհակոմսութեան եւ ուրիշ քանի մը տեղերու կը տիրէր. եւ կրտսերագոյն զքսական կամ Վլպերդեան գծի, որուն ձեռքն էր Միսնիայի աշխարհակոմսութիւնն ու Թուրինգիայի պզտիկ մէկ մասը: Առաջնոյն գլուխն էր Փրեյերիկոս կայսրընտիրը († 1525), որն որ նորաղանդութեան զօրաւոր պաշտպաններէն մէկն եղաւ. իսկ երկրորդին գլուխը՝ Գէորգ զուքսը († 1539), որն որ նորաղանդութեան գլխաւոր հակաակորդներէն մէկն եղաւ:

Բ. Պրանտենպուրկեան ցեղ: Աս ալ նոյնպէս երկուքի կը բաժնուէր. կայսրընտրական գծի, որուն ստացուածն էին Պրանտենպուրկի մարզն ու քանի մը պզտիկ տէրութիւնք, եւ իրեն գլուխ ունէր Յոլմպիմ Ա. կայսրընտիրը († 1535). եւ սահմանակոմսական գծի՝ Փրանգիայի մէջ, որն որ Գուլմպախի եւ Անսպախի տներուն կը բաժնուէր:

Գ. Պալատական կամ Ֆալցի ցեղը, որն որ Վիլդշելլպախեանց երկցագոյն տունն էր: Աս ալ կը բաժնուէր կայսրընտրական գծի, որն որ Լուգովիկոս Ե.ին տակ († 1544) Ռենական կայսրընտրութեան երկիրներուն կը տիրէր. եւ Սիմմերեան գծի, որն որ այլեւայլ ճիւղերու բաժնուած էր:

Դ. Պալտերական ցեղը, որն որ Վիլդշելլպախեանց

կրտսերագոյն տունն էր: Աս ցեղը քիչ մը յառաջ (1506) միայն մէկ անձի վրայ միացած էր, որն որ բոլոր Պաւլե-
բայի երկիրներուն վրայ կը տիրէր. եւ թէպէտ Գուլիբեմ
Գ. իր կրտսերագոյն Լուգովիկոս Ժ. Էղրայրն իրեն գա-
հակից ըրաւ (1515). բայց աս վերջնոյն մահուընէն ետեւ
(1545) իշխանութիւնը դարձեալ իր անձին վրայ մնաց:

Ե. Պրամնշուսպիկեան ցեղ: Ասիկայ երկու գլխաւոր
գծերու կը բաժնուէր: Լիւնեպուրիկեան գծի, որն որ Իս-
նեսոյ գքսին († 1546) տակ Լիւնեպուրիկի ու Յելլէի կը
տիրէր. եւ Վուլֆենպիւզդէլեան գծի, որն որ դարձեալ եր-
կու Տիւզի կը բաժնուէր: Առաջնոյն գլուխն էր Հենրիկոս
Արտսեր գուքսը, որն որ Վուլֆենպիւզդէլի կը տիրէր. իսկ
երկրորդին գլուխն էր Էրիք Ա. գուքսը, որուն ձեռքն էր
Գալենպէրկի ու Կեօզդինկէն:

Զ. Հեսսեան ցեղ: Ասոր գլուխն էր Փիլիպպոս աշ-
խարհակոմսը († 1567), եւ բոլորովին անբաժին ըլլալով,
Գերմանիայի ամենէն զորաւոր ցեղերէն մէկը կը սեպուէր:

Է. Մերքինպուրիկեան ցեղ: Ասիկայ Հենրիկոս Խա-
ղաղաւորին († 1552) եւ Ալպերդին († 1547) տակն էր:

Ը. Վիրդեմպէրիկեան ցեղ, որն որ քիչ մը յա-
ռաջ (1495) կոմսական ցեղէ՝ դքսական ցեղ եղած էր:
Ասոր գլուխն Ուլրիխ գուքսն իր անհանդարտ բարուց ու
խռովայոյզ գործոցը համար իր երկիրներէն մերժուած էր
(1519):

Թ. Պատրնի ցեղ: Ասիկայ իսկզբան Քրիստափոր
սահմանակոմսին տակ անբաժին էր. բայց ետքէն (1537)
Պատրնի ու Տուրլախի գծերուն բաժնուեցաւ:

Ժ. Ասոնցմէ զատ երկու ցեղեր ալ կային, որոնք
ետքէն բոլորովին սպառեցան. այս ինքն Բոմբերեան ցեղը,
որուն գլուխն էր Պոկիզլա Ժ. († 1523), եւ Գլեւեան
ցեղը, որուն իշխանութեան տակ ինկած էր քանի մը տա-
րիէ վեր (1516) նաեւ Եիւլիխ, Պէրկի ու Ռաւենպէրկի,
եւ որուն գլուխն էր Յովհաննէս Գ. գուքսը († 1539):
— Աս եւ քանի մը խոնարհագոյն ցեղերէ ուրիշ, իսկ մը
կախակալութարաններ եւ արքայարաններ ալ կային, որոնց
գլուխներն իշխանական կամ նախարարական իրաւունք եւ
պետութեան աւագածոցոյն կամ կարգածոցոյն մէջ
գահ ու քուէ ունէին: Ասոնց մէջ ամենէն երեւելիներն
էին Մոզոււնիայի, Գրիբերի ու Գոլընիայի արքեպիսկոպոս-
ները, որոնք՝ ինչպէս ուրիշ անգամ ալ ըսած ենք (Նա-
խաջ. 26), կայսրընտրութեան բարձր աստիճանն ունէին:
Գարձեալ նոյն գահու եւ քուէի իրաւունքով իսկ մը հա-

բուստ ու զօրաւոր քաղաքներ կային, որոնք հիւսիսային կողմերը՝ Հանսայեան դաշնակցութիւնը կը կազմէին (Նախաշ. 26). իսկ հարաւային կողմերը՝ Շուարեան (Նախաշ. 29) դաշնակցութիւնը:

38. Նորադանդութեան սկսիլն ու քաղաքական կերպարանք առնուլը: Վորմնի աւագաժողովը: Ա՛յ չէ թէ միայն բոլոր եկեղեցին, հապա նաեւ Եւրոպայի մեծ մասն ու գլխաւորաբար Գերմանիա տակնուվրայ ընող եւ շատ տէրութեանց վիճակին փոխուելուն պատճառ եզրղ աղէտալի նորադանդութեան սկիզբ բրաւ Մարտինոս Լուտեր, ազքատ գեղացւոյ մը որդին (ծն. 1483), որն որ Օդոտինեան կրօնաւոր ու քահանայ էր: Եսիկայ իրեն առիթ առաւ Յուլիոս Բ. քահանայապետին հրամանաւ Ս. Պետրոսի եկեղեցւոյն շինութեան համար հրատարակուած ներողութիւնը, զորն որ նոյն քահանայապետին յաջորդը Լեւոն Ժ. Գերմանիայի մէջ ալ հրատարակել տարու սկսած էր: Ինք իսկզբան ներողութեան էութեան դէմ չէր խօսեր, հապա նոյնը գոնէ արտաբուստ պաշտպանելով, հրատարակողներէն քանի մը հոգւոյ բանեցուցած անկարգ կերպին դէմ կը զինէր, զորն որ խիստ չափազանցութեամբ կը սաստկացընէր: Բայց մէյ Ժ՛ որ խնդիրն երեւան ելաւ, վիճին տարութեամբը՝ կամեց կամեց եւ ատտիճանէ աստիճան յառաջ երթալով, սկսաւ եկեղեցական իշխանութեան եւ ուղղափառ վարդապետութեանց դէմ ալ յարձակիլ: Նոյն վէճն իրենց քաղաքական նպատակներուն բանեցընել ուղղներն ալ աւելի գրգռելով եւ ընդարձակելով, իսկզբան փոքր կայծ մը սեպուած բանը՝ շուտ մը սաստիկ հրդեհի դարձաւ, որն որ բոլոր Գերմանիա կրակի մէջ ձգեց: Ինդիրը բոլորովին քաղաքական կերպարանք առաւ, երբ որ Լուտեր Վորմնի աւագաժողովը կանչուելով, Գերմանիայի քանի Ժ՛ իշխաններէն դատած պաշտպանութեան վրայ վստահացած, հոն իր մտրութիւնները յամառութեամբ պաշտպանեց (1521, Եպր. 18): Նոյն ատեն կարողոս Ե. եւ աւագանւոյն մեծ մասն

իրեն դէմ ելլելով, իսկ աւագանւոյն մէկ մասը, որուն մէջ գլխաւորն էր Սարսոնիայի Փրեզերիկոս կայսրն-տիրը՝ Լուտերի իշխանն ու պաշտպանը, յայտնապէս անոր կողմը բռնելով, աւագածողովն իրարու հակառակ երկու մասերու բաժնուեցաւ, որով խնդիրն իբր թէ պետութեան խնդիր կ'ըլլաւ, եւ կայսրութեան մէջ երկպառակութեան ու երկու հակառակ քաղաքական կուսակցութեանց հիմ դրուեցաւ: Եւ թէպէտ կայսրն աւագանւոյն մեծ մասին հետ Լուտերին դէմ տարազրութեան վճիռ տուաւ, բայց անով ալ օգուտ մը չեղաւ. վասն զի իրեն կողմնակից իշխաններն ամէն կարելի միջոցներով զինքը պաշտպանելու եւ իրենց քաղաքական նպատակներուն համար իր մուրրութիւնները տարածելու ետեւէ կ'իյնային: Արդէն ալ նոյն մուրր վարդապետութիւնները, մէկ կողմանէ կրից սանձերն արծակելով եւ ամէն մարդուն՝ ուղածն բնելու գրեթէ բացարձակ ազատութիւն թող տալով, մեկալ կողմանէ ալ եկեղեցական դանձերը՝ իշխաններուն առջեւ բանալով, միանգամայն եպիսկոպոսարաններու եւ արքայարաններու քաղաքական իշխանութեան տակ բլլողներուն առջեւը՝ նոյն իշխանութենէն ազատելու ակնկալութիւնը դնելով, արտաքին պաշտպանութեան ու օգնութեան կարօտութիւն շունեին: Ասանկով Լուտերի մուրրութիւններն ու անոնցմէ բխած անպիտան եւ վտանգաւոր հոգին՝ չէ թէ միայն իշխանաց, ազնուականաց եւ ուսումնականաց մէջ մուտք կը գտնէին, հայտնաբերելու հասարակ ժողովրդոց ու մինչեւ զեղացւոց մէջ. ամէն տեղ ալ իրենց խիստ վնասակար պտուղները շուտ մը յառաջ բերելով, թէ կրօնի եւ թէ քաղաքականութեան նկատմամբ մեծամեծ շփոթութիւններ կը պատճառէին:

39. Գեղացւոց պատերազմ: Նորազանգութիւնը գլխաւորաբար երկու խիստ նշանաւոր դէպքերու պատճառ կ'ըլլաւ, որոնցմով քաղաքական կողմանէ ալ ունեցած մեծ ծանրակշռութիւնը յայտնապէս տես-

նուեցաւ: Աս դէպքերն են Գեղացւոց պատերազմն
 ու Պրուշի աշխարհականանայլ: — Գերմանիայի մէջ
 կայսերական իշխանութիւնք խիստ նուազած ըլլալով,
 ազնուականաց եւ ասպետաց շատերն իրենց հպատակ
 եղող զեղացիներուն գէժ բռնութիւններ ու անի-
 բաւութիւններ կ'ընէին: Արդ աս վերջինները Ղուտե-
 րին՝ աւետարանական ազատութեան վրայ գրածները
 կարդալով կամ լսելով, եւ եկեղեցականաց լուծը խզե-
 լու վրայ իր տուած յորդորները՝ իրենց աշխարհական
 իշխաններուն վրայ ալ տարածելով, մտքերնին դրին որ
 ատենն եկած է՝ զէնքերնին ձեռուրնին՝ անոնց բռնու-
 թիւններէն ազատելու: Մանաւանդ որ Ղուտեր շատ
 հեղ շէ թէ միայն ազնուականաց եւ իշխանաց, այլ
 նոյն իսկ կայսեր գէժ սաստիկ կատաղի կերպով ճառե-
 լով ու գրելով, եւ զանոնք՝ կոյր, խենթ, բռնաւոր,
 գահիճ կանչելով, իրենց օրինակ տուած էր անոնց
 իշխանութենէն գլուխ քաշելու: Աս կերպով զրգռուե-
 լով եւ Ղուտերի պաշտպան եղող քանի մ'ասպետաց
 ծածուկ կամ յայանապէս զիրենք զրգռելով՝ զրգռու-
 թիւննին աւելի սաստիկանալով, կամաց կամաց սոք
 ելլելու պատրաստութիւն կը տեսնէին: Տեղ տեղ ի-
 րենց մէջ մտած էին Արկնակնունքներն ալ, որոնք Սա-
 քսոնիա իրենց մուրութիւնները քարոզելու սկսե-
 լէն եւ հոնկից մերժուելէն ետեւ, զեղացւոց դիմած
 էին: Ասոնք հոգեւոր ու քաղաքային իշխանութեանց
 ջնջում ու անանկ երկնաւոր թագաւորութիւն մը կը
 քարոզէին, որուն մէջ ամէնքը, հարուան ու աղքատը,
 ազնուականն ու զեղացին, իրարու հաւասար պիտ'որ
 ըլլային: Արդ ասանկ զրգռութիւններով զեղացիք
 Շուարիա ու Փրանզիա գաւառներուն մէջ յայանա-
 պէս սոք ելան. սկսան մեծերնին ստիպել որ իրենց
 շափազանց պահանջումներուն զիջանին, եւ գէժ զնող-
 ները սաստիկ տանջանքներով կը մեռցնէին: Գունդ
 գունդ եղած՝ բոլոր երկիրը կը պարտէին, վանքերն ու
 ասպետաց բերդերը կը թալլէին, կը կործանէին, եւ

իրենց հակառակորդներէն զարհուրելի կերպով վրէժ կ'առնուին: Շուտ մ'ապստամբութիւնն աւելի տարածուելով, բոլոր Էլլասսի գաւառն ու Ռենոսի երկու կողմերն ալ բռնեց: Աս տեսնելով, ամէն կողմանէ շատ իշխանք իրենց զօրքովն ապստամբներուն վրայ դացին տեղ տեղ դիւրաւ յաղթելով՝ զսպեցին, տեղ տեղ ալ հարկ եղաւ ճակատ առ ճակատ պատերազմիլ, որով խիստ շատ արիւն թափեցաւ եւ շարաշար անազորունութիւններ պատահեցան (1524—1525):

40. Պրուշի աշխարհականանայր: Թեպէտ այսչափ ընդհանուր չէր, բայց մէկ դիաց աւելի ծանրակշիռ քաղաքական հետեւութիւն ունէր վերոյիշեալ երկրորդ դէպքը, այս ինքն՝ Պրուշի աշխարհականանայր: Պրուշի գաւառը՝ Տեւտոնեան սապեաաց կարգին ստացուածն էր, Ղեհաստանի թագաւորութեան աւատապետութեան տակ: Նոյն կարգին կարգապետ՝ Ալպերդ Պրանտենպուրկեան արդէն յառաջագոյն ջանացած էր աս գաւառը Ղեհաստանի վերին իշխանութենէն անկախ ընելու, որուն համար պատերազմ ալ բացած էր. բայց չէր կրցեր նպատակին հասնիլ: Անոր համար Գերմանիայէն օգնութիւն փնտռելու ելաւ, եւ նորազանդութեան շիտթութիւնները սկսելէն ետեւ՝ Ղուտերի կողմնակից իշխաններուն հետ հաղորդակցութեան մէջ մտաւ: Ազանգապեան իրեն խրատ տուաւ որ իր կարգին կանոնները թողու, աշխարհք մանէ եւ Պրուշի գաւառն իր ժառանգական իշխանութեան տակ առնու: Նոյն խրատը կարգապետին վրայ մեծ ազդեցութիւն բրաւ. ուստի տեղը դարձածին պէս՝ սկսաւ նորազանդութիւնը տարածել, եւ քիչ մը վերջը Ղեհաց Սիկիզմունտ Ա. թագաւորին հետ Գրազաի գաշնադրութիւնն բրաւ (1525), որով Արեւելեան Պրուսիա գաւառը՝ իբր Ղեհաստանի աւատային ստացուած, բայց միանգամայն աշխարհական ու ժառանգական դրութիւն՝ իր իշխանութեան տակ կը մտնէր: Ասոր վրայ մեծ շիտթութիւն ելաւ, եւ չէ թէ միայն բոլոր Տեւ-

տանեան կարգը՝ որուն ստացուածը կը յափշտակէր, հապա քահանայապետն ալ նոյն անիրաւ յափշտակութեան դէմ բողոքեցին. բայց ինք այս ամենայն բանի տեղ չգրաւ, եւ աւելի օգնութիւն ու պաշտպանութիւն գտնելու համար՝ Գանիայի Փրեզերիկոս Ա. թագաւորին Տրոթեա աղջկան հետ կարգուեցաւ (1526):

41. Տեսաւի ու Գորկաւի դաշնակցութիւնք: Ընդհանուր ժողովոյ խօսք: Աս դէպքերով թէ բողոքողաց եւ թէ ուղղափառաց կողմնակցութեան իշխաններուն մտադրութիւնն արթնցաւ. վասն զի երկու կողմանք ալ յայտնապէս կը տեսնէին որ կրօնական շիթութիւններէն ինչպիսի մեծ յեղափոխութիւնք կրնան յառաջ գալ: Եւ եթէ մէկ կողմանէ նորազանգութեան կուսակիցները Պրուշի աշխարհականանալէն՝ քաջալերութիւն կ'առնուին եկեղեցական ինչքերը յափշտակելու, մէկալ կողմանէ ալ վախերնին կ'աւելնար, ինչու որ կայսրը Բաւիայի յաղթութեամբ (26) գտնէ առժամն արտաքին պատերազմներէն ազատած ըլլալով, բոլոր մտադրութիւնք Գերմանիայի դարձուցած էր եւ կ'ուզէր որ Արմսի աւագաժողովոյն վճիռն ի դործ դրուի: Ասով երկու կողմանք ալ մէջերնին միաբանութիւններ ու դաշնաւորութիւններ բրին: Քանի մ'ուղղափառ իշխանք Տեսաւի մէջ (1525) իրարու հետ միաբանեցան. իսկ նորազանդից ամենէն զօրաւորները՝ Գորկաւի մէջ (1526): Առաջիններուն մէջ գլխաւորներն էին Մոզուսիայի ու Պրանտենպուրկի կայսրընտիրները. իսկ վերջիններուն մէջ՝ Մաքսոնիայի կայսրընտիրն ու Հեստէնի Փիլիպպոս աշխարհակոմար: Ստոյգ է՝ աս դաշնակցութիւններն ընդունելուն գիտաւորութեան կամ խօսքին նայելով, նոյները՝ միայն պաշտպանողական միաբանութիւնք պիտ'որ ըլլային եւ ոչ թէ յարձակողական հետեւութիւն պիտ'որ ունենային. ի վերայ այսր ամենայնի սգիներն անանկ գրգռուած էին, որ նոյն աստիճանները պատահած քանի մը դէպքերով ալ՝ որոնք խաղաղութեան պահուելուն մեծապէս

օգնեցին, անկարելի էր որ կռիւ ու ներքին պատերազմ մը չբացուէր՝ եթէ սա շփոթութիւնները հանդարտեցնելու համար իբրեւ միակ միջոց երեւան ելած չլլար ընդհանուր ժողովոյ մը խօսքը: — Աս ընդհանուր ժողովոյ խօսակցութիւնը նախ Շփայէրի աւագածոզովոյն մէջ ելաւ, որն որ Աորմսի աւագածոզովոյն վճիռն փորձ դնելու միջոց գտնելու համար դուժարուած էր (1526): Նորազանդութեան կողմն ըլլող իշխանք աս բանին բացարձակապէս դէմ դրին, եւ կրցան որոշել առաջ որ կամ ընդհանուր եւ կամ Գերմանիայի գաւառական (եկեղեցական) ժողով մը դուժարուի. իսկ մինչեւ նոյն ժողովոյն դուժարուիլը՝ Աորմսի աւագածոզովոյն վճռոյն նկատմամբ՝ իւրաքանչիւր ոք անանկ վարուի, որ կարենայ Աստուծոյ եւ կայսեր առջեւն ինք զինքն արդարացնել, որ է ըսել՝ նորազանդից առջեւն արձակ դաշտ մը բացուեցաւ ու զածնին ընելու. իսկ կայսեր եւ ուղղափառ իշխանաց ձեռուրները կապուեցան եւ արգելուեցան անոնց դէմ սաստիկ միջոցներ բանեցնելէն: Արդ նոյն ժամանակէն ետեւ նորազանդք ընդհանուր ժողովոյ խօսքը միշտ բերաննին կը պարտացնէին, եւ շատ առթի մէջ միայն անով վտանգէ կը պրծէին:

42. Շփայէրի ու Ալկապուրիկի աւագածոզովները: Բողոքական անուոնն ու Ալկապուրիկեան դաւանութիւնը: Բայց մինչեւ ընդհանուր ժողովոյն դուժարուիլը, կրօնական շփոթութեանց եւ անոնցմէ ծագած քաղաքական վրդովմանց վերջ ապու կամ վախցուած աւելի մեծագոյն շարիքները խափանելու համար, ուրիշ երկու աւագածոզովներ ալ եղան: Ասոնց առաջինն էր Շփայէր ժողովուածը (1529), որն որ վճռեց որ մինչեւ ան ժամանակ Աորմսի վճռոյն հետեւողները՝ անկից ետքն ալ նոյնը հաստատուն պահեն. իսկ նոր վարդապետութեանց հետեւողները՝ մինչեւ ընդհանուր ժողովոյն դուժարուիլը՝ կարելի եղածին շափ զգուշանան նոր փոփոխութիւններ ընելէն, եւ իրենց երկիրներուն մէջ տակաւին հին (ուղղափառ) կրօնին հե-

տեւոյներն ազատ թողուն: Բայց նորազանգք ասանկ մեղմ ու շափաւորեալ վճիռ մ'ալ բնդունիլ չուզելով, նոյնին դէմ բողոքեցին (Ապր. 19), եւ անոր համար ալ Բողոքողք կամ Բողոքականք անուանեցան, որ ասունն որ մինչեւ հիմայ կը պահեն: Ասանկով նոյն աւագածողովէն օգուտ մը չեւելլով, երկրորդ տարին Աւետարակի հաշակաւոր աւագածողովը դուսարեցաւ (1530), որուն մէջ բողոքողք իրենց հաւատոյ դաւանութիւնը տուին (Յունիս 25), որն որ մեծ զգուշութեամբ ու շափաւորութեամբ դրուած էր, եւ տեղոյն անունէն՝ Արկապոսիկեան դուսարեցաւ կը կոչուի: Երկու կողմանէ որոշուած աստուածաբանք սկսան նոյն դաւանութեան վրայ խօսակցիլ. եւ բողոքողաց աստուածաբանին (Մելանքթոնին) խաղաղատէր բնութեամբն ու մեղմական բնթացքով՝ քիչ աստնուան մէջ իրարու պնշափ մտնեցան, որ շատերը սկսան յուսալ թէ միաբանութիւն պիտ'որ ըլլայ: Բայց բողոքող իշխանք եւ քաղաքագէտք ամենեւին ասոր հաւան չէին. որովհետեւ նոյն իսկ Մելանքթոնին ըսածին նայելով, կրօնի վարդապետութիւնն իրենց հոգը չէր, հապա պարզապէս կ'ուզէին կրօնի պատրուակաւ ձեռք բերած իշխանութիւննին ու հարստութիւննին հաստատուն պահել: Մանաւանդ ազատ կամ պետութեան քաղաքներուն պատգամաւորներն աս միաբանութեան խիստ հակառակ էին. վասն զի անով դարձեալ եպիսկոպոսաց իշխանութեան տակ պիտի մտնէին, որմէ ազատելու եւ անկախ ըլլալու համար նորազանգութիւնն բնդունած էին: Աս ասանկ ըլլալով, երկու կողմանէ ալ յայտնապէս տեսան որ անկարելի է բանակցութիւններով ու վիճումներով իրարու հետ միաբանիլ ու կրօնական շփութութիւնները վերցընել: Աւստի եւ ժողովոյն վճիռն աս եղաւ որ մինչեւ երկրորդ տարոյն Ապրիլի 15ը բողոքողաց ժամանակ տրուի մտածելու, թէ արդեօք մինչեւ բնդ հանուր ժողովոյն դուսարուիլը կաթուղիկէ եկեղեցւոյ հետ միանալ կ'ուզեն թէ չէ:

43. Շմալզալտեան նիզակակցութիւն: Նիւն-պերկի առժամանակեայ խաղաղութեան գաշինքը: Բողոքողք արդէն Աւկապուրկի աւագածոզովոյն մէջ քաղաքական նկատմամբ ալ իրենց ապստամբական հոգւոյն ցոյցը տալով, Օսմանեանց դէմ բլլալու պատերազմին համար՝ կայսեր իրենցմէ խնդրած օգնութիւնը յայտնապէս զլացած էին: Բայց աւագածոզովոյն գոցուելէն քիչ մը ետքը կատարեալ ապստամբական գործողութեանց ձեռք զարկին: Շմալզալտի մէջ մէկտեղ զալով, յառաջուրնէ աւելի սերտիւ իրարու հետ միաբանեցան եւ մէջերնին վեց տարւան համար նիզակակցութիւն մը դրին (1531, Փետր. 27), որուն զլխաւոր պայմանն ան էր, որ եթէ իրենցմէ մէկու մը դէմ կրօնի համար բռնութիւն կամ անիրաւութիւն մ'ըլայ, ամէնքը նաեւ զէնքով ու զօրքով զանիկայ պաշտպանեն: Աս նիզակակցութեան պատրուակ կ'առնուին ան պարագան ալ, որ կայսրն իր Փերդինանդեղբայրը՝ Հոսի թագաւոր բնտրել տուած էր (1531, Յունու. 5), որ բսել էր միանգամայն՝ կայսերական աստիճանին մէջ իրեն յաջորդ: Ասոնք եղան. այս ինքն՝ բողոքող իշխանք չէ թէ միայն կայսեր հրամանին եւ աւագածոզովոյն վճռոյն դէմ դրին, չէ թէ միայն ըստ իրաւանց իրենցմէ խնդրուած օգնութիւնը զլացան, հապա նաեւ Շմալզալտեան գաշնակցութեամբ կայսեր դէմ յայտնապէս ապստամբեցան. սակայն եւ այնպէս երկու կողման մէջ արտաքին խաղաղութիւնը հաստատուն մնաց եւ կայսրը զիրենք պատժելու ետեւէ չհնկաւ: Բայց պէտք է խոստովանիլ որ Աարոլտին առ զիջման շատ օգնեց ան ատեն վերահաս եղող Օսմանեանց պատերազմին վախը: Աս ալ բաւական չէ, մէկուկէս տարի ետքը նոյն ապստամբական նիզակակցութիւնը դրեթէ կայսերական հաստատութիւն մ'ալ ընդունեցաւ. որովհետեւ երկու կողմերը միաբանելու նոր պարագ փորձ մ'ըլլալէն ետեւ, Նիւնպերկի առժամանակեայ խաղաղութեան գաշինքը գրուեցաւ (1532,

Յուլ. 23), որով Շմալգալտեան նիզակակցութեան մէջ նոյն աստն գանուող իշխաններուն խօսք կը արուէր որ մինչեւ ընդհանուր ժողովոյն գումարուիլը՝ զիրենք հանդարտ թող կու տան:

44. Բողոքողաց յանդուգն գործքերը: Միւնս-
ղէրի Արկնակնունքք: Շմալգալտեան նիզակակցու-
թիւնը կը նորոգուի: Բայց աս խաղաղութեան դաշին-
քը դրուելով ալ, անտարակոյս սուրբ շուտով պատեա-
նէն կը հանուէր, եթէ ըստ մասին կողմնակցութեանց
ներքին հանգամանքները եւ ըստ մասին նոյն միջոցին
ետեւէ ետեւ պատահած դէպքերը շարգելուին: Ար-
ղէն բողոքողք նոյն իսկ խաղաղութեան դաշանց վրայ
գոհ չէին. որովհետեւ կ'ուզէին որ իրենց եղած զիջու-
մը՝ անկէ ետեւ իրենց դաշնակցութեան մէջ մտնողնե-
րուն վրայ ալ տարածուի: Իսկ կայսրն եւ ուղղափառք
Շմալգալտեան դաշնակցաց դէմ բան մը չէին կրնար
ընել. վասն զի Օսմանեանց պատերազմին վասնզն
անցնելէն ետեւ (30), Գերմանիայի մէջ խիստ ծան-
ուակչիս դէպքեր պատահեցան, որոնք ամենուն մտա-
դրութիւնը կը դրուէին եւ չէին թողուր որ ուրիշ բանի
միտ դրուի: Բողոքական իշխանք իրենց ստացած զո-
րութեան վրայ վստահանալով ու իրենց եղած զի-
ջումներով մեծապէս յանդգնելով, չեաւէնի Փիլիպ-
պոս աշխարհակամսին առաջնորդութեամբը՝ զէնքով
նորէն իր իշխանութեան մէջ հաստատեցին Ախրզեմ-
պերիի Աւլիխ գութը (1534), զորն որ Հուսթեան
դաշնակցութիւնն իր բռնաւորութիւններուն ու անա-
դորունութիւններուն համար իր երկրէն մերժած էր
(37, Ը.): Ասով թէպէտ բողոքող իշխանաց դէմ եղած
արանջման պատճառները շատցան, բայց իրենք նոյն
իրենց կողմն եղող դքսին օգնականութեամբն աւելի
զօրացան, միանգամայն նոյն գործողութեամբ աւելի
յանդգնութիւն ու իրենց ժողովրդոց առջեւ աւելի
մեծ համարում ստացան: Ասկէ անմիջապէս վերջն եկաւ
Միւնսղէրի Արկնակնոյց պատերազմը, որոնք նոյն քա-

զարին մէջ Յովհ. Լայտէնցի անունով գերձակ ժ'իրենց թագաւոր դրած էին ու սաստիկ անկարգութիւններ կ'ընէին, մինչեւ որ քաղաքը պատերազմաւ առնուեցաւ (1534—1535, Յունիս 24)։ Նոյն տեղերէն Տարկ եղաւ որ կայսրը Գունուզի դէմ արշաւանք ժ'ընէ (31)։ Ասոնցմէ ետեւ եկաւ Փրանկիսկոս Ա.ին հետ եղող երրորդ պատերազմը (32), որ թագաւորին հետ որ բողոքական իշխանք բանազնացութեան մէջ էին թէ կայսեր դէմ իւրաքանչիւր դք որչափ ստակ կամ զօրք կրնայ ստալ։ Ասով կայսրն ստիպուած էր իրենց հետ վերջին սաստիճանի քաղցրութեամբ ու զիջմամբ վարուելու, որով եւ իրենք ժամանակ կ'ունենային ազատութեամբ եւ անպատիժ ուղածնին ընելու։ Ինչպէս ալ բրին, ուրիշ բաներէն զառ՝ Շմալդալտեան նիզակակցութիւնը տասը տարւան համար նորոգելով ու ընդարձակելով (1536, Յուլ. 10), եւ միանգամայն որոշելով թէ ո՞վ որչափ զօրք պիտի տայ, որով եւ կայսեր դէմ ունեցած ապստամբական նպատակներն յայտնապէս կը ցուցնէին։

45. Արրազան նիզակակցութիւն։ Հետտէնի աշխարհակոմսին երկկնութիւնն ու Պրանշուայկի դքսին դէմ բրած պատերազմը։ Վաղղիայի հետ խաղաղութիւն ըլլալէն ետեւ ալ, կարօրոս այլեւայլ պատճառներու եւ պատահած դէպքերու համար հոգերու մէջ դանուելով եւ զլուխ հանելու զանազան զազափարներ ունենալով, ուզէր ալ նէ՝ չէր կրնար բողոքողաց դէմ սաստիկ միջոցներու ձեռք զարնել։ Իսկ նորազանգք պարագայից առ իրենց համար ունեցած նպաստաւորութիւնը շարաշար գործածելով, օրէ օր աւելի կը զօրանային եւ աւելի յանդգնադոյն գործքեր կը գործէին։ Մանաւանդ որ կ'աճապարէին բաներնին որ յառաջ կարգի դնելու եւ հաստատելու, ինչու որ կը աւանտէին թէ իրենց միշտ խօսքով խնդրած եւ իրօք ամեն բանէն աւելի վախցած ընդհանուր ժողովը գումարելու ջանք ու փորձ կ'ըլլայ։ Պօղոս Գ.

քահանայապետն արդէն 1536էն վեր ետեւէ կ'ըլլար
 Խաալիայի մէջ ընդհանուր ժողովք գումարելու: Աս
 բանիս վրայ բողոքողաց հետ խօսակցելու համար կայս-
 րը Սպանիայէն իր Հէլա գիւանադպիրը խաւրեց, որն
 որ յայտնապէս տեսնելով եւ համազուելով որ իրենք
 նոյնն ամենեւին շէն ուզեր, Նիւոնպերկի մէջ Արա-
 դան ըսուած նիզակակցութիւնը գրաւ (1538, Յունիս
 10): Ասոր անգամներն էին Կարոլոս Ե., իր եղբայրը
 Փերդինանդ Թագաւորը, Մոզունիայի ու Սալցպուր-
 կի արքեպիսկոպոսները, Պաւիերայի Գուլիելմոս եւ Լու-
 գովիկոս դքսերը, Սաքսոնիայի Գէորգ դուքսը, Պրան-
 շուայիկի Հենրիկոս դուքսը եւ այլն. որոնք նոյն նիզա-
 կակցութեամբ իրենք զիրենք կը պարտաւորէին ուղ-
 զափառ կրօնն ու իրենց իրաւունքները պաշտպանելու:
 Մեծ պատճառ ալ ունէին ասանկ վարուելու, որովհե-
 տեւ բողոքողաց անկարգութիւններն ու յանդգնու-
 թիւնը նոյն ատենները վերջին աստիճանի հասած էին:
 Չենք յիշատակեր եկեղեցական ընչից անիրաւ յափը-
 տակութիւններն եւ ուղղափառ եկեղեցականաց ու
 ընդհանրապէս բոլոր ուղղափառաց դէմ եղած բռնու-
 թիւններն ու հարածանքները, որովհետեւ ասոնք շա-
 տանցունէ վեր սովորական բաներ եղած էին: Միայն
 երկու դէպք յառաջ բերենք, որոնք քիչ մը ետքը դի-
 պեցան եւ ըսածներնուս հաստատութեան համար բաւ-
 ական են: Բողոքականաց մէջ ամենէն երեւելի իշխան-
 ներէն մէկը, մանաւանդ թէ նոյն ատեններն իրենց
 դիտաւորը, Հեսսէնի Փիլիպպոս աշխարհակամօր, Լու-
 տերէն եւ նորազանդից ուրիշ քանի մը անուանի աս-
 տուած արաններէն գրով հաւանութիւն ու հրաման
 առնելէն ետեւ, իր օրինաւոր ամուսինը պահելով՝ ու-
 րիշ օրիորդի մը հետ ալ կարգուեցաւ (1540, Մարտ
 4): Ասիկայ անանկ այլանդակ ու անօրինակ դարձու-
 չութիւն մըն էր, որ չէ թէ միայն ուղղափառք, հա-
 պա նոյն իսկ բողոքողք եւ մանաւանդ Փիլիպպոսին
 առաջին կնոջ ազգականները, Սաքսոնիայի իշխաննե-

բը, ասոր համար սաստիկ այլայլեցան: Ասկից զաս նոյն աշխարհակոմսը մեծ կռիւ մը բացաւ Պրանչուայկի Հենրիկոս դքսին դէմ, ան պատրուակաւ՝ որ նոյն դուքսը Հմալդալտեան նիզակակցաց դէմ վնասակար խորհուրդներ ունի. բայց զվնասորարար անոր համար՝ որ անիկայ իր երկկնութեան համար զինքը հրապարակաւ յանդիմանած էր: Աս կռիւը քիչ մ'առեն միայն թղթակցութեամբ բլլալէն ետեւ, մէկէն Փիլիպոս եւ Հմալդալտեան դաշնակիցներէն քանի մ'ուրիշ իշխանք 20,000 զօրքով դքսին երկրին վրայ յարձակեցան (յան 1542), զինքը Պաւիերա փախչելու ստիպեցին, վանքերը կործանեցին, բոլոր երկիրն աւրեցին ու թալլեցին եւ նորազանդութիւնը բռնութեամբ ամէն կողմ խոթելէն ետեւ, հրատարակեցին որ ալ Հենրիկոս դուքսը չիկրնար անձամբ իր երկրին վրայ իշխանութիւն մը վարել:

46. Ընդհանուր պատերազմին սկսիլը խափանող դէպքեր: Տրիդնտեան ժողով: Պատերազմի պատրաստութիւն: Արդ թէպէտ աս ու ասոր նման գործողութիւններով զրգուցութիւնը վերջին սաստիճանի սաստկութեան հասած էր, անանկ որ երբեմն երբեմն փոքր ու մասնական շփոթութիւններ եւ կռիւներ կը պատահէին. բայց ընդհանուր ներքին պատերազմ մը բացուիլը դարձեալ խափանեցաւ՝ նոյն ժամանակները պատահած երկու երեւելի դէպքերով, որոնցմով կայսեր ձեռուրները դոնէ քանի մը տարւան համար նորէն կապուեցան: Աս դէպքերն են դէպ ի Ափրիկէ բրած երկրորդ արշաւանքը (33) եւ Փրանկիսկոս Աին հետ բրած շորթորդ պատերազմը (34), որոնցմէ նուազ չէր նաեւ Օսմանեանց կողմանէ վախցուած վտանգը: Բայց նոյն միջոցներուն ալ նորէն զանազան աւազածողութիւններ ու բանակցութիւններ եւ միաբանութեան փորձեր եղան. սակայն ամէնն ալ պարապ ելաւ, որովհետեւ բողոքողք ամենեւին զիջում ընել չէին ուզեր: Վերջապէս կայսրը Գրեքիի խաղաղութեան դաշինքով

(1544, Սեպտ. 18) արտաքին պատերազմներէն ազատած, եւ քսան տարւոնէ աւելի եղած փորձերով համարուած բլալով, որ ապստամբ բողոքականք քաղցրութեամբ զիջանելիք շունին, միտքը դրաւ որ զէնքի զօրութեամբ առ շիտթութիւնները խաղաղէ եւ Գերմանիայի խաղաղութիւնը հաստատէ: Մանաւանդ որ ընդհանուր ժողովն արդէն Տրիդենտ քաղաքը սկսած էր (1545, Դեկտ. 13), եւ բողոքականք ամենեւին կերպով մը յանձն չէին առնուր հոն մարդ խաւրել, որով իրենք զիրենք ջատագովելու եւ ոչ իսկ պատուակ մ'աւնէին: — Բայց առ պատերազմը չէ թէ կրօնի պատճառաւ բոլոր բողոքողաց դէմ էր, հապա կայսերական իշխանութիւնը սոքի տակ առնող եւ երկրին խաղաղութիւնն ամէն կերպ անիրաւութիւններով ու բռնութիւններով տակնուվրայ ընող ու վրդովող Շմալդալտեան նիզակակիցներուն դէմ: Անանկ որ Պրանտենպուրկի Յովակիմ կայսրընտիրն ու սահմանակոմսերը եւ Ռեյնական Փայլի (Պալատական) կոմսը, որոնք թէպէտ նորաղանդութիւնն ընդունած էին, բայց ան դաշնակցութեան մէջ չէին մտեր, բոլորովին հանդարտ ու խաղաղ մնացին: Այսորը զիրենք եւ իրենց հետեւող ուրիշ բողոքական իշխաններն առանձին թողութեամբ համագեց որ հանդարտ կենան, խօսք տալով որ իրենց ազատութեան դէմ ամենեւին բան մը չ'ըլլար, բաւական որ իրենք ապստամբական գործողութիւններու ձեռք չգարնեն: Իսկ Սպարմիայի Մարիկ դուքոր, Գէորգ դքսին Հենրիկոս եղբօրն որդին ու Հեսսէնի աշխարհակամին փեսան, որն որ իր հօրը պէս բողոքողութեան դարձեր ու անոր յանրակեր էր (1541), բայց արդէն շատոնց Շմալդալտեաններէն բաժնուած էր, հիմայ կայսրընտարական պատիւն ընդունելու խոստմամբ՝ մինչեւ կայսեր հետ դաշնակից եղաւ: Նոյն կայսրը Շմալդալտեան դաշնակցաց զեսպաններուն ալ, որոնք կը հարցնէին թէ եղած պատերազմի պատրաստութիւններն որոնք դէմ են պատասխան տուաւ որ

Իմ նպատակս խաղաղութիւնն է. հնազանդողներուն շնորհք կ'ընեմ, իսկ անհնազանդից ու ապստամբաց զէմ պէտք է որ իմ կայսերական իշխանութիւնս բանեցընեմ եւ իրենց հետ ըստ իրաւանց վարուիմ (1546, Յունիս 16):

47. Պատերազմ: Հմայգայտեանք կը յաղթուին: Սպարանիայի Յովհաննէս Փրեդերիկոս կայսրընաիրը, որն որ իր հօրը Յովհաննէս կայսրընարին, Փրեդերիկոս կայսրընարին եղբօրն ու յաջորդին, յաջորդած էր (1532), եւ Հեստէնի Փիլիպպոս աշխարհակամար, 20,000 հետեւակ եւ 5000 ձիաւոր զօրք ժողովելով, որոշեցին որ զԱարսլուս Ե. վար առնան եւ տեղը՝ բողբոջական կայսր մը դնեն, միանգամայն բոլոր Գերմանիայի մէջէն ուղղափառութիւնը ջնջեն: Կայսրն աս բաներուն վրայ իրենց երկուքին զէմ տարազբութեան վճիռ հանեց (1546, Յուլ. 20), որուն պատճառ կուտար կրօնի պատրուակաւ իրենց ըրած քաղաքական անկարգութիւնները, անիրաւութիւններն ու Գերմանիայի խաղաղութիւնը տակնուվրայ ընելին: Ասով Հմայգայտեանք սկսան սասանիլ եւ մէջերնին երկպառակութիւն ու վհատութիւն մտաւ. անանկ որ կայսեր բանակէն զօրաւոր բանակ մը ժողոված բլլալով ալ բան մը չկրցան ընել: Իսկ ինք առանց պատերազմի շատ իշխաններ ու մեծամեծ քաղաքներ իր հպատակութեան տակ առաւ. եւ իր զօրքը՝ իր Փերդինանդ եղբօրն ու Սպարանիայի Մարիի դքսին զօրաց հետ միացընելէն ետեւ, Միւլպերկի քով առաջին ճակատար տուաւ, որուն մէջ Հմայգայտեանք յաղթուեցան, Սպարանիայի կայսրընարին ալ վերադարձուաւ ու գերի ինկաւ (1547, Ապր. 24): Անանկ դիւրին ու շուտ եղաւ նոյն յաղթութիւնը, որ Աարսլուս՝ Անտարի նշանաւոր խօզրը քրիստոնէակայել կերպով մը դարձընելով, կրցաւ գրել. Եկայ, տեսայ, Աստուած յաղթեց: Թէպէտ ոմանք իրեն խորհուրդ կու տային որ գերի բռնուած կայսրընարին իր ապստամբական գոր-

ճոյ հասնար մահուան դատապարտէ, բայց կայսրն ասոր հակառակ խորհուրդ տուողներուն խօսքը մտիկ ընելով, որովհետեւ կայսրընտիրը չէր ուզէր իր հպատակները համոզել որ կայսեր քաղաքային իշխանութեան հնազանդին, զինքն աստիճանէն վար առաւ եւ իր երկիրներուն մէկ մասին հետ իր կայսրընտրական պատիւը՝ Մաւրիկ դքսին տուաւ (1548, Փետր. 24): Այսպէս Սաքսոնիայի կայսրընտրութիւնն Էռնեստեան ջեղէն՝ Ալպերդեան ջեղին անցաւ: Արդէն Միւլպերկի յաղթութենէն քիչ մը ետքը Հեսսէնի աշխարհակամար նեղ մտնելով եւ Մաւրիկէն խօսք առնելով որ կայսրը զինքն ազատ թող կու տայ, անձնատուր եղած, սակայն Սաքսոնիայի կայսրընտրին պէս բանտարկուած էր (1547, Յունիս 10): Ասանկով Շմալդարտեանք իրենց երկու գլխաւոր նեղուկը կորսնցընելով, բոլորովին վհատութեան մէջ ինկած՝ ամէն կողմ տեղի տուին, որով եւ գրեթէ բոլոր Գերմանիա կայսեր հնազանդութեան տակ մտաւ:

48. Կայսեր բռնած ընթացքը: Աւիսպուրկի տաղածողովները: Շմալդարտեան դաշնակցաց այսպէս բոլորովին կոնալէն ետեւ, կայսեր ձեռքն էր նոյն պարագային իրեն տուած առաւելութիւնը յոգուա դործածելով՝ բողոքողներուն հետ ուղածին պէս վարուիլ: Բայց ինք ամենեւին միտք շունէր բռնութեամբ ու զէնքի զօրութեամբ զիրենք ստիպել նորէն ուղղափառութեան դառնալու. հապա կ'ուզէր որ նոյն դարձը՝ որուն որտանց կը բաղձար, ներքին համոզմանէ յառաջ գայ. անոր հասնար սկսաւ դարձեալ ժողովներ ու բանակցութիւններ ընել տալ, որպէս զի անոնցմով զիրենք միարանէ: Աս մտքով ամէն կողմ բողոքողներն իրենց ունեցած վիճակին մէջ հանդարտ ու հանգիստ թողուց եւ իրենց կրօնական ազատութեան գէժ բան մը չբրաւ: Բոլոր բրածն աս եղաւ որ Գորնիայի արքեպիսկոպոսին գէժ քահանայապետին տուած վճիռն ի դործ զնեւ տարով՝ զինքն իր աստիճանէն վար առաւ. Նաւձ

պուրկի օրինաւոր ուղղափառ եպիսկոպոսն ալ իր տեղը դարձրնելով, բողբոջներուն անոր տեղը դրած անձն անկից հեռացուց: Իսկ իր բաղձացած միաբանութեան վախճանին հասնելու համար, Աւկուպուրկ աւագաժողով մը դուժարել տուաւ. որովհետեւ Տրիդենտ քաղաքին մէջ նոյն ատեն ժանտախա սկսելուն համար՝ բնդհանուր ժողովը միջահաստած էր: Աւկուպուրկի աւագաժողովոյն մէջ Առժամանակեայ անուամբ գրուածք մը հանեցին (1548, Մայ. 15), որով կ'որոշուէր թէ մինչեւ բնդհանուր ժողովոյն բան մը սահմանելը՝ բողբոջք ինչ կերպով պիտի վարուին: Բայց ինչպէս արդէն յայտնի էր, սա ալ օգուտ մը չբրաւ, վասն զի իրենցմէ խիստ քիչերն սա բանս յանձն առին: Արկուտարի ետքը նոյն քաղաքը նոր աւագաժողով մ'եղաւ (1550), որուն մէջ կայսրը շատ ջանաց բողբոջները համոզելու որ բնդհանուր ժողովը նորէն բացուելուն պէս՝ մարդ խաւրեն: Եւ թէպէտ քանի մ'իշխանք իրենց աստուածաբանները հոն խաւրեցին (1552). բայց անոնք ժողովոյն մէջ մտնելու համար անանկ պահանջումներ բրին, որ անկարելի էր զիջանել. որով եւ ժողովոյն վրայ սա նկատմամբ եղած յուսոյ փոքր նշոյն ալ ոչընչացաւ:

49. Կայսեր խորհուրդները: Մարիկ կայսրընտրին ապստամբութիւնը: Կայսեր միտքը նոյն ատեն գլխաւորաբար մէկ խորհրդով զբաղեալ էր, այս ինքն՝ կուզէր իր կրած երկու (Սպանիական ու Վերմանական) թագերն իր Փիլիպպոս սրդւոյն տալ, որովհետեւ կը կարծէր թէ իր տան զօրութիւնը՝ միայն սա բանիս վրայ հաստատուած է: Բայց որչափ որ ալ ջանաց եւ աշխատեցաւ, նոյն խորհուրդը չկրցաւ գլուխ տանիլ. միանգամայն անոր պատճառաւ մեծ նեղութիւններ կրեց: Ինք թէեւ ամենեւին մտքէն ալ չէր անցընէր Վերմանիայի սահմանադրութիւնը ջնջել. բայց եւ այնպէս նոյն սահմանադրութեան վրայ իր ունեցած գաղափարը՝ աւագանւոյն գաղափարէն բոլորովին տար-

բեր էր: Ի վերայ այսր ամենայնի հասանական է որ ուղարկ գլուխ կը հանէր, եթէ նոյն աւագանւոյն մէջ չգանուէր մէկը, զորն որ կայսրն՝ երկայնժամանակեաց ծանօթութենէ կտես ալ՝ աղէկ չէր կրցեր ծանշնալ, եւ որն որ իր դիտաւորութեանց կատարումն արգելեց: Կարօլոս Ե-ին խորհուրդները տակնուվրայ ընող իշխանն էր Ապրսոնիայի Մարիկ կայսրընաիրը: Ասիկայ՝ որ արտաբուստ կայսեր կողմը բռնելով՝ բոլոր իր բաղձանքներուն հասած էր եւ ալ անկէ յուսալիք մը չունէր, միտքը դրաւ որ անոր զօրութիւնն ու Շմալզալտեանց վրայ բրած յաղթութեամբ ձեռք բերած իշխանութիւնը նուազեցրնէ, եւ ինք բողոքողաց գլուխ ըլլալով, իր անձնական իշխանութիւնը մեծցրնէ: Աս նպատակաւ սկսաւ պատրաստութիւն տեսնել: Բայց յայտնապէս զօրք ժողոված ատենն ալ իր բուն դիտաւորութիւնը կրնար ծածուկ պահել, աղէկ առիթունենալով կայսեր իրեն տուած հրամանը (1550) որ զօրքով Մակաեպուրկ քաղաքը հնազանդեցրնէ, որ քաղաքն որ տակաին ապաստամբութեան մէջ մնացած եւ ուրիշ տեղերէն մերժուող կամ վախշող խիստ բողոքողաց ապաստանարանն եղած էր: Իսկ զօրածողովն այնչափ աւելի դիւրութեամբ գլուխ կրնար հանել, որ կայսրը վերոյիշեալ վախճանաւ իրեն շատ ստակ ալ տուած էր: Պատրաստութիւններն ու պաշարումը Մարիկ դիտմամբ մէկ տարիէն աւելի երկրնցուց. վերջապէս քաղաքն անձնատուր եղաւ (1551, Նոյեմ. 5): Կայսրընաիրը նոյն միջոցին բաներն աղէկ կարգաւորած էր. չէ թէ միայն Վերմանիայի բողոքող իշխաններուն հետ դաշնակցութիւն մը գրած էր՝ կայսեր գէմ պատերազմելու համար, այլ նաեւ Վաղղիայի Հենրիկոս Բ. թագաւորին հետ գաղտուկ միաբանած էր Փրիտվալտի դաշնագրութեամբ (1551, Հոկտ. 5), որուն պատրուակ առնուած էր թող չտալ որ կայսրը Վերմանիայի ազատութիւնը ճնշէ: Վերմանացիք թագաւորին կը խոստանային որ առաջին անգամ կայսեր ընտրութիւն

եղած աստն՝ զինքն ընտրեն. միանգամայն թող կուտային որ Մէջ, Գուլ, Վէրտէօն ու Գանպրէ քաղաքները զօրօք բռնէ. իսկ ինք խօսք կու տար որ կայսեր զէմ իրենց ձեռք զարնելու պատերազմին մէջ իրենց օգնութիւն ընէ:

50. Պատերազմ: Բասաւեան դաշնագրութիւն: Բողոքող իշխանք այսպէս սաստիկ զօրանալէն ետեւ, Մաւրիկ գարձեալ կայսրմէ Հեասէնի աշխարհակոմսին ազատութիւնը խնդրեց, որուն ետեւէն կ'իյնար Տինգ տարիէ վեր. որպէս զի եթէ կայսրը զլանայ, ինչպէս որ հաւանական էր, իր ձեռք զարնելու գործադրութիւնը կարենայ օրինաւորութեան երեւոյթ մ'ունենալ: Կարորոս Ե.ին պատասխանը կայսրընտրին կարծածին պէս ժխտական ըլլալով, մէկէն պատերազմի սկսաւ (1552, Մարտ) եւ ամէն կերպ շարիքներով յառաջ կը տանէր, ան աստիճանի՝ մինչեւ Յովհաննէս Փրեզերիկոս կայսրընտրին իսկ կը ահաճէր: Մէկալ կողմանէ ալ Գաղղիացիք Էլլասի ու Վերին Ռենասի վրայ կը քայլէին: Կարորոս Ե. որն որ շատ անգամ Մաւրիկէն զգուշանալու ազդարարութիւններ ընդունած եւ նոյն կայսրընտրին խարէական խօսքերուն բռնուելով, ապահովութեան մէջ կեցած էր, հիմայ բոլորովին առանց պատրաստութեան դանուելով՝ խիստ նեղի եկաւ: Բողոքողք զօրաւոր բանակով մ'իր վրայ կու գային. արդէն Մաւրիկ Ինսպրուքի մօտեցած էր, ու կ'ուզէր հանկայսրը բռնել: Կարորոս հազիւ կրցաւ, զՅովհ. Փրեզերիկոս ազատ թող տալով, զիշերանց փախչիլ եւ Գիրոլի ձիւնապատ լեռներէն անցնելով, Գարինթիա ապաւինիլ: Ընկէ ետեւ իր Փերզինանդ եղբայրը բազրականաց հեա Բասաւեան դաշնագրութիւնն ըրաւ (1552. Օգոստ. 2), որուն զխտաւոր պայմաններն ասանք էին. 1. Հեասէնի Փիլիպպոս աշխարհակոմսն ազատ թող արուի եւ իր աստիճանին մէջ նորէն հաստատուի: 2. Բողոքականք կրօնի կատարեալ ազատութիւն ունենան, թէ կայսեր եւ թէ ուղղափառ աւա-

գանուցն կողմանէ : 3. Աւելց ամսուան մէջ աւագածո-
ղով մը գումարուի, որուն մէջ կրօնական երկպառա-
կութիւնները վերջորնելու միջոցներ մտածուին եւ կայ-
սեր դէմ եղած ամբաստանութիւնները՝ որ Գերմա-
նիայի ազատութիւնները կ'ուզէ ջնջել, քննուին :

51. Գաղղիական պատերազմ : Առսէլի զինա-
դադար : Ներքին շփոթութիւնք : Սրովհետեւ Մարիկ
նոյն Բատաւեան դաշինքն առանց իր Հենրիկոս Բ. գա-
շնակցին դրած էր, նոյն թագաւորն արդէն յառաջա-
դոյն սկսած պատերազմը յառաջ կը վարէր : Հենրիկոս
Լոթարինգիա մտած, եւ Ֆրիսլալտի գաշնագրու-
թեամբ բողոքական իշխաններէն իրեն տրուած իրաւ-
անց համեմատ, Մէյ, Գուլ ու Աերաէօն քաղաքները
բռնած էր (1552, Ապր.) : Բողոքողներուն հետ խա-
ղաղութիւն ըլլալէն ետեւ, կայսրն աշնան Գաղղիայի
դէմ արշաւանք մը սկսաւ եւ Մէյ քաղաքը պաշարեց .
բայց պաշարելոց իրենք զիրենք սաստիկ քաջութեամբ
պաշտպանելովն ու ձմերուան խստութեամբր, 25,000
հոգի կորսորնցրելով՝ չկրցաւ առնուլ (1552, Հոկտ.
31—1553, Յունու. 1) : Հետեւեալ երկու տարիները
պատերազմը շարունակուեցաւ, թէ Ստորին Նահան-
գաց սահմանները եւ թէ Իտալիա : Աերջապէս Յու-
լիոս Գ. քահանայապետին միջնորդութեամբն եղած
Առսէլի հինգ տարւան զինագաղարով (1555, Փետր.
5), Գաղղիացւոց ձեռքը մնացին թէ Լոթարինգիայի
եւ թէ Բիեմսնոգի մէջ իրենց բռնած ամբութիւնները :
— Աս պատերազմին ատենը, բողոքող իշխաններէն
ոմանք՝ Բատաւեան դաշանց դէմ՝ Գերմանիայի մէջ մե-
ծամեծ շփոթութիւններ ու կռիւներ կը հանէին : Ա-
տանց զլիաւորն էր Գուլմպախի Ալպերդ սահմանակամը,
որն որ Լոթարինգիա, Փրանգիա ու Աերսլալտիա գաւ-
առներուն մէջ իր պատերազմներն ու աւարառու-
թիւնները յառաջ կը տանէր : Մարիկ կայսրընտիրը՝
Փերդինանդ թագաւորին եւ ուրիշ քանի մը իշխան-
ներու հետ գաշնակցելով, ասոր դէմ ելաւ ու յաղթեց

(1553, Յուլ. 9). Բայց ինքն այլ պատերազմին մէջ վերաւորելով, երկու օր վերջը մեռաւ՝ առանց զուակ թող տալու: Կայսրընտրութեան աստիճանին մէջ իրեն յաջորդեց իր Ազոտոսս եղբայրը, որն որ Նաւմուրիի գաշնադրութեամբ (1554, Փետր. 14) Յովհաննէս Փրեզերիկոսին երկիրներուն մէկ մասն անօր ետ դարձուց: Գիշ մը ետքը նոյն ծեր իշխանն այլ մեռնելով (1554, Մարտ 3), Էսնեպեան տան երկիրներն իր երեք զակրներուն մէջ բաժնուեցան:

52. Աւիսպուրիի կրօնական խաղաղութիւն: Հողերը վերապահութիւն: Գաղղիական պատերազմն ու Գերմանիայի ներքին շփոթութիւնները թող չէին տուած որ Բասաւեան գաշնադրութեան սրտման համեմատ՝ վեց ամուսան միջոցին մէջ աւազածողով մը գումարուի: Հողիւ երեք տարի ետքը կարելի եղաւ նոյն աւազածողովը Աւիսպուրիի մէջ գումարել (1555, Փետր.): Ասոր մէջ յայտնի տեսնուեցաւ թէ սրչափ անհիմն խօսք է եղեր կայսեր դէմ եղած ամբաստանութիւնը՝ որ Գերմանիայի ազատութիւնները կ'ուզէ ջնջել. որովհետեւ ոչ զք ուզեց ասոր վրայ խօսիլ, ոմանք բռնելով որ արդէն արանջման պատճառները վերցուած են, ոմանք ալ թէ յառաջ այլ պատճառ չկար: Բայց կրօնական նիւթոց եւ կամ կրօնի պատճառաւ ու պատրուակաւ ելած շփոթութիւններուն վրայ եղած բանակցութիւններն ու վէճերը, ինչպէս արդէն կրնար ենթադրուիլ, խիստ երկայն տևեցին: Ութ ամսի շափ պարսպ տեղ բանակցելէն ու վիճելէն ետեւ, համազուելով որ նոյն երկպառակութիւններն ու շփոթութիւնները ոչ աւազածողովով եւ ոչ բնդհանուր ժողովով կրնան կարգի խոթուիլ, ուզեցին երկու կողմանց մէջ գտնէ արտաքին ու քաղաքական խաղաղութիւնը պահպանելու համար կարգ մը դնել: Ասով վերջնապէս կրցաւ դլուխ ելլել Աւիսպուրիի կրօնական խաղաղութեան գաշինքը (1555, Սեպտ. 26), որով երկու կողման այլ խաղաղութիւնը կ'ապահովացուէր:

ու մինչեւ Բասաւեան գաշնադրութիւնը բողոքողաց առած եկեղեցական ինչքերն ու ստացուածներն իրենց ձեռքը կը ձգուէր: Բայց աս զիջումները կամ ազատութիւնները՝ միայն Աւկայուրկի դաւանութեան հետեւողներուն կը տրուէր եւ ոչ թէ բոլոր նորադանդներուն: Ասկից զաս՝ թէպէտ բողոքող իշխանք կը պահանջէին որ անկէ ետեւ բողոքողութեան դարձող եկեղեցական աստիճանաւորք ալ իրենց իշխանութեան մէջ մնան, բայց ուղղափառք չէ թէ միայն յանձն շառին աս բանս, հապա՛ նոյն իսկ բողոքող մատենագրաց ըսածին նայելով՝ եւ ոչ իսկ կրնային յանձն առնուլ: Ուստի աս նիւթին վրայ ուղղափառաց ուղածին համեմատ եկեղեցական վերապահութիւն՝ ըսուած վճիռը տրուեցաւ: — Ասանկով թէպէտ նորադանդութեամբ Գերմանիայի մէջ ելած քաղաքական շփոթութիւնները գէթ առժամեւ կարգադրեցան, բայց կրօնի աղէտալի բաժանումը՝ նաեւ քաղաքականօրէն հաստատուեցաւ ու սպառայ կռիւներու հիմ գրուեցաւ:

53. Կարողոս Ե-ին հրաժարումն ու մտնը: Աւկայուրկի խաղաղութեան գաշնիքը դրուելէն ետեւ՝ Կարողոս Ե. գլուխ հանեց շատանց միտքը գրած խորհուրդը, որուն մէջ զինքն աւելի հաստատած էին բախտին անհաստատութիւնն ու իր հիւանդոտութիւնը, այս ինքն՝ իր թագերէն հրաժարել: Բայց չկրցաւ միանգամայն իր մեկալ խորհուրդն ալ ի գործ դնել՝ երկու թագերը մեկտեղ միեւնոյն անձի վրայ միացրնելով, զորն որ ինք հարկաւոր կը սեպէր նաեւ Գերմանիային՝ օտար տէրութեանց նկատմամբ ազատ մնալուն համար: Աս թագերն արդէն նոյն ատենէն եւ իր ձեռքը բաժնուեցան, որովհետեւ Սպանիայի թագը Ստորին նահանգաց իշխանութեան հետ՝ իր միակ որդւոյն, Փիլիպպոս Բ-ին ինկաւ, իսկ կայսերական գահին վրայ իրեն յաջորդեց իր Փերդինանդ եղբայրը, որն որ 1531էն վեր Հռոմի թագաւոր էր: Ստորին նա-

Հանգաց եւ Սպանիական միապետութեան՝ Փիլիպպոսի արուիչն եղաւ Պրիստելի մէջ, առաջինը՝ 1553ին Հոկտեմբերի 25ին, իսկ երկրորդը՝ 1556ին Յունուարի 16ին։ — Կարօլոս քիչ մը ետքը կայսերական թագէն ալ հրաժարեցաւ (1556, Օգոստ. 27), եւ Էսդրամատուրայի Ս. Յուստոսի վանքը քաշուեցաւ, ուր որ երկու տարի վերջը մեռաւ (1558, Սեպտ. 21)։

54. Նորազանդութեան տարածումն ու բաժանումները։ Ըստ ժամանակի միջոցին մէջ նորազանդութիւնն ընդհանրապէս ան ընդարձակութիւնն ընդունած էր, որն որ ետքէն պահեց։ Նոյն ատեններն արդէն տարածուած էր Գերմանիայի՝ Սպրոսնիա, Պրանտենպուրկ, Պրանչուայկ, Հեսսէն, Մէքլենպուրկ, Հոլշթայն, Ֆալց, Պատն ու Վիւրզեմպերկ գաւառներուն եւ պետութեան քանի մը գլխաւոր քաղաքներուն մէջ։ Գերմանիայէն դուրս քանի մը հիւսիսային տէրութիւններու մէջ ալ մտած էր. նաեւ Հելլենասիայի եւ Անգղիայի մէջ տարածուած էր, բայց աս երկուքին մէջ՝ Լուտերէն անկախ սկզբնէ, ինչպէս քիչ մը ետքը կը տեսնենք։ Ըստ մասին մուտք ունեցած էր Գաղղիայի, Ստորին Նահանգաց, Բահեմիայի եւ Հունգարիայի մէջ ալ. սակայն նոյն երկիրներն ըստ մեծի մասին ուղղափառ վարդապետութեան հաւատարիմ մնացած էին։ — Բայց անմիաբանութեան ու երկպառակութեան սերմն արդէն բովանդակուած ըլլալով իր գլխաւոր սկզբանոց մէջ, այս ինքն թէ Արօնական նիւթերու մէջ Ս. Գիւրքը միակ կանոնն է, եւ ամէն մարդ անոր խօսքերն իր առանձնական մտաց համեմատ կրնայ իմանալ, նորազանդք շուտ մը զանազան հերձուածներու բաժնուեցան։ Ուրիշ մանր բաժանումներէ զատ, 1525էն վեր սկսած էր հազարգութեան վէճը, որով բողոքողք երկու գլխաւոր ճիւղերու կը բաժնուին։ — Ըստ նորազանդութեան քաղաքական հետեւութիւնները (որոնք միայն են մեր հոս միտ դնելիքը) իսկզբան անցողակի նշանակածնու պէս (36)։

միայն Գերմանիայի մէջ շմեացին, հապա նաեւ Եւրոպայի ուրիշ կողմերն ալ տարածեցան: Բայց զբնիստ որարար Գերմանիայի մէջ բոլոր ապագայ ժամանակներու համար անով մանաւանդ մեծ քաղաքական հետեւութիւն ունեցաւ նորազանդութիւնը, որ անոր զանազան գաւառներն իրարմէ զրեթէ բոլորովին բաժնեց, եւ մէկ վերին գլխոյ տակ միացած այլեւայլ իշխաններն իրարմէ անկախ եւ զրեթէ ինքնագլուխ վեհապետներ բրաւ, որով ան ահեղ ու զօրաւոր պետութիւնը խիստ տկարացաւ, եւ բոլոր յաջորդ դարուց համար երկպառակութեան ու անմիաբանութեան սերմ ձգուեցաւ:

Բ.

Անգղիայի, Հելլոստիայի, Ո'իւնկարայի ու Գաղղիայի մէջ նորադանդութիւն մտնելը:

55. Անգլիա. Հենրիկոս Ը-ին իր ամուսնէն բաժնուիլը: Հենրիկոս Ը- իսկզբան նորազանդութեան պնչափ հակառակ էր, որ Լուտերի մտորութիւններն իր տէրութեան մէջ գատապարտել տալէն զատ, ինք ալ անձամբ անոնց գէժ գիրք մը գրեց (1521), որուն համար Աղեմէս Է. քահանայապետն իրեն Պաշտպան հաւատոյ տխուղութիւն տուաւ: Բայց քանի մը տարի ետքը, իր անսանձ կիրքէն մղուելով, եկեղեցիէն բաժնեցաւ եւ տէրութիւնն ալ իր ետեւէն ձգեց: — Հենրիկոս իր Աստարինէ ամուսնոյն (9) հետ 17 տարի ապրելէն եւ երէք մանչ ու երկու աղջիկ զաւակ ունենալէն ետեւ, որոնցմէ՝ միայն Մարիամ անուն աղջիկ մը կենդանի մնացած էր, թագուհւոյն օրիորդներուն մէջէն Աննա Պոլին անուն մէկու մը վրայ աչք անկելով, ուղեց իր օրինաւոր կնոջմէ բաժնուիլ եւ անոր հետ ամուսնանալ, որովհետեւ օրիորդն ամենեւին ուրիշ կերպով չէր ուղեր անոր կամացը զիջանիլ: Աղեմէս Է. որուն նոյն նպատակաւ գիմեց թագաւորը (1527),

Թէպէտ շուրջ Տրաման տալ, բայց Եորգի արքեպիսկոպոսին ու Վասմէճճիոյ կարգինալին յանձնեց որ ամուսնութեան վաւերութիւնը քննեն: Քննութենէն ծագած արդիւնքը քահանայապետին ցուցուց որ Թագաւորին կամայը չիկրնար զիջանիլ. բայց որովհետեւ կը յուսար որ վրան ատեն անցնելով՝ անոր կիրքը կը մարի ու կը զգաստանայ, անոր համար ժխտական պատասխանը քիչ մ'ուշացուց. մանաւանդ որ Թագահին շուրջնով ինք զինքն ան երկու անձանց քննութեան ու դատաստանին տակ ձգել, վասն զի երկուքն ալ իր հպատակն էին, քահանայապետին անձնական դատաստանին դիմած էր: Բայց Հենրիկոսին կիրքն երթալով աւելի կը սաստկանար. ուստի եւ Թովմաս Գրոմուէլ անուն մէկու մը խրատին համեմատ՝ խնդիրն Եւրոպայի համարարաններուն դատաստանին տակ ձգեց: Վեմպրիճի ու Օքսֆորդի համալսարանները Թագաւորին բանեցուցած միջոցներէն յազմուելով, իր քմայը համաձայն որոշում տուին. Խաալիայի ու Վերմանիայի քանի մը համալսարաններ՝ միայն Թէութեամբ անվաւեր սեպեցին իր առաջին ամուսնութիւնը, այս ինքն՝ եթէ Աստարինէ իրեն հետ կարգուած ատեն՝ կոյս չէր. իսկ ուրիշները բոլորովին իրեն հակառակ վճիռ տուին: Ասոնք մէկ կողմանէ եղած ատեն, Թագաւորը տեսնելով որ Աննա յղի է, անոր հետ ամուսնացաւ (1533, Յունու. 25), վճիռ ալ հանեց որ ամենքը զանիկայ իրբեւ իր օրինաւոր ամուսինն ընդունին: Նոյն միջոցին Վենդրպրիտի արքեպիսկոպոսական գահը գատարկացած ըլլալով, նոյնը Թովմաս Գրեմէր անունով եկեղեցականի մը տուաւ, որն որ Վերմանիայի մէջ Լուսերի վարդապետութիւնն ընդունած ու գաղտնի կարգուած, եւ Թագաւորին առաջին ամուսնութեան սպօրինաւոր ըլլալը ցուցնելու համար գիրք մը շինած էր: Արդ սա մարդը Թագաւորին հրամանաւր՝ նոյն ամուսնութեան վրայ դատաստանական քննութիւնը բաւ ու վճիռ կարեց որ անվաւեր եւ սպօրինաւոր է:

որմէ քիչ մը վերջը Աննա Հանդիսութեամբ թագուհի պատկուեցաւ եւ իշխանուհի մը ծնաւ (Սեպտ. 7), որուն անունը Էդիսաթեթ գրին եւ Աւելի իշխանուհի հռչակեցին, այս ինքն՝ թագաւորութեան ժառանգ:

56. Անգղիայի հերձուածն եւ ուղղափառաց ու բողոքականաց հայածումը: Աղեմէս է. յառաջագոյն շէնքերիկոս եւ զԱննա խրատած եւ նզովքի սպանաւելք ըրած էր՝ իրենց տարի մը ժամանակ տարով: Արդ թագաւորը, որ արդէն շատոնց Գրոմուէլին խրատին համեմատ՝ սկսած էր հրատարակել թէ Անգղիայի եկեղեցւոյն գլուխն ինքն է (1531), հիմայ մէկ կողմանէ ընդհանուր ժողովքի բողոքեց, մէկալ կողմանէ ալ Գաղղիայի Փրանկիակոս Ա. թագաւորին ձեռքը Հռոմի հետ կը բանակցէր, յուսացնելով թէ քահանայապետն իրեն նպատաւոր վճիռ որ տայ, ինք ալ ուրիշ նիւթերու մէջ կը զննան: Բայց ամէն բան պարսպ գնաց. որոշում ելաւ որ Հենրիկոսի առաջին ամուսնութիւնը վաւեր է (1534, Մարտ 23): Սակայն աս որոշումը չարուած, արդէն թագաւորը խորհրդանոցին ձեռքով զանազան օրէնքներ հանած էր (1532), որոնցմով կը հաստատուէր թէ թագաւորն Անգղիայի եկեղեցւոյն բացարձակ գլուխն է, բոլոր եկեղեցական իշխանութեան լրութիւնն ալ իր վրայ կը գտնուի, այնպէս որ ամէն եպիսկոպոսք իրենց իշխանութիւնն իրմէ պէտք են առնուլ: Յաջորդութեան համար ալ որոշուեցաւ որ Հենրիկոսին առաջին ամուսնութենէն ծնած Մարիամ աղջիկը մերժուի եւ նոյն իրաւունքն Աննայէն ծնած զաւկըներուն անցնի: Պէտք էր որ ամէն Անգղիայի երգում ընէր աս յաջորդութեան իրաւունքը ձանձնալու: Աս անիրաւ ու սպօրինաւոր հրամանները չկատարողներուն դէմ սաստիկ բռնութիւններ ու անարունութիւններ ի գործ կը դրուէր: Շատ եկեղեցականք իրենցմէ ուզուած երգումը չընելուն համար՝ բանտարկեցան, կախեցան, գլխատեցան, կտոր կտոր կտրեցան, այրեցան. վաճառեցան շատերը՝ որոնք գի-

տութեանց բնակարան ըլլալէն զատ՝ հազարաւոր աղքատներու ապաստանարանն ու կերակրիչն էին, կործանեցան, ջնջեցան եւ ինչքերնին յարբուծիս անուեցան: Թագաւորը գթովմաս Գրոմուէլ իր ընդհանուր եկեղեցական տեղակալն անուանած էր (1535), եւ առ ամէն շարիքները անոր խրատովն ու միջնորդութեամբը կը գործէր: Քայց իր անազորունութեանց առարկաները՝ միայն ուղղափառք չէին, հապա բողոքողք ալ. վասն զի թէպէտ ինք կրօնական նիւթերու մէջ շատ բան բոս քմաց կը փոխէր, բայց թող չէր տար որ ուրիշներն ալ ուզածնին փոխեն. անոր համար շատ բողոքողներ սպաննել տուաւ, ոմանք՝ իրրեւ հերեւիկոս, ոմանք ալ՝ իրրեւ մատնիչ: Ասոնց պատճառաւ տէրութեան հիւսիսային կողմերը ժողովուրդն ոտք ելաւ (1536, Հոկտ.). բայց ապաստամբութիւնը զուգուեցաւ եւ բազմաթիւ սպանութիւններ եղան (1537. Փետր.):

57. Հենրիկոսի այլեւայլ ամուսնութիւններն ու մահը: Սերջապէս նոյն իսկ առ ամէն շարեաց զլիսաւոր պատճառը կամ գործիքը թովմաս Գրոմուէլ ալ, թագաւորին ատելի եղաւ եւ իրրեւ մատնիչ սպանուեցաւ (1540, Յուլ. 29), որուն վրայ բոլոր ազգն ուրախացաւ: Ասոր զլիսաւոր առիթն ան եղաւ, որ նոյն Գրոմուէլ միջնորդ եղած էր Հենրիկոսին՝ Գլեւի դքսուհւոյն հետ կարգուելուն: — Հենրիկոս՝ Աննա Պոլինէն ձանձրանալով եւ աչքն անոր փիկիններէն Յովհաննա Սիմէորին վրայ ձգած ըլլալով, զԱննա բանտարկել ու մահուան դատապարտել տուաւ (1536, Մայ. 15), նոյն փիկինն սպանուելուն պէս (Մայ. 19), Գրեմմեր արքեպիսկոպոսը, առաջին վճռոյն դէմ՝ վճիռ տուաւ որ թագաւորին անոր հետ ամուսնանալն սպորինաւոր էր, որով Նիլսարեթ իշխանուհին ալ թագաւորութեան ժառանգ ըլլալու անկարող վճռուեցաւ: Աննային սպանուելուն երկրորդ օրը Հենրիկոս վերջիչեալ Յովհաննային հետ կարգուեցաւ, որն որ զեղուարդ Զ.

ճաննելէն ետեւ՝ մեռնելով (1537. Հոկտ.), թագաւորը, վերը յիշուածին համեմատ՝ Գրամուէլի միջնորդութեամբը, Գլեւի Աննա դքսուհւոյն հետ ամուսնացաւ (1540)։ Բայց նոյն իշխանուհին շահանելով, քանի մ'ամիս վերջը դարձեալ Գրեկնաւորին վճռովը մերժեց, եւ ամէւ մ'ետքը զԱստարինեւ Հաւրթա կին առաւ։ Ասոր հետ ալ տարիէ մ'աւելի ապրելէն ետքը, մեռցրնել տուաւ (1542, Փետր.) եւ վեցերորդ անգամ կարգուեցաւ Աստարինեւ Բարբին հետ։ — Աւերջապէս մահը զԱնդղիսա սա շարաշուք բռնաւորէն ազատեց (1547, Յունու. 28), որուն նմանը Ներսէէն աւրամեախաննուէն ետեւ քաղաքակրթեալ աշխարհքը գրեթէ երբեք տեսած չէր, կ'ըսեն նոյն իսկ բողոքոյ մատենագիրք։

58. Եղուարդ Զ.։ Բողոքականութիւն։ Գահակայութեան շփոթութիւնը։ Հենրիկոս Բ. մեռած ատեն անոր Եղուարդ Զ. որդին հազիւ տասը տարւանք ըլլալով, 16 հոգւով խնամապետութիւն մը դրուեցաւ, որուն գլուխն էր իր մօրեղբայրը Եղուարդ Արմէօր՝ Սամբրսկի գաւթոր, որն որ Պաշտպան անուանեցաւ եւ շուտ մը մեծ իշխանութիւն ստացաւ։ Ասիկայ նորազանգութեան կողմն ըլլալով, Գրեկնաւորի օգնութեամբն աւստրիացի անոցին միջնորդութեամբը կրցաւ բողոքոյութիւնն Անդղիայի մէջ խաթել, Նորազանգից աշքին մեծ փուշ էր Մարիամ իշխանուհին Հենրիկոս Բ.ին իր առաջին օրինաւոր ամուսնութենէն ունեցած զուակը, որովհետեւ անիկայ թագաւորութեան ամենէն մերձաւոր ժառանգն էր եւ եռանդնոտ ուղղափառ։ Անոր համար ամէն նաեւ բռնական միջոցներով ջանացին զինքը բողոքոյութեան դարձրնել. բայց անկարելի եղաւ։ Իր Եղիսաբեթ քոյրն ալ թագին իրաւունքը նորէն ստացած էր, որովհետեւ Հենրիկոս Բ.ին կտակովն աւստրիացի անոցին սրտմամբը՝ երկուքն ալ իրրեւ ժառանգ ճանչցուած էին։ Ասոնցմէ ետքը կու գային Ակոմախի տիրոյց ցեղին (Սղուարդեան) իշխանները

և արիչ խել մը մարդիկ, որոնք կերպով մը ազգա-
կանութեամբ կամ խնամութեամբ թագաւորական ցե-
ղին հետ կապակցութիւն ունէին: Ասոր համար մեծ
չփոթութիւններ ելլելու վախ կար, ինչու որ Եղուարդ
Զ. հիւանդոտ էր և կը տեսնուէր թէ երկայն կեանք
պիտի չունենայ: Նոյն շփոթութիւնները սկսողն եղաւ
Թովմաս Արիւտ՝ Անգղիայի մեծ ծովագետն ու Պաշա-
պանին եղբայրը, որն որ Հենրիկոս Ը-ին վերջին կնոջը
հետ կարգուած և ևս թագաւորին աչքը մտած էր:
Ուստի և Պաշապանն ետեւէ ինկաւ իր եղբայրը մէջ-
տեղաց վերջընելու, զորն որ յաջողուց ալ. և Թովմաս
Արիւտ մահուան դատապարտուելով՝ սպանուեցաւ
(1549, Մարտ 20): Բայց ինքն ալ երկայն ժամանակ
հանդիսաւ շինաց. քիչ մը ետքը Տէօալի Ռուարիք կոմսն
իրեն գէմ ելաւ, բանտարկել տուաւ և ինք մեծ ծո-
վագետ եղաւ: Եւ թէպէտ Պաշապանը բանտէն ա-
զատեցաւ, բայց անանկով ալ Տէօալի՝ Նորթէօմպեր-
լէնտի դոքս անուանեցաւ և վերջապէս կրցաւ զՊաշա-
պանը զլիսատել տալ (1552, Յունու.): Անկէ ետեւ
սկսաւ ետեւէ իյնալ որ զՄարիամ և զԵղիսաբեթ
ժառանգութենէ մերժէ, և Անգղիայի թագն իր հար-
սին՝ Յովհաննա Արէյին ապ, որն որ Հենրիկոս Ը-ին
Մարիամ քրոջը թոռն էր՝ երկրորդ ամուսնութենէն
ծնած: Այնչափ ջանաց որ վերջապէս Եղուարդ Զ. նոյն
իշխանուհին իրեն յաջորդ անուանեց (1553, Յունիս)
և ինք քիչ մը վերջը յանկարծական մահուամբ մեռաւ
(Յուլ. 6):

59. Մարիամ թագուհի: Ազգափառութիւնը
նորէն կը հաստատուի: Թէպէտ Յովհաննա Արէյ Նոր-
թէօմպերլէնտի դոքսին օգնութեամբը թագուհի հա-
տարակեցաւ (Յուլ. 10), բայց իր թագաւորութիւնը
հազիւ քանի մ'օր տեւեց. վասն զի թէ ժողովուրդն
ու թէ ազնուականք իրենց օրինաւոր Մարիամ թա-
գուհին դահ հանեցին (Յուլ. 19): Նորթէօմպեր-
լէնտ երկու բնկերներով սպանուեցաւ (Օգոստ. 21):

խորհրդանոցն ալ Հենրիկոս Ը-ին առաջին ամուսնու-
թեան օրինաորութիւնը հաստատեց. միանգամայն Ե-
դուարդ Զ-ին ատենը կրօնական նկատմամբ եղած փո-
փոխութիւնները ջնջեց ու Հենրիկոս Ը-ին վերջին տա-
րիները գտնուած վիճակը դարձուց: Իսկ թագուհւոյն
բաղձանքն ան էր որ ուղղափառ կրօնը բոլորովին նո-
րէն հաստատէ, որուն համար մեծ հաստատութեամբ,
բայց միանգամայն մեծ չափաւորութեամբ ու խոհե-
մութեամբ սկսաւ գործել: Աս բանս երկու պարագայ-
ով աւելի գիւրբիցաւ. մէյ Տ'որ իր հակառակօրդաց
և Գաղղիայի ջանքին հակառակ՝ Սպանիայի Փիլիպոս
Բ. թագաւորին հետ կարգուեցաւ (1554, Յուլ-
25). մէյ Տ'ալ որ Յուլիոս Գ. քահանայապետը խա-
ղաղութեան սիրոյն համար զիջաւ որ Հենրիկոս Ը-ին ու
Եդուարդ Զ-ին ատենները յափշտակուած եկեղեցական
ինչքերը՝ նոյն ատենուան տեսրոյ ձեռքը թող արուին:
Ասոնք բլլալու ատեն՝ մեծերէն քանի մը հոգի իրբեւ
մասնիչ կամ ապստամբ սպանուեցան, որոնց մէջ էին
Յովհաննա Արէյ և իր ամուսինն ալ. իսկ Եղիսաբեթ
թէպէտ բանտարկեցաւ, բայց ետքը նորէն ազատեցաւ:
Նոյն տարի խորհրդանոցին վճռովն ալ Անգղիացւոց ազ-
գին Հռոմայ եկեղեցւոյն հետ նորէն միանալն որոշուե-
ցաւ (Նոյեմբ.): Թագուհին ամենուն ընդհանուր թո-
ղութիւն տուաւ (1555, Յունու. 18), և յարբուժիս
գրաւուած եկեղեցական ինչքերն ետ դարձրնելէն զատ,
չատ վանքեր հաստատեց և ձեռքէն եկածին չափ ջա-
նաց եկեղեցականաց կարօտութիւնը նուազեցրնելու:
Գոթախոտութեամբ ան ժամանակէն ետքը՝ փոխանակ
ջանալու որ նորաղանդները քաղցրութեան միջոցներով
և զիջմամբ դարձրնեն, քահանայապետին և ուրիշ
խոհեմ մարդիկներու խորհրդեան հակառակ սկսան
բռնական միջոցներ բանեցրնել: Աս գործողութիւնը՝
մեղմով խօսելով՝ խիստ անխոհեմ էր, որն որ գուցե
անով քիչ մը կարենայ ջատագովուիլ, որ նորաղանդք
քաղաքական նկատմամբ ալ ապստամբութիւններ ու

խոսվում թիւններ կը հանէին եւ իրենց քարոզիչները զերենք միշտ կը զրգուէին թագուհւոյն դէմ ոտք կը կելու:

60. ՀԵԼՈՒԵՏԻՆ. Յուինկլիի նորազանդութիւնը: Պարբէլի ճակատն ու կրօնական խաղաղութիւն: Պերմանիայի մէջ նորազանդութեան շփոթութիւններն ելած ստեն, միեւնոյն պատճառաւ աս երկրին մէջ ալ մեծ աղմուկներ պատահեցան: Հաստեղս կրօնական շփոթութեանց սկիզբ բնօրն եղաւ Ալբրիխ Յուինկլի քահանան (ծն. 1484), որն որ թէ Հելուետիա եւ թէ ուրիշ տեղեր ուսում սորվելէն եւ քանի մը եկեղեցական պաշտօններ կատարելէն ետեւ, վերջապէս Յիւրիխի մէջ քարոզիչ եղած էր: Հոն սկսաւ իր մուրբութիւնները տարածել (1519, Յունու.), եւ լուստերի պէս ներողութեանց քարոզուելէն առիթ առնելով, եւ անոր նման՝ աստուածաշունչը հաստոյ միակ կանոն դաւանելով, նոյն ազանդապետէն աւելի սաստկութեամբ՝ ուղղափառ վարդապետութեանց ու եկեղեցական պաշտամանց դէմ կը զինէր: Բայց անկից ունեցած գլխաւոր տարբերութիւնն աս էր, որ ինք կը սորվեցրնէր թէ հաղորդութեան խորհուրդը՝ Քրիստոսի մարմնոց եւ արեան, պարզ նշանք կամ պատկերն է ու լիկ մեր փրկագործութեան յիշատակը: Յիւրիխի քաղաքային պաշտօնատեսարբ Յուինկլիին կողմը բռնեցին, որով եւ նոյն քաղաքին ու նահանգին մէջ սկսան տարածուիլ իր մուրբութիւնները, որոնց ետեւէն եկաւ սաստիկ պատկերամարտութիւն եւ եկեղեցեաց աւեր ու սպականութիւն. պատարագը մերժուեցաւ, եկեղեցականք կարգուեցան, եկեղեցիներուն ու վանքերուն ինչքերը յափշտակուեցան, եւ քաղաքային պաշտօնատեսարբ եկեղեցական իշխանութիւնն իրենց ձեռքն անցուցին: Քիչ մը վերջը նաեւ Արկնակնուհրներն ալ իրենց կրօնական մուրբութիւններովն ու քաղաքական ցնորալից երազներովն (39)՝ երեւան ելան. թէ Յիւրիխ եւ թէ ուրիշ նահանգներու մէջ վերջովմուտքներ ու սպստամբութիւններ հանեցին, եւ վերջապէս

սաստիկ պատիժներով զուպեցան: Նոյն միջոցին եւ ետ-
քը ետեւէ ետեւ նորազանգութիւնը բոլորովին տի-
րեց Յիւրիխ, Պեռն, Պազէլ ու Շաֆհաւզն նահանգ-
ներուն մէջ. ըստ մասին տարածուեցաւ նաեւ Ալա-
բաս, Աբբենցէլ ու Սոլթուռն. իսկ Ուրի, Շուից, Ուն-
զերվալարն, Լիւցեռն, Յուկ ու Ֆրայցուրկ կատարեալ
ուղղափառ մնացին: — Նորազանգը, ինչպէս ամէն
տեղ՝ նոյնպէս հոս ալ, մէկ կողմանէ իրենց համար
ազատութիւն պահանջած ասեմնին՝ մէկալ կողմա-
նէ ուղղափառները հալածելով եւ անոնց դէմ ամէն
կերպ բռնական գործքեր գործելով, կամաց կամաց
երկու կողմանց մէջ զրգուութիւնները սաստկացան,
որոնցմէ նախ՝ կռիւներ ու ետքը պատերազմ պատճա-
ռեցաւ: Գարբէլի քով տրուած ճակատուն մէջ (1531,
Հոկտ. 11) յաղթեցան նորազանգը, որոնք ըստ մեծի
մասին Յիւրիխցիք էին: Յուինկլի՛ որն որ զինեալ իրեն-
ներուն հետ պատերազմի դացած էր եւ անոնց ստոյգ
յաղթութիւն կը խոտանար, 600 հոգւոյ հետ պա-
տերազմի դաշտին վրայ մնաց: Ուրիչ ճակատներու
մէջ ալ նորազանգը ընդհանրապէս յաղթուելով, վեր-
ջապէս ուղղափառ նահանգաց եւ Յիւրիխցոց մէջ խա-
ղաղութիւն եղաւ (1531, Նոյեմ. 15), որուն դաշին-
քը քիչ մը ետքը Պեռն նահանգն ալ ընդունեցաւ:
Ասանկով քաղաքական շփոթութիւնները գտնէ առ-
ժամն դադրեցան. բայց պատճառները մէջտեղաց վեր-
ցած չըլլալով, զրգուութիւնք միշտ կը շարունակէին:

61. ՃԻՆՆԻՐԸ. Կրօնական ու քաղաքական շփո-
թութիւնք: Կայուին եւ կայուինականութիւն: Ա՛ս կող-
մերն ալ նորազանգութեան շփոթութիւններով քա-
ղաքական ազմուկներ սկսած էին: Ճինեւրացիք ըստ մա-
սին նորազանգութեան դառնալով եւ Գաղղիացի փա-
խրատականաց բազմութեամբ զօրանալով, իրենք զի-
րենք ազառ հրատարակեցին իրենց եպիսկոպոսին իշ-
խանութենէն, որն որ իրենց քաղաքական իշխանն ալ
էր. պատկերամարտական աւերներով ուղղափառ կրօնք

ջնջեցին, ու բանտարկութիւններով, պատրներով եւ
 ուրիշ պատիժներով նորազանդութիւնը տարածելու
 սկսան (1535)։ Սաւոյայի Կարոլոս Գ. գուքսը, որն որ
 նոյն եպիսկոպոսարանին պաշտպանն էր, եկաւ Ճինեւրա
 պաշարեց (1536)․ բայց քաղաքացիք Հելուեափայի նոր-
 ազանդներէն օգնութիւն գտնելով, չէ թէ միայն պա-
 շարումը վերջընել տուին, հապա նոյն Սաւոյայի դքսին
 Վազլանտ գաւառն ալ ձեռք անցուցին եւ ամէն կողմ
 նորազանդութիւնը տարածեցին։ Քիչ մը ետքը Յով-
 հաննէս Կալուին Գաղղիացի ազանդապետը (ծն. 1509,
 Քիգարափայի Նոյն քաղաքը), որն որ Գաղղիացի մէջ
 այլեւայլ կողմեր իր մտրութիւնները վարդապետելէն
 ետեւ, հոնկից փախչելու ստիպուած էր (62), ժա-
 մանակ մը ասդին անդին պտրտելէն վերջը, Ճինեւրա
 եկաւ եւ հոն քարոզիչ ու սատուածարանութեան դա-
 սատու եղաւ։ Բայց որովհետեւ ինք ուղղափառ եկե-
 ղեցական պաշտամունքէն՝ ամենեւին եւ ոչ իսկ Յուին-
 կլիին շափ բան կ'ուզէր պահել, անոր համար քա-
 ղաքացիք՝ իր թշնամեաց գրգռութեամբը՝ զինքը հան-
 կից աքսորեցին (1538)։ Սակայն քանի մը տարի ետ-
 քը իր թշնամիները մեռած կամ հոնկից հեռացած
 բլլալով, նորէն Ճինեւրա կանչուեցաւ, եւ իր պատր-
 ման վճիռը ջնջուելէն (1541, Մայ․) ետեւ՝ ետ դար-
 ձաւ։ Ան ասնէն սկսաւ Կալուին ոչ միայն իրրեւ ա-
 ղանդի գլուխ, այլ իրրեւ բռնաւոր ալ տիրել, որով
 ուղղափառներն ու իրմէ տարբեր կարծիք ունեցող նոր-
 ազանդները սաստիկ պատիժներով եւ մինչեւ մա-
 հուամբ պատժելէն զատ, իրեն հետեւողներուն վրայ
 ալ արտաքոյ կարգի խիստ սաստիկանութիւն մը կը բա-
 նեցընէր, որն որ անանց մինչեւ անային կենաց ու գաղ-
 անի խօսակցութեանց վրայ կը տարածուէր։ Իր մտր-
 ութիւնները, թէպէտ չէ թէ միայն ընդհանուր եկե-
 ղեցոյ վարդապետութեանց՝ հապա մարդկային առողջ
 մտաց ալ դէմ էին, բայց որում ուրիշ այլանդակու-
 թիւններէ զատ՝ նաեւ կը վարդապետէր թէ Աստուած

չատ մարդիկներն առանց անոնց մեղաց և յանցանաց՝ հանջնաւոր դատապարտութեան տակ կը ձգէ. սակայն և այնպէս շատ տեղեր մուտք գտան, և զլիաւորաբար Գաղղիա, Ստորին նահանգները, Անգղիա, Գերմանիայի քանի մը կողմերը, և մինչև Լեհաստան, Քահեմիա, Հունդարիա ու Գրանտիլուանիա տարածեցան: Հաղորդութեան վրան Աալուինի մուրումթիւնը՝ Յուինկլիի կարծիքին համեմատ էր:

62. ԳԼԳԼԻԸ. Նորադանդութեան սկզբնաւորութիւնը: Արօնական շիտթութիւններուն սկսելու ատենէն, աղանդապետք ու իրենց աշակերտները մեծ ջանք կ'ընէին Գաղղիայի մէջ ալ իրենց մուրումթիւնները տարածելու: Իրօք ալ սողին անդին Յուինկլիի վարդապետութեանց հետեւողներ եղան, որոնց առաջին հասարակութիւնը Փարիզի մօտ Մոշի մէջ կազմեցաւ: Եւ թէպէտ խորհրդանոցը նոյն հասարակութիւնը ցրուեց և սաստիկ պատիժներու տակ ձգեց, բայց նորադանդք քանի մը մեծամեծաց քով ապաստանարան գտնելով, անոնց պաշտպանութեամբն ու իրենց խարեական խօսքերովը բաւական հետեւողներ ունեցան, որոնք այնչափ յանդգնեցան, մինչև Փարիզի մէջ սկսան պատկերամարտութեան գործքեր գործել (1528): Նոյն պատճառաւ ելած շիտթութիւններն ու աղանդաւորաց յանդգնութիւնն աւելի սաստկացան, երբ որ Աալուին սկսաւ Փարիզի մէջ իր մուրումթիւնները հրապարակաւ վարդապետել (1532): Անկէ երկու տարի ետքը նորադանդք այնչափ զօրացած էին, որ զիշեր մը ոչ միայն եկեղեցիներու վրայ ու հրապարակներու մէջ, հապա նոյն իսկ թագաւորական պալատին և մինչև ներքին սենեակներուն մէջ թշնամանական ու սպանալից թզթեր կ'պցուցին (1534): Ան ատեն Փրանկիսկոս Ա. իրենց զէժ սաստիկ խստութիւն ձեռք առաւ, որով շատ մարդիկ ու նաև Աալուին ձգեցին Գերմանիա ու Հելլուեոիա փախան. իսկ մնացողները նոյն թագաւորին կենդանութեան ատեն չէին

կրնար ծիկ հանել: Թեպէտ իր որդւոյն ու յաջորդին՝
 Հենրիկոս Բ.ին ատենն ալ (1547—1559) նորազանգ-
 ներուն զէմ՝ միեւնոյն խառութիւնը կը շարունակուէր,
 բայց անոնք ներքին կողմնակցութիւններու եւ արտա-
 քին պատերազմներու նպաստաւորութեամբ կը տարա-
 ծուէին ու մեծ քաղաքներու մէջ հասարակութիւններ
 կազմած էին: — Ա՞ս Գաղղիայի նորազանգք Կալուինի
 մոլորութիւններուն կը հետեւէին. բայց իրենք առան-
 ձին անուամբ՝ Հիւկընոյ կամ Հիւկեանք կը կոչուին,
 որուն ուսկից յառաջ գալուն վրայ հաստատուն բան
 մը չի գիտցուիր. միայն հաւանականաբար անանկ կը
 կարծուի որ Պուրպանեան ցեղին նախահօրը Հիւկ (Հու-
 կոյ) Կապէտին (Նախաշ. 15) անունէն առնուած բլայ,
 որովհետեւ, ինչպէս ետքէն կը տեսնենք, առ ցեղին
 իշխանները նոյն ազանդաւորաց պաշտպաններն ու
 գլխներն էին, եւ նոյն ազանդին ազատութիւն ձեռք
 բերելու պատրուակաւ մեծամեծ շփոթութիւններ
 պատճառեցին:

63. Յիսուսեանք: Ա՞ս նորազանգութեան Հա-
 տուածը շմբնցուցած՝ հարկ է որ համառօտի մը խօ-
 սինք ան ատենները հիմնուած Յիսուսեան ընկերու-
 թեան վրայ, որն որ նորազանգութեան զէմ իբրեւ ա-
 մուր թումբ մը կանդնուեցաւ. մանաւանդ որ նոյն ըն-
 կերութիւնը չէ թէ միայն կրօնական, հապա քաղա-
 քական նկատմամբ ալ շատ նշանաւոր եղած է: Ա՞ս
 ընկերութեան հիմնադիրն եղաւ Ս. Իգնատիոս Լյոս-
 լեան ասպետը (ծն. 1491), որն որ իր երիտասարդու-
 թիւնը Սպանիայի արքունիքն անցրնելէն ետեւ, Բամ-
 բելընայի պաշարման մէջ վերաւորեցաւ (25), եւ նոյն
 հիւանդութեան ատեն աշխարհքէս հրաժարելով՝ ինք
 զինքն Աստուծոյ նախրեց: Առողջանալէն ու Երու-
 սաղէմ երթալէն զալէն ետեւ, ուսումը կատարե-
 լագործելու համար Փարիզ գտնուած ժամանակ՝ քա-
 նի մը հոգւոյ հետ ծանօթութիւն բրաւ, որոնց մէջ

երևելիներէն մէկն էր Ս. Փրանկիսկոս Քաւերեան, եւ անոնցմէ եօթը հոգի մէկտեղ ուխտ բրին (1534) որ Ս. Երկիրն երթան եւ հոն անհաւատից դարձին զբազին. իսկ եթէ իրենց սա նպատակին չեն կրնար հասնիլ, իրենք զիրենք քահանայապետին տրամադրութեան տակ ձգեն, որ զիրենք ուղածին պէս եկեղեցւոյ ծառայութեան գործածէ: Իրենց գիտաորութիւնը զլուխ հանելու համար ծամբայ երած էին. բայց պատերազմներու պատճառաւ խափանեցան (1537): Անտան Իզնատիոս իր ընկերներովը Հոռոմ գնաց եւ իր ուրիշներացը ծառայութիւնը քահանայապետին նուիրեց, որն որ քանի մը տարի ետքը իր ընկերութիւնը հաստատակց (1540, 1543): Քիչ ատենուան մէջ սա ընկերութիւնն այնչափ բազմացաւ ու տարածեցաւ, որ բուն հաստատութենէն 13 տարի ետքը, հիմնադրին մեռած ատենը (1556), հազար անդամէն ու հարիւր անէն աւելի ունէր:



ԱՌԵՋԻՆ ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ

Գ. ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ ՊԱՏՄԱՌԻԹԻՒՆ

(1492—1555)

64. Գաղթականութեանց վրայ ընդհանուր տեղեկութիւն: Գաղթականութիւնք բներով, կ'իմացուին Եւրոպացիներուն՝ աշխարհքիս ուրիշ մասերուն վրայ նոր դառած, ձեռք անցուցած եւ կերպով մը հաստատուած երկիրները: Ասոնք իրենց նպատակին եւ ներքին կարգաւորութեան նայելով, շորս այլեւայլ կարգ կը բաժնուին: Ա. Մշակական գաղթականութիւնք, որոնց նպատակն է մշակութիւն կամ երկրագործութիւն ընդհանրապէս: Աս կերպ գաղթականութեանց բնակիչներն եղած տեղերնին երկիր ու կալուած կը ստանան, եւ բոլորովին հոն հաստատուելով, քիչ մը ետքը ճշգիւ առեալ ազգ մը կը ձեւացնեն: Բ. Տնկարկական՝ գաղթականութիւնք, որոնց վախճանն է, զլիսաւորաբար Եւրոպա խաւրելու համար, քանի մ'որոշեալ տնկերու (ինչպէս շաքարեղէգի, խահուէի, ծխախոտոյ, եւ այլն) բնական բերքեր յառաջ բերել: Աս տեսակ գաղթականք, թէպէտ դանուած տեղերնին երկիր ալ ստանան, ի վերայ այսր ամենայնի տեղւոյն բուն հաստատուն բնակիչքը չեն սեպուիր. իրենց թիւն ալ հասարակօրէն այնչափ չ'ածիր՝ որ ազգ մը կազմելու բաւական ըլլան: Մասնաւորաբար իրենց մէջ հասարակ է գերութեան վիճակը: Գ. Հանքահանական գաղթականութիւնք, որոնց գործքն է իրենց եղած տեղերը դանուած հանքերն ու մետաղները բրել հանել: Ասոնք կրնան շատ տարածուիլ, բայց իրբեւ միայն հանքահանական գաղթականք՝ չեն կրնար խիստ բազմութիւ ըլլալ: Դ. Առեւտրական գաղթականութիւնք, որոնց նպատակն է իրենց դանուած տեղերուն ծովու եւ ցամաքի բնական բերքերը, ինչպէս նաեւ նոյն

1 Plantage, Plantation.

տեղերուն բուն հին բնակչաց արուեստական բերքերը, վաճառականութեամբ ուրիշ տեղեր խաւրել: Իսկզբան ասանք իբրև վաճառականութեան տներու առանձին խմբեր էին. բայց կամոց կամոց, կամ զէնքի զօրութեամբ եւ կամ խորամանկութեամբ, ընդարձակուելով ու տարածուելով, աշխարհակալութիւններ ալ բրին. սակայն առանց իրենց գլխաւոր նպատակը փոխելու: Ասոնց մէջ գտնուող գաղթականք, թէպէտ երկրին տիրեն ալ, հասարակօրէն այնչափ ընդարձակ զեւտին ու կալուած չեն ստանար, որ տեղւոյն հաստատուն բնակիչքը սեպուին: — Շատ անգամ կրնայ պատահիլ որ միեւնոյն գաղթականութեան մէջ վերոյիշեալ նպատակներէն երկուքն ու երեքը մէկտեղ գտնուին. բայց այնպէտով ալ միշտ մէկ հասար գլխաւոր նպատակ կը մնայ, եւ անկից կ'որոշուի բոլոր նոյն գաղթականութեան նկարագիրը կամ բնութիւնը:

65. Գաղթականութեանց՝ մայր երկիրներուն հետ ունեցած յարաբերութիւնը: Ասոնց հետեւութիւնները: Թէ գաղթականութիւնք՝ մայր երկրին (գաղթականաց բուն ծննդեան երկրին) հետ ինչ յարաբերութիւն պէտք էին ունենալ, միայն երկայն փորձառութեամբ կրնար իմացուիլ: Իսկզբան աղէկ շճանչնալով թէ գաղթականութիւնք ինչչափ օգուտներ կրնան յառաջ բերել, աշխարհքիս հեռաւոր կողմերը երկիր ձեռք անցընող տէրութիւնն անոր միայն միտ կը դնէր, որ նոյն երկրին վրայ իր իշխանութիւնը հաստատէ, եւ ամենեւին թող չտայ որ ուրիշ տէրութեան հպատակներն ալ հանտեղը հաստատուին: Թէ արդեօք աս վարմունքն իրաւացի էր, թէ արդեօք օգտակար էր, ասոր վրայ մտածելն իսկ մէկուն մտքէն չէր անցներ: Բայց դժբախտութեամբ ասով իսկզբանէ Եւրոպացւոց գաղթականութիւնք այնպիսի ձեւի մը մէջ մտան, զորն որ ետքէն փոխելը զրեթէ անկարելի էր. թէպէտ եւ աս բանս թէ մայր երկիրներուն եւ թէ աւելի եւս նոյն իսկ գաղթականութիւններուն վնասա-

կար էր : Սակայն գաղթականութեանց վրայ եղած դա-
զափարները որչափ որ ալ պակասուոր էին , ի վերայ
այսր ամենայնի Եւրոպացւոց՝ սա կերպով օտար եր-
կիրներու մէջ հաստատուիլը՝ խիստ նշանաւոր դէպք
մըն էր , որն որ անմիջապէս շատ ծանրակշիռ հետեւու-
թիւններ ունեցաւ : Ա . Ընդհանուր կամ տիեզերական
վաճառականութեան ընթացքն ու կարգաւորութիւն-
ները ասկնովքայ եղան ու գրեթէ բոլորովին փոխուե-
ցան . վասն զի վաճառականութիւնը՝ որ յառաջագոյն
գլխաւորաբար ցամաքային էր եւ այնպէս պէտք էր որ
մնար , ալ անկէ ետեւ ծովային եղաւ : Բ . Իւրաքանչիւր
տէրութեան աշխարհագրական գրից՝ վաճառականու-
թեան նկատմամբ ունեցած ծանրակշիռութիւնը՝ յա-
ռաջուրնէ բոլորովին տարբեր սկսաւ մտածուիլ . որով-
հետեւ ալ Եւրոպայի արեւմտեան դաւառները վաճա-
ռականութեան գլխաւոր տեղերն եղան , ուր որ յառաջ
Միջերկրական ծովուն եզրները դանուող դաւառներն
էին : Իրօք ալ Եւրոպայի արեւմտեան կողմերուն երկու
աւելի հեռաւոր ազգերը , այս ինքն՝ Սպանիայիք ու
Բորգուկայիք , ամենէն յառաջ նոյն վաճառականու-
թեան ձեռք զարկին :

Ա .

Գաղթականութեանց սկզբնաւորութիւնն ու առա-
ջին գիւտերը (1492—1515) :

66 . Բորգուկայցոց առաջին նաւագնացութիւն-
ներն ու գիւտերը : Արնայ բուիլ որ գաղթականու-
թեանց սկզբնաւորութիւնը պատահական բան մըն էր ,
կամ թէ դոնէ սա նկատմամբ եղած գիւտերը՝ նոյն իսկ
ձեռք զարնողներուն ակնկալութիւնը հազարապատիկ
անցուցին : — Խիստ հին ատեններէ վեր շատ ազգեր ,
կամ ուղղակի կամ ուրիշ ազգաց միջնորդութեամբ ,
հազորակցութիւն ունէին Ընդկաստանի հետ , որն
որ ամէն դարերու մէջ իր մեծ դանձերուն եւ գրան-

Հելի բերքերուն համար շատ անուանի էր: Միջին դարուց մէջ նոյն հարուստ երկրին վաճառները, երկայն ու դժուարին ճամբաներով, Արեւելքի մեծ քաղաքները կը բերուէին, հոնկից ալ դարձեալ կարաւաններով Միջերկրական ծովուն նաւահանգիստները: Ըն ատենները նաւազնացութեան մէջ երեւելի եղող ազգեր, գլխաւորաբար Անեւտացիք ու Ճենուացիք, նոյն նաւահանգիստներէն առ վաճառքները նաւերով Արեւմուտք կը բերէին: Արդ առ ամէն դժուարութիւններէն եւ երկայն ու վտանգաւոր ճամբորդութիւններէն ազատելու համար, շատ մարդիկ կը մտածէին ծովու վրայէն ճամբայ դանել, որ թէ կարճ եւ թէ դիւրին կրնար ըլլալ: Բայց առ բանիս դործունեայ ու յարատեւ կերպով ձեռք զարնողն եղաւ, Ժե. դարուն առաջին կէսին Բորգուկալի Հենրիկոս իշխանը († 1460), Յովհաննէս Ե. Թագաւորին երրորդ որդին (Նախաշ. 45), որն որ նոյն պատճառաւ ալ Նաւազնաց (Նաւիկատոր) մականունն բնդունեցաւ: Ասոր Ատլանդեան ծովուն մէջ բնել տուած նաւազնացութիւններովը գանուեցան Բորգոյ սանդոյ (1418) ու Մատէիրա (1419) կղզիները: Իշխանը նոյն կղզեաց եւ առանձինն Մատէիրայի վրայ՝ Վիպրոսի որթատունկ եւ Հնդկաստանէն Արաբացուց ձեռքով Միկիլիա ու Վիպրոս բերուած շաքարեղէգ տնկել տուաւ, որոնք ան աստիճանի յառաջացան, որ քանի մը տարւան մէջ Մատէիրայի շաքարն ու դինին Բորգուկալցոց վաճառականութեան գլխաւոր ճիւղերէն եղան: Ասոնցմէ ետքը գանուեցան Ազորեան ու Գանարեան կղզիք, Կանաչ Հրուանդանի կղզիք, եւ սոկի աւազոյնն ու փղոսկրովը նշանաւոր Աերին Կուինէա, ուսկից ետքը սեւ դերիներ սկսան աճնուիլ: Ընդհանուր օգտին նկատմամբ աւելի ծանրակշիռ եղաւ Բորգուկալի Յովհաննէս Բ. Թագաւորին հրամանաւ Բարթողիմէոս Տիազ քաջ նաւապետին բրած նաւազնացութիւնը, որն որ Ափրիկէի վերջին հարաւային ծայրը հասնելով, հոն կրած սաստիկ մրկի մը պատճառաւ՝

նոյն տեղը Մըրկալից հրուանդան անուանեց (1486). իսկ թագաւորը նոյն անունը փոխելով, Բարեյուսոց հրուանդան կոչեց, որովհետեւ աս գիւտով աւելի եւս հաստատուած էր իր յուսոյն մէջ՝ թէ ծովով Հնդկաստան երթալու ճամբաց պիտի գտնուի: Իրօք ալ անկից տասուերկու տարի վերջը աս յոյսն ու բովանդակ Եւրոպայի բաղձանքը կատարուելով, նոյն ճամբան գտնուեցաւ Ղասգոց Կամային՝ Իմմանուէլ Մեծին հրամանաւ բրած նաւագնացութեամբը (69):

67. Սպանիացոց գիւտերը: Արեւմտեան Հրնդկաստան ու Ամերիկա: Օտովով գէպ ի Հնդկաստան ճամբաց գտնելու բաղձանքէն եւ Բորդուկալցոց արդէն բրած գիւտերէն՝ յառաջ եկան Սպանիացոց բրածներն ալ: Քրիստափոր Կոլումբոս Ճենուային, որուն երեւակայութիւնը՝ հարուստ ու անձանօթ երկիրներու հին եւ կէս մ'առասպելական պատմութիւններէն՝ պզտիկուց զրգուած եւ զանոնք գտնելու բաղձանքով վառուած էր, Բորդուկալցոց բրած առաջին գիւտերոյն իր խորհուրդներուն մէջ աւելի եւս հաստատուեցաւ: Բայց նոյն նպատակին համար իր հայրենիքէն, Բորդուկալէն ու Անգղիայէն խնդրած օգնութիւնը չկրնալով ընդունիլ եւ իրրեւ բախտախնդիր ու առասպելախոս մերժուելով, Սպանիա դիմեց: Հոն ալ թէպէտ իսկզբան բրած փորձերն անօգուտ եղան, բայց վերջապէս վանքի մը դիտուն արբայէն օգնութիւն ու քաջալերութիւն գտնելով, եւ մէկ երկու մեծ եկեղեցականաց միջնորդութեամբը՝ Եղիտարեթ թագուհոյն առջեւ մուտք ունենալով, աղէկ ընդունելութիւն գտաւ, հրաման ալ առաւ որ երեք նաւով իր գիւտերուն ետեւէն իյնայ: Իր աս պզտիկ նաւախումբը երկայն ժամանակ (1492, Օգոստ. 3էն վեր) բաց ծովու վրայ պտրտելէն ետեւ, գրեթէ ամենուն յուսահատած աւտներ՝ ԿուանաՀանի կղզին հասաւ (1492, Հոկտ. 12), որն որ իր բոլոր ապագայ գիւտերուն սկիզբն եղաւ: Կոլումբոս նոյն կղզւոյն առանց պատերազմի Սպանիայի

(Գ. ասոզիլիայի) անուամբ տիրելէն եւ անունը Ս. Փրկիչ զնելէն ետեւ, իր արչուանքը յառաջ վարեց, Գուպա եւ Հայիդի (Սպանիոլա կամ Ս. Տամինկոյ) մեծ կղզիներն ալ գտաւ, եւ վերջինին վրայ ամբողջ մը շինելէն ու գաղթականութիւն մը հաստատելէն ետեւ՝ Սպանիա դարձաւ։ — Արտֆէն եւ աս երկիրները գլխաւորաբար Հնդկաստանի ճամբան գտնելու համար եղած նաւագնացութեան մէջ գտնուած էին, միանգամայն ան տակնները տակաւին Հնդկաստանի մաս կը սեպուէին, անոր համար Արեւմտեան Հնդկաստան անուանեցին, որ անունն որ մինչեւ հիմայ կը պահեն. իսկ բուն Հնդկաստանին՝ Արեւելեան Հնդկաստան կ'ըսեն։ — Աս գտնուած երկիրներուն վրայ Սպանիացւոց ու Բորդուկալցոց մէջ վէճ բացուելով, խնդիրն Աղէքսանդր Զ. քահանայապետին որոշման տակ ձգեցին, որն որ որոշեց որ Ազորեան կղզիներէն զէպ ի արեւմուտք 370 մղոնէն անդին եղած երկիրները Սպանիացւոց ըլլայ, իսկ ասոյին եղածները՝ Բորդուկալցոց (1493, 1494)։ — Կորումբոս իր առաջին ճամբորդութենէն ետեւ՝ երեք մեծ ճամբորդութիւն ալ բրաւ (Բ. ճամբ. 1493 — 1496, Գ. ճամբ. 1498 — 1500, Գ. ճամբ. 1502 — 1506), որոնց մէջ շատ մը կղզիներ եւ գլխաւորաբար ճամայիգա կղզին գտնելէն ետքը, վերջապէս Օրինդոյի բերաններուն մօտ Հարաւային Ամերիկայի ցամաք երկիրն ալ գտաւ։ — Աս վերջին երկիրն իր անունն առաւ ետքէն ան կողմերը ճամբորդութիւն ընող ու նոյնին պատմութիւնը գրող Ամերիկոս Աետուզի Փլենտայիէն։ Իսկ Կորումբոս չէ թէ միայն աս կողմանէ զրկու՞մ կրեց, հապա իր նախանձորդաց շարախօսութիւններովը շղթայի ալ զարնուեցաւ, ու բոլոր իշխանութիւններէն մերկացած՝ ողորմելութեան մէջ մեռաւ (1506)։

68. Սպանիացւոց գտած տեղերուն ոսկեհանքներն ու բնակիչները։ Սպանիացւոց գտած կամ գաղթականութիւն հաստատած երկիրները՝ գլխաւորաբար

Ս. Փրկիչ (Կուսնահանի), Գուպա, Հայիգի (Սպանիւ-
լա կամ Ս. Տովինկոյ) եւ Ճամնոյիգա ըլլալով, որոնք
թէպէտ ըստ ինքեան բարեբեր՝ բայց անմշակ ու վայ-
րենի մնացած տեղեր էին, եւ անոր համար ալ ներկայ
ժամանակին մէջ իրենց նիւթական շահ մը չէին մա-
տակարարեր, մեծ բանի տեղ գրին Սպանիւլայի վրայ
եղող Սիպաոյ լերանց սոկեհանքները: Աւստի եւ իրենց
բոլոր մտադրութիւնը նոյն նիւթին վրայ դարձնելով,
սոկի եւ արծաթ բրել հանելը՝ խել մ'ատեն դաղթա-
կանաց միակ նպատակն եղաւ: Աս պարագան երկրին
հին բնակիչներուն վերջին աստիճանի գծրախտութիւն
ու խեղճութիւն պատճառեց. որովհետեւ սոկոյ եւ
արծաթոյ ծարաւով պայտակած Սպանիացիք անոնց
ձեռքը դանուած կտորները կէս մը քաղցրախառն խա-
բէութեամբ, կէս մ'ալ բոնութեամբ յափշտակելն
ետեւ, սկսան նոյն խեղճ մարդիկն արտաքոյ կարգի ան-
գթութեամբ գերոյ պէս հանք հանելու գործածել:
Ասով եւ իրենց անկարգ բնթացից պատճառաւ իրենց
ու տեղացւոց մէջ ելած կռիւներով, նոյն բարեմիտ ու
գրեթէ անզէն մարդիկ քանի մը տարւան մէջ կրնայ
ըսուիլ որ բոլորովն ջնջուեցան:

69. Բորդուկալցիք ծովով Հնդկաստանի ճամ-
բան կը դանեն ու հոն կը հաստատուին: Ինչպէս վերը
նշանակեցինք (66), Ասագոյ Կամայ անվեհեր ու ձեռն-
արկու նաւապետը, Իմմանուէլ Մեծին հրամանաւր,
դէպի Հնդկաստան ծովով ճամբոյ դանելու նպատա-
կաւ սկսաւ նաւազնացութիւն ընել: Հնդկային ովկիա-
նոսէն անցնելէն, եւ յաջորդարար Սոֆալա, Մոզամ-
պիգ ու Մելինտա կենալէն ետեւ, վերջապէս Մելին-
տայի թագաւորէն առած նաւուղին օդնութեամբը,
սասն ամսէ աւելի նաւազնացութենէ ետքը, Հնդկաս-
տանի Գալիգուգ քաղաքը հասաւ (1498, Մայ):
Իսկզբան անդ տեղոյն թագաւորը զինքը սիրով ընդ-
ունեցաւ եւ իր առաջարկութեան համեմատ՝ Բորդու-
կալի թագաւորին հետ դաշնաւորութիւն ընել կ'ու-

զէր. բայց ետքը իր ժողովրդեան զրգուելով՝ իրեն դէմ ելաւ, անանկ որ Բորգուկալցիք խել մը մարդ կորսընցուցին եւ հազիւ կրցան եւ դառնալ: Ասկից աւելի յաջողութիւն չդատաւ Պետրոս Ալուարէզ աե Գապրալ, որն որ ճամբան մրթիկներէն դէպ ի արեւմուտք մղուելով՝ Պրագիլիա դանելէն ետեւ, Հնդկաստան հասած էր (1500). բայց աեզ աեզ վաճառականութեան աներ հաստատելով եւ աեզացի իշխանաց հետ բարեկամութիւն ընելով, Բորգուկալցոց բաղձանքն աեղջուց: Անոր համար Իմենուէլ Մեծ դարձեալ կրորդ արշաւանք մ'ընել տուաւ Վասոդոյ Կամային (1502). սակայն ոչ առ, ոչ ալ Լորոյ Սուարէզ ծովագետին արշաւանքը (1504) երեւելի յաջողութիւն մ'ունեցաւ: Հնդկաստանի մէջ Բորգուկալցոց իշխանութիւնը հաստատողներն եղան Ալմխատա եւ Ալպուքերքէ: — Փրանկիսկոս Ալմխատա, որն որ Հնդկաստանի փոխարքայ անուանած էր, Հնդկաց բաղձութիւ զօրաց յաղթելով, քանի մ'իշխաններ հարկատու բրաւ, եւ ստիպեց հրաման տալու որ իրենց մայրաքաղաքներուն մէջ ամրոցներ շինեն ու առեւտրական գործակալութեան աներ¹ հաստատեն (1505—1509): Նոյն ժամանակները Բորգուկալցիք արդէն Սէյլան գտած եւ բնակիչներուն հետ բարեկամութիւն կապած էին. նոյնպէս Սումադրա ալ գտած էին: — Ալմխատայէն վերջը փոխարքայ դրուեցաւ Ալպուքերքէ, որն որ Հնդկաստանի մէջ Բորգուկալցոց ունեցած իշխանութիւնը վերջին բարձրութեան հասուց: Կոս քաղաքն առնելով (1510), Բորգուկալի ստացուածնուն բուն միջնադարն ու մայրաքաղաքը եւ միանդամայն փոխարքային նիսան բրաւ: Մալագոզա հարուստ ու երեւելի քաղաքն ալ, ուր որ յառաջագոյն գաղթականութիւն մը հաստատած էին, բոլորովին առաւ (1511) ու ամրոց մը շինեց: Իր նաւերն աւելի յառաջ երթալով, Ճաւա, Ամպոինա ու Մոլուդեան կղզիները գտան,

¹ Factorie.

խակ ինք Ատէն առնելով (1513), կարմիր ծովն ալ Բորգուկալցոց առջևը բացաւ: Գալիզուզ ամրոց մը շինեց (1514). վերջապէս իր աշխարհակալութիւնները պսակեց Պարսից ծոցին մէջ Հիւրմիւզ (Օրմուս) քաղաքին ալ տիրելով (1515):

70. Բորգուկալցոց գաղթականութիւնն հաստատելու կերպն ու Հնդկային վաճառականութիւնը: Բորգուկալցոց՝ Արեւելեան (բուն) Հնդկաստանի մէջ գտած ու հաստատուած երկիրներուն հանդամանքն ու նոյն խակ գտնելուն կերպը՝ անմիջապէս մեծ տարբերութիւն յառաջ բերաւ իրենց եւ Սպանիացւոց գաղթականութիւններուն մէջ: Իրենք ետեւէ ետեւ եւ իբր թէ կարգաւ մը յառաջ գացած ու վերջապէս Հնդկաստան հասած ըլլալով, փորձառութեամբ շատ բան տեսած ու սորված էին. միանգամայն իրենց գտած երկիրներուն վիճակը չէր թողար որ հանք հանելու ետեւէ իյնան, անոր համար միայն առեւտրոյ փոյթ տանելու էին: Ասանկով որչափ որ աշխարհակալութեան բաղձանք ալ ունենային, ամենեւին մեծ երկիրներ իրենց անընդմիջական իշխանութեան տակ չէին առնուր. հապա, ինչպէս տեսանք, ասդին անդին մարդիկ թող տալով եւ երկրին բուն իշխաններն իրենց հարկատու ընելով, բոլոր վաճառականութիւնն իրենց կը սեպհականէին: Միայն իրենց վաճառականութիւնը պաշտպանելու եւ ծաղկեցընելու համար՝ գտած ամէն տեղերնին շղթայի պէս կարգաւ խել մ'ամրոցներ կը շինէին ու առեւտրական գործակալութեան աներ կը դնէին: — Կոստէն գատ, իրենց դիտաւոր տեղերն ասոնք էին. Ափրիկէի ծովեզերաց վրայ՝ Սոփալա, Մոզամպիգ եւ Մելինտա. Պարսից ծովածոցին քով՝ Մասգադ եւ Հիւրմիւզ. Տեգանի վրայ՝ Տիւս եւ Տաման. Մալապարի վրայ՝ Գաշին եւ ուրիշ տեղեր. Գորոմանտէլի վրայ՝ Նեկարագամ եւ Մելիարուր. Մալագապի թերակղզւոյն վրայ՝ անուանակից քաղաքը: — Բորգուկալցոց Հնդկաստանի հետ ըրած առուտուրը՝ թէպէտ ընկերու-

Թեան մը մենավաճառութեան նիւթ եղած չէր, բայց կերպով մը տէրութեան մենավաճառութիւն կրնար համարուիլ: Ստոյգ է՝ ամէն Բորգուկայցի կրնար նոյն տուրևառին ձեռք զարնել. բայց պէտք էր հրաման առնուլ կառավարութենէն, որն որ ան կողմերուն նաւազնացութեան առաջնորդութիւնն ու պաշտպանութիւնն իրեն սեպհականած եւ տուրևառի քանի մը նիւթերն իրեն պահած էր: Աս կերպին մէջ ըստ ինքեան ապականութեան սերմ մը կը բովանդակէր, որն որ կրնար շուտ մ'աճիլ. բայց քանի որ Ղխապան քաղաքը բոլոր Եւրոպայի համար Հնդկաստանի վաճառներուն միակ գլխաւոր վաճառատեղին կրնային պահել, նոյն վաճառականութիւնը խիստ շահաւոր բան էր: Բորգուկայցոյ՝ Արեւելեան Հնդկաստանի վաճառականութիւնը երկու ճիւղ կը բաժնուէր: Ա. Հնդկաստանի այլեւայլ տեղերուն մէջ առուտուր: Նոյն տեղերն իրենց ունեցած գլխաւոր վաճառատեղիներն ասոնք էին. Յետակողման (Գանդեսին անդի կողման) Հնդկաստանին համար՝ Մալազգա, Արաբիայի եւ Եգիպտոսի համար՝ Մասգադ, Ասիայի ցամաք երկրին համար՝ Հիւրմիւզ: Աս առուարոյն ինչչափ ծանրակշիւ ըլլալն ըստ ինքեան կ'իմացուի, եթէ միա գրուի որ Ափրիկէ՝ ոսկւոյ ու գերիներու երկիր էր, իսկ Հնդկաստան՝ անչափ անհնարին բերքեր ունէր: Բ. Եւրոպայի ու Հնդկաստանի մէջ առուտուր: Աս վաճառականութիւնը՝ միայն տէրութենէ խաւրուած նաւատորմիչներով կ'ըլլար: Իսկ նիւթերն էին. պղպեղ եւ ուրիշ համեմեղէնք, բամբակեղէնք ու մետաքսեղէնք, մարգարիտ եւ ուրիշ աւելի ստորին վաճառներ: Կառավարութիւնը թող չէր տար որ նոյն վաճառները՝ Բորգուկայցոյ նաւերով իսկ՝ Եւրոպայի ուրիշ կողմերը տարուին. հասցա պէտք էր որ օտարականք գային Ղխապանէն առնուին: Ասով իր ազդին նաւազնացութեան մեծ փնաս հասցընելէն զատ, ուրիշ ազգերը մրցութեան ելլելու գրգռեց:

Աս ժամանակի միջոցին մեջ Գաղթականութեանց նկատմամբ եղած յստաշարիմութիւնը (1515—1555):

71. Մեքսիկոյի ու Բերուի աշխարհակալութիւնները: Ասլամբոսի գիւտերովը Սպանիայի մէջ գիւցազնական ոգի մը զրդուած էր. ծովու հետ գործք ունեցող ամէն ձեռնարկու մարդիկ նոր երկիրներ գտնելու ետեւէ կ'ըլլային: Այսպէս Պալպոս՝ անհաւատալի գտնարութեանց յաղթելով, Բանամայի կիրճը հասած եւ խաղաղական ովկիանոսը գտած էր: Բայց իրենց բրած գիւտովն ու ձեռք անցուցած երկիրներուն մեծութեամբը՝ անկից շատ աւելի նշանաւոր եղան Փեռնանդ Գորգէզ եւ Փրանկիսկոս Բիզարոյ: — Առաջինը, որ քաջասիրտ ու հաստատուն բնութեան տէր եւ միանգամայն խոհեմ մարդ մըն էր, Մեքսիկոյի բոլոր պետութիւնը նուաճեց, որուն բնակիչները մարդաշատ քաղաքներու մէջ կը բնակէին, արուեստներու ետեւէ կ'ըլլային, (բամբակէ) զգեստ կը հագնէին, կարգաւորեալ կառավարութեան կերպ եւ հարուստ ազնուականներով ու քրմերով թագաւոր մ'ունէին: Գորգէզ՝ միայն 300 Սպանիացիներով, որոնց հետ երկրին բնակիչներէն քանի մը ջեղեր միացած էին, Սպանիական թագին հնազանդեցուց այնպիսի բազմաթիւ ազգ մը, որն որ թէ հայրենասիրութիւն եւ թէ զինուորական քաջութիւն ունէր. իրենց Մոնդեզուսն անուն թագաւորը պալատին մէջ բանտարկելոյ պէս պահեց ու Մեքսիկոյ մայրաքաղաքնին առնելէն ետեւ, բոլոր բոլոր երէք տարւան մէջ ան բնդարձակ պետութիւնն ամբողջ նուաճեց (1519—1521): Իր գործունեայ ոգին չկրնալով հանգարտ կենալ, նուաճած երկիրն իրրեւ փոխարքայ կարգաւորելու տակն՝ իր թշնամեաց զրպարտութիւններուն համար աստիճանէն վար առնուելէն ետեւ, ուրիշ նոր գիւտերու ետեւէ ինկա ու Վալչիխուանիա գտաւ

(1535): — Փրանկիսկոս Բիզարոյ եւ իր Ալմակրոյ ընկերք, որոնք Գորդեզին պէս քաջ, բայց մեծապէս ալ ընչասէր ու խիստ մարդիկ էին, գրեթէ Մեքսիկոյի աշխարհակալին ունեցածներէն նուազ միջոցներով նուաճեցին Բերուի թագաւորութիւնը, որն որ Մեքսիկոյէն աւելի հարուստ էր, բնակիչներն ալ բաւական կրթեալ ու ծագիկեալ էին, եւ եթէ Մեքսիկոյացի պատերազմական հողին շունէին, գոնէ անոնցմէ շատ քաղցրաբարոյ էին եւ անոնց պէս բարբարոսական պաշտամունք չունէին: Թագաւորական տան մէջ յաջորդութեան խնդրոյ մը վրայ եղած կռիւր՝ Սպանիացիոց դիւրինցուց յոյն հարուստ ու սոկեհանքներու գեղեցիկ երկրին ու Գոսպոյ մայրաքաղաքին աշխարհակալութիւնը (1533): Բիզարոյ Ախմա անուն նոր մայրաքաղաքին հիմ դնելէն ետեւ (1535), կռուոյ բռնուեցաւ իր Ալմակրոյ ընկերին հետ, որն որ ան միջոցին Չիլի գտած էր (1535), որով գէնքերնին իրարու դէմ դարձուցին, եւ իրենց վայրենական գազանութեամբը տէրութիւնը կործանման վտանգի մէջ ձգեցին, որմէ հաղիւ կրցաւ ազատել Կարոլոս Ե-ին իրրեւ կուսակալ հան խաւրած Կասպայ իմաստան քահանան: Ասկից ուրիշ Սպանիացիք գտան ու տիրեցին Յամաք երկրին (Գիւերա Ֆերմա, 1532), նոր Կրանատայի (1536), եւ ուրիշ նուազ ծանրակշիւ երկիրներու:

72. Հին ու նոր քաղաքներ: Ա՞ս ամէն երկիրներուն մէջ կարգաւորեալ կասափարութեան կերպ խոթել կրնալու համար՝ հարկ էր որ տեղ տեղ քաղաքներ շինուէին: Սաոյգ է՝ Մեքսիկոյի ու Բերուի մէջ Սպանիացիք քաղաքներ գտան, բայց անոնք իրենց պէտք եղած տեղերը չէին. իսկ ուրիշ երկիրներ ամենեւին քաղաք չկար: Աւստի ետեւէ ետեւ ձեռք զարկին հարկաւոր տեղերը, այս ինքն՝ նախ Մեքսիկոյի ծոցին ափունքը եւ ետքը նաեւ Խաղաղական ովկիանոսին եզրները, քաղաքներ ու նաւահանգիստներ շինելու: Իսկ երկիրներուն ներքին կողմերը վերջէն կամաց կամաց

քաղաքներ շինուեցան: Ծովեղերեայ քաղաքները, ուրոնք իսկզբան հասարակօրէն մէկ եկեղեցիէ եւ քանի մը տներէ կազմուած կ'ըլային, թէ նաւահանգիստ էին եւ թէ պահակապանաց տեղեր: Սպանիացւոց հիմնած առաջին քաղաքն եղաւ Գուճանա (1520), անկից ետքը կարգաւ շինուեցան Վալենտիա (1555), Գարագազաս (1567). արդէն յառաջագոյն հիմնուած էր Վերա Գրուզ, որն որ Սպանիացւոց Մէքսիկոյի մէջ հաստատած առաջին գաղթականութիւնն էր: Ասոնք Մէքսիկոյի ծովածոցին եւ Անտիլեան ծովուն եզներն էին. իսկ Խաղաղական օվկիանոսին ափունքը շինուեցան, Մէքսիկոյի մէջ՝ Ագարուլոց, Տարիէնի մէջ՝ Բանամա, Բերուի մէջ՝ Լիմա, Չիլիի մէջ՝ Գանսելփոն (1550): Նաեւ Լաբլադա գետին քով փորձ մ'ըրին Պուենոս Այրէսի հիմն դնելու (1535), բայց չյաջողեցաւ: Երկրին ներքին կողմերը շինուած քաղաքները գլխաւորաբար ան տեղերն էին, ուր իսկզբան հանքահանական գաղթականութիւնք հաստատուած էին: Առաքելութիւնք՝ անուամբ ետրէն հիմնարկուած տեղերը՝ գլխաւորաբար ընդարձակ գաշտերու մէջ մեծ գետերուն եզները կը շինուէին քրիստոնէութեան դարձող վայրենիներէն՝ քարոզչաց վերակացութեան տակ:

73. Հանքահանութիւն: Սպանիացւոց՝ իրենց գաղթականութիւններէն հանած օգուտը՝ երկայն ժամանակ գրեթէ բոլորովին սահմանաւորած էր ազնիւ մետաղներ բրելու եւ կամ ժողովելու, որոնց քանակութիւնը, մանաւանդ արծաթինը, ամէն ակնկալութենէ վեր էր: Սոցոց է՝ նոյն երկիրներն ուրիշ շտաբերքեր ալ ունէին, որոնցմէ մեծ հարստութիւն կրնար ժողովուիլ. բայց քանի որ որդան կարմրին ու լեզակին՝ ներկելու որպիսութիւնը, հնդիկ ընկուզին, ծխախոտին, տենդարութին (չէ՛ն-չէ՛ն) զօրութիւնը Եւրոպայի մէջ ծանօթ չէր կամ գործածութիւնը չէր մտած, չէին կրնար վաճառականութեան գլխաւոր կամ ե-

1 Missions.

բեւելի նիւթեր բլալ: — Ազնի մետաղներ գանելու եւ հանելու իրաւունքն առանձնական մարդիկներու կը տրուէր, տէրութեան՝ որոշեալ տուրք վճարելու պարտաւորութեամբ: Ասով ալ է որ երկրին ներքին կողմերը այնչափ հեռաւոր տեղեր իսկ շէներ կանգնուեցան: Բայց բուն հանքահանութեան կարգաւորեալ աբուեստը խիստ կամայց եւ ուշ ատեններ մտաւ: — Հասարակօրէն անանկ կը հաշուի որ Մեքսիկոյի մէջ՝ Չապալեպաի հարուստ հանքերը (1532), իսկ Բերուի մէջ՝ Բողոսիները (1545) գանուելէն ետեւ, Սպանիացիք տարւէ տարի ընդ ամէնը՝ 30 միլիոն գահեկանի՝ ոսկի եւ արծաթ կը հանէին, որուն շուրջ կէսը Եւրոպա կու գար: Մինչեւ նոյն ատեն, կարողոս Ե-ին ժամանակները, արքունի գանձը տարին հազիւ կէս միլիոն գահեկան կը մտնէր: Իսկզբան արքունի գանձին համար որոշուած հարիւրին քսան տուրքը՝ հարկ եղաւ հետզհետէ մինչեւ հարիւրին հինգ իջեցրնել. բայց այնպէսով ալ՝ նոյն իսկ ասանկ հարուստ հանքեր ունեցող երկիրներու մէջ՝ ոսկի արծաթ հանելու գործադրութիւնն անանկ բախտի խաղի պէս բան մըն էր, որ անոր զբաղողներուն խիստ մեծագոյն մասը կը կործանէին:

74. Սեւամորթ գերիմներ: Հանքաց մէջէն ազնիւ մետաղներ բրելու հանելու, ինչպէս նաեւ ասոցին անգին սկսուած տնկարկական աշխատանքներն ընելու համար, մուտք գտաւ Ափրիկէի Սեւերը բերել տալ. որովհետեւ Հնդիկները կամ Ամերիկացիները հասարակօրէն տկար բլալով, աս դժուարին գործքերը կատարելու այնչափ յարմար չէին, մանաւանդ որ օրէնքներն անոնց անձնական ազատութիւնը հաստատած էին (80). եւ ասով սկիզբն եղաւ Ամերիկայի մէջ գերեաց զարհուրելի վաճառականութեան: Նոյն առումտուրք Սպանիացիք անձամբ չէին ըներ, հասպա տէրութիւնը՝ որոշ թուով գերիմներ բերել տալու գաշնադրութիւն ըրած էր օտար վաճառականաց հետ, որոնք շահու

1 Plastre.

գրգիռով ան դարչելի գործողութեան ձեռք զարկին: — Եւրոպացւոց գերւոյ վաճառականութիւն ընելը՝ բուն Բորգուկայցոց Ափրիկէի ծովեզրները երկիր դանեւէն եւ ան կողմերն աշխարհակալութիւն ընելէն սկսաւ. եւ աս վաճառականութիւնը Ամերիկայի գանուելէն յառաջ Բորգուկայցիք արդէն կ'ընէին: Եւ թէպէտ Ամերիկայի գանուելէն քիչ մը վերջը կամաց կամաց հոն բերելու ալ սկսած էին, բայց 1517ին նոյն վաճառականութիւնը կարգաւորեալ կերպով հաստատեցաւ, երբ որ Կարտա Ա. (Ե.) Տրեզա անուն մկկու մ'արածնութիւն սուաւ, որ կարենայ տարին 4000 դերի բերել: Աս արածնութիւնը նոյն մարդը Ճենուացւոց ծախսեց. իսկ Ճենուացիք դերիները Բորգուկայցիներէն կ'առնուին: Բայց աս ժամանակի միջոցին Անդղիացիք ալ նոյն վաճառականութեան մէջ մտած էին:

75. Վաճառականութիւն: Սպանիացւոց գաղթականութիւնները գլխաւորաբար հանքահանական գաղթականութիւններ ըլլալով, արդէն ինք իրմէ կը հեռուի որ իրենք վաճառականութեան վրայ կապեր պէտք էին դնել: Թէ որ կ'ուզէին իրենց սկզբանց հաւատարիմ մնալ, ինչպէս կրնային թողալ որ օտարականք մտնեն ելլեն եւ ուղածնան պէս վաճառականութիւն ընեն: Բայց թէ որ աս արդեւքը դրած տեսնին՝ նաեւ բուն վաճառականութեան շահերն իրենց միայն պահել կը դիտէին ալ նէ, ի վերայ այսր ամենայնի ասիկայ երկրորդական բան մըն էր. իրենց գլխաւոր նպատակն ան էր՝ որ նոյն երկիրներուն ոսկւոյ եւ արծաթոյ գանձերը՝ Սպանիա եւ միայն Սպանիա բերուի: Սպանիայի մէջ ալ անտարակոյս կը տեսնէին որ աս բանս գաղթականութեանց ծաղկելուն օգտակար չէ. բայց գաղթականութեանց ծաղկիլը, ան մտօք՝ որով հասարակօրէն ծաղկումն ու բարգաւաճանքը կ'իմացուի, կառավարութեան նպատակը չէր: Եւ ինչպէս որ գաղթականներն իրենց գանձերը՝ միայն Սպանիայի պիտի տային, այսպէս ալ կառավարութիւնը կ'ուզէր որ անոնց եւրոպական

կարօտութիւնները՝ միայն Սպանիա լեցրնէ: — Աւճա-
 աականութեան կարգաւորութիւնները զլիսաւորաբար
 առնէք էին: Սպանիայի մէջ բոլոր գաղթականաց վաճա-
 աականութիւնը՝ միայն Սեւիլեայի միջնորդութեամբը
 կ'ըլլար: Ամէն տարի Սպանիայէն դէպ ի գաղթակա-
 նութիւնները երկու նաւախումբ կ'երթար, մէկը՝ 12,
 մէկը՝ 15 նաւերէ բաղկացած: Առաջինը՝ Հարաւային
 Ամերիկայի համար էր եւ Բորդոյ Պելլոյ կ'երթար.
 Իսկ երկրորդը՝ Մեքսիկոյի համար եւ Աերա Գրուզ կ'եր-
 թար: Նոյն քաղաքները մեծ տօնավաճառներ կ'ըլ-
 լային: Ստոյգ է՝ Սպանիայիք իրենց գաղթականաց վա-
 ճաականութիւնն առանձին ընկերութիւններու շէին
 տուած. բայց անանկ շափաւորութիւններ գրած էին,
 որ ինք իրմէ պէտք էր որ քանի մը հարուստ աներու
 մենավաճառն ըլլար:

76. Սպանիացւոց ստացուածներուն վիճակը:
 Քրիստոնէութեան ազդեցութիւնը: Լասգազաս: Ինչ-
 պէս մինչեւ հիմայ ըսուածներէն կը տեսնուի, Ամերի-
 կայի ցամաք երկրին վրայ Սպանիացւոց ունեցած ստա-
 ցուածներուն ընդարձակութիւնը խիստ մեծ էր: Բայց
 Սպանիացւոց ստացուածք անուանուած եւ իրօք իրենց
 ստուացուածքն եզոզ երկիրներուն մէջ մեծ տարբերու-
 թիւն կար: Արդէն կէս մը կրթուած ազգերը, ինչպէս
 էին Մեքսիկացիք ու Բերուցիք, որոնք քաղաքներու
 եւ գեղերու մէջ կը բնակէին, հնազանդեցրնելը զիւրին
 էր. բայց ինչ իշխանութիւն կրնային բանեցրնել ան
 անթիւ ազգերուն վրայ, որոնք իբրեւ որսորդ՝ անաս-
 ման ու լայնատարած անասուներու եւ գառներու մէջ
 կամ գրեթէ անմատչելի լեռներու եւ ժայռերու վրայ
 կը թափառէին, քանի որ զիրենք կրթած կամ քրիս-
 տոնէութեան դարձուցած չէին: Այսպէսով նոյն եր-
 կիրներուն ներքին կողմերը Սպանիացւոց իշխանութիւն
 ունենալը՝ ինք իրմէ քարոզութեան ու դարձի հետ կա-
 պուած էր: Իրօք ալ խաչք նոյն կողմերը, թէպէտ սրէն
 կամաց, բայց անկից աւելի խորունկ կը թափանցէր.

միանգամայն քրիստոնէութիւնն իր բարերար սպեղանիքներովը՝ աշխարհակալութեան տուած վերքերը կը բժշկէր կամ զոնէ անոնց պատճառած ցաւը կը մեղմացընէր։ Ստոյգ է՝ անանկ քահանայք ալ զանուէցան, որոնք առ նիւթին մէջ իրենց անուան ու սրբազան պաշտօնին, ինչպէս նաեւ քրիստոնէական կրօնին մարդասիրութեան հակառակ ընթացք մը բռնեցին. բայց ստիկաց մարդկային կիրքերէ յառաջ եկած դրժբախտ բացառութիւն մին էր։ Ասոր հակառակ ընդհանրապէս կրօնի քարոզիչները՝ իրենց հայրենակիցներուն հեզութիւն ու քրիստոնէական մարդասիրութիւն քարոզելէն շէին դադրեր, եւ ամէն կերպով կը ջանային նոյն վայրենի ազգերը՝ ազահութեամբ ու գազանային պատերազմական հոգւով լեցուած աշխարհակայներուն ձեռքէն պաշտպանելու։ Քրիստոնէական կրօնին սրբութեան ներածին շափ՝ անդացիներուն բմբռնմանց ու սովորութեանց կը զիջանէին, մանաւանդ թէ նոյները կարելի եղածին շափ՝ խոհեմութեամբ կը գործածէին անոնց մէջ քրիստոնէութիւն խօթելու։ Ասով է որ Ամերիկացիները կրթելու եւ հպատակութեան մէջ պահելու համար խիստ քիչ զինուոր բաւական եղաւ, որովհետեւ բուն զանոնք կրթողներն ու հպատակութեան մէջ պահողները՝ կրօնի պաշտօնեայք էին։ Ասոնց մէջ մասնաւորաբար յիշատակուելու արժանի է Լասոպլաս, իմաստուն ու առարինի Գամինիկեան կրօնաւորը, որն որ իրաւամբ Ամերիկացւոց հայրն ու պաշտպանը կը կոչուի։ Ասիկայ իր սիրելի վայրենիները կրթելու եւ քրիստոնէութեան դարձընելու համար յանձն առած անհնարին աշխատութիւններով եւ զանոնք իր հայրենակիցներուն անազարունութենէն ազատելու համար կրած սաստիկ նեղութիւններով զոհ չըլլալով, անոնց սիրոյն համար 12 անգամ Ովկիանոսին ընդարձակութիւնն անցաւ, Սպանիայի թագաւորէն անոնց ազատութիւն ու շնորհքներ խնդրելու, եւ իր վախճանին հասաւ։

77. Կառավարութեան կերպ ու քաղաքական կարգաւորութիւնք: Սպանիացւոց բոլոր տիրած երկիրները՝ մայր երկրին (Սպանիայի) զաւտաներն եղան եւ այնպէս ալ Սաացին: Աս բանիս շատ օգնեց նոյն երկիրներուն տրուած կառավարութեան կերպը. եւ ճշմարտօր խօսելով՝ քիչ անգամ պատահած է որ քաղաքականութիւնն ասկից աւելի դժուար գործք մը կատարած ըլլայ: Նոյն երկիրներուն կառավարութեան կերպը ստոյգ է հետզհետէ ու կամաց կամաց կարգաւորեցաւ. ի վերայ այսր ամենայնի հիմնական կարգերն առ ժամանակի միջոցին մէջ բոլորովն որոշուած էին: — Ինչպէս սովորաբար սասանկ զէպքերու մէջ կ'ըլլայ, զաղթականութեանց կառավարութեան կերպը՝ կարելի եղածին չափ՝ մայր երկրին կառավարութեան կերպին մէկ նմանութիւնն էր. բայց յայտնի է որ Ովկիանոսին անդիի կողմն ամէն բան անանկ շէր կրնար ըլլալ, ինչպէս էր բուն հայրենեաց մէջ: Մայր երկրին մէջ բոլոր ան տեղերուն վարչութիւնը բարձրագոյն տեսանի մը յանձնուած էր, որն որ միայն թագաւորէն կախում ունէր եւ Հնդկաստանի խորհուրդ կ'անուանէր. ասոր նիտօր Մասրիտի մէջ էր. եւ թէպէտ արդէն 1511ին գրուած էր, բայց հաղի 1542ին կատարեալ կարգաւորեցաւ: Ասոր իշխանութեան տակ վաճառականութեան ու գաւառատանի տեսան մ'ալ կար, որն որ առեւտրական նիւթերու կը զբաղէր եւ իր նիտօր Սեւիլեայի մէջ էր: Աս կերպով Սպանիացիք կրցան իրենց զաղթականութեանց մէջ ուրիշ ամէն ազգերէն աւելի հաստատուն ու կարգաւորեալ քաղաքականութիւն մ'ունենալ: Իսկ բուն երկիրները փոխարքաներ կը խաւրէին, իրրեւ թագաւորին երեսփոխանները: Ըրդարութեան համար ալ տեսաններ հաստատեցին, իրրեւ բարձրագոյն ներքին գաւառատանարաններ, որոնց գաւառները միանգամայն քաղաքական նիւթերու մէջ փոխարքային խորհրդականներն էին: Քաղաքացիք իրենց հասարակութեան խորհրդականները կ'ընտրէին: Իսկզբան երկու փոխարքայ գրուեցաւ, Մեքսիկոյ (1540) եւ Բերու (1542), որոնց իշխանութեան տակն էր բոլոր քաղաքական ու զինուորական տեսչութիւնը: Ասոնց տակ ետեւէ ետեւ այլեւայլ կառավարներ եւ հարիւրապետներ գրուեցան: Նոյնպէս երկու տեսանք հաստատուեցան Մեքսիկոյ ու Լիմա մայրաքաղաքներուն մէջ (1542), որոնց գահերէցն էին փոխարքայք, բայց արդարութեան կամ գաւառատանական նիւթերու մէջ նոյն փոխարքայք քուէ չունէին: Ետքէն առ տեսաններուն թիւը տասնի ելաւ, ինչպէս փոխ

արքայք ալ երկուքէն չորս եղան: Աս տեղական տաեանն երուն՝ դատատանական նիւթերու մէջ տուած զձսէն՝ Հնդկաստանի խորհրդին կրնար բողոքուիլ:

78. Եկեղեցական կարգաւորութիւնք: Այսպիսի քաղաքական կապերով զազմականութիւնները մայր երկրին հետ կը կապուէին. բայց ստոնցմէ աւելի հաստատուն էին այն կապերը՝ որոնցմով կրօնը զանոնք իրարու հետ կը կապէր: Ասան զի քրիստոնէութիւնն իր բոլոր արտաքին փայլելութեամբը, նուիրապետութեամբը, փանքերովն ու անոնց հետ կապուած գիտութիւններով ու կրթութեամբ, եւ անոնց վերաբերեալ հիմնարկութիւններով, մայր երկրէն՝ զազմականութեանց երկիրները տարուելով, քաղաքական տէրութեան հետ՝ միանգամայն եկեղեցական տէրութիւն մ'ալ կազմուեցաւ. որուն բնական հետեւութիւնն ան եղաւ՝ որ երկրին հին բնակիչներուն ըստ մեծի մասին հեթանոսական պաշտամանց եւ տեղ տեղ բարբառոսական սովորութեանց վրայ հիմնուած ազգային հոգին կորուսեցաւ: — Նախ եւ յառաջ միայն Մեքսիկոյի ու Լիմայի արքեպիսկոպոսարաններն ու քանի մ'եպիսկոպոսարանք հաստատուեցան. բայց ետքը ետեւէ ետեւ անոնց վրայ ուրիշներ ալ աւելցան: Ազգբանդը Զ. եւ Յուլիոս Բ. քահանայապետներուն ըրած շարհմանց համեմատ, ստոնց ամենուն արքեպիսկոպոսաներն ու եպիսկոպոսները, ինչպէս նաեւ ուրիշ բարձրաստիճան եկեղեցականները, թագաւորը կ'անուանէր եւ քահանայապետը կը հաստատէր: Աւերոյիշեալ երկու մայրաքաղաքները մէյմէկ համալրարան ալ հաստատուեցաւ (1551):

79. Ընկերական վիճակ ու ցեղական թաժանմունք: Գաղթականութեանց երկիրներուն մէջ աս կերպով եւրոպական տէրութեանց ձեւերը կատարեալ կը մտնէին: Բայց բնակիչները, սերընդեան զանազանութեան համար, չէին կրնար մէկտեղ ձուլուիլ ու մէկ ազգ կազմել. մանաւանդ թէ սերընդի աս բնական կամ ֆիզիկական զանազանութեան հետ՝ ըստ ինքեան խիստ ծանրակշիռ քաղաքական զանազանութիւններ կը կապուէին: Արովհետեւ Ճերմակները (բուն Եւրոպացիք)՝ տիրողները կամ իշխողներն էին, անոր համար բոլոր Գուճաւորներն՝ առաջիններուն համեմատութեամբ՝ խիստ ստորին աստիճանի մէջ կը համարուէին: Իսկ Գուճաւոր անուան տակ կ'իմացուէին չէ թէ միայն Հնդիկները կամ Ամերիկայի բուն հին բնակիչները, եւ Ափրիկէէն բերուած սեւ գերիները, հապա նաեւ Միջինները, այս ինքն՝ Եւրոպացւոյ եւ բուն Ամերի-

կացոյց մը ամուսնութենէն ծնածները, որոնք ըստ այլևայլ աստիճանաց՝ խառնածինը՝, Էրրորդականք, Չորրորդականք կը կոչուէին: Արդեազէս նաև Ափրիկէէն բերուած Սևերէն ու Էւրոպացիներէն յառաջ եկողները՝ դարձեալ ուրիշ կերպ Միջին տեսակ մը՝ կը կազմէին: Աս այլևայլ ցեղերը կամ դասերը՝ իրարմէ տարբեր զբաղմունք կամ գործքեր ալ ունէին, որոնք գրեթէ մինակ միևնոյն ցեղին բոլորովին սեպհական էին: Ասանկով նոյն երկիրներուն մէջ ցեղական բաժանում մը մտաւ, որուն մէջ Ճերմակներն իբրև տեսակ մ'ազնուականք կը նկատուէին: Բայց նոյն իսկ Ճերմակներն ալ երկուքի կը բաժնուէին, այս ինքն՝ բուն Այդրէնածինք կամ երկրին հաստատուն բնակիչները, որոնք նաև Գաղթածինք՝ կը կոչուէին, եւ Աորեկք՝: Գաղթածիններն իրարու կատարեալ հասասար կը սեպուէին. բայց ամենևին չէին կրնար կառավարութեան գործքերու մէջ մտնել, որոնք միայն Էւրոպացոյց կամ Աորեկաց վերապահեալ էին, սակայն աս վերջիններն ալ իրենց նոյն յատկութիւնը պահելու համար պէտք չէին հոն կատարեալ հաստատուիլ: Աս բանս, ինչպէս ինք իրմէ կրնայ դուշակուիլ, ապագայ յեղափոխութիւններու սերմ մըն էր. եւ եթէ նոյն յեղափոխութիւնը շատ ուշ պատահեցաւ նէ, ասոր գլխաւոր պատճառներէն մէկն ան էր՝ որ կառավարութիւնը քիչ մը վերջը ստիկանութեան խիստ կարգեր դրաւ մայր երկրէն գաղթականութեանց երկիրներն երթալ ուղղներուն վրայ. իսկ ուրիշ օտար երկիրներէն հոնտեղերն երթալը՝ բոլորովին արգելուած էր:

80. Հին բնակչաց համար տրուած օրէնքներն ու կարգաւորութիւնները: Սպանիայի կառավարութիւնը Հնդկաց կամ Ամերիկայի բուն բնակչաց ազէկութեան համար զանազան օրէնքներ եւ հրամանագիրներ հանեց, որոնք թէպէտ առաջին աշխարհականներուն անազորութեան առջև բոլորովին չկրցան առնուլ, որովհետև՝ ինչպէս հասարակօրէն կ'ըլլայ, անոնցմէ շատերը խիստ անպիտան եւ ըստ մեծի մասին բախտախնդիր մարդիկ էին, բայց գոնէ ցոյց կու տան որ կառավարութիւնն անոնց բրած անգթութիւններուն հաւան չէր: Աս օրէնքներուն մէջ նշանաւոր են 1542ին տրուածները, որոնցմով՝ յառաջագոյն մտած աւատային կարգաւորութիւնները շատ կը չափաւորուէին:

¹ Méis, Méisse.

² Ասոնց Էւրոպացիք Mulâtres անուս կու տան:

³ Créoles.

⁴ Ասոնց Սպանիացիք Chapeton կ'ընէին:

Նոյն օրէնքները կրկին կրկին կը հաստատէին թէ Հնդկի-ներն ազատ մարդիկ են, եւ ոչ գերի. իրենց՝ Սպանիացւոց ընկու աւատային ծառայութիւններն ու տալու տուրքերը կը սահմանուէին: Իրենց աւելի հանդատութիւն ու հանգարտութիւն շնորհելու համար՝ բնակելու առանձին տեղեր կ'որոշուէին, իրենց մէջէն ընտրուած մասնաւոր պաշտօնատեսարց տակ: Մէկ խօսքով՝ ամենեւին կառավարութիւն մը Սպանիացւոց պէս ազէկ օրէնքներ գրած եւ անոնց շափ խելացի կարգադրութիւններ ըրած չէ Ամերիկայի բուն հին բնակիչներուն ազէկութեան համար: Բայց ակոսն օր սա ամէն օրէնքներն ու կարգադրութիւնները խիստ քիչ սգուստ ըրին:

Տ1. Բորդուկայցւոց Արևելիան Հնդկաստանի վաճառականութիւնն ու երկիրները: Ճննատանն ու ճարոն: Արևելեան Հնդկաստան Բորդուկայցոց անեցած իշխանութիւնը, Մեծին Իմանուէլի († 1521) եւ Յովհաննէս Վին († 1557) ատենները, հաստատուն մնալէն զատ, անեցաւ ալ: Բայց աւելի եւս մեծցաւ ու ընդարձակեցաւ իրենց վաճառականութիւնը: Նոյն թագաւորներուն սովորութիւնն էր՝ օր փոխաբանները գոնէ երեք տարի մէյ մը կը փոխէին: Թէ սա կարգադրութիւնն արդեօք իրենց ստացուածներուն սգտակար էր, թէ վնասակար, որչէրդ դժուար է: Աս սոցոյդ է որ Հնդկաստանի մէջ երբեք խաղաղութիւն չէր ըլլար եւ ոչ ալ կրնար ըլլալ. ինչու որ Մաւրիաք (Մահմետականք, գլխաւորաբար Արարացիք) ամէն կերպով ետեւէ կ'ըլլային եւ ամէն միջոց կը բանեցընէին որ ներքին վաճառականութիւնն իրենց ձեռքէն շառնուի: — Նոյն միջոցներուն հաստատուած էին Սէյլան կղզւոյն վրայ (1518), առանձինն Գոլմագոյի եւ Բոյինդ Կալէտի մէջ: Բայց իրօք կղզւոյն միայն եղբներն իրենց էր: Ամսամանը մենավաճառութեան նիւթ ըրած էին: Ասկից զատ Տիւ առին (1535), Գամպոճայի վրայ հաստատուեցան, եւ Մորուզեան կղզիներուն վրայէն՝ Սումադրա, Ճաւա, Սելէպը ու Պոննէոյ տարածեցան: Թէեւ սա ամէն տեղերը հաստատուն չմնային, բայց գոնէ անոնց սոնավաճառները կ'երթային: Սա-

կայն աս ամենէն աւելի օգնեց իրենց վաճառականու-
թեան տարածուելուն՝ ճենաստանի հետ հաղորդա-
կցութեան սկսելինն եւ ճարոն մանեկինն : Արդէն շա-
տանց ճենաստանի հետ հաղորդակցութեան մէջ մտնե-
լու փորձ մ'ըրած էին, զԹովմաս Բերեկիրա գեապանու-
թեամբ հոն խաւրելով : Հաւանական է որ նոյն կողմերը
քիչ մը մնացած ըլլան. բայց աս բանս մնայուն յաջո-
ղութիւն չունեցաւ : Աւելի հաստատուն էր ճարոնի
հետ բրած ծանօթութիւննին (1842), ուր կանոնաւ-
որ եւ խիստ շահաւոր վաճառականութիւն մը սկսան :
Աս բանիս մեծապէս օգնեցին Յիսուսեանք իրենց հի-
մնադրութենէն քիչ մը ետքը, երբ որ Յովհաննէս
Գ. զիրենք իր տերութեան մէջ ընդունեցաւ. վասն զի
սկսան հանկից Ասիա քարոզիչներ խաւրել, որոնք իրենց
առաքելական եռանդեամբն ու ծաղկեալ գիտութիւն-
ներովն ամեն տեղ մուտք կ'ունենային : Աւստի եւ այն-
պէս մեծ է նոյն իսկ քաղաքականութեան նկատմամբ
աս բանիս ունեցած ազդեցութիւնը, որ Հնգկայ քա-
րոզիչ՝ Ս. Փրանկիսկոս Քաւերեանին անունը, չէ թէ
միայն կրօնական, հապա քաղաքական կողմանէ ալ
հաշակաւոր եղած է, եւ ինք արժանի է՝ ինչպէս իրբեւ
Առաքեալ, նոյնպէս նաեւ իրբեւ Գիւլյազն պատուուե-
լու : — Աս կերպով Բորգուկայցոց Հնգկաստանի իշխա-
նութեան հոյակապ շէնքը աս ժամանակի միջոցին մէջ
կատարեալ ամբողջացած էր : Սակաւաթիւ, բայց քաջ
ու խելացի մարդիկ, աս բանս գլուխ հանեցին : Սակայն
նոյնը պահելու համար՝ միայն զօրութիւն բաւական
չէր. այլ բարոյական նեղուկներ, գիւղացեան օգի եւ
հայրենասիրութիւն ալ պէտք էր : Աւ որովհետեւ նոյն
յատկութիւններն ազգի մը մէջէն մեկէն ի մեկ շէն ոչ-
բնչանար, անոր համար նոյն շինուածքին յանկարծակի
կործանեւէն չէր կրնար վախցուիլ : Սակայն այնպէսով
ալ աս յատկութեանց նոյն իսկ կամոց կամոց նուա-
զիլն ու աներեւոյթ ըլլալը, կործանումը հետզհետէ՝
բայց միանգամայն առջեւ շառնուելու կերպով յառաջ

բերաւ, որուն վրայ գրտի մրրիկներն ալ գալով, նոյն կործանումը շարաշար փութացուցին, ինչպէս ետքէն պիտի տեսնենք:

82. Պրագիլիա եւ Ափրիկեան ստացուածք: Նաեւ Պրագիլիա ալ առ ժամանակի միջոցին մէջ Բորգուկայցոց ստացուած եղաւ: Ստոյգ է արդէն շատանց (1500) Գապրալ նոյն երկիրը գտած էր (69). սակայն թէեւ Բորգուկայցիք հոնակը տիրեցին կամ լաւ եւս բռնի՝ իրենց ստացուածը համարեցան նէ ալ, իսկզբան խել մը ժամանակ ուրիշ բանի շէին գործածեք, բայց եթէ Հրեաներն եւ ուրիշ մեծ յանցաւորները հոն քշելու: Սակայն ետքէն սկսան աւելի մտադրութիւն ընել ան կողմերուն: Մեծ բարերախառութեամբ հոն ապագային սկիւղ եւ պատուական քարերու դանձեր գտած շրջալով, սկսան վաճառականութեան փոյթ տանիլ, քիչ մ'ալ անկարկութեան եւ մշակութեան ետեւէ կ'իյնային, որուն արդէն արտոբեալք ձեռք զարկած էին. եւ առ ճիւղերը՝ տէրութեան կողմանէ եղած կարգաւորութեանց փոխուելովը, բաւական ընդարձակեցան. բայց միշտ ծովեզերաց մինակ մէկ մասին եւ գրխաւորաբար հիւսիսային կէսին վրայ մնացին: Յովհաննէս Գ. նոր կարգադրութիւն մը խօթեց (1525), որով թագաւորութիւնն առանձնական մարդիկներու, ծովեզերին երկայնութեան վրայ՝ դէպ ի երկրին ներքին կողմերը՝ 50 փարսախ, մեծ մեծ երկիրներ կուտար, որուն հետ կապուած էր նաեւ երկրին բուն բնակիչներուն վրայ գրեթէ բացարձակ իշխանութիւն: Նոյն երկիրներն առնողները շուտ մը կը սկսէին բանել տալ: Ըս կերպով քանի մը տարւան մէջ (1539—1549) հիմնարկեցան Ս. Ա. ինկենտի, Ս. Հոգւոյն, Տաս Իլէէտի, Մարանեամի, Բորգոյ Սեկուրոյի եւ Բեռնամագոզոյի գաւառներն իրենց քաղաքներովը, մանաւանդ Պասհիա՝ նոյն ատենուան Ս. Սալուատոր մայրաքաղաքովը, որն որ ամենուան միջավայրն էր: Ըն ատենները սկիզբ եղաւ նաեւ աւելի կարգաւորեալ կերպով գազթակա-

նաթիւններ հաստատելու. երկրի տէրերուն իշխանու-
թեան ալ շափ դրուեցաւ՝ ի նպաստ տէրութեան: —
Երկրին բուն բերքերէն զատ, որոնց զխաւորներէն մէկն
էր ներկի փայտ, արդէն նոյն ատենները Մատեիրայի
շաքարեղէզ բերուած եւ հոն անկուած էր: Սակայն
հոնտեղն եղած յառաջագիմութիւնը՝ պէտք էր որ
նաեւ աղղեցութիւն անենար Ափրիկէի ծովեզրնե-
րուն՝ Գոնկոյի ու Կուինեայի գաղթականութեանց վրայ,
ինչու որ երկրագործութեան ու անկարկութեան յա-
ռաջանալուն համեմատութեամբը՝ հարկ էր որ Աւել գե-
րիներու կարօտութիւնն ալ մեծնար: Այսին զի թէ-
պէտ Արագիլիայի բուն հին բնակիչքը տէրութեան
կողմանէ իրրեւ ազատ մարդիկ ճանչցուած չըլլալով,
Բորգուկայքի զանազ կրցածնուն շափ իրրեւ գերի կը
գործածէին, բայց սա պատճառաւ միշտ անոնց հետ
պատերազմի մէջ ըլլալով, եւ անոնց զէմ գներու հա-
մար բաւական զօրութիւն չունենալով, պէտք էր որ
զոնէ առժամն ըստ կարելոյն անոնց խնայէին եւ կա-
րօտութիւննին Աւել գերիներով լեցրնէին: — Նոյն կող-
մանց վաճառականութեան նկատմամբ յիշատակելու
արժանի միայն սա պարագան կայ, որ Բորգուկայքի ալ
Ապանիացոց պէս նոյնն իրենց սեպհականեցին, եւ սա
նպատակաւ ամէն տարի ան կողմերը նաւատորմիդ մը
կը խաւրէին:

83. Ապանիացոց եւ Բորգուկայցոց մէջ հակա-
ռակութիւն: Մակելլանի անցք: Այս ժամանակի միջո-
ցին մէջ Ապանիացիք եւ Բորգուկայքիք Եւրոպայի մէջ
զօրաւոր ստիւ մը չունէին, որմէ իրենց գաղթականու-
թիւններուն նկատմամբ քիչ մ'ալ վախնային: Այսին
զի Անգղիացոց ու Գաղղիացոց ասոքին անոքին բրած
զանազան երկիրներու գիւտերը՝ մինչեւ նոյն ատեն մեծ
բաներ չէին ու ծանր հեռեւութիւն մը չէին անեցեր:
Բայց բուն նոյն երկու տէրութեանց մէջ երկպառակու-
թիւն ու վէճ մը բացուեցաւ Մոլուզեան երեւելի կրղ-
զիներուն պատճառաւ, որոնց զիրքէն չէր կրնար գիւ-

բաւ որոշուիլ թէ քահանայապետին նշանակած գծին նայելով՝ երկուքէն որուն կ'իյնայ: Աս երկպառակութիւնն առիթ տուաւ երկրիս շորս կողմն առաջին անգամ նաւով պտրտելու. եւ թէպէտ նոյն նաւազնացութեամբ Մուղղեան կղզիներուն վրայ եղած վէճը շորոշուեցաւ. բայց թէ աշխարհագրութեան եւ թէ նաւազնացութեան նկատմամբ մեծ օգուտներ բրաւ: Աս նաւազնացութիւնն ընողն եղաւ Փերդինանդ Մակելլան Բորդուկալցին, որն որ իր ազգէն նախատինք մը կրած ըլլալով, Սպանիայի ծառայութեան մտած էր եւ սպանիական կառավարութեան հրամանաւ վերջիչեալ նաւազնացութիւնն բրաւ (1519): Նոյն ճամբորդութեան մէջ Մակելլան չարաւային ծովն անցնելու անցքը գտաւ, որն որ իր անունն ընդունելով, Մակելլանի անցք կոչուեցաւ. եւ ասանկով Արեւելեան (բուն) Հնդկաստան երթալու նոր ճամբայ մ'ալ բացուեցաւ: Գտաւ նաեւ Փիլիպպեան կղզիները, որոնց վրայ ինք Մակելլան սպանուեցաւ (1521). բայց իր գլխաւոր՝ Վիկտորիա անուն նաւը Սեւիլեա ետ դարձաւ (1522): Իսկ Մուղղեան կղզեաց վրայ եղած վէճը լմրնցաւ Սարակոսոսայի իրաւախոհութեան գաշինքով (1529), որով կարողոս է. իր նոյն կղզիներուն վրայ ունեցած իրաւունքը 350,000 տուգադով Բորդուկալցոց ծախեց:

ԵՐԿՐՈՐԳ ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ

Ա. ՍՏՈՐԻՆ ԵՆՀԱՆԳԱՑ ԱՆԿԱՌՈՒԹԻՒՆԸ

(1555—1618)

(ՀԱՐԱՐԱՅԻՆ ՏԵՐՈՒԹԻՒՆՔ)

ՏԿ. Ընդհանուր տեսութիւն: Ա՞յ ժամանակի միջոցին մէջ տիրազ քանի մ'իշխաններուն, ինչպէս Սպանիայի Փիլիպպոս Բ. թագաւորին, Անգղիայի Եղիսարեթ թագաւորին, Օրանիայի (Հոլանտա) Գուլիելմոս իշխանին, Գաղղիայի Հենրիկոս Գ. թագաւորին, պարզապէս անունները՝ մարդու մարին մէջ անանկ յիշատակներ կը զարթուցանեն, որոնցմէ ժամանակին կերպարանքն ու հոգին կրնայ իմացուիլ. այս ինքն թէ՛ անցեալ ժամանակի միջոցին մէջ սկսուած նորազանգութիւնն ու անով գրգռուած սոգին, գրեթէ բոլոր Եւրոպայի քաղաքականութեան գլխաւոր շարժիչն եղաւ: Այսին զի եթէ մէկ կողմանէ քանի մ'իշխանք բողբոջութեան պատրուակին կամ գիմակին տակ իրենց փառասիրութիւնը կը ծածկէին, եւ նոյն իրրեւ միջոց կը բանեցընէին իրենց անձնական նպատակներուն հասնելու. մէկու կողմանէ Սպանիայի Փիլիպպոս Բ. թագաւորը՝ նոյներուն դէմ դնելու եւ իր դազափարները գլուխ հանելու համար, ուրիշ միջոցներէն զամհետապօտութիւնն ալ գործածել ուզելով, միանգամայն իր դիտած ուղղափառ կրօնի պաշտպանութեան հետ՝ փառասիրութեան ու աշխարհակալութեան խորհուրդներ կապելով, կրօնի հակաակորդաց ձեռքը զէնք կու տար եւ յարմար առիթ կը մատակարարէր՝ իրենք զիրենք եւ իրենց բռնած ընթացքը գոնէ վերիվերոյ դատաստան ընտրներուն առջեւն արգարացընելու: Բայց մինչեւ նոյն ատեն նորազանգից ընդհանրապէս ունեցած վարմունքէն իրենց վրայ իրաւամբ անանկ դազափար մը ծագած էր, որն որ գործնական քաղաքականութեան իրրեւ հիմ առնուելով, իխստ մեծակշիռ

Հետեւութիւններ կ'ունենար: Բողոքոզաց հակառակորդները զիրենք միշտ տէրութեանց եւ կառավարութեանց թշնամիներու տեղ կը դնէին. ուստի եւ իրենց առջեւը՝ Հերեափոս ու Ապստամբ անունները նշան բառեր էին: Իսկ բողոքոզք եւ անոնց կողմնակիցները՝ զուղղափառները բռնաւորութեան պաշտպան կը սեպէին: Ասանկով երեւան ելաւ ան գաղափարք թէ հին (ուղղափառ) կրօնը՝ խիստ արձակապետութեան եւ բռնաւորութեան պատուարն է. իսկ նոր վարդապետութիւնը՝ ազատութեան ապաստանարանը: Աս գաղափարները գլխաւորաբար անով աւելի հաստատուեցան, որ ալ սա ժամանակի միջոցին մէջ՝ իրարու հետ սասիութիւն ունեցող երկու գլխաւոր տէրութիւնք, անցեալ ժամանակի միջոցին պէս՝ Սպանիա ու Գաղղիա չէին, ինչու որ վերջին տէրութիւնն իր ներքին վրդովմանց ու մրկկաց համար իր սահմաններուն մէջ զբաղած էր. հասցա Սպանիա եւ Անգղիա, որոնք չէ թէ միայն տարբեր տարբեր կրօն ունէին, հասցա առաջինն առանձին կերպով ուղղափառութեան պաշտպանն էր, իսկ երկրորդը՝ նորաղանդութեան: Երկուքն ալ իրենց գոյութիւնը՝ իրենց պաշտպանած կրօնին վրայ գրած էին, եւ երկուքին գլուխներն ալ (Փիլիպպոս Բ. եւ Եղիսարեթ) իրենց տէրութեան սահմաններէն դուրս ալ տիրել կամ կառավարել կը բաղձային:

85. Ատորին նահանգները քաղաքականութեան գլխաւոր նիւթ կ'ըլլան: Գաղղիա ու Անգղիա: Ա՞ ժամանակի միջոցին՝ անցեալէն ունեցած գլխաւոր տարբերութիւններէն մէկն ալ ան էր, որ Սպանիայի եւ Գերմանիայի թագերն իրարմէ բաժնուած էին: Ասով ստոյգ է՝ Հապսպուրկի տան զօրութիւնը նուազած էր. բայց Գերմանիա մնացող գծին գլուխը Փերդինանդ Ա. կայսրը՝ Փիլիպպոս Բ.ին բռնած ընթացքէն բուրբովին տարբեր շափաւորութեան ու խոհեմութեան ընթացք մը բռնելով, Գերմանիայի մէջ գիզուած այնչափ գրգռութեան նիւթերը կրցաւ անշխառ ընել, ներքին

խաղաղութիւնը պահեց եւ ընդհանուր պատերազմի մը սկսիլը խափանեց: Անոր համար առ ժամանակի միջոցին գործնական քաղաքականութեան կենդանի՝ Ստորին նահանգաց մէջ ելած ապստամբութիւնն եղաւ: Բայց թէեւ առ Ստորին նահանգաց շփոթութիւնները գրայի տէրութեանց մտադրութիւնը գրգռեցին եւ անոնց գործակցութիւնն իրենց ձգեցին. սակայն անոնք հանակզը միայն զբաղած չէին: Իրենք ալ եւ զլիսաւորաբար Գաղղիա ու Անգղիա այնպիսի փոփոխութիւններ կրեցին, որոնցմով իրենց թէ ներքին եւ թէ արտաքին յարաբերութիւնները, ուստի եւ իրենց քաղաքական դիրքն ու կերպարանքն որոշուեցաւ: Անոր համար թէպէտ, ինչպէս ըսինք, Ստորին նահանգաց գէպքերն առ ժամանակի միջոցին ամենէն նշանաւոր քաղաքական երեւոյթն է, բայց անոնցմէ զատ եւ առանձին նկատուելու են Գաղղիայի ու Անգղիայի մէջ պատահածները, որոնք առաջիններուն հետ կապակցութիւն չունին, հապա իրենք իրենցմէ զատ ամբողջ մը կը կազմեն:

Ա.

Ստորին ևսահանգաց յեղափոխութիւնն ու անկախութիւնը (1555 — 1609):

86. Սպանիա՝ Փիլիպպոս Բ-ին ու Գ-ին տանները: Բորդուկալ Սպանիայի հետ կը միանայ: Սպանիա տկարանալու կը սկսի: Արարու Ա. թագաւորին (Արարու Ե. կայսեր) ատենը Սպանիայի մեծութիւնն ու ընդարձակութիւնն ան աստիճանի հասած էին, որ անկարելի էր թէ նոյն վիճակն երկայն ժամանակ մնար: Իր անձին մրայ միացուցած Սպանիական ու Գերմանական թագերուն իրարմէ բաժնուելէն ետեւ ալ, իր Փիլիպպոս Բ. որդին՝ իրրեւ Սպանիայի թագաւոր՝ այնչափ լայնածաւալ երկիրներու վեհապետ էր, որ իրաւամբ կրնար ըսել թէ իր տէրութիւններուն մէջ արեւը երբեք մտրը չիմաներ: Սպանիայի միապետու-

Թեևն զատ, իր իշխանութեան տակն էին Երկու Սիկիլիայի Թագաւորութիւնը՝ Սարդինիա կղզւոյն հետ, Միլանի դքսութիւնը, բովանդակ Ստորին նահանգներն ու Բարձր Պարիսնաիա. Ափրիկէի մէջ՝ ընդարձակ ծովեզրներ, իսկ Ամերիկայի մէջ՝ մեծամեծ Թագաւորութիւններ եւ խոշոր կղզիներ իրեն կը հնազանդէին: Նոյն Փիլիպպոս Բ-ին ժամանակը Սպանիա՝ երկրի ստացուածներու կողմանէ՝ մեծ ածուճ մ'ընդունեցաւ Բորգուկալի Թագաւորութիւնն ալ իրեն հետ միացրնելով: Աս տէրութեան Թագաւորական յեղինարու զաւակը սպառելով (1580), Փիլիպպոս Բ., որն որ Կամանուէլ Թագաւորին Եղիսաբեթ աղջկան օրդին բլլալով, անոր Թագին իրաւունք ունեցողներէն մէկն էր, ըստ մասին ղէնքով եւ ըստ մասին Բորգուկալցոց ուղելովը, նոյն տէրութիւնն իր իշխանութեան տակ առաւ, որով եւ Բորգուկալցոց Եւրոպայէն դուրս ունեցած երկիրներն ալ սպանիական զաղթականութեանց կարգ մտան: Աս ատանկ բլլալով, պէտք էր որ Սպանիա հիմակ ամէն ատենէն աւելի զօրաւոր ու հաստատուն սեպուէր. բայց հասարակօրէն տէրութեան մը զօրութիւնն ու հաստատութիւնը՝ իր երկրի սահմաններուն ընդարձակուելուն եւ իր հօտատակաց Թուոյն ածելուն համեմատութեամբը շին մեծնար: Սպանիա ան ատեն արդէն իյնալու եւ տկարանալու սկսած էր, որուն զիջաւոր պատճառներէն մէկն էր Ամերիկայէն եկած գանձերով՝ բարուց ապականութեան սաստկանալը, եւ ասոր ետեւէն եկող Թուլութիւնն ու քաջութեան եւ հայրենասիրութեան նուաղիլը: Աս ամէն բանին լրումն եղաւ Փիլիպպոս Բ-ին († 1598, Սեպտ. 13) օրդւոյն ու յաջօրդին, Փիլիպպոս Գ-ին, տկարութիւնը, որն որ տէրութեան բոլոր գործքերն իր պաշտօնեկից ձեռքը կը ձգէր, մանաւանդ որ նոյն պաշտօնեկից ընտրութեան մէջ զրեթէ երբեք յաջողութիւն չէր ունենար: Աթէ աս ներքին պատճառներուն վրայ աւելցրնենք նաեւ Սպանիայի շափազանց մեծութեան վրայ նախանձող-

ներուն՝ նոյն տէրութիւնը խոնարհեցրնելու, մանաւանդ թէ կործանելու համար բրած ջանքը, ալ չէ թէ միայն պատճառ մը չիմնար իր կյնալուն վրայ զարմանալու, հապա անոր հակառակ պէտք կ'ըլլայ զարմանալ աւելի շուտով չիյնալուն վրայ: Ինչպէս որ է նէ, իր քայքայուելուն առաջին հարուածն եղաւ Ստորին նահանգաց յեղափոխութիւնը, որուն վրայ հոս պիտի խօսինք: Բայց նախ առ ժամանակի միջոցին՝ Սպանիական միապետութեան մէջ կամ անոր ձեռքովը պատահող քանի մը զլխաւոր դէպքերուն միտ դնենք:

87. Արքունեաց դէպքերը: Մարիտանացոց մերժուիլը: Ծոռվական արշաւանք: Փիլիպպոս Բ. առաջին անգամ Բորգուկալի Յովհաննէս Գ. թագաւորին Մարիամ աղջկան հետ կարգուեցաւ (1543), որն որ կարոյտ անուն որդի մը ծնած ասուն՝ մեռաւ (1545): Երկրորդ անգամ Անդրիայի Մարիամ թագուհւոյն հետ ամուսնացաւ (59), որմէ զուակ չունեցաւ. եւ նոյն ամուսնոյն մահուընէն ետքը երրորդ անգամ Գաղղիայի Հենրիկոս Բ. թագաւորին Եղիսաբեթ աղջկան հետ կարգուեցաւ (89): Կարոյտ որդին պզտիկուց սաստիկ բարկացաւ եւ անագորոյն բնութեան տէր էր. ասոր վրայ պատանեկութեան ասուն ժամանակաւոր յիմարութիւն ալ աւելցաւ, եւ հասարակագետական գաղափարներ յառաջ եկան, մինչեւ միտքը դրաւ որ հայրը մեռցընէ եւ Ստորին նահանգաց ապստամբներուն զլուխն անցնի: Ասոնց համար սկսաւ վրան դատաստան ըլլալ, եւ յանցաւոր գանուելով՝ մահուան դատապարտուեցաւ. բայց նոյն միջոցին՝ վրան սաստիկ հիւանդութիւն մ'եկաւ, որն որ իր կենացը վերջ տուաւ (1568, Յուլ. 24): — Աս ատենները՝ Սպանիայի մէջ Քնացոլ Մարիտանացիք, որոնք յառաջագոյն արասքին երեւութով քրիստոնէութեան դարձած էին, բայց ի ծածուկ՝ մահմետականի պէս կը վարուէին, Սպանիացոց զիբները զսպելու համար գործածած միջոցներէն գրգռուելով, ապստամբեցան. իրենց մէջէն մէկը թագաւոր դնելէն ետեւ, երկու տարի պատերազմ ըրին, եւ վերջապէս թագաւորին բնական կորօրը՝ Տ. Յովհան Աստրիացոյն ձեռքովը բոլորովին զսպուելով, երկրին ներքին կողմերը խառուեցան, որպէս զի գործատանց մէջ աշխատին (1570): Բայց ասկից երբ քառասուն տարի ետքը, Փիլիպպոս Գ. ին ատենները, Սպանիայէն բոլորովին մերժուեցան (1609), ու

բով երկրագործութեան, վաճառականութեան ու ճարտարութեան մեծ շնորհակալ։ — Տաճիկները Սուլթան Ալիբ Բին, Արևելյան Բին († 1566) յաջորդին, ասենք Կարս կղզին Վենետացուց ձեռքէն առած ըլլալով (1570), յառաջունէ աւելի աճուսք եղած էին Եւրոպայի տերութեանց, եւ Ափրիկէի ծովաճէններուն հետ քրիստոնէից նաւերը կ'աւարէին ու սաստիկ բազմութեամբ գերիներ կը բռնէին։ Ասոր վրայ Փիլիպպոս Բ. Վենետիկի ու քահանայապետին հետ դաշինք դրաւ (1571, Մայ. 24)։ Եւ վերջիչեալ Տ. Յովհաննիսիանին՝ իրենց դէմ ծովային արշաւանք մ'ընել տուաւ։ Աս արշաւանքը մեծ յաջողութեամբ պսակուեցաւ։ Վերանդոյի ծովածոցին մտաւ արուած ծովային ճակատով, որուն մէջ քրիստոնէայք փառաւոր յաղթութիւն ըրին (1571, Հոկտ. 7)։ Բայց ասիկայ ծանրակշիռ հետեւութիւն մը չունեցաւ։ Նոյնպէս նոյն Տ. Յովհաննիսիանի Ափրիկէ բրած արշաւանքն ալ երեւելի հետեւութիւն մը չունեցաւ։ Ինք թէպէտ Գուսուզի տիրեց, բայց քիչ մը ետքը Օսմանեանք ձեռքէն առին (1574)։ — Ասոնք եղած ատեն՝ Ստորին նահանգաց շփոթութիւնները սկսած էին։

88. Ստորին նահանգաց վրայ տեղեկութիւն։ Ստորին նահանգները (որոնք ետքէն իրենց մէջ գլխաւորութիւն մը ստացող Հոլանտիա նահանգին անուամբը՝ Հոլանտա ալ կը կոչուին) ըստ մեծի մասին Պուրկուստիայի դքսական ջեղէն՝ Հապսուրկի տան անցած էին, երբ որ Փրեդերիկոս Գ. կայսեր Մագսիմիլիան որդին՝ Պուրկուստիայի Կարոլոս Գ. Յանգուզն վերջին դքսին Մարիամ աղջկան հետ կարգուեցաւ (Նախաշ. 36)։ Բայց տակաւին ետքէն Կարոլոս Ե-ին ժամանակները բոլոր 17, թէ Բեղգիական եւ թէ Բատաւեան նահանգները, նոյն տան իշխանութեան տակ մտան։ Աս նահանգներն էին. չորս դքսութիւնք՝ Պրագանդ, Լիմպուրկ, Լիքսենպուրկ, Կելտեան. եօթը կոմսութիւնք՝ Ֆրանտրա, Արդուա, Հեննեկա, Հոլանտիա, Չէլլանտ, Նամբուր, Չիլֆոլէն. մէկ սահմանակոմսութիւն՝ Անգուերրիա. հինգ տերութիւնք՝ Մեխելըն, Ֆրիզիա, Ուդրելոզ, Կրէօնինկէն եւ Ովերիսէլ։ Ասոնցմէ եօթը հատը, այս ինքն՝ Չէլլանտ, Հոլանտիա, Ուդրելոզ, Կելտեան, Ովերիսէլ, Ֆրիզիա եւ Կրէօնինկէն, բուն Հոլանտական կամ Բատաւական նահանգք կը կոչուէին. իսկ մնացած տասը հատը, այս ինքն՝ Ֆրանտրա, Պրագանդ, Արդուա, Հեննեկա, Նամբուր, Լիքսենպուրկ, Լիմպուրկ, Մեխելըն, Անգուերրիա ու Չիլֆոլէն, Բեղգիա-

կան նաճանգք կ'ըսուէին: Նոյներէն զատ կը սեպուէին Գանարէ եւ Ֆրանչոզոնք: — Արդ թէպէտ նոյն ատեն առ 17 նաճանգները միեւնոյն վեհապետին (Սպանիայի թագաւորին) տակ մէկ տէրութիւն կը կացուցանէին. բայց նոյն տէրութիւնը՝ նոյնաթիւ (տասնուեօթը) առանձին առանձին տէրութիւններէ կազմուած էր, որոնց իւրաքանչիւրն իրենց յատուկ կարգաժողովն ու իրենց սահմանադրութիւնը, ոմանք նաեւ իրենց զատ կուսակալն ունէին: Բայց ամեն նաճանգաց կարգաժողովներէն ընդհանուր կարգաժողով մը դուստրելն ալ անսօրբրան չէր. իսկ սպանիական տան իշխանութեան տակ մտնելէն ետեւ, իշխանը (թագաւորը) բացակայ ըլլալով, վերին կուսակալն անոր տեղը կը բռնէր: Ասիկայ երեք բարձր ատեան ունէր, որոնք էին տէրութեան խորհուրդ, գաղտնի (արդարութեան) խորհուրդ ու ելեւմտից խորհուրդ: — Իշխանին իշխանութիւնը կը շարժուէր չէ թէ միայն երկրին սահմանադրութեամբը կամ իւրաքանչիւր նաճանգին կարգաժողովովը, այլ նաեւ ժողովրդեան ոգւովը: Ժողովուրդը մտքին մէջ գրած էր թէ իր երջանկութիւնն՝ իր սահմանադրութեան հետ կապուած է եւ թէ նոյնին վրայ կայացած է իր զօրութիւնը: Աւելի եւս սիրով կը կապուէր առ իր սահմանադրութեան հետ, մտածելով որ իր հարստութիւնն ու բարեկեցութիւնը, որն որ Բեղգիական քաղաքացիին վաճառականութեան պտուղն էր, նոյն սահմանադրութեան պաշտպանութեան տակ ձեռք բերած է: Չկար գրեթէ ժողովուրդ մը՝ զորն որ կառավարելն ասոր պէս գիւրին ըլլար, բաւական որ իր իրաւանց ձեռք չդպցուէր. բայց եւ ոչ ալ ժողովուրդ մը կը գտնուէր, որն որ զիմադրութեան մէջ աւելի յամառ ըլլար, երբ որ իր իրաւանց դպչէին կամ երբ որ ինք այնպէս կարծէր թէ անոնց դէմ կը գործուի եւ կամ անոնք վտանգի մէջ են:

89. Փիլիպպոս Բ-ին զահ էլած ատեն Ստորին նաճանգաց վիճակը: Գաղղիայի հետ պատերազմ: Գաղղի - Գանարեկիսի խաղաղութիւն: **Վայինք** հիմայ թէ ինչ վիճակի մէջ էին Ստորին նաճանգները՝ երբ որ Փիլիպպոս Բ. իր հօրը Կարոլոս Ե-ին յաջորդեց: Ապագայ շփոթութեանց հիմն արդէն յառաջագոյն գրած էր նորազանգութիւնը, որն որ Բատաւեան նաճանգներուն մէջ աւելի ընդունելութիւն գտած ու տարածուած էր, քան թէ Բեղգիական նաճանգներուն մէջ: Միայն

Փիլիպպոսին երկայն տակն ան կողմերը մնալովը՝ նոյն շփոթութիւններուն իրօք սկսիլը քիչ մը ժամանակ խափանուեցաւ : Իսկ առ թագաւորին Ստորին նահանգներուն մէջ մնալուն պատճառն էր Գաղղիայի Հեռ ունեցած պատերազմը : — Վասէլի ղինադադարն (51) աւրուելով, պատերազմը սկսած էր, որուն մէջ Փիլիպպոս Բ. նաև ՂԱնդղիա խառնել տալով, աւելի մեծ ընդարձակութիւն տուաւ : Բայց թէ Իտալիա եւ թէ Ստորին նահանգաց սահմանները Գաղղիացւոց բանը հասարակօրէն անյաջող դնաց : Փիլիպպոս Բ. Ստորին նահանգները երեսուն հազարի բանակ մը խաւրած էր, Սաոյայի Էմմանուէլ Փիլիպերդ դքսին հրամանատարութեան տակ, որն որ Գաղղիացւոց մահացու թշնամին էր՝ անոնց իր երկիրները յափշտակելուն համար : Փիլիպերդ Ս. Գենդէնի ամրոցը պաշարեց : Մանուրանսի սպարապետը պաշարելոց օգնութիւն բերաւ, բայց ի դարձին՝ թշնամեաց Հեռ ծակատ տալու ստիպուելով, շարաշար յաղթուեցաւ, եւ փրաւորուած՝ թշնամեաց ձեռքն ինկաւ (1557, Օգոստ. 10), որոնք վերջիչեալ ամրոցն ալ առին (Օգոստ. 17) : Ասոր հակառակ Գաղղիացւոց կողմանէ Աիլի դուքորը տասն օրուան մէջ Անդղիացւոց ձեռքէն Գալէ առաւ (1558, Յունու. 8), որն որ երկու դարէ աւելի Գաղղիայի տէրութիւնն Անդղիացւոց յարձակմանց առջեւ բաց կը բռնէր : Ասով եւ ուրիշ քանի մը տեղեր ալ առնելով, Գաղղիայի մէջ Անդղիացւոց իշխանութեան վերջ տուաւ : Բայց Գաղղիայիք Սպանիացիներէն նորէն յաղթուեցան Արաւելինկէնի քով (1558, Յուլ. 13) : Վերջապէս պատերազմը երկու տարի տևելէն ետև, լծնդաւ Գաղղի-Գանպրեղիսի խաղաղութեան դաշինքով (1559, Ապր. 3), որով որոշուեցաւ որ իւրաքանչիւր տէրութիւն պատերազմին մէջ առած ամրոցները ետ դարձնէ միայն Գալէ, եւ Մէց, Վերակօն ու Գուլ Գաղղիացւոց ձեռքը մնաց : Բայց իրենք մեծ կորուստ բրինձ ղլխաւորաբար Սաոյայի երկիրներն անոնց Էմմանուէլ Փիլի-

պերզ տիրոջը ետ դարձրնելու ստիպուելով: Մոնմորանտի որն որ՝ ինչպէս ըսինք՝ Սպանիացիներէն զերի բռնուած էր, Հենրիկու Բ-ին կողմանէ անոնց հետ խաղաղութեան դաշանց վրայ խօսակցեցաւ, եւ նոյն դաշինքով Գաղղիային եղած վեասին տեղն ըստ մասին լեցրնելու համար կրկին խնամութիւն կրցաւ ընել տալ, Հենրիկու Բ-ին Մարգարիտա քոյրը Էմմանուէլ Փիլիպերդին հետ, եւ նոյն թագաւորին Եղիսաբեթ աղջիկը՝ Փիլիպպոս Բ-ին հետ կարգելով (87):

90. Ստորին նահանգաց տրտունջները: Էկմնետ կոմսը, Օրանիայի իշխանն ու Հոռնի կոմսը: Նուիրապետութեան մէջ փոփոխութիւն: Գաղղի - Գանապեղեոի խաղաղութիւնը Ստորին նահանգաց մէջ մրկիկն փրթելուն կարապետն եղաւ: Երկրին բնակիչները՝ նոյն իսկ Փիլիպպոս Բ-ին իրենց մէջ եղած առեւ՝ սկսած էին ձայներնին բարձրացրնել. տրտունջներն օրէ օր կը շատնային: Աս տրտունջներն ըստ մասին սպանիացի պահակապան զօրաց վրայ էին, ըստ մասին ալ՝ նորազանգից զէմ՝ հանուած պատժական հրովարտակներուն վրայ: Ոչ Փիլիպպոսին խօսքերը, ոչ ալ ըրած կարգադրութիւնները յոյս կու տային իրաց փոփոխութեան: Իրենց տեղագոհութիւնն ու տրտունջներն աւելի մեծցան, երբ որ Փիլիպպոս Սպանիա դառնալու առեւն, իրենց ազնուականներէն մէկն ընդհանուր կամ վերին կուսակալ դնելու տեղ, իր բնական քոյրը Մարգարիտա իշխանուհին գրաւ, որն որ Բարմոյի Ոկտաւիան Ֆրանսեզէ դքսին ամուսինն էր: Ստոյգ է նոյն հզօր ու իսելացի աիկինն իր խոհեմ ու շափաւորեալ վարմունքովն ամենուն սիրելի եղաւ. բայց ինչպէս կրնար ինք վերցրնել երկրին բուն կառավարութեան սանձը ձեռքունին ունեցող իր խորհրդականաց եւ մանաւանդ Արանվելլային բռնած ընթացքին պատճառած զրգուութիւնը: Մանաւանդ որ վերին կուսակալութեան աստիճանին յարմար եղող եւ նոյնին աչք անկող աւագ նախարարները ժողովրդեան զրգուութիւնը կը տածէին: Ասոնց մէջ գլխաւ-

որներն էին Էկմննա կամօր, որն որ Արաւելինկէնի քով
 Գաղղիացիները յաղթած էր (89) եւ նոյն տակն Ար-
 դուայի ու Ֆիանարայի կուսակալութեան աստիճանն
 ունէր, Գուլիւրմու Նասաւեան՝ Օրանիայի իշխանը, որն
 որ ան ժամանակ Հորանտիա, Չէէլանա եւ Ուզրեխդ
 նահանգներուն կուսակալն էր, եւ Փիլիպպոս Մանմու-
 րանտի՝ Հոռնի կամօր, որն որ ծովապետութեան պա-
 տիւն ունէր: Գրգուութիւնն անով աւելի սաստկացաւ
 որ Փիլիպպոս Բ-ին Սպանիա երթալէն ետեւ՝ նորագան-
 զից գէժ առաջիններէն աւելի խիստ պատժական հրա-
 վարտակներ հանուեցան, զորոնք աժգոհները կը զործ-
 ւածէին ժողովուրդը համոզելու որ չէ թէ միայն իրենց
 սահմանադրութիւնը վտանգի մէջ է, հապա նաեւ թէ
 Սպանիական հետադատութեան ատեանն իրենց մէջ ալ
 պիտի խոթուի, որմէ թէ ուղղափառք եւ թէ բողոքողք
 հաւատարապէս կը վախնային. որով եւ անկից ծագած
 գրգուութիւնն բնդհանրապէս ամէն տեղ տարածուած
 էր: Աս վերջին վախն անով աւելի հաւանական կը ցու-
 ցընէին որ Ստորին նահանգաց նախապետութեան մէջ
 փոփոխութիւններ եղած էին: Յառաջագոյն նոյն կը-
 կրին հոգեւոր իշխանութիւնը տեղ տեղ՝ Գաղղիայի,
 տեղ տեղ ալ Գերմանիայի եպիսկոպոսաց ձեռքն էր:
 Իսկ Փիլիպպոս Բ. Պօղոս Գ. քահանայապետին հաւա-
 նութեամբը, երեք (Մելիէլի, Գամմերիիսի եւ Ուզրեխ-
 դի) արքեպիսկոպոսարաններ եւ անոնց տակ 14 եպիս-
 կոպոսարաններ դնել տուաւ: — Ժողովրդեան աժգո-
 հութիւնն ըստ մասին նուազեցընելու եւ անհիմն վա-
 խերը փարատելու համար, սպանիայի պահակապան
 զօրքերը՝ Էկմննա կամօրն եւ Օրանիայի իշխանին հրա-
 մանատարութեան տակ զրին. աս ալ որ բաւական չե-
 զաւ, կուսակալուհին անոնց բոլորովին ետ երթալուն
 հաւանութիւն տուաւ. եւ իրօք ալ քիչ մը վերջը
 ետ խաբուեցան (1560, դարձան):

91. Գրգուութիւնը կը սաստկանան: Ազնուա-
 կանաց գաշնակցութիւնը: Մուրացիկը: Սակայն ա-

ասնկով ալ աժդոհութիւնն ու զրդոսութիւնն երթալով կ'աւելնար: Արանօվելլա՝ ըստ մասին ազնուակաշաց զրդելովը ըստ մասին ալ իր բռնած ընթացքովը՝ ամենուն ատելի եղած էր. անանկ որ Էկմանտ կոմսը, Օրանիայի իշխանն ու Փիլիպպոս Մանմարանսի թագաւորին զանգատանաց թուղթ մը խտրեցին, որով կը խնդրէին որ նոյն պաշտօնատարը հեռացրնէ (1562, Մարտ 11): Ետքը կուսակալուհին ալ նոյնը խնդրելէն զատ, ինք Արանօվելլա ալ, իր կեանքը վտանգի մէջ տեսնելով, անձամբ ջանաց հեռանալ, եւ ստուգիւ ալ ետ դարձաւ (1564, Մարտ): Բայց թէ անոր բրածները զրդոսութեան բուն պատճառները չէին, հասցա աժդոհները զանոնք իրենց նպատակին հասնելու համար իբրեւ պատրուակ կը դործածէին, անկից յայտնի է որ անոր երթալէն ետեւ՝ սկսան իրենց պահանջումները մեծցրնել, պաշտօններն իրենց կողմնակիցներուն տալ եւ կուսակալուհւոյն դէմ շորս կողմը զբազարտութիւններ տարածել: Ըստնց հետեւութիւնն ան եղաւ, որ Սպանիայէն հրաման եկաւ առաջին հրովարտակները ճշդիւ ի դործ գնելու. միանգամայն Տրիդենտեան ժողովոյն որոշումները կատարել տալու (1565, Նոյեմբ.): Բայց մէկալ կողմանէ ազնուականաց կուսակցութիւնն ատելի զօրանալով, իրենցմէ ինք տասը հոգի, Օրանիայի իշխանին բարեկամ՝ Փիլիպպոս Մանիքսին առաջնորդութեան տակ, դաշնակցութիւն՝ մը դրին (1566, Փետր.), որուն նպատակն, իրենց խօսքին նայելով, Ստորին նահանգներուն ազատութիւնն օտարաց բռնարարութենէն պաշտպանելն էր: Ըստնք արձանագիր մ'ալ շինեցին, որուն մէջ կը արանջէին թէ փառասէր ու ազահ օտարականք թագաւորը կը զրդոսեն՝ իր երգման դէմ ընելու եւ Սպանիական հետազօտութեան ատեանը Ստորին նահանգներն ալ խօթելու: Ըս թղթին ստորագրողները կարէն մինչեւ 2000էն աւելի եղան. եւ 250ի շափ ազնուականք

¹ Compromis.

Պարսակելի մէջ կուսակալու հւոյն ներկայացուցին (1566, Ապր. 5) : Նոյն տիկինը, թէպէտ խիստ քաջասիրտ էր, բայց ազնուականաց բազմութեանն եւ մանաւանդ աւանց սպառնալից կերպարանքներէն քիչ մը վախնալով, քովն եղող զխաւոր խորհրդականներէն մէկը ցած ձայնիւ իրեն բաւ : Մի վախնայր, տիկին, մաքացիկներու՝ խումբ մըն է : Աս խօսքը սմանք լսելով, գաշնակիցք Մարացիկ անունն անկէ ետեւ իբրեւ պատուանան կը կրէին : Թէպէտ կուսակալու հին երկրորդ օրն իրենց պատասխան տուաւ որ ազաշանքնին թագաւորին կը խաւրէ, միանգամայն յուսացուց որ տրանջման առիթները կը վերցուին : Բայց աս զիջումն ամենեւին օգուտ չընեւէն զատ, կարծես թէ անանց աւելի սիրտ տուաւ սկսածնին յառաջ տանելու :

92. Գրգռութիւնն ապստամբութեան կը դառնայ : Օրանիայի իշխանը : Այլ անկէ ետեւ շատ կողմեր ազնուականք եւ անանցմէ զբզգուած ժողովուրդները յայանապէս ոտք կ'ելէին, զէնք կ'առնուին, եւ հրապարակաւ ժողովներ ընելով՝ սկսածնին յառաջ տանելու ետեւէ կ'իյնային : Արկիբն մէջի նորազանգներէն զատ, Գաղղիայէն ու Գերմանիայէն զունդազունդ հոն վաղօրներն ալ զբզգուածութիւնն աւելի կը սասակացրնէին : Բողոքական քարոզիչներուն ձայնին՝ հազարաւոր զինեալ մարդիկ ժողովուրդ, անանց զբզգիչ ճառերէն եւ ուղղափառ կրօնի դէմ խօսած խօսքերէն ու տարածած զբուսածներէն, ապստամբութիւնը յառաջ վարելու կը յորդորուէին : Միանգամայն սկսան վանքերն ու եկեղեցիները կողոպտել եւ աւրել : Աւերջապէս Օրանիայի իշխանն աս կերպով օգնութիւն ընդունելով, զկուսակալու հին կրցաւ ստիպել որ զինքն իր տեղակալն անուանէ, միանգամայն հրաման առաւ զօրք ժողովելու, ան պատրուակաւ՝ որ կարենայ Անդուերթիա քաղաքը հանդարտեցրնել, ուր ժողովուրդը կրօնական ազատութեան պատրուակաւ ոտք ելած էր, եւ մեծ

աղակով կը խնդրէր որ նոյն իշխանը հան դայ. որն որ ի-
 րօք ալ գնաց: Իսկ Մուրացիկներուն կողմանէ Մանգիլ-
 նիի սեպուհը թագաւորին պատգամաւոր գնաց, եւ
 իրմէ խոստում ընդունեցաւ որ հետագոտութեան ա-
 տեանը Ստորին նահանգները շիխթէր, նորազանդնե-
 րուն ղէմ հանուած հրովարտակները կը մեղմացընէ,
 թագաւորական պատուոյն ներածին շափ կը զիջանի,
 եւ Մուրացիկներուն ու ապստամբներէն ոմանց թողու-
 թիւն կու տայ: Էկմննա, Մանսրանսի եւ ուրիշ քանի
 մը շափաւորներ ասով գոհ եղան, ապստամբներէն հե-
 աացան եւ սկսան գրգռութիւնները հանդարտեցընելու
 Զանալ: Բայց Օրանիայի իշխանը՝ միայն արտարուստ
 անանկ ցուցուց որ հանդարտած է. իսկ զազանու-
 թեամբ ապստամբներուն հետ միարան մնալով, ծա-
 ծուկ կերպով Գերմանիայի մէջ զօրք կը ժողվէր, եւ ի
 հարկի նաեւ ղէնքով թագաւորին ղէմ ղնելու կը պա-
 տրաստուէր: Մանուանդ թէ վերջիշեալ երկու իշխան-
 ներն ալ նորէն ապստամբաց կողմը վաստակելու Զանաց-
 տակայն անոնք հաստատութեամբ ղէմ ղրին եւ աւելի
 եւս սերախ կասաւարութեան հետ միացան. անանկ
 որ Օրանիայի իշխանը հան մնայն ապահով չսեպեց եւ
 ձգեց Տիլէնպուրկ գնաց: Եւսպէս՝ ապստամբը ան-
 զլուխ մնալով եւ լսելով որ թագաւորն անձամբ հան
 պիտի գայ եւ իրմէ յառաջ զօրք կը խաւրէ, սկսան
 ցրուիլ եւ 100,000ի շափ բողբողք Ստորին նահանգ-
 ներէն դուրս ելան:

93. Ելլալի դուքսը: Արդովմանց խորհուրդ:
 Բաներն աս փեճակի մէջ բլլալով, Սպանիայի գահէն
 մէջ ապստամբութիւնը ղէնքի զօրութեամբ զուլելու
 համար եղած զազանի որոշման գործադրութիւնը խիստ
 դժուար բան չէր երեւար: Հաւանական էր որ ամէն բան
 կարգի մանէր, եթէ հաստատութեան հետ՝ խոհեմ
 շափաւորութիւն ու ղիջողութիւն ի գործ ղնէին: Բայց
 թագաւորը, որ անձամբ Ստորին նահանգներն երթալու
 խորհուրդը մեկգի ձգած էր, հան խրկելու զօրաց հրա-

մանատարութիւնն անանկ մէկու մը յանձնեց, որուն անունն իսկ բաւական էր բոլոր ակնկալութիւնները կորորնցընել տալու: Աս զօրձքին որոշեց Ալպայի դուքսը, որն որ միայն զօրաց հրամանատարութիւնը պիտ'որ ունենար, իսկ կուսակալու հին իր յառաջուան աստիճանին մէջ պիտի մնար: Իկմնտ եւ Մոնմորանսի նոյն տիկնոջ վրայ մեծ վստահութիւն ունենալով, նոր կուսակալին զալէն ետքն ալ (1567, Օգոստ.) արքունեաց մէջ մնացին: Բայց Ալպայի դուքսն իրենց հետ խորհուրդ մ'ընելէն վերջը՝ զիրենք ուրիշ քանի մ'ազնուականներու հետ բանտարկել տուաւ: Ասոր վրայ կուսակալու հէոյն սիրան անանկ նեղացաւ, որ զօրձքերուն շատութիւնն ու դժուարութիւնը պատճառ բռնելով, աստիճանէն հրաժարեցաւ, եւ Փիլիպպոսին հաւանութեամբը Պրիստելէն ելաւ (Դեկտ. 30): Ալ անկից ետեւ Ալպայի դուքսը թէ զօրաց հրամանատար եւ թէ վերին կուսակալ ըլլալով, սկսաւ անազօրոյն ընթացք մը բռնել, որմէ զարհուրելով՝ շատերը հայրենիքնին ձգեցին փախան. իսկ փախելի չկրցողները՝ ասդին անդին սիռեցան ու պահուստեցան, եւ եկեղեցիներն ու փանքերն աւարելով կ'ապրէին: Եւ որովհետեւ ամէն մարդ իրենց ապաստանարան կու տար ու կը պահէր, իրենց բրած շարագործութեանց պատասխանատու սկսան սեպուիլ հասարակութիւնք: Ալպա երկրին մէջ Ֆնացող երեւելի մարդիկը հետզհետէ բանտարկեց, եւ վրդովմանց խորհուրդ՝ անունով դատաստանարան մը գրաւ, որուն որոշմամբը շատ մարդիկ եւ առանձինն Իկմնտ կոմսն ու Մոնմորանսի մահուան դատապարտեցան ու սպանուեցան (1568, Յունիս 5): Բայց ամէն տեղ պատահածը՝ հոս ալ հանդիպեցաւ, որ բռնական միջոցները՝ զանոնք բանեցընողները կործանելու օգնեցին: Սպանիացիք նոյն միջոցներով ձեռք բերուած առերեւոյթ հանդարտութենէն խարուելով, միտ չէին դներ

¹ Conseil des troubles. Ասոր տեղացիք՝ Արեան խորհուրդ, Conseil de sang, անուն գրին:

որ ամէն աստիճանէ հազարաւոր մարդիկներու տէրութենէն զուրս պանդխտելովք՝ ինչ վասնդ կը պատրաստուի արտաքուստ, եւ ինչ վասնդ ներքուստ՝ ան վերջին աստիճանի անխոհեմ միջոցով, զորն որ ի գործ դրին՝ տէրութենէն զուրս ելլողներուն ինչքերը յարքունիս գրուելով:

94. Տասանորդի հարկ: Ծովական մուրացիկք: Հիւսիսային գաւառներուն ապստամբութիւնը: Բայց ժողովրդեան վրայ աս ամէն բաներէն աւելի դէշ ազդեցութիւն բրաւ թագաւորին անուամբն ելած՝ նոր հարկեր ժողովելու հրամանը (1569, Մարտ 21), որն որ Տասանորդի հարկ՝ կոչուեցաւ, եւ իրօք ալ երկրին ազատութեան ու արածութիւններուն դէմ էր: Նահանգներուն առանձին կարգաժողովները յանձն առին սուրբ մը տալ, բայց Ելլային պահանջածէն նուազ չափով. իսկ ինք հրամանը փոխել շուղեց, եւ դէմ դնողները սաստիկ խտուրթեամբ կը պատժէր: Ասով գրեթէ բոլոր երկիրը Սպանիացւոց դէմ դառնացաւ. որուն վրայ ան ալ աւելցաւ որ զաբան Ընդդիացւոց հետ երկպառակելով, Ընդդիացի վաճառականութիւնը բոլորովին արգելեց, որով Ստորին նահանգաց տուրեւառին մեծ վնաս կը հասներ: Արդ վաճառականք մէկ կողմանէ ասոր վրայ դառնանալով, մէկալ կողմանէ ալ նոր գրուած սուրբէն ազատելու համար, սկսան Օրանիայի իշխանին հետ խօսակցիլ եւ իրեն ստակ խաւրկէ՝ որ զօրք ժողովէ: Արդէն իշխանը պանդխտեալներու եւ դերմանացի ու գաղղիացի վարձկանազօրու դնդաւ մը յառաջագոյն ներս մտած (1568, Սեպտ.) եւ մինչեւ Պրապանդ եկած էր. բայց ստակի կարօտութեան մէջ իյնալով, ստիպուած էր զօրքերը ցրուել ու ետ քաշուիլ (Գեկա.), եւ նոյն ատեն գարձեալ Տիրենպուրկ կը դանուէր: Ուստի վաճառականներուն խաւրած ստակովը կրցաւ ձեռք զարկած գործքը յառաջ տանել: Ինք քիչ մը յառաջ ծովահանութեան հրա-

¹ Impôt du dixième.

մանագիրներ¹ հանած էր. իսկ հիմնյ իր կուսակիցներուն ստակ ալ կրնար տալ Սպանիացւոց դէմ ծովահէնութիւն ընելու, որով սոցոց է Ստորին նահանգաց վաճառականութեան ալ վնաս կը հասնէր, բայց տեղացիք յանցանքն ապստամբաց տալու տեղ՝ Սպանիացւոց կու տային, եւ այնպէսով անոնց դէմ եղած զրգուութիւնն ու ատելութիւնն աւելի եւս կը սասականար: Աս ծովահէնները՝ որոնց անունը Ծովական մուրացիկ² դրուեցաւ, Անդղիայէն ալ շատ մարդիկ դանելով՝ այնչափ զօրացան, մինչեւ եկան Պրիւլի նահանգիսան ու քաղաքն առին եւ հոն ամրացան (1572, Ապր. 1). մէջերնին դաշնաւորութիւն մ'ալ բրին, որ արեամբ չափ հոնտեղը հաստատուն կենան: Ասով բուն ապստամբութիւնը փրթաւ Հոլանտիա ու Զէէլանտ նահանգներուն մէջ, զորն որ Ալքալի դուքսն իր սակաւութիւ գնդերովը սագին անդին կրցաւ զուպել, բայց ոչ ամէն տեղ ընդհանրապէս: Նոյն ապստամբութեան բուն նիստը հիւսիսային նահանգներն ըլլալով, ապագային վիճակն անով որոշեցաւ: Հոլանտիա, Զէէլանտ եւ Ուդրեխդ նահանգներուն կարգաժողովները Օրանիայի իշխանը թագաւորական կուսակալ անուանեցին: Սակայն եւ այնպէս ուրիշ շատ տեղեր թագաւորին անաստիճանի հաւատարիմ մնացած էին, որ ապստամբք կը ստիպուէին քաղաքները պաշարել, եւ զանոնք պատերազմաւ առնելէն ետեւ՝ իրենց հայրենակցաց, մանաւանդ ուղղափառաց ու անոնց մէջ եկեղեցականաց դէմ, սաստիկ անագորունութեամբ կը վարուէին:

95. Ապստամբք օտարաց կը դիմեն: Ապստամբք թէպէտ կը տեսնէին որ իրենց ձեռքի միջոցները բաւական չեն մտքերնին դրածնին գլուխ հանելու. բայց օտար տերութեանց օգնութեան վրայ ալ յոյս ունէին: Իրենց դասն երթալով նորազանգութեան դաս կը դառնար, որով եւ ընդհանուր քաղաքակա-

¹ Lettres de marque.

² Gueux marins.

նութեան նիւթ կ'ըլար: Իրենք անանկ կը կարծէին որ
 Գերմանիայի բողոքող իշխանները, Գաղղիայի նորա-
 զանդները՝ որոնք նոյնպէս զլուխ վերցուցած էին, եւ
 ամենէն աւելի Անգղիայի Եղիսաբեթ թագուհին՝ որն
 որ Փիլիպպոս Բ-ին ստոխն էր, պէտք է որ իրենց կողմն
 ելլեն եւ ամէն կերպով իրենց օգնեն: Բայց առաջին-
 ներն այնչափ չէին ուզեր օգնել, մեկալները չէին կրնար,
 իսկ Եղիսաբեթ՝ եթէ իրեն համար օգուտ մը չտեսնէր՝
 չէր ըներ: Անոր համար Օրանիայի իշխանը պէտք էր
 որ իր բոլոր գործունէութիւնն ու խորամանկութիւնը
 բանեցընէր, որպէս զի մէկ կողմանէ առ պարագաներուն
 մէջ օտարաց օգնութիւնն իրեն քաշէ, մեկալ կողմանէ
 ալ երկրին մէջ կրօնի զանազանութենէն ու ընտանեաց
 նախանձէն ծագած մեծամեծ արգելքներուն առջեւ
 առնու: Ինք ամենէն յառաջ Գերմանիայի իշխաններէն
 օգնութիւն խնդրեց: Եւ թէպէտ ամենէն ալ պարտապ
 չելաւ. բայց ընդունածը՝ յուսացածէն շատ նուազ էր,
 վասն զի շատերը կամ Սպանիայի թագաւորին ու Գեր-
 մանիայի կայսեր մէջ եղած ազգականութեան համար
 կ'արգելուէին, կամ իրենց բոլոր պահանջածները ձեռք
 բերած ըլլալով, չէին ուզեր օտարի օգնելու համար
 իրենք զիրենք վտանգի մէջ գնել: Աւելի ծանրակշիւ
 էր Գաղղիայի նորազանդներուն վրդովմանց ունեցած
 ազդեցութիւնը, թէ անոր համար վասն զի իրենց յոյր
 միշտ վառ կը պահէին, եւ թէ վասն զի իշխանը Գաղ-
 ղիայի մէջ անձնական կապակցութիւններ ունէր: Բայց
 Բարթողիմէոսի գիշերուան զարհուրելի գէպքէն ետեւ
 (109), ինչպէս կրնային անոնք օտարներու օգնել:
 Ասոնցմէ զատ Գանիայէն եւ Շուեսէն ալ օգնութիւն
 խնդրած ու պարտապ ելած էին: Ուստի իրենց ակնկա-
 րութիւնը զրեթէ բոլոր Եղիսաբեթ թագուհւոյն վրայ
 էր, որուն իրօք ալ առ նիւթին մէջ ըրած գործա-
 կցութիւնը մեծ հետեւութիւններ ունեցաւ: Բայց
 ապտամբք շուտով խնայան որ նոյն կարծեալ բարե-
 կամը՝ թշնամիէն աւելի վտանգաւոր կրնայ ըլլալ:

96. Ռեքրուեզէնս կուսակալը: Անդունըրրիայի աւարառութիւնը: Կէնդի հաշտութիւնն ու Պրիւստլի միութիւնը: Ա՞ն ժամանակները թագաւորը հարկաւոր տեսաւ Ալպայի դուքսն եւս կանչել ու անոր տեղը Մեափնա Չելիի դուքսը խաւրեց: Բայց նոյն կուսակալը Ստորին նահանգները հասած ատեն (1572, Յուլ.) բանը բանէն անցած էր, անանկ որ ապստամբք անոր ցամաք ելլելն արգելելով, ստիպեցաւ եւս դառնալ: Սակայն անանկով ալ թագաւորը մեկուկէս տարի վերջը զԼուդով. Ծունիկա ի Ռեքրուեզէնս խաւրեց, որն որ եկաւ Ալպայի դքսին տեղ կուսակալութեան աստիճանն առաւ (1573. Գեկա. 1): Թէպէտ աս նոր կուսակալին դորձքը խիստ դժուար էր, որովհետեւ մեկ կողմանէ ապստամբք շատ զօրացած էին, մեկալ կողմանէ ալ Սպանիացիք ան աստիճանի ստակի նեղութեան մէջ էին, որ շատ պաշտօնատարք երկայն ատեն վեր թոշակ ընդունած չունէին. բայց այնպէսով ալ իր նախորդէն բոլորովին տարբեր խոհեմ ու շափաւորեալ ընթացք մը բռնելով, իրաց կերպարանքք սկսաւ փոխուիլ, վասն զի անկարելի էր որ ալ անկէ ետեւ ժողովուրդը յառաջուան պէս ստատկութեամբ կռուէր: Ասոր վրայ եկաւ նաեւ Նիմֆէկի քով Սպանիացւոց բրած յաղթութիւնը, որուն մէջ Օրանիայի իշխանին երկու եղբարքը՝ Լուդովիկոս ու Հենրիկոս Նասաւեան՝ մեռան (1574, Ապր. 14), եւ անկէ ետեւ Հոլանտիա ու Զէլլանտ նահանգները յարձակելին: Բայց երկու տարիէն Ռեքրուեզէնս մեռնելով (1576, Մարտ 5), Օրանիայի իշխանը՝ որն որ յաջողութենէ զրեթէ յուսահատելու սկսած էր, նորէն հոգի առաւ. մանաւանդ որ Սպանիացիք իրենց բռնած ընթացքովն ապստամբաց աւելի զօրանալուն օգնեցին: Իրենց զօրքերը, որոնք զրեթէ երկու տարիէ վեր թոշակ առած չէին, սկսան թագաւորին հաւատարիմ մնացող Ֆրանտրա եւ Պրոպանդ նահանգներուն մէջ ստակ ձեռք բերելու ետեւէ իյնալ, որով շատ անկարգութիւններ

գործելէն զատ, վերջապէս Անդուերբիա քաղաքը շա-
րաշար աւարառութիւն մ'ըրին (1576, Նոյեմ. 4):
Արդ առ բանս ապստամբելոց մեծ օգնութիւն բրտ,
ինչու որ եթէ բոլորովին չպատճառեց նէ՛ զսնէ շուտ-
ցուց եւ գլուխ հանեց Ալենզի հաշտութիւնը կամ դա-
շնակցութիւնը (1576, Նոյեմ. 8), որով Բատաւ-
եան նահանգներէն հինգն ու Բեղգիական նահանգնե-
րէն վեցը մէկտեղ կը միանային իրենք զիրենք միարան
պաշտպանելու. բայց տակաւին հնարանդութիւննին
յայանապէս Փիլիպպոսին չէին զլանար: Ասոր վրայ ընդ-
հանուր կարգաժողով գումարելով, անոր որոշմամբ կը
պահանջէին որ բոլոր օտար զօրքերը ետ կանչուին: Ի-
րենց առ պահանջմանքը գլուխ հանելու համար Պրիւս-
սելի միութեան գաշինքը դրին (1577, Յունու. 9),
որն որ պաշտպանողական դաշնակցութիւն մըն էր՝ խա-
ղաղութիւնը պահելու եւ օտարները մերժելու համար:
Նոյն դաշանց մէջ միանգամայն կ'որոշուէր որ բոլորքա-
կանաց դէմ արուած հրովարտակներն ի կախ մնան,
բայց ուղղափառ կրօնն ալ ազատ ըլլայ: Թէպէտ առ
դաշանց մէջ գրեթէ բոլոր Ստորին նահանգները մտնե-
լով, որոնք բնա մեծի մասին ուղղափառ էին, առ կրօ-
նական աղատութեան պայմանը խիստ արգար էր. բայց
այնպէսով ալ Հորանտիա ու Զէլլանտ նահանգները,
որոնք՝ ինչպէս նաեւ Օրանիայի իշխանը՝ կարուինական
աղանգն ընդունած էին, անոր վրայ մեծ դժուարու-
թիւն կը հանէին ու չէին ուզեր հաւանիլ որ ուղղա-
փառ կրօնն ազատ ըլլայ:

97. 8. Յովհաննիս կուսակալութիւնը: Մատա-
թիա արքիդուքսն ու Անժուի Փրանկիսկոս դուքսը:
Ինչպէս որ ըսածներնէս կը հետեւի, նոյն ատենն ա-
պրտամբք ամէն ժամանակե աւելի զօրաւոր էին: Բայց
չուտ մը Օրանիայի իշխանը սկսաւ դարձեալ մեծ վախի
մէջ իյնալ նոր եկող (1576, Նոյեմ.) կուսակալ՝ Տ.
Յովհանն Աւստրիացւոյն ճարտար վարմունքէն, որն որ
անանկ կ'երեւար թէ ամէն կարելի միջոցներով եւ հար-

կաւոր զո՛հերով խաղաղութիւն ընել կ'ուզէ, մինչև նաև Ալէնդի զաշնակցութիւնը յանձն առաւ (1577, Փետր. 17), Մշանջննաւոր վճիռ բուսած հրովարտակով: Անոր համար կարգաժողովները զինքն իրրևս վերին կուսակալ ընդունեցան, որով մեծ շքով ու ժողովրդեան ցնծութեան ազաղակաւը Պրիսսէլ մտաւ (Մայ.), եւ սպանիացի զօրքերն եւ խաւրելով՝ միայն գերմանական վարձկանազօրք պահէց: Սակայն մէկալ կողմանէ Օրանիայի իշխանն ալ ամէն կերպով կը ջանար Սպանիացւոց դիտաւորութիւնը պարսպ հանելու: Ուստի որչափ որ նոր կուսակալը խիստ միջոցներ բանեցրնելէն կը զգուշանար, ի վերայ այդ ամենայնի քանի՜ մ'ամիս վերջը հարկաւոր սեպեց Նամիրի եւ Գարլուպէրկի ամրոցները ձեռք անցրնել եւ բացարձակ հնազանդութիւն պահանջել (Յուլ.): Ժողովուրդն առ բաներուն վրայ դարձեալ գրգռեցաւ, որով ապստամբաց կողմը նորէն զօրացաւ եւ Օրանիայի իշխանը դարձեալ մեծ ազդեցութիւն ու իշխանութիւն ստացաւ: Ինքան ատեն չէ թէ միայն Հոլանտիայի, Զէէլանտի եւ Ուդրելսդի կուսակալ էր, հապա նաև Պրապանդի, Անդուերբիայի ու Մեխէլնի պաշտպան: Աս իր ազդեցութեամբը բաները հոն հասուց որ ընդհանուր կարգաժողովը զսպանիական կուսակալը Հայրենեաց թշնամի հրատարակեց. եւ Պրիսսէլի մէջ նոր միութեան դաշինք մը գրաւ, որով ամէն կրօններուն ազատութիւն կը խոստացուէր (1577, Դեկտ.): Անկէ ետև՝ արդէն հոն կանչուած Մատաթիա արքիդուքսը, Ռուտոլֆ կայսեր եղբայրը, կուսակալ ընտրեցին եւ իրեն երգում ընել տուին (1578, Յունու.): Օրանիայի իշխանն անուամբ՝ իրեն ընդհանուր փոխանորդ պիտ'որ ըլլար, բայց իրօք՝ բուն ինք զլուխ եղաւ: — Տ. Յովհան խաղաղութեան յոյսը կորսորնցուցած ըլլալով, 17,000 սպանիացի զօրք բերել տուած էր, որոնք յառաջուան կուսակալու հոյն Աղէքսանդր Փառնեղէ որդւոյն հրամանատարութեան տակ, Ժանպլուի (Ամսդլախի) քով

ապտամբաց 20,000ի բանակին յաղթեցին (Յունու. 31), եւ Պրապանդ ու Հեննեկա նահանգներուն մէկ մասը հնազանդեցուցին: Ասոր հակառակ Օրանիայի իշխանը Ամոգերաամի տիրեց, ուր կալուինականք ուղղափառաց եկեղեցիներն առին, քահանաներն ու քաղաքացւոց խորհրդականները մերժեցին: Աւրիշ շատ տեղ ալ ուղղափառաց աս հալածանքը պատահեցաւ: Արդ վերջիններն անոնց ձեռքէն ազատելու համար, միանգամայն տեսնելով որ Անդղիայի Եղիսաբեթ թագուհին անոնց կ'օգնէ, որով նորազանգք միշտ աւելի կը զօրանան ու կը յանդգնին, կրցան Գաղղիայի Հենրիկոս Գ. թագաւորին պզտիկ եղբայրը՝ Անժուի Փրանկիկոս դուքսը (110)՝ Ստորին նահանգաց ազատութեան պաշտպան ընտրել տալ (1578, Օգոստ. 13): Ասոր հետ դրուած դաշանց պայմանն ան էր՝ որ զօրօք օգնութեան դայ եւ Սպանիացիները մերժելու օգնէ: Բայց ինք իր արշաւանքովը բան մը չկրցաւ ընել եւ դրած դաշինքը քիչ մը ետքը քակեց:

98. Աղէքսանդր Փառնեզէ՝ կուսակալ: Աւգրեսիդի միութեան դաշինք: Բեղղիական եւ Բատաւան նահանգները բոլորովին իրարմէ կը բաժնուին: Աս տեսնները Տ. Յովհան կուսակալը մեռած ըլլալով (1578, Հոկտ. 1), Փիլիպպոս Բ. անոր տեղը զԱղէքսանդր Փառնեզէ վերին կուսակալ անուանեց, որն որ իր խելացութեամբն ու քաջութեամբն արժանի էր Օրանիայի իշխանին դիմացն ելլելու: Ինք շափառութեան ու խոհեմութեան ընթացք մը բռնեց. խոստացաւ որ ամէն բան հին միճակին մէջ կը խոթէ, հին ազատութիւնները նորէն կը հաստատէ եւ սպանիացի զօրքերը ետ կը դարձնէ, բաւական որ ուղղափառ կրօնը նորէն հաստատուի: Ասով կրցաւ իրօք Բեղղիական գաւառները հանդարտեցնել ու թագաւորին իշխանութեան տակ ձգել: Ալարնեան (Արդուա, Հեննեկա, Նամիւր, Ախմուրկ եւ Ալքոսենպուրկ) նահանգները մասնաւոր իրաւախոհութեան դաշինքով սպանիական

Իշխանութեան դարձուց (1579, Մայ. 21). Իսկ մեկաշներն ետեւէ ետեւ հնազանդեցուց՝ քաղաքներն առնելով: Բայց զուցէ աս պարագան Օրանիայի իշխանին աւելի օգտակար՝ քան թէ մնասակար եղաւ. ինչու որ անով կրցաւ Ուղբեխօղի միութեան դաշինքը դնել (1579, Յունու. 23), որն որ ապագայ հասարակապետութեան հիմն եղաւ: Բայց նոյնով առանց վեհապետի հասարակապետութիւն մը չէր հաստատուեր, ոչ ալ առանձին Բատաւեան հասարակապետութիւն մը. Բեղդիական նահանգներէն ալ ուզողները մէջը կրնային մտնել, միայն թէ առաջինները հաստատուն պիտի մնային: Աս միարանութեան դաշինքը գրուեցաւ Հորանտիայի, Զէէլանտի, Ուղբեխօղի, Կելտակոնի ու Արեօնիսկէնի մէջ: Ետքէն մէջը մասն նաեւ Փրիլիա ու Ուլերիսէլ (Յունիս 11): Միութեան դիտարար պայմանքն էին որ ի մշտնջենաւորս միացեալ մնան եւ թագաւորին անուամբ կամ անոր կողմանէ եղած ամէն բանութեան դէմ՝ իրարու փոխադարձ պաշտպանութիւն ընեն. ամէնքը հասարակաց արկղ տնկնան եւ օտար տէրութեանց հետ միարան բանակցին. ամէն կողմն ալ ամէն կրօններն ազատ ըլլան: — Այսպէսով Ստորին նահանգները երկու մաս բաժնուեցան. Բեղդիական նահանգները մեծաւ մասամբ սպանիական իշխանութեան հնազանդեցան, իսկ Բատաւեականներն Ուղբեխօղի միարանութեամբ բոլորովին Սպանիայէն քակեցան:

99. Անժուի դուքսն ու Օրանիայի իշխանը: Աւերջնոյն մահն ու իր Մարիկ որդին: Սպանիայէն գլուխ քաշող նահանգները՝ վերոյիշեալ միութեամբ զօրանալէն ետեւ ալ, տակաւին իրենք զիրենք տկար սեպելով, աչուրնին յառաջուրնէ աւելի օտար երկիրներ սկսան դարձրնել: Մինչեւ նոյն ատեն այնչափ սիրով չէին ուզեր արտաքին տէրութիւններէ օգնութիւն ընդունիլ, աղէկ դիտնալով որ օտար օգնութեան հետ օտար իշխանութիւն ալ ներս կը մտնէ: Բայց Բեղ-

գիտական նահանգաց իրենցմէ բոլորովին բաժնուելէն ետեւ՝ ճանչնալով թէ անկարելի է որ իրենք իրենցմէ յազմեն, մեծ ջանքով ետեւէ ինկան դրսէն օգնութիւն գտնելու. իրօք ալ նոյն արասրին օգնութիւնն ամէն ժամանակէ աւելի ընդունելով, ապաստաճութեան քաղաքական ազդեցութեան շրջանը շատ ընդարձակեցաւ: Միայն ալ նահանգները Ղաւտաթիա արքիզաքան եւ խաւրեցին ու դարձեալ Անժուի Փրանկիսկոս դքսին գիմեցին: Անոր հետ դաշինք դրին որ ինք եւ իր յաջորդները Ստորին նահանգաց իշխան ըլլան, ան պայմանաւ որ նոյն նահանգները երբեք Քաղղիայի հետ չմիանան (1580, Սեպտ.): Գուքան աւ եւ իր իշխանութիւնը շափաւորող ուրիշ քանի մը պայմանները հաստատուն պահելու երգում ընելէն (1581, Յունու.) քանի մ'ամիս ետքը, միայն ալ եօթը նահանգները, որոնց հետ միարանած էին նաեւ Պրապանդ, Անդ ու Ֆիանտրա, յայտնապէս հրատարակեցին թէ Ազանիայի թագաւորին հպատակութենէն բոլորովին ելած են (1581, Յուլ. 26): Անժուի գուքոր, որն որ ան միջոցին հանկից ելած Անդղիա դացած էր՝ Եղիսարեթ թագաւորին հետ կարգուելու մտքը, նոյն տինկալութիւնը չկրցաւ դուրս հանել եւ դարձաւ նորէն Ստորին նահանգներն եկաւ (1582, Փետր.): Եւ քիչ մը վերջը Պրապանդի գուքո ու Ֆիանտրայի կոմս հրատարակուեցաւ. բայց Ազանիացոց դէմ բան մը չկրցաւ դուրս հանել: Նոյն իսկ երկրին վրայ ալ ամենեւին իշխանութիւն չունէր, ամէն բան Օրանիայի իշխանին ձեռքն էր. եւ ոչ իսկ կրցաւ զաշնագրութեան պայմաններուն համաձայն՝ ուղղափառաց ազատութիւն կամ թողտուութիւն ձեռք բերել: Անոր համար ուղեց զօրաւոր տեղերը զաղղիայի զօրք խոթել, որպէս զի անով կարենայ երկրին տիրել: Ան իր գիտաւորութիւնը կրցաւ քանի մը տեղ դուրս տանիլ. բայց նոյն փորձն իր կեցած Անդուերբիայի վրայ ալ փորձած ատեն (1583, Յունու. 17), մեծ շփոթու-

Թիւն մը փրթաւ, որուն վերջն եղաւ բոլոր (16,000) Գաղղիացւոց սպանումը: Ինքն ալ ստիպեցաւ ձգել փախչիլ: Ալ անկէ ետեւ Օրանիայի իշխանը հաստատութեամբ կը յուսար որ իր շատոնց պատրաստած խորհուրդը գլուխ ելլելով, կարգաժողովներուն ձեռքովն ալ Հոլանտիայի ու Զէէլանտի կոմս (սահմանադրական վերին հրամանատար) կ'անուանի: Բայց իր փառասիրական խորհուրդներուն վերջ տուաւ մարդասպանի մը սուրբ (1584, Յուլ. 10): Ասանկ պարագաներու մէջ նոյն իշխանին մինչեւ ան ատեն վարած իշխանութիւնը յառաջ տանելու համար՝ անձնական զօրութիւն ու մեծ ճարտարութիւն պէտք էր. ուստի Թէպէտ եւ Հոլանտիայի ու Զէէլանտի կարգաժողովներն անոր 17 տարւան Մարիկ որդին Հոլանտիայի, Զէէլանտի եւ Ուղրեխդի կուսակալ անուանեցին. բայց չէ Թէ միայն աս գործողութեամբ վեհապետական իշխանութիւն մը բանեցուցին, հապա անոր քովը տէրութեան խորհուրդ մը դրին, որն որ դրեթէ ամէն բան ընողն էր (1584, Օգոստ. 18): Քիչ ճ' ետքը մէկալ շորս միաբանեալ նահանգներն ալ ղՄարիկ ընդունեցան: Իսկ Սպանիական կուսակալը Գաղղիացւոց երթալէն ետեւ՝ Բեղղիական նահանգներուն մնացած մասերը հետզհետէ Թագաւորին հպատակեցուց:

100. Անգղիական օգնութիւն: Ահողերի կոմսը: Ընդհանուր կարգաժողովոյ եւ կուսակալի կողմնակցութիւնը: Օրանիայի Գուլիելմոս իշխանին մեռնելովը՝ սպառտամբք իրենց գլխաւոր նեցուկն ու ապաստանը կորսրնցուցած ըլլալով, սկսան դարձեալ օտար տէրութիւններու իյնալ. եւ պարագ տեղ Գաղղիայէն օգնութիւն խնդրելէն ետեւ, Անգղիայի դիմեցին: Գանուած զիճակնին անանկ վտանգաւոր էր, մինչեւ նաեւ սիրով յանձն կ'առնուին Եղիսարեթ Թագուհւոյն իշխանութեան տակ մանել: Իրօք ալ ըլլալէքն ան էր, եթէ Թագուհին նոյն գործողութիւնը Ահողերի կոմսէն աւելի ճարտար մարդու յանձնած ըլ-

լար: Եղիսարէթ Ստորին նահանգաց հետ դաշինք բրաւ,
որուն պայմանն ան էր, որ իրենց երէք (Ֆլիսինկէն, Ռա-
մերինա ու Պրիէլ) նաւահանդիսաները զբաւ առնելով,
օգնական զօրք խաւրէ (1585): Նոյն դաշինքով վերոյի-
շեալ կոմսն անանկ իշխանութիւն մը ստացած էր, որ
թագուհին կը յուսար թէ անոր ձեռքովը Ստորին նա-
հանգաց կրնայ տիրել: Եւ ստուգիւ ալ Լեադերի կոմսը
սկսաւ իրրել վերին կուսակալ վարուիլ. զՄարիկ իշ-
խանը՝ Հոլանտիայի, Զէէլանտի եւ Ուզբեխդի, ինչպէս
նաեւ անոր ազգական՝ Նասաւի Գուլիելմոս դուքսն
ալ Փրիզիայի կուսակալութեան աստիճանին մէջ հաս-
տատեց: Բայց իր իշխանութեան սահմանները մէկէն
ընդարձակել ուզելով, երկայն վէճերու եւ երկպառա-
կութիւններու մէջ ինկաւ նահանգներուն հետ, որոնք
իրենք զիրենք անկախ ու վեհապետական իշխանութեան
տէր կը համարէին: Բաներն ան աստիճանի հասան,
մինչեւ վերջապէս ստիպեցաւ թողուլ երթալ (1587,
Գեկա.): Աս բանս յառաջ կու գար զխառորաբար
Ընդհանուր կարգաժողովոյ ըսուած կողմնակցութենէն,
որուն զօրութիւնը՝ մեծ քաղաքներու եւ առանձին ա-
րեւմտեան կողմանց առեւտրական մեծ քաղաքներուն
վրայ էր, եւ իրեն զլուխն էր Հոլանտիայի վերին փաս-
տարան՝ ԅովհաննէս Օլտենպառնելէյս: Ասկից զատ՝
ուրիշ մեծ կողմնակցութիւն մը կար, որն որ Կուսա-
կալի (ետրէն՝ Օրանեան) կողմնակցութիւն կ'ըսուէր.
ասոր ալ զօրութիւնը՝ ժողովրդեան, կալուինական ե-
կեղեցականներու եւ արեւելեան քաղաքներուն վրայ
էր եւ իրեն զլուխունէր Ժամանակին վերին կուսակալը:

101.

Անգղիա ու Գաղղիա Սպանիայի հետ
պատերազմի կ'ելլեն: Ասոր՝ Ստորին նահանգաց վրայ
ունեցած ազդեցութիւնը: Ընդդիպի եւ Ստորին նահան-
գաց մէջ ձուած յարաբերութիւններուն աւելի ծան-
րակշիռ հետեւութիւնը, չէ թէ միայն նոյն նահան-
գաց, հապա բոլոր Եւրոպայի համար ալ, ան եղաւ որ

1 Syndic, avocat.

Անդղիացիք Սպանիայի դէմ յայտնապէս պատերազմի ելան, որուն արդէն շատանց կը բաղձային: Ասոր գլխաւոր պատճառն էր ըստ մասին քաղաքական եւ ըստ մասին կրօնական նկատմամբ, Ազիսարեթին ու Փիլիպպոս Բ-ին մէջ մտած գրգռութիւնն ու սխր, որն որ աւելի սաստկացած էր Անդղիացւոյ՝ յառաջ ծածուկ եւ հիւնոյ յայտնապէս՝ Ստորին նահանգաց օգնելովը: Անդղիա Սպանիայի հետ բոլորովին աւրուելով, իր շահն իսկ կը պահանջէր որ Ստորին նահանգներուն հետ աւելի եւս սերտիւ միանայ: Փիլիպպոս Անդղիայի դէմ մեծ (Անյաղթ անուանեալ) նաւատորմիդը խաւրեց, յուսալով, որ նոյն տերութիւնն անով խնարհեցընելով, Ստորին նահանգներն ալ զիրար կը նուաճէ: Բայց աս նաւատորմին յաղթուիլը (120), Ստորին նահանգաց անկախութեան մեծապէս օգնելէն զատ, Ռփլիանոսն ալ ազատեց, որով Անդղիայի եւ նոյն Ստորին նահանգաց առջեւ անշափ դաշտ մը բացուեցաւ, որուն վրայ անոնք իրենց մեծութեան ու փառաց վերջին ծագը հասան: Անդղիացւոյ նոյն ծովային յաղթութեան վրայ ուրիշ պատճառներ ալ եկան, որոնցմով նոր հասարակապետութեան անկախութիւնն աւելի եւս հաստատուեցաւ եւ բնդհանուր քաղաքականութեան հետ աւելի եւս անձկագոյնս կապուեցաւ: Փիլիպպոս Բ. Գաղղիայի մէջ Հենրիկոս Գ-ին դէմ դրուած նիզակակցութեան կողմը բռնելով, զԱլզրասնոյր Գառնեզէ՝ Ստորին նահանգաց մէջ ունեցած զօրքերուն մեծ մասովը՝ հոն խաւրեց (112): Աս դքսին՝ Գաղղիա բրած արշաւանքին (1590—1592) մէջ առած վերքէն մեանիլը (1592, Գեկա. 2) եւ Հենրիկոս Գ-ին դահ անցնիլը՝ Ստորին նահանգաց ինքնակացութեան շատ օգնեցին, որովհետեւ նոյն թագաւորը Սպանիայի դէմ կերպապէս պատերազմ բռնալով (1595, Յունու. 16), Անդղիայի եւ Ստորին նահանգաց հետ դաշնաւորութիւն բրաւ: Ատանկով նոր հասարակապետութիւնը, եթէ ոչ յայտնապէս՝ գոնէ լռելեայն, Անդղիայէն ու Գաղ-

զիայէն՝ իբրև անկախ տերութիւն ընդունուած, եւ Մարտիկին հրամանատարութեան տակ՝ ցամաքի վրայ յաղթող, ծովու ալ տէր ըլլալով, ալ Փիլիպպոս Բ. Ինչպէս կրնար յոյս ունենալ նոյն երկիրը նորէն իր իշխանութեան տակ առնելու: Ասոր կ'երևայ որ ինք ալ համոզուած էր. վասն զի մէկ քանի անգամ ապստամբաց՝ խաղաղութեան առաջարկութիւններ ընելէն եւ մերժուելէն ետեւ (1594, 1596, 1597), իր մահունէ (1598, Սեպտ. 13) քանի մ'ամիս յառաջ, իր Եզդիսարեթ Գլխաւ Եւզինէ աղջիկը՝ Աւստիայի Ալպերգ արքիդքսին (Ռուտոլֆ կայսեր կղբօրը) հետ կարգած ատեն, Բեզդիակիան Ստորին նահանգներն անոր օժիտ տուաւ ու Սպանիայի թագէն բաժնեց, միայն սպայմանը դնելով որ եթէ անոր յաջորդութիւնը սպառի, իշխանութիւնը նորէն Սպանիայի դառնայ:

102. Տասուերկու տարւան զինաղաղար: Փիլիպպոս Բ. Գաղղիայի հետ առանձին խաղաղութիւն բրած էր Ալերվէնի դաշինքով (1598, Մայ. 2): Բայց պատերազմը իր Փիլիպպոս Գ. յաջորդին ատենն ալ Անգղիայի եւ Ստորին նահանգաց զէմ յառաջ կ'երթար. մինչև որ Եզդիսարեթ թագուհւոյն մահունէն ետեւ, անոր Յակոր Ա. յաջորդին ատենը, Սպանիա Անգղիայի հետ ալ հաշտուելով (1603), Ստորին նահանգները դարձեալ առանձին մնացին: Փիլիպպոս Գ. ինժամանակը ցամաքի պատերազմը տկար կերպով կ'ըլլար: Ասոր մէջ նշանաւոր է Սպանիացւոց Օսղենտէ քաղաքը պաշարելը, որն որ երկը տարիէն աւելի քշեց (1601, Մայ. — 1604, Սեպտ.), եւ Սպանիացւոց յիսուն հազար հողի արժեց, իսկ Հորանաացւոց՝ զուցե աւելի եւս: Միեւնոյն ատեն երկու աղգերը ծովու վրայ մեծ սաստիկութեամբ կը կռուէին. Ստորին նահանգաց նաւատորմիչը Սպանիայի ծովեզրները արշաւանք մ'ըրաւ, որն որ աղէկ յաջողեցաւ, մինչև Ճիպրալդարի քով Սպանիայի նաւատորմիչը բոլորովին փձացաւ (1607): Աս ատենները երկու կողմն ալ երկայն-

ժամանակեայ պատերազմներէն ձանձրացած եւ խաղաղութեան միտեալ բլլալով, սկսան հաշտութեան պայմաններուն վրայ խօսակցիլ՝ Հենրիկոս Գ.ին միջնորդութեամբ: Պայմաններուն վրայ միաբանիլը խիստ դժուար եղաւ Արեւելեան Հնդկաստանի նաւագնացութեան եւ մանաւանդ ուղղափառ կրօնին ազատութեան վրայ ելած վէճերուն պատճառաւ: Ասան զիշատ անգամ ուղղափառաց հետ դրուած դաշինքներուն մէջ խոտաացուած կրօնի ազատութեան պայմանին դէմ, Օրանիայի իշխանին անուամբն՝ ուղղափառ կրօնի պաշտամունքը բոլորովին արգելուած (1581), եւ հետզհետէ զանազան վճիռներով՝ նոյն արգելքն աւելի սաստկացած ու խոտացած էր, թէպէտ, ինչպէս ըսած ենք, բնակչաց մեծազոյն մասը տակաւին ուղղափառ էր: (Արեւելեան Հնդկաստանի իրողութիւնները ետքէն կրտեսենենք:) Աւերջապէս կրցան միաբանիլ ու դաշինք գնել, բայց ոչ եթէ կատարեալ խաղաղութեան, հապա միայն 12 տարւան զինադադարի: Աս դաշնագրութիւնն եղաւ Այպերդ արքիդքսին ու Սպանիայի հետ, Անդուերրիայի մէջ (1609, Ապր. 9). եւ ասով դոնէլուելեայն՝ Սպանիա ալ Ստորին նահանգաց անկախութիւնը ճանչցաւ: Բայց նոյն անկախութիւնը դեպանազխտական ու բացայայտ կերպով՝ եւ ոչ իսկ Անդզիա ու Գաղղիա ընդունած էին. մանաւանդ թէ Ստորին նահանգաց՝ Գերմանական պետութեան ու կայսեր հետ ունեցած կապակցութիւններն ալ տակաւին կատարեալ չէին քակուած:

103. Ստորին նահանգաց անկախութեան՝ Եւրոպայի վրայ ունեցած ազդեցութիւնը: Նոր հասարակապետութեան ներքին հանգամանքը: Ա՞ն կերպով Եւրոպայի միապետական տէրութեանց դուժարութեան մէջ՝ հասարակապետութիւն մը կանդնուեցաւ, որն որ եթէ նոյն դուժարութեան վրայ փոփոխութիւն մը չէր պատճառեր ալ նէ, դոնէ մեծ ազդեցութիւն կ'ընէր որովհետեւ նոյն իսկ իր կազմուելուն ատենը՝ ան դու-

ճարութեան իրողութեանց հետ այնպէս գիրկընդխառն էր, որ ընդհանուր իրողութեանց մէջ պէտք էր որ զործունեայ կերպով զործակցութիւն ունենար: Ստորին նահանգներն այնպիսի նպատակի մը հասած էին, զորն որ իրենք ալ իսկզբան գէթ յայտնապէս չէին գիտած. անոր համար ալ իրենց ներքին սահմանադրութիւնը մէկէն նոր կերպարանք չէր առեր, հասցա ժամանակին կարօտութիւններուն համեմատ՝ հետզհետէ կազմուած էր. ուստի եւ զարմանք չէ որ խիստ անկանոն մնացած բլայ: Բայց Հոլանտիա դաւառին առաւելութիւնը՝ մէջերնին կարգաւորեալ դաշնակցութիւն մը չգտնուիլն այնչափ զգալ չէր տար: Արտաքին տէրութեանց հետ բլայու զործողութիւնները՝ ընդհանուր կարգաժողովոյն ձևովն էր, որն որ արդէն շատ տարիներէ յառաջ (1592էն վեր) կազմուած էր. իսկ ներքին ծանրակշիռ ու ընդհանուր զործքերը՝ վերին կուսակալն ու Հոլանտիայի վերին փաստաբանը կը տեսնէին: Բայց քիչ մը ետքը զրգուող Արմինեան վէճերը, որոնցմէ ծագեցան Օրանեան եւ Կարգաժողովոյ կողմնակցութեանց սատարի կոխները, բաւական ցուցուցին որ նոր տէրութիւնն իր կործանման սերմն արդէն նոյն ատենէն իր մէջը կը կրէր:

Բ.

Գաղղիայի գլխաւոր փոփոխութիւնները:

104. Ներքին պատերազմներուն բուն պատճառը: Նախարարք եւ քաղաքացիք: Ա՞ ժամանակի միջոցին սկիզբները երեսուն տարիէ աւելի (1562 — 1594) Գաղղիա ներքին պատերազմներով տակնուվաջ կ'ըլար, որոնք նոյն իսկ թագաւորական զահը կործանման վտանգի մէջ ձգեցին: Նոյն ներքին պատերազմները՝ հասարակօրէն կրօնական պատերազմներ կը սեպուին. բայց մարդ զանոնք մտադիր աչքով որ քննէ, կը տեսնէ թէ միայն անկից ծագած են՝ որ երկու կող-

մանց գլխաւորներն ալ թագաւորներուն տկարութիւնը ճանչնալով, կրօնի պատրուակաւ կ'ուզէին կառավարութեան սանձերը ձեռունին անցընել: Ասոր համար ալ հարկաւոր է թէ արքունեաց ներքին հանգամանքները եւ թէ կողմնակցութեանց յարաբերութիւնները ճանչնալ. որովհետեւ պատերազմի պատճառը գրեթէ աւելի Պուրպոնեանք էին, որոնք իբրեւ թագաւորական ջեղի իշխանք՝ արքունական ազնուականաց զօրաւոր աներուն վրայ կը նախանձէին, բան թէ կրօնական երկպառակութիւնք կամ նորազանգից կրօնական ազատութիւն չորուիր: Բայց մէյ մ'որ բոցը բորբոքեցաւ եւ Պուրպոնեանք նորազանգից գլուխն անցան, ալ կարելի չեղաւ կրակը մարել. վասն զի թէ մելեռանդութենէն եւ թէ կողմնակցութեանց գլխաւորներուն կիրքերէն՝ միանգամայն սնունդ կը գրտնէր: — Աւերջին ժամանակները Վաղղայի թագաւորներն, բաւ մասին՝ խնամութեամբ, բաւ մասին՝ ժառանգութեամբ, այլեւայլ դաւառներ իրենց անրնդմիջական իշխանութեան տակ անցուցած էին, որոնց գլխաւորներն էին Պրրդայի ու Պուրկունտիայի դքսութիւնները, Օվեոներ, Պուրպոնե ու Վլերման, եւ նախ իրենց զօրութիւնը խիստ մեծցած էր. բայց աւագ նախարարները կամ բարձրագոյն ու հարուստ ազնուականք (սեպուհ) տակաւին մեծ արտօնութիւններ եւ բնդարձակ իշխանութիւն ունէին: Ասոնք բազմութիւնեալ ծառաներ պահելէն զատ, իբրեւ իրենց կամաց ու գիտաւորութեանց զինեալ սպասաւոր՝ առձեռնպատրաստ ունէին խոնարհագոյն ու աղքատ ազնուականներն ալ, որոնք գրեթէ ամէն բանի մէջ առաջիններուն ետեւէն կ'երթային: Նաեւ շատ քաղաքներ խիստ ազատական սահմանադրութիւններ ու մեծամեծ արտօնութիւններ ունէին. հասարակօրէն ալ աս քաղաքացիներն ալ քաղաքացիներն ու ազնուականները մէջերնին շատ աղէկ էին: Ասանկով փառասէր ու աժգոհ մարդիկ կրնային շուտ մը զօրաւոր կուտակցու-

Թիւններ կաղմել, եւ մինչեւ թագաւորին իշխանութեան դէմ դնելու շափ զօրանալ, բաւական որ առջեւնին մեծ նպատակ մ' ելլէր կամ երեւելի պատրուակ մ' ունենային: Կարօլոս Ը.ին ու Լուդովիկոս ԺԲ.ին առանձն՝ ստանկ առիթ չէր պատահած. բայց անկէ ետեւ նորազանդութիւնն յարմար առիթ մատակարարեց: — Գերմանիայի ու Հելլենասիայի կրօնական շիտթութիւնները՝ Գաղղիայի մէջ ալ իրենց արձագանգն ունեցան, ինչպէս վերը տեսանք (62). եւ եթէ Գերմանիայի շափ շատակացան ու շնորհարձակեցան եւ հոնտեղաց պէս քաղաքական սաստիկ հետեւութիւններ չունեցան ալ նէ, ետքէն խիստ ծանրակշիռ եղան, եւ Գաղղիայի իրողութեանց վրայ մեծ ազդեցութիւն բրին: Աս բաներուն սկիզբը թէեւ Փրանկիսկոս Ը.ին ժամանակն եղաւ. բայց աւելի մեծցան իր Հենրիկոս Բ. որդւոյն առանք (1547 — 1559), եւ առաւել եւս անոր մահաւնէ ետքը:

105. Կիզեանք եւ Պուրպոնեանք: Փրանկիսկոս Բ.: Անպուաղեան դաւակցութիւն: Այն ատեն Գաղղիայի մէջ երկու գլխաւոր կողմնակցութիւնք կային. Կիզեանց եւ Պուրպոնեանց կողմնակցութիւնները: Առաջին կողմնակցութեան գլուխը կը կենային Կիզի իշխանները, որոնք Սկոտիայի Մարիամ Սգուարդ թագուհւոյն մօրեղբայրներն էին՝ Լոթարինգիայի Անտոն գրօին Ռենատոս Բ. եղբորմէ յառաջ եկած, եւ նոյն ատեն Կիզի Փրանկիսկոս գրօին գլխաւորութեան տակ թագաւորին քովը մեծ առաւելութիւն ստացած էին ու կառավարութեան գործքերուն վրայ մեծ ազդեցութիւն ունէին: Իսկ երկրորդ կողմնակցութեան գլուխ էին՝ Գաղղիայի Ս. Լուդովիկոս Թ. թագաւորին Ռուպերդ կրտսեր որդիէն սերած Պուրպոն. Վանատմ ցեղին իշխանները, որոնք Նաւարրայի Անտոն թագաւորին, Ալքրէզեան ցեղին Յովհաննա ժառանգին տնւանոյն (Նախալ. 41), եւ անոր եղբորը Գանաէի Լուդովիկոս իշխանին գլխաւորութեամբը՝ կառավարու-

Թեան զէմ կը գործէին: Ըս վերջիններուն հետ էին Շաղիլեանի նշանաւոր ցեղին անդամները, որոնց մէջ խիստ մեծ հռչակ ստացաւ Գողինի ծովապետը: Կրնայ բռնիչ որ բոլոր ուրիշ տկար կողմնակցութիւնք կամայ կամայ սա երկուքէն մէկուն հետ միանալով, նոյնները խիստ բնդարձակեցան ու զօրացան, որով եւ ապագայ շփոթութեանց հիմը դրուեցաւ: Կիզի իշխաններուն զօրութիւնն անով աւելցաւ, որ Հենրիկոս Բ-ին Փրանկիսկոս Բ. որդին իր հօրը յաջորդած ատեն (1559) հազիւ 16 տարեան եւ միանգամայն տկար ու հիւանդոտ ըլլալով, կառավարութեան գործքերը բաւրովին իրենց ձեռքն անցաւ, մանաւանդ որ իրենց քրոջն աղջիկը Մարիամ Աղուարդ ալ թագուհի էր (117): Ըստնց սա մեծ իշխանութեան վրայ նախանձելով Պուրպանեանք, որոնց զխաւորները՝ կամ իրօք կալուինական աղանդն բնդունած էին եւ կամ նոյնին միակալ, ան աղանդաւորներուն հետ միացան եւ դաւակցութիւն մը շինեցին, որուն նպատակն էր թագաւորը բռնել եւ Կիզերը մեռցնել: Կիզերը բանն իմանալով, թագաւորը Անպուպ փախուցին, ուր դաւակիցք ըստ մեծի մասին ձեռք ինկան ու սպանուեցան (1560, Մարտ): Ըս դաւակցութիւնն՝ Անպուպեան դաւակցութիւն կոչուեցաւ:

106. Նորաղանդից շփոթութիւնները: Կարուլոս Թ.: Յունուարի հրովարտակ: Սակայն ասով շփոթութիւնները չվերցան: Հիւկրնոններուն Գանաէի աւաջնորդութեամբ Ախոն քաղաքը ձեռք անցրնելու համար բրած փորձը պարտապ էլլելէն ետեւ, վրդովմանց վերջ տալու համար՝ Օրլէանի մէջ բնդհանուր կարգաժողով մը դումարեցաւ, ուր շատ զօրքով թագաւորն ալ եկաւ (1560, Հոկտ. 18): Գանաէի իշխանը ժողովոյն մէջ թագաւորին զէմ խիստ սասակութեամբ խօսելուն համար՝ բանտարկուեցաւ, եւ իր ապստամբական գործոց համար՝ մահուան դատապարտուեցաւ: Ըս վճիռը շուտով ի գործ չէին գներ, որպէս զի ուրիշ

քանի մ'երեւելի մարդիկ եւ առանձինն Աննա Մոնմոնթանոսի արքունի սպարապետը՝ ձեռք անցրենէն: Բայց նոյն միջոցին Թագաւորը մեռնելով (1560, Գեկա. 5), իրաց կերպարանքը փոխեցաւ. իր մայրը կատարինէ Մեթիշեան (32), որն որ շատոնց իշխանութիւնը ձեռքն անցրենէ կը բաղձար, Մոնմոնթանոսին դալէն ետեւ՝ զգանտէ ազատեց եւ ինք խնամապետ եղաւ, որովհետեւ կարողս թ. որն որ իր Փրանկիսկոս Բ. եղբորը յաջորդած էր, հազիւ 11 տարեան էր: Իսկ Նաւարրայի Անտոն Թագաւորն ընդհանուր փոխանորդ եղաւ: Երկրորդ տարին Բուասի մէջ ուղղափառք եւ կալուինականք կրօնական բանակցութիւն մ'ըրին (1561, Սեպտ.). բայց աս ալ ամէն ան տեսակ բանակցութեանց պէս օգուտ չըրաւ. միայն աս հետեւութիւնն ունեցաւ որ Նաւարրայի Թագաւորը կալուինականներէն բաժնուեցաւ եւ ուղղափառ եղաւ: Իսկ աղանդաւորաց դորձած շարիքները խափանելու համար ակութեան երեւելի իշխանները Ս. Ժերմէնի մէջ ժողով մը գումարեցին (1562, Յունու.), ուր Յունուարի հրովարտակն ելաւ, որով կալուինականաց հրաման կը տրուէր որ քաղաքներէն դուրս ազատ ըլլան եկեղեցական պաշտամանք կատարելու եւ ժողովներ գումարելու. բայց պէտք էր որ իրենց յափշտակած եկեղեցիները թող տային. չհնազանդողներուն ալ մահուան պատիժ կը սպաննացուէր: Սակայն Հիւկրնտներն ասով դո՛հ չըլլալով, իրենց շարիքները յառաջ կը տանէին, եւ ալ յայտնապէս զէնք առնելով՝ կառավարութեան դէմ սկսան կռուիլ (Փետր.): Ուղղափառք ալ բանութիւնը բռնութեամբ փանելու համար զէնք առին: Նոյն միջոցին խնամապետ Թագաւորին Արդի իշխաններուն հետ հաշտուեցաւ, որով Փրանկիսկոս դուքան ու Աննա Մոնմոնթանոսի արքունի սպարապետը, որոնք արքունիքէն հեռացած էին, Նաւարրայի Թագաւորին ուղելովը, Փարիզ եկան եւ զկարողս թ. Գոնգենպլոյէն հան բե-

րել տուին : Ահլի դուքսը Փարիզ եկած ատեն, իր մարդիկներէն քանի մը հողի Աստիի մէջ նորազանդից հետ բոս պատահման կռուի մը բռնուեցան, որուն մէջ վերջիններէն 60 հողւոյ շափ մեռան (Մարտ 1) : Ասով Հիւկրնոները սաստիկ զրգուեցան, եւ աս զրգուութեան աւելնալուն շատ օգնեց Անդղիայի Եղիսարեթ թագուհին, որուն հետ Գոնտէ՝ իրենց գլուխը դաշինք դրաւ (1562, Սեպտ.), որ Անդղիայիք Հաւր ար Արասի ու Տիէրի նաւահանգիստները բռնեն, զորն որ իրօք ալ բրին 6000 հողի խրկելով : Իսկ ինք Գոնտէ Օրլէան քաղաքը ձեռք անցուց ու հոն աճրացաւ :

107. Առաջին եւ երկրորդ կրօնական պատերազմուէր : Անպուազի հաշտութեան հրովարտակն ու Անժիմիլի խաղաղութեան դաշինքը : Ասանկով երկու կուսակցութեանց մէջ առաջին ներքին պատերազմը սկսած էր (1562, Մարտ), որուն մէջ պատահած նշանաւոր դէպքերն ասոնք են : Ռուանի պաշարման ատեն՝ Նաւարրայի Անտոն թագաւորը վերաւորեցաւ ու քիչ մը ետքը մեռաւ (1562, Նոյեմ. 17) : Ահլի Փրանկիսկոս դուքսը Օրլէան քաղաքը պաշարած ատեն, շարագործին մէկը՝ Գոլինեիին գիտնալով՝ զինքը շարաշար վերաւորեց, որմէ քանի մ'օր ետքը մեռաւ (1563, Փետր. 24) : Գոնտէ՝ թագաւորականներուն, իսկ Մոնմորանի՝ կալուինականներուն ձեռքը դերի ինկան : Աս առաջին պատերազմը՝ Անպուազի Հաշտութեան հրովարտակաւ վերջացաւ (1563, Մարտ 19) : Կալուինականները հաւատարիմ մնալու խօսք տուին, իսկ կաթալարութիւնն իրենց թողութիւն շնորհելէն զատ, հրաման տուաւ որ ամէն մէկ գաւառին՝ մէյ մէկ քաղաքին մէջ աստուածային պաշտամունքը կարենան կատարել : Սակայն անկարելի էր որ մարտանդն Հիւկրնոները Հաշտութեան հրովարտակով մը բոլորովին հանգարտէին, մանաւանդ որ իրենց մեծերն եւ առանձինն Գոլինեի անօր խիստ դէմ էին : Ռուսի թէպէտ

† Bailliage.

միաբանեցան Անգղիացիները Գաղղիայէն մերժելու, որն որ իրօք ալ գլուխ ելաւ (1563, Յուլ.). երկրորդ տարին ալ երկու տերութեանց մէջ խաղաղութեան գաշինք գրուեցաւ (1564, Ապր. 9). բայց ներքին գրգռութիւնք հանդարտած չէին: Գոլիննի ու Գոնտէ որոշեցին որ թագաւորը բռնեն եւ ձեռք ալ զարկին դիաւաորութիւննին գլուխ հանելու. բայց չկրցան յաջողանել (1567, Սեպտ.): Նոյն միջոցին նորազանգք Նիմի մէջ ուղղափառներէն 80 հոգի իրենց բնակարաններէն բռնութեամբ հանելով, մեռցուցին ու ջրհոր մը նեակեցին: Ասիկայ իբրեւ թէ երկրորդ պատերազմին սկսելուն նշան եղաւ: Երեւելի է, նոյն պատերազմին մէջ, Փարիզի մօտ Ս. Տրնիի քովերը արուած ճակատք, որուն մէջ Մոնմորանսի արքունի սպարապետը մեռաւ, բայց թագաւորականները յաղթեցին (1567, Հոկտ. 25): Սակայն Հիւկրնոները կտրէն զօրանալով, Լոնժիմոյի խաղաղութեան գաշինքով յառաջուան ազատութիւններնին նորէն հաստատել տուին (1568, Մարտ 23):

108. Երրորդ կրօնական պատերազմ: Ս. Ժերմէնի խաղաղութիւն: Բայց աս անգամ ալ խաղաղութիւնք հաստատուն ու տեւական չեղաւ: Նորազանգք անոր գաշանց պայմանները չպահելէն զատ, սկսան նորէն պատրաստութիւն տեսնել, նստեր զինել եւ Անգղիայի Եղիտարեթ թագուհին ու Գերմանիայի բողոքոջայ հետ բանակցիլ. որոնց պատճառաւ իրենց դէմ երեք խիստ հրովարտակներ ելան (Սեպտ.): Գոնտէ ու Գոլիննի Անգղիայէն դտած դրամական օգնութեամբ եւ եկեղեցիներէն յափշտակուած հարստութիւններով մեծ բանակ մը հանեցին, եւ նոյն տարին երրորդ պատերազմը սկսան, որուն ատենը երկու կողմանէ ալ սաստիկ շարիքներ ու սպանութիւններ ըրին. Ժառնադի քով արուած ճակատին մէջ (1569, Մարտ 13), թէպէտ նորազանգներուն Լուզովիկոս Գոնտէ զօրագլուխը՝ խոկրան ուղղափառներուն կը յաղթէր, որոնք

Գիւրէն սպարապետին Տրամանատարութեան տակ էին, բայց ետքը գերի ինկաւ ու մարդասպանի ձեռք տպանուեցաւ եւ բուն յաղթութիւնը թագաւորականաց մնաց: Ասոր վրայ Նաւարրայի մեռնող թագաւորին (107) Հենրիկոս որդին, որն որ իր մօրը հետ կալուինականութեան զարձած էր, Գոնտէին տեղ Հիւկրնոններուն զլուխ ու Տրամանատար անուանեցաւ, բայց բուն զլուխն իրօք Գոլիննէի էր. իրենց հետ մէկտեղ էր Գոնտէին որդին ալ: Ասոնք Գերմանիայի բողոքողներէն 11,000 ձիաւոր օգնական բնդունելով, զօրացան եւ շարաշար անագորունութիւններ գործեցին. միայն Օրթէզի մէջ 3000 ուղղափառ մեռցուցին, ոչ սեռի եւ ոչ հասակի խնայելով: Թագաւորին եղբայրը Հենրիկոս Անժուի գուքոր Մոնդանգուրի քով իրենց դէմ ճակատ տուաւ ու յաղթեց (1569, Հոկտ. 3): Նոյն ճակատին մէջ Գոլիննէի վերաւորեցաւ: Երկրորդ տարին՝ երբ որ նորազանդք Փարիզի վրայ կը քալէին, կատարինէ՛՝ ամենուն թողութիւն խոստանալով եւ Տրաման տալով որ ամէն մէկ դաւառին երկ'երկու քաղաքին մէջ կրօնի կատարեալ ազատութիւն ունենան, միանգամայն ապահովութեան համար ձեռուրնին երկու տարի չորս ամուր քաղաք թողուի, հետեւին Ս. Ժերմէնի խաղաղութիւնն բրաւ (1570, Օգոստ. 8): Ասանկով վերջացաւ աս երրորդ պատերազմն ալ, որուն մէջ սկսած էր անուն ստանալ կիզի Փրանկիսկոս մեռնող դքսին (107) Հենրիկոս որդին:

109. Բարթողիմէոսի գիշեր: Նոյն ժամանակէն կարօլոս Թ. սկսաւ ետեւէ ըլլալ որ զԳոլիննէի եւ բողոքողաց ուրիշ մեծերը շահի: Ծովապետը վերջապէս արքունիք եկաւ (1571, Սեպտ.) եւ թագաւորին վրայ մեծ ազդեցութիւն ստանալով, կը ջանար արքայամօր իշխանութիւնը նուազեցընել: Իր խորհրդով թագաւորն իր Մարգարիտա քոյրը Նաւարրայի Հենրիկոս թագաւորին հետ կարգեց (1572, Օգոստ. 18): Թագաւորին մայրն ու եղբայրը՝ Անժուի Հենրիկոս գու-

քոր շատ Զանացին որ զինքը Գոլինեիէն ու կալուինա-
կաններէն հեռացրնեն. եւ տեսնելով որ օգուտ մը չը-
նէր, իրենց մէջ որոշեցին որ ծովապետը մարդասպանի
ձեռքով մեռցրնել տան: Փորձն եղաւ, Գոլինեի վիրաւ-
որեցաւ (Օգոստ. 22), բայց վերքը մահացու չէր. իսկ
կալուինականք եւ Պուրպոնեան իշխանք սաստիկ բար-
կացան ու վրէժխնդրութիւն կ'ուզէին, զորն որ թա-
ղաւորը խոստացաւ, եւ բոլոր արքունեաց ու նոյն իսկ
մօրը հետ Գոլինեիին այցելութեան գնաց: Երկրորդ
առտու թագաւորին մայրն իր մտերիմներուն հետ խոր-
հրդակցելէն եւ Հիւկրնոները զուգելու միջոց մ'որո-
շելէն ետեւ, սկսաւ Անժուի դքսին հետ ետեւէ իյնալ
թագաւորն ալ համոզելու: Աւերջապէս շատ Զանալէն
ետեւ՝ իրենց բաղձանքին հասան եւ սպանութեան ծրա-
դիր մը շինեցին, որն որ յառաջ բերաւ Փարիզի արեան
հարսանիքը կամ Բարթողիմէոսի գիշերը: Այս գիշերէն
ետքը (Օգոստ. 24) թնդանօթի մը որոտումը՝ կոտորա-
ծին սկսելուն նշանը տուաւ: Գոլինեի ու Պուրպոնեանց
մարդիկներէն 200ի շափ ազնուականք սպանուեցան.
Նաւարրայի Հենրիկոս թագաւորն ու Գոնտեի իշխանը
հազիւ կրցան ուղղափառութեան դառնալով՝ մահու-
նէ ազատիլ: Ժողովուրդը՝ թէ Հիւկրնոներուն գէմ ու-
նեցած ատելութենէն եւ թէ առանձնական սխալա-
լութենէն ու բնչասիրութենէն գրգռուած, շատ մարդ-
մեռցուց: Ասով կալուինականներէն զատ, բազմաթիւ
ուղղափառք ալ սպանուեցան. ասոր հակառակ շատ
կալուինականք, ըստ մասին փախչելով եւ ըստ մա-
սին ուղղափառաց քով ապաւէն գտնելով, մահուրնէ
ազատեցան: Հազիւ չորս օրէն թագաւորը մահուան
պատիժ սպառնալով՝ զազրեցուց աս զարհուրելի կո-
տորածը, որուն նմանը՝ արքունեաց զաղա հրամանաւ
զաւառներուն մէջն ալ շատ տեղ պատահած էր: Աս
անագորոյն գործողութիւնը՝ որով 5—10,000 հոգւոյ
չափ մեռաւ, (բողոքող մատենագիրներէն ամանք սաս-
տիկ չափազանցութեամբ՝ մինչեւ 100,000 հոգւոյ կը

Հանեն.) եւ որն որ ամենեւին կերպով մը շիկրնար արգարանալ, բողոքողաց հասարակօրէն կարճեցընել ուզածին պէս, կրօնէ յառաջ եկած բան մը չէր. որովհետեւ նոյնին սկզբնապատճառ բլրող արքայամօր նպատակը՝ միայն իր իշխանութիւնը հաստատուն պահելն ու Հիւկրնոններուն գլխաւորներուն դէմ ունեցած ատելութիւնն էր:

110. Չորրորդ ու հինգերորդ կրօնական պատերազմ: Ռոշէլի ու Պոլիեպի խաղաղութեան դաշինքները: Հենրիկոս Գ.: Ինչպէս որ է նէ, ասիկայ եւ թագաւորականաց՝ չորս ապաւինի բերդերը (108) եւ անուառ ուղելը, առիթ տուաւ չորրորդ պատերազմին (1572), որուն մէջ միակ յիշատակելու դէպքն է Անժուի Հենրիկոս դքսին՝ Ռոշէլ քաղաքը պաշարելը: Պաշարման ժամանակ նոյն Անժուի դուքսը Ահհայ թագաւոր ընտրուելով (132), աճապարեց պատերազմին վերջ տուաւ Ռոշէլի խաղաղութեամբ (1573, Յուլ. 1), որով կալուինականք կատարեալ թողութիւն եւ մեծ աղատութիւն ստացան: Բայց անով չխաղաղցան, հապա անանկ միջոցներ բանեցուցին ու պատրաստութիւններ տեսան, որ իբրեւ թէ տէրութեան մէջ՝ զատ տէրութիւն մը ձեւացուցած էին: Կուղէին նաեւ բաներն այնպէս յարմարցընել, որ թագաւորութեան բուն ժառանգն եղող Անժուի Հենրիկոս դքսին տեղ, անոր պզտիկ եղբայրը՝ Ալանտոնի Փրանկիսկոս դուքսը տէրութեան գլուխը դնեն: Նոյն իսկ Գոնտէի երիտասարդ իշխանը, որն որ Նաւարրայի Հենրիկոս թագաւորին հետ ուղղափառութեան դարձած էր, փախչելով Սդրազպուրի գնաց, եւ հոն դարձեալ իբրեւ կալուինականաց գլուխ՝ սկսաւ գործել. իր աղանդակիցներն ալ Գաղղիայի մէջ զէնք առին, որմէ հինգերորդ պատերազմը սկսաւ: Նոյն միջոցին Կարոլոս Թ. մեռնելով (1574, Մայ. 30), իր եղբայրը Հենրիկոս (Գ.) Անժուի դուքսը, որն որ՝ ինչպէս ըսինք՝ Ահհաստանի թագաւոր եղած էր, եւ կանչուեցաւ ու անոր յաջորդեց (Սեպտ.):

Ալանտանի Փրանկիսկոս դուքսն ու Նաւարրայի թագաւորը, թէպէտ սաստիկ հսկողութեան տակ էին, բայց այնպէսով ալ կրցան ետեւէ ետեւ փախչիլ ու կալուի-նականաց զլուին անցան, որոնք Անգղիայի ստակով Գերմանիայի մէջ զօրք ժողված ըլլալով, թագաւորականներէն աւելի զօրաւոր էին: Ասով թէ պատերազմի մէջ յաջողութիւնը միշտ իրենց կողմն էր, թէ վերջապէս Պոլիեոյի խաղաղութիւնն ըլլալու ատեն (1576, Մայ. 6) կրօնի կատարեալ ազատութիւն ձեռք բերին բոլոր տէրութեան մէջ՝ բաց ի Փարիզէն: Ան ատենէն կալուինականք սկսան Նորոգեալք՝ կոչուիլ: Իսկ Փրանկիսկոս Ալանտանի դուքսը՝ Անժուի, Պերիի ու Դուբէնի զքսութիւններն ընդունեցաւ, եւ անկէ ետեւ Անժուի դուքս կոչուեցաւ:

111. Աիդեանց ու Աշտասանից նիդակակցութիւն: Անցերորդ, եօթներորդ եւ ութերորդ պատերազմ: Ինչպէս որ արդէն տեսանք, առ ներքին պատերազմները՝ օտար տէրութեանց զօրձակցութեան պատճառ տուած էին. որովհետեւ թէ Անգղիայի Եղիսարեթ թագուհին եւ թէ Գերմանիայի քանի մ'իշխանք Հիւկեններուն օգնութիւն կ'ընէին: Բայց ընդհանուր քաղաքականութեան համար նոյն շիտթութիւններն ան ատեն աւելի ծանրակշիռ եղան երբ որ հինգերորդ պատերազմին վերջերքը, Աիդի իշխաններն եւ ուրիշ քանի մ'երեւելի մարդիկ մէջերնին նիդակակցութիւն մը կազմեցին (1576), որուն նպատակ կը դնէին՝ ուղղափառ կրօնը պաշտպանել ու բողոքականութիւնը Գաղղիայի մէջէն ջնջել. բայց բուն վախճաննին էր՝ Աիդերը զահ հանել: Եւ ինչպէս Հիւկեանք իրենց մէջ դաշնակցիլը բաւական շտեպելով՝ օտար տէրութեանց հետ ալ դաշնաւորութեան մէջ մտած էին. ասանկ ալ Աիդեանց նիդակակցութիւնը՝ Սպանիայի Փիլիպպոս Բ. թագաւորին հետ դաշնաւորեցաւ, իրարու փոխադարձ օգնութիւն ընելու պայմանաւ: Ասով տէրութեան

¹ Reformés.

մէջ կրկին զատ տերութիւնք ձեւացան. բայց վերջինն անով կերպ մը օրինաւորութիւն ստացաւ, որ Հենրիկոս Գ. թագաւորն իր իշխանութիւնը պահելու համար անոր զլուին անցաւ, իր Փրանկիսկոս եղբայրն ալ կալուինականաց կողմը թող տալով՝ իրեն հետ միացաւ: Աս Արիքեանց նիզակակցութիւնը բուն իր գործունեութիւնն ան ատեն սկսաւ, երբ որ վեցերորդ (1577) ու եօթներորդ (1580) պատերազմներն բլալէն ետեւ, Անժուի Փրանկիսկոս դքսին մեռնելովը (1584, Յունիս 10), յայտնի եղաւ թէ Հենրիկոս Գ. ալ որ մեռնի, Ալալուսիցի յեղը բոլորովին սպառելով, անոր տեղը Նաւարրայի Հենրիկոս թագաւորը պիտի անցնի, որն որ՝ ինչպէս յայտնի է՝ կալուինական էր եւ անոնց դաշնակցութեան զլուխը: Անոր համար Արիքեանց նիզակակցութիւնը նոյն ատեն նորոգուեցաւ, կամ մանաւանդ Փարիզի մէջ Ալեշտասանից բոււած նոր նիզակակցութիւնը կազմուեցաւ, որն որ մայրաքաղաքը 16 թաղի բաժնելով, նոյնչափ զլխաւորաց տակ դրաւ եւ օրուն վախճանն էր թագաւորը վար առնուլ: Նիզակակիցք կրցան Հիւկրնոնեբուն դէմ Նրմարի վճիռը հանել տալ (1585, Յուլ. 7), որով բոլոր առաջին շնորհումներն ետ կ'առնուէին: Ասոր ետեւէն եկաւ ութերորդ պատերազմը (1585), որն որ հասարակօրէն Երից Հենրիկոսաց պատերազմ կ'անուանի. վասն զի անոր մէջ մասնունեցող երեք զլխաւոր անձանց (թագաւորին, Նաւարրայի թագաւորին ու Արիքի դքսին) անունն ալ Հենրիկոս էր: Նոյն պատերազմը տասը տարի տեւեց. որն որ ամենեւին զարմանալու բան չէ, որովհետեւ երկու կուսակցութեանց զլուիններն ալ, այս ինքն՝ թէ Նաւարրայի թագաւորը եւ թէ Արիքի դքսոր անով կ'ուզէին Գաղղիայի արքունական թագը ձեռք անցընել:

112. Արիքի դքսին ու Հենրիկոս Գ.ին սպանուիլը: Հենրիկոս Գ.: Փարիզի մէջ բաներն ան ատիճանի հասան, որ թագաւորը ստիպուեցաւ ձգել վախճել (1588, Մայ. 12): Բայց Արիքի դքսոր չհա-

ճարձակեցաւ կամ չկրցաւ դատարկացեալ գահուն վրայ ելլել: Հենրիկոս Գ. թէպէտ պարագաներէն նեղ ճանելով՝ նոյն դքսին հետ հաշտուած եւ անոր ամէն պահանջումներուն զիջած էր, բայց քիչ մ'ետորք զինքը ճարգասպանի ձեռքով սպաննել տուաւ (Գեկա. 23). նոյնպէս անոր ազգականներէն շատերը կամ սպանուեցան կամ բանտարկուեցան: Սակայն ասով խաղաղութիւն չըլլալէն զատ, շփոթութիւնք աւելի մեծցան. շատ քաղաքներ ոտք ելան, ապստամբաց հետ միացան: Ան ատեն թագաւորին ծարր հասնելով, Նաւարրայի թագաւորին հետ միացաւ (1589, Ապր. 3). եւ երկուքը մէկտեղ 30,000 զօրքով մայրաքաղաքը պաշարելով, վերջին աստիճանի նեղ խոթեցին: Բայց ճարգասպան մը նոյն տկար թագաւորին կենացը վերջ տալով (Օգոստ. 1), Նաւարրայի Հենրիկոս թագաւորն անոր օրինաւոր յաջորդը մնաց: Սակայն իր կարուխնական ըլլալը՝ թող չտուաւ որ հանդարտութեամբ իր գահն անցնի: Աւստի եւ Հենրիկոս Գ. Գաղղիայի ու Նաւարրայի թագաւոր անուամբ իր բանակէն հաւատարմութեան երդում առնելէն ետեւ (1589, Օգոստ. 4), հարկ եղաւ որ գահն անցնելու համար զբեթէ հինգ տարի պատերազմի: Տերութեան շատ կողմերն ու անձինն Փարիզ սաստիկ դէմ կը դնէին, զի նաւարրար Սպանիայի Փիլիպպոս Բ. թագաւորին իրենց ձեռք բռնելովը, որն որ աչքը Գաղղիայի թագին վրայ դրած էր, եւ Ստորին Նահանգներէն զԱզէքսանդր Փառնելէ զօրքով իրենց օգնութեան խաւրած (101): Հենրիկոս Գ. ետեւէ ետեւ շատ քաղաքներ առնելէն եւ Փարիզ մէկ քանի անգամ պաշարելէն ետեւ, երբ որ ուղղափառ կրօնն ընդունեցաւ (1593, Յուլ. 25) ու Շարդրի մէջ պահուեցաւ (1594, Փետր. 27), ալ անկէ ետեւ մայրաքաղաքը դռներն անոր առջեւը բացաւ (Մարտ 22): Սակայն թէպէտ իր ուղղափառութեան դառնալը՝ քանի մ'անգամ ուղղափառ ու կարուխնական ստուածարանից վիճարանութեան ներկայ դանուելէն

եաւ, ուստի եւ դո՛նէ ըստ երեւութի՛ն՝ համարմամբ եղած էր, ի վերայ այսր ամենայնի քահանայապետն ու Փիլիպպոս Բ. շէին ուղեր զինքր ճանշնալ, որովհետեւ առաջինը նոյն դարձին որսանց ըլլալուն վրայ կը տարակուսէր: Հաղի ՏՕտս կարգինալին պէս նշանաւոր դեպքանազէտ մը կրցաւ քահանայապետին հետ եղած բանակցութիւնները յաջողութեամբ զլուխ հանել եւ զՀենրիկոս ընդունել տալ:

113. Գաղղիայի ներքին վիճակն ու արտաքին քաղաքականութիւնը: Սպանիայի դէմ՝ պատերազմ: Թեպէտ Գաղղիա առ կերպով անիշխանութեան չարիքներէն ազատեցաւ. բայց անով վերջովնաց ազդիւրը դոցուած չէր: Երկու հին կողմնակցութիւններէն մէկն ալ մէջտեղէն վերցած չէր. եւ հոս ալ ստուգուեցաւ ան ծանուցեալ ճշմարտութիւնը, թէ Եսաւաջուան բարեկամներէն աւելի սխերիմ թշնամի չկայ. որովհետեւ կալուինականները Հենրիկոս Գ.ին ուղղափառութեան դառնալուն վրայ նեղանալով, իրեն սաստիկ թշնամի եղած էին եւ ամէն կերպով իրեն դէմ կ'ելլէին, թէ եւ ինք՝ Նանդի հռչակաւոր հրովարտակով իրենց կատարեալ քաղաքային իրաւունք ու բոլորովին կրօնի ազատութիւն տուած էր (1598, Ապր. 13): Անոնք միշտ զինեալ կողմնակցութիւն մը մնացած էին. անոր համար ալ երկրին խաղաղութիւնը դժուարաւ կրնար հաստատուն ըլլալ եւ ներքին կարգաւորութիւնները հիմնովին հաստատուիլ, քանի որ կառավարութիւնը պէտք էր վախնալ այնպիսի զիմադրութենէ, որուն փառասէր զլուխները կրնային իրենց ձեռքն եզոզ միջոցները շարաշար գործածել: Իսկ արտաքին քաղաքականութիւնը հաստատուն կերպարանք մ'առաւ. եւ Գաղղիային՝ Եւրոպայի տերութեանց վրայ ունեցած ազդեցութիւնը, որն որ խել մը ժամանակէ վեր դադրած էր, նոյն ատեն նորէն սկսաւ: Սպանիային միշտ աճող զօրութեան դէմ Գաղղիայի մէջ եղած նախանձն ու անկից յառաջ եկած ատելութիւնը, ներքին

չփոթութեանց աստէն Փիլիպպոս Բ.ին բռնած ընթացքովն աւելի եւս խորունկ արմատ ձգած էին: Անոր համար Հենրիկոս Գ. Գաղղիայի մէջ առհասարակ ընդունուելէն ետքն ալ Սպանիայի դէմ պատերազմք քանի մը տարի յառաջ դնաց, մանաւանդ թէ նոյն աստէն կերպապէս պատերազմ քացուեցաւ (101), եւ երեք տարի ետքը Ալբրէնի խաղաղութեամբ վերջացաւ (102):

114. Եւրոպական հասարակապետութեան կամ տէրութեանց ժողովոյ մը զազափար: Հենրիկոս Գ.ին մահը: Բայց Սիւլի պաշտօնէին տեսչութեամբ Գաղղիայի զօրութիւնը միշտ աւելի աճելով, նոր խորհուրդներ գրգռուեցան, որոնց նպատակն էր չէ թէ միայն նոյն տէրութեան, հապա նաեւ բոլոր Եւրոպայի կերպարանքը փոխել: Վուզէին Եւրոպական հասարակապետութիւն կամ տէրութեանց ժողով մը դնել, որուն անդամակից տէրութիւնները, թէպէտ իրարմէ տարբեր սահմանադրութիւն, բայց իրարու հաւասար զօրութիւն եւ իշխանութիւն պիտ'որ ունենային. իսկ իրենց մէջ ելած խնդիրներն ու երկպառակութիւնները 60 հոգւով ձերակուտի մ'որոշման տակ պիտ'որ իյնային: Նոյն տէրութիւնք պիտ'որ բլլային հինգ ժառանգական միապետութիւնք, այս ինքն Գաղղիա, Սպանիա, Մեծն Բրիտանիա, Հուեստ ու Լոմպարտիա (Սաւոյա եւ Միլան). վեց ընտրական միապետութիւնք, այս ինքն՝ Հոմ Նեապոլայ հետ, Գերմանիա, Հունգարիա, Բոհեմիա, Լեհաստան եւ Գանիա. չորս ալ հասարակապետութիւնք, այսինքն՝ Բեզգիա, Հելուեստիա, Ալենեստիկ եւ Իտալիայի պզտիկ տէրութիւնները: Վերեւայ որ աս խորհուրդը երկայն աստէն մտածուած եւ Եղիսարեթ թագուհւոյն հետ անոր վրայ միաբանուած էր: Հենրիկոս Գ.ին պէս յեղափոխութեան մէջ մեծցող եւ նոյնը յաջողութեամբ դլուխ տանող վեհապետ մը՝ ետքէն ալ յեղափոխական խորհուրդներ գիւրաւ կրնար ունենալ եւ նոյները գլուխ հանելու յարմար մարդիկ գտնել: Բայց թէ ար-

զեօք աս խորհուրդը՝ միայն Սպանիայի և Եւտարիայի դէմ եղած ատելութենէն ծագեցաւ, չէ նէ՛ խորատես մտքէ մ'ալ, որն որ յառաջուց կը գուշակէր թէ պետք է որ մեծ շփոթութիւն մ'կլլէ, ինչպէս ալ Երեսնամեայ պատերազմին ատենն ելաւ, և կ'ուզէր յառաջօրնէ անկից օգուտ հանել, որոշելը խիստ դժուար բան է: Սակայն ինչպէս որ բլայ նէ, Հապուպուրիի ցեղը խոնարհեցրնելը՝ նոյն խորհրդոյն մերձաւոր նպատակն էր. իսկ Եւրոպական հասարակապետութիւնը քուածը՝ իբրև կեղծիք մը յառաջ կը քշուէր: Գործադրութեան համար ամէն բան պատրաստ էր. Անգղիայի, Իտալիայի, Վերմանիայի ու Ստորին նահանգաց մէջ պատրաստութիւն կը տեսնուէր. մէյ մ'ալ Ռուսալեազ անունով մէկը ղէնրիկոս Գ. դանակով մեռցրնելով (1610, Մայ. 14), ամենայն ինչ տակնուվրայ եղաւ:

115. Հենրիկոս Գ.ին մահուան ազդեցութիւնը: Ռիշլիէօ: Տարակոյս չկայ որ Հենրիկոսի մահը՝ Գաղղիայի մեծ կորուստ պատճառեց. բայց թէ արզեօք Եւրոպայի ընդհանրապէս օգտակար եղաւ, թէ վնասակար, դժուարաւ կրնայ որոշուիլ: Ստոյգ է որ իր մահուամբը Եւրոպա դոնէ նոյն ատեն մեծ պատերազմէ մ'ազատեցաւ, որուն կատարածն այնչափ աւելի տարակուսական էր, որչափ որ նոյնով դիտուած նպատակը խիստ տարածեալ ու ընդարձակ էր: Իսկ Գաղղիայի կորուստն անով աւելի մեծ եղաւ, որ Հենրիկոսի մահօրնէն ետեւ, իր որդին Լուդովիկոս ԺԳ. հազիւ ինը տարւան բլլալով, Մարիամ Մեաիչի թագուհին խնամապետ դրուեցաւ, և Սիւլի պաշտօնեան ալ կառավարութենէն հեռացուցին արքունեաց կողմնակցութիւնները, որոնք ներքին պատերազմները նորէն բորբոքեցին (1621): Ասով Մարիամ Մեաիչիին խնամապետութեան ատենը նոյն ներքին շփոթութեանց ու կռիւներուն պատճառաւ, Գաղղիա բուլոր իր արտարին ազդեցութիւնը կորսրնցրնելէն զատ,

ներքուստ ալ խիստ տկարացաւ: Իր բախառիւն եղաւ որ ուրիշ տէրութիւնք չկրցան կամ չուզեցին նոյն ժամանակն իրենց օգտին դորձածել. եւ քիչ մը վերջը Ռիչլիէօ հաստատուն ձեռքով կառավարութեան տանձն տանելով (1624ին վերջը), Գաղղիա նորէն սկսաւ եւրոպայի տէրութեանց դաւաճարութեան վրայ խիստ մեծ ազդեցութիւն ունենալ: — Արտաքին քաղաքականութեան նկատմամբ, ինամուսկա թագուհին խկզրան շէնթիկոս Գ.ին բնթացքը յառաջ վարեցրայց քիչ մը ետքը տէրութեան բոլոր զօրութիւնն իր ներքին հակառակորդացը դէմ դորձածել կարենալու համար, չէ թէ միայն Հապսպուրկի տունը խնամարհեցրնելու խորհուրդը մեկդի ձգեց, հապա սկսաւ ետեւէ իյնալ նոյն տան հետ ինամուսկամբ կապուելու: Իրօք ալ ամէն հակառակութիւնները յաղթելով, կրցաւ զԼուդովիկոս ԺԳ. Սպանիայի Փիլիպպոս Գ.ին Աննա (Աւստրիական) աղջկան հետ, իսկ Լուդովիկոսին Եղեաբեթ քոյրը՝ նոյն Փիլիպպոս Գ.ին համանուն թագածառանդին (Փիլիպպոս Գ.ին) հետ կարգել տալ (1615, նոյեմ. 22):

Գ.

Անգղիայի գլխաւոր փոփոխութիւնները:

116. Եղիսաբեթ թագուհւոյն կրօնական քաղաքականութիւնը: Անգղիական եկեղեցի եւ Պարզակրօնք: Հարածում: Աս ժամանակի միջոցին մէջ Անգղիա իբրեւ տէրութիւն՝ իր ապագայ կերպարանքին մէջ մտաւ, եւ առ կերպարանքն իրեն տուողն եղաւ Եղիսաբեթ թագուհին, շէնթիկոս Ա.ին ու Աննա Պոլեմին աղջիկը (55), որն որ առանց դժուարութեան Մարիամ թագուհւոյն յաջորդած էր (1558, նոյեմ. 17): Ինք թէպէտ բողոքականութեան մէջ կրթուած էր, բայց ետքը ուղղափառութեան դարձած ու Մարիամ թագուհւոյն մահուան անկողնոյն առջևէր եր-

զամար խոստացած էր, որ նոյն ուղղափառ կրօնին մէջ հաստատուն մնայ եւ պաշտպանէ: Բայց որովհետեւ իրմէ զատ՝ Սկովտիայի Եսկոր Ե-ին աղջիկը Մարիամ Սգուարդ կար, որն որ Հենրիկոս Ը-ին երիցագոյն Մարգարիտա քրոջը թոռն ըլլալով, իրմէ աւելի իրաւունք ունէր Անգղիայի թագին, եւ նոյն իրաւունքը կրնար ալ արտաքին օգնութեամբ ձեռք բերելու ետեւէ իյնալ, վասն զի Գաղղիայի Հենրիկոս Բ. թագաւորին ժառանգին (Փրանկիսկոս Բ-ին) հետ կարգուած էր, անոր համար Եզիտաբեթ, որպէս զի իր աստիճանին մէջ հաստատուն մնայ, սկսաւ՝ երգմանը դէմ՝ բողոքականութեան կողմը բռնել. մանաւանդ որ քահանայապետն ալ իր սպորինաւոր ծննդեան համար՝ զինքն ընդունել չէր ուզեր: Արդ Եզիտաբեթ իր գլխաւոր խորհրդականը՝ Գուլիելմոս Սեստիլին խորհրդեան համեմատ՝ գահ ելածին պէս, հրաման հանեց որ եկեղեցականք առժամեւ բան մը չքարոզեն, իսկ եկեղեցական պաշտամանց կերպը պահեն՝ մինչեւ որ խորհրդանոցն որոշուի մ'ընէ: Ի վերայ այս ամենայնի թագուհի պահուելու ատեն՝ սովորական երգումն ըրաւ, որով ինք զինքը կը պարտաւորէր ուղղափառ կրօնը պաշտպանելու (1559, Յունու. 15): Սեստիլին յառաջագոյն ատեւած պատրաստութիւններուն համեմատ՝ խորհրդանոցն որոշեց որ Մարիամ թագուհոյն ատենը՝ ի նպատակ ուղղափառութեան տրուած օրէնքները բոլոր ջնջուին, եւ Հենրիկոս Ը-ին ատենը՝ քահանայապետին գլխաւորութեան դէմ, իսկ Եզուարդ Զ-ին ժամանակը՝ նորադանդութեան կողմը տրուած օրէնքները նորէն հաստատուին: Թագուհոյն եկեղեցական գլխաւորութիւնը երգմամբ ընդունիլը՝ չէ թէ միայն պաշտօնի հասնելու, հապա նաեւ քաղաքացւոյ իրաւունք ունենալու պայման դրուեցաւ. նոյն երգումը շնորհներուն եւ ընդհանրապէս ուղղափառութեան պաշտամունք կատարողներուն՝ մեծամեծ պատիժներ եւ ըստ մեծի մասին մահուան պատիժ սահմանեցաւ: Ասանկով քանի մը

տարւան մէջ կանգնեցաւ Անգղիական (Եպիսկոպոսական կամ Բարձր) եկեղեցին. իսկ բուն բողոքոզք (կալուինականք, Երիցականք), որոնք նոյն Անգղիական եկեղեցւոյն մէջ պահուած ուղղափառ վարդապետութիւններն ու ծէսերը բոլորովին ջնջել ու մարտել կուզէին եւ անոր համար ալ Պարզակիւրօն կամ Մարտակիւրօն՝ կը կոչուէին, առաջիններուն առջևը հերեպիկոս կամ հերձուածող կը սեպուէին: — Անկէ ետեւ ուղղափառաց վիճակը խիստ թշուառ էր. իրենց դէմ ամէն կերպ հալածանք, բանութիւններ ու անիրաւութիւններ կը բանեցընէին: Անթիւ անհամար մարդիկ իրենց կրօնին համար ինչքերնին, պատիւնին եւ կեանքերնին իսկ կորսընցուցին, մանաւանդ Բարձր յանձնարարական ատեան ըսուած դատատանարանը դրուելէն ետեւ (1571), որն որ Սպանիական հետադադարութեան ատեանէն՝ անուամբ եւեթ կը տարբերէր: Բայց նոյն հալածանքները՝ միայն ուղղափառաց դէմ չէին, հապա Պարզակիւրօնից ալ: Թեպէտ առ վերջիններուն դէմ ան աստիճանի խստութեամբ չէին վարուեր՝ ինչպէս ուղղափառաց դէմ, ի վերայ այսր ամենայնի Եղիսաբեթ՝ որն որ քաղաքական նպատակներով Եւրոպայից ցամաք երկրին գրեթէ ամէն կողմը բողոքողներն ու կալուինականները կը պաշտպանէր եւ անոնց օգնութիւն կ'ընէր, իր երկրին մէջ զանոնք կը հալածէր:

117. Սկովտիա եւ Մարիամ Սգուարդ: Բայց Եղիսաբեթ թագուհւոյն բաւական չէր իր իշխանութեան մէջ հաստատուիլը. կուզէր նաեւ զՄարիամ Սգուարդ մէջտեղաց վերցընել, որպէս զի թէ իր տէրութեան համար անկից վախնալիք շունենայ եւ թէ անոր սեպհական տէրութիւնը ձեռք անցընէ: — Արդէն Հենրիկոս Ը. նոյն Մարիամ Սգուարդին հօրը՝ Յակոբ Ե-ին հետ պատերազմ ըրած ու յաղթած էր (1542, Օգոստ. — Նոյեմբ.), որովհետեւ Յակոբ՝ իր խրատին համեմատ՝ Հռոմայ եկեղեցիէն չէր ուզեր բա-

1 Paritains.

ժնուիլ: Գարձեալ նոյն թագաւորին մեռնելէն ետեւ (1542, Գեկտ.), Մարիամ Աղուարդին անշափահասութեան ատեն գրուած խնամապետին դէմ ալ պատերազմ բացած էր (1544), վասն զի Սկովտիացիք չէին ուզած ըստ իր բաղձանաց՝ նոյն օրիորդն իր Աղուարդ (Զ.) օրդւոյն հետ (57) նշանել: Աս պատերազմը Գաղղիացի միջնորդութեամբ զազրելէն ետեւ (1546), Անդղիացիք՝ Սկովտիացի մէջ սոյք ելլող բողոքոյներուն օգնութիւն ընելէն զստ, նոյն երկիրը նորէն յարձակում մ'ըրած էին, մեծերը ստիպելու համար որ Վարիամ՝ Աղուարդաց հետ նշանեն. բայց տեղացիք չուզելով, օրիորդը Գաղղիա փախուցած էին (1548), ուր Փրանկիսկոս (Բ.) թագաժառանգ իշխանին հետ նշանուելով եւ հսն կրթուելով, տասը տարի վերջը հետը կարգուեցաւ (1558, Ապր.): Անդղիացիք իրենց վերոյիշեալ վերջին յարձակումէն երկու տարի ետքը Սկովտիացի հետ խաղաղութիւն ըրած էին (1550). բայց միշտ երբեմն ծածուկ ու երբեմն յայտնի կերպով օգնութիւն կ'ընէին նոյն երկրին բողոքողաց, որոնք իրենց ազանդն երթալով աւելի կը տարածէին, մեծամեծ շիտթութիւններ կը հանէին, եկեղեցիներն ու վանքերը կ'ապականէին ու կը կործանէին: Աւերջապէս աս քաղաքական շիտթութիւններն ան ստափճանի սաստկացան, մինչեւ ապստամբք յանդգնեցան Մարիամ Աղուարդին մայրը (Աիդի Փրանկիսկոս զբոյն Մարիամ քոյրը), որն որ քանի մը տարիէ (1554էն) վեր խնամապետութիւն կ'ընէր, եւ անոր հաւատարիմ մնացող մեծամեծները վար առնուլ եւ զիրենց հոյրենեաց թշնամի հրատարակել (1559, Հոկտ. 22): Եւ որովհետեւ խնամապետուհին գաղղիացի զօրաց օգնութեամբ՝ ապստամբներն Էտինպուրկ մայրաքաղաքէն մերժած էր, անոր համար Էղիսաբեթ անոնց հետ դաշնագրութիւն ըրաւ (1560, Փետր. 27), իրբեւ թէ Սկովտիացի հին իրաւունքները պաշտպանելու եւ Գաղղիացիները հոնկից մերժելու համար: Քիչ մը վերջը

երբ որ խնամապետուհին մեռաւ (Յունիս 11), Մարիամ Սղուարդ՝ որն որ գրեթէ տարիէ մը վեր Գաղղիայի թագուհի էր, լիազօր երեւոփոխաններու ձեռքով ապրատամքներուն հետ իրաւախոհութեան դաշինք գրաւ (1560, Յուլ. 6), որով ինք գրեթէ միայն անուամբ թագուհի կը մնար, եւ բոլոր իշխանութիւնը նոյն ապրատամքաց ձեռքը կ'անցնէր: Նոյնպէս Եղիսաբեթին հետ ալ հաշտութեան դաշինք գրաւ, որուն մէջ թէպէտ իր երեւոփոխանները յանձն առած էին որ թէ Մարիամ Սղուարդ եւ թէ իր ամուսինն ընդ միշտ հրատարին Ենդղիայի թագաւորութեան տիրազսէն ու զինանշանէն. բայց ինք աս պայմանը յանձն չառաւ, եւ մինչեւ իր ամուսնոյն մահը՝ Ենդղիայի զինանշանը կը գործածէր: Ապտամքք իրենք իրենցսէ խորհրդանոց մը ժողովեցին, նոյնին ձեռքովն ուղղափառութիւնը ջնջեցին ու անոր պաշտամունքը կատարողներուն վրայ սատակ պատիժներ դնելով, բողոքական (կալուինական) աղանդը հաստատեցին, որն որ հոն երիցական եկեղեցւոյ անուն առաւ (1561):

118. Մարիամ Սղուարդ Սկովտիայի մէջ: Տառնչի եւ Պոթուէլ: Նոյն միջոցին (1560, Գեկտ.) Մարիամ Սղուարդ իր 18 տարեան հասակին մէջ ամուսինը (Գաղղիայի Փրանկիսկոս Բ. թագաւորը) կորսնցուցած ըլլալով (106), մտքը գրաւ որ Սկովտիա երթայ. եւ իր թշնամիներուն հակառակութիւնները բանի տեղ չդնելով ու զինքը խափանելու համար բանցուցած միջոցներնին յաղթելով, իր հայրենիքը հասաւ ու ժողովողեան հաւատարիմ մասին ցնծութեան աղաղական Էտինպուրկ մայրաքաղաքը մտաւ (1561, Օգոստ. 20): Ստոյգ է՝ հոն բողոքական ապտամքներէն ու Ենդղիայիներէն մեծ դժուարութիւններ ու նեղութիւններ կրեց. բայց իր խոհեմ ու շափաւոր վարմունքովը թշնամիներուն գոնէ մէկ մասն իրեն շահեցաւ: Քանի մը տարի վերջը թագուհին իր Տառնչի ազգականին հետ կարգուեցաւ (1565, Յուլ. 29),

որուն թագաւորի տիտղոս ալ տուաւ եւ որմէ Յակոբ անուն որդի մ'ունեցաւ (1566): Նոյն ամուսինն անմիջապէս սկսաւ բիրտ ու անպատշաճ ընթացք մը բռնել եւ զանազան պահանջումներ ընել, որոնց մէկն ան էր որ թագուհին զինքը թագաւոր պահելէ սաց: Երբ որ Մարիամ ասոր չհաւանեցաւ, Տառնլի անոր թշնամիներուն հետ զաշինք գրաւ (1566, Փետր. 20): Ասոր վրայ ասրի մը շանցած՝ Տառնլիին հակառակորդները, որոնց զխաւօրներէն մէկն էր Պոթուէլ կոմսը, դաւաւկցութիւն մ'ըրին զինքը սպաննելու, զորն որ իրզք ալ զլուխ հանեցին, բնակած տան տակն ական բանալով ու զինքն օդը հանելով (1567, Փետր. 9—10ին զիշերը): Թագուհին հրամայեց որ աս բանիս վրայ քննութիւն բլայց. եւ որովհետեւ Պոթուէլին վրայ մեծ կասկած կար, զինքն երգուելոց դատաստանին առջեւը հանեց: Սակայն նոյն տուեանն ըստ մեծի մասին ամբաստանելոյն կողմնակիցներէն կազմուած բլալով, զինքը յանցանքէ ազատ հրատարակեց: Իսկ կոմսը սկսաւ թագուհւոյն հետ կարգուելու ետեւէ իյնալ: Աս նպատակին հասնելու համար ամէն միջոց բանեցուց, մինչեւ 1000 հողւով ճամբան Մարիամոյ վրայ յարձակեցաւ, բռնեց ու բանտարկելոյ պէս կը պահէր (Ապր. 24): Թագուհւոյն ճարը հասնելով, բողբոջ երիցու մը ձեռքով նոյն կոմսին հետ կարգուեցաւ (1567, Մայ. 15): Բայց ան ժամանակէն ետեւ ալ Պոթուէլ զանիկայ գերւոյ պէս կը բռնէր եւ ինք իբրեւ բացարձակ տէր կը վարուէր: Նոյն միջոցին իր դաշնակիցքն եզոզ ապստամբք որոշեցին որ զինքը մէջտեղաց վերցընեն. անոր համար զՏառնլի մեռցուցած բլալը հրատարակելէն ետեւ, սկսան թագուհւոյն հետ բանակցիլ. որուն վախճանն ան եղաւ, որ անիկայ ապստամբաց բանակը զնայ: Իսկ Պոթուէլ տէրութենէն դուրս ելաւ, սկսաւ Նորուեգիայի եզրները ծովահնկութիւն ընել. եւ վերջապէս Պանիայի մէջ ձեռք ինկաւ ու բանախ մէջ ողորմելութեամբ մեռաւ (1576):

119. Մարիամ՝ Սղուարդայ Անդղիա երթալն ու սպանութիւնը: Սակայն Մարիամ Սղուարդ իր բռնաւոր ամուսնոյն ձեռքէն ազատելէն ետեւ, նոր խտտադոյն գերութեան մէջ ինկած էր: Ապստամբք, որոնք Եղիսարեթ թագուհւոյն հետ միշտ միաբան էին, իրեն հետ անարժան կերպով վարուելէն զատ, քիչ մ'ետքը խարէութեամբ ու բռնութեամբ անանկ թղթերու ստորագրել տուին, որոնցմով ի նպաստ իր Յակոբ (2). որդւոյն՝ թագաւորութենէն կը հրատարէր եւ զՄեօրրէ իր խորթ եղբայրը խնամապետ կը դնէր (1567, Յուլ. 24): Երգ խնամապետը շուտ մը ապստամբաց գլուխն անցաւ, եւ անոնց ձեռքովը խորհրդանոցին մէջ թագուհւոյն դէմ ամբաստանութիւն ընել տուաւ, որ ամուսնական հաւատարմութեան դէմ բրած ու էրիկը սպաննել տուած է: Խորհրդանոցն ալ արդէն Մարիամայ թշնամիներէն կազմուած բլլալով, առանց ապացոյց մ'ունենալու՝ վճռեց որ յանցաւոր է եւ զինքը մշանջնեաւոր բանաարկութեան դատապարտեց (1567, Դեկտ.): Եւ թէպէտ թագուհին օգնութիւն գտաւ, իր թշնամեաց ձեռքէն փախաւ (1568, Մայ. 2) եւ իրմէ բռնութեամբ առնուած հրատարումն ետ կանչեց. բայց երբ որ իր հաւատարմաց զօրքը Լէնկոսայի ճակատին մէջ ապստամբաց զօրքէն յաղթուեցաւ (Մայ. 13), նորէն անոնց ձեռքը շիյնալու համար, իր հաւատարիմ խորհրդականներուն խրատին դէմ՝ ձգեց Անդղիա փախաւ. որով իր գլխաւոր թշնամւոյն՝ Եղիսարեթին ձեռքը մասնուեցաւ: Հոն շատ դէմ գնելէն ետեւ՝ յանձն առաւ որ իր վրայ քննութիւն բլլայ. որն որ թէպէտ ուղածնուն պէտ բրին, միանգամայն դատարներն ալ ստատիկ կողմնակալ էին. բայց սակայն չկրցան իրեն դէմ յանցաւորութեան վճիռ տալ, հապա առաջարկեցին որ Սկովտիայի թագէն հրատարի ու խաղաղութեամբ Անդղիա մնայ (Դեկտ. 23): Եւ երբ որ հաստատութեամբ աս բանիս դէմ դրաւ, սկսան հետը յառաջուրնէ աւելի խտտութեամբ վարուիլ: Ե-

զիսարեթ թէպէտ կը բաղձար՝ իր խորհրդականներուն խրատին համեմատ՝ զինքը մէջտեղաց վերցընել, բայց չէր ուզեր որ աշխարհքիս առջեւ իրբեւ քոյրասպան երեւայ. ուստի փորձեց զինքը Սկովտիայի ապստամբաց ձեռքը մտանել, բայց անոնք յանձն չառին: Անկէ ետեւ որովհետեւ զինքն ազատելու համար միշտ փորձեր կ'ըլլային, բերդի մը մէջ փակել տուաւ, ուր նեղութիւնները վերջին աստիճանի սաստկացան եւ արդէն վնասած առողջութիւնն աւելի վտանգեցաւ: Աւերջապէս իր կողմնակիցներէն ամենք Եզիսարեթ թագուհին մեռցընելու դաւակցութիւն մ'ըրած ըլլալով, իր թշնամիներն ըստ մասին սուտ եւ ըստ մասին խարդախեալ թղթերով, զխեղճ Մարիամ Սգուարդ ալ նոյն խորհրդեան մասնակից ցուցուցին, եւ վրան դատաստան ընելով՝ վճռեցին որ մահապարտ է (1586, Հօկտ. 25): Գաղղիայի Հենրիկոս Գ. թագաւորը, ինչպէս նաեւ թագուհւոյն որդին Յակօբ (Զ.) շատ ջանացին զինքն ազատելու, բայց պարսպ տեղ: Եզիսարեթին խորհրդականները կերպով մը նոյն թագուհւոյն հաւանութիւնն ալ առին ու վճիռը կատարեցին: Այսպէսով գլխատութեամբ կնքեց իր կեանքը Մարիամ Սգուարդ, մինչեւ իր մահը պահելով իր հաստատութիւնն ու իր ուղղափառ կրօնը (1587, Փետր. 8):

120. Սպանիայի հետ պատերազմ: Եզիսարեթին թէ իր տերութեան մէջ եւ թէ Եւրոպայի ցամաք երկրին վրայ բռնած ընթացքին համար Սպանիայի Փիլիպոս Բ. թագաւորն իրեն սաստիկ նեղացած ըլլալով, Անգլիայի դէմ պատերազմ բացաւ (101). մանաւանդ որ Անգլիացւոց նաւերն ամէն կողմ ծովահէնութեամբ Սպանիացւոց մեծ վնաս կը հասցընէին: Բայց վերջիններուն Անյաղթ ըսուած նաւատորմիդը, որ 135 պատերազմիկ նաւերէ բաղկացեալ էր, ճամբան մերթիկներէ մեծ վնաս կրելէն ետեւ, Անգլիացիներէն յաղթուեցաւ, եւ շորս ամուսան չափ ծովու վրայ մնալէն ետեւ, Սպանիա դարձաւ (1588, Մայ. — Սեպտ.):

Թեպէտ Փիլիպպոս Անդղիացի ուղղափառաց վրայ մեծ յոյս ունէր, որ անոնք ոտք կ'ելնեն եւ իրեն կ'օգնեն, բայց անոնք իրենց կրած նեղութիւններն ու հալածանքները բանի տեղ չդնելով, հաւատարիմ մնացին, եւ իրենց հայրենեաց անկախութեան համար մեծ փութով աշխատեցան: Ի վերայ այսր ամենայնի աս իրենց հաւատարմութիւնն ալ բաւական չեղաւ իրենց դէմ եղած հալածանքները նուազեցրնելու:

121. Իրլանտայի դէմ արշաւանք: Եղիսարեթին մասը: *Այն թագուհւոյն ատենը Անդղիացի մէջ պատահած նշանաւոր դէպքերէն մէկն ալ է Իրլանտայի դէմ եղած արշաւանքը: Անդղիացիք քանի մը դար յառաջ նոյն կղզւոյն ըստ մասին տիրած էին (Նախաշ. 9), եւ երկրին խորհրդանոցն աւելի Անդղիացիներէ կազմուած էր՝ քան թէ Իրլանտացիներէ, որով եւ Հենրիկոս Ը-ին եկեղեցական գլխաւորութիւնն օրինօք հաստատելը շատ դիւրաւ գլուխ տարուած էր, թէեւ ժողովուրդը բոլոր զօրութեամբ դէմ կը դնէր: Անոր համար ալ մէկ կողմանէ Անդղիացի հալածանքները հոն ալ կը կրկնուէին, իսկ մեկալ կողմանէ ժողովուրդը շատ անգամ ոտք կ'ելէր՝ իր անկախութիւնն ու կրօնը պաշտպանելու համար: Մարիամ թագուհւոյն ատենը Իրլանտացիք հանգիստ ու հանգարտ մնացած էին. իսկ Եղիսարեթ ամէն կերպ բռնութիւններով նորազանգութիւնը հոն ալ հաստատել ուղեւով, քանի մ'անգամ ոտք ելան: Արդ Էստէքսի կոմսը, որն որ վերջոյիշեալ արշաւանքին գլուխն էր (1599, Ապր.), յազմուեցաւ եւ թագուհւոյն հրամանին դէմ իրենց հետ գաշինք դրաւ: Եղիսարեթ ասոր վրայ այնչափ նեղացաւ, որ նոյն կոմսը՝ որն որ իր ան ատենուան սիրականն էր, նախ բանտարկել ու ետքը իր ունայնատիրութիւնը թնամանելուն համար՝ սպաննել տուաւ (1601, Փետր. 25): Բայց բոլոր իր թագաւորութեան ատեն թափել տուած այնչափ արիւններուն վրայ առ ալ աւելնալով, վրան այնպէս տրամութիւն ու սեւամաղ-

ձութիւն մ'եկաւ, որ վերջին տարիները գրեթէ լռութեամբ ու առանձնութեամբ, ամէն միտիթարութենէ զուրկ անցընելէն ետեւ, բոլոր բժշկական օգնութիւնները մերժելով՝ կեանքը կնքեց (1603, Մարտ 24)։

122. **Յակոբ Ա.**։ Վառօգոյ դաւակցութիւն։ Թաղութիւն մեռնելէն յառաջ իրեն յաջորդ անուանած էր Մարիամ Սղոմարդին Յակոբ (Ձ.) օրդին, Սկովտիայի թագաւորը, որն որ Եղիսարեթին մեռնելէն ետեւ՝ իրրեւ Յակոբ Ա. Անգղիայի դահն ելաւ, որով եւ Անգղիայի ու Սկովտիայի թագաւորութիւնները՝ Մեծն Բրիտանիա անուամբ, ինչպէս նաեւ Իրլանտա ալ, մէկ թագաւորի տակ միացան, եւ Յակոբ՝ առաջին վեհապետն եղաւ, որ ինք զինքը՝ Մեծին Յիստանիայի եւ իրլանտայի թագաւոր անուանեց։ Բայց աս թագաւորութիւնները միշտ երեք զատ զատ տէրութիւնք կը սեպուէին, իւրաքանչիւրն իր սեպհական օրէնքներն ու խորհրդանոցն ունենալով։ Յակոբ թէպէտ Սկովտիայի Երիցական ազանդոյն մէջ կրթուած էր, բայց սկսաւ Անգղիայի Եպիսկոպոսական ազանդոյն կողմը բռնել. որովհետեւ Երիցականք հասարակապետական դաղափարներ ունէին, ուր որ Եպիսկոպոսականք ճշգիւ միապետականք էին եւ թագաւորական իշխանութեան պաշտպան։ Իսկ ուղղափառաց վիճակն աս թագաւորին ատենն ամենեւին չաղէկցաւ. ստոյգ է՝ մէկ կողմանէ Եղիսարեթի ատենուան չափ յաճախ սպանութիւնք չէին բլար, բայց ուրիշ պատժական օրէնքները թէ սաստկացան եւ թէ աւելի խտութեամբ ի գործ կը դրուէին։ Պաշտօններու հասնելու եւ խորհրդանոցի անդամ բլարու համար անանկ երգումներ կը պահանջուէին, որ ուղղափառք բոլորէն ալ կը զրկուէին։ Ասով կազմուեցաւ Վառօգոյ բտուած դաւակցութիւնը, որուն 13 երգմնակիցները կ'ուզէին խորհրդանոցի անդամներն ու թագաւորը վառօգով օգ հանել։ Նոյնին դիտած շարիքներն անով խափանուեցան, որ դաւակիցներէն մէկը զեղջի եկաւ. եւ իր ընկերներն ալ ի-

բնեց շար գիտաւորութենէն եւ կենալու յորդորելէն ետեւ, տեսնելով որ անոնք յամառեալ կը մնան, բանք պաշտօնէից իմացուց, որով իրենք մահաւամբ պատժուելէն զատ (1606, Յունու. 30), բոլոր ուղղափառաց վիճակն ալ աւելի դէշցաւ: Գրեթէ միեւնոյն նեղութեան ու վշտաց մէջ ինկան Իրլանտայի եւ Սկոտլանտի ուղղափառք ալ: — Յակօր Ե. թագաւորին բաղաւթական նկատմամբ բռնած ընթացքովն իր ու ժողովրդեան կամ խորհրդանոցին մէջ սաստիկ հակառակութիւն մը սկսաւ, որուն հետեւութիւնները զալ ժամանակի միջոցին մէջ կը տեսնենք:

123. Անդդիսայի մեծութեան հիմք կը դրուի: Վաճառականութիւն ու նաւազնացութիւն: Ա՞ ժամանակի միջոցին մէջ, եւ գլխաւորաբար Եղիսաբեթ թագուհւոյն երկայն կառավարութեան ատենը, աստերութեան ապագայ մեծութեան ու փառաւորութեան հիմք դրուեցաւ. անանկ որ Անգղիա, որն որ նոյն թագուհւոյն դահ էլած ատեն՝ Եւրոպայի երկրորդական ատերութեանց կարգին մէջ կը սեպուէր, անոր մեռնելու ժամանակն առաջին աստիճանի ատերութեանց կարգն անցած էր: Նոյն միջոցին հիմնեցաւ իր ծովական զօրութիւնն ու համաշխարհական վաճառականութիւնը, որոնք ամէն ժամանակ բոլոր ազգերուն զարմացման նիւթ եղած են: Առեւտրական ձեռնարկութիւններու հոգին, որն որ Մարիամ թագուհւոյն ատենն արթննալու սկսած էր, Եղիսաբեթին ժամանակը մեծապէս բորբոքեցաւ, եւ վեհապետին պաշտպանութեամբն ու մեծամեծաց գործակցութեամբը շատ օգուտներ յառաջ բերաւ, մանաւանդ ան պարագայով՝ որ նաւազնացութեան ծաղիկելուն նպաստեց: Բայց ասով յառաջ եկած օգուտները՝ ազգին վաճառական ու նաւազնաց մասին մէջ ամբիօփած շմեացին, այլ առհասարակ բոլոր ազգին վրայ տարածեցան. վասն զի չէ թէ միայն բազմաթիւ գործատուներու հիմնուելուն առիթ եղան, որոնք անթիւ անհամար բազ-

մեծութեան զբաղում տուին և զբոս երկիրներէն՝ մեծ
 հարստութիւն զալուն պատճառ եղան, հապա նաև
 ամենուն վրայ նոր եռանդ ու գործունէութիւն զար-
 թուցին: Բոլոր ազգին տեսութեան շրջանն ընդար-
 ձակեցաւ, ամէն մարդ սկսաւ իր գործունէութիւնն օգ-
 տակար կերպով բանեցրնելու ջանք ընել: Իսկ ձեռք
 զարնուած գործքերուն յաջողութեամբ գլուխ կլէին
 ամենուն գրգիռ եղաւ իր տաղանդն ու ճարտարու-
 թիւնը նոյնպիսի ձևոնարկութեանց գործածելու: Ա-
 մէն արուեստի և ամէն աստիճանի մարդիկ սկսան և
 տեւէ իյնալ յառաջ երթալու և իրենց ճիւղը կա-
 տարելագործելու: Ասկից զատ Ազխաբէթ թաղու-
 հին օտար տէրութեանց հետ ունեցած գործքերուն
 մէջ միշտ յաջողութիւն գտնելով, բովանդակ ազգը
 զրդեցաւ նոյն յաջողութիւնը հիմնական ու հաստա-
 տուն ընելու. և որովհետեւ աս բանս գլխաւորաբար
 ծովական զօրութեան ձեռքով եղած էր, անոր համար
 ան ժամանակէն մտքերնին գրին որ իրենց մեծութիւ-
 նը՝ ծովական զօրութեան վրայ է, որով և միշտ ջանք
 կ'ընէին նոյնն ածեցրնելու և պայծառացրնելու:

ԵՐԿՐՈՐԳ ՄԻՋՈՑ ԺԸՄԸՆԸԿԻ

Բ. ՀԻՒՍԻՍԸՅԻՆ ՏԵՐՈՒԹԵԸՆՑ ԺԸՄԸՆԸԿԸԿԻՑ
ԳԸՏՄՈՒԹԻՒՆԸ

(1513 — 1618)

124. Ընդհանուր տեսութիւն: Մինչև ժ.Ձ. դարուն մէջերը հիւսիսային կողմանց տէրութիւններուն մէջ հասարակաց շօշափման կէտ մը չկար, կամ անանկ նիւթ մը չէր պատահած՝ որ անոնց շատերուն շահերը միանդամայն գրգռելով, զիբեւր իրարու հետ անձուկ յարաբերութեանց մէջ խոթէր. իւրաքանչիւր տէրութիւն աւելի իր ներքին իրողութեանց կամ առ առ աւելի իր սահմանակից տէրութեան հետ զրազած էր: Սոցդ է՝ Իւան Ա. (Գ.) Վասիլէւիչ (Նախաշ. 60) իր աշխարհակալութիւններն ուրիշ տեղերէն զամ' Լիւսնիայի վտայ ալ ուղղած էր, որով քիչ մը ժամանակ բոլոր մերձաւոր տէրութեանց մտադրութիւնը գրգռուեցաւ. սակայն եւ այնպէս իրեն հետ յիսուն տարւան զինադադար բլալով (1503), կախները նոյն երկրին սահմաններէն դուրս ելան: Բայց երբ որ Իւան Բ. (Գ.) Վասիլէւիչ նորէն նոյն երկրին աշխարհակալութեան ձեռք զարկաւ, դարձեալ ամենուն մտադրութիւնն արթննալէն զամ, երկայն ու արիւնասէղ պատերազմներ ծագեցան, որով եւ նոյն ատենէն Լիւսնիա հիւսիսային կողմանց համար ան եղաւ՝ ինչ որ հարաւային կողմանց նկատմամբ էր Միլան: — Բայց սոգէպքս չպատմած՝ տեսներք թէ նոյն ատենները հիւսիսային տէրութիւնը ինչ վիճակի մէջ էին:

125. ՍԿԸՆՏԻՆԸԻԻԸ. Սկանտինաւեան տէրութիւնք բնդհանրապէս: Ա՞ տէրութեանց (Գանիայի, Շուեաի ու Նորուեգիայի) մէջ ժ.Ձ. դարուն սկիզբները դարազրուի կազմելու շափ երեւելի գէպքեր պատահեցան: Նոյն տէրութիւնք ալ անանկ փոփոխութիւններ կրեցին, որոնցմով իրենց ապագայ կերպարանքն ու

գիրքը՝ կամ՝ նոյն ատեն արդէն որոշուեցաւ եւ կամ գոնէ անոնց հիմք կատարեալ գրուեցաւ: Յիշեալ փոփոխութիւնները երկու դիւաւոր դիպուածներէ յառաջ եկան. Ա. Գարձարեան Միութեան (Նախաջ. 56) լուծուելով՝ Շուեփի դասին նորէն կանգնուելէն եւ Բ. Բողոքականութենէն: Նոյն միութեան կատարեալ քահուելով՝ հիւսիսային կողմերը քանի մը անկախ տէրութիւնք երեւան երան, որոնք՝ հասարակաց շօշափման կէտ մը գտնուելուն պէս՝ իրարու հետ անձուկ յարաբերութեանց մէջ մտան: Իսկ բողոքականութիւնը՝ կրօնայ ըսուիլ որ աս հիւսիսային տէրութեանց վրայ քաղաքականօրէն աւելի ծանրակշիռ հետեւութիւններ ունեցաւ, քան թէ հարաւային կողմանց վրայ: Նորազանգութիւնը Սկանաինաւեան տէրութեանց մէջ այնպէս մուտք գտաւ ու տարածուեցաւ, որ շուտ մ'ամէն բան տակնուվրայ ըրաւ:

126. Գանիայի Քրիստիան Բ. թագաւորը՝ Շուեփի թագը կ'առնու: Նոյն թագաւորին անագորունութիւնները: Վրիստիան Բ. Գանիայի թագաւորութեան դասն ելլելուն պէս (1513), երկու դիւաւոր նպատակի ետեւէ սկսաւ իյնալ. մէյ մը՝ որ զօրաւոր ազնուականաց եւ հարուստ եկեղեցականաց զօրութիւնը զսպելով՝ թագաւորական իշխանութիւնն ընդարձակէ. մէյ մ'ալ՝ որ Շուեփը նորէն իր իշխանութեան տակ առնու: Իր աս նպատակին հասնելու համար, քանի մը տարի աշխատեցաւ ու պատրաստութիւն տեսաւ: Կարոլոս Ե-ին Եղիսաբեթ քրոջը հետ կարգուելով (1515), նոյն կացսեր պաշտպանութիւնը ձեռք բերաւ. Անգղիայի Հենրիկոս Ա. թագաւորին հետ՝ անոր եւ իր հօրը մէջ գրուած առեւտրական դաշինքը նորոգեց. Ռուսիայէն հրաման առաւ Նովկորոտի մէջ դանիացի վաճառականաց ընկերութիւն մը հաստատելու: Ասով եւ ուրիշ միջոցներով քաղաքացւոց հարստութիւնն աճեցուց, որպէս զի զանոնք ազնուականաց դիմացը կարենայ հանել, եւ միանգամայն իր դի-

տաւորութիւնները գլուխ հանելու համար հարկաւոր եղած գրամական մուտքն աւելցրնէ: Ասոնք ընելէն եւ Շոգոյմի վրայ ըրած մէկ արշաւանքին մէջ խարէութեամբ Շուետայ մեծերէն վեց հոգի պատանդ առնելէն ետեւ, որոնց մէջ էր նաեւ Կուստաւ Ազաւ՝ Շուեաներու հին թագաւորական ցեղէն (1518, Յուլ.), իր տեղը դարձաւ, Եւրոպայի գրեթէ ամէն ազգերէն զօրք ժողովեց ու երկու տարի ետքը նոր արշաւանք մը սկսաւ: Շուեայք երկայն ատեն իրենք ղերենք պաշտպանելէն ետեւ՝ յաղթուեցան. Քրիստիան Շոգոյմ առաւ, յաղթանակաւ ներս մտաւ (1520, Սեպտ. 6) եւ հոն Շուեաի թագաւոր պսակեցաւ (1520, Նոյեմ. 4): Թագաւորը քանի մ'որ անանկ վարուեցաւ, որ երկրին մեծամեծները սկսան վրան վտտահութիւն ունենալ. բայց ետքը իր խորհրդականաց անագորոյն խրատին հետեւելով, որոնք ղինքը համոզած էին որ Շուեաի մէջ իր իշխանութիւնը հաստատուն ընելու համար երկրին մեծամեծներն ու հարուստները մէջտեղաց վերցրնելու է, իր կործանման պատճառ եղաւ: Քրիստիան ասոնց խրատին համեմատ, վերիվերոյ եւ իր քմացը համաձայն դատաստան ընել տալէն ետեւ, մեծերէն Գ4 հոգի սպաննել տուաւ (Նոյեմ. 8): Ասկից զատ երկու օր ետեւէ ետեւ շատ մարդիկ մեռցրնել տուաւ՝ սեռի ու հասակի չինայելով, անանկ որ առանց շափազանցութեան՝ մայրաքաղաքին ջրմուղներն արեան գոյն ներկուեցան: Նոյն արիւնահեղ անագորունութեան գործքերը կատարելէն ետեւ, հոնտեղը իր կողմնակիցներէն կազմուած կառավարութիւն մը գրաւ ու իր երկիրը դարձաւ, բոլոր ճամբուն վրայ ալ իր ետեւէն արեան հետք մը թող տալով, որովհետեւ գրեթէ ամէն անցած տեղերը շատ մարդիկ սպաննել կու տար, որոնց մէջ բազմաթիւ եկեղեցականք ալ կային: Ասան զե թէպէտ իր արիւնհեղութիւնները, մանաւանդ Շոգոյմի կոտորածը, կեղծաւորութեամբ՝ իբրեւ ուղղափառ կրօնի պաշտպանութեան համար ընել կը ձեւացրնէր, բայց

իր բուն նպատակն էր իր իշխանութիւնը հաստատելն զատ, ամէն կողմ նորազանգութիւն խոթել, որպէս զի եկեղեցական ինչքերը կարենայ յափշտակել:


127. Կուստաւ Ազգա: Շուեա Գանիայէն բուրոյն կը բաժնուի: Մայմէյի դաշնակցութիւն: Աս բարբարոտական կոտորածէն ազատող իշխաններուն մէջ գլխաւորներէն մէկն էր Կուստաւ Ազգա, որն որ յառաջագոյն Գանիայի մէջ բանտարկուած բերդէն փախած էր (1519, Սեպտ.): Ասիկայ քիչ մը ատեն անհնարին նեղութեամբ ու վշտերով ասոյին անդին իրբև փախտական թափառելէն եւ հազարումէկ վտանգներէ ազատելէն ետեւ, Գանիական բռնաւորութիւնը մերժելու համար տեղ տեղ ոտք ելող Շուեաներէն տերութեան տեսուչ ընտրեցաւ (1521, Օգոստ.): Ասոնք Հանսայեան դաշնակցութենէն ալ օգնութիւն գտնելով, շուտ մը այնչափ զօրացան, որ Գանիացոց կողմնակիցները Շոողոյմի մէջ փակեցին եւ զերենք նոյն մայրաքաղաքին մէջ պաշարեցին (1522): Աս միջոցին Քրիստիան Բ., որն որ Գանիայի մէջ ամէն բռնական կերպերով ու սպանութիւններով նորազանգութիւնը տարածելու ետեւէ կ'իյնար, հոն ալ ամենուն անաստիճանի ասելի եղաւ, որ այնուականք ոտք ելան, զինքը Սասրին նահանգները փախչելու ստիպեցին (1523, Ապր.) եւ տեղը՝ իր հօրեղբայրը Շլեզուիկի ու Հորդայնի Փրեզերիկոս դուքսը թագաւոր զրին: Ասիկայ զինքն ընտրող այնուականաց ձեռքը արտաքոյ կարգի մեծ իշխանութիւն տուաւ, որով թագաւորական իշխանութիւնը զրեթէ կ'ոչընչանար, իսկ Նորուեգիայի մէջ նոյն աստիճանը բոլորովին ընտրական կ'ըլլար: Աս յեղափոխութեամբ Շուեաի անկախութիւնն ալ զիւրինցաւ. Կուստաւ Ազգա թագաւոր ընտրուեցաւ (1523, Յունիս 7) եւ քիչ մ'ետքը Շոողոյմ առաւ. այնպէս որ նոյն տարւոյն վերջը բոլոր տերութեան երկիրներն իր իշխանութեան տակ մտած էին: Եւ թէպէտ Գանիայի նոր թագաւորն ալ փորձ փորձեց իր իշխանութիւնը

Հուետի մջ հաստատելու, բայց չկրցաւ յաջողցնել. եւ երկրորդ տարին երկու տէրութեանց մջ Մալ-ձոյի գաշնակցութիւնը դրուելով (1524), Գալմարեան Միութիւնը բոլորովին քակուեցաւ, եւ Հուետի թա-գաւորութիւնը Գանձիայէն կատարեալ բաժնուեցաւ:

128. Կուստա Վազային թագաւորութիւնը: Չորարնակը: Թագաւորական աստիճանն իր ցեղին մջ ժառանգական կ'ըլլայ: Կուստա Վազա իր իշ-խանութեան մջ հաստատուելէն ետեւ, սկսաւ նորա-զանդութիւնն իր տէրութեան մջ տարածելու ետեւէ իյնալ, իսկզբան խորամանկ ու մեղմ միջոցներով, իսկ ետքէն ամէն կերպ բռնական ու անազորոյն կերպերով եւ շատ մարդկան արինն թափելով: Ասով եկեղեցա-կանաց ազդեցութիւնը դադարեցրնելէն եւ եկեղեցական ինչքերը յարքունիս դրուելէն զատ, առիթ ունե-ցաւ նաեւ ազնուականները խոնարհեցրնելու: Վասն զի անոնցմէ ոմանք նորազանդութեան դառնալ չուզողնե-րը պաշտպանելով, թագաւորը սպառնացաւ որ իր իշ-խանութենէն կը հրաժարի (1527). իսկ իրենք առ բանիս հետեւութիւններէն վախնալով, չէ թէ միայն զիջան, այլ եւ զբիթէ անոր կամայը կոյր գործիքներն եղան: Բայց ստորին ժողովուրդն ու զլիսաւորաբար Չո-րարնակ զեղացիները թագաւորին բրածներուն վրայ նեղանալով, ապստամբութիւն մը հանեցին (1531): Կուստա Վազա նոյն ժամանակ իրենց ազատութիւն-ները հաստատեց եւ այնպէս առժամն զիրենք հան-դարտեցուց. որովհետեւ վտանգ կար Գանձիայի մեր-ժուած Քրիստիան Բ. թագաւորէն, որն որ թէպէտ եւ յայտնապէս նորազանդութեան կողմը բռնած, եւ ե-պիսկոպոսները պաննելուն համար՝ քահանայապետէն նզովուած էր, բայց ինք զինքն ուղղափառ ձեւացրնե-լով, նոյն ատենները Հոլանտական նաւատորմով մը նորուեզիս եկած եւ իբրեւ թագաւոր սիրով ընդ-ունուած էր: Արդ Կուստա Վազա եւ Գանձիայի Փրե-զերիկոս Ա. թագաւորը մեկտեղ միանալով, զինքը

ստիպեցին իրաւախոհութեան դաշինք գնելու (1532, Յուլ.), որով եւ ինք փրկեցրիկոսին ձեռքն ինկաւ, Նորուեղիա ալ Գանձայի հետ միացեալ մնաց: Աս կերպով արաւորին վտանգն անցնելէն ետեւ, Կուստա վաղա զօրք ժողվեց, Չորաբնակաց վրայ յարձակեցաւ, եւ շատ խիստ պատիժներով ու սպանութիւններով զիրենք զսպեց. որով իրենց հայրենի կրօնը կորսնցընելէն զատ, հին ազատութիւններէն ալ զրկուեցան եւ գրեթէ ստրկութեան վիճակի մէջ ինկան (1532): Աս ժամանակէն ետեւ ազնուականք իրենց վրայ այնպէս կը բռնանային, որ քանի մը տարի ետքը նորէն սոք ելան, եւ ուրիշ շատ ամգահ մարդիկ ալ անոնց հետ միանալով, մեծ ապստամբութիւն մը ձեւացուցին. բայց թագաւորը զիրենք նոյն անգամ ալ զսպեց (1542 — 1543): Երկրորդ տարին (1544) տէրութեան օրէնքով թագաւորական իշխանութիւնն իր ցեղին մէջ հաստատել տուաւ, անդրանկաց արական յաջորդութեան իրաւունքով:

Յեղագիր ՎԱԶԱՅԵԱՆ ազգատոհմի



Սեռաներէն յառաջ որոսո՞ք (1. 2...) Բոսանլանները՝ հիւրէնո՞վ նորաջ Շահնափ Բոֆուսարները ինչ ցոյցներն. իսկ (Ա. Բ...) Եւանտիները՝ ի՞նչ Բոֆուսարները:

129. Կուստա Վաղսյին շորս որդիքը: Էրիք ժԳ., Յովհաննէս Գ. ու Կարոլոս Թ. թագաւորները: Կուստա Ա. Վաղա թագաւորը՝ 37 տարի թագաւորելով, իր իշխանութիւնը Շուեաթի մէջ աղէկ մը հաստատելէն ետեւ, մեռած ատեն (1560, Սեպտ.) շորս որդի թողուց: Ասանցմէ անդրանիկը Էրիք ժԳ. իրեն յաջորդեց. իսկ մէկալ երեքը, իրենց հօրն որոշածին համեմատ, անոր վերին իշխանութեան տակ՝ մէյ մէկ ժառանգական դքսութիւն ընդունեցան. Յովհաննէս՝ Ֆինլանտիայի դուքս եղաւ, Մազնոս՝ Արեւելեան Գլխաստանի (Օսդրոկոթիայի), Կարոլոս՝ Սիւաբիանիայի: Աս բանս իրենց մէջ կոխներու առիթ տուաւ, որոնց վերջն եղաւ՝ Էրիքին վար առնուիլը (1568): Իր եղբայրն ու յաջորդը Յովհաննէս Գ., որն որ ազնուականաց ձեռք բռնելովը զահն անցած էր, անոնց մեծամեծ արտօնութիւններ տուաւ: Աս թագաւորն ուղղափառութեան միտեալ եւ Ահհայ Արկիդմունա Ա. թագաւորին Կատարինէ աղջկան հետ կարգուած բլլալով, ուղղափառ եղաւ (1578), եւ սկսաւ եկեղեցական կարգերն ու պաշտամունքը յառաջուաններուն զարծընել տալ. բայց չկրցաւ բոլորովին յաջողընել, եւ իր եռանդն ալ վերջին ատենները մարեցաւ: Իր մեռնելէն (1592) քանի մը տարի յառաջ իր Արկիդմունա որդին Ահհայ թագաւոր եղած էր (1587). եւ թէպէտ Յովհաննէս ուղած էր իր կենդանութեան ատեն Շուեաթի թագաւորութիւնն ալ անոր անցընել, բայց իր նպատակին չէր կրցեր հասնիլ: Ուստի իր մեռնելէն ետքը, Կարոլոս եղբայրը, որն որ արդէն վերջին տարիները կառավարութեան բոլոր գործքերն իր ձեռքն անցուցած էր, սկսաւ ետեւէ իյնալ Շուեաթի թագն իրեն առնելու. եւ աս բանիս յարմար առիթ գտաւ նորազանգութիւնը տէրութեան մէջ նորէն հաստատելու պատրուակը: Թագաւորը մեռնելուն պէս, Կարոլոս տէրութեան խորհրդոյն հետ որոշեց որ տէրութիւնը մէկտեղ կառավարեն. բայց իր եղբորորդւոյն իրաւունքն

այնչափ յայտնի էր, որ ինք յափշտակիչ շերեւնալու համար՝ նոյն որոշման մէջ կը զբուցէր թէ ասիկայ կ'ընէ առանց Սիկիզմունտին պարտաւոր հպատակութեան վնասելու: Ասոր վրայ Ուփսալա կարգաժողով եւ ազգային սինհոդոս գումարելով, Աւագուրկեան դաւանութիւնն ու լուսեբական ծէսերը նորէն հաստատել տուաւ: Ասանկով շատ կողմնակիցներ ստացաւ. անանկ որ թէպէտ Սիկիզմունտ եկաւ, եւ ազնուակաշնայ նոր արտօնութիւններ տալով եւ ուրիշ զիջումներ ընելով, ինք զինքը թաղաւոր պոսակել տուաւ (1594, Փետր.): Բայց չկրցաւ իր իշխանութեան մէջ մնալ, եւ քանի մ'ամիս ետքը թողուց Ահհաստան գարձաւ (Յուլ.): Իր հեռանալէն ետեւ, բողոքական քարոզիչք ժողովուրդն այնչափ զրգռեցին, որ վերջապէս իրեն դէմ ապստամբութիւն մ'ելաւ: Թաղաւորը նորէն Շուեա եկաւ (1598, Յուլ.) եւ Ստեկեպորկի քով ապստամբաց յաղթեց. սակայն յաղթութենէն օգուտ մը չունեցաւ, եւ ետքը Աինքէօրինկի քով անանկ յաղթուեցաւ (Սեպտ.), որ բոլոր Շուեաի թաղաւորութիւնը կորսնցուց: Իսկ Կարօլս (Թ.) նախ ինք զինքը Շուեաի ժառանգ իշխան (1599) եւ ետքը բուն թաղաւոր ընտրել տուաւ (1600, Մարտ): Աս չիտթութիւններէն ծագած պատերազմներուն ատենը նոյն Կարօլս Թ. մեռնելով (1611, Հոկտ. 30), իր որդին Կուստա Բ. Ատոլֆ իրեն յաջորդեց:

130. Գանձիայի Քրիստիան Գ., Փրեզերիկոս Բու Քրիստիան Գ. թաղաւորները: Հոլշդայն-Աոզգորրի ցեղը: Նորազանգութիւն: Գանձիայի Փրեզերիկոս Ա. թաղաւորն ալ մեռած ատեն (1533, Ապր.), շորս որդի թող տուաւ, որոնցմէ Քրիստիան անդրանիկն իր հօրը յաջորդեց, իսկ երրորդը Ատոլֆ՝ Հոլշդայն-Աոզգորրի ցեղին նախահայրն եղաւ, որմէ ետքէն յառաջ եկան Ռուսի կայսերաց, Շուեաի թաղաւորաց եւ Օլտենպուրկի մեծ դքսերուն ցեղերը, ինչպէս իւրաքանչիւր տեղերը կը տեսնենք: Բայց Քրիստիանին իր հօրը

յաջորդելն ոչ անմիջապէս եղաւ, ոչ ալ առանց մեծ դժուարութեան: Քրիստիան Գ. իր հօրը մահաւնէն հազիւ 15 ամիս ետքը, ազնուականաց օգնութեամբ թէ ներքին ու թէ արտաքին թշնամիներու եւ բազմաթիւ հետամուտներու յաղթելով, Գանիայի գահը կրցաւ ելլել (1534, Յուլ.): Եւ երկու տարի ետքը կարող եղաւ իր մայրաքաղաքը պաշարմամբ առնուլ (1536, Յուլ.): Ասիկայ ամէն միջոցներով նորազանգութիւնը Գանիա եւ Նորուեղիա խոթեց: Բայց որովհետեւ թէ իր գահակալութիւնն ազնուականաց ձեռքով եղած էր, եւ թէ նորազանգութիւնը զխաւորաբար անոնց նպատաւորութեամբը կրցեր էր իր երկիրներուն մէջ տարածել, անոր համար ստիպեցաւ անոնց հին արտօնութիւնները հաստատելէն զատ, նոր ու մեծամեծ արտօնութիւններ ալ աւելցրնել, եւ տերութեան բոլոր գործքերն իրենց ձեռքը թողուլ, որով անոնց զօրութիւնը խիստ մեծցաւ, մանաւանդ որ յափըշտակուած եկեղեցական ընչից մեծ մասն ալ անոնց ձեռքն անցած էր: Քրիստիան Գ.էն ետքը գահ էլաւ իր որդին Փրեդերիկոս Բ. (1559, Յունու.), որուն յաջորդ եղաւ իր քրոջ Գ. որդին, նախ՝ պետութեան շնորհ խորհրդականաց խնամապետութեան տակ (1588), եւ ետքը անձամբ (1596):

Յնդագիր ԴԱՆԻԱԿԱՆ ազգատոհմի

1. ՔՐԻՍՏԻԱՆ Ա.

2. ՅՈՎՀԵՆՆԷՍ.

4. ՓՐԵԴԵՐԻԿՈՍ Ա.

3. ՔՐԻՍՏԻԱՆ Բ.

5. ՔՐԻՍՏԻԱՆ Գ. Յովհաննէս. Առդթ.

(Նախահայր Կոզմոսը Գրեգորիան ջեզմ.)

6. ՓՐԵԴԵՐԻԿՈՍ Բ. Յովհան. Մարտիան.

7. ՔՐԻՍՏԻԱՆ Դ. Արթուրոս.

8. ՓՐԵԴԵՐԻԿՈՍ Դ.

131. ԼԵՆՍԵՆ. Եակելլոնեանց վերջին թագաւորներն ու ազնուականք: Լիթուանիա ու Լիւոնիա: Պարեթէ երկու դար էր որ աս տէրութեան մէջ Եակելլոնեանց ցեղը կը տիրէր (1386էն վեր), թագաւորը Լիթուանիայի վրայ վերին իշխանութիւն ունենալով (Նախաշ. 38): Երկրին ազնուականներն ետեւէ ետեւ ան աստիճանի իշխանութիւն ու զօրութիւն ստացած էին, որ ամէն բան իրենց ձեռքն էր եւ իրենցմէ զատ ամենեւին մէկը եւ ոչ իսկ քաղաքացութեան իրաւունք ունէր. իսկ հասարակ ժողովուրդն ու զեղացիներն իբրեւ իրենց ստրուկներն էին եւ բոլոր բեռանց ծանրութիւնը կը կրէին: Իրենց մէջ վաճառականութեան քաղաքներ ալ չդանուելով, քաղաքացւոց կարգ մը շէր կրցած կազմուիլ: Ասանկով թէպէտ Լեհաստանի վարչութիւնն անկարգ կերպի մը մէջ էր, բայց եւ այնպէս Եակելլոնեանց ցեղին իշխանութեան ասեւնը շատ յառաջացաւ. անանկ որ հիւսիսային կողմանց առաջին ու ամենէն զօրաւոր տէրութիւնն էր: Նոյն ցեղին վերջին Սիկիզմունա Ռ. Աւգոստոս թագաւորին ժամանակը (որն որ 1548ին իր հօրը Սիկիզմունա Ա.ին յաջորդած էր) Լեհաստանի հետ բոլորովին միացած էր Լիթուանիա (1569), նոյն դրութեան վերաբերեալ բոլոր երկիրներով, որոնք էին՝ Բուտլիա, Աուհինիա եւ Ուզբանիա: Գարձեալ նոյն թագաւորը Լեհաստանի հետ միացուց Լիւոնիա, իսկ անոր վերաբերեալ Գուրլանտիա եւ Սեմկալէն դաւառները՝ իր վերին իշխանութեան տակ առաւ (1561), որուն պատճառաւ եղածները քիչ մը վերջը պիտի տեսնենք (138): Ինչպէս յայտնի է, Լեհաստանի հպատակած էր Պրուսիայի մէկ մասը, իսկ մէկալ մասն անոր աւատապետութեան տակ էր (134): Բայց վերոյիշեալ թագաւորին մահուամբը (1572, Յուլ.) Եակելլոնեանց արու զուակը լքննալով, աս արտաքուստ այնպէս զօրաւոր տէրութիւնը՝ ներքին արտաքոյ կարգի շփոթութիւններու տեսարան եղաւ, որոնք կամայ կամայ

զինքը տկարացրնելով՝ վերջապէս կործանումը պատ-
ճառեցին: Աս զահակալութեան պատճառաւ ծագած
չիտթութիւններուն վրայ աւելցան նորադանդից աղ-
ճակներն ալ, որոնց զանազան ազանդները Ահաստանի
այլեւայլ գաւառները մուտք գտած էին, թէպէտ եր-
կրին բնակիչներուն մեծ մասն ուղղափառ մնացած էր:

132. Ահաստան ընտրական թագաւորութիւն
կ'ըլլայ: Առաջին ընտրական թագաւորը: Արակելու-
նեանց ցեղին սպառելէն ետեւ, ազնուականք՝ որոնք,
ինչպէս յառաջագոյն զրուցած ենք (Նախաշ. 58), նոյն
ցեղին թագաւորներն ամէն անգամ իրենց ընտրու-
թեամբը կը հաստատուէին, ալ ընտրութիւնը բոլորովին
իրենց ձեռքն առին, որով եւ Ահաստան կատարեալ
ընտրական միապետութիւն մ'եղաւ: Ան ժամանակէն
ետքը թագաւորը խորհրդանոցի մը մէջ կ'ընտրուէին,
ուր բոլոր ազնուականները զինեալ գալով եւ Աւար-
սափա մայրաքաղաքէն դուրս բանակ մը դրած ըլլա-
լով, պէտք էր որ խորհուրդներն ու ընտրութիւնը
սատոյիկ աղմկալից կերպով ըլլային. մանաւանդ այն
Աղաս արգելումն՝ ըսուած անխոհեմ օրէնքը գրուե-
լէն ետեւ (1652), որով մէկ հոգւոյ դիմադրութիւնը
բաւական էր բոլոր խորհրդանոցին միաբան որոշումը
կամ ընտրութիւնն ալ խափանելու: Ասով Աւրուպայի
վրայ այնպիսի հրաբուխ մը բացուեցաւ, որուն ժայթ-
մանքները, ամէն մէկ ընտրութեան տակն՝ մեծ վտան-
գի մէջ կը դնէին չէ թէ միայն մերձաւոր, հապա շատ
անգամ նաեւ հեռաւոր տէրութիւններն ալ: Իսկ ո՞վ
կրնայ խօսքով բացատրել բուն Ահաստանի համար ու-
նեցած փաստակար հետեւութիւնները. բաւական ըլլայ
ըսել, որ Ահաստանումէկ թագաւորի ընտրութեանց
մէջ (1572—1764) հազիւ երեք հատը կրնայ միաբան
հաւանութեամբ եղած սեպուիլ. օտար ազգեցութիւնն
ու կողմնակցութեանց վայրենական ոգին՝ առաջինէն
մինչեւ վերջինը միօրինակ միշտ կը տեսէր: — Արդ ա-

¹ Libera veto.

ապօրին ընտրութեան ժամանակ, ասան ամուսն անաւ-
 րընչութենէ կտել, բազմաթիւ հետամուտներու մէջէն,
 Անժուի Հենրիկոս դուքոր, Գաղղիացի Կարոլոս Թ. Թա-
 դաւորին կղբայրն ու ժառանգն (110) ընտրուեցաւ
 (1573, Մայ.) : Արդէն գրեթէ ամենազօր կզող աղ-
 նուականք, նոյն ընտրութեան ատեն դրուած պայման-
 ներով անանկ մեծ իրաւունքներ եւ ան աստիճանի իշ-
 խանութիւն ու զօրութիւն ստացան, որ նորընտիր Թա-
 դաւորն իրբեւ թէ աղնուպետական խիստ հասարա-
 կապետութեան մը գլուխ եւ վեհապետի շուք կզաւ :
 Անոր համար ընտրութեան ատեն դրուած պայմանները
 պահելու երգում ընեւէն (1573) եւ Լեհաստան գա-
 լով՝ Թադաւոր պսակուելէն (1574, Փետր.) քանի
 մ'ամիս ետքը, երբ որ Գաղղիացի Թադաւորը մեռաւ
 (110), Հենրիկոս ուրախութեամբ նոյն երկրէն ելաւ,
 իր հայրենիքը գնաց իր ժառանգական Թագն առնելու :
 Երբ որ Լեհաց՝ իր ետ դառնալուն համար դրած պայ-
 մանաժամն անցաւ եւ ինք չեկաւ, ալ անոնք իրենց ար-
 քունի գահը դատարկացեալ հրատարակեցին (1575,
 Մայ.), եւ նոր Թադաւոր ընտրելու ձեռք զարկին :
 Իրենց մէկ մասը Մաքսիմիլիան Բ. կայսրն ընտրեց :
 Իսկ ուրիշ մաս մը՝ Սիկիզմունտ Ա.ին Աննա աղջիկն
 ու անոր ապագայ ամուսինը՝ Գրանսիլուանիացի Ստե-
 փան Պաթորի իշխանը. եւ աս ետքինները վերջապէս
 վրայ ելլելով, Ստեփան Թադաւոր պսակեցաւ (1576,
 Մայ.), Աննային հետ կարգուեցաւ եւ մէկ տարւան մէջ
 բոլոր երկրէն ընդունուեցաւ : Ասոր մեռած ատենն ալ
 (1586, Գեկտ. 12) դարձեալ կրկին ընտրութիւն ե-
 ղաւ (1587, Օգոստ.) : ընտրուողներն էին Ռուտովֆ
 Բ. կայսեր Մաքսիմիլիան կղբայրը, եւ Շուեաի Յով-
 հաննէս Գ. Թադաւորին ու (Աննա Թադաւուհայն երեց
 քրոջը) Կատարինէ իշխանուհայն որդին Սիկիզմունտ
 (129) : Ասոր վրայ երկայն կռիւներ բլալէն կտել, Սի-
 կիզմունտ Գ., որն որ արդէն նոյն շինթութեանց ա-
 տենները պսակուած էր (1587, Գեկտ.), յաղթող ըլ-

լալով, Մարտիմիլիան ստիպեցաւ թագաւորութենէն հրաժարիլ (1589) :

133. Պրոիթ . Տեւտոնեան ասպետներուն ստացուածք կ'ըլլայ : Աս երկիրը, ինչպէս յառաջագոյն (40) գրուածներէն յայտնի է, խիստ երկայն ժամանակէ վեր Տեւտոնեան¹ ասպետաց կարգին ստացուածն էր, որն որ ժ.Բ. դարուն սկիզբները (1128) Երուսաղէմի մէջ հիմնուած հիւանդանոցի մը ծառայող եղբայրութենէն յառաջ եկած էր : Սալլատարն քրիստոնէից ձեռքէն Երուսաղէմ առնելէն ետեւ (1187), յիշեալ եղբայրութիւնը նոյն քաղաքէն ելաւ, Ա.ք.քեայի քով կեցող քրիստոնէից բանակը գնաց, եւ Շուարիայի Փրեզերիկոս դքսին ձեռքին ասպետական կարգի փոխուելով, Տեւտոնեան ասպետաց կարգ կոչուեցաւ : Քրիստոնէայք Ա.ք.քեա քաղաքն առնելէն ետեւ (1191), կարգն իր գլխաւոր նիստն անոր մէջ հաստատեց. Գերմանիայի պետութեան հիմնարկութիւն ('Նախաջ. 26) եղաւ, եւ հետոյ՛հետէ թէ Արեւելք եւ թէ Արեւմուտք զանազան երկիրներ ձեռք բերելով, շատ զօրացաւ : Գեւ ի ժ.Գ. դարուն սկիզբները Տեւտոնեան ասպետք զերմանացի իշխանաց խնդրելով՝ սկսան տակաւին հեթանոսութեան մէջ դանաւող Պրուշներուն դէմ պատերազմիլ, եւ նոյն կէտղարեան պատերազմներով (1231—1283) բոլոր անոնց երկրին (Պրուսիայի) տիրեցին, այլեւայլ տեղեր բերդեր ու քաղաքներ շինեցին եւ ամէն կողմ զերմանացի գաղթականներով շէնցուցին : Հազիւ թէ պատերազմները լմնցուցած էին, մէյ մ'ալ Եզդիպատսի սուլդանն Ա.ք.քեա քաղաքն իրենց ձեռքէն առաւ (1291). ուստի եւ ժամանակին կարգապետը, քիչ մը ժամանակ Վեննեաիկ կենալէն ետեւ, իր նիստը Պրուսիայի Մարիենպուրկ քաղաքը փոխադրեց (1309) : Այսպէս կարգապետն ու իր կարգը բոլորովին հոն հաստատուելէն ետեւ, այնչափ երկիրներ ձեռք բերին, որ վերջապէս Արեւելեան ծովուն եզրները՝ Տան-

¹ Teutonique. — Գերմանական :

ըիկէն մինչև Կարուս՝ իրենց ստացուածքն եղան. որով եւ Պրուսիա՝ հիւսիսային կողմանց առաջին զօրաւոր ու վաճառական տէրութիւններէն մէկը կը սեպուէր:

134. Լեհք Պրուսիայի մէկ մասին կը տիրեն, մէկայ մասն ալ իրենց աւատապետութեան տակ կ'անունն: Արևելեան Պրուսիա ժառանգական դքսութեան կը դառնայ եւ Պրանտենպուրիի հետ կը միանայ: Ըյոչափ պայծառութեան համար Լեհաստան Տելաունեանց դէմ նախանձու զրգոտելով, մէջերնին պատերազմ բացուեցաւ: Տելաունեանք Գաննենպերիի քով տրուած ճակատուն մէջ անանկ յաղթուեցան (1410) եւ միանգամայն անանկ տկարացան, որ Թոռնի խաղաղութեան դաշանց մէջ (1411) հազիւ մեծ դժուարութեամբ կրցան իրենց համար չափաւոր պայմաններ դնել տալ: Ըսոր վրայ խել մ'ատեն անցնելէն ետեւ, երկրին աղետականներն ու գեղացիները, ասպետաց բռնութիւններէն ազատելու համար, մէջերնին դաշնակցութիւն դրին, իրենք զիրենք անոնց իշխանութենէն ազատ հրատարակեցին եւ Լեհաստանի պաշտպանութեան տակ մտան (1434), որուն հետեւութիւնն եղաւ Տելաունեանց ու Լեհաց մէջ տասուիրէք տարւան պատերազմ մը: Նոյն պատերազմին վերջ տուող Թոռնի խաղաղութեան դաշինքով (1466) Արևմտեան Պրուսիա դաւառը բոլորովին Լեհաց ստացուածք եղաւ. իսկ Արևելեան Պրուսիա՝ թէպէտ ասպետաց ձեռքը մնաց, բայց Լեհաստանի աւատապետութեան տակ: — Արևելեան Պրուսիա դաւառին՝ Պրանտենպուրիեան ցեղէն Ալպերդ կարգապետին ձեռքը՝ աշխարհական ժառանգական դքսութեան մը դառնալը (1525), նորաղանդութեան պատմութեան մէջ յիշատակած ենք (40): Արդ երբ որ Պրուսիայի աս առաջին Ալպերդ դուքսը մեռաւ (1568), իրեն յաջորդեց իր Ալպերդ Փրեդերիկոս որդին. բայց քանի մը տարի ետքը մտաց խօթութեան մէջ իյնալով (1573), իր մօտաւոր ազգականներէն Գէորդ Փրեդերիկոս սահմանակիցօր

խնամապետ դրուեցաւ. իսկ ասոր մեռնելէն ետեւ (1603), նոյն խնամապետութիւնը Յովակիմ Փրեղե-
րիկոսին անցաւ, որն որ Հոհննցոյլեանեան զեղէն յա-
ռաջ եկող Արամտենպուրկի կայսրընտիրներուն ութե-
րորդն էր: Աւերջնոյն որդին ու կայսրընտրութեան յա-
ջորդը (1608) Յովհաննէս Աիկիզմունտ, Արուսիայի
խնամապետութիւնն ալ առաւ, Ալպերդ Փրեղերիկոսին
աղջկան հետ կարգուեցաւ, եւ նոյն խօթամիտ գբսին
մեռած ժամանակը (1618) դքսութեան աստիճանին
մէջ իրեն յաջորդելով, Արուսիայի տէրութիւնը՝ Արան-
տենպուրկեան կայսրընտրութեան հետ միացուց, եւ
այսպէս Արուշի միապետութեան հիմ դրաւ:

135. ԹԻՒՍՈՍՏԸՆ. Ներքին վիճակ: Իւան Բ.

Աստիլեւիչ: Ըստ տէրութիւնը ԺԶ. դարուն սկիզբն
անանկ վիճակի մէջ կը գտնուէր, որ ամենեւին եւ ոչ
մէկուն մտքէն կրնար անցնիլ թէ մէկ երկու դար ետ-
քը ան աստիճանի բարձրութեան պիտի հասնի: Նոյն
իսկ Իւան Ը. (Գ) Աստիլեւիչ բոլոր տէրութիւնն իր
իշխանութեան տակ միացրնելէն եւ Մանկոյները մեր-
ժելէն ետքն ալ (Նախաշ. 60), երկրին ներքին հան-
դամանքներն անանկ յառաջադիմութեան ակնկալու-
թիւն չէին կրնար տալ. որովհետեւ կերպով մը դրե-
թէ Ղեհաստանի գտնուած վիճակին մէջ էր, մանաւ-
անդ որ Ռուսք գեւ Ղեհաց քաղաքակրթութենէն շատ
հեռու էին: Բայց հոս քաջ ու զօրաւոր վեհապետ մը,
որն որ Աւարոս Մեծին արժանաւոր նախորդ մը կրնայ
սեպուիլ, հզօր բազկաւ՝ թէ որ ամէն բան մէկէն շխ-
խեց նէ, գոնէ անկարգութեանց ամենամեծ աղբիւրը
գոցելով, հետեւեալ յառաջադիմութեան հիմը դրաւ
եւ իր յաջորդաց գործքը շատ դիւրինացուց: Ըստ վեհա-
պետն էր Իւան Բ. (Գ) Աստիլեւիչ, վերոյիշեալ Իւան
Ըին թողը, որն որ աղայութեան հասակին մէջ իր
Աստիլե Գ. հօրը յաջորդելով (1533), տասնուչորս
տարւան հասած ատեն՝ փառասէր ու զօրաւոր նախա-
բարներուն իշխանութիւնը զուպեց. եւ թէպէտ խիստ

ու շատ հեղ նաեւ անագորոյն միջոցներով, բայց միանգամայն զօրաւոր ու խոհեմ կերպով սկսաւ իր իշխանութիւնը վարել (1544): Ստոյգ է՝ իր Եւրոպական դրացեաց հետ բրած պատերազմներուն մէջ մեծ յաջողութիւն չունեցաւ. բայց ասոր հակառակ ուրիշ կողմերն իր զէնքերը գրեթէ միշտ յաղթութեամբ պատկուեցան. Թաթարաց՝ Խազանու (1552) եւ Աթտերխանի (1554) զօրաւոր տերութիւններն իր իշխանութեան տակ մտան. եւ Չերքէզիստան մինչեւ Կաւկասեան լեռներն իրեն հպատակեցան: Իր մեռած տարին նաեւ Սիպիւրիայի աշխարհակալութեան սկիզբ եղաւ (1584): Բայց Իւան Բ. իր մտադրութիւնը՝ միայն Թաղաւորական իշխանութիւնը մեծցընելու եւ իր տերութեան սահմաններն ընդարձակելու վրայ շէր դրած. նաեւ երկիրը ներքուստ կարգաւորելու եւ յառաջագիժմութեան ընթացքի մէջ խոթելու փոյթ տարաւ: Երկրին հին օրէնքները հաւաքել ու նոր օրէնքներ աւելցընելով՝ կարգաւորել տուաւ. ուրիշ տեղերէն այլեւայլ կարգի արուեստաւորներ ու դիտուններ բերել տուաւ, եւ Սգրելից ըսուած թիկնապահներու գունդը հաստատելով, ստրի վրայ միշտ քաջ ու կրթուած զօրք ունեցաւ:

136. Ռուսիոյ կեանքը կը սպառի: Պորիս: Իր մահուրէ կտրը (1584, Մարտ) տեղն անցաւ երկրորդ որդին Ֆէոտար Ա. որն որ տկար իշխան մ'ըլլալով, հայրը տակաւին մնացած նախարարներէն՝ քով տերութեան խորհուրդ մը դրած էր: Նոյն խորհրդին անդամներուն մէջ քիչ մը վերջը երկպառակութիւններ ու կռիւներ ելլելով, ստիպուեցան կառավարութեան սանձերը նոր Չարին Պորիս Կոտուսով աներորդւոյն ձեռքը թողուլ, որն որ անոր անուամբը սկսաւ տիրել: Ասիկայ ըստ ինքեան Իւան Բ.ին սկսածը յառաջ տանելու յարմար մարդ էր. եւ իրոք ալ կը տանէր, թէ որ տերութեան օգուար փնտտելու տեղ՝ ինք զինքն ու իր ցեղը Ռուսի գահին վրայ անցընելու ետեւէ չկոնար:

Իշխանութիւնը ձեռք բերելուն պէս՝ ամէն կերպ միջոցներով մեծամեծներն արքունիքէն հեռացուց եւ զԴեմար՝ Ֆէստորին պզտիկ եղբայրը մեռցրնել տուաւ (1591)։ Ինք իր նպատակին հասնելու յարմար պատրաստութիւնները տեսած ատեն, Ֆէստոր առանց զուկի մեռնելով (1598, Յունու.), որով եւ Ռիւբիգի ցեղը եօթը դարէն աւելի տիրելէն ետեւ (Նախաշ. 59) մտրելով, իր փառասիրութեան առջեւն արձակ դաշտ բացուեցաւ։ Ամէն զի անանկ աղէկ բռնած էր, որ ամենեւին իշխանութիւն մ'իրեն արգելք չէր կրնար բլալ. անոր համար ամենեւին առանց կասկածի մեծամեծներն ու ժողովուրդը կանչեց որ իրենց նոր Չար մը բնարեն։ Ամենէն յառաջ Ռուսիայի նոր պատրիարքը, որն որ Պորխին ձեռքովն իր աստիճանը ձեռք բերած էր, որովհետեւ անիկայ Առասանդնուպոլսոյ Երեմիա յոյն պատրիարքէն՝ Ռուսաստանի մէջ զատ պատրիարք մ'ունենալու իրաւունքը զնած էր (1589), զինքն անուանեց. եւ ամէնքն ալ անոր հետեւելով՝ քուէնին իրեն տուին։ Բայց Պորխ, որն որ ամէն բան ուղածին պէս կարգի դրած էր, անանկ ձեւացուց որ աս իրեն արուած իշխանութիւնը յանձն առնուլ չ'ուզեր։ Աւերջապէս ամիս մը ետքը իբր թէ ակամայ զիջանելով, աչք անկած թաղն ընդունեցաւ (1598, Փետր.), եւ անմիջապէս սկսաւ իր երկաթի գաւազանին տակ բուր Ռուսիա ու առանձինն մեծերը սաստիկ ճնշել, որմէ ստիպուելով՝ շատ մարդիկ կը ձգէին ասդին անդին կը ցրուէին։ Իր անազօրունութեանց գլխաւոր նպատակն եղած էին Ռոմանովի ցեղին իշխանները, որոնք Ռիւբիգեան տան հետ խնամութեամբ կապուած էին։ Բայց այնպէսով ալ ստորին ժողովրդեան հետ առատաձեռնութեամբ եւ արտաքին տերութեանց հետ բարեկամութեամբ ու շափաւորութեամբ վարուելով, քանի մը տարի կրցաւ իր աստիճանին մէջ մնալ։ Սակայն վերջապէս նեղի եկած՝ թունով ինք զինքը մեռցուց (1605, Ապր.)։

137. Սուտ Գեմետրներ: Ռոմանոֆ ցեղին զահելլիլը: Ասոր պատճառն ան էր, որ խարեբային մէկն ինք զինքը ֆէոտորին սպանուած Գեմետր եղբայրը ձեւացընելով, Լեհաց օգնական զօրօքն եկած Ռուսաստան մտած էր, եւ անդացիներէն շատ մարդիկ իր կողմը ձգած՝ զէպ ի մայրաքաղաք կը յառաջանար: Եւ թէպէտ Պորխին որդին, իր հօրը մահուրնէ ետքը, իրրեւ ֆէոտոր Բ. քիշ մը մարդիկներէ Չար հրատարակուեցաւ. բայց շուտ մը ամենէն թող արուեցաւ, եւ Գեմետր եկաւ Մոսկաւ մտաւ եւ հոն Չար պահուեցաւ: Ասոր սպանուելէն ետքը (1606, Մայ.) հեազհետէ ուրիշ երեք Գեմետրներ երեւան ելան (1607, 1609, 1613). եւ թէ իրենք, թէ Լեհաց ու Շուեաաց մէջ մտնելը՝ շխթութիւնները խիստ մեծցուցին: Նոյն երկու ազգերուն բաղձանքն ան էր որ իրենց թագաւորական անէն մէկը Ռուսիայի զահը նստեցընեն: Ռուք Լեհաց Սիկիզմունտ Գ. թագաւորին Վլատիզլաւ որդին իրենց Չար ընտրած էին. իսկ Շուեաի Կարոլոս Թ. թագաւորը, որն որ Նովկորտա քաղաքն առած էր, կ'ուղէր որ Ռուսի թագն իր երկրորդ որդւոյն՝ Կարոլոս Փիլիպպոսին անցընէ: Բայց նոյն Կարոլոս Թ. աս միջոցին մեռնելով (1611, Հոկտ.), Ռուք սգի առին, ստք ելան, զօրք կազմեցին եւ օտարները Մոսկաւի բերդէն ու բոլոր Ռուսաստանէն մերժեցին (1612): Անկէ ետքը եկեղեցականաց, ազնուականաց ու քաղաքացւոց պատգամաւորները ժողովուելով, միարան հաւանութեամբ Չար ընտրեցին զՄիքայէլ ֆէոտորովիչ Ռոմանոֆ, որն որ մօր կողմանէ իւան Բ.ին թոռն էր, չէ թէ միայն իր անձին համար, հապա նաեւ ժառանգական իրաւունքով իրենց թագն իրեն ու իր զուկըներուն տալով (1613, Փետր.): Ասանկով երկիրը վերջապէս խաղաղցաւ եւ նորէն սկսաւ իր յառաջագիմութեան ընթացքը շարունակել:

138. Լիւսնիայի քաղաքական հանգամանքները: Նոյն պատահին պատճառաւ եղած պատերազմներուն սկզբնաւորութիւնը: Գանք Հիմայ Լիւսնիայի պատճառաւ եղած կռիւներուն եւ հիւսիսային տէրութեանց իրարու հետ ունեցած յարաբերութիւններուն: — Լիւսնիայի (Գուրլանտիայի եւ Սեմկալէնի հետ) քաղաքական հանգամանքները՝ Պրուսիայիններուն շատ նման էին (133): Քանի մը դար յառաջ Սուսերակրաց¹ կարգին ասպետները աս երկրին տիրած ու քրիստոնէութիւնը խոթած (1205), բայց թիչ մը ետքը Տեւտոնեան կարգին հետ միացած էին (1238): Սակայն ԺԶ. դարուն սկիզբները առաջին կարգին կարգապետը Վալդէր Բլեզզենպերկցին ստակ տալով՝ իր կարգը Տեւտոնեան կարգէն նորէն անկախ բրած էր (1521) . եւ բողոքոլութիւնն իր երկիրներուն մէջ տարածելով, նոյն պատրուակաւ չէ թէ միայն ինք զինքն անոնց տէր բրած, հապա նաեւ Ռիկա քաղաքն ու անոր արքեպիսկոպոսութիւնը յափշտակած էր: Միայն թէ ինք Տեւտոնեան կարգին կարգապետին պէս իր կարգին երկիրները կերպապէս աշխարհականացուցած եւ ժառանգական դքսութեան դարձուցած չէր: Յառաջագոյն յիշատակեցինք (124) Ռուսիայի Իւան Ա. Վասիլեւիչ Չարին՝ առաջին անգամ Լիւսնիայի վրայ յարձակին ու իրեն հետ յիսուն տարւան զինադադար դրուելը (1503): Արդ աս զինադադարին ժամանակը լմրննալու վրայ բլլալով, Սուսերակրաց կարգապետն ու Իւան Բ. Վասիլեւիչ սկսան նորէն բանակցիլ (1553): Սակայն բան մը չկրնալով զլուխ հանել, Չարը բանակով մը Լիւսնիա յարձակեցաւ (1558), եւ սաստիկ կտորածով ու աւարաութեամբ երկրին մեծ մասին տիրեց: Աս տեսնելով տեղւոյն խոնարհագոյն իշխանները սկսան իրենց իշխանութեան սահմանները ծախել. Գուրլանտիայի եւ Էօզէլի Յովհաննէս Միւնխհազէն բողոքոլ կախկոպոսն իր երկիրները Գանիայի ծախեց

¹ Porte-glaives.

(1559). ասոր օրինակին հետևեցաւ Ռեւալի եպիսկոպոսն ալ: Ասոր վրայ Գանիայի Փրեզերիկոս Բ. թագաւորին Մազնոս եղբայրը, զօրքով եկաւ եւ ինք զինքը վերոյիշեալ տեղերուն եպիսկոպոսն անուանեց. տակայն միայն Իօզէլի եւ ուրիշ քանի մը մանր տեղերու կրցաւ իրօք տիրել: Արդէն յառաջագոյն Աթհարա-Քեզզէր՝ Սուսերակրաց կարգապետը, Լեհաստանի Սիկիզմունտ Բ. Աւգոստոս թագաւորին հետ բանակցելու սկսած ըլլալով (1559), անոր հետ վիշնայի գաշինքը դրաւ (1561, Նոյեմ. 28), որով բուն Լիւանիա Լեհաստանի հետ կը միանար, իսկ Գուրլանտիա ու Սեմկալէն՝ Լեհաց աւատապետութեան տակ ժառանգական դքսութեան մը պէս իրեն կը մնար: Ասկից զատ Իսթոնիա՝ Ռեւալ քաղաքին հետ՝ Շուետի անձնատուր եղաւ (1561):

139. Լիւոնիական պատերազմ: Գանիական-Շուետական պատերազմ: Շգեղզինի խաղաղութիւն: Քիվերովա-Հորգայի խաղաղութիւն եւ Բլուզամունտի զինազաղար: Ասանկով Լիւոնիա հիւսիսային երեք զլխաւոր տէրութեանց, այսինքն՝ Ռուսիայի, Լեհաստանի ու Շուետի համար կռուոյ նիւթ մ'եղաւ. եւ Չարին անոր վրայ բրած պահանջումներն ընդհանուր պատերազմ մը պատճառեցին, որուն մէջ՝ վերոյիշեալ տէրութիւններէն զատ՝ Գանիա ալ մտաւ: Ռուսիայի ու Լեհաստանի, ինչպէս նաեւ նոյն Ռուսիայի ու Շուետի մէջ պատերազմը սկսելով (1562), Լիւոնիա սաստիկ աւեր ու ապականութիւն կ'ըլլար: Նոյն միջոցին նաեւ Գանիա՝ Շուետի հետ պատերազմի բռնուեցաւ (1563), որով ցամաքային պատերազմին վրայ նաւական պատերազմ ալ աւելցաւ: Գանիայի ու Շուետի մէջ պատերազմ բացուելուն պատճառը կամ պատրուակը՝ հետևեալն էր: Գանիայի Քրիստիան Գ. թագաւորն իր զինանշանին վրայ երեք թագով վահանակ մ'աւելցուցած էր, յայտնելով որ աս բանս՝ միայն հիւսիսային (Սկանտինաւեան) երեք տէրու-

Թեանց ժամանակաւ մեկտեղ միացած ըլլալուն յիշատակը պահելու համար կ'ընէ, եւ ամենեւին ուրիշ նպատակ չունի: Կուստաւ Ա. Վազա առ մեկնութեամբ գոհ եղած էր. բայց իր Էրեբ որդին նոյն մեկնութիւնը բաւական չտեսնեց, որովհետեւ պատերազմի կը բաղձար, որուն համար ինք ալ սկսաւ երկրթագեան նշանակ գործածել: Քրիստիան Գ.ին յաջորդը Փրեզերիկոս Բ. սասոր գէմ բողոք ըրաւ. կամաց կամաց կռիւն այնչափ սաստկացաւ՝ որ վերջապէս պատերազմի սկսան: Եւ թէպէտ Գանիա եւ Հուեա իրենց ունեցած փոփոխ իրաւունքները կամ պահանջումները թող տալով, մէջերնին Շղեղդինի խաղաղութեան դաշինքը գրին (1570, Գեկա. 13). սակայն անանկով ալ Լիւսնիայի պատերազմը միշտ կը շարունակուէր: Ռուսք կը ջանային որ նոյն երկրին մէջ Գանիայի Մագնոս իշխանը թագաւոր դնեն՝ իրենց վերին իշխանութեան տակ: Վերջապէս Հուեա ու Լեհաստան Ռուսաց գէմ մեկտեղ դաշնաւորելով (1577), ետքինները ստիպեցան Լեհաց հետ՝ Քիվերովա-Հորդայի խաղաղութիւնը (1582, Յունու. 15), Հուեաաց հետ ալ Բլուզա-ժանտի զինադադարն (1583, Օգոստ. 10) ընելու. որով 25 տարւան պատերազմէ մը ետքը Ռուսք չէ թէ միայն Լիւսնիայի վրայ ըրած պահանջումներնէն ետ կեցան, հասպ նաեւ Գարեշիա դաւառն ալ Հուեաին թող տուին եւ ասանկով Արեւելեան ծովէն բոլորովին կտրուեցան:

140. Լեհաստանի եւ Հուեաի մէջ յաջորդութեան կռիւ: Ռուսական յաջորդութեան պատերազմ: Սգորպովայի խաղաղութիւն ու Տեիլիինդիի զինադադար: Աս կերպով թէպէտ Ռուսք մէջտեղաց քաշուելով, Լիւսնիայի խնդիրը յառաջուրէն աւելի պարզած էր, բայց բոլորովին լուծուած չէր. Լեհաց եւ Հուեաաց մէջ կատարեալ որոշում մ'եղած չըլլալով, առաջիններուն ձեռքը մնացած էր Լիւսնիա, իսկ վերջիններուն ձեռքը՝ Էսթոնիա. բայց երկու կողմն ալ

դր՛հ չէին ևւ միշտ շփոթութիւն ու երկպառակութիւն անպակաս էր: Նոյն միջոցին աս երկու տէրութեանց մէջ աւելի ևւս սաստիկ կռիւ մը փրթաւ, որն որ կրօնական հանգամանքներէն ու օտար տէրութեանց քաղաքականութենէն սնունդ զանելով, խիստ երկայնատեն տեւեց: Աս կռիւը՝ Լեհաստանին ընտրական միապետութիւն ըլլալուն առաջին պատուիներէն մէկը կրնայ սեպուիլ. որովհետեւ պատճառն ան եղաւ, որ Լեհք Շուեաի Զովհաննէս Գ. թագաւորին Աիկիզմունտ որդին թագաւոր ընտրեցին (129 եւ 132): Արդ աս իշխանը Շուեաի թագին ալ ժառանգ ըլլալով, նոյն ընտրութիւնը պատրաստութիւն մըն էր երկու այնպիսի տէրութեանց անբնական միաօրութեան, որոնք չէ թէ միայն իրենց աշխարհագրական դրիւքը, հապա նաեւ ազգայնութեան ևւ կրօնի տարբերութեամբ ալ, բնականապէս իրարմէ բաժնուած էին: Աւստի երբ որ Զովհաննէս Գ. մեռնելով (1592, Մայ.), իր Աիկիզմունտ որդին, Լեհաստանի թագաւորը, Շուեաի գահին վրայ ալ պիտ'որ ելլէր, անմիջապէս գրգռութիւններուն սիկըր եղաւ, մանաւանդ իր հօրեղորորր Աարոլոս իշխանին փառասէր դիտաւորութիւններովը (129), որոնց վախճանն եղաւ Աիկիզմունտին ու իր յաջորդաց՝ Շուեաի գահէն մերժուիլը, ևւ Աարոլոս Թ.ին ու իր զաւկրներուն՝ նոյն գահն անցնիլը: Բայց նոյն յաջորդութեան կռիւն ասով չվերջացաւ, հապա երկուքին զաւկրներուն ևւ Լեհաց ու Շուեաց մէջ վաթսուն տարիէն աւելի տեւեց, մինչեւ որ վերջապէս Օլիվայի խաղաղութեամբ (1660, Մայ. 3), ինչիրը Աարոլոս Թ.ին զաւկրներուն ու Շուեաներուն կողմն որոշուեցաւ, ինչպէս իր տեղը կը տեսնենք: — Սակայն իսկզբան երկու ազգերուն մէջ իրական պատերազմը կը խափանուէր Ռուսաստանի անտէրընչութեան կամ՝ գահակալութեան շփոթութիւններով, որովհետեւ ինչպէս վերը (137) տեսանք, թէ Լեհք ևւ թէ Շուեաք աշուրնին նոյն տէրութեան վրայ անկած էին,

երկուքն ալ ուղեւով անոր դահը ձեռք անցընել։ Ռուսք՝ Ռոմանովի աունը դահ հանելով՝ իրենց շխ-
թութիւնները վերջացընելէն ետեւ, Շուետաց ու Լե-
հաց հետ պատերազմ բրին, բայց երկուքէն ալ փա-
սով ելան։ Վասն զի Շուետք Սղորդովայի խաղաղու-
թեան դաշինքով (1617, Փետր. 27) Ինգլերմանիա
ու Գարելիա (Քերսհոլմ) առին։ Ասկից գրեթէ երկու
տարի ետքը Լեհաց հետ Մոսկաւի առջեւ, Տեւիլի-
նցի 14 տարւան զինադադարն բրին (1618, Գեկտ.
11), որն որ ետքը Վիսամայի խաղաղութեան դաշանց
փոխուեցաւ (1634, Յունիս 15), որով թէպէտ Լեհք
Ռուսիայի դահին վրայ բրած պահանջումներնէն հրա-
ժարեցան, բայց Սմոլենսք իր սահմաններովը, Սեւերիա
ու Չեռնիքով իրենց ձեռքը մնաց։ — Աս կերպով
Լեհք եւ Շուետք Ռուսաց պատերազմէն ազատնուն
պէս, իրարու հետ զարնուելու սկսան։ Բայց ասիկայ
գալ ժամանակի միջոցին կը վերաբերի (208)։

ԵՐԿՐՈՐԳ ՄԻՋՈՅ ԺԸՄԸՆԸԿԻ

Գ. ԳԸՂԹԸԿԸՆՈՒԹԵԸՆՑ ՊԸՏԻՈՒԹԻՒՆ

(1555—1618)

141. Ընդհանուր տեսութիւն: Արտապաշտոնային զաղթականութեանց կերպարանքը, ինչպէս նաեւ անոնց հետ կապուած համաշխարհական վաճառականութիւնը, առ ժամանակի միջոցին մէջ մեծ փոփոխութիւններ կրեցին: Աս փոփոխութեանց գլխաւորարար առիթ առաւ Սպանիային՝ նոյն նկատմամբ առանձին մնալ եւ կամ զաղթականութեանց մենավաճառութիւն ընել ուղիւր, որն որ նախ ուրիշ աղիւրը նախանձի գրգռեց եւ ետքը պատերազմի պատճառ եղաւ: Աս ժամանակի միջոցին, Ա. Արեւելեան Հնդկաստանի մէջ Բորգուկայցոց զաղթականութեանց շինուածքը կործանեցաւ, ուր որ անոր հակառակ Բ. Հոլանտացիք իրենցը հաստատեցին եւ համաշխարհական վաճառականութիւն իրենց ձեռքն առին. Գ. Անգլիացիք առ մերջիններուն դէմ նախանձելու եւ անոնց հակառակ ելլելու սկսան. Գ. Արտոնացեալ մեծամեծ առևտրական ընկերութիւններ գրուելով, շէ թէ միայն վաճառականութիւնը, հապա նաեւ զաղթականութիւններուն քաղաքականութիւնը բոլորովին նոր կերպարանք առաւ:

142. Արեւելեան Հնդկաստանի մէջ Բորգուկայցոց իշխանութեան նուազիլն ու ասոր պատճառները: Արիշ մէկ երկու տեղ իրենց ստացուածները կ'ածին: Արեւելեան Հնդկաստանի մէջ Բորգուկայցոց ունեցած իշխանութեան անկումն արդէն շատոնց ներքին պատճառներով պատրաստուած էր. արտաքին պատճառները՝ նոյնը միայն շուտուցին: Կործանման ներքին գլխաւոր պատճառներէն մէկն էր ընդհանրապէս բարոյականութեան ապականութիւնը, որով բարձր աստիճանի մարդկան մէջ յառաջուան գիւցա-

զնական օգին ու հայրենասիրութիւնը բոլորովին մարած էր, ու բնչասիրութիւնն եւ ուրիշ ամօթալի կիրքերը՝ որոնք Հնդկաստան հասարակ էին, Բորգուկայցոց անունն իսկ նոյն տեղերն ամենուն ատելի բրած էին։ Որովհետեւ ամէն թէ բարձր եւ թէ ստորին պաշտօնատարք իրենց համար հարստութիւն ժողվելու ետեւէ կ'իյնային եւ ոչ որ տերութեան օգտին կը նայէր, բաները շուտ մը ան աստիճանի հասան, որ Հնդկաստանի պէս բարեբեր ու ամենահարուստ երկիր մը Բորգուկալի թագաւորութեան տելի ծախուց՝ քան թէ շահու աղբիւր մ'եղաւ։ Բայց աս ալ շիկրնար ուբացուիլ որ նոյն իսկ տեսչութեան կարգաւորութեանց մէջ եղած պակասութիւնք ալ՝ նոյն կործանումը պատճառեցին։ Հնդկաստանի տեսչութեան մէջ Բորգուկայցոց ունեցած պակասութիւններն ասոնք կ'երեւան. Ա. Փոխարքայք, ինչպէս ուրիշ տեղ յիշատակած ենք (ՏԱ), խիստ յաճախ, դժնէ երեք տարի մէյ մը կը փոխուէին, եւ աս փոփոխման հետ հասարակօրէն կապուած էր ուրիշ շատ պաշտօնատարաց փոփոխութիւնն ալ։ Ասանկով իբր թէ պաշտօններն երեք տարւան հասութի պէս քան մը կ'ըլային, եւ ամէն պաշտօնատար կը ջանար նոյնչափ ժամանակուան մէջ բոլոր կենացը համար մեծ հարստութիւն ժողվել։ Բ. Փոխարքայից իշխանութիւնն երթալով աւելի չափաւորեցաւ, որն որ ըստ մասին անկից յառաջ կու գար, որ իրենց քով խորհուրդ մը դրուած էր, եւ ըստ մասին անկից՝ որ բոլոր երկիրն երեք իրարմէ անկախ կառավարութեանց բաժնուած էր, որոնք էին Մանմադարա, Հնդկաստան ու Մալազգա։ Գ. Թէ քաղաքային եւ թէ զինուորական պաշտօնատեսարք վաճառականութիւն բնելու հրաման ունէին, որն որ կամաց կամաց մենավաճառութեան դարձաւ, ան ալ խիստ բռնաւորական կերպով։ Գ. Գատատանարանները խիստ անպիտան կերպով կարգաւորուած էին, վերին ատեանը՝ քիչ բացառութեամբ՝ միշտ վերջին վճիռը կու տար։ — Աս ներքին

պատճառներուն վրայ արտաքին պատճառներ ալ աւելցած էին, նոյն խիչ Հոլանտացւոց հսն գալէն յառաջ: Հաս կողմեր տեղացի իշխանաց հետ դրեթէ մշանջնաւոր պատերազմի մէջ էին, եւ տեղ տեղ հաղիւ մեծ դժուարութեամբ կրնային իրենք զիրենք անոնց դէմ պաշտպանել: Բորդուկալացոց Հնդկացին ստացուածներուն վերջին հարուածը տուաւ Բորդուկալին՝ Սպանիայի հետ միանալը (86), որովհետեւ ան ժամանակէն վեր չէ թէ միայն նոյն գաղթականութիւնները շատ անհոգութեամբ կը նայուէին, հապա նաեւ Սպանիացւոց թշնամիներուն թշնամութեանց ու յարձակմանց տակ կ'իյնային: Նոյն միաւորութեան հետեւութիւնները շուտով զգաց Պրազիլիա ալ. վասն զի Անգղիական ծովահէններուն նպատակն եղաւ: — Արնայ բառիլ որ Բորդուկալացոց աս ժամանակի միջոցին մէջ ձեռք բերած միակ ծանրակշիռ ստուացուածքն եղաւ ճենաստանի մէջ Մագաոց (1585), զորն որ ծովահէններուն դէմ ճենաստանցոց բրած ծառայութիւններնուն համար ընդունեցան, եւ որն որ իրենց խիստ օգտակար էր՝ ճենաստանի եւ մանաւանդ Ճարոնի հետ իրենց բրած վաճառականութեան համար միջին տեղ մ'ըլլալով: Իսկ Ափրիկէի մէջ Գանկոց եւ Անկոլա նուաճեցին (1578):

143. Սպանիացւոց գաղթականութիւններն ու իրենց նոր մրցակիցները: Սպանիացւոց գաղթականութիւնները խիստ մեծցան ու շահարեւր եղան՝ չէ թէ միայն Բորդուկալի ստացուածները ձեռք բերելով, հապա նաեւ Արեւելեան Հնդկաստանի մէջ Փիլիպպեան կղզիներն առնելով (1564): Նոյն կղզիները՝ մէկ կողմանէ Հնդկաստանի ու ճենաստանի, մէկալ կողմանէ ալ՝ Մեքսիկոյի ու Բերուի միջտեղը, իրրեւ կապակցութեան միջոց, ինչ մեծ օգուտներ չէին կրնար յառաջ բերել, թէ որ վաճառականութեան դրուած շափառութիւններով ու կապերով շխափանուէին: — Բացքերը որ իրենք աս կերպով՝ Բորդուկալի գաղթականու-

Թիւններն ալ ձեռք անցրնելով, թէ Հնդկաստանի եւ թէ Ամերիկայի ու անոնց ծովերուն բոլոր տէրութիւնն իրենց սեպհականեւ կ'ուզէին, մէկալ կողմանէ երկու նոր ազգեր, այս ինքն՝ Հոլանտացիք եւ Անգղիացիք, իբրեւ մրցակից դուրս ելլելով, իրենց ձեռքէն ան բանն առին, որն որ ըստ բնութեան իրաց՝ շէր կրնար երկայն ժամանակ միայն մէկ ազգի ստացուած մնալ:

144. Հոլանտացւոց՝ համաշխարհական վաճառականութեան ձեռք զարնելն եւ նոյնին մէջ ըրած յառաջագիտութեան պատճառները: Հոլանտացիք արդէն Սպանիացւոց հետ պատերազմած ատեննին՝ կրցած էին համաշխարհական առուտուրք ձեռք ձգել. եւ շուտ մ'իմանալով որ Հնդկաստանի վաճառականութիւնը նոյն տուրեւառին գլխաւոր ծիւղն է, ուղեցին անոր վրայ տիրել: Աս բանիս շուտով գլուխ ելլելուն մեծապէս օգնեց Փիլիպպոս Բ.ին անոնց վաճառականութեան դրած արգելքը: Հոլանտա (Ստորին Նահանգները) Եւրոպայի մէջ զաղժականութեանց վաճառականութեան երկրորդ նիստն էր, եւ ապստամբութեան առաջին տարիները՝ անոր առաջին նստին (Սպանիայի) հետ առեւտրական հաղորդակցութիւնը կարուած շէր: Բայց Փիլիպպոս Բ. նոյն հաղորդակցութիւնն արգելելով, Հոլանտացւոց առիթ ու գրգիռ տուաւ ետեւէ իյնալու որ առաջին նիստը թող տարով՝ բուն ազդիւրին երթան եւ իրենց երկիրն առաջին նիստն ընելու ջանան, որն որ իրօք ալ կրցան գլուխ հանել: Իսկզբան ուղեցին հիւսիսային արեւմտեան կողմանէ նոր ճամբայ մը դտնել, եւ երեք անգամ պարագ փորձեր բրին (1594, 1596, 1597), որոնց միակ օգուտը՝ Շիլիցպերկի դիւան եղաւ: Բայց նոյն միջոցին Առանելիս Հուզման առաջին անգամ Բարեյուսոյ հրուանդանէն անցնելով, ճաւազնաց ու ետ դարձաւ (1595, Ապր. — 1597, Օգոստ.): Այսպէս աղէկ յաջողութիւն ունենալն անմիջապէս ընդհանուր գրգիռ մը պատճառելով, ամէն մարդ սկսաւ ջանալ որ

նոյն վաճառականութեան մէջ մասն ունենայ, որով շուտ մը մէկ քանի ազատ ընկերութիւններ կազմուեցան: — Այնպէս սաստիկ պատերազմի ատեն Հոլանտացւոց վաճառականութեան ասանկ ծաղկելուն երեւոյթը մեկնել կրնալու համար, պէտք է միտ դնել, որ Ա. Հոլանտայի քաղաքներն արդէն շատնցուրնէ Եւրոպայի թէ արեւելեան եւ թէ արեւմտեան կողմերը խիստ շահաբեր առեւտրական նաւազնացութիւններ կ'ընէին եւ միանգամայն ձկնորսութեան մէջ ալ նշանաւոր էին: Իսկ հիմայ Բ. Ծովական մութայիկներուն ասպատակութիւններովը՝ մէջերնին բախտախնդրութեան սաստիկ հոգի մը գրգռուած էր, մանաւանդ երբ որ Սպանիացւոց ծովու վրայ ունեցած տկարութիւնն իմացան: Գ. Վիսպոնի նաւահանգիստը Հոլանտացւոց առջեւը գոցուելով (1594), ստիպուած էին կամ Հնդկաստանի վաճառաց շահաբեր առուտուրը բոլորովին թող տալ, կամ զանոնք անձամբ Հնդկաստանէն բերել: Գ. Վերջնապէս Բեղղիական դաւառներէն շատ դրամատեարք Բատաւեան դաւառներն անցան:

145. Հոլանտացւոց Արեւելիան Հնդկաստանի ընկերութիւնը: Վերոյիշեալ ազատ ընկերութիւնները շուտ մը միանալով, Հոլանտացւոց Արեւելեան Հնդկաստանի ընկերութիւնը կազմուեցաւ (1602), որն որ մեծ մտադրութեան արժանի է: Ստոյգ է՝ նոյն իսկ իրաց բնութիւնն անանկ կը պահանջէր որ աս զօրաւոր ընկերութեան գործունէութեան սահմանն երթալով աւելի մեծնայ ու կերպաւորուի. բայց եւ այնպէս իր սահմանադրութեան զիստաւոր հիմունքն արդէն իսկզբան գրուած էին: Նոյն ընկերութիւնն, իր առաջին արտօնութեանց համեմատ, որոնք ետքէն շատ անգամ նորոգուեցան ու ժամանակն երկրնցաւ, իսկզբանէ չէ թէ միայն առեւտրական, հապա նաւաքաղաքական մարմին մը պիտի կազմէր, առաջին նկատմամբ բոլորովին ազատ, իսկ վերջին նկատմամբ՝ միայն ընդհանուր կարգաւորողոյն անընդմիջական իշխանութեան տակ ինկած ըլլալով, ան ալ գրեթէ անուամբ միայն: — Աս ընկերութեան արուած իրաւունքներն ու արտօնութիւններն ասոնք էին. Ա. Բարեկուսոյ հրուանդանին եւ Մակելլանի անցքին

անդիլի կողմը Հոլանտացւոց բրած առուարին մենալաճա-
 առութիւնը: Բ. Հնդկաստանի բոլոր քաղաքական գործա-
 զութեանց ու գաղթականութեանց վրայ իրաւունք՝ միայն
 ընդհանուր կարգաժողովոյն անուամբը: — Ընկերութեան
 դրամագլուխը՝ որ 6½ միլիոն ֆիորին էր, բաժնորդութեամբ
 ժողովեցաւ եւ վեց սենեկի բաժնուեցաւ, բայց այնպէս որ
 միայն Ընդերտամի սենեակը բոլորին կէսը պիտ'որ ունե-
 նար, իսկ Չէէլանտինը՝ մէկ քառորդը: Հոլանտայի մէջ
 ընկերութեան կառավարութիւնը պիտի ընէր տասնուեօթը
 վերակացուներու խորհուրդը, իսկ նոյն խորհրդականները
 պիտի ընտրուէին առանձնական սենեակներուն վախժուան
 վերակացւոց մեծ խորհրդէն. նոյն եօթնեւտասնից խոր-
 հրդէան ձեռքը պիտ'որ ըլլար իրենց իրողութեանց վերին
 վարչութիւնը: Իսկ իւրաքանչիւր սենեակ իր առանձին ի-
 ռողութիւնները պիտի հոգար, իր հաշուին նաւեր պիտի
 հանէր, պիտի գնէր ու ծախէր: Ասոնք՝ Հոլանտայի մէջ.
 իսկ Հնդկաստանի մէջ (1610էն վեր) ընդհանուր կառա-
 վար մը կը կենար, որն որ քաղաքական ու զինուորական
 գլուխ էր եւ իր քովն ունէր Հնդկաստանի խորհուրդը,
 որուն խորհրդականներէն կ'առնուէին թէ՛ առանձնական
 կառավարներն ու թէ՛ ընդհանուր կառավարը: Յայտնի է
 որ առանձնական կառավարաց թիւը՝ աշխարհակալութեանց
 ընդարձակուելուն համեմատ պիտի աճէր: Ասոնցմէ զառ
 ընկերութիւնը քանի մը սկզբունք ունէր, որոնց ճշգիւ
 պահպանուելուն վրայ մեծապէս կը հակէին եւ որոնցմով
 զինուորարար ընկերութիւնն այնչափ մեծցաւ ու պայծա-
 րացաւ: Նոյն սկզբանց երեւելիներն ասոնք էին. մենալա-
 ճառութեան խիստ պահպանութիւն. պաշտօնատարաց վրայ
 սաստիկ հսկողութիւն. նոյն պաշտօնատարաց իրենց առ-
 անձնական հաշուին առուտուր ընելու խիստ արգելք. պաշ-
 տօնատարները՝ միայն ըստ արժանեաց յառաջ վարել ու
 մեծցընել. անոնց թոշակները ճշգիւ վճարել:

146. Հոլանտացւոց գաղթականութիւնները:

Հոլանտացւոց Հնդկաստանի մէջ հաստատուելուն գա-
 լով, իսկզբան աշուրնին կղզիներու դարձուցին, որոնց
 մէջ ամենէն յառաջ Մոլուդեան եւ Սունտայի կղզիներ-
 րը ձեռք անցուցին: Նոյն ատենէն Ճաւայի վրայ Բա-
 տաւիա քաղաքն իրենց Հնդկական իշխանութեան մի-
 ջնախորհրդի ըլլալու որոշուած էր: Իրենք Հնդկաստան գա-
 լէն խել մը ատեն կտրքը հաստատուեցան նոյն կղզւոյն

վրայ (1618), որ որ Եազարա քաղաքն առնելով՝ կործանեցին ու անոր տեղը Բատախա քաղաքը կանգնեցին (1619): Ետքն ալ գրեթէ միշտ կղզիներու վրայ հաստատուելով, ազատ մնացին Հնդկաստանի ցամաք երկրին վրայ պատահած բազմաթիւ յեղափոխութիւններէն. բայտ ինքեան ալ նոյն ցամաք երկրին վրայ ան ստեղծները Մանկոլեան տէրութիւնն անանկ զորաւոր էր՝ որ ան տեղերն աշխարհակալութիւն ընելը խիստ դժուար էր: Եւ թէպէտ Հոլանտացիք ձեռուրնին զէնքով Հնդկաստանի մէջ հաստատուեցան. բայց նոյն գործողութիւնը շատ դիւրինցաւ Բորգուկայցոց գէժ ընդհանուր ամէն տեղ եղած ատելութեամբ: Այսպէսով Հոլանտացւոց վաճառականութեան ու գաղթականութեան շքեղ շինուածքը գրեթէ բոլոր իր մասերովը նոյն ստեղծ կանգնուեցաւ. բայց կատարեալ լիննալը՝ հետեւեալ ժամանակի միջոցին գործն եղաւ:

147. Ընդդիացւոց տիեզերական վաճառականութեան առաջին փորձերն ու նաւայնացութիւնները: Ընդդիա ալ Եղիսարեթ թագուհւոյն ստեղծ սկսաւ համաշխարհական վաճառականութեան ետեւէ իյնալ: Արդէն քանի մը դարէ վեր մտաւոր երկիրներու հետ մեծ շահով վաճառականութիւն ընելով, բնական բան էր որ Ընդդիացիք հիմայ հեռաւոր գաւառներու հետ ալ առուարի ձեռք զարնելու ջանք ընէին: Ռուսաստանի վրայէն Պարսկաստանի հետ սկսուած վաճառականութիւնն իրենց տեսութեան շրջանն ընդարձակեց: Ընդդիացիք Ռուսաստանի հետ Աբրանկէլի վրայէն վաճառականութիւն ընելու սկսան (1553), եւ Կասպից ծովուն վրայէն՝ մինչեւ Պարսկաստան, մանաւանդ թէ մինչեւ Հնդկաստան կ'երթային: Բայց Սպանիացւոց ու Բորգուկայցոց՝ Հնդկաստանի եւ Ամերիկայի ծովերուն առանձին տէր մնալ ուզելը եւ մանաւանդ անոնց ձեռք բերած մեծ գանձերը զիրենք գրգռեցին միեւնոյն ճամբան բռնելու: Արդէն շատոնց սկսած էին իրենց ծովահէնները Սպանիացւոց՝ հարուստ վաճառքներով նոյն

կողմերէն զարծող նաւերը բռնելու եւ աւարելու: Իրենց Տրէքը նաւապետն առաջին անգամ աշխարհքիս շորս կողմը նաւազնացութիւն մ'ըրաւ (1577—1580). իսկ առաջին անգամ Բարեկուսոյ Տրուանդանէն անցնելով՝ զէպ ի Հնդկաստան երթալնին տասը տարի մ'եարն եղաւ (1591): Բայց Անդղիայի մէջ ալ արտաքին հեռաւոր վաճառականութեան հոգւոյն արթննալովը՝ նաեւ մենափաճառութեան հոգին արթննցաւ. եւ նոյն մենափաճառութեան արտօնութիւնն առանձին բնկերութիւններու տալու մէջ զուցէ մէկը Եղիսարեթ թագուհւոյն շափ առատաձեռն եղած չէ: Արտաքին վաճառականութեան ամէն մէկ զխաւոր ճիւղը՝ մասնական բնկերութեան մը արուած էր. ասանկով հետզհետէ հիմնուած էին Ռուսական, Ափրիկեան, Տաճկական (Արեւելեան) բնկերութիւնները, իսկ Եւրոպայի ցամաք երկրին համար՝ Փախտախնդիրներու բնկերութիւնը (1554—1581): Ըստ ամենայնի սա հոգւոյն համեմատ էր որ Արեւելեան Հնդկաստանի վաճառականութիւնն ալ առանձին բնկերութեան մը արուի, ինչպէս իրօք ալ եղաւ (1600, Գեկա. 31). բայց սա բնկերութեան նպատակն ալ՝ վերոյիշեալներուն պէս՝ միայն առեւտրական պիտ'որ ըլլար եւ ոչ թէ քաղաքական ալ միանգամայն: Աս Անդղիայոց Արեւելեան Հնդկաստանի բնկերութիւնը, Հոլանտացւոց համանուն բնկերութեան պէս, Բարեկուսոյ Տրուանդանին մէկալ զին եղող բոլոր ան երկիրներուն մենափաճառութեան իրաւունքն առաւ, որոնք տակաւին Եւրոպական ուրիշ տերութեան մ'իշխանութեան տակ չէին մտած: Ընկերութիւնը հաստատուելուն պէս՝ Լանդասդէրի առաջնորդութեամբ՝ առաջին ճամբորդութիւնն եղաւ զէպ ի Սումատրա եւ Ջաւա (1601), եւ նոյն կողմններուն վրայ Ա. Բեմի ու Պանդամի մէջ տիրող իշխաններուն հետ վաճառականութեան զաշինք դրուեցաւ: Բայց Անդղիայիք նոյն երկու տեղերը եւ ուրիշ քանի մը կողմ՝ միայն առեւտրական գործակալութեան աներ

ունենալով եւ ամենեւին ամբողջի տէր չըլլալով, Հոյն-
տացւոց հետ շէին կրնար մրցիլ, ճանաւանդ Մոլուզեան
կողմաց վրայ, որոնք երկու ազգերուն ալ հասարակաց
նպատակն էր: Աստի եւ Անգղիական ընկերութեան
գործքերը շատ երկայն ժամանակ խիստ սահմանուոր
չափու մէջ մնացին:

148. Անգղիացւոց Հիւսիսային Ամերիկայի
մէջ հաստատած գաղթականութիւնները: Միեւնոյն
ժամանակի միջոցին մէջ Անգղիացիք նաեւ Արեւմտեան
կողմերը գաղթականութիւններ հաստատելու սկիզբ բ-
րին, որոնք եթէ յաջողէին, իբրեւ մշակական գաղթա-
կանութիւնք՝ պէտք էր որ Հիւսիսային Ամերիկայի ծով-
եզոնները հաստատուած գաղթականութիւններէն բո-
լորովին տարբեր կերպարանք մ'ընդունէին: Նոյն տե-
ղերուն թէ երկրին եւ թէ բնակիչներուն վայրենու-
թեան կողմանէ գիմացնին ելած մեծ դժուարութիւն-
ները՝ հազիւ մեծ հաստատութեամբ ու յարատեւու-
թեամբ կրնային յաղթել. բայց առ հանգամանքներով
միայն՝ կրնայ դարերով տեւելու շինուածներուն հիմ
դրուիլ: Աղիսարեթ թագուհւոյն ատենէն սկսած էին
Անգղիացիք սսկի եւ արծաթ բուսցրնող երկիրներ
գտնելու համար զանազան ճամբորդութիւններ ընել,
որոնցմէ յառաջ եկած հետեւութիւններուն գլխաւո-
րը կրնայ սեպտիլ՝ ի պատիւ նոյն թագուհւոյն Ալբր-
գինիա կոչուած երկրին գիւտը (1585): Յակոբ Աին
ժամանակը, Սպանիայի հետ խաղաղութիւն ըլլալէն
ետեւ, նոյն նպատակաւ արտօնացեալ ընկերութիւն-
ներ դրուեցան, որոնցմէ մէկը Ալբրգինիայի մէջ ճեմն-
գան քաղաքին հիմք դրաւ (1607): Նոյն երկիրը քա-
նի մը տարի վերջը սկսան ծխախոտ անկել եւ դրսէն
գերիներ բերել (1616): Բայց ընկերութեան ծնշման
տակ գաղթականութիւնը չկրնալով յառաջ երթալ,
բնակիչք քիչ մը վերջը իրենց համար ընդհանուր ժո-
ղովք եւ նոր սահմանադրութիւն մը դրին, Անգղիայի
սահմանադրութեան նման (1619): Ասկից քանի մը

տարի ետքն ալ թագաւորին եւ ընկերութեան մէջ
վէճ մ'ելլելով, բոլորովին ջնջուեցաւ (1624):

149. Հոլանտացոց եւ Անգղիացոց գաղթա-
կանութիւն հաստատելուն ընդհանուր հետեւութիւնը:
Թեպէտ եւ Անգղիացոց առ փորձերը՝ տկար սկզբնաւո-
րութիւնք էին, բայց եւ այնպէս Հոլանտացոց բրաժ-
ներուն հետ միանալով, Ապստիացոց եւ Քորդուկալ-
ցոց՝ բոլոր ծովերու վրայ առանձին իրաւունք ունենալու
պահանջմանց վերնալուն կ'օգնէին, եւ նաւազնացու-
թեան ազատութիւնք կը հաստատէին: Աւստի եւ ա-
սանցմով ապագայ քաղաքականութեան համար ընդար-
ձակ դաշտ կը բացուէր. բայց նոյն ատեն առ գաղթա-
կանութեանց՝ քաղաքականութեան վրայ բրաժ ազդե-
ցութիւնք մեծ բան չէր կրնար բլլալ, որովհետեւ բոլորն
ալ առանձնական ձեռնարկութիւնք էին, որոնց՝ կա-
ռավարութիւնները կը հաւանէին, բայց զրեթէ օգնու-
թիւն մը չէին ըներ: Աբայէն շատ ժամանակ անցնելէն
ետեւ՝ հազիւ սկսան տերութիւնք գաղթականութիւն-
ները մեծ բանի տեղ գնել եւ անոնց մէջ եղած ասպա-
տակութիւններուն կամ թշնամութիւններուն պատ-
ճառաւ՝ իրենք իրարու հետ պատերազմ ընել:



ԵՐՐՈՐԳ ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ

Ա. ԳԵՐՄԱՆՆԻԱՅԻ ԵՐԵՍՆԱՄԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(1618—1661)

(ՀԱՐԱՆԱԿԻՆ ԵՒ ԲԱՐՈՒԹՅԱՆՔ)

150. Աս ժամանակի միջոցին կերպարանքն ու հոգին: Արեւնամակայ պատերազմաւ՝ Գերմանիա բովանդակ Եւրոպայի քաղաքականութեան միջախցին եղաւ, եւ բոլոր Եւրոպական տէրութեանց շահերն իրարու հետ խառնուեցան կամ հիւսուեցան, միայն Անգղիա դուրս մնալով, որն որ իր ներքին շփոթութեանց պատճառաւ՝ երկայն ժամանակ առանձին ու կզգիացեալ կեցաւ: Աս ժամանակի միջոցին մէջ ալ կրօնական ու քաղաքական խնդիրներն իրարու հետ միացեալ մնացին. վասն զի պատահած շփոթութիւնները՝ դարձեալ ըստ մեծի մասին նորազանգութենէն ծագեցան, աս տարրերութեամբ որ եթէ անցեալ ժամանակի միջոցին՝ առանձին առանձին տէրութեանց վրդովելուն պատճառ եղան նէ, աս ժամանակի միջոցին՝ Եւրոպայի տէրութեանց դուստրութիւնն ընդհանրապէս տակնուվրայ բրին, անոր համար ալ աւելի եւս ընդհանրազոյն հետեւութիւններ ունեցան: Աս ընդհանուր շփոթութիւնը՝ ստոյգ է՝ զրեթէ միեւնոյն սկզբնէ յառաջ կու գար, բայց այլեւայլ նկատմանքով կամ նպատակաւ. անոր համար ալ Արեւնամակայ պատերազմն խկզրանէ մինչեւ վերջը ոչ նոյն սաստկութեամբ ու ընդարձակութեամբ, ոչ ալ նոյն ծրագրով կամ յատակազծով յառաջ գնաց: Սկսած ժամանակը՝ ո՞վ կրնար գուշակել թէ այնպէս պիտի ընդարձակուի եւ այնչափ երկայն պիտի տեւէ: Բայց հետզհետէ այնչափ օտար տարրներ եկան մէջը խառնուեցան եւ այնչափ մասնական պատերազմներ հետք միացան, որ կրնայ ըսուիլ թէ բոլոր աիեզերական պատմութեան մէջ սասանկ ճիւղացեալ ու ընդարձակ

պատերազմ՝ քիչ կը դանուի: Ասով միանգամայն կատարելապէս ստուգեցաւ ան առակը թէ՛ պատերազմը՝ պատերազմով կը սնանի: — Առաջիկայ ժամանակի միջոցին պատմութեան տեսարանը Գերմանիա բլաւով, հարկ է որ նոյնին սկսած ատենը աս պետութեան գանուած վիճակն աշուրներնուս առջեւն ունենանք. ստի եւ Երեւնամեայ պատերազմին նախընթացող պատահմունքները դէթ համառօտի պատմելու ենք, դեպքերուն թելն ան ժամանակէն առնելով, որուն մէջ նոյնը նորոգութեան պատմութեան հետ կտրեցինք: Բայց նախ ուրիշ երեւելի տէրութեանց վիճակը տեսնենք:

151. ԳԼՂԳԼԼ. ՌԻՂԻԻԵՅԻ քաղաքականութիւնը: Գրեթէ բոլոր աս ժամանակի միջոցին մէջ կառավարութեան սանձը Ռիշլիէօ ու Մագարէն կարգինալներուն ձեռքն էր: Առաջինը քաղաքական սուր տեսութենէ դատ, մեծ զօրութիւն ու հաստատութիւն ունէր. բայց իր նպատակին հասնելու համար ամէն կերպ միջոց կը բանեցընէր: Իր **18** տարւան վարչութիւնը (**1624—1642**) իսկզբանէ մնչեւ վերջը գրեթէ միեւնոյն սկզբանց վրայ հիմնուած էր ու միեւնոյն նպատակը կը դիտէր, որ էր՝ տէրութեան սահմաններուն մէջ թագաւորական իշխանութիւնը մեծցընել, իսկ սահմաններէն դուրս Գաղղիայի քաղաքական ազդեցութիւնն աւելցընել: Առաջնոյն համար գլխաւորաբար հարկաւոր էր Հիւկընները զինաթափ ընել: Աս բանս գլուխ ելաւ անոնց գլխաւոր ամբոցին՝ Ռոշէլ քաղաքին, **14** ամսուան պաշարմանէ ետեւ՝ առնուելովը (**1628**, Հօկտ. **28**): Գաւաճաններուն կատարածը՝ դահճի ձեռքով մեռնելն էր: Ասով նոյն ազանդաւորները սաստիկ տկարանաւով, քիչ մ'եւորը Ալէի խաղաղութեան դաշինքով բոլորովն շապեցան (**1629**, Յունիս). եւ **70** տարւան ներքին պատերազմներէ ու խռովութիւններէ ետքը, ալ տէրութեան մէջ զատ տէրութիւն մը կազմելէն դադարեցան եւ միայն իրրեւ կրօնական ազանդաւորք մնացին, թուերնին ալ յառաջուրէ խիստ քիչ էր, որովհետեւ շատերը զանազան ժամանակ ձգած զացած էին, շատերն ալ ուղղափառութեան կը դառնային: — Տէրութենէ դուրս Գաղղիայի հին ազդեցութիւնը նորէն հաստատելու համար Ռիշլիէօ միտքը դրաւ եւ բոլոր զօրութեամբ ջանաց որ Հապ-

պուրկի տան զորութիւնն ու ազգեցութիւնը նուազեցընէ. անոր համար ալ Աւստրիայի ու Սպանիայի դէմ միշտ ղէնքը ձեռքը մնաց: Ասանկով Իտալիայի, Գերմանիայի ու Ստորին Նահանգաց մէջ նոյն ազգեցութիւնը նորոգելէն զատ, Շուեաի մէջ ալ սկիզբ բրաւ: Բայց, ինչպէս ըսինք, իր աս վախճանին հասնելու համար գործածած միջոցներուն օրինաւորութեան ու արդարութեան միտ շէր դներ. ուր որ կրնար՝ ապստամբութեանց ձեռք կը բռնէր: Լուդովիկոս ԺԳ-ին բարձրացուցած ու լմբնցուցած շէնքին բուն հիմը դնողն ինք եղաւ:

152. Մազարէն: Պարսաւորաց վրդովմունքը: Լուդովիկոս ԺԳ.: Ռիչչիէլչիին սկսածները յառաջ տանելու ետեւէ ինկաւ նաեւ Մազարէն՝ իր յաջորդը, որն որ Լուդովիկոս ԺԳ-ին կենդանութեան ատեն քանի մ'ամիս Գաղղիա կառավարելէն ետեւ, նոյն թագաւորին մահուընէ վերջն ալ (1643, Մայ. 14), անոր հինգ տարւան օրդուոյն Լուդովիկոս ԺԳ-ին անչափահասութեան ժամանակ, ինամապետութիւն ընող մօրը՝ Աննա Աւստրիականին (115) օգնականն ու նեցուկն էր (1642—1651): Ինք իր նախորդին չափ զօրաւոր չըլլալով, մեծամեծք՝ որոնք Ռիչչիէլչիին ժամանակը հանդարտ կենալու ստիպուած էին, գլուխ վերցուցին, որով եւ Պարսաւորաց ապստամբութիւնը՝ փրթաւ (1648, Օգոստ.): որուն անունն անկից առնուած է, որ արքունեաց դէմ եղող կողմնակցութիւնն ինք զինքը Գաւթի կը նմանցընէր, իսկ թագաւորութեան կողմնակիցները՝ Գողիաթին: Աս շորս տարիէ աւելի տեւող վրդովմունքը՝ Գաղղիայի ազգային բանագործութիւն մըն էր, որուն մէջ խաղացողներն էին արքունեաց պարսններն ու տիկնայքը՝ եւ թէպէտ արիւն ալ թափեցաւ, բայց միշտ թատերական կերպարանք մ'ունէր: Մազարէն երեք շորս անգամ մայրաքաղաքէն փախելէն կամ արսուելէն եւ նոյն իսկ իր արսորանաց տեղէն տէրութիւնը կառավարելէն ետեւ, առաջինէն աւելի զօրութեամբ եւ իշխանութեամբ ետ դարձաւ ու ամէն բան հին կարգին մէջ դրաւ: Ասանկով արքունեաց իշխաններուն փորձն անօգուտ եղաւ, իրենց չափազանց պահանջութեանն ալ ընդ միշտ պատշաճ սահմանի մէջ դրուեցան, որն որ թագաւորական իշխանութեան աւելնալուն շատ օգնեց: Շփոթութիւնները դեռ չմեղմացած՝ Լուդովիկոս ԺԳ. չափահաս ըլլալով (1651, Մեպտ. 5), սկսած էր անձամբ կառավարել: Բայց որովհետեւ Մազարէն մինչեւ իր մահը (1661

Մարտ 9) տէրութեան բոլոր գործքերն իր ձեռքն ունէր, անոր համար կրնայ ըսուիլ որ Լուդովիկոս ԺԳ-ին բուն անձամբ կառավարելը՝ աս պաշտօնէին մեռած ժամանակէն սկսաւ :

153. ՍՊԸՆԻՒ. Փիլիպպոս Գ-ին թագաւորութեան ժամանակը: Քաղաքականութեան կերպարանքը թէպէտ աս ժամանակի միջոցին մէջ ընդհանրապէս երեւելի փոփոխութիւն մը չկրնայ. բայց իշխանութեան ու գորութեան նուազութիւնը, որն որ անցեալ ժամանակի միջոցին մէջ սկսած էր, հիմակ ալ յառաջ երթալով, տէրութեան մեծամեծ փշամներ հասուց: Փիլիպպոս Գ. իր հօրը Փիլիպպոս Գ-ին տեղն անցնելուն պէս (1621, Մարտ), Ստորին Նահանգաց հետ պատերազմը նորէն սկսաւ, որն որ Էւրոպայի մէջ ըստ մեծի մասին քաղաքներու պաշարմամբ յառաջ կը վարուէր: Աս Էւրոպական պատերազմներուն մէջ յաջողութիւնը երբեք մէկ կողմէն էր, երբեք մէկալ կողմը. իսկ Արեւելեան Հնդկաստանի մէջ ու Մոլդաւեան կողմաց վրայ Հոլանտացիք ետեւէ ետեւ անոնց ստացուածներուն կը տիրէին. Պրազիլիայի մէկ մասն ալ ասին (1636): Նոյնպէս Գաղղիայի հետ ալ, Ռիչլիէյին Հելլենտիայի ու Իտալիայի մէջ բանեցուցած քաղաքականութեամբը, քանի մը թշնամութեան գործքերէ ետեւ, պատերազմ բացուեցաւ (1635), որն որ թէ Ստորին Նահանգներն եւ թէ Իտալիա կը մղուէր, եւ որուն մէջ գրեթէ միշտ Գաղղիացիք յաղթող կ'ըլլային: — Ասոնք արտաբնական իսկ տէրութեան մէջ Գաղղիանիայի իշխանութիւնն ապստամբելով, Սպանիայէն բաժնուեցաւ (1640). եւ Գաղղիայէն գտած ոգնութեամբը տասուերկու տարի ինք զինքը պաշտպանեց, բայց վերջապէս զսպեցաւ: Ամենէն աւելի մեծ ու անորոգելի կորուստ ըրաւ Սպանիա՝ Բորգուկալին իրմէ բաժնուելով (1640):

154. ԲՈՐԳՈՒԿԱԼ. Սպանիայէն կը բաժնուի: Մէկ կողմանէ Սպանիական կառավարութենէն գէշ նայուելով, մէկալ կողմանէ ալ նոյն տէրութեան հետ միացած ըլլալուն համար՝ զլիտաորաբար իրենց գաղթականութեանց կորստեամբը՝ մեծամեծ փշամներ կրելով, Բորգուկալիք սրտեցին որ գարձեալ բաժնուին ու անկախ ըլլան, եւ աս սրտումը գրեթէ առանց արիւնհեղութեան եւ քիչ օրումն մէջ զլուի հանեցին: Ամէն բան կարգի գնելէն ետեւ, ոտք էլան (1640, Դեկտ. 1). 400 հոգոյ շափ մարդիկ Լիտապոնի թագաւորական պաշտօնը գացին, թիկնապահ զօրքերը զինաթափ ըրին, Սպանիայի կողմանէ զիրենք կառա-

վարող տէրութեան ատենադպիրն ուրիշ երկու հոգւոյ հետ մեռցուցին, եւ զՅովհաննէս Պրականցայի գուքսը, որն որ իրենց Յովհաննէս Ա. թագաւորին բնական մէկ զաւակն յառաջ եկած էր, թագաւոր հրատարակելէն ետեւ, ութ օրուան մէջ բոլոր տէրութիւնը Սպանիացիներէն մտքեցին: Պրականցայի գուքսը շուտ մը իրրեւ Յովհաննէս Գ. թագաւոր պսակուեցաւ (1640, Գեկտ. 15) եւ ինք զինքն իր գահուն վրայ հաստատուն պահեց: Իրենց բոլոր գաղթականութեանց մէջ ալ նոր թագաւորին իշխանութիւնն ընդունուեցաւ. սակայն եւ այնպէս անոնց մեծ մասը Հորանտացիք ձեռքերէն առին: Վասն զի թէպէտ Բորգուկայցիք Սպանիայի դէմ իրենց անկախութիւնը պաշտպանելու համար բրած պատերազմին յաջողութեամբ գլուխ հանել կրնայու համար, Գաղղիայէն, Անդղիայէն ու Շուեաէն զատ՝ Հորանտայի հետ ալ գաշնաւորած էին, ի վերայ այսր ամենայնի Հորանտացիք Արեւելեան Հնդկաստանի մէջ հետզհետէ անոնց երկիրներուն կը տիրէին: Անանկ որ վերջնապէս խաղաղութիւն եղած ատեն (1662), Բորգուկայցոց ձեռքը Արեւելեան Հնդկաստանի մէջ միայն կու ու Տիու եւ քանի մը գործակալութեան աներ Յնացին, իսկ Ամերիկայի մէջ՝ Պրագիլիա, որուն մեծ մասը յառաջագոյն կորսորցուցած (1636) եւ ետքը նորէն ձեռք բերած էին (1654):

155. ՀՈՒՆՏՆ. Սպանիայի հետ պատերազմ: Կրօնական ու քաղաքական կողմնակցութիւնք եւ շփոթութիւնք: Ստորին նահանգաց հասարակապետութիւնը աս ժամանակի միջոցին մէջ Սպանիայի հետ 27 տարի պատերազմ բնելէն ետեւ, վերջնապէս իր ինքնակացութիւնն ու անկախութիւնը բոլորովին ապահովցուց: Աս երկայն պատերազմին ժամանակը՝ երկիրը նոյնին փաստներէն ըստ մեծի մասին ազատ մնաց. բայց մեծ յեղափոխութեանց հարկաւոր հետեւութիւններն եզոզ ներքին երկպառակութիւններն ու կռիւները ամէն բան տակնուվրայ կ'ընէին: Նոյն ներքին երկպառակութիւնք ու կռիւք կը պատճառէին ըստ մասին քաղաքական, ըստ մասին ալ կրօնական կուսակցութիւններէն. եւ աս վերջիններուն պատճառածները՝ առաջիններուն պատճառածներէն աւելի սաստիկ էին. վասն զի ժամանակին հոգւոյն համեմատ՝ քաղաքական երկու կողմնակցութիւնք ալ, եւ առանձին կուսակալն ու իր կողմնակիցները, իրենց փառասիրական խորհուրդներն ու բաղանջները՝ կրօնի պատրուակին տակ կը ծածկէին: Իսկ կրօնական վէճերն ու կռիւները՝ ալ ուղղափառաց ու նոր-

ազանդից մէջ շէին, որովհետեւ ինչպէս յառաջագոյն բաժնէնք (102), ուղղափառ կրօնը, բազմաթիւ դաշանց հակառակ, մանաւանդ 1581էն վեր սաստիկ ճնշուած էր. հասցանքն իսկ նորազանդից մէջ, որոնք գլխաւորաբար բուն կալուիական (կամարեան) եւ Արմինեան ազանդներու կը բաժնուէին: Աս կրօնական երկպառակութիւնք անով աւելի մեծ շփոթութիւններ պատճառեցին, որ Արմինեանք ընդհանրապէս զուտ հասարակապետական ըլլալով, քաղաքական նկատմամբ կուսակալին դէմ էին. անոր համար ալ Մաւրիկ կուսակալը զիրենք շարաշար կը հալածէր, շատ մարդիկ կը բանտարկէր, կը քշէր, կը մեռցընէր: Արջիններուն մէջն էր Յովհ. Օլտենպառնեւէլա՝ 72 տարեան ծերունին, որն որ թէպէտ Ստորին նահանգաց անկախութեան ու պայծառութեան համար շատ աշխատած էր, բայց կուսակալը կրօնի պատրուակաւ զինքը մեռցընել տուաւ (1619, Մայ. 13), զան զի անիկայ իր աչք տընկած չափազանց իշխանութեան դէմ էր. նոյնպէս Հուկոյ կրօնախոս անուանի զիտունն ալ նոյն պատճառին համար փեւնոյն պատրուակաւ բանտարկուեցաւ: Մաւրիկ մեռնելէն ետեւ (1625), իր եղբայրն ու յաջորդը Փրեզերիկոս Հենրիկոս աս ներքին երկպառակութիւնները ջանաց աւելի սիրով ու զիջմամբ հանդարտեցընել, որով եւ Արմինեանց կրօնական ազատութիւն տուաւ (1636): Բայց իր որդին Գուլիելմոս Բ. կուսակալ ըլլալէն ետեւ (1647), ներքին երկպառակութիւնք ու կռիւք դարձեալ խիստ սաստկացան. զան զի ինք ամէն կերպով ետեւէ կ'ըլլար իր իշխանութիւնն ու զօրութիւնն աւելցընելու: Սակայն ասոնցմէ վախշուած մեծ դժբախտութիւնները կուսակալին վաղահաս մահուամբ խափանեցան (1650), որովհետեւ ինք ասանց ժառանգ թող տալու մեռած ըլլալով, (իր որդին Գուլիելմոս Գ. հօրը մահուընէն ութ օր վերջը ծնաւ.) ընդհանուր կարգաժողովը Հասկ ժողովեցաւ եւ հինգ նահանգներու մէջ (բաց ի Գրիգորիսյէն ու կրէօնիկէնէն) կուսակալութեան աստիճանը վերցուց: Ասանկով Հոլանտիա նահանգին տէրութեան փաստարան Յովհ. ար Ալիզ քիշ մը ետքը ան աստիճանի ազդեցութիւն ու զօրութիւն ստացաւ, որ արտաքին գործոց վարչութիւնն իր ձեռքը Թաց (1653—1672):

156. ԱՌՍՏՐԻՆ. Հունգարիայի եւ Գրանսիրուանիայի իրողութիւնները: Աս պետութեան վրայ հոս ասանձին խօսելիք մը չունինք, զան զի իր պատմութիւնն

անկեղծորէն կատարած է Էրեւնամեայ պատերազմին պատմութեան հետ . միայն երկու խօսք մը զրուցելու ենք Հունգարիայի ու Գրանսիլուանիայի վրայ : Հունգարիայի հանդարտութիւնն աւելի երկարատեւ կ'ըլլար, եթէ նորադանդութեան շինութիւնները չվրդովէին, եւ Աւստրիացւոց՝ նորադանդներուն յանդգնութիւնը զուգելու համար բանեցուցած միջոցներով աւելի շատտկանային : Ասկից զատ ան ալ կար՛ որ Աւստրիա արդէն նոյն ատենէն սկսած էր ջանալ Հունգարիան կատարեալ ժառանգական տէրութեան մը դարձնելու, որուն սաստիկ դէմ էին Հունգարացիք եւ ընդհանրապէս ամենեւին նորութիւն կամ փոփոխութիւն չէին ուզեր : Ուստի եւ իրենց կրօնական ազատութիւնը պաշտպանելու պատրուակաւ շատ անգամ վրդովմունք կը հանէին : Ասոնց աւելի գրգիռ կ'ըլլային Գրանսիլուանիայի իշխանները, որոնք թէ Գրան եւ թէ Հունգարիայի աւստրապետութեան տակ էին եւ նոյն կողմանց տեւական հանդարտութիւն ունենալն անկարելի կ'ընէին : Աւստրիայի բախտովն եղաւ որ նոյն իշխանք իրենց դրից առաւելութիւններն իրենց օգտին գործածել չկրցան . ապա թէ ոչ անտարակոյս մեծ տէրութեան մը հիմնիչ կ'ըլլային : Ասոնք երբեմն ժամանակին պարագաներէն օգնութիւն գտնելով, Աւստրիայի մեծ նեղութիւն կը պատճառէին : Աւստրիացիք Գարրիէլ (Վապօր) Պեթլէն իշխանին հետ (1613—1629), որն որ արդէն Հունգարիայի թագաւոր կը կոչուէր, խաղաղութիւն ընել կարենալու համար, ստիպեցան նոյն թագաւորութեան երկիրներէն քանի մը գաւառ իրեն թողուլ (1616—1621) : Իր յաջորդներէն Գէորգ Ռակոցի Ա. († 1648) Աւստրիայի դէմ Գաղղիացւոց ու Շուեռաց հետ դաշնակից եղաւ (1643), որով եւ կրցաւ իրեն եւ բողոքողներուն համար նպաստաւոր խաղաղութեան դաշինք դնել (1645, Սեպտ. 16) : Իսկ Գէորգ Ռակոցի Բ. († 1660) աւելի Լեհաստանի՝ քան թէ Հունգարիայի հետ կը զբաղէր :

157. ՍՄԲԱՆԵՆ ՏԷՐՈՒԹԻՒՆ . Մուրատ Գ. էն մինչև Մէհմէտ Գ. թապաւորները : Սելիմ Բ. ին (87) մեռնելէն ետեւ (1574, Գեկա .), իր Մուրատ Գ. որդւոյն ու յաջորդին տասը տարւան կառավարութեան ատենը Օսմանեանք Եւրոպայի հետ գործք չունեցան . որովհետեւ մէկ կողմանէ Սուլթանն իր Ասիական պատերազմներովը զբաղած էր, մեկալ կողմանէ ալ Եւրոպայի իրենց վտարանշութիւններովը տէրութիւնը կը տկարացընէին :

բայց իր որդին ու յաջորդը Մէհէմէտ Գ. (1595) Հունգարիայի պատճառաւ Աւստրիայի հետ պատերազմի սկսաւ (1596). ուր թէպէտ իսկզբան յաջողութիւն ունեցաւ, բայց ետքէն Բէշթ մայրաքաղաքը կորսընցուց (1601): Փոփոխ յաջողութեամբ պատերազմը մէկ երկու տարի մ'ալ յառաջ երթալէն ետեւ, իր Ահմէտ Ա. յաջորդը (1603) բաւական նպաստաւոր պայմաններով կայսեր հետ խաղաղութիւն բրաւ (1606) եւ դարձեալ Ասիայի պատերազմ ներուն ետեւէն իյնալու սկսաւ: Ասոր Մուստաֆա եղբայրը քանի մ'ամիս թագաւորելէն ետեւ (1617, Նոյեմ. 22 — 1618, Փետր. 26), վար առնուելով, Ահմէտին երէց որդին Օսման Բ. գահն ելաւ: Երիտասարդ Սուլթանն ուզէց տէրութիւնը նորէն առաջին պայծառութեան բարձրացնել: Բայց Ահմէտի հետ ըրած պատերազմը (1620—1621) անյաջող ելք ունեցաւ: Եւէնիչէրիք, զորոնք կարգի դնել կ'ուզէր, երկրորդ տարին զինքը վար առին ու մեռցուցին (1622, Մայ.), եւ տեղը նորէն իր Մուստաֆա հօրեղբայրը գահ հանեցին: Սակայն քիչ մը ետքը նոյն անկարող Սուլթանը վար ձգելով, Օսման Բ.ին Մուրատ Գ. եղբայրը տեղը նստուցին (1623): Աս քաջ Սուլթանը Ասիայի մէջ Պարսից գէմ յաջողութեամբ պատերազմէն (1624—1638), եւ իր 17 տարեան կառավարութեան ատեն տէրութիւնը բաւական զօրացընելէն ետեւ, իր մահուամբը (1640) գահն իր Իպրահիմ Բ. եղբորը թող տուաւ: Աս վերջնոյն ատենը Սեւ ծովու վրայ Ազովի քաղաքը Գոզագներու ձեռքէն առնուելէն ետեւ (1642), Մալդայի սասպտաց եւ վենետացոց հետ պատերազմ բացուեցաւ (1645) Կրետէ կղզոյն համար: Երեք տարի ետքը Իպրահիմ սպանուելով (1648), իր տեղն անցաւ իր Մէհէմէտ Գ. որդին, որուն ատենը տէրութիւնը ներքին շփոթութիւններով կը վրդովէր, իսկ Կրետէի պատերազմը թուրքութեամբ կը վարուէր, որովհետեւ Սուլթանը տկար մտրդ էր, եւ իր զօրաց գլուխը՝ Նշանաւոր հրամանատար մը չկար: Ետքէն Մէհէմէտ Բեօփրիւլի փոխարքան երեւան ելլելով (1657), տէրութեան մէջ խռովարարները զուգեց ու երկիրը հանգարտեցուց, պատերազմն ալ աւելի զօրութեամբ յառաջ տարաւ, որն որ իր մահուընէ (1661) ետքն ալ կը շարունակուէր:

158. ՔԵՐՄԵՆԻՆ. Ընդհանուր տեսութիւն: Գանձը հիմայ Գերմանիայի մէջ Երեսնամեայ պատերազմին նախընթացող եւ ըստ մասին նոյնը պատճառ

ուղ զէպրբուն: — Անցեալ ժամանակի միջոցին, նոյն պետութեան մէջ խիստ քիչ անանկ զէպրբեր պատահած էին, որոնք ըստ ինքեան ուրիշ տէրութեանց մտադրութեան արժանի ըլլային. բայց անանկով ալ որովհետեւ բողոքականութիւնը Եւրոպայի ընդհանուր քաղաքականութեան գլխաւոր շարժառիթներէն մէկն էր, նոյնին խանձարուրքն եղող երկիրը չէր կրնար արտաքին տէրութեանց աչքին առջեւէն բոլորովին հեռանալ: Արդ երբ որ Գերմանիայի մէջ՝ խաղաղութիւն ըլլալէն ետեւ ալ՝ երկու կողմնակցութիւնք իրարու մեծ անվստահութեամբ կը նայէին, եւ մանր մանր զէպրբեր նոյն անվստահութիւնը միշտ աւելի կը սաստկացնէին, օտար տէրութիւնք երթալով առաւել կը համոզուէին, որ եթէ հոն պատերազմ մը բացուի, հարկ է որ շուտ մ'ընդհանուր պատերազմի դառնայ: Բայց թէ Փերդինանդ Ա.ին († 1564) խաղաղասէր ու խոհեմ բնաւորութեամբն ու թէ անոր Մաքսիմիլիան Բ. որդւոյն († 1576) հեղ ու քաղցր վարմունքովը խաղաղութիւնը շարունեցաւ:

159. Փերդինանդ Ա. եւ Մաքսիմիլիան Բ.: Բողոքողութեան տարածուիլը: Փերդինանդ Ա. իր կարողս Ե. եղբորը կենդանութեան ատեն, իբրեւ Հռոմայ թագաւոր կայսրութիւնը կառավարելէն ետեւ, անոր կայսրութենէ հրաժարելէն վերջն ալ (53) գրեթէ երկու տարի յառաջուան պէս իր գործքը յառաջ վարեց, մինչեւ որ Ֆրանգֆուրդի կայսրնարաց ժողովոյն մէջ նոյն հրաժարումն ընդունուեցաւ եւ կայսերական պատիւը՝ հանդիսութեամբ իրեն արուեցաւ (1558, Մարտ): Ինք թէպէտ բոլոր սրտանց ուղղափառ էր եւ կ'ուզէր ուղղափառութիւնն իր յաջորդաց ու հպատակաց մէջ անարատ պահել, զորն որ իր կտակին մէջ իր որդւոյն ալ յանձնեց. բայց բողոքականաց հետ ալ միշտ հեղութեամբ, խաղաղութեամբ եւ խոհեմութեամբ կը վարուէր, եւ զիրենք միայն համոզմամբ ճշմարիտ կրօնը դարձնելու կը ջանար: Աս պատճառաւ ալ ուղղա-

փաս եւ բողոքող աստուածաբանից մէջ մէկ երկու անգամ բանակցութիւն ընել տուաւ. բայց որովհետեւ բողոքականք նոյն իսկ հաւատոյ գլխաւոր մասերուն վրայ իրարու միարան չէին, անոր համար ամէն բան պարապ եղաւ: Իսկ իրենց մէջ նոյն տարբերութեանց պատճառաւ երկպառակութիւններ ու կռիւններ ծագեցան. բայց այնպէսով ալ բողոքողութիւնն իր խոյժերովը միշտ աւելի կը տարածուէր: Աս ատենները գլխաւորաբար մուտք գտաւ Աիլեզիայի ու Բոհեմիայի մէջ: — Փերդինանդ կայսեր մեծ դովեան ան է՝ որ ամէն կրօնի հետեւողներն ու ամէն կուսակցութիւնք զինքը կը սիրէին ու կը յարգէին: Նոյնպէս իր որդին ու յաջորդը Մաքսիմիլիան Բ. (1564), որն որ հօրը կենդանութեան ատեն նախ՝ Բոհեմիայի ու Հունգարիայի եւ ետքը՝ Հռովմալ թագաւոր եղած էր (1562), իր խաղաղասիրութեան համար ամենուն սիրելի եղաւ. եւ իր կառավարութեան ատեն՝ ամէն տեղ անանկ խաղաղութեան մէջ պահեց, որուն նմանը՝ կրօնական շփոթութեանց ելլելէն ետեւ՝ Գերմանիայի մէջ տեսնուած չէր: Իր ատենն ալ բողոքականութիւնը միշտ կը ճարակէր, անանկ որ Գերմանիայի իշխանական տները, Աւստրիական (կայսերական), Պապերայի ու Գլեւի տներէն զատ, բոլոր նորազանգութիւնն ընդունած էին:

160. Ռուտոլֆ Բ.: Բողոքական իշխանաց ընթացքը: Աս կերպով թէպէտ քսան տարւան միջոցին մէջ խաղաղութիւնը, վերը զուցածնուա պէս, երեւելապէս չաւրուեցաւ, բայց բողոքողութեան միշտ առաւել քան զառաւել տարածուելովը՝ շփոթութեանց ու երկպառակութեանց նիւթն երթալով աւելլաւ, եւ Մաքսիմիլիան Բ.ին որդւոյն ու յաջորդին՝ Ռուտոլֆ Բ.ին բազմամեայ կառավարութեան ատենը (1576—1612) վերջին աստիճանի սաստկանալով, հետեւեալ տարիները պատահած շարիքներուն հիմք դրաւ: Այս ամենայն անով աւելի դիւրաւ կրնար պատահիլ, որ նոյն կայսրն ինք զինքը տերութեան հոգե-

բուն նուիրելու տեղ, աւելի բնական դիտութիւններու եւ արուեստներու, մինչեւ նաեւ աստեղագիտութեան ու սոկրատիկութեան ետեւէ ինկած բլլալով, շարեաց առջեւն առնելու առանձին ջանք մը չէր բլլար: Բողոքողներուն եւ ուղղափառներուն մէջ եղած փոփոխ անվստահութիւնը միշտ աւելի սաստկանալով, մէջերնին մեծ ատելութիւն ալ յառաջ բերաւ: Բողոքական իշխանք իրենց երկիրներուն մէջ ուղղափառները կը հալածէին, անոնց ատուածային պաշտամունքը կը խափանէին, զիրենք ամէն պաշտօններէն կը հանէին եւ մինչեւ քաղաքացւոյ իրաւունքէն կը զրկէին. վերջապէս ամէն նաեւ բռնական միջոցներով նորազանգութիւնն բնդհանուր ամէն տեղ խտրելու կը ջանային: Ասոր հակառակ, երբ որ ուղղափառ իշխան մ'իր երկրին մէջ նորազանգութեան մասնելը կ'արգէլէր, կամ քարոզութեամբ եւ համոզմամբ եւ ուրիշ ներեալ միջոցներով իսկ բողոքողներն ուղղափառութեան դարձնելու ջանք կ'ընէր. երբ որ ուղղափառ իշխան մը բողոքողաց կողմանէ ուղղափառներուն դէմ գործուած բռնարարութիւնները, խաղաղութեան ամէն կարելի միջոցները պարտապ տեղ բանեցընելէն ետեւ, զէնքով զազրեցընել կ'ուզէր. բողոքողք անմիջապէս ձայներնին կը բարձրացընէին որ զրուած դաշինքներուն հակառակ իրենց կրօնական ազատութեան դէմ կը գործուի: Գարձեալ իրենց երկիրներուն մէջ զէնքով ու բռնութեամբ եկեղեցական վերապահութեան (32) դէմ բնելնին բաւական շտեպելով, ամէն աւագածու ղայներուն մէջ սաստկութեամբ ու սպառնալիքներով կը պահանջէին որ նոյնը վերցուի:

161. Նորազանգից կրօնական եւ քաղաքական բաժանումը: Նորոգութեան իրաւունք: Ուղղափառաց եւ բողոքողաց մէջ եղած գրգռութենէն ու բաժանմանէն զատ, նորազանգք իրենց մէջ ալ երկու գլխաւոր մաս բաժնուած էին: Ստոյգ է՝ Գերմանիայի նորազանգից մեծ մասը խիստ կամ թոյլ լուտերական էր, բայց

կալուինականք ալ կային: Արդ աս երկու աղանդներուն մէջ ալ գրեթէ միշտ երկպառակութիւնք ու կռիւք անպակաս էին, եւ շէր կրնար ալ սյլազգ բլլալ՝ մանաւանդ երբ որ իւրաքանչիւր իշխան կ'ուզէր Նորոգութեան իրաւունքն ամէն կերպով բանեցընել, այս ինքն ան իրաւունքը՝ զորն որ նորաղանդք անձանց սեպհականած էին իրենց հպատակները ստիպելու որ որոշեալ կրօնի մը գառնան, եւ նոյնը կը հիմնէին աս ինքնաՆար սկզբան վրայ, թէ Գաւառը որունն է նէ՝ կրօնն ալ անոր՝ — Աս նորոգութեան իրաւանց գործադրութեան աղէկ օրինակ է Ֆալլի կայսրընարութեան մէջ եղածը: Նոյն երկրին մէջ Փրեզերիկոս Բ. նորաղանդութիւնն ընդունած (1545) եւ իր Աթոն Հենրիկոս եղբորորդին (1556) ամէն կողմ ճիշդ լուսերական աղանդոյն համեմատ կարգադրած էր: Բայց վերջնոյն Փրեզերիկոս Գ. յաջորդը կալուինականութեան միտեալ բլլալով, իշխանութեան հասնելէն ետեւ (1559), երկրին մէջ նոյն աղանդը տարածել տուաւ եւ դէմ դնող լուսերական քարոզիչները բռնութեամբ տէրութենէն մերժեց: Ասոր հակառակ իր Լուգովիկոս Զ. որդին, որն որ նախանձաւոր լուսերական էր, հօրն ամէն բրածները ջնջեց եւ լուսերականութիւնը նորէն խոթեց (1576), անանկ որ բոլոր կալուինական քարոզիչք հարկադրեցան թողուլ դուրս ելլել եւ բովանդակ ժողովուրդը բռնադատեցաւ իր իշխանին կրօնը գառնալու: Իր մեռած ժամանակը (1585) իր ժառանգ որդին Փրեզերիկոս Գ. անշափահաս բլլալով, Յովհաննէս Գաղիմիր եղբայրը՝ որն որ խիստ կալուինական էր, խնամապետ դրուեցաւ, եւ շէ թէ միայն բոլոր ժողովուրդը նորէն կրօնը փոխելու ստիպեց, հապա նոյն իսկ եղբորորդին՝ մինչեւ ծեծով ալ կալուինականութեան մէջ կրթել տուաւ: Ասանկով Ֆալլի երկիրը իբր կէս դարու միջոցին մէջ շորս անդամ կրօնը փոխեց: — Նորաղանդից մէջ եղած աս կրօնական տարբերութիւնը՝ շուտ

1 Cujus Regio, ejus et Religio.

մը քաղաքական մեծ ծանրակշռութիւն ալ ստացաւ։ Ասան զի ուր որ լուսերականք, գլխաւորաբար Սաքսոնիայի ու Պրանտենպուրկի կայսրնտիրներուն առաջնորդութեամբը, ըստ մեծի մասին՝ գէթ քաղաքականօրէն՝ կայսեր հպատակ էին, կալուինականք՝ վերոյիշեալ Ֆալցի Փրեդերիկոս Գ. կայսրնտիրն գլխաւորութեան տակ՝ սկսան Գաղղիայի Հենրիկոս Գ. թագաւորին Գերմանիայի վրայ ունեցած փառասիրական դիտաւորութեանց նպատակ (114)։ Մինչեւ կայսրը Ռեկենսպուրկի աւագաժողովոյն մէջ Օսմանեանց դէմ օգնութիւն ուզած ատեն (1594), նոյն կալուինականք Հայդպրէօն ժողովք մ'ընելով, որոշեցին որ իրեն ամենեւին օգնութիւն չընեն, մինչեւ որ անիկայ իրենց ամէն պահանջումները չկատարէ, միշտ ալ Հենրիկոս Գ.ին դեպանին հետ բանակցութեան մէջ էին։ Ասով կայսրութեան մէջ կամաց կամաց դաղղիական կողմնակցութիւն մը ձեւացաւ, որուն բոլոր ճիգը՝ բողբոջները միշտ աւելի կայսրմէ հեռացընել էր. որպէս զի զինքն աւելի եւս տկարացընելով, իրենք ուզածնին՝ գիւրութեամբ կարենան գլուխ տանել։

162. Բողոքոքողաց Միութիւնն եւ ուղղափառաց Նիզակակցութիւնը։ Երկու կողմանց մէջ խաղաղութիւն կ'ըլլայ։ Բաներն առ վիճակի մէջ էին, երբ որ նորէն Ռեկենսպուրկ աւագաժողով մ'եղած ատեն (1608), կայսրը դարձեալ խնդրեց որ օգնութիւն տան Օսմանեան պատերազմին համար եւ միանգամայն իր եղբորը Հունգարիայի Մատաթիա թագաւորին՝ ապստամբ Հունգարացոց դէմ օգնեն։ Ուղղափառք առ բանս սիրով յանձն առին. իսկ բողբոքողք գլխաւորաբար Ֆալցի կայսրնտիրն գրգռելովը, արտաքոյ կարգի պահանջողական պայմաններով կ'ուղէին զիջանիլ։ Կայսրն եւ ուղղափառ աւագանին պատրաստ էին անոնց հաւանելու, բաւական որ բողբոքողք կրօնի խաղաղութեան գաշանց հակառակ ըրած յափշտակութիւննին ու անիրաւութեամբ գրաւած իրաւունքնին եւս դար-

ձրենն : Սակայն բողոքականք ասոր ամենեւին զիջանիլ չուզելով, աւագաժողովն առանց որչաւ մ'ընելու բաժնուեցաւ : Իրենցմէ՝ միայն Սաքսոնիայի կայսրընտիրը քանի մը չափաւոր պայմաններով կայսեր եւ ուղղափառ աւագանւոյն հետ միարան մնացած էր : Ընտիր չապէս Փալցի կայսրընտիրն ուրիշ բողոքող աւագանւոյն մեծ մասին հետ Ընտպախի մէջ ժողովելով, մէջերնին Միութիւն անուամբ դաշնակցութիւն մը գրին (1608, Մայ. 4), որուն նպատակն էր զէնքով իրենք զիրենք պաշտպանել : Խաղաղութեան ասեն իրենց գլուխը պիտ'որ ըլլար Փալցի կայսրընտիրը, իսկ պատերազմի ժամանակ՝ հրամանատար պիտ'որ ըլլար յարձակում կրողը : Միանգամայն ճիշդ ու որոշակի հաստատած էին թէ իրենց աշխարհակալած երկիրները մէջերնին ինչպէս պիտի բաժնուի : Ետքէն քանի մ'անգամ նորէն ժողովուելով, պատերազմի կարգերն որոշեցին, զորապետներ անուանեցին, եւ Լոնտոն, Փարիզ ու Վենեափի գեսպաններ խաւրեցին, սրնցմով յայտնի կը ցուցնէին թէ իրենց զիտաւորութիւնն է Վերմանիայի սահմանադրութիւնը ջնջել եւ զէնքով կայսեր իշխանութիւնը քայքայել : Իրօք ալ երկու տարի վերջը Միութեան դաշնակիցները Հենրիկոս Գին հետ գաւիճք գրին (1610, Փետր. 11), որն որ արդէն 40,000 հոգի պատրաստած էր, սրնցմով կ'ուզէր Վերմանիայի վրայ յարձակիլ, որպէս զի Աւստրիական տան ձեռքէն թէ կայսերական իշխանութիւնը, թէ իր ժառանգական երկիրները յափշտակէ : — Վերմանիայի մէջ մինակ իշխան մը կար, որն որ իր խելացութեամբն ու քաջութեամբը կրնար նոյն շարիքը խափանել. ասիկայ Պալերայի Մաքսիմիլիան Ա. դուքան էր : Ինք բողոքողաց Միութեան դէմ գնելու համար, քանի մ'ուղղափառ իշխաններու եւ աշխարհական իշխանութիւն ունեցող եկեղեցականներու հետ Ափղակակցութիւն մը գրաւ (1609, Յուլ. 11), որուն մէջ մտաւ ետքէն նաեւ Փերդինանդ արքիդուքսը, Փերդինանդ Ա. կայսեր թո-

ուր (Մաքսիմիլիան Բ. կայսեր կարողութեամբ՝ Ստի-
րիայի դքսին՝ սրգին)։ Բայց նոյն Նիզակակցութիւնը՝
Մաքսիմիլիան դքսին պէս մարդ մ'իրեն գլուխ, միան-
գանայն կայսեր հաւատարիմ մնացող քանի մը լու-
տերական իշխանները (ինչպէս Սպարանիայի, Պրան-
չուայի, Հեսսէնի ու Մեքլենպուրկի իշխանները) իրեն
օգնական ունենալով ալ, բաւական չէր Գերմանիայի
դէմ պատրաստուող մեծ վտանգը խափանելու, թէ որ
վտանգն ինք իրմէ հեռացած չըլար։ Հենրիկոս Գ-ին
սպանուիլը (114) եւ Քալցի Փրեդերիկոս Գ. կայսրըն-
տրին մեռնելովն՝ իր տեղն իր անչափահաս որդւոյն
Փրեդերիկոս Ե-ին անցնիլը, պատճառ եղաւ որ Միու-
թեան դաշնադիրը Նիզակակցութեան անդամներուն
հետ խաղաղութիւն բրին (1610, Հօկտ. 24). բայց
աս խաղաղութիւնը՝ միայն առերեւոյթ կամ գանձ
առժամանակեաց բան մըն էր։

163. Կայսերական տան մէջ երկպառակու-
թիւն։ Մատաթիա ու Փերդինանդ Բ.։ Ա՞յ դէպքը
Գերմանիայի՝ մանաւանդ թէ բոլոր Եւրոպայի խաղա-
ղութեան համար այնչափ աւելի ուրախական էր, որ-
չափ որ կայսեր անգործութեան պատճառաւ՝ նոյն
խիկ կայսերական տան մէջ երկպառակութիւն մը ծա-
գած ըլլալով (1606, Ապր.), շփոթութիւնները
կրնային խիստ մեծ հետեւութիւն ունենալ։ Նոյն երկ-
պառակութիւններն երթալով աւելի սասակացած
էին, մինչեւ երկու կողմանէ զօրք ժողովելով՝ պատե-
րազմի պատրաստութիւն կը տեսնէին։ Եւ թէպէտ
իրոք պատերազմ չեղաւ, բայց կայսրը ստիպեցաւ Աւս-
տրիայի, Մորաիայի եւ Հունգարիայի երկիրներն իր
Մատաթիա կորորը թողուլ, միանգամայն նոյն առե-
նէն զինքը Բոհեմիայի թագաւորութեան մէջ ալ
իրելւ իր յաջորդը ճանչցաւ (1608, Յունիս 17)։
Շփոթութիւնները քանի մը տարի ալ տեւեկէն եւ
երկու կորարք իրարու դէմ նորէն պատերազմի պա-
տրաստութիւն տեսնելէն ետեւ, անով վերջացան որ

Ռուսալիք Բոհեմիայի թագէն ալ հրաժարեցաւ, եւ Մատաթիա իր տեղը նստաւ (1611, Մարտ) : Վրան տարի մը շանցած, Ռուսալիք մեռնելով (1612, Յուլ. 20), Մատաթիա՝ կայսր ընտրուեցաւ (1612, Յունիս 13) : Նոր կայսրը՝ իբրեւ պետութեան զուխ՝ կուղէր երկու կողմնակցութեանց մէջտեղը կենալ եւ մեկուն ալ չմիտել, անոր համար թէ բողոքողաց Միութիւնը եւ թէ ուղղափառաց Նիդակակցութիւնը չնջելու ետեւէ կ'ըլլար . բայց Միութեան գաշնակցաց ջանքովն առ բանա շտաջողեցաւ, մանաւանդ թէ Փալցի Փրեզերիկոս Ե. կայսրընտիրը նոյն Միութեան անուամբ Ստորին Նահանգներուն հետ գաշնաւորութիւն բրաւ (1613) : Ասով Մատաթիայի սիրան անանկ կտարեցաւ, որ ինքն ալ եղբորը պէս անգործութեան մէջ ինկաւ : Անոր համար չէ թէ միայն իր երկու եղբարքը Մաքսիմիլիան ու Ալպերդ արքիդքսերը, որոնք յառաջագոյն կայսերական պատին իրենց սուսնարկուած ատեն՝ մերժած էին, հապա նոյն իսկ կայսրը ջանացին որ կայսրութեան թագն իրենց հօրեղբորորդւոյն՝ Փերդինանդին անցնի : Իրօք ալ Բոհեմիայի աւագանին զինքը թագաւոր ընտրեց (1617, Յունիս 17) . իսկ կայսրն անձամբ Հունգարիա երթալով, հոն ալ զինքը թագաւոր ընտրել ու պսակել տուաւ (1618, Յուլ. 1) : — Բայց նոյն ժամանակները Բոհեմիա ծանրակշիռ դէպքեր պատահած էին, որոնցմէ յառաջ եկաւ Երեսնամեայ պատերազմը : Աս պատերազմը չորս գրութաւոր ու զրեթէ որոշ միջոցի կը բաժնուի, մէջը ետեւէ ետեւ մասնակցութիւն ունեցող չորս տէրութիւններուն համեմատ . այս ինքն՝ Ա. Բոհեմիական կամ Փալցի միջոց, Բ. Գանիական միջոց, Գ. Շուետական միջոց, Գ. Գաղղիական միջոց :

Բահեմիական կամ Ֆայցի միջոց (1618 — 1624):

164. Բոհեմիայի շփոթութիւնք: Անհափառութեան Հրովարտակ: Բոհեմիայի մէջ Լուտերի ժամանակէն շատ յառաջ, զլիաւորաբար հաղորդութիւնք երկու տեսակաւ ընդունելու վրայ, կրօնական շփոթութիւններ ելած էին Հուս աղանդապետին († 1415) ձեռքը: Երկատեսակք¹ արդէն 1547ին պատերազմներուն ատենները (47) ապստամբութիւն մը յարուցած էին, զորն որ նոյն իսկ Փերդինանդ Ա. խաղաղասէր կայսրը խտտութեամբ զուգելու ստիպուած էր: Մաքսիմիլիան Բ.ին ատենները Երկատեսակներուն մեծ մասը Լուտերի աղանդն ընդունեցաւ: Ռուտուլֆ իրենց քաղաքական գրգռութեանց համար զիրենք զուգելու ետեւէ ինկաւ. բայց իրենք նորաղանդից ամէն կողմ ձեռք անդուցած մեծ զօրութեան վրայ վստահելով եւ անով մեծ յանդգնութիւն ստանալով, զօրք վարձեցին, բանակ կազմեցին եւ զկայսրը ստիպեցին վեհափառութեան բուսած հրովարտակք² հանելու (1609, Յուլ. 11). որով իրենց՝ կրօնի կատարեալ ազատութիւն, եկեղեցիներ ու դպրոցներ կանգնելու հրաման, ուղղափառաց հետ քաղաքական հաստատութիւն եւ իրենց իրաւունքները պաշտպանելու համար՝ Պաշտպանիչք³ կը տրուէին: Նոյնպէս Սիլեզիացիք ալ անանկ հրովարտակ մ'ընդունեցան, բայց աւելի շափաւորեալ կերպով: Սակայն երկրին սահմանադրութեան նայելով, թագաւորն իրաւունք չունէր՝ եկեղեցական ու աշխարհական վիճակատեսարց կամքին հակառակ՝ անոնց հպատակներուն ատանկ հրամաններ տալու: Անոր համար ուղղափառ վիճակատեսարք աս բանիս դէմ բողոքեցին, շուգելով որ լուտերականք իրենց վիճակին ու սահմանին մէջ եկեղեցի ու դպրոց ունենան: Աս պատճառաւ

¹ Utraquistes.

² Lettres de majesté.

³ Défenseurs.

Մատաթիա կայսրը հրատարակեց որ Անհափառութեան հրովարտակը մեկու մը հին ու հաստատուն իրաւանց դէմ ընելու համար արուած չէ, հապա սակն մարդուն իր իրաւունքը թող կու տայ ու կը հաստատէ (1614, Սեպտ. 7):

165. Բրակայի պատուհանընկէցութիւն: Բռնամիացիք կ'ապստամբին: Սակայն նորազանգը նոյն մեկնութեան միտ շղենլով, միշտ ետեւէ կ'ըլլային իրենց աղանդը նաեւ ուղղափառ վիճակատեարց երկրին մէջ տարածելու: Աւերջապէս Բրակայի արքեպիսկոպոսին ու Պրանաւի արքային քաղաքական իշխանութեան տակ եզոյղ երկու քաղաքներու մէջ եկեղեցի շինելու ձեռք զարկին, որուն դէմ Էլան վերոյիշեալ երկու եկեղեցական իշխանք. Փերդինանդ թագաւորն ու ետքը Մատաթիա կայսրն ալ, ըստ իրաւանց շկրնալով անոնց կամքին հակառակ բան մ'ընել, բրածնին հաստատեցին: Եւ որովհետեւ նորազանգից Պաշտպանիչները նոյն որոշման դէմ շէնքերը կը շարունակէին, Բրակայի արքեպիսկոպոսն իր երկրին մէջինք քանդել տուաւ. իսկ Պրանաւի արքան իր երկրին մէջ շինուածը կ'ուզէր կնքել տալ, բայց ժողովարդն սոք ելլելով՝ թող չտուաւ: Ետք վրայ քննութիւն ըլլալով, քաղաքացիներէն մէկ քանին բանտարկեցան: Նորազանգից գլխաւորները Բրակա ժողովելով, կը պահանջէին որ անոնք ազատ թող արուին (1618, Մարտ 5), բայց թագաւորական խորհրդականք, որոնց մէջ բողոքողք ալ կային, իրենց խնդիրը մերժեցին, որով վեճն երթալով մեծցաւ: Նորազանգից գլխաւորներէն շատերը զինեալ Թուռն կամփն առաջնորդութեամբը գիւանատուն գացին, ուր երէք շորս ուղղափառ խորհրդականք եւ ուրիշ քանի մ'երեւելի մարդիկ ժողովուած էին: Հոն քիչ մ'իրարու առնելն տալէն ետեւ, բողոքող իշխաններէն ամանք, յառաջագոյն իրենց մէջ որոշուածին համեմատ, խորհրդականներէն երկուքն ու ատենադպիրը բռնեցին

պատուհաններէն վար նեակեցին. բայց բարերախառ թեամբ մեռնող շեղաւ (1618, Մայ. 23): — Նորազանդք աւ գործողութիւնն ընելէն ետեւ, որն որ հասարակօրէն Պատուհանընկէցութիւն՝ կը կոչուի, շուտ մը կառավարութեան սանձը ձեռուրնին առին, իրենց մէջէն երեսուն վերակացու գրին, զօրք ժողովեցին եւ անոնց հրամանատարութիւնը Թուռն կոմսին տուին: Ըս բաներուն վրայ շէ թէ միայն Սիլեզիացի ու Մորաւիայի, հասպա նաեւ Հունդարիայի եւ Աւստրիայի նորազանդք մեծ հաճութիւն ցուցուցին. իսկ Միւթեան դաշնակիցք Շփայերի եպիսկոպոսին իշխանութեան տակ եղող Փիլիպպուրկի ամբողջ քանդելէն ետեւ, Բոհեմիացուց հետ դաշնակցեցան, որոնց հետ արդէն յառաջ Սիլեզիացիք ալ միացած էին. եւ երկուքն ալ անոնց օգնական զօրք խաւրեցին (Օգոստ.): Բայց ասոնք ըլլալէն ետեւ ալ, Բոհեմիայի ու Սիլեզիայի աւազանին Փերդինանդէն կը խնդրէին, որ զինադադար տայ եւ իրաւախոհութիւն ընեն. որուն վրայ բանակցութիւն սկսելով, բոլոր ձմեռը տեւեց:

166. Մատաթիա կը մեռնի: Բոհեմիացիք Աիլենայի վրայ կու գան ու ետ կը քաշուին: Ը՞փիճակին մէջ ձգեց Գերմանիան Մատաթիա կայսրն իր մեռած ատենը (1619, Մարտ 20): Փերդինանդ թագաւորը Բոհեմիայի յառաջուան տասը խորհրդականները նորէն իրենց աստիճանին մէջ գրաւ. բայց միանգամայն երկրին իրաւունքներն ու արտօնութիւնները հաստատեց, եւ առանձին հրովարտակով ժ՛ալ ընկալեալ կրօնի ազատութիւն շնորհեց (1619, Ապր. 13): Իսկ վերակացուք շուղեցին աւ բաներուն հասանիլ. եւ ան միջոցին Թուռն կոմսը Մորաւիան ալ Բոհեմիայի հետ դաշնակից ընելէն ետեւ, 16,000 զօրքով սկսաւ Աիլենայի վրայ քալել: Նշն մայրաքաղաքին մէջ աւազանին՝ որ ըստ մեծի մասին նորազանդութեան դարձած էին, կառավարութիւնը ձեռուրնին

* Défenestration.

առած էին եւ զՓերդինանդ վար ձգելու եւ անոր որդիքը նորազանդութեան մէջ կրթելու սպառնալիք կ'ընէին: Թուռն կոմսին բանակը Ալեքնայի առջեւ հասած ժամանակ (Յունիս 5), կայսերական պալատը պահապան զօրք չկար, անոր համար Փերդինանդին հաստատրիմները խրատ կու տային որ ձգէ փախչի: Բայց ինք մտածելով որ ասով բոլոր իր երկիրներն ապրտամբաց ձեռքը կ'իյնան, հաստատութեամբ մնաց, եւ թէ Աւստրիացոց ու թէ Բոհեմիացոց հետ բանակցութեան սկսաւ: Առաջինները կը պահանջէին որ իրենց հաւանութիւն տայ Բոհեմիացոց հետ դաշնաւորութիւն ընելու, մինչեւ բռնութեամբ կ'ուզէին զինքը ստորադրութիւն զնելու ստիպել (Յունիս 11): Մէյ 17-ը նոյն աստիճան 300 ձիաւոր զօրք հաստատրիմ զօրապետի մը հրամանատարութեամբ պալատ մտան, որուն վրայ նորազանդից պատգամաւորները թողուցին փախան. եւ Փերդինանդ պալատը պաշտպանութեան վիճակի մէջ դրաւ: Իսկ Թուռն կոմսն խմանալով որ իր դաշնակցաց զօրքը՝ Թադաւորին յառաջագոյն Բոհեմիա խաւրած գնդէն յաղթուեր է, աճապարեց հոն գնաց, որպէս զի Բրակա քաղաքը պաշտպանէ (1619, Յունիս 22):

167. Փերդինանդ՝ կայսր կ'ընտրուի: Բոհեմիացիք Ֆալցի կայսրընտիրը թաղաւոր կը զննն: Փերդինանդ ասանկ արտաքոյ կարգի կերպով վտանգէն ազատելով, Ֆրանդֆուրդ գնաց կայսր ընտրուելու համար: Հոն թէպէտ խկզրան շատ ընդդիմութիւններ ելան, բայց վերջապէս ամէն բան կարգի դրուելով, ինք միաբան քուէիք Գերմանիայի կայսր ընտրուցաւ (1619, Օգոստ. 28): Բայց հաղիւ թէ ընտրութեան գործողութիւնը լմբնցած էր, մէյ 17-ը զոյժ հասաւ թէ Բոհեմիացիք զինքը թաղաւորութենէն վար են առեր: Սակայն ինք ամենեւին չչփոթելով, ըստ կարգի երգումն ըրաւ. եւ քիչ մը վերջը հանդիսութեամբ պատկուելէն ետեւ (Սեպտ. 9), Աւստրիա

դարձաւ (Նոյեմբ. սկիզբը): — Բոհեմիացիք արդէն յառաջագոյն Մորաւիայի ու Սիլեզիայի հետ աւելի սերտիւ կապուած եւ բոլորովին միացած էին (1619, Յուլ. 31). քիչ մը ետքը Վերին ու Ստորին Աւստրիա ալ իրենց դաշնակցութեան մէջ մտած էին (Օգոստ. 16): Արդ ասով յանդգնելով, զՓերդինանդ թագաւորութենէն մերժուած հրատարակեցին (Օգոստ. 19): Անմիջապէս ալ ձեռք զարկին նոր թագաւոր մը ընտրելու. եւ ուրիշ քանի մ'իշխաններու (Սառայի գրոհին, Գանիայի թագաւորին, Սաքսոնիայի կայսրընտրին) վրայ խօսելէն վերջը, Բոհեմիայի թագը՝ Ֆայլի Փրեզերիկոս Ե. կայսրընտրին տուին (Օգոստ. 26): Ստոյգ է անոր խիստ կալուինական ըլլալը՝ շատերուն մեծ ընդդիմութիւն ընել տուաւ. բայց իր վրայ ուրիշ այնչափ յարմարութիւններ կը դանձին, որ նոյն պարագան քանի տեղ չգրին: Իրօք ալ աս իշխանը՝ նախանձախնդիր նարազանդ, իրենց Միութեան դլուխ, Անդղիայի Յակոբ Ա. թագաւորին փետան, եւ Գրանսիլուանիայի Գարրիէլ Պեթլէն իշխանին դաշնաւորն ըլլալով, թէ Գերմանիայի մէջ եւ թէ Գերմանիայէն դուրս օգնութեան շատ աղբիւր ունէր: Եւ թէպէտ շատերը եւ նոյն իսկ իր աներն իրեն խրատ տուին որ նոյն թագաւորութիւնը չընդունի, եւ մայրն ալ արցունքով իրեն աղաչեց որ ասանկ վնասակար դորձքէն ետ կենաց, նաեւ ինքն ալ երկայն ատեն կը դեղեւէր. բայց վերջապէս իր կնոջը փառասիրութենէն յազթուելով, թագն ընդունեցաւ, մանաւանդ որ իր պալատին բողոքական քարոզիչը նոյն իսկ կրօնական պատճառներով զինքը կը համոզէր որ ընդունի: Քիչ մը ետքն ալ Բրակայի մէջ շքեղութեամբ պսակուեցաւ (1619, Նոյեմբ. 4):

168. Ապստամբք դարձեալ Վիեննայի վրայ կու գան ու ետ կը քաշուին: Երկու կողմանց բռնած ընթացքը: Պատերազմի պատրաստութիւն: Ասոնք եղած ատեն, Գարրիէլ Պեթլէն Հունգարիա գրաւ-

Ելէն ետեւ, բանակով մը Ալեքնայի վրայ եկաւ. Բո-
 Տնմիացիք ալ դարձեալ Թուոն կոմսին հրամանատա-
 րութեամբ բանակ մը խաւրեցին, որն որ եկաւ Հուն-
 գարացոց հետ միացաւ, անանկ որ ամէնքը մէկտեղ
 80,000 հոգւոյ կը հասնէին: Բայց ձմեռը վրայ գալով,
 բան մը չբրած՝ երկու բանակներն ալ ստիպեցան ետ
 քաշուիլ: Ասիկայ ԲոՏնմիացոց անյաջողութեան սկիզբ
 մ'եղաւ, որմէ ետքը բաներնին միշտ անյաջող երթա-
 լով, վրան տարի մը շանցած՝ բոլորովին զպուած էին:
 Աս բանս յառաջ եկաւ թէ իրենց բռնած անխոհեմ
 ընթացքէն, թէ կայսեր բանեցուցած իմաստուն մի-
 ջոցներէն: Փրեզերիկոս, ինչպէս ըսինք, խիստ նախան-
 ձաւոր կալուինական ըլլալով, թագաւորութիւնը ձեռք
 անցընելուն պէս՝ սկսաւ յափշտակած երկիրներուն մէ-
 ջէն ուղղափառութիւնը քննելու ետեւէ իյնալ. անանկ
 անպատշաճ ու բարբարոսական միջոցներ ալ բանե-
 ցուց, մինչեւ բողբոջաց մէջէն շափաւորեալք իրեն
 դէմ նեղացան: Ասանկով ԲոՏնմիացի ու Ալեքիայի
 լուտերականք՝ կալուինականներէն բոլորովին բաժ-
 նուեցան. Գերմանիացի լուտերականք եւ առանձինն
 Սաքսոնիացիք ալ սաստիկ դառնացան, եւ Միութեան
 զրեթէ բոլոր զաշնակիցք իրենցմէ պաղեցան: Իսկ
 կայսրը Պաւիերայի Մաքսիմիլիան զքսին հետ զաշինք
 դնելով (1619, Հոկտ. 8), ուղղափառաց Կիզակա-
 կցութիւնն իրեն հետ միացընելէն զատ, նոյն իսկ Սա-
 քսոնիացի կայսրընտիրն աւելի եւս իրեն հետ կապեց-
 իսկ Պրանտենպուրկի կայսրընտիրէն զանէ շէտք կենա-
 լու խօսք առաւ: Ասոնք ըլլալէն ետեւ, Մաքսիմիլիան
 զքսին առաջնորդութեան տակ մեծ բանակ մը ժող-
 վեց: — Մէկալ կողմանէ Փրեզերիկոս, կայսրընտիր-
 ներուն իրեն զբաժ միաբան յորդորն ու կայսեր սպառ-
 նալէքը (1620, Ապր. 30), որ եթէ ամէն մը ԲոՏն-
 միացէն շէլլեր նէ, զինքն աստիճանէն վար կ'առնու
 եւ տարագրութեան պատժոյ տակ կը ձգէ, արհամար-
 հելով, թէ անձամբ եւ թէ Միութեան զաշնակից-

ներէն իր կողմն բլլաղներուն ձեռքը, կրցածին չափ զօրք ժողովեց, որպէս զի զէնքով ինք զէնքը պաշտպանէ:

169. Բոհեմիացիք բոլորովին կը զսպուին: Կայսեր խստութեամբ վարուելուն պատճառները: Կայսրը կէս մը զէնքով, կէս մ'ալ առանց զէնքի Աւստրիայի գաւառները հնազանդեցընելէն ետեւ, կայսերական ու սաքսոնիական բանակը Բոհեմիայի վրայ խաբեց: Նոյն ատեն Մաքսիմիլիան գուքսը Փրեզերիկոսին կրկին կրկին ազգարարութիւններ զրեց, որ կայսեր հպատակի. բայց ամենայն ինչ պարտաւ ելաւ, եւ ալ անկէ ետեւ պատերազմը սկսաւ: Գլխաւոր ճակատը տրուեցաւ Բրակայի քով Սպիտակ լեռան վրայ (1620, Նոյեմ. 8), եւ կայսերականք մէկ ժամու մէջ կատարեալ յաղթութիւն բրին: Փրեզերիկոս առ պարտութեան զոյժն որ առաւ, իսկէքը զլիւն զնաց, յուսահատեցաւ, եւ երկրորդ առտու սաստիկ տաղնապառ ձգեց փախաւ: Սիլեզիայի մէջ կ'ուզէր նորէն փորձ մը փորձել. բայց ետքը՝ իր զօրքովը հոն կեցող Սաքսոնիայի կայսրընտրին իրատին անսալով, նոյն գաւառէն ալ ելաւ զնաց (1621, Յունու. 3): Իր Բրակայէն փախած օրը՝ Մաքսիմիլիան գուքսը նոյն մայրաքաղաքը մտաւ, զամէնքը շուտ մը հպատակեցուց ու հաւատարմութեան երդում առաւ. եւ թէ ինք թէ իր զբաժ Լիխտենշտայն կուսակալը չափաւորութեամբ ու քաղցրութեամբ վարուելով, ժողովրդեան մեծ մասին սերն ու համարումը վաստակեցան: Աս արատամբութեան վրայ քննութիւն ու դատաստան բլլալով, քսանուչորս ազնուականք՝ սրով, երեք քաղաքացիք ալ կախաղանով սպանուեցան (Յունիս 20, 21): Կայսրն արդէն յառաջագոյն զՓրեզերիկոս Ե. իր կայսրընտրութեան աստիճանէն վար առած եւ տարազրութեան պատժոյ տակ ձգած էր (Յունու. 23): Ասկից զատ Բոհեմիայէն վեհափառութեան հրովարտակը վերցուց. բայց ուրիշ հին իրաւունքներն ու արտօնութիւնները

Հաստատեց: Իսկ երկրին մէջ ուղղափառութիւնը նորէն Հաստատելու համար, Նորոգութեան դաստատանարան անուամբ նոր ատեն մը գրու, որուն հետեւութիւնն ան եղաւ, որ 30,000 անուորք ձգեցին հանկից գացին: — Ի՞նչ աս առթին մէջ եւ թէ ետքէն կայսեր այսպէս խափ վարուելուն պատճառն էր մէկ կողմանէ՝ Փրեզերիկոսին, մէկալ կողմանէ՝ կալուի նական քարոզիչներուն բռնած ընթացքը: Առաջինը չորս կողմն ինկած՝ թէ կայսրութեան մէջ եւ թէ կայսրութենէն դուրս զօրք եւ օգնութիւն ժողովելով, իր յափշտակած ու կորսընցուցած իշխանութիւնը նորէն ձեռք բերելու ետեւէ կ'իյնար. Միութեան դաշնակիցները կայսեր դէմ ելլելու կը դրդուէր. զՊէթլէն իշխանն ալ կը յորդորէր որ անոր ժառանգական երկիրներուն վրայ յարձակի, այրէ ու աւարէ: Իսկ կալուինական քարոզիչները չէ թէ միայն ուղղափառ կրօնի եւ ուղղափառներուն, այլ եւ կայսեր ու անոր պաշտօնատարներուն դէմ սաստիկ նախատական խօսքեր կը խօսէին եւ ամէն կողմ ժողովուրդն անոնց դէմ կը դրդուէին: — Նոյն միջոցին խել մը բողոքող իշխանք, որոնց մէջ նաեւ Շուեթի, Ստորին նահանգաց եւ Անգղիայի պատգամաւորներ ալ կային, Գանձայի Քրիստիան Գ. թագաւորին քովը ժողովելով, զՓրեզերիկոս նորէն իր յափշտակած իշխանութեան մէջ Հաստատելու միջոցներուն վրայ կը մտածէին եւ աս բանս զէնքով ալ զլուխ հանելու համար դաշինք գրին (1621, Ապր.): Բացք քիչ մը վերջը լսելով որ Միութեան դաշնակիցք ստիպուեր են զէնքերնին ձգելու, սկսան տարակուսիլ: Ասոր վրայ նաեւ երբ որ լուր առին թէ կայսրը հրաման է հաներ որ եթէ Փրեզերիկոս եւ իր կողմնակիցներն ընելու քանքատ ունին նէ, քիչ մը վերջը գումարուելու աւագաժողովոյն մէջ նոյնը յառաջ բերեն, ալ անկէ ետեւ խորհուրդնին մէկդի ձգեցին:

170. Այլեւայլ խռովարար իշխանք ոտք կ'ելլեն ու կը զսպուին: Ասանկով այնպէս կարծուեցաւ

Թէ Բոհեմիայի պատերազմը բարբոսփն լինցած է. Փրեզերիկոսին բանը բուսած է. բայց որովհետեւ կրօնական վէճերով նոյնին սկիզբ կղած էր, անոր համար բուն կրօնական պատերազմի կերպարանք առած, էւ երկու կողման բռնած ընթացքովն ու բանեցուցած միջոցներով՝ անանկ ընդարձակութիւն մը ստացած էր, որ ապաստամբութեան զուգուելէն ետեւ ալ պէտք էր որ տեսէր: Ոգիներն ան աստիճանի գրգռուած էին թէ Գերմանիայի էւ թէ Հունգարիայի մէջ, այնչափ ալ խռովութեանց նիւթ կար պետութեան մէջ ու այնչափ թելադրութիւնք արտաքուստ, որ պզտիկ դէպք կամ փառասէր ու անխորհուրդ իշխան մը բուսական էր պատերազմը նորէն էւ աւելի սաստկութեամբ սկսել տալու: Այսպիսի խռովայոյզ ատեններ անանկ ճարդիկ շն պակսիր. իրօք ալ նախ երեւան ելաւ Մանաֆէլտի Էռնեստ կոմսը, Փրեզերիկոսին պաշտպանելու պատրուակաւ, էւ 20,000 զօրքով տարի մը Գերմանիայի մէջ մեծամեծ շարիք գործեց: Իրեն հետ միացաւ ՊատրնՏուրլախի Գեորգ Փրեզերիկոս սահմանակոմսը. Քաջի Փրեզերիկոս կայսրնաօրն ալ իրենց բանակն եկաւ: Ասոնք ամէնն իրենց միացեալ զօրութեամբ՝ Գիլլի զօրապետին հրամանատարութեան տակ կողմ կայսերական (Նիդրլանդացութեան) զօրքին դէմ Ախուլխի ճակատք վաստակեցան (1622, Ապր. 29): Բայց կտրէն իրարմէ բաժնուելով, մէկիկ մէկիկ Գիլլիէն յաղթուեցան (Մայ): Նոյնպէս քիչ մը վերջէ շէզարդի քով նոյն զօրապետէն յաղթուեցաւ (Յունիս 20) Պրանչուայկի քսանուերկու տարւան Քրիստիան իշխանը, որն որ գրեթէ Մանաֆէլտէն աւելի շարիք գործած էւ անոր համար ալ նոյն իսկ նորազանգներէն մերժուած էր: Ա՞ վերջինն իր պարտութենէն ետեւ՝ Մանաֆէլտի կոմսին հետ միացաւ. էւ երկուքը մէկտեղ քիչ մ'ալ Էլտասի մէջ իրենց շարագործութիւնը շարունակելէն վերջէ, 25,000 զօրքով Ստորին Նահանգները գացին (1622, Օգոստ.), որոնք նոյն ատեն Սպանիայի հետ նորէն պա-

տերազմի մէջ էին (153) : Երկրորդ տարին Ռեկենսպուրիի աւագածոզովոյն մէջ Գալցի Փրեզերիկոս կայսրընտրին դատը քննուելով, իր կայսրընտրութեան աստիճանը՝ Պառիսիոյի Մաքսիմիլիան Ե. զբռնուանոր յաջորդացը արուեցաւ, որն որ արդէն Փրեզերիկոսի ջեզին ջեզակից էր (37, Գ. եւ Գ.) եւ նոյն աստիճանին ամենէն աւելի իրաւունք ունէր (1623, Փետր.) : Եւ աւագածոզովոյն մէջ միանգամայն որոշեցաւ որ Մանսֆելտին ու Քրիստիանին ան աստիճանը նորէն սկսած աւագակական արշաւանդներուն վերջ արուի. որ բանն որ քիչ մ'ետքը զլուխ ելլելով, ան երկու իշխանք անանկ շարաշար յաղճուեցան, որ զօրքերնին ջրուեցին ու Գերմանիայէն ելան :

Բ.

Գանիական միջոց (1625—1629) :

171. Գանիայի Քրիստիան Գ. թագաւորն ու Վալենշդայն : Վերջիշեալ զէպրերով պատերազմը վերջացած ու խաղաղութիւնը հաստատուած երեւցաւ. բայց՝ միայն մասնական պատերազմ մը լճնեցած էր, եւ ուրիշ մասնական պատերազմի մը սկիզբ կ'ըլլար : Եւ երկրորդ մասնական պատերազմը կամ Երեսնամեայ պատերազմին երկրորդ արարուածը, զլիսուորարար Անգլիայի Յակոբ Ե. թագաւորին եւ Գաղղիայի Ռիչիէօ պաշտօնէին զրգուելովը, սկսաւ Գանիայի Քրիստիան Գ. թագաւորը, որն որ արդէն ինք իրմաւ նոյնին յօժար էր՝ յուսալով թէ առիթ կ'ունենայ իր երկիրները մեծցընելու : Երգ առ թագաւորը Ստրին Սաքսոնիայի հետ դաշինք գրաւ (1625, Մարտ 25), եւ բողջականութիւնն ու Գերմանիայի ազատութիւնը կայսեր զէմ պաշտպանելու պատրուակաւ, բանակ մը հանեց, որուն համար Մանսֆելտ ու Պրանշուայի Քրիստիան իշխանը զօրք կը ժողվէին : Թեպէտ շատ

ջանաց Սպարսնիայի ու Պրանսանագուրկի կայսրընտիրներն ալ իրեն հետ միաբանելու, բայց անոնք կայսեր հաւատարիմ մնացին: Ասոր հակառակ քիչ մը վերջը Հաակի մէջ Անդղիայի ու Ստորին նահանգաց հետ դաշնակցութիւն բրաւ (Գեկտ. 19). իսկ Գաղղիացէն գրամական օգնութիւն գտաւ: — Փերդինանդ Բ. Գաւնիայի թագաւորին դէմ դնելու համար նոր բանակ մ'ալ կազմել ուզեց. բայց որովհետեւ իր ժառանգական երկիրներէն չէր կրնար զօրք ժողովել, նոյն գործքն Արպերդ Ալալենչդայնին յանձնեց, որն որ խիստ փառասէր մէկն էր, եւ Հունգարիայի ու Իտալիայի պատերազմներուն մէջ շատ անգամ կայսերական տան մեծամեծ ծառայութիւններ բրած բլալուն համար՝ Ֆրիտլանտի իշխանութիւնն ընդունած էր: Ինք խոստացաւ որ կայսրմէ ստակ շառած՝ իր ծախքովը բանակ մը կազմէ, միայն թէ նոյնին վրայ բացարձակ վերին հրամանատարութիւն ունենայ եւ բոլոր զօրավարներն անուանէ: Իրօք ալ մէկ երկու ամսուան մէջ 24,000ի բանակ մը ժողովեց:

172. Գանիական պատերազմ: Ալալէքի խաղաղութիւն: Նոյն միջոցին Քրիստիան Գ. իր զօրքը կը մօտեցընէր. Գիլլի զօրապետին հրամանատարութեան տակ եզոյ՝ ուղղափառաց Նիդալակցութեան զօրքն ալ անոր դիմացը կը քայլէր, որով պատերազմը սկսաւ (1625, Յունիս 6): Եւ թէպէտ Ալալենչդայն ալ իր նոր բանակովն ան կողմերն եկաւ (Սեպտ.), բայց եւ այնպէս որոշիչ ճակատ չտրուեցաւ. մանաւանդ թէ քիչ մը ետքը խաղաղութեան վրայ բանակցելու սկսան (Գեկտ.), եւ Սպարսնիայի կայսրընտրին միջնորդութեամբը դինագադար եղաւ (1626, Յունու.): Սակայն խաղաղութիւն չկրցաւ հաստատուիլ եւ Մանսֆէլլա քիչ մը վերջը թշնամութիւնները նորէն սկսաւ (1626, Փետր.): Տեսաւի քով երկու հեղ Ալալենչդայնին պատանէշներուն վրայ փուճ տեղ յարձակելէն ետեւ, երրորդ անգամ յարձակելուն՝ շարաշար յաղթե-

ցաւ (Ապր. 1, 11, 25): Բիշ մը զօրանալէն ետեւ, 20,000ով դէպ ի Սիլեզիա յառաջացաւ, որպէս զի գեթ լին իշխանին հետ միանայ: Սակայն Վալենշդայն աւելի զօրաւոր բանակով մ'ետեւէն դալով, Գրանսիլաւանիայի իշխանը ստիպեց խաղաղութիւն ընելու, որով Մանսֆելտ իր զօրքերէն ալ թող տրուելով, ուղեց Անգղիա երթալ, որպէս զի հոնկից նոր օգնութիւն գտնէ. բայց ճամբան Գաղմասիայի մէջ մեռաւ (Նոյեմ. 20): Արդէն իրմէ յառաջ մեռած էր Պրանշուայի Բրիտանիան իշխանը (Մայ. 6): — Իսկ Գանիայի թագաւորը, քանի մը փոքր կռիւներէ ետեւ, Պարենպէրկի քով Լուդգերի մտա Գիլլիի զօրքէն սաստիկ յաղթեցաւ, անանկ որ բոլոր բանակը կայսերականաց ձեռքն ինկաւ (1626, Օգոստ. 27): Նոյն միջոցին հասաւ նաեւ Վալենշդայն, եւ իր 40,000 զօրքով Գիլլիի ու Լիւնեպուրկի Գեորգ դքսին բանակին հետ միացաւ. այնպէս որ բոլոր կայսերական բանակը 80,000 մարդ ունէր: Վալենշդայն այսպիսի մեծ զօրութեամբ պատերազմը յառաջ տանելով, հետզհետէ Գանիայի եւ Արեւելեան ծովու գաւառներուն տիրեց, բայց ի Սգրալսուանէն, զորն որ պաշարեց (1628, Մայ.): Նոյն տարին շմբնցած՝ Բրիտանիան Գին հետ խաղաղութեան վրայ խօսուելու սկսուած էր եւ վերջապէս Լիւպէրի խաղաղութեան դաշինքը գրուեցաւ (1629, Մայ. 22): Ասով Գանիայիք իրենցմէ աւանուած բոլոր երկիրներն ետ կ'ընդունէին, բայց ան պայմանաւ որ Բրիտանիան՝ իրրեւ Գանիայի թագաւոր՝ Գերմանիայի իրազութեանց ամենեւին չխառնուի. հապա միայն իրրեւ Հողդայնի գալքս, ան ալ որչափ որ իրեն կրնայ վերաբերիլ: Գարձեալ իր դաշնակիցներէն ու առանձինն Մերլենպուրկի դքսերէն բաժնուի, որոնք՝ իրեն հետ միանալուն եւ կայսեր զէմ ապստամբելուն համար՝ իրենց աստիճանէն վար աւանուած, իրենց երկիրներն ալ իրրեւ աւաս՝ Վալենշդայնին տրուած էին (1628, Յունու. 19):

173. Հատուցման հրովարտակ: Ի հուպերի խաղաղութիւնն ըլլալէն յառաջ, կայսրը Հատուցման բուսած անուանի հրովարտակը հանած էր (1629, Մարտ 6), որով կը հրամայուէր որ եկեղեցական վերապահութեան վճիռը (Յ2) հաստատուն պահուի: Ասոր հետեւութիւնն ան էր որ պետութեան եկեղեցական հիմնարկութիւններ (արքայարաններ կամ եպիսկոպոսարաններ) ձեռք անցընող նորաղանդք, շէին կրնար իբրև արքայ կամ եպիսկոպոս նկատուիլ, ուստի եւ աւագաժողովներու մէջ դահ ու քուէ ունենալ: Բասաւեան դաշնագրութենէն (Յ0) ետեւ գրաւուած կամ յափրշտակուած եկեղեցական ինչքերը պէտք էր որ ուղղափառաց ետ արուէին: Նորաղանդից արուած կրօնական ազատութիւնները՝ միայն Աւկապուրկի դաւանութեան հետեւողներուն վրայ պիտի ամփոփուէին եւ ոչ թէ կալուինականներուն եւ ուրիշ աղանդաւորներուն: Հատուցման հրովարտակին մէջ ասոնցմէ զատ՝ կը հաստատուէր որ ուղղափառ իշխանք ալ կրնան ջանալ որ իրենց հպատակները կրօնին շփոխեն, եւ չհնազանդողները թողուլ որ իրենց սահմաններէն դուրս ելլեն. իսկ եթէ մէկը չ'ուզեր երկրէն դուրս ելլել, կրնան զինքն արգելուլ որ օտար տեղեր աստուածային պաշտամունք կատարելու շերթայ: Այս ամենայն, կ'ըսէր հրովարտակը, մեծաւ իրաւամբ կրնան ընել ուղղափառք. որովհետեւ Աւկապուրկի դաւանութեան հետեւողք ալ իրենց հպատակներուն նկատմամբ ըստ ամենայնի նոյն կերպով կը վարուին: — Աս որոշումները՝ ստոյգ է՝ ըստ ինքեան արտաքոյ կարգի բաներ էին եւ բողոքականաց համար անհնարին մեծ էր հարուածք, որովհետեւ ետ տալիքնին ալ խիստ շատ էր. օրինակի համար միայն Վերին ու Ստորին Սաքսոնիական շրջանակին մէջ երկու ազբեպիսկոպոսարան, տասուերկու եպիսկոպոսարան եւ հարիւր քսան արքայարան կամ վանք կամ եկեղեցի յափշտակած էին: Բայց իրաւանց եւ արդարութեան կողմանէ նկատելով, ոչ դք կրնար խօսք մը զրուցել:

ինչու որ կայսրը Բասաւեան դաշնագրութեան և Եւկայուրկի կրօնական խաղաղութեան դաշանց (32) որոշումները ճշդիւ կը պահէր. և միայն նոյն դաշինքներէն ետեւ անոնց բացայայտ որոշման դէմ եղածները կ'ուզէր կարգի գնել, կամ թէ նոյն դաշանց հակառակ նորադանդից յափշտակածներն իրենց օրինաւոր տեարց դարձնել: Եւ թէ և ենթագրութի որ կայսրն առ բաներով կ'ուզէր իր իշխանութիւնն աւելի մեծցնել, ինչպէս կրնայ ասիկայ իրեն յանցանք սեպուիլ, երբ որ կը տեսնուի թէ բողոքող իշխաններն ալ իրենց սպօրինաւոր գործողութիւններովն ու յափշտակութիւններովը, իրենց անձանց համար՝ միւսնոյն նպատակին կը զիսկին: — Եւ հասուցման հրովարտակին գործագրութիւնը Ալլենշդայնին յանձնուեցաւ, որուն բանակը Գերմանիայի այլեւայլ կողմերը մեծամեծ շարիքներ սկսաւ գործել:

174 - Ալլենշդայնին խորհուրդներն ու վարածութիւնը: Նոյն ժամանակները Փերդինանդ Բ. այնպէս զօրութիւն մ'ունէր, որ Աարդու Եւէն վեր Գերմանիայի մէջ տեսնուած չէր: Ալլենշդայնին հրամանատարութեան տակ 80,000 զօրք ունէր, որն որ անտակները արտաքոյ կարգի մեծ բանակ կը սեպուէր. բոլոր ուղղափառ իշխանք իրեն հետ սերտիւ միացեալ էին. իսկ բողոքողք թէ և Լատուցման հրովարտակին պատճառաւ սաստիկ զրգուած էին, բայց ընդդէմ դառնալու համար՝ ոչ նիւթական զօրութիւն ունէին և ոչ ալ իրաւանց հիմ մը: Բայց կայսրընտիրներու ժողով մը բաւական եղաւ ամէն բան տակնուվրայ ընելու: — Ապտերական զինուոյ՝ Գերմանիայի հիւսիսային կողմերը, գլխաւորաբար Ալլենշդայնին հրամանատարութեան տակ, ունեցած յաջողութեամբը, կամայ կամայ նոյն փառատէր իշխանին յանդուգն դիտաւորութիւնները կը յայտնուէին: Եւ ինք՝ միայն յաղթական հրամանատար չէր, հապա Մէքլենպուրկի գրաւութեան երկիրներն ընդունելէն ետեւ՝ նաեւ պետութեան աւա-

գանձոյն անդամ ու տիրող իշխան: Ասկից զատ Բոմբերանիս գաւառն ալ զօրօք կը բռնէր եւ Արեւելեան ծովու զօրապետ կ'անուանէր: Արդ իր սյուպէս բարձրանալն ու վարմանց կերպը շատ կը նեղացընէր ու կը դառնայրնէր չէ թէ միայն նորազանգ իշխանները, հասպոնաւու զգափառներն ալ եւ մանաւանդ Նիզակահյուսթեան անդամները: Աս պատճառաւ ամէնքն ալ կ'ուզէին որ խաղաղութիւնը կատարեալ հաստատուի, որպէս զի ալ իրեն կարօտ չըլլալով, դիւրաւ կարենան զինքը վար առնուլ. մանաւանդ որ օտար թշնամիներն ալ եւ գրիխաւորաբար Ռիշլէօ զիրենք առաւել եւս կը գրգռէր: Ասանկով երբ որ Ախպէրի խաղաղութենէն ետեւ Ռեկենապուրկ կայսրընտիրներու ժողով կ'ըլլար (1630, Յունիս), այնչափ բրին, որ կայսեր առջեւն ուրիշ միջոց չմնաց, բայց եթէ կամ նոյն զօրավարը վար ձգել կամ իր դաշնակիցները կորսնցընելը յանձն առնուլ: Այսպէս նեղի դալով, առաջինն ընտրեց, մանաւանդ որ Ալալենշդայնին անսանձ ու անկարգ զօրքերը չօրս կողմը յափշտակութիւն, աւարառութիւն ու կործանում ընելէն չէին դադրեր: Ուստի որոշեցաւ որ Ալալենշդայն վար առնուի, իր բանակին մեծ մասը զինաթափ ըլլայ. եւ Գիլլի թէ կայսերական ու թէ Նիզակահյուսթեան զօրաց ընդհանուր հրամանատար անուանեցաւ: Թէպէտ շատերը կը վախնային որ Ալալենշդայն սա իր վրայ եղած որոշման գէտ կը գնէ. բայց ինք առանց ընդդիմանալու հնազանդեցաւ եւ Բոհեմիս ունեցած կալուածները քաշուեցաւ: Ասանկով ստոյգ է Գանիական պատերազմն ալ կատարեալ վերջացաւ. բայց՝ ինչպէս վերը արդէն նշանակեցինք՝ կայսեր զօրութիւնն ալ խիստ նուազեցաւ:

Գ.

Շուկեստիան միջոց (1630—1635) :

175. Արտաքին տերութեանց և առանձինն Գաղղիայի քաղաքականութիւնը: Արշափ որ Աւստրիայի տան բախտը Գերմանիայի մէջ յաջող կ'երթար, այնչափ ալ արտաքին քաղաքականութիւնն իրեն հակառակ կը գործէր: Արդէն իսկզբանէ Անգղիա ֆալցի Փրեդերիկոս է. կայսրնորին իրողութեանց մէջ խառնուիլ ուզած էր, որովհետեւ անիկայ, ինչպէս բաժնէնք, Յակոբ Ա.ին փեռան էր (167): Աս նկատմամբ այլևայլ բանակցութիւններ եղած էին, բայց օգուտ մը չէին բրած: Գանձիային պատերազմ ընելը՝ զխառնորարար Անգղիայի և Գաղղիայի զբաղութեամբն եղած էր (171): Ռիշլիէօ կառավարութեան սանձը ձեռք առնելէն ետեւ (1624), Գաղղիայի քաղաքականութիւնը միշտ Աւստրիայի և Սպանիայի դէմ ուղղուած էր: Աս անուանի քաղաքագէտն իր արտաքին քաղաքականութեան կարծես թէ միակ նպատակ դրած էր նոյն երկու տերութեանց խառնիւցի մէջ ունեցած աղղեցութիւնը նուազեցընել և Գաղղիայի աղղեցութիւնն աւելցընել (151): Աս նպատակին հասնելու համար միջոց չմնաց որ չբանեցընէ. Անգղիայի հետ ստակի մեծ գումարով Գանձիայի թագաւորին օգնելէն ետեւ, ամէն կերպով ջանացած էր Գերմանիայի ուղղափառաց Նիդակակցութիւնը կայսրմէ բաժնել. և թէպէտ աս բանս չէր կրցեր յաջողցընել, բայց դոնէ Նիդակակցութեան ձեռքովը զԱլպենշրայն փար ձգել առած էր: Նոյն պատերազմներուն տեւած տակնը, շեյուեաթիայի և խառնիւցի մէջ՝ թէ կայսեր և թէ Սպանիայի դժուարութիւններ յարուցած կամ արդէն ելածները մեծցուցած էր: Ասոնցմով իրօք ալ խառնիւցի մէջէն Աւստրիայի և Սպանիայի աղղեցութիւնը վերցաւ և Գաղղիայի աղղեցութիւնը նորէն

Հիմնուեցաւ . եւ աս վերջին տէրութիւնը կրցաւ ձեռքը պահել Իիներբուլ ու Գաղալէ՝ սահմանազուխներու ամբողջները : — Ռիչլիեյին Գերմանիայի պատերազմներուն վրայ ունեցած ազդեցութիւնն՝ անով խիստ աւելի ծանրակշիռ եղաւ , որ շատ օգնեց Շուեաի Կուստաւ Ատոլֆ թագաւորին՝ ան պատերազմներուն մէջը մտնելուն . վասն զի գլխաւորաբար իր թեւազրութիւններովը նոյն թագաւորը գրգռեց որ Գերմանիա մտնէ եւ աս նկատմամբ իրեն հետ վերիվերոյ դաշինք մ'ալ գրաւ (1630, ամառը) , որուն մասնակից էր նաեւ Ալեքսեիկ :

176. Շուեաի Կուստաւ Ատոլֆ թագաւորը Գերմանիա կը յարձակի : Իր բռնած ընթացքը : Տասնուինը տարի էր որ Կուստաւ Ատոլֆ կը թագաւորէր (129) , եւ զրեթէ միշտ գլխաւորաբար Ղեհաստանի հետ պատերազմի մէջ էր , որ պատերազմով որ իր զօրութիւնը ստատիկ մեծցած եւ տէրութեան սահմաններն ընդարձակած էր : Ինք արդէն մէկ քանի անգամ (1614 եւ 1620) Միութեան դաշնակցաց առաջարկած էր որ զօրքով իրենց օգնէ . բայց անոնք զանազան պատճառներով չէին ուզած : Քանի մը տարի ետքը Անդղիայի առաջարկած էր որ նորազանգից մեծ նիզակակցութիւն մը գնեն . սակայն աս ալ չէին կրցեր գլուխ հանել (1624) : Մեկալ կողմանէ Գանիա եւ Ստորին Նահանգներն ուզած էին զինքը պատերազմներուն մէջ խոթել , վերին հրամանատարութիւնն իրեն տալով . բայց ան հեղ ալ պայմաններուն վրայ չէին կրցեր միաբանիլ : Նոյն միջոցներուն Ռիչլիեյի գործակցութեամբ Ղեհաստանի հետ զինազաղար բրաւ (208) , որպէս զի Գերմանիայի շիտթութիւններով իր փառասիրութեան առջևը բացուած գաշտին մէջ իր անյազ ցանկութիւնը կշտացընէ : Ասանկով Ախպէքի խաղաղութենէն տարի մ'ետքը Գերմանիա մտնելով (1630, Յունիս 24) , սկսաւ չէ թէ նորազանգից օգնութեան եկող զօրապետի , հասցաւ իր երկրին մէջ դանուող վեհապետի մը պէս , իր ուզածին

Համեմատ՝ տիրաբար վարուիլ: Արդէն իր բրած յար-
ձակման վրայ հանած յայտարարութենէն սա բանս
կը տեսնուի. որովհետեւ անոր մէջ պատճառ կը բերէ
մէյ մը Ալալենդային Սղրալուսնա պաշարելը, մէյ
մ'ալ նոյն հրամանատարին՝ Շուկտայ գէմ 10,000
հոգի Ահհայ օգնական զօրք խաւրելը. իսկ բողոքողաց
օգնութեան դալու, նորաղանդութիւնը պաշտպանելու
վրայ եւ ոչ յիշատակութիւն մը կ'ընէ: Կուստա Ա-
տուլի բոլոր իր բնթացքին մէջ ալ ցուցուց որ իր նպա-
տակը՝ ոչ նորաղանդից օգնել է եւ ոչ Գերմանիայի
ազատութիւնը պաշտպանել, հասպա իր զօրութիւնն ու
իշխանութիւնը մեծցրնել: Աս բանս Գերմանիայի իշ-
խաններն ազէկ ճանշնալով, ամենեւին շէին ուղեր իրեն
հետ գործք ունենալ: Բամբանիայի Պոկիզլու գու-
քսը, որուն երկիրներն անմիջապէս մտաւ թաղաւորը,
չէր ուղեր ամենեւին բանի մը զիջանիլ, բսելով որ Կայ-
սեր ու պետութեան ունեցած պարտուցս գէմ է: Բայց
անիկայ ազատ իշխանի մը հետ՝ իրբեւ տէր վարուելով,
հրաման խաւրեց որ բանակը գայ, եւ զինքը վախընն-
լով՝ հետը գաշինք զնելու ստիպեց (Յուլ. 20), որուն
մէկ պայմանն ալ ան էր, որ եթէ գուքսը՝ որն որ զաւակ
չունէր, պատերազմի մէջ մեռնի, իր երկիրները Կուս-
տա Ատուլիին տեսչութեան տակ մնան: Երկրորդ
տարւոյն սկիզբը Շուկտի թաղաւորը Գաղղիայի հետ
Պեռնվարտի գաշնադրութիւնն բրաւ (1631, Յունու.
13), որով իրեն արուած 400,000 թալէր տարե-
կան օգնութեան գիմացը վեց տարի 36,000 Շուկտի
զօրքով Գերմանիայի մէջ Աւստրիայի գէմ պատերազմ
ընել կը խոստանար: Ինք Գերմանիայի բողոքող աւա-
զանին հրաւիրած էր իրեն հետ միանալու. իսկ անոնք
Լիփտիայի մէջ ժողովք ընելով (1631, Փետր. —
Ապր.), որոշեցին որ իրեն հետ չգաշնաւորին: Միայն
Լիւնսպուրկի Գեորգ գուքսը գտնուեցաւ որ իրեն հետ
կամօք ու ազատութեամբ գաշինք զնէ (Ապր. 21):
Նոյն միջոցին Կուստա Ատուլի յարձակմամբ առած էր

Օտերի քովի Ֆրանգֆուրգ քաղաքը, զորն որ կայսերականնք բռնած էին. եւ թէպէտ մէջի 8000 զօրքն ուզած էին անձնատուր բլլալ, բայց ինք զամէնքն ալ մեռցընել ու քաղաքն աւարել տուաւ: Աս անիրաւ ու անգութ վարմունքին համար Գերմանիայի իշխաններն աւելի եւս մեծ ընդդիմութիւն կ'ունենային իրեն հետ միանալու:

177. Կայսերականք Մակտեպուրկ կ'առնուն: Կուստաւ Ատոլֆ զաշնաւորներ կը գտնէ: Լիփսիայի ճակատք: Գեորգ Գուլիելմս Պրանտենպուրկի կայսրընտիրն ու Պրուսիայի գուքոր, որն որ իր հօրը Յովհաննէս Սիկիզմունտին (134) յաջորդած էր (1619), գտնուած դիրքէն ու պարագաներէն բռնադատեցաւ Շուեաի թագաւորին դոնէ չէզոքութիւն պահել խոստանալու եւ Շփանտաւ քաղաքը քիչ մը ժամանակի համար իրեն թող տալու: Կուստաւ Ատոլֆ կ'ուզէր Մակտեպուրկ ամուր քաղաքն երթալ եւ հոն ամրանալ: Աս քաղաքին քաղաքացիքը, որոնք իրենց սաստիկ բողբոջութեամբն ու կայսերական տան ունեցած ատելութեամբն անուանի էին, իրենց ամրութիւններն անոր նուիրած էին: Բայց ան միջոցին Գիլլի զօրապետն եկաւ նոյն քաղաքը պաշարեց (1631, Մարտի վերջը): Մէկալ կողմանէ կուստաւ Ատոլֆ իր անձնական նպատակներուն համար դանդաղութեամբ դէպ ի հոն կը յառաջանար: Ասանկով կայսերական զօրքը վերջին սաստիճանի սաստկութեամբ յարձակելով, քաղաքն առաւ (Մայ. 20). եւ որովհետեւ քաղաքացիք ալ արատքոյ կարգի քաջութեամբ իրենք զիրենք կը պաշտպանէին, անանկ որ հարկ էր անէ տուն եւ փողոցէ փողոց կ'առեւելով առնուլ, անոր համար զօրքերը խիստ դազանանալով, ամենեւին ոչ սեռի եւ ոչ հասակի խնայեցին. միանգամայն քաղաքացիք անե-

բուն եւ ականներուն կրակ տալով, բոլոր քաղաքն այրեցաւ: Ըն առնն ամէն կողմէն սկսան զՎուստաւ Ատոլֆ մեղադրել, որ իրեն դաշնակից քաղաքն անօգնական թող տուաւ: Այնպէս ընդհանուր էր իրեն գեմ եղած ահաճութիւնը՝ մինչեւ Պրանտենպուրկի կայսրընտիրը համարձակեցաւ Շիանտաւ քաղաքն ետ ուղել: Թագաւորը նոյն քաղաքը տուաւ, բայց շուտ մը Պերլինի վրայ քալեց, եւ սպառնացաւ որ կը կործանէ, եթէ կայսրընտիրն իրեն հետ չդաշնաւորի: Կայսրընտիրը նեղի գալով՝ թագաւորին բոլոր պահանջումները յանձն տուաւ. Շիանտաւ տուաւ, խոստացաւ որ ուզած ատեն՝ Քիւպրին քաղաքն ալ սայ, միանգամայն անէ ամիս 30,000 թաւր վճարէ (1631, Յունիս 21): Ընկէ ետեւ Շուեաի թագաւորը Մեքլենպուրկի տիրեց, եւ մերժուած դքսերն (172) իր վերին իշխանութեան տակ՝ իրենց աստիճանին մէջ հաստատեց (Օդոստ.): Ըն օրերը Հեաւէն-Գասուկի Գուլիելմոս Ե. աշխարհականը Շուեաաց հետ դաշնագրութիւն բրաւ (Օդոստ. 12). նոյնպէս Վայմարի Բեանարդ դուքսը Վուստաւ Ատոլֆին տակ զինուորական պաշտօն տուաւ: Սպրտնիայի կայսրընտիրը, Լիփսիայի ժողովէն ետեւ, բանակ մը հանած էր: Գիլլի իրմէ կը պահանջէր որ նոյն զօրքը ցրուէ կամ կայսերական բանակին հետ միացընէ. եւ տուած խոստփողական ու դառն պատասխանէն նեղանալով, յառաջ քալեց ու Լիփսիա տուաւ (Սեպտ.): Նոյն միջոցին կայսրընտիրը զրեթէ ի հարկէ բանագասեալ, Վուստաւ Ատոլֆին հետ դաշնակցած եւ իր զօրքն անոր զօրաց հետ միացուցած, Գիլլիին վրայ կը քալէին: Լիփսիայի քով մեծ ճակատ մը տրուեցաւ (7 կամ 17 Սեպտ.), որուն մէջ կայսերականը շարաշար պարտութիւն մը կրեցին, այնպէս որ Գիլլի իր զօրաց մեծ մասը կորսնցընելով, վերաւորած՝ Հալպերշտաս քաջուեցաւ եւ հոն իր բանակին մնացորդը ժողովեց:

178. Կուստուս Ատուլֆ եւ իր զաշնաւորները կը յառաջանան: Ռիչլիէլզին երկզիսի քաղաքակաւնութիւնը: Աս յաղթութեամբ իրաց կերպարանքը բոլորովին փոխուեցաւ: Նորազանդ իշխաններէն շատերը, կէս մը ստիպուած, կէս մ'իբրենց օգտին համար, Շուեաներուն հետ միացան: Սաքսոնիացիք Բոհեմիա առին (1631, Նոյեմ.). իսկ թագաւորը Նիզակակցութեան անդամներուն երկիրները սկսաւ քաղել, որոնց բանակին մէկ մասը Բաբենհայմ կոմսին հրամանատարութեան տակ՝ Ստորին Սաքսոնիա կը կենար: Գիւլիալ Ստորին Գերմանիայի մէջ նոր բանակ մը կազմած էր: Մաքսիմիլիան զինքը Պաւիերա պաշտպանելու համար կանչեց. բայց Կուստուս Ատուլֆ Նիւոնպերկ առնելէն ետեւ (1632, Մարտ.), Լէխ գետն անցնելու առնելէն իրեն յաղթեց (1632, Ապր. 5), ուր նոյն 73 տարւան ծերունի քաջ զօրապետը վիրաւորուելով, քիչ մը ետքը մեռաւ: Իսկ թագաւորը Պաւիերայի Միւնխէն մայրաքաղաքը հասաւ (Մայ. 7), որուն համար Մաքսիմիլիան դուքսը վերջին աստիճանի նեղ մտնելով, Ռիչլիէլզին զիմեց: Աս խորագէտ պաշտօնեան, սրն որ ինչպէս տեսանք՝ Կուստուս Ատուլֆին հետ Պեռնպալտի զաշինքը դրած էր, նոյն թագաւորին Գերմանիայի մէջ ստացած մեծ զօրութենէն սկսած էր վախնալ, եւ կը տեսներ որ անոր ձեռք անցուցած իշխանութիւնը՝ Աւստրիայի տան իշխանութենէն աւելի վնասակար է Գաղղիայի: Ուստի մէկ կողմանէ Շուեաներուն դրամական օգնութիւն բրած առնել, մէկալ կողմանէ Մաքսիմիլիանին հետ ութը տարւան զաշինք դրաւ, որով անոր խօսք կու տար ստակով օգնելու, իսկ ինք իրաւունք կը ստանար Ռենոսի ձախ կողմը զօրջը բռնելու: Բայց անանկով ալ Միւնխէն շկրնալով զիմանալ, իր դռները Շուեացի բացաւ:

179. Կուստուս Ատուլֆին զիստաւորութիւնները: Վալենշդայն նորէն իշխանութեան կը հասնի: Արգ կայսերականաց վիճակն առ ժամանակները վերջին

աստիճանի գէշ էր. ուղղափառաց Նիզակակցութիւնը բարբոթին ջրուած էր. իսկ Կուստաւ Ատոյժ՝ Արեւելեան ծովէն մինչեւ Պաւերա եւ Ռենտոէն մինչեւ Բոհնիա, բոլոր երկիրներուն տէր էր: Ասանկ մեծ եւ անակնկալ յաջողութեան պատահելով, ինչ յոյսեր եւ ինչ խորհուրդներ շէր կրնար ունենալ: Հիմակ ամէն ճարգ յոյսնի կը տեսնէր թէ ինչ է իր կամքը. կ'ուզէր Արեւելեան ծովու դաւառներուն, այս ինքն՝ Պրուսիայի, Բաներանիայի ու Մեքլենպուրկի վրայ աւատապետութիւն ունենալ. եկեղեցական իշխանաց երկիրները, որոնց գլխաւորներն էին Մակաւպուրկ, Պամպէրկ, Վիւրցպուրկ, Մոզուենտիա ու Վորմս, իր կողմնակիցներուն տալ եւ Հռոմեական (Գերմանիայի) կայսր անուանիլ: Արդէն Սաքսոնիայի կայսրընտրին քուէին վրայ ապահով էր. Մոզուենտիայի կայսրընտրութիւնն իր Օքսենագիւնա գիւանդապրին տալով, երկրորդ քուէն ալ կ'ունենար. իսկ երրորդ քուէն ձեռք կ'անցընէր Ֆալցի կայսրընտրութեան մէկ մասը Փրեզերիկոս Ե. մերժուած կայսրընտրին տալով, նոյնպէս նաեւ մնացեալ քուէներն ալ մէկ կամ մէկալ կերպով գիւրին էր ստանալ: — Սակայն Գիլլիին մահուամբ՝ Վալենչլայն նորէն երեւան ելած էր, յառաջուրնէ աւելի փառասիրական գիտաւորութիւններով: Ինք առաջին անգամ հրամանատարութենէն վար իյնալէն ետեւ, քաջուած կեանք մը կ'անցընէր, բայց թագաւորաբար կ'ապրէր. եւ իր փառասիրութիւնը հաճութեամբ կը տեսնէր Շուեսի թագաւորին յառաջանալը, վասն զի կը դուշակէր թէ կայսրը վերջապէս պէտք է որ իրեն կարօտի, որով իր նորէն եւ յառաջուրնէ աւելի բարձրանալուն ճամբայ կը բացուի. ինչպէս իրօք ալ եղաւ: Երբ որ կայսրն իրեն առաջարկեց որ դարձեալ հրամանատարութիւնը յանձն առնու, ինք երկայն ատեն գէժ զնեւէն ետեւ՝ հաւանեցաւ, բայց արտաքոյ կարգի պայմաններով: Կ'ուզէր որ շէ թէ միայն բոլոր կայսերական զօրաց բացարձակ վերին հրամանատար ըլլայ, այլ նաեւ

Աւստրիայի ու Սպանիայի հրամանատար կոչուի. Աւստրիայի տան ժառանգական երկրի մը իշխան ըսուի, Մեքլենպուրկի եւ իր զէնքով առած բոլոր երկիրներուն վրայ աւստրապետութիւն ունենայ. բոլորովին բացարձակ կերպով թէ վարձք եւ թէ պատիժ կարենայ տալ, առանց իր հաւանութեան՝ ոչ խաղաղութիւն եւ ոչ զինադադար ըլլայ: Կայսրն այս ամենայն յանձն առնելով (1632, Ապր.), Վալենշդայն նորէն ասպարէզին մէջ մտաւ:

180. Լիւցէնի ծակատը: Կուստաւ Ատոլֆին մահը: Վալենշդայն իր պահանջածները ձեռք անցընելուն պէս, իր համբաւովն ու ընչիւքը կրցաւ շուտ մը 40,000ի բանակ մը հանել ու Սպրսնիացիները Բոհեմիայէն մերժեց: Մաքսիմիլիան գուքսն իսկ յանձն առնելով անոր վերին հրամանատարութեան տակ մտնել, Էկէրի քով իրեն հետ միացաւ եւ մէկտեղ Նիւնպերկի վրայ քալեցին, ուր էր Շուեաներուն զօրքը: Հոն խել մը ժամանակ երկու բանակները զխնայէ զխնայ կենալէն (Յունիս — Օգոստ.) եւ Շուեպք Վալենշդայնին բանակին վրայ պարապ տեղ յարձակում ընելէն ետեւ (Սեպտ. 3), Կուստաւ Ատոլֆ կերակրոյ պակասութենէն ստիպեցաւ հոնկից հեռանալու. ուստի եւ Նիւնպերկի մէջ պահակապան զօրք ձգելով, դէպ ի Գանուբ քալեց, յուսալով որ թշնամին իր ետեւէն կու գայ: Իսկ Վալենշդայն՝ Պամպերկի մէջ Մաքսիմիլիան դքսէն ու անոր բանակէն բաժնուելով, Սպրսնիա մտաւ ու Լիփսիա առաւ: Կայսրընտիրը զԿուստաւ Ատոլֆ օգնութեան կանչելով, թագաւորն աճապարեց հոն եկաւ, եւ Լիւցէնի քով մեծ ճակատ մը տրուելով, ինք նոյնին մէջ իր մահը դատաւ (1632, Նոյեմ. 6): Կորուստը երկու կողմանէ ալ հաւասար էր. բայց յաղթութիւնը Շուեաաց սեպուեցաւ, որովհետեւ Վալենշդայն պատերազմի դաշտը թող տալով եւ Սպրսնիայէն ալ ելլելով, Բոհեմիա քաշուեցաւ հոն ձմերկու համար: — Այսպէս երկու տարի Գերմանիայի մէջ գրեթէ միշտ յաջողու-

Թեամբ պատերազմելէն ետեւ, պատերազմի դաշտին վրայ իր մահը գտաւ Կուստաւ Ատոլֆ, որն որ բողոքականք՝ իբրեւ իրենց կրօնին նահապետն ու պաշտպանը՝ մինչեւ երկինք կը բարձրացրնեն, եւ նոյն իսկ ուղղափառք պէտք է որ իբրեւ քաջ զօրական եւ ճարտար մարտադիր վրան զարմանան: Իրօք ալ մեծ էր իբրեւ աշխարհակալ. սակայն աշխարհակալաց հասարակ սողիւտն ալ ունէր, որ իր նպատակին հասնելու համար գործածած միջոցներուն արդարութեան միտ չէր դնէր: Թէ ըստ ինքեան բողոքականութեան պաշտպան չիկրնար սեպուիլ, կարծենք թէ սոր վրայ տարակուսելն իսկ անտեղի է. բայց թէ իր աշխարհակալութեան նպատակաւ բրածներովը՝ բողոքականութեան նպատեց, սա ալ չիկրնար ուրացուիլ:

181. Հուետներուն վիճակն ու ամբարշտած ընթացքը: Հայլպրոննեան դաշնաւորութիւն: Շուեաթի թագաւորին մեռնելովը՝ պատերազմը չէր կրնար վերջանալ. վասն զի թէպէտ անով իր անձնական խորհուրդները կամ դիտաւորութիւնները ոչքնչացան, բայց իր զօրապետներն ու կողմնակիցներն իրենց խորհուրդները չփոխեցին: Ստոյգ է՝ ալ Հուետացիք չէին կրնար Հոռմեական կայսրութեան աստիճանին ետեւէն իյնալ, որովհետեւ Կուստաւ Ատոլֆ մանչ զաւակ չունենալով, իրեն յաջորդած էր իր անչափահաս Քրիստինէ աղջիկը, որն որ Օքսենսդիոնային խնամապետութեան տակ զրուեցաւ. ստոյգ է՝ ալ չէին կրնար հարաւային Գերմանիայի մէջ հաստատուելու ակնկալութիւն ունենալ, անոր համար ալ Ռենական Փայքը՝ Փրեդերիկոս Ե-ին († 1632, նոյեմ. 29) որդւոցը թող տուին. բայց սոր հակառակ իրենց ուրիշ պահանջումները կարծես թէ աւելի եւս սաստկացուցին: Ասով Գերմանացիք սկսան Հուետներուն իշխանութեան խտուրթիւնն ու ճնշումը սաստիկ զգալ. եւ Սպրսնիայի նախանձը՝ որն որ Կուստաւ Ատոլֆին յաղթութեանց ասեմնն ալ չէր մարած, ալ անկէ ետեւ աւելի սաստկացաւ: Ռուսի

Թէպէտ եւ նոյն Թագաւորին մարդիկներուն մէջ Թէ քաղաքական եւ Թէ զինուորական նկատմամբ երեւելի անձինք կային, բայց անոնց մէջէն նոյն խոյ Օ. քսենսոգիւնայի պէս մէկն ալ դժուարաւ կրնար Շուեաթի առաւելութիւնը պահել, որովհետեւ արտաքին Թշնամիներէ զատ՝ ներքին նախանձորդներու դէմ ալ նոյնը պաշտպանելու էր: Ասոր վրայ ան ալ աւելցրնելու է որ իր յանդուգն ու ամբարհաւած ընթացքովն ու ամէն բանի մէջ ուղածին պէս վարուելովը, կրնայ բուռի որ մեռնող Թագաւորէն աւելի անտանելի էր Քերմանիայի իշխաններուն. մանաւանդ որ անոր անձնական քաջութիւնն ու աստիճանն ալ չունենալով, աւելի դժկամակութեամբ կրնայէին իրեն: Անոր համար Թէպէտ եւ կրցաւ Հայրապոսեան դաշնաւորութիւնը զնելով (1633, Ապր. 13), Փրանգիայի, Շուարիայի եւ Ալերինն ու Ստորին Ռենտսի դաւառներն իրեն հետ անձկութեամբ կապել. բայց ասով ալ իր փառասիրական նպատակներուն չէր կրնար հասնիլ: Արդէն իրեն դէմ եղած ոգին անով ալ կը տեսնուի, որ Սպարսնիա եւ Պրանտենպուրկ նոյն դաշնաւորութեան մէջ չմտան:

182. Ալալինշղայնին երկղիծի ընթացքն ու մահը: Հետեւեալ ամիսները Շուեաթի իշխանութիւնը, Աուստաւ Ատուլֆին աշակերաններուն՝ Ալայմարի Բեռնարդ դքսին եւ Աուստաւ Հոանին առաջնորդութեան տակ, գրեթէ բոլոր Քերմանիայի վրայ տարածեցաւ. բայց այնպէս կ'երեւար որ ասոր պատճառն է Ալալինշղայնին Բոհեմիա կամաւորապէս անգործ կենալը: Նոյն հրամանատարը, որն որ 40,000ի չափ զօրք ունէր, բոլոր ձմեռն ու դարունն անգործութեամբ անցընելէն ետեւ, զինազաղար բքաւ (1633, Յունիս). եւ քիչ մը վերջը սկսաւ Օ. քսենսոգիւնայի ու Քաղղիայի Ֆէզրիէր զետպանին հետ բանակցիլ, իր բուածին նայելով՝ ընդհանուր խաղաղութիւն մ'ընելու նպատակաւ: Ետքը մէկէն զինազաղարն արելով, Շղայնաթի քով Շուեաններուն վրայ յարձակեցաւ, նոյն քաղաքն առաւ

եւ հռչակաւոր թուռն կոմսը բռնեց. բայց քիչ մը վերջը ան ապստամբ զորապետն ազատ թող տուաւ : Աս ատենները Պառիւրայի Մաքսիմիլիան դուքոր վերջին աստիճանի նեղ մաներով, կայսրմէ օգնութիւն կը խնդրէր : Պերդինանդ եօթն անգամ Ալլենշդայնին հրաման խաւրեց որ Պառիւրա երթայ . բայց անիկայ հազիւ վերջապէս Ալտինկէր զորապետը հոն խրկեց : Իսկ ինք Ֆիւրթի քով դնաց բանակեցաւ (1633, Գեկա) . սակայն քիչ մը ետքը նորէն Բոհեմիա դարձաւ : Այս ամենայն տեսնելով, Ալլենսայի մէջ սկսան իր հաւատարմութեան վրայ իրաւամբ կասկածիլ, եւ աս կասկածն այնչափ աւելի սաստկացաւ, որչափ որ կարծես թէ ինք չէ թէ միայն անփոյթ կ'ըլլար փարատելու, հապա իր բռնած ընթացքովը նոյն կասկածն աւելի կը հաստատէր : Ալլենշդայնին վրայ եղած ամբաստանութիւններուն գլխաւորն ան էր, որ արդէն 1630էն վեր Աուստա Ատոլֆին հետ զազունի թղթակցութեան մէջ եղած ըլլայ : Աս ստոյգ է որ իր բռնած ընթացքը՝ վեհապետի մը համար պատերազմող զորապետի ընթացք չէր, հապա անկախ ու բացարձակ իշխանի, որն որ ամենուն եւ իր վեհապետին իսկ օրէնք կ'ուզէր տալ : Բայց առաջին ամբաստանութիւնները սուտ ալ ըլլային, հիմակուան ըրածները բաւական էին զինքն ապստամբի տեղ դնել տալու : Ասան զի երբ որ կայսրն իրեն պատուէր խաւրեց որ վերին հրամանատարութիւնը թողու, ինք թէպէտ արտարուստ հնազանդելու խօսք տուաւ, բայց անանկ կերպով մը սկսաւ շարժիլ, որ յայտնապէս կը տեսնուէր թէ միայն ժամանակ վատարկիլ կ'ուզէ : Իրօք ալ իր զորապետները խորհրդի կանչելով, անոնց խնդրածին համեմատ՝ խոտացաւ որ հրամանատարութիւնը չիթողուր, ինքն ալ անոնցմէ խօսք առաւ որ իրմէ շրաժնուին եւ միշտ իրեն հնազանդին (1634, Յունու, 12) : Անոր համար կայսրը զԱլլաա զորապետը վերին հրամանատար անուանեց եւ հրամայեց որ զԱլլենշդայն բռնեն : Աս բանիս այն-

չափ աւելի իրաւունք ունէր, որ նոյն հրամանատարը քիչ մը ժամանակէ վեր բանակցութեան մէջ էր Գաղղիայի Ֆէօքիէր դեսպանին հետ, որն որ իրեն կ'առաջարկէր որ Գաղղիայի հետ դաշնակցի, եւ տարին մէկ միլիոնի օգնութիւն առնելով, Բոհեմիայի թագաւորութիւնը ձեռք բերէ. որուն թէպէտ Ալլենշդայն յայտնապէս հաւանած չէր, բայց ասանկ առաջարկութեան վրայ բանակցիլն ալ՝ մասնութիւն չէ մի քիչ Տ'ետրը կայսրը զինքը մասնիչ հրատարակեց (Փետր. 18). իսկ բռնելու հրաման ունեցողները՝ զիշերանց զինուորի մը ձեռքով մեռցրնել տուին (Փետր. 25), սակայն կայսրն աս բանիս մէջ ամենեւին մասնակցութիւն չունէր: Աս կերպով վախճանեցաւ Ալլենշդայն, որուն առջեւը կրնայ ըսուիլ որ համօրէն Եւրոպա կը դողար: Ափսոս որ իր թեթեւամիտ փառասիրութեամբն ու անհաւատարմութեամբը՝ իր քաջութեան համբաւն ազարտեց. եւ իր մահաւամբը՝ գոնէ իր երկգլխի ընթացից ու սաստիկ փառասիրութեան պատիժը գտաւ:

183. Նէօրտլինկէնի ծակատը: Սաքսոնիայի ու Պրանսոննպուրկի կայսրընտիրները կայսեր հետ կը միանան: Ալիզոզոքի ծակատը: Ալլենշդայնին մահօրէնէն ետքը շուտ մը մեծամեծ փոփոխութիւններ եղան, որոնց պատճառներէն մէկն ան էր, որ Փերդինանդ կայսեր համանուն որդին, որն որ Հունգարիայի ու Բոհեմիայի թագաւոր էր, կայսերական զօրաց վերին հրամանատար դրուեցաւ, իր քովն ունենալով Աալաս զօրապետը: Նոյն սարի Նէօրտլինկէնի քով տրուած ծակատը (1634, Սեպտ. 6—7), որուն մէջ Շուետթ մեծ պարտութիւն կրեցին եւ իրենց Հոռն երեւելի հրամանատարը մեռաւ, մէկէն կայսերական զինուց սաստիկ մեծ առաւելութիւն տուաւ: Ասոր մէկ հետեւութիւնն ալ ան եղաւ որ Սաքսոնիայի կայսրընտիրը, որն որ միշտ եւ մանաւանդ վերջին ստեղծները Շուետտներուն դէմ էր, կայսեր հետ հաշտուելով, քիչ մը ետքը Բրակայի խաղաղութեան դաշինքը գրաւ (1635,

Մայ. 30), որով իր ձեռքը մնաց Լաւօից, զորն որ զօրքով բռնած էր: Նոյնպէս Պրանտենպուրկի Գեորգ Գուլիելմոս կայսրընտիրը, Սպրսնիայի օբինակին Հետեւելով, նոյն խաղաղութեան դաշանց մէջ մտաւ (1635, Օգոստ. 27): Աս վերջինն այնչափ առաւել պատճառ ունէր սա բանս ընելու, որչափ որ Հիմամբ կը վախնար թէ Շուետք շնն ուզեր ձեռքէ թողուլ Բոմբերանիա դաւառը, որուն վրայ Պրանտենպուրկ Հաստատուն իրաւունք ունէր: Հիսթրային Գերմանիայի պետութեան քաղաքներն ալ իրենց Հետ միացան. բայց Հարաւային Գերմանիայի իշխաններն իրենց կողմը վատորկելու ջանքերնին պարսպ ելաւ: Շուետք թէպէտ եւ սա վերջիններուն օգնութիւնն ունէին եւ Գաղղիայի Հետ ալ նոր դաշնաւորութիւն բրած էին, ինչպէս քիչ մ'ետքը պիտի տեսնենք, ի վերայ այսր ամենայնի ստիպեցան մինչեւ Բոմբերանիա ետ քաշուիլ. բայց Ախդաղքի քով կայսերականաց ու Սպրսնիացոց վրայ մեծ յաղթութիւն մ'ընելով (1636, Սեպտ. 24), նորէն զօրացան եւ սկսան դարձեալ Սպրսնիայի վրայ քալել: Օքսենսդիոննա նոյն ատենները Գերմանիայէն ելաւ Շուետ գնաց:

Գ.

Գաղղիական միջոց (1635—1648):

164. Գաղղիա եւ Սպանիա պատերազմին մէջ կը մտնեն: Ապմարի Բեռնարդ զուքսը: Պատերազմն սա Ժամանակները մեծապէս ընդարձակեցաւ ու սաստկացաւ, որովհետեւ Գաղղիա ու Սպանիա ալ մէջը մտան: Արդէն յառաջագոյն ստորին Գերմանիայի իշխանները, Ախրդեմպերկի ու Պատնի առաջնորդութեամբ, Գաղղիայի Հետ միաբանած էին, եւ Էլլաս գաւառը խոստանալով ու խօսք տալով որ նոյն տերութեան Հաւանելովը միայն կայսեր Հետ խաղաղութիւն

կ'ընեն, Հայկազունեան դաշնաւորութեան (181) մէջ առած էին (1634, Նոյեմ. 11) : Ասկից զսա քիչ մը յառաջ Շուեաի ու Գաղղիայի մէջ դրուած դաշանց զօրութեամբ, Էլլասի մէջ տասնուեօթը քաղաք ու Ռենոսի քով Փիլիպպուրկի ամրոցը Գաղղիացւոց տրուած էր : Սակայն նոյն նախատալից դաշինքն օգուտ մը չէր բրած, եւ Փիլիպպուրկի ամրոցն իրենց ձեռքէն առնուած էր : Իսկ Ալյամարի Բեռնարդ դուքսը, որն որ Գաղղիայի օգնութեամբն ալ Ռենոսի աջ եզերքն ինք զինքը չէր կրնար բռնել, բոլորովն նոյն տէրութեան անձնատուր եղաւ : Եւ Սէն Ժերմէն ան Լէի ամօթալի դաշինքը դրաւ (1635, Հոկտ. 27), որով Գաղղիա տարին իրեն շորս միլիոն ֆրանգ պիտի տար, ինք ալ 12,000 հետեւակ ու 6000 ձիաւոր զօրք պիտի հանէր, զորոնք՝ արտաքուստ իբրեւ Գաղղիայի դաշնաւորաց զօրավար պահելով, բուն Գաղղիացւոց ուզած նպատակին պիտի դործածէր՝ նաեւ Շուեաի եւ ուրիշ դաշնաւորաց կամքին հակառակ : Ասոնց դիմացն իրեն Էլլաս գաւառին աշխարհակամսութիւնը կը տրուէր : Նոյն միջոցին Գաղղիացիք փուճ պատճառաւ մը Սպանիական Ստորին նահանգաց կուսակալին պատերազմ հրատարակեցին (1635, Մայ.) : Արդէն յառաջագոյն Ռիչլիէօ հազարգակցութեան մէջ մտած եւ դաշնադրութիւն բրած բլալով (1635, Փետր. 8) Հոլանտացւոց հետ, որոնք Սպանիայի հետ պատերազմի մէջ էին (153), կրնայ ըսուիլ որ Գերմանական պատերազմը՝ Հոլանտական-Սպանիական պատերազմին հետ ձուլեցաւ մէկ եղաւ : Բայց Գաղղիայի պաշտօնէին նպատակը՝ միայն Աւստրիայի ու Սպանիայի թշնամիներուն օգնութիւն ընել եւ նոյն տէրութիւնները խոնարհեցընել չէր, հապա իսկզբանէ աշխարհակալութեան գաղափարներ ալ ունէր : Մասնաւորաբար Հոլանտայի հետ բրած դաշնադրութեան վախճանն ան էր, որ մէկտեղ Սպանիական Ստորին նահանգներն առնուն ու մջերնին բաժնեն :

185. Փերդինանդ Բ-ին ու Վայմարի դքսին մահը: Ըստ ժամանակների Փերդինանդ Բ. կայսրը, իր կենդանութեան ատեն՝ իր Փերդինանդ (Գ.) որդին, որն որ արդէն՝ ինչպէս ըսինք՝ Հունդարիայի ու Բոհեմիայի թագաւոր էր, Ռեկենսպուրկ կայսրընտիրներու ժողովոյն մէջ լիուլի քուէներով Հռոմայ թագաւոր ընտրել տալէն ետեւ (1636, Գեկա.), վախճանեցաւ (1637, Փետր. 15): Քիչ վեհապետ կը գտնուի, որուն վրայ երկու հակառակ կուսակցութեանց դատաւարանն իրարու այնչափ դէմ ըլլայ, ինչպէս Փերդինանդ Բ-ին վրայ բողոքականաց եւ ուղղափառաց բրած դատաւարանը. եւ Փիլիպպոս Բ.էն զատ՝ ուրիշ վեհապետ չկայ, որուն դէմ նորազանդք այնպէս դէշ խօսին: Սակայն առիկայ անժխտելի ճշմարտութիւն մըն է, որ Փերդինանդ հաստատուն բնութեան տէր էր եւ իր ամէն գործքերուն առաջնորդ ունէր իր խիղճը. իր կրօնը պաշտպանելու համար վտանգէ չէր վախնար: Չախորդութեանց մէջ չէր վհատեր, իսկ յաջողութեանց մէջ չափաւորութիւնը երբեք ձեռքէ չէր թողուր: Եւ թէ եւ ըսուի որ բողոքողաց դէմ բանեցուցած միջոցները խիստ ու երբեմն անխոհեմ էին. բայց պէտք է ամէնքը խոստովանին որ երբեք արդարութեան դէմ չէին: — Ինչպէս որ Կուստաւ Ըտտլֆին մահը պատերազմին ընթացքին վրայ մեծ ազդեցութիւն չէր բրած, նոյնպէս Փերդինանդին մահն ալ չէր կրնար ընել: Իր որդւոյն ու յաջորդին ատենն ալ պատերազմը փոփոխ յաջողութեամբ յառաջ կ'երթար, բոտ մեծի մասին Գերմանացի՝ Գերմանացւոյ դէմ կռուելով: Գերմանական իշխաններէն օտարաց հետ միացած՝ իրենց հայրենիքին դէմ պատերազմ ընողներուն մէջ, զլիաւորն էր Վայմարի Բեռնարդ գուբոր, զորն որ Ռիչլիէօ ուղած էր իր նպատակներուն գործիքի պէս գործածել: Բայց աս Կուստաւ Ըտտլֆին հաւատարիմ աշակերտն աւելի իր անձին՝ քան թէ ուրիշներուն համար կը պատերազմէր: Անոր համար իր անակնկալ մահը (1639, Յուլ. 8),

կրնայ բառիչ որ Աւստրիայէն առելի՝ Գաղղիացին ուրախութիւն պատճառեց, ճանաւանդ որ Գաղղիացիք անոր բանակն ալ իրենց ձեռքն անցուցին:

186. Պատերազմին վերջին տարիները: Շուետի զէնքերը Պաննէրի հրամանատարութեան տակ նորէն սկսած էին յաջողութիւն ունենալ: Շուետք կայսերական զօրքը մինչեւ Սիլեզիա ու Բոհեմիա քշեցին, եւ նոյն երկիրներուն մէջ սաստիկ աւեր ու ապականութիւն բնեղէն եւ կայսերականներէն մերժուելէն ետեւ, նոյնպիսի շարիքներ գործելով՝ Սպրսանիայէն անցան ու Պրանչուայկ մտան, հոն ձմերելու համար: Պրանտենպուրկի Գեորգ Գուլիելմոս կայսրընտիրն ան միջոցին մեռնելով (1640, Նոյեմ.), իր Փրեդերիկոս Գուլիելմոս յաջորդք Շուետաց հետ զինագաղար բրաւ: Նոյն ատենները կայսրը Ռեկենսպուրկ աւազածողով մը գումարեց, եւ Շուետներուն ու Գաղղիացիներուն հետ դաշնաւոր եղող բոլոր Գերմանացի իշխանաց ապահովագիր՝ խաւրեց, որպէս զի դան խաղաղութեան վրայ խօսին: Ետքը նաեւ ամենուն ընդհանուր թողութիւն խոտաացաւ (1641, Օգոստ.), իրրեւ պայման դնելով որ աշխարհական ստացուածոց նկատմամբ՝ 1630ին, իսկ եկեղեցական ստացուածոց նկատմամբ՝ 1627ին վիճակը նորէն հաստատուի: Աւազածողոյցն սկսած ատենները Շուետի Պաննէր զօրավարը Գաղղիացոց Կէպրիան զօրապետին հետ միանալով, սկսաւ Ռեկենսպուրկի վրայ քալել, որպէս զի աւազածողովը ջրուէ (1641, Յունու.): Բայց կայսրն ու աւազանին ասիկայ բանի տեղ չդնելով, իրենց գործքը յառաջ տարին ու գլուխ հանեցին: Իսկ նոյն զօրապետն իր արշաւանքին մէջ հիւանդութեամբ մեռաւ: Իր տեղն անցաւ Գորսզենասն զօրապետը, որն որ իր բանակը զօրացրնելով, երկրորդ տարին Սիլեզիա ու Բոհեմիա յարձակեցաւ (1642, դարձան). եւ մէկ քանի քաղաք առնելէն ետեւ, Վիլննայի վրայ քալելու կը պատրաստուէր. բայց

բանակին մէջ հիւանդութիւն իյնալուն համար՝ առած տեղերը պահապան զօրք ձգեց ու ետ քաշուեցաւ : Սաքսոնիայէն անցնելու ատեն, Լիփսիայի քով մեծ յաղթութիւն բրաւ Լէօբովա Գուլիելմոս արքիդքոսին ու Բիզգովումբի զօրապետին հրամանատարութեան տակ ելող կայսերական զօրաց վրայ (1642, Հոկտ. 23) : Հետեւեալ տարին դարձեալ Սիլեզիա, Բոհեմիա ու Մորաւիա արշաւանք մ'բրաւ եւ մինչեւ Ղիէննա հասաւ : Բայց աս արշաւանքն երեւելի հետեւութիւն մը չունեցաւ, որովհետեւ հրաման ընդունեցաւ ետ քաշուելու : Ինք Սաքսոնիայէն անցնելով՝ դէպ ի Հոլզայն գնաց եւ թէ նոյն երկիրն ու թէ Շլէզուիկ եւ Եուզլանտ բռնեց : Ըստ պատճառն ան էր, որ Գանիա արդէն շատնցուրնէ (1636էն) վեր իր միջնորդութեամբը խաղաղութիւն բնել տալու ջանալէն ետեւ, յանդուգն Շուեաները խոնարհեցրնելու համար՝ զինեալ զիրք մ'առած էր, որով երկու տերութեանց մէջ պատերազմ բացուեցաւ (1643) : Եւ հազիւ երկու տարի ետքը Գաղղիայի միջնորդութեամբ, Շուեաներուն ուղած պայմաններով խաղաղութիւն եղաւ (1645, Օգոստ. 13) : Ըսկէ ետեւ պատերազմը երեք տարի մ'ալ շարունակեցաւ զանազան տեղեր, որուն մէջ Գաղղիացուց կողմանէ գլխաւոր դործողներն էին Գոնտէ ու Գիւրէն անուանի զօրապետները, իսկ Շուեաաց կողմէն՝ Ղրանիլ զօրապետը, որոնք երբեմն առանձին եւ երբեմն մէկտեղ կը պատերազմէին : Ղերջապէս թշնամեաց միացեալ բանակը Բրաւիայի առջեւ հասած, ուստի եւ պատերազմը սկսած տեղը նորէն դարձած ատեն, Ղեոգֆալեան խաղաղութեան լուրն եկաւ, որով նոյն պատերազմը 30 տարի տեւելէն ետեւ՝ վերջացաւ :

վեպաֆալեսն ու Պիտրենեսն խաղաղութիւններ
(1648 — 1659):

187. Խաղաղութեան բանակցութիւնք: Խաղաղութիւն բնելու փորձք շատոնց սկսած էր: Յառաջագոյն եղած փորձերը թող տարով, Ռեկենսպուրկի (1641ին) աւագածոզովոյն մէջ պատրաստութիւնները տեսնուելէն ետեւ, Գանձայի միջնորդութեամբ բանակցութիւնները սկսած էին (1641): Բայց երբ որ մէկ կողմանէ գլխաւոր տէրութեանց ղեկավանները Համպուրկ ժողովելով, նախակարգ պայմաններուն ստորագրած եւ խաղաղութեան բուն դաշինքը դնելու համար տեղն ու ժամանակն որոշած էին (Գեկտ. 25), մէկալ կողմանէ պատերազմը յառաջ կը վարուէր, որով խաղաղութեան հաստատութիւն միշտ կ'ուշանար. վասն զի երկու կողմն ալ կը յուսար որ մեծ յաղթութիւն մ'ընելով, խաղաղութեան դաշանց մէջ իրեն աւելի նպատակաւոր պայմաններ կրնայ դնել: Վերջապէս Միւնտզեր եւ Օսնապրուդ խաղաղութեան ղեկավանածողովք սկսեցին ետեւ (1645, Ապր. 10) բանակցութիւնները երկք տարի տեւեցին: Զարմանք ալ չէ, որովհետեւ ստուգիւ յաղթելու մեծամեծ դժուարութիւնք կային, եւ քանի մը մեծ տէրութեանց խառնաշփոթ յարաբերութիւնները՝ խաղաղութեան ղեկավանածողովոյն անանկ բնդարձակութիւն մը կու տային, որ Եւրոպայի մէջ գրեթէ նոր երեւոյթ մը կ'ըլլար: Աւստրիա՝ Շուեստի եւ Վերմանիայի քանի մը նորազանգ իշխաններու հետ պատերազմի մէջ էր. Շուեստ՝ Աւստրիայի, Պալտիրայի ու Սաքսոնիայի հետ, Գաղղիա՝ Աւստրիայի ու նոր դաշնաւորաց, Ինչպէս նաեւ Սպանիայի հետ. Սպանիա՝ Գաղղիայի, Բորգուկալի ու Ստորին Նահանգաց հետ: Անոր համար ալ ղեկավանածողովք բացուելու ատեն՝ խաղաղութեան յոյսը շատ տկար էր: Իբրք ալ

ինչ արգելքներ չէին դներ քանի մը գեազանայ՝ չէթէ միայն պահանջումները, հապա նոյն իսկ իրենց բնասութիւնը, մանաւանդ թէ իրենց մէջ պահուելու կարգն ու արարողութիւնները: Ասանկով տակաւին գրեթէ բան մը չէր եղած, երբ որ կայսերական նոր գեազան Գրաւզմանտորֆ կամը գալով (1643, Նոյեմ.), իր ճարտարութեամբն ու խելացութեամբ բոլոր գեազանադիտական գծուարութիւնները կրցաւ վերցրնել:

188. Արոշուելու նիւթեր: Անոյֆայիան խաղաղութիւն: Ա իճման գլխաւոր նիւթերն ասանք էին: Ե. Արոշել ժամադիր ժամանակ մը, որուն մէջ իւրաքանչիւր տէրութեան կամ իշխանին՝ ինչ կերպով որ ըլլայ՝ ձեռքն ունեցած ինչքերն ու իրաւունքները, իրեն իրաւացի ստացուածը սեպուի: Աս նիւթին վրայ երկու կարծիք կար. Գաղղիա, Շուեա ու նորազանդ իշխանք կ'ուզէին՝ որ 1618 տարւոյն վիճակը, իսկ Աւստրիա կ'ուզէր որ 1630 տարւոյն վիճակը իրբեւ հիմ առնուի: Բ. Արոշել թէ ինչ հասուցում պիտ'որ ըլլայ եւ ինչ կերպով թէ Գերմանիայի առանձին առանձին իշխաններուն եւ թէ մանաւանդ Գաղղիայի ու Շուեաի, որոնք խիստ տարապայման պահանջումներ կ'ընէին. օրինակի համար Շուեաք ուրիշ պահանջումներէն զատ՝ գրամական հասուցում ալ կ'ուզէին: Գ. Ֆալցի ցեղին նորէն իր իշխանութեան մէջ հաստատուիլը: Ասանցմէ զատ՝ մեծ գծուարութիւն մ'ալ ան էր, որ նորազանդ իշխանք՝ ուր որ իրենց ազանդներուն համար բացարձակ ազատութիւն կը պահանջէին, ուղղափառութեան չէին ուզեր ամենեւին ազատութիւն թողուլ. կամ թէ ուրիշ խօսքով բսելով, ազատութիւն կը պահանջէին չէ թէ միայն իրենց ազանդները տարածելու, հապա ուղղափառութիւնը ջնջելու համար ալ: Այս ամենայն բուն իսկ իրաց ներքին վիճակէն ծագած գծուարութիւններէն զատ, ան ալ կար որ Գաղղիա ամէն կերպով կը ջանար Հոլանտային՝ Սպանիայի հետ հաշտուիլն արգելել: Բայց վերջապէս ամէն բան կարգի գրուեցաւ, եւ երեսուն

տարի պատերազմ ու երկը տարիէ աւելի բանակցութիւն ըլլալէն ետեւ, խաղաղութիւնը հաստատուեցաւ: Սակայն ասով՝ մէյ մը Սպանիայի ու Հոլանդացի մէջ եղած պատերազմը լմբնցաւ (1648, Յունու. 30), մէյ մ'ալ Գերմանական պատերազմը. իսկ Գաղղիայի ու Սպանիայի մէջ եղած պատերազմն, ինչպէս նաև Սպանիայի ու Բորգուկալի մէջ եղածն ասով չվերջացան, հասցա առաջինը՝ տասնումէկ տարի ետքը Պիւրենեան խաղաղութեամբ, իսկ վերջինն աւելի ուշ, ինչպէս իւրաքանչիւր տեղերը կը տեսնենք: Գերմանական խաղաղութեան դաշինքը դրուեցաւ (1648, Հոկտ. 24) Միւնստեր քաղաքը՝ կայսեր ու Գաղղիայի մէջ, եւ Օւնապրիւզ քաղաքը՝ կայսեր ու Շուեաի մէջ: Բայց երկուքին որոշումներն, իրենց մէջ յայտնապէս հաստատուածին համեմատ, իբրև մէկ խաղաղութեան դաշինք պիտի սեպուէին, եւ երկուքը մէկտեղ Ղեոզֆաւլեան խաղաղութեան դաշինք կոչուէին:

189. Գաղղիայի, Շուեաի եւ Գերմանական իշխանաց տրուած հատուցումը: Ա՛ դաշինքով հաստուցում ընդունեցան, արտաքին տէրութիւններէն՝ Գաղղիա ու Շուեա. իսկ կայսրութեան աւագանւոյն անդամներէն՝ Սպրտնիա, Պրանստենպուրկ, Հեսսէն-Գասսէլ, Մէքլենպուրկ եւ Պրանշուայկ-Լիւնեպուրկ: — Գաղղիա ընդունեցաւ Էլլտաս դաւատին ան մասը՝ որն որ Աւստրիայի տանն էր. Մէքի, Գուլի, Ղերտեօնի, Պրայուսիի վրայ, ինչպէս նաև Իտալիայի մէջ Բիւներրոլի վրայ արդէն զբաւած իշխանութիւնը կամ տէրութիւնը հաստատուեցաւ, Փիլիպպուրկի մէջ ալ՝ պահակապան զօրք պահելու իրաւունք ստացաւ: Արովհետեւ Գերմանացիք չէին ուզեր որ Գաղղիայի թագաւորները կայսրութեան աւագանւոյն անդամ սեպուելով՝ աւագաժողովոյն մէջ կարենան մանել, անոր համար լաւագոյն սեպեցին որ Գաղղիայի թող տրուած բոլոր երկիրները նոյն տէրութեան երկիրներուն հետ կատարեալ միանալով, ալ Գերմանական պետութեան եր-

կիրներուն մատուցին ըլլալէն դադրին: — Հուկտ ընդ-
ունեցաւ Բովերանիայի յառաջակողմը՝ Ռիւկէն կղզւոյն
եւ յետակողման Բովերանիայի մէկ մասին (Հրեղդի-
նի) հետ, Ախմար, Գրեմէն եւ Ալերտէն: Բայց այս եր-
կիրները՝ Գերմանական պետութեան մաս պիտի մնայ-
ին, անանկ որ Հուկտի թագաւորներն՝ իրրեւ անոնց
տէր, պետութեան աւազանւոյն անդամ կ'ըլլային եւ
Գերմանիայի աւազաժողովոյն մէջ գահ ու քուէ կ'ու-
նենային: Ասկից զատ Հուկտը հինգ միլիոն թալէր ալ
առին իրենց զօրաց դաջած ծախքին համար: — Գեր-
մանիայի աւազանւոյն վերջիչեալ անդամներն ալ նոյն-
պէս կամ երկիր եւ կամ դրամ ընդունեցան: Աս ամէն
դրամական հասուցումներն ընելու՝ շատ ստակ պէտք
ըլլալով, նոյնը ձեռք բերելու համար քանի մ'արգէն
նորաղանդութեան դարձած եկեղեցական հիմնարկու-
թիւններն աշխարհականացուցին. սս պատճառաւ է՝
որ քահանայապետը նոյն խաղաղութեան դաշանց դէմ
բողքեց:

190. Գերմանիայի ներքին յարաբերութեանց
վրայ որոշումներ: Խաղաղութեան դաշինքով կարգի
գրուելու զլիաւոր նիւթերուն մէկն ալ՝ Գերմանական
պետութեան ներքին թէ կրօնական եւ թէ քաղաքա-
կան յարաբերութիւններն էին, որոնք երկայն ժամա-
նակէ վեր տակնուվրայ եղած ըլլալով, ինչպէս մինչեւ
հիմայ տեսանք, երկպառակութիւններու եւ կոխներու
անսպառ ազրիւր մըն էին: Արդ կրօնական նկատմամբ
որոշեցաւ, որ Աւիստոբիլի դաւանութեան հետեւող-
ներուն (լուտերականաց) շատ անգամ արուած խա-
ղաղութիւնը կամ իրաւունքները՝ բոլոր ուրիշ նորա-
ղանդներուն կամ Նորոգելոց (կալուինականաց) վրայ
ալ տարածուի, եւ ամէնքն իրաւանց կատարեալ հա-
ասարութիւն ունենան: Աս բանիս թէպէտ լուտե-
րականք սաստիկ ընդդիմացան, սակայն կալուինականք՝
ուղղափառներէն օգնութիւն գտնելով՝ կրցան զլուխ
տանիլ: Եկեղեցական ընչից գալով, 1624 տարւոյն

վիճակն իրրեւ հիմն առնուեցաւ . եւ ապագային համար ալ Եկեղեցական վերապահութեան վճիռն (32) իրրեւ վաւեր ընդունուեցաւ : Նոյնպէս ըստ սկզբան կամ ի վերացեալն ընդունուեցաւ Նորոգութեան իրաւունքն ալ (161), զորն որ նախ նորազանգ իշխանները եւ ետքը անոնց օրինակին հետեւելով՝ ուղղափառք ալ իրենց հպատակաց վրայ կը բանեցընէին : Բայց ասոր մէջն ալ 1624 տարւոյն վիճակն իրրեւ հիմն առնուեցաւ . այս ինքն թէ ամենուն ապահովութիւն տրուեցաւ որ 1624ին դաւանած կրօնին կրնան պահել եւ անոր պաշտամունքը վերոյիշեալ տարին եղածին պէս կրնան կատարել : — Քաղաքական յարաբերութեանց նկատմամբ որոշեցաւ որ ընդհանուր անյիշութիւն կամ թողութիւն տրուի, եւ ամենուն ալ արդէն տրուած պատիժներն ըստ կարելոյն՝ ետ առնուին : Միայն Փալցի նկատմամբ աս շափաւորութիւնը դրուեցաւ, որ նոյն ջեղին համար ութերորդ կայսրընտրութիւն մը հաստատուի . իսկ իրմէ առնուած հինգերորդ կայսրընտրութիւնը՝ Վերին Փարթի երկիրներուն հետ՝ Պաւլերայի ձեռքը մնայ (170) : Պետութեան բոլոր աւազանոյն՝ իրենց երկիրներուն վրայ ձեռք բերած դրեթէ անկախ ու բացարձակ վեհապետութիւնն օրինոջք եւ իրաւամբ հաստատեցաւ, ինչպէս նաեւ իրենց բոլոր հին իրաւունքներն ու արտօնութիւնները նորէն ապահովուեցան : Արտեցաւ որ ամէնքն ալ պետութեան իրողութեանց մէջ քուէարկութեան իրաւունք, նոյնպէս թէ իրարու եւ թէ արտաքին տէրութիւններու հետ դաշինք դնելու իրաւունք ունենան, բաւական որ դրած դաշինքնին կայսեր ու պետութեան հակառակ կամ վնասակար չըլլայ :

191 . Երեսնամեայ պատերազմին Գերմանիայի նկատմամբ ունեցած հետևութիւնները : Ըստ զարհուրելի պատերազմէն յառաջ եկած հետևութիւնները խիստ ծանրակշիռ եղան գլխաւորաբար Գերմանիայի : Նոյն պատերազմով եւ անոր վերջ տուող խաղաղու-

Թեան դաշինքով կայսեր ձեռքն ուրիշ իշխանութիւն չմնաց, բայց եթէ պետութեան իրողութեանց վերին տեսչութիւնը, ան ալ աւելի անուամբ՝ քան թէ արդեամբք: Ընդհանրապէս աւագանւոյն մէջ եղած կապը քակուելով, միայն արտաքին երեւութով՝ մէկ մարմնոց անդամ մնացին. իսկ իրօք իրարու նկատմամբ չէ թէ միայն օտարի՝ հապա թշնամոց պէս եղան, մանաւանդ կրօնական կողմնակցութեանց պատճառաւ: Ասկից զատ, վերը զուցածնուս պէս, Գաղղիայի թողարուած երկիրները՝ Գերմանական պետութեան մասը ըլլալէն դադրելով, կայսրութեան սահմաններն երեւելապէս նուազեցան: Նոյնին վրայ ան ալ աւելորեն է, որ ըստ մասին նոյն պատերազմով տէրութեանց յարաբերութիւններուն խառնաշփոթելէն, ըստ մասին ալ անկից անկախ պատահող թէ քաղաքական եւ թէ կրօնական շփոթութիւններէն, նաեւ Ստորին նահանգներն ու Հելլենտիա, որոնք յառաջագոյն Գերմանիայի մաս կը սեպուէին, ալ բոլորովին անկից բաժնուեցան: Առաջիններուն Գերմանիայի վերին իշխանութենէն ելլելը՝ կայսրն ու գերմանական աւագանին լրութեամբ ընդունեցան. իսկ վերջինը՝ որն որ արդէն շատոնց իրօք Գերմանիայէն բաժնուած էր, Աւստրիական խաղաղութեան դաշանց մէջ Գաղղիայի բաղձանքին համեմատ՝ կերպապէս ալ իբրեւ Գերմանական պետութենէ անկախ ճանչցուեցաւ: Պատերազմին փաստակար հետեւութիւններէն մէկն ալ ան եղաւ, որ օտար տէրութիւնք վարժեցան Գերմանիայի ներքին իրողութեանց մէջ խառնուելու: Մանաւանդ որ աս խաղաղութեան դաշինքով կայսեր ու աւագանւոյն մէջ սրբուածներուն հաստատուն պահուելուն համար Գաղղիա եւ Շուես երաշխաւոր սահմանուելով. ինչպէս ըստ ինքեան կը հետեւի, որինաւոր կերպով հիմ դրուեցաւ օտար տէրութեանց՝ Գերմանիայի ներքին իրողութեանց խառնուելուն: Ասանկ փաստակար հետեւութիւններ ունեցաւ Գերմանիայի համար նորազանգու-

Թիւնը եւ քանի մ'իշխաններուն նոյնն իրենց փառա-
սիրական նպատակին ու անձնական շահուն գործա-
ծել ուղիւ: Բայց սա ալ ըսելու է որ զոնէ երկիրներու
ստացուածին փոփոխման նկատմամբ, սա հետեւու-
թիւնները խիստ թեթեւ կամ նուազ են՝ քան որ-
չափ որ նոյն պատերազմին մէջ երբեմն երբեմն կ'ե-
րեւար թէ պիտի ըլլան: Իրօք ալ նոյն հետեւութիւն-
ներն անտարակոյս շատ աւելի կ'ըլլային, եթէ Աուս-
տաւ Ատոլֆին ու Ալպրէնշդայնին՝ իրենց ընթացից մէջ
մէկէն պակսելովը, իրենց փառասիրութեան ու մեծ-
նալու բաղձանքին սահման մը գրուած չըլլար:

192. Երեսնամեայ պատերազմին բոլոր Եւրո-
պայի վրայ ըրած ազդեցութիւնը: Իսկ բոլոր Եւրո-
պայի տէրութեանց գումարութեան ընդհանուր քա-
ղաքականութեան նկատմամբ, Երեսնամեայ պատերազ-
մը՝ հետեւեալ ազդեցութիւններն բրաւ: Ա. Գեր-
մանիայի ներքին շիտթութիւնները՝ Եւրոպայի կէտը
պատերազմի մէջ ձգած ըլլալով, անոր հանդարտու-
թիւնն ու հաստատութիւնն ամենուն աչքին առջևը
յառաջունէ շատ աւելի ծանրակշռութիւն ստացա-
ուտի եւ Գերմանիա պահպանելու սկզբունքը, որն որ
գործնականապէս ընդունուած էր, անբաժին կերպով
կապեցաւ տէրութեանց հաստատակշռութիւնը պա-
հելու գաղափարին հետ, որուն հարկաւորութիւնը ետ-
քէն աւելի եւս ծանցուեցաւ եւ հաստատուեցաւ:
Ասով կը տեսնուի որ Աւստրիական խաղաղութեան
դաշինքը Եւրոպայի ապագայ քաղաքականութեան հիմն
եղաւ, չէ թէ բոլոր քաղաքական յարաբերութիւն-
ներն որոշելով, հապա քաղաքականութեան գլխաւոր
սկզբունքները յառաջունէ շատ աւելի հաստատելով:
Բ. Գաղղիայի ու Շուեսի մէկտեղ միանալովը՝ Եւրո-
պայի հիւսիսային ու հարաւային կողմերն իրարու հետ
մտաւոր յարաբերութեանց մէջ մտած էին: Բայց սա
միաբանութիւնը տեւական շահերու նոյնութեան վրայ
հիմնուած չըլլալով, երբ որ նոյնին առժամանակեայ

պատճառք, այս ինքն՝ Աւստրիայէն ունեցած վախեր-
նին կամ թէ զանիկայ խոնարհեցրնելու առիթը վեր-
ցաւ, ալ նոյն միտարանութիւնը թոյլնալու սկսաւ, մա-
նաւանդ որ Շուեստի քրիստինէ թագուհին նոյնը՝ միայն
անոր համար կ'ուզէր զործածել, որ Գաղղիայէն օգնու-
թիւն գտնէ: Գ. Շուեստ առ պատերազմաւ առաջին
կարգի ցամաքային տերութեանց աստիճանը բարձրա-
ցած էր, որ աստիճանն որ յիսուն տարիէ աւելի պա-
հեց. բայց ձեռք բերած քաղաքական աղղեցութիւնը
Գաղղիայի պէս չկրցաւ հաստատուն պահել: Գ. Միա-
ցեալ Ստորին նահանգաց հասարակապետութեան ան-
կախութիւնն ընդհանրապէս ամենէն ճանչցուեցաւ:

193. Սպանիական-Հոլանտական պատերազմ:
Հոս երկու խօսք զուցեւելու ենք Սպանիական-Հոլան-
տական ու Գաղղիական-Սպանիական պատերազմնե-
րուն վրայ, որոնց վրայ մինչև հիմայ չխօսեցանք՝ Գեր-
մանական պատերազմին պատմութեան թելը չկտրելու
համար: — Սպանիական-Հոլանտական պատերազմը,
որն որ 27 տարի տևեց (1621—1648), հասարա-
կապետութեան յառաջագիմութեան ու պայծառու-
թեան մեծ մնաս չըբաւ, որովհետև ցամաքային
կռիւներն իր սահմաններէն անդին Սպանիական Ստո-
րին նահանգաց մէջ կ'ըլլային. իսկ ծովային կռիւնե-
րուն մէջ գրեթէ միշտ Հոլանտացիք յաջողութիւն կը
գտնէին: Սպանիայի հետ վերջին պատերազմը սկսաւ
Փիլիպպոս Գ-ին (1621, Մարտ) եւ Ալբերդ արքի-
դքսին (Յուլ.) մեռնելէն ետև, Փիլիպպոս Գ-ին ա-
տենը (1621): Յամաքի պատերազմին մէջ երեւելի
եղան Պրետայի, Հերցոկենպուշի եւ ուրիշ շատ տե-
ղերու պաշարամենբը, մինչև որ Հոլանտացիք Գաղ-
ղիացւոց հետ միանալով (1630), պատերազմը շարու-
նակելու նպատակաւ՝ եօթը տարւան համար ստակի
մեծ զուճար ընդունելու գաշինք գնելէն ետև, բուն
պաշտպանողական ու յարձակողական գաշնաւորութիւն

բրին (1635, Փետր. 8): Ծովային պատերազմներու մէջ եղածներն էին ըստ մասին՝ ծովահէններու նաւեր հանել, ըստ մասին՝ գաղթականութեանց մէջ, մասնաորաբար Բորգուկայցոց ստացումներուն մէջ, աշխարհակալութիւններ ընել: Բայց ասոնցմէ զատ Եւրոպայի մէջ ալ ծովական ճակատներ տրուեցան, որոնք մանաւանդ 1639ին Հոլանտացոց համար խիստ յաջող էին: — Խաղաղութեան խօսակցութիւնք Աւստրիական դեպանաժողովոյն մէջ եղան, եւ Գաղղիացոց ջանքին հակառակ՝ Միւնսդէր գաղինքը դրուեցաւ (1648, Յունու. 30): Ասով Սպանիա չէ թէ միայն հասարակապետութեան անկախութիւնն ընդունեցաւ, հապա նաեւ յանձն առաւ որ անոր երկիրներուն նոյն ատենուան փիճակը հաստատուն մնայ թէ Եւրոպայի մէջ (որով Հոլանտացոց ձեռքը մնացին Պրայանդի, Աիմպուրիի ու Մադրիդի մէջ ունեցած տեղերը), եւ թէ գաղթականութեանց մէջ: Գարձեալ Սպանիա ասոր ալ զիջաւ որ Շելտե գեար գոցուի, որուն՝ պատմութեան մէջ նման օրինակ չունինք:

194. Գաղղիական-Սպանիական պատերազմ: Պիրեննեան խաղաղութիւն: Ինչպէս յառաջագոյն բնինք (188), Գաղղիայի ու Սպանիայի մէջ եղած պատերազմը (153 եւ 184) Աւստրիայի խաղաղութեամբ վերջացած չէր: Ասոր պատճառն ան էր, որ երկու կողմանք ալ պատերազմին շարունակուելէն օգուտ կը յուսային. Սպանիացիք անոր համար կը յուսային, որովհետեւ Հոլանտայի պատերազմէն աղասած էին եւ Գաղղիա իր ներքին խռովութիւններովը (152) կը տկարանար. իսկ Գաղղիացիք ասոր հակառակ իրենց ակնկալութիւնը դրած էին Սպանիայի տկարութեան եւ Գաղալոնիայի ու Բորգուկալի ոտք ելլելուն վրայ (153 եւ 154), որոնց իրենք կ'օգնէին: Գաղղիացոց բաղձանքն ան էր, որ բոլոր Սպանիական Ստորին նահանգներն իրենց ձեռքն անցընեն, ասոր դիմացը Գաղալոնիայէն իրենց զօրքը հանելով: Այսպէսով պատե-

բաղձը 11 տարի ալ յառաջ գնաց : Գաղղիացի Գոնտեզորապետը Լէնտի քով Սպանիացւոց վրայ մեծ յաղթութիւն բրաւ (1648, Օգոստ. 20) : Պարսաւորաց շփոթութիւններուն պատճառաւ (152) Գիւրէն Սպանիացւոց կողմն անցնելով (1650—1651), և անիկա զիրենք թող տալէն ետքը՝ Գոնտեանոր շար օրինակին հետեւելով (1652—1659), Սպանիացիք քիչ մը հոգի առին : Բայց Գիւրէն նորէն իր հայրենեաց դրօշին սակ մանկէն ետեւ, Գաղղիացիք անոր հրամանատարութեամբը Ստորին նահանգաց մէջ սկսան յաղթող ըլլալ (1653—1654) : Սպանիացւոց բախտին յաջողութիւնը բոլորովին դադրեցաւ՝ երբ որ Ընդղիացիք ալ իրենց դեմ պատերազմ բացին (1655) և ասոր համար ետքէն Գաղղիացւոց հետ դաշնաւորութիւն ըրին (1657, Մայ. 9) : Երկու ազգերը մէկտեղ Տեօնքէրք առին (1658, Յունիս 23), որն որ Ընդղիացւոց ձեռքը մնաց : Բայց աս դեպքէն քիչ մը ետքը Ընդղիացիք պատերազմը դադրեցուցին, որուն վրայ Գաղղիացի հետ Պիւրեննեան խաղաղութեան դաշինքը գրուեցաւ (1659, Նոյեմ. 7) : Ասոր որոշմանց զխաւորները հետեւեալներն են : 1. Գաղղիացի կը տրուի Ռուսիլեանի կամուսթիւնը : 2. Իր ձեռքը կը մնան Ստորին նահանգաց սահմաններուն վրայ՝ Երզուացի ու Ֆիանտրայի մէջ շատ մ'անոցներ : 3. Գաղղիա կը խոտտանայ որ Բորգուկայի օգնութիւն չընեն : (Գաղալոնիացի ապստամբութիւնն արդէն 1652ին զպուած էր) : 4. Լուզովիկոս ԺԳ. Փիլիպպոս Գին Մարիամ Թերեզիա երեջ աղջկան հետ կը կարգուի : Գաղղիա աս խաղաղութեան դաշինքով մեծ առաւելութիւն ստացաւ, չէ թէ այնչափ ձեռք անցուցած երկիրներով, հասցաւ մանաւանդ Լուզովիկոս ԺԳին՝ Սպանիական իշխանուհւոց մը հետ կարգուելովը, որով իր առջեւն ապագային համար մեծ ակնկալութիւններու գաշտ կը բացուէր :

Անգղիայի Անրքին շփոթութիւնները (1618—1660):

195. Անրքին շփոթութեանց սկզբնական պատճառը: Աստուծանակի միջոցին սկիզբը ծանուցանուս պէս, գրեթէ բոլոր Եւրոպայի տէրութիւնք կամ ուղղակի կամ անուղղակի Գերմանական պատերազմին միջամուխ եղած ատեն, կրնայ ըսուիլ որ Անգղիա բուրբովին դուրս մնաց, որովհետեւ իր ներքին շփոթութիւններովը կը զբաղէր (150): Իբրք ալ նոյն միջոցն Անգղիայի համար ներքին մեծամեծ մրրկաց ու խռովութեանց ատեն մ'եղաւ: Աս մրրիկներն ալ ըստ մասին նորազանդութենէ ծագեցան. բայց հոս կուիք նոյն իսկ նորազանդից մէջ էր, եւ Եպիսկոպոսականաց ու Երիցականաց կամ Պարզակրօնից իրարու հետ երկպառակելովն ելած քաղաքական կողմնակցութիւններէն յառաջ եկաւ: Իսկ շփոթութեանց արդեամբք սկսելուն պատճառ տուաւ մէկ կողմանէ Պրուսարդեան թագաւորաց եւ իրենց կուսակցաց, մէկալ կողմանէ ալ Պարզակրօնից թագաւորական իշխանութեան ծագման ու բնդարձակութեան վրայ ունեցած տեսական սկզբանոցը տարբերութիւնը, մանաւանդ թէ հակառակութիւնք: Ասով թագաւորք ազգին հետ կուռց մէջ մտան, անանկ ատեն մը՝ որ իրենց անպիտան անտէսութեամբք տէրութեան մէջ ծագած ստակի կարօտութեան համար՝ ազգէն կախում ունէին: Աս ամեն բաներուն հիմը Յակոբ Ա.ին ատենը գրուեցաւ. բայց աւելի սաստկացան իր կարողութեամբ Ա. սրբւոյն ժամանակը, եւ վերջապէս աս յետին վեհապետին դահճի ձեռքով սպանուելովը լմրնցան:

196. Յակոբ Ա. ու կարողութեամբք: Իրենց ու խորհրդանոցին մէջ հակառակութիւն: Յակոբ Ա. իր նախորդացը՝ Հենրիկոս Ը.ին ու Եղիսարեթին պէս, կ'ուզէր առանց խորհրդանոցին միտ

դնելու՝ իբրև բացարձակ իշխան վարուիլ. բայց անոնց պէս զօրաւոր կամ անոնց շափ խորամանկ շրջալով, չէր կրնար ուզածն անոնց նման գլուխ տանիլ: Ասանկով ժողովուրդը սկսաւ իր իրաւունքները պաշտպանելու եւ թագաւորին իշխանութիւնը պատշաճ չափին բերելու. ջանալ, որուն համար ալ իր եւ խորհրդանոցին մէջ գրեթէ միշտ, մանաւանդ իր վերջին աստիճանները, կռիւն ու երկպառակութիւնն անպակաս էր: Խորհրդանոցը կ'ուզէր որ Գերմանիայի բողոքօղնբուն պատերազմին օգնէ, միանգամայն կը պահանջէր որ իր Արարչու որդին՝ թագաւորութեան ժառանգը՝ բողոքող իշխանուհւոյ մը հետ կարգուի, ուր որ ինք շատ ժամանակէ վեր ետեւէ կ'ըլլար Ապանիական տնէն իշխանուհի մ'անոր կին առնուլ: Եւ թէպէտ աս բաղձանքը չկրցաւ գլուխ հանել, բայց Գաղղիայի Լուդովիկոս ԺԳ. թագաւորին Անրիէզ քրոջը հետ նշանեց, որուն վրայ նորաղանդը խիստ դառնացան: Հարսանեաց պատրաստութիւնները տեսնուելու ասնն, ինք մեռաւ (1625, Մարտ 27) եւ նոյն Արարչու (Ա.) որդին իրեն յաջորդեց: Ասիկայ դահ ելլելուն պէս՝ խորհրդանոցին մէջ իրեն հակառակ եղող կողմնակցութեան զօրութիւնը տեսնուեցաւ: Թէպէտ նոյն խորհրդանոցին երկու բաժիններն ալ, բայց զլիաւորաբար պատգամաւորաց սենեակը խիստ մեծ հակառակութիւն սկսաւ ցուցնել: Պատգամաւորներուն մէջէն ամանք սաստիկ նախանձախնդիր Պարզակրօն ըլլալով, ոչ միայն ուղղափառաց, այլ նաեւ Անգղիականաց խիստ թշնամի էին, եւ կ'ուզէին ու ամէն կերպով կը ջանային ան երկու կրօնները ջնջել ու բոլոր տէրութեան մէջ իրենց աղանդը տարածել: Միանգամայն հրատարակեցին որ իրենց նպատակն է՝ Ազգային ազատութիւնները պաշտպանել ու թագաւորին արտօնութիւնները նուազցնել: Իրենց նպատակին հասնելու եւ թագաւորն իրենց կամքին խնայարհեցնելու համար աս միջոցն բնորոցին, որ ամենեւին ստակ առնելու հաւանութիւն չտան:

197. Խորհրդանոցին գիմադրութիւնը կը սաստկանայ : Պէզքինկհէմ : Սպանիայի ու Գաղղիայի դէմ արշաւանք : Սարուս Ա. Թագաւորն առաջին անգամ խորհրդանոց դուժարած ժամանակ (1625) խիստ մեծ գժուարութեամբ հաղիւ կրցաւ խնդրած դուժարին կիսոյն հաւանութիւն ընդունիլ . ան ալ իր ամուսնութեան դաշանց մէջ խոստացածին հակառակ՝ հաւանելով որ սղղափառք խսաիւ հալածուին եւ բոլոր պատժական օրէնքներն ամենայն ստատկութեամբ անոնց դէմ ի գործ դրուին : Եւ թէպէտ առ խորհրդանոցը լուծեց . բայց երկրորդ տարին (1626) ժողոված նոր խորհրդանոցն ալ առաջինէն աւելի պահանջումներ բրաւ ու ամենեւին ստակի հաւանութիւն չտուաւ, որով Թագաւորը նոյնն ալ լուծեց : Իր գլխաւոր պաշտօնեան ու սիրականը Պէզքինկհէմի դուքսը, որն որ ամենուն ատելի էր, ժողովրդեան աչքը մտնելու համար՝ նախ Սպանիայի ու ետքը Գաղղիայի դէմ արշաւանք մ'ընել տուաւ : Սակայն երկուքն ալ անյաջող ելք ունենալով, ինք աւելի ատելի եղաւ, մանաւանդ որ անոնցմով ստակի կարօտութիւնը խիստ սաստկացած էր : Աս վերջին պարագային պատճառաւ Թագաւորը երրորդ անգամ խորհրդանոց դուժարեց (1628), որմէ ստակի հաւանութիւն առնելու համար՝ ստիպեցաւ մեծամեծ զիջումներ ընել : Նոյն տարին Պէզքինկհէմի դուքսը մարդասպանի ձեռքով սպանուեցաւ (Օգոստ. 23) : Յաջորդ տարին (1629) խորհրդանոցն արտաքոյ կարգի հակառակութիւն ընելով, Թագաւորը նոյնը լուծելէն ու պատգամաւորներէն տմանք բանտարկել տալէն ետեւ, յայտարարութեան թղթերով յայտնապէս հրատարակեց որ ալ անկէ ետեւ կ'ուզէ առանց խորհրդանոցի կառավարել . Գաղղիայի հետ խաղաղութիւն բրաւ, Սպանիայի հետ ալ պատերազմը դադրեցուց . իսկ ստակի կարօտութիւնը լեցրնելու համար՝ ուղածին պէս հարկ կ'առնուր : Եւ որովհետեւ Անգղիական կամ Եպիսկոպոսական ազանդին հետեւողներն իրեն հետ

միացած էին, անոր համար՝ անոնց աւելի հաճոյ բլաւ-
լով իր իշխանութիւնը հաստատելու մտօք՝ տէրութեան
երեք մասերուն մէջ ալ ուրիշ կրօններու հետեւողնե-
րը կը հալածէր եւ ամէն տեղ Անդղիական ազանդը
տարածելու ետեւէ կ'ըլլար:

198. Սկովտիացիք ոտք կ'ելլեն: Ներքին պա-
տերազմին սկզբնատարութիւնը: Վարդու Ա.ին բռնած
ընթացքովը ամէն տեղ զրդուութիւնն ածելով, նախ
Սկովտիայի մէջ յայտնի ապստամբութեան դարձա-
որուն առիթն ան եղաւ որ թագաւորը հրամայած էր
նոյն երկրին մէջ նոր եկեղեցական իրաւունք խօթել,
եկեղեցական պաշտամունքը՝ Անդղիական պաշտամանց
համեմատ ընել եւ վերին կառավարութիւնն եպիսկո-
պոսաց ձեռքը տալ (1636), որ բաներն որ Սկովտիա-
ցիք՝ իրրեւ երիցականք՝ շէին ուզեր յանձն առնուլ:
Աս կարգադրութիւններն իրօք ի գործ դնել ուղուած
ատեն, Սկովտիացիք Էտինպուրկի մայր եկեղեցւոյն մէջ
իրենց երիցական քարոզաց առաջնորդութեամբը՝ ոտք
երան (1637, Յուլ.), որմէ ապստամբութիւնն ամէն
կողմ տարածեցաւ: Խել մը ժամանակ ասանկ յառաջ
երթալէն ետեւ, թագաւորն ուզեց զիրենք զէնքով
զպել. իրենք ալ զէնք առին եւ այսպէս ներքին պա-
տերազմը սկսաւ (1639): Վարդու Ա. աս պատերազ-
մին հարկաւոր եղած ստակը ձեռք բերելու համար,
տասնումէկ տարի առանց խորհրդանոցի կառավարելէն
ետեւ, նոր խորհրդանոց մը գումարել տուաւ (1640,
Ապր.): Բայց պատգամաւորք, իր խնդրած ստակին
հաւանութիւն տալու տեղ, թէ քաղաքական եւ թէ
կրօնական նկատմամբ բրած բռնութիւններուն զէմ
սաստիկ աղաղակ մը փրցուցին, որուն համար թագա-
ւորը դարձեալ խորհրդանոցը լուծեց եւ պատգամաւո-
րաց մէջէն յանդգնադոյնները բանտարկեց (Մայ.): Սա-
կայն քիչ մը ետքը ապստամբ Սկովտիացիք, որոնք
խորհրդանոցին դիմադրական կուսակցութեան հետ բա-
նակցութեան մէջ էին, սահմաններն անցնելով՝ Ան-

գլխա մտան (Օդոսա)։ Թագաւորը նեղի գալով, ապստամբաց հետ խօսակցելու սկսաւ, Անգղիայի մեծամեծներն ալ Եորդ ժողովելով, անոնցմէ խորհուրդ ու օգնութիւն խնդրեց։ Անոնք շուզելով կամ չհամարձակելով իրեն օգնել, խրատ աւելին որ նորէն խորհրդանոց մը ժողովէ։ Նոյն միջոցին թագաւորական զօրքերը Վիովտիայուց բանակէն ետ քշուելով, Կարօլսին առջեւն ուրիշ միջոց չմնաց, բայց եթէ ապստամբներուն հետ զինադադար ընել ու խորհրդանոցը գումարել (1640, Նոյեմ)։

199. Երկարատեւ խորհրդանոց։ Երլանտիայի կոտորածն ու անոր հետեւութիւնները։ Աս խորհրդանոցն ալ, որն որ արտաքոյ կարգի երկայն ժամանակ տեւելուն համար՝ Երկարատեւ խորհրդանոց կը կոչուի, թագաւորին Վիովտիայի ապստամբները զուգելու համար խնդրած ստակին չհաւանելէն զատ, նոյն ապստամբաց հետ գազանի բանակցութեան սկսաւ, եւ անոնց զօրաց պահպանութեան համար հարկաւոր եղած ստակը տալ խոստանալով, անանկ բրաւ որ բանակն Անգղիայի սահմաններէն չհեռանայ։ Ասով եւ ուրիշ միջոցներով Կարօլոս օտիպեցաւ պատգամաւորաց բրած պահանջումներուն զիջանիլ. մինչեւ իր ամենէն հաւատարիմ պաշտօնեան Սդրէֆֆրատի կամին անոնց կատաղութեան զոհելով՝ գահճի ձեռքով սպանուելուն հաւանութիւն տուաւ (1541, Մայ)։ Բայց իրենք ասով ալ գոհ չեղան եւ երթալով իրենց պահանջումները սաստիկացուցին։ Միեւնոյն միջոցին Երլանտացիք՝ Անգղիայուց իրենց գեմ գործած բանութիւններէն զբզուռած՝ ոտք ելան, իրենց ստացուածները յափշտակող Անգղիացիները մերժեցին, անոնց աները կործանեցին եւ տեղ տեղ քանի մը սպանութիւններ բրին (1641, Հոկտ)։ Ասոր վրայ անգղիական զնդերը՝ կրօնցած տեղերնին՝ ժողովուրդն անխնայ կոտորելով, Երլանտացիք աւելի եւս զբզուռեցան, որով սաստիկ կոտորած մը սկսաւ եւ բողոքականներէն իբր 12,000 հո-

գի մեռան: Թեպէտ թագաւորը սկսաւ ետեւէ իյնալ Իրլանտացիներն առ սփռոյն համար պատժելու եւ խորհրդանոցէն ալ նոյն նպատակաւ օգնութիւն խնդրեց. սակայն եւ այնպէս պատգամաւորք վերոյիշեալ կոտորածը՝ թագաւորին զրգելովը նորազանգութեան դէմ եղած յարձակում մը ձեւացրնելով, եւ խորհրդանոցն աւագային ազատութիւնները վտանգի մէջ հրատարակելով, ժողովուրդն ան աստիճանի զրգուեցին, որ շատ մարդիկ զէնք առին եւ ժողովներ կազմեցին՝ իբր թէ խորհրդանոցը պաշտպանելու համար: Մէկալ կողմանէ շատ մը պաշտօնակալք աւ զեղացւոց ազնուականք, տէրութեան ամէն մասերէն թագաւորը պաշտպանելու համար առաջիններուն հակառակ զնգեր կազմեցին: Ըստնք գրեթէ ամէն օր ազմուկներ կը հանէին, որոնցմէ կը տեսնուէր թէ քիչ մը ետքը ներքին բնդհանուր պատերազմ մը պիտի փրթի: Աւերջապէս շիթութիւնք ան աստիճանի մեծցան, որ թագաւորը ստիպեցաւ Եորդ քաշուիլ, միտքը զնելով որ զէնքով նոյնբուն վերջ տայ: Իրօք ալ եթէ յառաջ ինք տրանջանաց աւ հակառակութեան առիթ տուած էր, նոյն առանձ խորհրդանոցը բոլոր պատշաճ շափն աւ իր իշխանութեան սահմաններն անցրնելով, թագաւորին իրանց զէմ բռնարարութիւն կ'ընէր: Բոլոր օրէնսգրական իշխանութիւնն իրեն միայն սեպհականելէն զատ, զօրծագրական իշխանութեան մէջ ալ կ'ուզէր խառնուիլ, պահանջելով որ բարձր պաշտօնատարներուն աւ զօրպեաններուն անուանումը, ծովու եւ ցամաքի զօրաց կարգադրութիւնները, մինչեւ նաեւ արքայորդւոց կրթութեան աւ ամուսնանալուն իրողութիւններն իր որոշմանէն կախուին:

200. Ներքին պատերազմ: Օլիվիէ Գրոմուէլ: Մարտըն Մուրի ճակատ: Ըրդ Կարոլոս Ե. Եորդի մէջ թէ ատենակալներէն եւ թէ պաշտօնակալներէն իր կողմնակիցները, միանգամայն իրեն հաւատարիմ մնացող զօրքերը քովը ժողովելով, սկսաւ պատերազմի

պատրաստութիւն տեսնել: Իսկ թագաւորին՝ որ թագաժառանգ իշխանին հետ Հոլանտա փախած էր, օտար տէրութիւններէն օգնութիւն գտնելու ետեւէ կ'իյնար: Բայց որովհետեւ յամաք երկրին գրեթէ բոլոր տէրութիւններն Երեսնամեայ պատերազմին բռնուած էին, չկրցաւ իր նպատակին հասնիլ. եւ եթէ օգնական զօրք ալ գտնէր, անոնց Անգղիա գալն արապոյց կարգի գծուար էր. ինչու որ թէ ամէն նաւահանգիստներն ու թէ բոլոր ծովային զօրութիւնը խորհրդանոցին ձեռքն էր: Ասանկով պատերազմը երկու կողմանէ խիստ անհաւատար միջոցներով սկսաւ (1642). վասն զի ուր որ թագաւորը ստակի կարօտութեան մէջ էր եւ իր սակաւթիւ զօրքը՝ գրեթէ ամէն հարկաւոր եղած բաներէն զրկուած, խորհրդանոցը տէրութեան բոլոր մուտքերն իր ձեռքն ունենարով եւ առանձնականներէն առատ դրամական օգնութիւն գտնելով, ամենեւին բանի մը կարօտութիւն չէր կրեր: Ի վերայ այսր ամենայնի կրթութեալ գնդերէ կազմուած թագաւորական պզտիկ բանակը՝ խորհրդանոցին դուստրած ըստ մեծի մասին անփորձ զօրքերուն վրայ խսկորան յաղթող կ'ըլլար: Բայց մէյ մ'որ Օլիվիէ (Սլիվըր) Գրոմուէլ, փառատեր ու մայրենաց Պարզակրօնն, իր կողմնակիցներէն կազմուած ձիաւորներու գունդ մը հանեց, խորհրդանոցն ալ Սկոտլանդացի հետ պատերազմի գաշնակցութիւն մ'ընելով (1643, Նոյեմ.), անոնց գնդերը սահմաններն անցան ու Անգղիայի ապստամբաց հետ միացան, ալ անկէ ետեւ իրաց կերպարանքը փոխուեցաւ: Մարտըն Մարի ճակատին մէջ թագաւորականք շարաշար յաղթուեցան (1644, Յուլ. 2) եւ իրենցմէ 10,000 հոգի պատերազմի գաշտին վրայ մնաց. թագաւորին հաւատարիմ մնացող Եորդ քաղաքն ալ Պարզակրօնից ձեռքն ինկաւ: Ասով Գրոմուէլ թէ բանակին ու թէ ժողովրդեան առջեւ մեծ համարում ստացաւ:

201. Պարզակրօնք ու Անկախք: Պարզակրօնք առ իրենց յաղթութիւններէն ետեւ, սկսան Անգղիա-

կան աղանդը ջնջելու եւ ամէն կողմ երիցականութիւնը տարածելու ջանք ընել: Արդէն յառաջագոյն ուղղափառք սաստիկ կը հարածուէին. իսկ Պարզակրօնք վերջին տարիներն իրենց աղանդին ու աղանդակիցներուն զէմ եղածը՝ հիմայ Անդղիականաց զէմ աւելի սաստկութեամբ ի գործ կը դնէին: Բանտարկութիւն, արտօր, սպանութիւն, ընչից յախշտակութիւն, եկեղեցիներու եւ հին յիշատակարաններու աւերն ու կոտորածը՝ վերոյիշեալ նպատակին հասնելու համար իրենց սոփորական միջոցներն էին: Աւերջին ժամանակները Անկախք՝ անունով զատ կողմնակցութիւն մ'ալ ելած էր, որն որ կը պահանջէր որ ամէն կրօնական հասարակութիւնք, թէ վարդապետութեան եւ թէ սուսուածային պաշտամանց կողմանէ, բոլորովին անկախ ու ազատ ըլլան, եւ ամենեւին օրէնք կամ իշխանութիւն մը իրենց անկախութիւնն ու ազատութիւնը չկարենայ չափաւորել: Ասոնք տէրութեան ու կառավարութեան վրայ ալ զրեթէ միեւնոյն սկզբունքներն ունէին. թագաւոր ու ատենակալ չէին ուզեր, կը պահանջէին որ ամենեւին կարգի ու աստիճանի զանազանութիւն չգանուի, հապա ամենքն իրարու կատարեալ հաւասար ըլլան: Երթալով առ կողմնակցութիւնն ան աստիճանի զօրացաւ ու ժողովրդեան եւ բանակին մէջ համարում ստացաւ, որ Երիցականք վախի մէջ ինկան ու սկան թագաւորին հետ հաշտուելու ջանք ընել: Բայց իրեն հետ բրած բանակցութիւննին պարսպ ելաւ, որովհետեւ նոյն հաշտութեան այնպիսի պայմաններ կը դնէին, որոնց թագաւորը չէր կրնար հաւանիլ. այս ինքն՝ կ'ուզէին որ եպիսկոպոսական աստիճանը վերնայ ու ծախու եւ ցամաքի զօրաց հրամանատարութիւնը պատգամաւորաց սենեկին տրուի: Ասով Անկախք աւելի գլուխ վերցուցին, եւ Գրոմուէլ՝ իրենց գլուխը սաստիկ երկպառակութեան մէջ ինկաւ Երիցականաց հետ, որոնք կ'ուզէին բանակին մէջ ունեցած աստի-

1 Independents.

ճանձն զինքը վար առնուլ . բայց ինք հաստատուն մնաց, եւ անոր հակառակ խորհրդանոցին մէջ Անձին հրաժարման օրինագիրը¹ կրցաւ հանել տալ, որուն զօրութեամբ խորհրդանոցի անդամները բոլոր թէ զինուորական եւ թէ քաղաքական պաշտօններէն պէտք էր որ հեռանային (1645, Ապր .) :

202. Նեղզգիի ճակատն ու անոր հետեւութիւնները : Թագաւորը խորհրդանոցին ձեռքը կը մատնուի : Վիշ մը ետքը Նեղզգիի ճակատին մէջ թագաւորական բանակին մնացորդը յաղթուելով ու ցրուելով (1645, Յունիս 14), Կարոլոսի ակնկալութիւնները բոլորովն ոչնչացան : Իր քովը հագել 500 հօգի մնացած էր, որոնցմով Օքսֆորդի մէջ պատասպարեցաւ (1646, Յունու .), եւ սկսաւ խաղաղութիւն ընելու ջանալ . բայց պարտաւ տեղ : Ան ժամանակէն ետեւ Անկախ որոնք մանուսնդ բանակին մէջ ամենազօր էին, իրենց կրօնական նկատմամբ ունեցած հասարակապետական սկզբունքները՝ սկսան կառավարութեան նկատմամբ ալ դործածել : Չեռաւրնին իյնալով Կարոլոսին նամակները, որոնցմով նոյն թագաւորն օտար տէրութիւններէն օգնութիւն կը խնդրէր, սկսան զանոնք զանազան սուա լըերով ժողովուրդը զրգուելու համար շորս կողմը սիտել : Համբաւ տարածեցին որ թագաւորն Իրլանտացիները մեծամեծ խոստումներով ստք ելլելու յորդորեր է . որուն համար խորհրդանոցը հրամայեց որ անկէ ետեւ թագաւորական բանակէն ձեռք ինկող Իրլանտացիներուն ամենեւին չխնայուի : Իրօք ալ բոլոր բանուող Իրլանտացիք կը սպանուէին եւ ընդհանրապէս թագաւորականք սաստիկ պատիժներով կը պատժուէին : — Նոյն միջոցին Գրամուէլ կը պատրաստուէր զԿարոլոս Օքսֆորդի մէջ պաշարելու : Ասոր վրայ թագաւորն ինչ ընելիքը չգիտնալով, յուսահատական միջոցի մը ձեռք զարկաւ . ծառայի զգեստով ծագած՝ երկու ընկերով Արմալիացոց բանակը փախաւ (1646,

¹ Bill du renoucement à soi-même.

Մայ. 5), յուսալով որ իր տեսութեամբը հայրենա-
կցացը վրայ հաւատարմութեան զգածում գրգռուի:
Բայց իրենց մոլեռանդ եկեղեցականներէն առաջնոր-
դուած Սկովտիացիներուն որտին կարեկցութիւնը բո-
լորովին մարած էր. զինքն իրրեւ բանտարկեալ՝ սաս-
տիկ հսկողութեան տակ պահելով, սկսան Անգղիայի
խորհրդանոցին հետ վրան խօսակցիլ: Եւ որովհետեւ
չկրցան զինքը համարել՝ Անգղիացւոց պահանջածին
համեմատ՝ եպիսկոպոսական աստիճանը վերցընելու,
ծախու եւ ցամաքի զօրքերը քսան տարի խորհրդանո-
ցին իշխանութեան տակ ձգելու, անոր համար իրենց
թագաւորը բարձր գնով մը խորհրդանոցին կողմնէ
եկող գործակալներուն ձեռքը մատնեցին եւ իրենք
Անգղիայէն ելան (1647, Փետր.):

203. Գրոմուէլ եւ բանակը թագաւորը ձեռք
կ'անցընեն: Կարոյոս Ե. կը սպանուի: Խորհրդա-
նոցը, որուն անդամներուն մեծ մասն Երիցականք էին,
թագաւորն իր ձեռքն անցընելէն ետեւ՝ ալ վախ չու-
նենալով, ուղեց զօրքն արձակել, որուն մէջ Անկախ
զօրացած էին. սա վախճանաւ ալ զԳրոմուէլ բանակը
խտրեց: Բայց անիկայ զօրքն աւելի գրգռեց, որով
նոյն իսկ բանակին մէջ տեսակ մը խորհրդանոց կազ-
մելէն ետեւ, զԿարոյոս՝ զօրն որ բուն խորհրդանոցը
չօրմպիի բերդին մէջ կը պահէր, Գրոմուէլի հրամանաւ
բանակ տարին (1647, Յունիս): Գիշ մը ասեն նոյն
փառասէր մարդը միտեալ կ'երեւար թագաւորին հետ
հաշտուելու, ինք բարձր աստիճանի վերանալու նպա-
տակաւ. բայց ետքէն անոր հետ սկսած բանակցութիւն-
ները դադարեցուց, որով մէջերնին անհաշտ թշնամու-
թիւն մը մտաւ: Ասոր վրայ թագաւորը կրցաւ փախ-
չիլ (նոյեմ.), բայց նորէն բռնուեցաւ եւ առաջինէն
աւելի խստութեամբ պահպանուեցաւ: Թեպէտ Սկով-
տիացիք բրածներնուն վրայ ամբշջած, իր պաշտպանու-
թեան համար զէնք առին ու 15,000 հոգի Անգղիայի
սահմաններն անցան (1648, Յուլ.), բայց սա ալ օգուտ

մը շքրաւ . Գրոմուէլ Բրեւոյքնի քով զիբրնէր յազմեց (Օգոստ. 18) եւ Անդղիացւոց հետ նորէն դաշնակցելու ստիպեց : Խորհրդանոցը, որն որ տակաւին ըստ մեծի մասին Երիցականներէ կազմուած էր, միշտ ետեւէ կ'ըլլար Թագաւորին հետ հաշտուելու : Սակայն սոբանիս դէմ էր բանակը, որուն մէջ սաստիկ զօրացած էին Անկախք : Աս վերջիններուն մէջ զատ կողմնակցութիւն մ'ալ կազմուած էր, որուն անդամները Հաւասարիչք¹ կը կոչուէին եւ կ'ուզէին որ Թէ իշխանութեան ու Թէ ընչից նկատմամբ ամէն մարդ հաւասար ըլլայ : Անկախք եւ մանաւանդ Հաւասարիչք կը պահանջէին որ Թագաւորին վրայ քննութիւն ու դատաստան ըլլայ : Զինքը ձեռք անցրնելէն ետեւ (Նոյեմբ.), խորհրդանոցն ալ մաքրեցին, այս ինքն' անոր մէջ գտնուող բոլոր Երիցականները կերպ կերպ միջոցներով դուրս հանեցին (Գեկտ.), որով խորհրդանոցին մէջ բոլոր բոլոր 33 պատգամաւոր մնաց : Այսպէսով Թէ բանակն ու Թէ խորհրդանոցն Անկախներուն ձեռքը մնալով եւ անոնք ալ Գրոմուէլին իշխանութեան տակ ըլլալով, ինք սկսաւ տիրաբար վարուիլ : Ալ անկէ ետեւ Թագաւորին բանը բուսած էր : Պատգամաւորք արհամարհելով վերին սենեակին ընդդիմութիւնը, որուն մէջ նոյն ատեն հազիւ 12 հոգի մնացած էր, Ղարբոլոս 135 հոգիէ կազմուած դատաստանական ատեանի մը առջեւ հանեցին, եւ իբրեւ բռնաւոր, մատնիչ, մարդասպան ու հայրենեաց թշնամի՝ մահուան դատապարտեցին (1649, Յունու. 27) : Իր դահիճները մահուան պատրաստուելու համար՝ երեք օր ժամանակ Թող տուին խեղճ Թագաւորին, որն որ նոյն միջոցին իր երկու պզտիկ զակերները տեսնելու մխիթարութիւնն ունենալէն եւ Անդղիական եկեղեցւոյ սովորութեան համեմատ պատրաստուելէն ետեւ, քաջասրտութեամբ ու համակերպութեամբ, դահճի ձեռքով սպանուեցաւ (Յունու. 30) : — Այսպէս իր ազ-

¹ Niveleurs.

դին մէկ մասին կատաղութեան եւ քանի մը փառաւեր անձանց, զիսաւորաբար Գրոմուէլի, ամբարտաւան զիսաւորութիւններուն զո՛հ եղած՝ ինկաւ կարողոս Ա., որն որ եթէ տկարութիւններ ու պակասութիւններ ունէր նէ ալ, խիստ աղէկ հանդամանքներ ալ ունէր, եւ անոր համար ալ իր մասն Անգղիական ազգին մեծազոյն մասը մեծ տրամութեան մէջ ընկղմեց, իսկ բովանդակ Եւրոպա սոսկացուց: Ամէնքն ալ եղածին վրայ ցաւեւէն զատ, ունենալու հետեւութիւններուն համար ալ սաստիկ վախի մէջ ինկան. եւ իրօք ալ իրենց վախն արգարացաւ:

204. Հասարակագիտութիւն: Իրլանտացիք ու Սկոտիացիք կարողոս Բ-ին կողմը կը բռնեն ու կը զսպուին: Գրոմուէլ եւ իր կողմնակիցներն աս կերպով իրենց նպատակին հասնելուն պէս, հասարակագիտութիւն հաստատեցին, եւ վերին սենեակը բոլորովին ջնջելով, զերագոյն իշխանութիւնը 150 հոգիէ կազմուած պատգամաւորաց սենեկին տուին, որն որ անկէ ետեւ Անգղիայի խորհրդանոց պիտի կոչուէր: Գործադիր իշխանութիւնն ալ 42 անգամէ կազմուած տերութեան խորհրդի մը տուին: Մասնաւոր ատեան Ը ալ հաստատեցին տերութեան դէմ գործուած յանդանքները քննելու եւ պատժելու համար: — Այս ամենայն Անգղիա եղած ատեն, Իրլանտիա եւ Սկոտիա նոյններուն հակառակ շարժում մը կ'ըլլար. թագաւորին սպանուելուն լուրը նոյն երկիրները արտաքոյ կարգի զրգումութիւն պատճառեց: Սկոտիացիք թագաժառանգ իշխանը Հոլանտացէն կանչեցին, եւ զինքն երիցական աղանդն ընդունելու ստիպեւէն ետեւ, թաւոր հրատարակեցին՝ կարողոս Բ. անուամբ (1649, Փետր.): Իրլանտացիք ալ նոյն թագաւորն ընդունելու եւ իրեն համար զէնք առին: Բայց աս ամէն բան նոյն խեղճ թագաւորին համար օգուտ չունեցաւ. իսկ իր հաւատարիմ հպատակներուն եւ մանաւանդ Իրլանտացուց զժրախտութեան պատճառ եղաւ: Գրոմուէլ,

որն որ ինք զինքը խորհրդանոցին ձեռքով Իրլանտայի կուսակալ անուանել տուած էր, հասարակապետական բանակին գլուխն անցած՝ նոյն երկրին վրայ գնաց (Օգոստ.) . ինք եւ իր Սկովտիա երթալէն ետեւ (1650, Մայիս) իր յաջորդները տեղացւոց յաղթելով եւ անհնարին կոտորած ու արիւնհեղութիւն բնակելով, երեք տարւան մէջ բովանդակ կզգին հպատակեցուցին . բայց միանգամայն ամայի անապատ դարձուցին : Իսկ Սկովտիայի մէջ թէպէտ իսկզբան Գրոմուէլ սովով ու հիւանդութեամբ շատ մարդ կորսընցուց, որուն համար ալ ետ դառնալու կը պատրաստուէր, բայց ետքէն Տէօնպարի ճակատին մէջ Սկովտիացւոց յաղթեց (1650, Սեպտ. 3) : Մէկ կողմանէ կարօլոս Բ. Սոսնի մէջ թագաւոր պսակուած ատեն (1651, Յունու. 1), Գրոմուէլ Էտինսպուրի մայրաքաղաքն առաւ եւ գէպ ի երկրին ներքին կողմերը կը յառաջանար : Թագաւորն ուզեց յանգուզն ձեռնարկութեամբ մը իր առաիճանին մէջ հաստատուիլ : Իր հաւատարիմ զօրքովն Անգլիայի սահմաններն անցաւ եւ իր կողմնակիցներն օգնութեան կանչեց . բայց անոնք ըստ մեծի մասին չհամարձակեցան իրենք զիրենք յայտնելու : Ասանկով Տէօնպարի ճակատին տարեդարձին օրը թագաւորական զօրքը Ուէրօքրի քով անանկ յաղթուեցաւ (1651, Սեպտ. 3), որ բոլոր բանակը կամ մեռաւ եւ կամ գերի ինկաւ . հաղիւ թագաւորը, հազար վտանգներու յաղթելէն եւ անհնարին նեղութիւններ կրելէն ետեւ, կրցաւ Գաղղիա փախչիլ : Երկրորդ տարին Սկովտիա Մոնո զօրապետին առջեւ խոնարհելու եւ Անգլիայի հասարակապետութեան հետ միանալու ստիպեցաւ :

205. Նաւազնացութեան օրէնք եւ Հոլանտական պատերազմ : Աս ժամանակներն Անգլիայի մէջ արտաքին քաղաքականութեան նկատմամբ եղածներէն ամենէն երեւելին է Նաւազնացութեան օրէնքն ու անկից յառաջ եկած Հոլանտական պատերազմը : Իսկզբան Անգլիայիք Հոլանտայի հասարակապետութեան

Հետ անձուկ կապակցութեան մէջ մտնել կ'ուզէին. բայց երբ որ իրենց Հասկ կեցող զեպանը փախտեայ թագաւորականներէն սպանուեցաւ եւ անոր յաջորդը սաստիկ նախատեցաւ, եւ Հոլանտացիք յանցարներն իրենց երկրէն մերժել չուզեցին, երկու տէրութեանց բարեկամական յարաբերութիւնները քակուեցան: Եւսոր Հեռուութիւնն եղաւ խորհրդանոցին որոշմամբ վերջիչեալ նաւազնացութեան օրէնքին ելլելը (1651, Հոկտ.), որով օտարականներուն՝ իրենց սեպհական վաճառքէն զատ վաճառք իրենց նաւերովն Ենդզիսա բերելը կ'արգելուէր: Եսով արտաքոյ կարգի մեծ փասկը հասնէր Հոլանտացւոց, որոնց ձեռքն էր Եւրոպայի գրեթէ բոլոր միջնավաճառութիւնը (216): Երգ երբ որ Ենդզիսացիք՝ Հոլանտացւոց խնդրամին համեմատ նոյն օրէնքն եւ առնուլ չուզեցին, երկու հասարակապետութեանց մէջ պատերազմ բացուեցաւ: Հոլանտացիք խնդրան ծովու վրայ մեծամեծ յաղթութիւններ բրին, թէմն զետին վրայ յառաջացան եւ անոր ափանց վրայ սաստիկ աւերներ պատճառեցին (1652). բայց ետքէն Ենդզիսացիք, վերջին տարիներն անհոգութեամբ նայուած ծովական զօրութիւննին ու նաւատորմիդնին կարգի դնելով, իրենց Պէք զօրապետը Բորդէնտի առջեւ արուած երէք օրուան ծովային ճակատին մէջ Հոլանտացւոց Գրոմբ ու Ռույդէր գիւցազունքը յաղթեց (1653. Փետր.): Ենկէ ետեւ ալ Մոնգ, որն որ թէ ցամաքի եւ թէ ծովու պատերազմներուն մէջ միակերպ փորձառութիւն ունէր, նոր ծովային յաղթութիւններով Ենդզիսացւոց փառքն աւելցուց: Եսոնցմով եւ ծովահէններու ձեռքով իրենց վաճառականութեան հասած փաստով, Հոլանտացիք ստիպեցան պատերազմին վերջ տալ. եւ Լոնտոնի խաղաղութեան դաշինքով (1654, Եպր. 15) չէ թէ միայն խոտացան որ ալ անկէ ետեւ Սղուարդներուն չեն օգներ, հապա միանգամայն սաստիկ ալ ստակ վճարեցին:

206. Գրոմուէլ Պաշտպան կ'անուանի եւ թաղաորութեան ետեւ կ'իյնայ: Սպանիայի դէմ պատերազմ: Գրոմուէլի մահը: Պրոմուէլ աս պատերազմին ժամանակը կերպ կերպ միջոցներով միշտ ետեւէ կ'ըլլար իր իշխանութիւնն աւելի մեծցրնելու, եւ ինչպէս իրօք էր՝ նոյնպէս անուամբ ալ՝ հասարակապետութեան գլուխ ու մինչեւ թագաւոր ըլլալու: Աս բանն անով աւելի դիւրաւ գլուխ տանել կը յուսար, որ բանակին խիստ մեծազոյն մասն իր կողմն էր: Ուստի սկսաւ խորհրդանոցն ալ իր նպատակին ծառայեցրնելու ջանալ, անոր երեւելի անդամներն իր կողմը վատարկելու փոյթ տանելով. եւ երբ որ տեսաւ թէ աս բանն կարելի չէ, զօրաց օգնութեամբ նոյնը լուծեց (1653, Ապր. 20): Նոյնպէս կերպով մը լուծեց նաեւ իր գումարած նոր խորհրդանոցը, ինչու որ ան ալ իր յուսացածին պէս՝ իր կամայք չէր ծառայեր (1653, Գեկտ. 12). եւ բանի մ'որ ետքը Պաշտպան անուամբ՝ հասարակապետութեան գլուխ եղաւ (Գեկտ. 16): Անկէ ետեւ դարձեալ լուծեց ըստ նոր սահմանադրութեան գումարուած (1654, Սեպտ.) 400 հոգւով խորհրդանոցը, որովհետեւ անիկայ իր իրրեւ բացարձակ տէր իշխելուն դէմ կը գնէր (1655, Յունու. 22), ու ազգը զբաղեցրնելու եւ իր համարումը մեծցրնելու համար՝ Սպանիայի դէմ պատերազմ բացաւ (194), որուն մէջ Անդրեայիք անոնց ձեռքէն ճամայիգա կղզին առին: Բայց աս պատերազմին զացած ծախքին համար արտաքոյ կարգի ստակ հարկաւոր ըլլալով, Գրոմուէլ ստիպեցաւ նոր խորհրդանոց մը գումարել (1656, Սեպտ.), որուն իրեն հակառակ եղող անդամները նենդութեամբ կամ բռնութեամբ մերժելէն ետեւ, ալ ուզածին հաւանութիւն կ'առնուր: Ասոր վրայ վստահացեալ խորհրդանոցին մէջ իրեն թագաւորի տիպղոս տալու առաջարկութիւն ընել տուաւ (1657, Յունու.). բայց զինուորականք ան աստիճանի ընդդիմութիւն ցուցուցին, որ ստիպեցաւ ինք

առաջարկութեան դէմ ելլել, որով խնդիրն առժամն թող արուեցաւ: Նոյն միջոցին Սպանիայի դէմ եղած պատերազմը յառաջ կը վարուէր, որուն համար Գաղղիայի հետ դաշնաւորութիւն բնելէն ետեւ, երկու տերութիւնը մէկտեղ Տեօքրէրը առին (1658, Յունիս 23), զորն որ Գրոմուէլին բարեկամութիւնը պահելու համար՝ Լուդովիկոս ԺԳ. Անգղիացւոց թող տուաւ (194): — Այսպէս Պաշտպանն իր փառաւորութեան վերին զազաթը հասած առնն, բոլոր երկիրն իր բռնաւորութեամբը գողացրնելէն ու շարշարելէն, որով եւ իր կենացը դէմ քանի մը հեղ դաւաճանութիւն բլլալէն ետեւ, կասկածներով ահադողի մէջ ինկած եւ սպանուելու վախով շարշարուած՝ մեռաւ ան օրը (1658, Սեպտ. 3), որն որ իրեն համար յաջողութեան ու յաղթութեան օր մ'եղած էր: Չիկրնար ուրացուիլ որ Գրոմուէլ նոր ժամանակներուն նշանաւոր մարդիկներէն մէկն եղած բլլայ. եւ սուղիւ մարդ պէտք է զարմանալ թէ ինչպէս խորամանկութեամբ, կեղծաւորութեամբ ու խարէութեամբ, նուաստագոյն աստիճանէ մը՝ այնչափ բարձրութեան կրցաւ հասնիլ եւ երկայն ժամանակ նոյն բարձրութեան մէջ ինք զինքը բռնել:

207. Ռիքարդ Գրոմուէլ: Մոնզ: Թագաւորութիւնը նորէն կը հաստատուի: Պաշտպանին երէց օրդին Ռիքարդ Գրոմուէլ, անմիջապէս իր հօրը յաջորդ դուռեցաւ. իր երկրորդ Հենրիկոս եղբայրը Իրլանտայի կուսակալ էր, իսկ Մոնզ՝ Սկոտիայի զօրաց հրամանատար: Նոր Պաշտպանն ասոնց զօրքերուն վրայ կրնար վստահիլ, բայց ոչ նոյնպէս Անգղիայի զօրաց վրայ, որոնց գլխաւորներուն մեծագոյն մասն իրեն դէմ էր: Ասոնց դէմ պաշտպանութիւն ունենալու, միանգամայն ստակի կարօտութիւնը լեցրնելու համար, Ռիքարդ խորհրդանոց մը ժողվեց (Նոյեմ.), որն որ քիչ մ'ընդդիմութիւն բնելէն ետեւ՝ զինքը ճանչցաւ (1659, Փետր.): Իսկ պաշտօնակալք միշտ աւելի յանդուգն

կրքային եւ վերջապէս կրցան խորհրդանոցը լուծել
 սալ (Ապր. 22), որուն վրայ նախ Ռիբարդ (Օգոստ.
 28) եւ ետքը իր Հենրիկոս եղբայրը հրաժարեցան:
 Անկէ ետեւ զինուորականք իշխանութիւնը ձեռուր-
 նին առին ու հետզհետէ կերպ կերպ խորհրդանոցներ
 գումարեցին ու լուծեցին: Արնայ բուռիլ որ երկիրը
 ճշդիւ առեալ անիշխանութեան վիճակի մէջ էր, որմէ
 ժողովուրդը ձանձրանալով, սկսաւ նորէն թագաւորու-
 թեան բաղձալ: Նոյն միջոցին Մոնզ իր բանակաւ
 Սկոտլանդէն Լոնտոն եկաւ (1660, Յունու.), եւ շա-
 փաւորեալ ու Սգուարդեանց կողմնակից եղող մար-
 ղիկներէ կազմուած եւ ըստ հին սովորութեան երկու
 սենեկի բաժնուած խորհրդանոց մը գումարեց (Ապր.):
 Ինքն ալ զօրաց ընդհանուր հրամանատար անուանե-
 ցաւ: Իր կամքն ան էր որ նորէն թագաւորութիւն հաս-
 տատէ, որուն համար Աարոլոս Բ.ին հետ գաղանի բա-
 նակցութեան սկսած էր: Մէյ Տ'ալ խորհրդանոցին մէջ
 պատգամաբեր Տ'երեւցաւ նոյն թագաւորին յայտա-
 բարութեամբ, որով Աարոլոս Բ. ընդհանուր անկիշու-
 թիւն եւ կրօնական ազատութիւն կը խոստանար: Աս
 յայտարարութիւնը ցնծութեան ազազակաւ լսուեցաւ
 եւ թագաւորն ետ կանչուեցաւ, որն որ քիչ մը ետքը
 Տովր ցամաք ելաւ (Մայ. 26): Մոնզ զինքը հոն իրբեւ
 թագաւոր ընդունեցաւ եւ յաղթանակաւ Լոնտոն բե-
 բաւ, ուր որ բանակն ու ժողովուրդը սաստիկ ուրախու-
 թեամբ իրենց թագաւորն ընդունեցան (Մայ. 29):

ԵՐՐՈՐԳ ՄԻՋՈՑ ԺԱՄԸՆԵԿԻ

Բ. ՀԻՒՍԻՍԱՅԵՒՆ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ ԺԱՄԸՆԵԿԵԱԿԻՑ
ԳԼՏՄՈՒԹԻՒՆԸ

(1618 — 1661)

208. Շուետական յաջորդութեան պատերազմ: Ալլամարզի զինադադար: Ա՞ ժամանակի միջոցը սկսելուն պէս՝ հիւսիսային կողմերը, որոնք խել մը ժամանակէ վեր պղլւայլ պատերազմներով կը վրդովէին, նոր պատերազմի մը տեսարան եղան, որուն պատճառը հին էր եւ միայն ուրիշ պատերազմներով կը խափանուէր: Արդէն յառաջագոյն պատմած ենք սա նոր պատերազմին առիթ եղող Շուետի յաջորդութեան խրնդիրը, նոյնպէս իրական պատերազմին՝ երկայն ատեն արգելուելէն ետեւ, սկսիլն ալ յիշատակած ենք (140): Արդ պատերազմը բացուելուն պէս, Կուստա Ատուլֆ փութաց նոյնին տեսարանը Լիւնիա փոխադրելու (1620). եւ որովհետեւ Լեհք իրենց թագաւորին՝ Շուետի զահին վրայ ունեցած իրաւունքը շէին ուզեր պաշտպանել, անոր համար քիչ մը վերջը շէ թէ միայն Լիւնիա (1625), հապա նաեւ Լեհի Պրուսիային մէկ մասը Շուետաց ձեռքն անցաւ: Եւ եթէ Կուստա Ատուլֆ Գերմանիայի մէջ դաւած աւելի մեծ տեսարանէն ձգուելով, իր յաղթական զէնքերն ան կողմը շարձունէր, կարելի է որ սա հիւսիսային կողմանց շփոթութիւններն աւելի մեծնային: Բայց Գերմանիայի մէջ իր փառասիրութեան աւելի ընդարձակ դաշտ տեսնելով (176), Գաղղիայի միջնորդութեամբ Լեհաց հետ վեց տարւան համար Ալլամարզի զինադադարն բրաւ (1629, Սեպտ. 25), զորն որ ետքը 26 տարւան համար երկրնցուցին Շարմատորֆի մէջ (1635, Սեպտ. 25): Այսպէսով բոլոր Լիւնիա Շուետաց ձեռքը մնաց. բայց հիւսիսային կողմերը քիչ մը ժամանակ խաղաղութիւն ունեցան եւ Կուստա Ատուլֆին փառասիրական դի-

առաքութիւններուն փնաստկար հետեւութիւններէն ազատեցան :

209. Գանձիական-Շուետական պատերազմներ : Ստեփաննոս խաղաղութիւնը մէկ երկու անգամ Գանձիայի եւ նոյն Շուետաց մէջ եղած պատերազմներով աւրուեցաւ : Ասոնց զխաւոր պատճառն էր Գանձիային Շուեաի դէմ ունեցած նախանձը, որն որ ըստ մասին Քրիստիան Գին եւ Կուստաւ Ատոլֆին անձնական բնաւորութենէն յառաջ կու գար, ըստ մասին ալ Շուեաին այնպէս շուտով մեծնալէն, որով երկու տէրութեանց մէջ մեծ զրգոսութիւն մտած էր : Արդէն յառաջագոյն (1611) երբ որ Շուեաք Անհական-Ռուսական պատերազմներուն պատճառաւ նեղութեան մէջ էին (129), Գանձիայի Քրիստիան Գ. թագաւորը Կարոլոս Թին վրայ յարձակում բրած եւ աղէկ յաջողութիւն ունեցած էր, անանկ որ հազիւ նոյն Կարոլոս Թին մեռնելէն ետեւ, կրցեր էին Շուեաք Սիէօրէօտի խաղաղութեան դաշամբ (1613, Յունու. 20), մէկ միլիոն թաղեր տալով, իրենց կորսընցուցած երկիրները ձեռք բերել : Քրիստիան Գին Երեսնամեայ պատերազմին մէջ ունեցած մասնակցութիւնն անյաջող ելք ունենալով (172), Ալեքէրի խաղաղութենէն ետքը (1629, Մայ. 22) ստիպեցաւ հանդարտ կենալ : Բայց ետքէն խաղաղութեան խօսակցութիւններն եղած առան, տեսնելով որ Շուեաք շատ բան պիտի վաստակին, նորէն անոնց դէմ զրգոսեցաւ եւ պատերազմ բացաւ (1643) : Շուեաներու Գորգենսոն զօրավարը Հոլզայնի ու Եուդլանտի վրայ յարձակելով՝ առաւ նոյնպէս Շունէն դաւառին վրայ ալ յարձակում եղաւ, որն որ նոյն առան Գանձիայի իշխանութեան տակ էր : Ասկից զատ Հոլանտական նաւատորմից մը Շուետաց օգնութեան գալով, ծովով Գանձիայիները նեղ խութեց : Ասանկով երկու տարի ետքը Պրեօմսկպրոէի խաղաղութիւնն եղած առան (1645, Օգոստ. 13), Շուեաք բնդունեցան. Ա. Սունտի վրայ եւ Ալեքսիասի

քով Էլզայի վրայ քննուելու եւ մարս վճարելու պարտաւորութենէն ազատութիւն. Բ. ի մշտնջենաւորս՝ Եւմբդէլանտի ու Հէրեէտայի երկիրներն ու Արթւանտի եւ Էօգէլի կղզիները, իսկ զՀայլանա՝ իբրեւ երեսուն տարւան գրաւ :

210. Շուետաց Քրիստինէ թագուհին: Եր հրաժարումն ու յաջորդին բնաւորութիւնը: Բարեբախտութեամբ Աուստա Ատոլֆին յաջորդը՝ Քրիստինէ թագուհին բլլալով, անոր անձամբ կառավարելու սկսելէն ետեւ (1644), մէյ մ'որ վեազֆայլեան խաղաղութիւնն եղաւ (1648), Շուետք հանդարտ կեցան. որովհետեւ նոյն խելացի ու գիտուն թագուհին, թէպէտ տէրութեան ներքին իրողութիւնները մեծ ճարտարութեամբ վարեց, բայց արտաքին քաղաքականութեան նկատմամբ՝ անօգուտ բանակցութիւններէ ուրիշ բան չբրաւ: Ատանկով իր ատենը մերձաւոր տէրութեանց՝ Շուետի զօրութենէն՝ ամենեւին վտանգ մը չկար: Բայց նոյն հանդարտութեան փեճակն երկայն շտեւեց. վասն զի Քրիստինէ իր խելացութեամբն ու գիտութեամբն արդէն շատոնց բողբոջականութեան վրայ տարակոյցներ ունեցած եւ ուղղափառ կրօնին վարդապետութիւններուն մէջ իր մտաց հանդարտութիւնը գտած բլլալով, միտքը դրած էր որ նոյն կրօնին դառնայ: Աւստի աս իր խորհուրդը դիւրաւ գլուխ հանելու եւ իր սիրական գիտութիւններուն զբաղելու եւ գեղեցիկ արուեստներու հաճոյքը վայելելու համար, որչեց որ իր թագէն հրաժարի: Ինք աշխարհք մտած չբլլալով, յառաջագոյն յաջորդութեան խնդիրը կարգի դրած եւ իր հօրաքեւորդին (Աուստա Ատոլֆին Աստարինէ բրոջն ու Յուպպրիքէնի Յովհաննէս Գազիմիր դքսին որդին) Աարոլտս Աուստա իր ժառանգն բրած էր: Արդ աս կողմանէ մտածելիք չունենալով, տէրութեան մեծամեծները խորհրդի կանչեց, եւ ծերակուտին աղաչանաց միտ չդնելով, իր թագը նոյն Աարոլտս Աուստա իշխանին տուաւ (1654, Յունիս 24). իսկ ինք տէրու-

Թե՛նէն դուրս ելլելով, նախ Պրիւստէլի մէջ գաղտ ուղ-
ղափառ կրօնն ընդունեցաւ, եւ ետքը Ինսպրուքի մէջ
հրապարակաւ ալ յայտնեց: Ասով բոլոր իրաց կերպա-
րանքը փոխուեցաւ. վասն զի Կարոլոս Ժ. Կուստաւ նոր
Թագաւորը, որն որ արդէն զօրավարութեան վարժած
եւ միանգամայն մեծ փառասիրութեան ու անհան-
դարտ զորձունէութեան տէր մարդ մըն էր, այնպիսի
աշխարհակալութեան գաղափարներով դահ էլաւ,
որոնք բոլոր իր կենդանութեան ատենը հիւսիսային
կողմանց խաղաղութիւնն անկարելի կ'ընէին:

211. Շուեաթի յաջորդութեան պատերազմը նս-
րէն կը սկսի ու կ'ընդարձակուի: Շուեաթ Գանձայի
հետ Ռուքիլտի խաղաղութիւնը կ'ընեն: Կարոլոս Ժ.ին
ամենէն առջի պատերազմն եղաւ Լեհաց գէժ, որոնց
Յովհաննէս Գաղիմիր Թագաւորը, Սիկիզմունտ Գ.ին
(† 1632) կրտսեր որդին, որն որ իր Ալլաիզաւ Գ.
(† 1648) եղբօրը յաջորդած էր, զինքը ճանչնալ եւ
Շուեաթի գահին վրայ իր ունեցած իրաւունքէն հրա-
ժարիլ չէր ուզեր (1655): Արդ Կարոլոս Ժ. անմի-
ջապէս Լիւսնիայի վրայէն Լեհաստան յարձակեցաւ ու
Աարսաւիա առաւ, որով Յովհաննէս Գաղիմիր ստի-
պեցաւ Սիլեզիա փախչիլ. իսկ ինք՝ զինքն իրրեւ եր-
կրին Թագաւորն ընդունել տուաւ: Բայց Լեհաստան
պահելը՝ առնելուն չափ զիւրին չէր: Կարոլոս Ժ. Պրան-
տենպուրկի Փրեզերիկոս Գուլիելմոս կայսրընտրին հետ
գաշինք մը դրաւ (1656), որով Պրուսիա գաւառը Լե-
հաստանի աւատապետութեանէն ազատ կ'ըլլար եւ ա-
նոր զիմացը կայսրընտրին իր օգնութիւնը Շուեաթի
կը խոստանար: Ասով Թագաւորը կարծեց որ Լեհաս-
տանի մէջ իր իշխանութիւնը կատարեալ հաստա-
տուած է, եւ սկսաւ ժողովուրդը սաստիկ ճնշել: Բայց
Լեհաց ազգային ոգին արթնցաւ. ազնուականք եւ ժո-
ղովուրդն սուր երան, եւ Աարսաւիայի մէջ երեք օր պա-
տերազմ եղաւ (1656, Յուլ. 18—20). սակայն վեր-
ջապէս Շուեաթ յաղթեցին, անանկ որ կարծես թէ

բոլոր թագաորութիւնը Շուեաի դաւառ մ'ըլլալու փասնդի մէջ ինկաւ: Բայց ասով ուրիշ դրացի տէրութիւններն ալ արթնեցան, մանաւանդ որ Կարոլոս Ժ. օրէ օր աւելի կը յայտնէր իր մեծամեծ ու յանգուզն խորհուրդները, որոնց նպատակն էր Գանիայի թագաորութիւնն ալ ջնջել եւ հիւսիսային ընդհանուր մեծ թագաորութիւն մը կանգնել: Արդ ասոր դէմն առնելու համար Եւրոպայի կէտը սկսաւ Շուեաաց դէմ պատերազմի պատրաստութիւն տեսնել. Ալեքոի Միխայէլովիչ Ռուսաց Չարը, որն որ իր հօրը Միքայէլ Ֆետատովիչին յաջորդած էր (1645), Լեոբուս Ա. Գերմանիայի կայսրը, Փրեզերիկոս Գ. Գանիայի թագաորը (1657, Մայ. — Յունիս), եւ քիչ մը վերջը Պրանսանպուրկի Փրեզերիկոս Գուլիելմոս կայսրընտիրն ու Պրուսիայի դուքսը (1657, Սեպտ.), միարան իրեն դէմեւն: Այսպէսով Շուեաք Լեհաստանէն ելլելու ստիպեցան: Բայց Կարոլոս Ժ. անյաջողութեամբ մը վհատելու մտրդ չէր. Լեհաստանէն ելաւ շերաւ, մէյ մ'ալ Գանիացւոց վրայ յարձակելով, պատերազմն աւանց երկիրը փոխադրեց: Գանիայի մեծ մասն առաւ եւ ստաւած Պելդէին վրայէն անցնելով, մինչեւ Գորենհակի առջեւ հասաւ (1658, Փետր.), որով Գանիացիք հարկադրեցան Ռուսիլտի խաղաղութեան ընելու (1658, Փետր. 26): Նոյն խաղաղութեան դաշինքով Գանիացիք ընդ միշտ Շուեաին ձգեցին շարանաւ, Շոնէն, Պէրինկ, Պահաս, Տրոնդհայմ եւ Պոանհոլմի կղզին, միանգամայն Սուանի ազատութիւնը հաստատեցին:

212. Կարոլոս Ժ. երկրորդ անգամ Գանիա կը յարձակի: Իր մահը: Գորենհակի, Օլիվայի ու Գարտիսի խաղաղութեան դաշինքները: Կարոլոս Ժ. ին աշխարհակալութեան խորհուրդները, թէ որ Լեհաստանի մէջ ունեցած անյաջողութեամբ քիչ մը մեղմացած էին նէ, Գանիայի մէջ դաւած մեծ յաջողութեամբ դարձեալ նորոգեցան. մանաւանդ որ աս յաջողութիւնը շատ դիւրաւ ձեռք բերած ըլլալով, նոյն

տէրութեան տկարութեան վրայ համազում էր: Անոր համար Ռուսիոյ խաղաղութեան դաշինքը գրուելուն վրայ վեց ամիս շանցած, նորէն Հոլշտայնէն Սէէլանա յարձակեցաւ (1658, Օգոստ. 8), որպէս զի Գորեն-հակ առնելով, տէրութիւնը կործանէ եւ բոլոր երկիրն իր իշխանութեան հպատակեցրնէ: Բայց Գրոնպուրկի պաշարումը (1658, Օգոս. 16 — Սեպտ. 6) Գանձիացոց ատեն տուաւ իրենք զիրենք ժողովելու. ուստի երբ որ Շուեսթը նոյն քաղաքն առնելէն ետեւ, Գորեն-հակի վրայ դիմեցին ու պաշարեցին, հոն անտակ գիւմադրութիւն մը դասն, որուն ամենեւին չէին սպասեր: Գանձիացոց աս վերջին աստիճանի դիւցազնական քաջութեամբ իրենք զիրենք պաշտպանելովը, պաշարումը խիստ երկայն տեւեց. որով մերձաւոր տէրութիւնք, չէ թէ այնչափ Գանձիա կործանմանէ ազատելու՝ հապա Շուեստները խոնարհեցրնելու եւ անոնց արտաքոյ կարգի մեծնալը խափանելու համար, օգնութեան հասան: Ասանկով Աւստրիա, Ռուսիա, Անհատան, Պրանտենպուրկ, Վերմանիայի ուրիշ քանի մը իշխանութիւնք՝ ցամաքի կողմանէ, իսկ Հոլանտա՝ որն որ իր Արեւելեան ծովու վաճառականութեան համար կը վախնար, նաւատորմով մը ծովու կողմանէ, աս պատերազմին մասնակից եղան: Արտոյտ Ժ. այսչափ զօրութեան չկրնարով դէմ գնել, Գորենհակի պաշարումը վերցրնելու ստիպեցաւ եւ ինք յանկարծակի մեռնելով (1660, Փետր. 23), իր մեծամեծ խորհուրդներն ալ ոչընչացան: Այսպէս անակնկալ կերպով պատերազմին դիւաւոր պատճառք մեջտեղաց վերնալով, դիւրին էր խաղաղութիւն ընել, որուն ամէնքը կը բաղձային. եւ խաղաղութեան դաշինքներն ընդհանրին նկատմամբ՝ անով աւելի օգտակար եղան, որ մինչեւ նոյն ատեն եղած պատերազմներուն պատճառներն ալ վերցան. որով նաեւ հիւսիսային տէրութեանց ազատութիւնն ու անկախութիւնն ապահովցաւ: — Շուեսթի եւ Գանձիայի մէջ խաղաղութիւն եղաւ Գորենհակի

դաշինքով (1660, Մայ. 27), որն որ Ռուսքիլտի խաղաղութեան դաշանց կրկնումն էր. միայն Գանձացիք Տրանդհայմ քաղաքն ու անոր սահմանները եւ Պոռնհոլմ կղզին ձեռք բերին: — Հուետի եւ Լեհի մէջ խաղաղութիւն եղաւ Օլիվայի դաշինքով (1660, Մայ. 3), որով Յովհաննէս Գաղիմիր իր եւ զաւակացը կողմանէ՝ Հուետի վրայ ունեցած բոլոր պահանջումներէն կը հրաժարէր. միանգամայն Լեհք Հուետներուն կը թողուին Լիւսնիան (բաց ի հարաւային կամ յառաջուան լեհական մասէն), Էսթոնիան ու Իզգէլ կղզին: — Ասկից տարի մը ետքը Գարաիտի խաղաղութեամբ վերջ տրուեցաւ նաեւ Հուետի եւ Ռուսիայի մէջ եղած պատերազմներուն (1661, Յուլ. 1), եւ որոշեցաւ որ իրարմէ առնուած երկիրները բոլոր ետ դարձուին եւ ամէն բան յառաջուան վիճակը դառնայ: Աս խաղաղութեան դաշինքները Հուետի կողմանէ զնոյններն էին՝ հաղիւ հինգ տարւան եղող Կարոլոս ԺԱ. Թագաւորին անուամբ՝ իր մայրը, Լեաուիկ Էլէնորա Թագուհին, տէրութեան հինգ երեւելի նախարարներով:

213. Վերոյիշեալ պատերազմներուն՝ Պրուշի ու Գանձայի համար ունեցած հետեւութիւնը: Ստոյգէ՛ առ խաղաղութեան դաշինքներով Հուետ չէ թէ միայն Լիւսնիայի վրայ իր իշխանութիւնը հաստատեց, հապա նաեւ մինչեւ նոյն ատեն Գանձացւոց ձեռքը զանուող Արեւելեան ծովու զաւառներն ալ առաւ. բայց Պրուշն ու Գանձիա ալ նոյներէն՝ ուրիշ պատուներ քաղեցին: Փրեդերիկոս Գուլիելմոս կայսրընտիրը, որուն ժամանակը Պրանտենպուրկ բաւական մեծ զօրութիւն ստացած էր, Հուետի ու Լեհաստանի մէջ եղած պատերազմն արտաքոյ կարգի խորամանկութեամբ զօրծածեց Պրուսիան Լեհաստանի աւատապետութենէն ազատելու: Իսկզբան զօնէ արտաքուստ Հուետի կողմն անցնելէն ետեւ (211), իրմէ բաժնուելու խոստմամբ՝ Վելաի դաշինքով Լեհաստանէն իր անկախութիւնը զնեց (1657, Սեպտ. 19), եւ անկէ ետեւ Հուետաց

ամենէն գործունեաց հակառակորդներէն մէկն եղաւ : Ասանկով Օլիվայի խաղաղութեան դաշինքը գրուած ատեն, Պրուսիայի անկախութիւնը բոլորովին հաստատեցաւ թէ Շուեաի եւ թէ Ահհաստանի կողմանէ : — Իսկ Պանիայի գլխին եկած մերթիկն եւ բրած մեծամեծ կորուստներն առիթ տուին կառավարութեան կերպին բոլորովին փոխուելուն, որով Փրեզերիկոս Գ. ժառանգական եւ բացարձակ վեհապետ եղաւ : Ասիկայ իր հօրը Քրիստիան Գ.ին մեռնելէն ետեւ (1648), հաղիւ երկայն բանակցութիւններով ու մեծամեծ զիջումներով՝ անոր յաջորդ ընտրուած եւ իր իշխանութիւնն անանկ աստիկ կապերով սեղմուած էր, որ բոլոր կառավարութեան գործքերը տէրութեան խորհրդեան ձեռքն էին. եւ առ եղած էր Պանիայի գլխին եկող վնասներուն զլիսաւոր պատճառը : Արդ երբ որ խաղաղութիւնը հաստատեցաւ, առ անպատշաճութեան առջեւն առնելու համար՝ խորհրդանոց մը ժողվեցաւ, որն որ չէ թէ միայն թագաւորական գահը կատարեալ ժառանգական բրաւ, հապա նաեւ թագաւորին անաստիճանի ընդարձակ ու լիակատար իշխանութիւն տուաւ, որ կրնայ ըսուիլ թէ Փրեզերիկոս Գ. Եւրոպայի նոյն ժամանակուան ամենէն բացարձակ վեհապետն էր (1660—1661) :

ԵՐՐՈՐԳ ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ

Գ. ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(1618 — 1661)

214. Գաղթականութիւնք ընդհանրապէս: Ասանծինն Հոլանտացոց ճարտարութիւնք, արուեստներն ու վաճառականութիւնք: Գաղթականութեանց նկատմամբ՝ աս ժամանակի միջոցն այնչափ փոփոխութիւններով երեւելի չեղաւ, որչափ յառաջագիտութեամբ: Հոլանտացիք, որոնք միշտ առաջին վաճառական ազգք կը մնային, արդէն անցեալ ժամանակի միջոցին իրենց կարգաւորութիւններն բրած էին. աս ժամանակի միջոցին՝ նոյններն ընդարձակեցան, բայց էական փոփոխութիւն չկրեցին: Նոյնն բռնու է Անգղիացոց վրայ ալ. իսկ Սպանիացիք ու Բորգուկացիք կամովին շատ բան չէին փոխեր: — Արդ Հոլանտացի վաճառականութեան ու գործարանաց ճարտարութեան շէնքն՝ իր բովանդակ բարձրութեան հասած ատեն՝ անանկ հոյակապ տեսիլ կը մատակարարէր, որ շուտով դրացի ազգերը նախանձու գրգռեց: Նոյն իսկ երկրին հանդամանքն անանկ էր, որ ներքին գործունէութիւննին պէտք էր որ գործարանաց եւ տարազազործութեան ուղղուէր: Բայց աս բանս երկու պատճառաց մեկտեղ միանալէն կրնար յառաջ գալ. նախ ազգային դրամագլուխն ան աստիճանի առատ ըլլալու էր, որ նոյնպիսի գործառնութեանց կարենային դիւրաւ ձեռք դրնել. գարձեալ պէտք էր որ ընկերական վիճակին միշտ աւելի աղէկնալովն ու բարակնալով՝ թէ Աւերուպայի եւ թէ գաղթականութեանց կարօտութիւններն աճէին: Աս երկու հանդամանքն իրօք ալ գտնուելով, Հոլանտացիք կրցան նոյն բանը գլուխ հանել: Բայց իրենց երկրին մէջ այրելի նիւթոյն գծուարագիւտ ըլլալուն պատճառաւ՝ շատ աւելի դիւրին էր տարազազործութիւնք յառաջ տանիլ, քան թէ բուն գործարանները:

Անոր համար Հոլանտացիք իրենց բոլոր ծիզը սկսան թափել բամբակի, կտաւի ու կանեփի տարազազործութեան եւ թուղթ ու նաւ շինելու: Ասոնց համար շարժիչ զօրութիւնը կը գտնուէր զանազան տեսակ ջրաղացներով, որոնց վրայ մէքենական ճարտարութիւնն իր բոլոր հնարագործութիւնը կը բանեցընէր. եւ ասով հիւսիսային Հոլանտան աշխարհքիս մէջ միակ երկիր մ'եղաւ: — Աւճառականութեան դալով, ինչպէս բոլոր վաճառական աղջաց՝ նոյնպէս Հոլանտացւոց մէջ ալ, գաղթականաց առուտուրը՝ ամենամեծ մտադրութեան նիւթ եղած էր. իսկ Արեւելեան Հնդկաստանինը՝ նոյնին առաջին ծիւղը կը սեպուէր: Արեւելեան Հնդկաստանի բնկերութիւնը՝ չէ թէ միայն իրրեւ առեւտրական, հապա իրրեւ քաղաքական մարմին մ'ալ իր բոլոր զօրութեամբն ու իշխանութեամբը կերպարուած էր: Եւ թէպէտ Անգղիական համանուն բնկերութեան հետ գաշնազիր եղած էր (1619), ի վերայ այսր ամենայնի Ամպոնայի մէջ գործած անազորունութեամբ (1623) զԱնգղիացիները Մորուզեան կղզիներէն բոլորովին մերժեց: Հոլանտացիք իրենց մենավաճառութիւնն ամէն ապօրինաւոր միջոցներով իսկ պահել կ'ուզէին: Իսկ երկրին բերքերը յառաջ կը բերէին այդբէնածիններուն ձեռքով, զորոնք զէնքով կամ գաշնեքներով իրենց հպատակութեան եւ կամ գերութեան տակ կը ձգէին: Բուն Հոլանտացիք երբեք գաղթական չեղան. վասն զի իրենց մէջ այնպիսի պատճառներ չկային, որ զիրենք մեծ բազմութեամբ ծովուն անդիի կողմը մշանջենաւոր բնակութիւն հաստատելու ստիպէին կամ յորդորէին:

215. Հոլանտացւոց գաղթականութիւնները՝ քաղաքական նկատմամբ: Հոլանտացւոց ճաւայի վրայ հիմնարկած Բատաւիա քաղաքը (1619) բոլոր Հնդկաստանի մէջ իրենց ստացուածոց միջավայրն ու կառավարութեան նիստն եղաւ. բայց իրրեւ քաղաք՝ կամայ կամայ յառաջ գնաց ու ծաղկեցաւ: Թէ աշխար-

Հակալութեամբ եւ թէ վաճառականութեամբ շորս կողմը տարածուելին՝ միշտ ան տեղէն կ'ըլլար: Իրենց աշխարհակալութեան տեղերն եղան Գորոմանտէլ, Մալպար, Սէլլան եւ ուրիշ կղզիներու վրայ. իսկ իրենց վաճառականութիւնը շատ ընդարձակեցաւ Ճենատանի ու Ճարոնի հետ հաղորդակցութեան մէջ մտնելով: — Ընկերութեան բոլոր երկիրները հինգ կառավարութեան կը բաժնուէին, որոնք էին Ճաւա, Ամգոնիա, Գեռնադ, Սէլլան ու Մազասար, որոնց վրայ եկան քանի մը վերակացութիւնք ու հրամանատարութիւնք. եւ ամենն ալ Բատախայի կառավարութեան տակն էին: Բայց Հոլանտայի բոլոր Հնդկային ստացուածներուն ապահովագոյն նախապարիսպն էր Բարեյուսոյ հրուանդանին վրայ հաստատած գաղթականութիւննին: Իր վախճանին համեմատ՝ ասիկայ մշակական գաղթականութիւն մ'եղաւ. տեղւոյն գրից ու այլեւայլ ներքին հանգամանաց, միանգամայն իսկզբան անդ եղած պատշաճ կարգաւորութեանց նայելով՝ խիստ աւելի մեծակշիռ կ'ըլլար, թէ որ Արեւելեան Հնդկաստան գացողներուն համար պարզապէս պանդոկի պէս չգործածուէր, ուր նոյն ինքն ընկերութիւնը պանդոկապետութիւն կ'ընէր: Աս գաղթականութիւնը՝ զատ վեցերորդ կառավարութիւն կը կազմէր: — Հոլանտացիք Հնդկաստանէն դուրս ձեռք անցուցին Պրագիլիայի մէկ մասը, որն որ թէպէտ Բորգուկալին՝ Սպանիայէն բաժնուելէն ետեւ, Բորգուկալցոց հետ դրուած զինազազարի գաշանց զօրութեամբը (1641, Յունիս 22) իրենց մնաց. բայց ետքը ըստ մասին պատերազմով եւ ըստ մասին Հոլանտայի մէջ պատահած ներքին շփոթութիւններով, բոլորն ալ կորսնցուցին եւ Պրագիլիայէն բոլորովին մերժուեցան (1654, Յունու. 27): Արեւմտեան Հնդկաստան ալ քանի մը պղտիկ կղզիներու վրայ հաստատուեցան, որոնք ամենեւին օգուտ կամ հետեւութիւն մը չունեցան: Անոր համար ալ Արեւելեան Հնդկաստանի ընկերութեան վրայ ձեւուած

Արեւմտեան Հնդկաստանի ընկերութիւնը (1621, Յու- նիս 3), որն որ հինգ սենեկի բաժնուած էր եւ եօթը միլիոնի շափ գրամադլուխ ունէր, չկրցաւ յառաջանալ:

216. Անգղիացւոց ոստիութիւնն ու նաւազնա- ցութեան օրէնքը: Իրենց Արեւելեան Հնդկաստանի ընկերութիւնը: Հոլանտացիք իրենց վաճառականու- թիւնն անանկ բարձրութեան ու տարածութեան մը հասուցած ըլլալով, որն որ գրեթէ տիեզերական մե- նավաճառի կը մօտենար, հարկ էր որ անով ոստիու- թիւնն ու մրցակցութիւնն ելլէր Անգղիայի հետ՝ որն որ նոյնպէս մեծ ջանքով նոյնին ետեւէն կ'ըլլար: Ան- գղիացիք իրենց նպասակին հասնելու եւ միանգամայն թէ Ամերիկայի եւ թէ Հնդկաստանի մէջ դիւրաւ աշ- խարհակալութիւնն ընել կարենալու համար, Գրոմուելի ձեռքը դուրս հանեցին Նաւազնացութեան օրէնքը (1651). որով կը սահմանուէր որ աշխարհքիս ուրիշ մասերուն բերքերն ու Նշարպայի տէրութեանց թէ բեր- քերն ու թէ գործուածները՝ կամ անգղիական նաւե- րով եւ կամ նոյն բերքերն ու գործուածները յառաջ բերող ազգին յատուկ նաւերովը կարող ըլլան Ան- գղիա բերուիլ: Աս օրէնքը նոյն ատենուան նաւազնա- ցութեան հանգամանաց նայելով, միայն Հոլանտացւոց միասակար էր, որոնք իբրեւ բոլոր եւրոպական վաճա- ռականութեան միջնորդ՝ իրենց նաւերովը վաճառք- ներն ամէն կողմ կը տանէին: Անոր համար ալ նոյն օ- րէնքին հետեւութիւնն եղաւ երկու ազգաց մէջ գրե- դուած պատերազմը (1652), որուն մէջ մեծամեծ ծովային կռիւներ եղան. եւ Լոնտոնի խաղաղութեան դաշինքը գրուած ատեն (1654, Ապր. 15), Հոլանտա- ցիք ստիպուեցան թէ Անգղիացւոց գրօշին առաւելու- թիւնը ճանչնալու եւ թէ գրամական հասուցում ընե- լու (205): — Անգղիացւոց Արեւելեան Հնդկաստանի վաճառականութիւնն առ ժամանակի միջոցին մէջ ալ համանուն ընկերութեան ձեռքը մնաց, բայց փոփո- խութիւններ կրելով. Հոլանտացիք նոյն ընկերութիւնը

Համեմարեր կղզիներէն մերժելով, հաղիւ ձեռքը քանի մը առեւտրական գործակալութեան տներ մնացին: Նոյն իսկ Մաարաս ձեռք անցընելով ալ, բնկերութեան վիճակը մեծ տարբերութիւն մը չունեցաւ, անանկ որ կ'երեւար թէ բոլորովին պիտի լուծուի. մինչև որ Գրոմուէլ անոր արտօնութիւնները նորոգելով՝ քիչ մը հաստատութիւն տուաւ:

217. Անդդիացոց Արեւելեան ու Արեւմտեան շնդկաստանի գաղթականութիւնները: Անդդիացոց վաճառականութեան վրայ բսածներնէս՝ իրենց գաղթականութեան վիճակն ալ կրնայ խմայուիլ, վասն զի՝ ինչպէս յայտնի է՝ երկուքն ալ միեւնոյն կերպով յառաջ կ'երթան: Ամպոսինայի վրայ Անդդիացիք սպանուելէն ետեւ (214), համեմարեր կղզիներէն սկսան մերժուիլ. ասոր դիմացը ստոյգ է Նորանտացոց հետ խաղաղութիւն եղած ատեն (1634), Բոլերան համեմարեր կղզին իրենց խոստացուած էր. բայց հոն ալ չկրցան իրենք զիրենք հաստատուն բռնել: Մոլուդեան կղզիներէն մերժուելովն՝ աշուրնին աւելի Գորամանուէի վրայ դարձուցին. Մաարաս ձեռք անցուցին եւ քովը Ս. Գեորգի ամրոցը շինեցին (1640) Կոլգոնտայի թագաւորին հաւանութեամբը. նոյն քաղաքը ետքէն գահերիցութեան աստիճան բարձրացաւ: — Արեւմտեան շնդկաստանի մէջ Անդդիացոց հաստատած առաջին գաղթականութիւնները՝ միայն առանձնականաց ձեռնարկութիւնք էին: Իսկզբան անդ Անտիլեան պղտիկ կղզիներէն մէկ քանիին վրայ սկսան հաստատուիլ (1625—1632), որոնք այնչափ մեծ բանի տեղ չէին գրուեր, որովհետեւ նոյնտեղաց միակ բերքերն էին զէշ ծխախոտ ու բամբակ: Հաղիւ երբ որ Պարպատոս կղզւոյն վրայ Պրազիլիայէն շաքարեղէզի մշակութիւնը բերուեցաւ (1641), սկսան նոյն կողմերուն ծանրակշռութիւնն իմանալ: Քիչ մը յառաջ Սուրինամի վրայ ալ հաստատուած էին (1640), որմէ յառաջ Պահամայի անբնակ կղզիներն ալ ձեռք ձգած

ու Բրովիտանոսի վրայ դադարեցնուած թիւն հաստատած էին (1629), որն որ իբրև թէ Արևմտեան Հնդկաստանի բանալին էր: Իսկ ճամայիգա առնելով (206), աս ժամանակի միջոցին մէջ՝ նոյն կողմն ալ իրենց վաճառականութեան ապագայ մեծութեան հիմք դրին: Նոյն տեղը շարքերէ գի մշակութիւն ալ խոթուեցաւ (16:


218. Անգղիացւոց Հիսիսային Ամերիկայի դադարեցնուած թիւնները: Բայց աս ժամանակի միջոցին ամենէն աւելի յառաջագիտութիւն բրին Հիսիսային Ամերիկայի դադարեցնուած թիւնները: Պարզակրօններուն ձեռքէն կրուած ճնշումն ու նեղութիւնը, և ընդհանրապէս Անգղիայի ներքին շփոթութիւնները պատճառ կ'ըլլային որ դանդաղունդ դադարեցնուած թիւնները անդին կ'անցնէին: Նոյն կողմանց երկիրները, որոնք մինչև ան ատենները՝ ընդհանուր անուամբ Ախրիանիա և Նոր Անգղիա կ'ըլլաւէին, ալ կամայ կամայ սկսան դաւաճելու բաժնուիլ և առանձին առանձին անուններ առնուլ. միանգամայն սահմանադրութիւններ ալ ընդունեցան, որոնց նպատակը թէպէտ ան էր, որ դադարեցնուած թիւն կախուժ ունենան թագաւորէն. սակայն և այնպէս նոյն սահմանադրութեանց մէջ հասարակապետական ձեւեր ալ կային, որոնք ան տեղերուն վիճակն ինք իրմ յառաջ կ'ը բերէր: — Մեասեչուէզ դաւաճը ձեւացաւ (1621) և Պասզըն քաղաքը շինուեցաւ (1627) դրխուորաբար այնպիսի անձինքներէ, որոնք թէ կրօնական և թէ քաղաքական նկատմամբ խիստ մոլեճախանձ էին, և իրենց սկզբունքը ծովուն անդի կողմն ալ բանեցընել կ'ուզէին: Քիչ ժամերը կանգնեցաւ Ռոտայլէնս (1634) Մեասեչուէզէն մերժուած մարդիկներէն. նոյն կերպով կանգնեցաւ Պոննէզդիզը ալ (1636): Նաև Նիու-Հեմբըրի ու Մէյնի դադարեցնուած թիւններն աս կերպով Մեասեչուէզէն ելան (1637). բայց ետքը նորէն նոյնին հպատակեցան: Քանի ճր տարի ետքը (1643) աս դաւաճները մէկտեղ

գաշնակցեցան՝ Նոր Անգղիա անուամբ, որպէս զի իրենք զիրենք պաշտպանեն: Արդէն աս բլլալէն յառաջ, Նորա Պալղիմոր՝ իբրև վերին տէր՝ Տիմն դրաւ Մերիլէնտի, եւ համանուն քաղաքը սկսաւ շինուիլ ըստ մեծի մասին ուղղափառներու ձեռքով (1632): — Վ իրողինիա, որն որ ծովեզերաց հարաւային կէտը կը բովանդակէր, տակաւին անբաժին մնաց. բայց ծիախոտին աւելի տարածուելովն իր յարզն ալ կը շատնար: — Աս ժամանակի միջոցին վերջը, երբ որ Անգղիացիք իրենց Նաւազնացութեան օրէնքը նորոգեցին (1660), աս գաղթականութիւններն ալ նոյն օրինաց տակ ձգեցին. որով խորհրդանոցը կամ ազգը կը յայտնէր թէ նոյն կողմերուն նաւազնացութիւնն ու վաճառականութիւնը մեծ բանի տեղ կը դնէ:

219. Գաղղիացւոց գաղթականութիւնները: Արդէն նախընթաց ժամանակի միջոցին մէջ Գաղղիացիք գաղթականութիւններ հաստատելու զանազան փորձեր բրած էին, բայց բոլորովին պարսպ չելողներն ալ աւելի ապագային համար օգտի ակնկալութիւն կու տային, քան թէ ներկային համար օգուտ մը կը մատակարարէին: Բոլոր բոլոր գաղթականութիւն հաստատած տեղերնին էր Հիսթային Ամբրիկա, ուր ԺԷ. դարուն սկիզբները Գանատայի (Նոր Գաղղիայի) ու Ազատայի գաղթականութիւնները Գեպէզ քաղաքին հիմնարկութեամբ քիչ մը հաստատութիւն ընդունեցան (1608): Բայց իրենց բուն նպատակն այնչափ մշակութիւն չէր, որչափ մուշտակի վաճառականութիւն ու ձկնորսութիւն: Անոր համար Գաղղիացիք հազիւ աս ժամանակի միջոցին սկսան գաղթականութիւն ունեցող ազգերու կարգը մտնել, որովհետեւ իրենց մտադրութիւնը թէ Արեւելեան եւ թէ Արեւմտեան Հնդկաստանի վրայ դարձուցած էին: Սակայն այնպէսով ալ Ռիչլիեզի ատենը Արեւելեան Հնդկաստանի վաճառականութեան մասնակից բլլալու փորձերնին անօգուտ եղան: Անոր հակառակ Արեւ-

Տոեան Հնդկաստանի քանի մը կղզիներուն վրայ հաստատուած ըստ մեծի մասին անկարկական գաղթականութիւնք, բուական յառաջ գացին. բայց առանձնականներու ձեռնարկութիւնք բլլալով, միայն առանձնականաց ստացուած մնացին: — Առաջին գաղթականութիւն հաստատելին եղաւ Ս. Քրիստափորի վրայ (1625): Անկից տարածուեցան Աուստալիա ու Մարդինիքի վրայ (1635), որն որ արդէն առ ժամանակի միջոցին վերջերք խիստ շատ շարքար կը բերէր: — Նոյն ատենները փորձեր եղան Գայէնի վրայ, ինչպէս նաեւ Ափրիկէի ծովեզրները՝ Սենեկալի քով գաղթականութիւններ հաստատելու:

220. Սպանիացւոց ու Բորդուկալցոց գաղթականութիւնները: Բորդուկալ իր ինքնակացութիւնք նորէն ձեռք անցընելով, Սպանիացիք նոյն տէրութեան բոլոր գաղթականութիւնները կորսընցուցին՝ բաց ի Սեւզայէն. սակայն իրենց բոլոր հին ստացուածները պահեցին, որոնց վրայ ոչ տեսչութեան եւ ոչ վաճառականութեան կողմանէ մեծ փոփոխութիւնք եղան: Իսկ Բորդուկալցիք թէպէտ Պրազիլիայի մէջ իրենք զիրենք Հոլանտացւոց գէժ պաշտպանեցին ու վերջապէս զանոնք նոյն երկրէն բոլորովին մերժեցին. բայց անոնք, բաց ի Ասայէն ու Տիուէն, բոլոր իրենց Արիււէլեան Հնդկաստանի մէջ ունեցածները յափշտակեցին: Հիւրմիւզ ալ Պարսիկներն Անդրիացւոց օգնութեամբն իրենց ձեռքէն առին (1622): Ասանկով Բորդուկալցիք՝ միայն Պրազիլիայի տիրելուն համար գաղթականութիւն ունեցող ազգաց մէջ կը դասուէին:



Արամեան ընկերութեան հաշիւն սա-
Հատորիս մեջ հրատարակելը զանց կ'առ-
նենք ևս ամբողջ Պատմութեան վերջը կը
նշենք, որն որ յոհասնք թե տարւոյս
ընթացքին մեջ դուրս կ'ելլէ:

ՊԸՏՄԸՆՔ ԸՆԿՆԻՄՐԹՆԸՆ

Ե. Ար կամփցի մտանել ի համար անդամոց ընկերութեան, տայցէ մի անդամ եւեթ ի մշտնջեննուորս 100 փղորին Աւարիացոց: Բայց առատամբա կամաց տուողացն չիբ չափ եւ սահման. որչափ եւ միտք ուրուք արտրժիցեն եւ ետանդն եւ գուեթ ընդ ազգին սգուտ, տայցէ: Դարձեալ, որ կամփցի նուազագոյն քան 4100 փղորինն տալ զամն բարերարութեան միայն, ընդունիմք եւ զայն շնորհակալութեամբ: Եւ որ զինչ ուրուք տուեալ իցէ, զայնք Թուղթ հաստատութեան ընկալցի իւրաքանչիւր որ ի Միարանութենէս ի մշտնջեննուոր պարճանս տուողն եւ ամենայն ազգատահմն իւրոյ:

Բ. Մի մի իւրաքանչիւր յանգամոց ընկերութեան, որոց 100 փղորին տուեալ իցէ, ունիցի իշխանութիւն առնուլ ի Միարանութենէս մի մի օրինակ յամենայն գրոց ընկերութեան: Իսկ որք առատութեամբ երկպատիկ կամ երկբարպատիկ եւ կամ աւելի եւս տուեալ իցեն, նորա ունիցին իշխանութիւն երկուս կամ երիս կամ աւելի ըստ իւրաքանչիւր չափոյ արոց առնուլ:

Գ. Մտտեամբ որ սորին ընկերութեան ծախուք գրողմիցին, կարի թեթեւագնի զաճառեսցին, զի ամենեցուն մարթ իցէ ստանալ. բայց զի մի որ համարձակեսցի ինքն սակաւ գնոց առնուլ, եւ այլոց որ չիցեն տեղեակ, ծանրագնի զաճառել, իւրաքանչիւր գրոց զինք անդէն ի վերայ գրոցն յայտ առնին թէ քանոյ իցեն:

Դ. Ար ինչ ի զաճառելոյ անտի գրոցն ժողովիցի, այն ի մուտս անգր գրամոցն յաւելցի:

Ե. Ըմի ամբ բարերարացն անուանք, եւ մուտք եւ ելք արոց նոցա յուցցի ճշգրիտ հաշուով հանդերձ հաւատարմութեամբ եւ շնորհակալ մտք:

Զ. Գիրք ընկերութեանս պատրիկ ուսումնականք եւ բանասիրականք լինիցին ի հոյ լեզու:

Ի Ախեննա ի Ամնս Գաշապան Սուրբ Ըստուածածնի է զլխուոր տեղի, ուր մարթ իցին մտանել ի թիւ անդամոց ընկերութեան, որք կամփցին. նոյնպէս ի Կոստանդինուպոլիս, ի Չմիւռնիս, ի Թրիեսոս, եւ այլ ուր ուրեք եւ գտանիցին ի մերմէ Միարանութենէ: Իսկ որ յայլ քաղաքս գտանիցին, կարող են սոցա յայտ առնել թղթովք զերեսանց միտս, գրել ի համար ընկերութեան: Ար միանգամ տանն կամ յլեն առ նոսա զգինան, առ անգամ մի առնուն ի նոցանէ ևնճառգիր հաստատութեան, մինչեւ ապա գրուն հաստատութեան նամակն ի Միարանութենէս ընկալեալ զառաջինն յետ գարձուցեն:

Ա՝ գրքի թղթով կարճուած սրմակի մը գինը՝ Աւարիացի
1 Գիրքին արժան է:

